ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռաֆիկ Նահապետյան

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

դասախոսություններ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2026

ՀՏԴ 39(=19)(042.4)
ԳՄԴ 63.5(5Հ)g7
Ն 251

Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ գիտական խորհրդի կողմից։

Նահապետյան Ռաֆիկ
Ն 251 Հայ ազգագրություն։ Դասախոսություններ / Ռ. Նահապետյան.- Եր.։ ԵՊՀ հրատ., 2026, 584 էջ։

Դասախոսությունների ներկայացվող ժողովածուն կազմված է ԵՊՀ պատմության և այլ ֆակուլտետներում (1973-2023), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (1998-2020), Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետում (2000-2016) «Հայ ազգագրություն» ընդհանուր դասընթացի կրթական ծրագրերով հեղինակի տարիներ շարունակ կարդացած դասախոսությունների հիման վրա։ Հրատարակության նպատակն է տեսական և մեթոդաբանական արդի չափորոշիչներով ներկայացնել հայ ազգագրական գիտության անցած երկարամյա ուղին, սկզբնաղբյուրներն ու պատմությունը, հայոց էթնոմշակութային ժառանգության առանձին ոլորտները, բնորոշ գծերն ու յուրահատկությունները, հայ ազգագրության կարևոր ներդրումը համաշխարհային պատմության և մշակութային ժառանգության համակարգում։

Սույն հրատարակությունը արդիական ու անհրաժեշտ է, որովհետև 1974 թվականից առ այսօր հրատարակվել է ընդամենը մեկ ձեռնարկ (287 էջ), որի հատուկենտ պահպանված օրինակներն էլ ըստ էության չեն կարող բավարարել ժամանակակից գիտության պահանջները։ Ձեռնարկն օգտակար կլինի նաև ՀՀ մյուս բուհերի՝ պատմությամբ և մշակութաբանությամբ մասնագիտացող ուսանողների համար։

ՀՏԴ 39(=19)(042.4)
ԳՄԴ 63.5(5Հ)g7

ISBN 978-5-8084-2747-1
https://doi.org/10.46991/YSUPH/9785808427471

© ԵՊՀ հրատ., 2026
© Նահապետյան Ռ., 2026

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգագրությունը աշխարհում գոյություն ունեցող էթնիկ հանրությունների (ժողովուրդների) կենցաղն ու մշակույթը, ծագման պայմանները, տարաբնակեցումը, լեզվակենցաղամշակութային և էթնիկ ինքնագիտակցության, հոգեկերտվածքի յուրահատկությունները, էթնոսների ժամանակակից կյանքը և նրանց հետագա զարգացման հնարավոր ուղիները, պատմամշակութային առնչությունները ուսումնասիրող գիտություն է:

Այն դասվում է գիտական մտքի հնագույն բնագավառների շարքին: Մարդկային հասարակության մեզ հայտնի պատմությունը հավաստում է, որ հնուց ի վեր մարդիկ ունեցել են ոչ միայն իրենց, այլև հարևան ժողովուրդների կյանքի, կենցաղի ու մշակույթի մասին գիտելիքների պահանջ: Հազարամյակների ընթացքում աշխարհի շատ ժողովուրդների կյանքի էթնիկական յուրահատկությունների մասին կուտակվեցին բազմաթիվ փաստեր ու վկայություններ, որոնք օգնեցին բացահայտելու ժողովուրդների էթնիկական առանձնահատկությունները և ամբողջացնելու նրանց էթնիկ կերպարը: Դեռ հնում չբավարարվելով միայն էթնոսների պարզ նկարագրությամբ՝ կատարվում էին նրանց վերաբերյալ ձեռք բերված ընդարձակ նյութը համակարգելու և ժողովուրդներին ըստ իրենց կենցաղամշակութային, լեզվական ու տարածքային առանձնահատկությունների դասակարգելու փորձեր:

Ազգագրական գիտելիքների զարգացումը մեծապես խթանեցին ժողովուրդների Մեծ գաղթը (IV դարի կեսերից մինչև VII դ.) և աշխարհագրական մեծ հայտնագործությունները:

XIX դարի կեսերը դարձան արևմտյան մի շարք պետություններում (հիմնականում բազմազգ) ազգագրական գիտության արգասաբեր զարգացման ժամանակաշրջան: Նվաճված ժողովուրդներին արդյունավետ կառավարելու համար անհրաժեշտ էր ունենալ նրանց մշակույթի, սովորույթների, կենցաղի, հոգեբանության մասին որոշակի գիտելիքներ: Ահա թե ինչու ազգագրությունը սկսեց վայելել պետական իշխանությունների աջակցությունը: Հարկ է նշել, որ սկզբում ազգագրությունը ձևավորվել է որպես գիտություն Ասիայի, Աֆրիկայի, Ավստրալիայի և Ամերիկայի ժողովուրդների մասին:

Ազգագրությունը Եվրոպայում և Ռուսաստանում գիտական հիմքերի վրա է դրվել XIX դ. կեսերին, իսկ Հայաստանում՝ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին:

Ազգագրական գիտության ձևավորման պատմությունը Հայաստանում բազմադարյան պատմություն ունի: Այն ներառում է զարգացման հետևյալ պատմաշրջանները.

1. Հնագույն, անտիկ և միջնադարի դարաշրջաններից մինչև XVIII դարի առաջին կեսի հետևյալ շրջափուլերը՝ ա) ժայռապատկերների և հնագիտական պեղածո նյութերի (Ք.ա. IX-I հազարամյակի կեսեր), բ) սեպագիր արձանագրությունների (Ք.ա. III հազարամյակից Ք.հ. III դար), գ) հունահռոմեական անտիկ պատմիչների (Ք.ա. V դարից – Ք.հ. III դար), դ) հայ մատենագիրների, բանահյուսության, վիմագրական, արաբ, եվրոպացի ճանապարհորդների ուղեգրությունների ու տարաբնույթ այլ աղբյուրների (V դարից մինչև XVIII դարի առաջին կես) ազգագրական վկայությունները: Այս պատմաշրջանների ազգագրական տեղեկությունները բնութագրվում են որպես տարերային, չհամակարգված աղբյուրների կուտակման ժամանակաշրջան:

2. XVIII դ. երկրորդ կեսից մինչև 1850-60-ական թթ.՝ եվրոպական և ռուսական գիտական միջավայրի բարերար ազդեցությամբ ազգագրական նյութերի առավել արդյունավետ գրանցման, տարերայնությունը հաղթահարելու պատմաշրջան (Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի, Վենենտիկի Մխիթարյան միաբանության անդամներ Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի և այլոց ազգագրական, բանահավաքչական գործունեությունը):

3. 1870-80-ական թթ.՝ ազգագրական հարցարանների ստեղծման, ազգագրության և բանահյուսության ասպարեզում հավաքչական բուռն գործունեության ծավալման պատմաշրջան՝ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց» (1874), Գ. Խալաթյանցի «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների (1887) ծրագիր հարցարանների և Էմինյան ազգագրական ժողովածուի» (1901-1911) դերն ու նշանակությունը հայ ազգագրական գիտության ձևավորման և զարգացման գործում: Մ. Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ), Ղ. Ալիշանի, Վ. Հացունու ուսումնասիրությունները, Պ. Պռոշյանի, Ռաֆֆու և այլոց երկերը՝ որպես հայ ազգագրական նյութերի շտեմարան, ժամանակի պարբերականները («Բյուրակն», «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Մշակ» և այլն)՝ որպես հայ ժողովրդի անցյալի ազգագրական նյութերի ուսումնասիրության հարուստ պահոցներ:

4. XIX դ. 90-ական թթ. – XX դ. սկիզբ, երբ հայ ազգագրությունը հիմնավորապես կազմավորվեց որպես հայագիտության ուրույն բնագավառ: Մեկնաբանվում է Ե. Լալայանի գործունեությունը, նրա հիմնած «Ազգագրական հանդեսի» (1896-1916) դերն ու նշանակությունը: Ե. Լալայանը՝ որպես տարածքային (ռեգիոնալ) ազգագրության ուսումնասիրության մեթո-

դի հիմնադիր: Ե. Լալայանի հետևորդների ազգագրական գործունեությունը:

5. Որպես առանձին պատմաշրջան են ներկայացվում 1920-1980-ական թթ.՝ խորհրդային շրջանի հայ ազգագրական գիտության զարգացման ժամանակաշրջանը, երբ պետության հովանավորությամբ և նյութական միջոցներով էին իրականացվում ազգագրական նյութերի հավաքման և ուսումնասիրության, գիտահետազոտական, գիտակազմակերպչական, ուսումնական ու թանգարանային հաստատությունների գործունեության ձեռքբերումները (ՀՊԹ (1921), ՀԱԻ (1959)) և այլն, Ե. Լալայանի, Ստ. Լիսիցյանի, Խ. Սամուելյանի, Դ. Վարդումյանի, Վ. Բդոյանի, Վ. Աբրահամյանի, Ա. Դավթյանի, Կ. Սեղբոսյանի, Լ. Պետրոսյանի և այլոց վաստակաշատ գործունեությունը:

6. Ձեռնարկում հակիրճ ներկայացվում է նաև 1990-ական թթ. – 2020 թ. ազգագրական գիտության նվաճումները. ՀԱԹ-ի, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի, Յու. Մկրտումյանի, Ռ. Նահապետյանի, Հ. Մարությանի, Լ. Աբրահամյանի, Է. Պետրոսյանի, Ս. Հոբոսյանի, Մ. Գաբրիելյանի, Ա. Թադևոսյանի, Ս. Պողոսյանի և այլոց ծավալած գործունեությունը:

Այս ամենը ամփոփված է «Հայ ազգագրության աղբյուրներ և պատմություն» խորագրի ներքո և կազմում է սույն ժողովածուի առաջին մասը:

Հայ ազգագրության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Գիտության ուսումնասիրության օբյեկտը Հայաստանում և Սփյուռքում ապրող բազմադարյա պատմություն ունեցող հայ ժողովուրդն է, իսկ նրա ուսումնասիրության առարկայի շրջանակներն ավելի լայն են և ընդգրկում են հետևյալը.

ա) **Հայ ժողովրդի տնտեսաարտադրական մշակույթ.** *տնտեսական զբաղմունքներ, աշխատանքի գործիքներ.* երկրագործություն ու անասնապահություն, յուրացնող և օժանդակ տնտեսաձևեր (հավաքչություն, որսորդություն, ձկնորսություն, շերամապահություն, մեղվապահություն և այլն), տնայնագործություն ու արհեստագործություն՝ իրենց բազմազան ճյուղերով, ժողովրդական փոխադրամիջոցներ ու կապի միջոցներ, չափեր ու կշիռներ, ժողովրդական դարավոր հմտություններ, աշխատանքի կազմակերպման հնավանդ և արդիական ձևեր, դրանց ուղեկցող ժողովրդական հավատալիքներ ու պատկերացումներ:

բ) **Կենսապահովման մշակույթ.** կենսապահովման մշակութային արժեքներ՝ *բնակավայր-բնակարանային համալիրներ* ՝ տիպերը, կառուցվածքը, գործառույթները, բնակարանային համալիրների ներսույթը կազմող կահույքը, կարասին, սպասքեղենը, լուսավորման և ջեռուցման ավանդական ու ժամանակակից համակարգերը, *տարազ* ՝ տարածքային տիպերը, գլխի հարդարանքներ, գլխարկներ, ագանելիքներ՝ ոտնամանների, գուլպաների ավանդական և ժամանակակից տեսակները, դրանց կիրառական ու սոցիալական գործառույթները, *ուտեստ* ՝ առօրյա և տոնածիսական տեսակները, ըմպելիքներ (ալկոհոլային և ոչ ալկոհոլային), *հացկերույթներ* ՝ ավանդական և ժամանակակից դրսևորումները և այլն:

գ) **Սոցիոնորմատիվ մշակութային կյանք.** *ընտանիք* ՝ ավանդական և ժամանակակից, ձևերի դրսևորումները, ներընտանեկան հարաբերություններ և վարվելակարգ, ամուսնահարսանեկան, մանկան ծննդի, խնամքի և դաստիարակության, մահվան, հուղարկավորման և հիշատակման սովորու-

թյունների, ծեսերի բնութագրումներ (ավանդույթ և արդիականություն, կրոնական նախապաշարումների համալիրներ):

դ) **Սոցիալական և քաղաքական ինքնակառավարման կառուցվածք**. ազգատոհմային համակարգի, գյուղական համայնքի և դրացիական հարաբերությունների համալիրներ, դրանց մեկնաբանությունները:

ե) **Հումանիտար մշակույթի համալիրներ.** ժողովրդական բանահյուսություն, երաժշտական, պարային, խաղային մշակույթ, ժողովրդական տոնածիսական և հավատալիքների համակարգեր, կրոնական պատկերացումների համալիրներ և այլն:

XX դ. երկրորդ կեսին հայ ազգագրության առարկայական շրջանակը շարունակում էր ընդարձակվել: Ազգագրագետները սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել նաև միջէթնիկական և ազգամիջյան հարաբերություններին, Հայաստանում ապրող ժողովուրդների տարաբնակեցումներին, ժողովրդագրական, տնտեսական գործընթացներին և դրանց վրա ունեցած ազդեցություններին, էթնիկ գիտակցությանն ու ինքնագիտակցությանը, լեզվական դրսևորումներին, էթնիկական հետաքրքրություն ներկայացնող քաղաքական հարցերին և այլն:

Սկզբնաղբյուրները և կապը հարակից գիտությունների հետ: Սկզբնաղբյուրներն են՝ տարաբնույթ նյութերի հավաքումն ու կուտակումը՝ հնագիտական, բանահյուսական նյութեր, պատմագրական, արխիվային, վիմագրական և այլ բնույթի աղբյուրներ, հայ և օտար ճանապարհորդների ուղեգրական նյութեր, գիտնական և սիրող ազգագրագետների ինքնաբուխ և հատուկ հարցարաններով գրառված դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), դաշտային ազգագրական հետազոտություններ

(ԴԱՀ), ԴԱՆ-ի հավաքման և գրառման եղանակներն ու մեթոդները[1]:

Ուսումնասիրության մեթոդներն են՝ պատմահամեմատական, սոցիոլոգիական (հարցումներ, հարցազրույցներ, դիտումներ, թեստավորումներ), մարդաբանական, մշակութաբանական, համեմատական լեզվագիտական հետազոտություններ և այլն: Դրանց կիրառումը թույլ է տալիս բացահայտել հայ ժողովրդի ընդհանուր էթնիկական կերպարը, էթնիկական գործընթացները (մարդահամարների տվյալների համեմատության միջոցով):

Կապը հարակից գիտությունների հետ: Հայ ազգագրությունը սերտորեն առնչվում է հնագիտության, մարդաբանության, բանագիտության, պատմագիտության, մատենագրության, գրականության, լեզվաբանության, աշխարհագրության, արխիվագիտության, արվեստաբանության, հոգեբանության, էթնոսոցիոլոգիայի և այլ գիտությունների հետ:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Երևան, ԵՊՀ հրատ., 1974:

2. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, ՀՀ կրթ. և գիտության նա-

[1] Դաշտային ազգագրական նյութերը իրական կյանքից, բանասացից գրառված նյութերն են, որոնց մշակումը, տիպաբանումը և շրջանառության մեջ դնելը հայտնի են որպես դաշտային ազգագրական հետազոտություններ (ԴԱՀ): ԴԱՆ-ի գրառումը ազգագրական գիտության գլխավոր խնդիրներից մեկն է: Եվ դա է պատճառը, որ XIX դ. կեսերից մինչև XX դ. կեսերը ավելի քան 100 տարի պահանջվեց, մինչև ազգագրական գիտության մեջ մշակվեցին ԴԱՆ-ի գրանցման սկզբունքները, այդ նյութերը մշակելու և շրջանառության մեջ դնելու եղանակները:

խարարության կողմից երաշխավորված է որպես ուսումնական ձեռնարկ բուհերի պատմության ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2010:

3. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայ ազգագրություն (ձեռագիր), Երևան, 2014:

4. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայ ազգագրության աղբյուրները, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, 422 էջ:

5. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայ ազգագրության պատմություն, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, 362 էջ:

6. **Добренков В., Кравченко А.,** Социальная антропология, М., 2005.

7. **Лурье С.,** Историческая этнология, М., 2004.

8. **Садохни А., Грушевицкая Т.,** Этнология, М., 2003.

9. **Серьве Жан,** Этнология, М., 2004.

10. Этнография. Учебное пособие для вузов, Под. ред. Ю. Бромеля и Г. Маркова, М., 1982.

11. Этнология (учебное пособие под. ред. Миськовой Е., Пименова В. и дриг.), М., 2005.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ժողովրդի էթնոլեզվական, մարդաբանական և խառնվածքային ու դավանաբանական բնութագրի մասին

Հարցեր և առաջադրանքներ:

Հայերի ներլեզվական բնութագրությունը և տեղը հնդեվրոպական էթնոլեզվաբնտանիքում: Գոյություն ունեցող տեսակետները: Հնդեվրոպական նախամայր լեզվի հարցը: Հայերենը որպես հնդեվրոպական՝ Հնդկաստանից մինչև Արևմտյան Եվրոպա տարածված՝ հնդիրանական, թոխարական-անատոլիական, ռոմանական, կելտական, գերմանական, բալթյան, սլավոնական, հունարեն և ալբաներեն լեզվախմբերի ազգակից լեզու: Հայերենը՝ որպես ինքնուրույն լեզու: Ք.ա. III-II հազ. հազարամյակներից վաղնջական հայերենի կրողները Հայկական լեռնաշխարհում: Թամազ Գամղրելիձեի, Վյաչեսլավ Իվանովի, Գ. Ջահուկյանի և մյուս հայագետների ուսումնասիրությունների դերն ու նշանակությունը այս հարցում:

Հայկական լեռնաշխարհը՝ որպես հնդեվրոպալեզու ժողովուրդների նախահայրենիքի մաս: Հնդեվրոպական նախահայրենիքը տեղայնացնելու վարկածները՝ հնագիտական, առասպելաբանական, լեզվաբանական, մարդաբանական, գենետիկական և այլ տվյալների հիման վրա: 1970-ական թթ. առաջ քաշվեց հայ ժողովրդի ծագման, կազմավորման և լեզվի առաջացման նաև «հայկական վարկածը», ըստ որի՝ Հայկական լեռնաշխարհը հնդեվրոպալեզու ժողովուրդների նախահայրենիքի մաս է: Հայկական վարկածը. հնդեվրոպական լեզվաբնտանիքի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է, նրան հարակից Հյուսիսային Միջագետքը և Փոքր Ասիայի արևելյան ու իրանական բարձրավանդակի հյուսիսարևելյան տարածք-

ները: Այս բարդ և կնճռոտ հարցերը դեռևս վերջնական լուծում չեն ստացել և պարզաբանումների ու ճշտումների խիստ կարիք ունեն:

Հայերենի մշակման, զարգացման ընթացքը: Հայերենն անցել է զարգացման 5-6-հազարամյա ուղի: Ք.ա. III հազ. սկզբներին հայերենն առանձնանում է «հնդեվրոպական լեզուներ» հնդեվրոպական ընդհանրությունից: Վաղնջական հայերենի կրողները Ք.ա. 3-2 հազարամյակների Հայկական բարձրավանդակի հնագույն բնակիչներն էին: Հայոց լեզուն անցել է զարգացման երեք փուլ. հին հայերեն՝ գրաբար (V-XI դդ.), միջին հայերեն (XII-XVI դդ.), նոր հայերեն՝ աշխարհաբար (XVII դարից մինչև մեր օրերը): Վաղ աշխարհաբարը սկզբնավորվել և գոյատևել է XVII դարից մինչև XIX դ. կեսերը: Միջին կամ երկճյուղ աշխարհաբարի ձևավորման ենթաշրջանն է XIX դ. կեսերից մինչև 1920 թվականը: Հայերենի զարգացման երրորդ շրջանն սկսվում է 1920-ից առ այսօր: Հին հայերենի գրաբար տարբերակին զուգահեռ՝ գոյություն է ունեցել նաև բանավոր կամ խոսակցական հին հայերենը՝ բարբառային երանգավորումներով: Աշխարհաբարի երկու խոշոր տարբերակները՝ արևմտահայերենը և արևելահայերենը գործում են որպես անկախ գրական լեզուներ: Զարգացման ներկա փուլում գրական արևելահայերենը պետական լեզվի կարգավիճակի շնորհիվ ունի հետագա զարգացման լայն հնարավորություններ: Արևմտահայերենը սփյուռքահայության, արևելահայերենը՝ ՀՀ և ԱՊՀ երկրների և Իրանի հայության ընդհանուր հաղորդակցման լեզուն է: Հայոց լեզուն հայ ժողովրդի ինքնության պահպանման և հարատևման գրավականն է:

Հայերի մարդաբանական բնութագրությունը, տեղը աշխարհի ռասաների և մարդաբանական տիպերի համակար-

գում: Առաջավորասիական (արմենոիդ) մարդաբանական տիպը, նրա հայրենիքի հարցը:

Հայկական լեռնաշխարհը՝ որպես ի սկզբանե **արմենոիդ** (հայակերպար) ցեղերով բնակեցված տարածաշրջան: Նեոլիթյան դարաշրջանից (Ք.ա. IX-VI հազարամյակներից) և էնեոլիթյան (պղնձեքարե դար) անցման դարաշրջանում (Ք.ա. V-IV հազարամյակներում) հնդեվրոպական ցեղերի մի մասը, ըստ հայկական վարկածի, տեղաշարժվելով Հայկական լեռնաշխարհից, Միջագետքից ու Փոքր Ասիայից, տարածվել են Եվրոպա, Միջին Ասիա, Հնդկաստան: Մյուս մասը, այդ թվում՝ խեթական, հայկական, հունական և իրանական ցեղերը, մնացել են նախահայրենիքի տարածքում: Այս հանգամանքը վկայում է հայերի տեղաբնիկության մասին:

Ներկայացնել արմենոիդ տիպի ֆիզիկական, մարդաբանական հատկանիշները. հասակը, մարմնի մաշկի գույնը, մարմնի մազածածկույթը, գլխի ձևը, դեմքի ձևը, մազերի գույնը, խտությունը, աչքերի կտրվածքը, գույնը, քթի, շրթունքների, այտերի ձևը և այլն:

Այն բնութագրվում է ամուր մարմնակազմվածքով և միջին հասակով: Գանգը բրախիկեֆալիկ է (կլոր, կարճ գանգ), գլխի մազերի չափավոր ալիքաձև, բարձր, երկար դեմքով, ուղիղ, լայն և միջին բարձրության ճակատով, զարգացած երրորդային մազածածկույթով, մաշկի թուխ գունավորմամբ, մեծ և երկար քթով, բարձր քթարմատով, կտրուկ, ընդգծված քթածակերով, քթի ցցվածությունը առավել սուր ընդգծված, լայն կտրվածքով, թուխ, երբեմն էլ կապույտ աչքերով, թուխ, երբեմն շիկահեր մազերով, թավ հոնքերով, երկար արտևանունքներով, բարակ, նուրբ շուրթերով: Արմենոիդ ռասային են պատկանում հայերը, ասորիները և Միջագետքի ու Անատո-

լիայի հնագույն բնակիչները: Արմենոիդ ռասան առանձնացել է Ք.ա. IV հազ. սկզբներին:

Արմենոիդ մարդաբանական տիպի ձևավորումը վերաբերում է ավելի վաղ ժամանակաշրջանի, քան այն դարաշրջանը, որի հետ է կապվում հայ ժողովրդի ծագման սկիզբը:

Հայկական լեռնաշխարհի բնակչությունը, ըստ հետազոտությունների, ունեցել է բարդ մարդաբանական կազմ՝ երկրի աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների բազմազանության և քաղաքական բուռն իրադարձությունների պատճառով: Խորամուխ չլինելով շրջանառվող տեսությունների մեջ՝ նշենք, որ հայերը՝ որպես էթնիկական կազմավորում, առաջացել են հնդեվրոպական լեզվի տրոհման հետևանքով:

Ըստ Գամղրելիձեի և Իվանովի ուշագրավ աշխատության (տե՛ս գրականության ցանկը), որ նույն «Հայկական վարկածն» է՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի հայրենիքը համարվում են Հայկական լեռնաշխարհը, նրան հարակից Հյուսիսային Միջագետքը, Փոքր Ասիայի արևելյան և Իրանական բարձրավանդակի հյուսիսարևմտյան շրջանները: Մարդաբանական ուսումնասիրությունների համաձայն՝ Հայկական լեռնաշխարհը ի սկզբանե բնակեցված է եղել արմենոիդ տիպին պատկանող ցեղերով: Այդ բնորոշ տիպի կրողը ներկայումս հայ ժողովուրդն է:

Հայերի հոգեկերտվածքը:

Հոգեկերտվածքը՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, որպես ժողովրդի ընդհանրացված բնութագիր:

Ի՞նչ է հոգեկերտվածքը. այն սոցիալ-հոգեբանական երևույթ է, որը ծնում է գիտակցությունը, ժողովրդի ընդհանրացված բնութագիրն է: Երբեմն գործածվում է նաև մենթալի-

տետ եզրույթը, որը բառացի նշանակում է աշխարհընկալում, խելք, դատողություն, խառնվածք: Դրա ձևավորման, կայացման գործոններն են՝ ուրույն մշակույթը, ուրույն ազգային ավանդույթը: Աշխարհագրական, բնակլիմայական միջավայրը, սոցիալական, պատմաքաղաքական պայմանները ազդել են հոգեկերտվածքի վրա: Որո՞նք են հայերին բնորոշ խառնվածքային գծերը: Հայերի խառնվածքային բնութագրությունը տրված է Լ. Մելիք-Շահնազարյանի աշխատության մեջ (տե՛ս գրականության ցանկը):

Հայերին բնորոշ են՝ համառ աշխատասիրությունը, նպատակասլացությունը, եռանդուն և նախաձեռնող լինելը, կենսունությունը, վեհանձնությունը, հայրենասիրությունը, ուսումնասեր և արհեստասեր լինելը, բացառիկ հյուրընկալությունը, տուն ու տեղին, օջախին, հայրենիքին նվիրված լինելը, զգացմունքայնությունը, օտարին չենթարկվելու մարտական հակումները, արդարամտությունը և հանուն արդարության մարտնչելը, ավանդապաշտությունը և այլն: Իզուր չէ, որ հայը հայտնի է նաև իբրև «շինարար ժողովուրդ»: «Շինարարությունը,- նշել է Գ. Նժդեհը,- հայի հաղթանակները հավերժացնող, ամենաբարձր պայքարի ձևն է»:

Հայը օժտված է մայր հողի հետ կապվելու հատկությամբ. հողը նրա համար և բարեկեցության աղբյուր է, նաև հենարան ու պաշտպան, հզորությունն ու հավատն է, վաղվա օրվա հույսն ու համոզմունքը: Հայի մեջ իշխողը առավելապես հայրենիքի, քան պետականության նկատմամբ նկատմամբ սերն է: Մերօրյա հայի բնորոշ հատկանիշներից պետք է լինի նվիրվածությունն ու ջանքերի ուղղորդումը պետականության ամրապնդմանը: Իսկ դրան կարելի է հասնել միմիայն ազգային ամբողջ ներուժի՝ մշակույթի, եկեղեցու, ազգանպաստ քաղա-

քականության, տնտեսական ու ռազմական, հոգևոր ու նյութական ռեսուրսների համագործակցված կիրառման շնորհիվ:

Ազգային հոգեկերտվածքի իմացությունը հեշտացնում է միջէթնիկ կապեր հաստատելը, կանխատեսում ազգային վարքը, օգնում հասարակության մեծամասնության համար ընդունելի որոշումներ կայացնելուն: Ազգային խառնվածքի իմացությունը կարևոր է ոչ միայն ազգաբանի, այլև քաղաքական գործիչների համար, օգնում է ժողովուրդների շփումներին, պետական ու դիվանագիտական գործընթացներին:

Կրթության ձգտումն ու դրա զարմանալի ընկալումները կենսական անհրաժեշտություն, ինքնապահպանման կարևոր գործոն են եղել ու կան: Վաչկատուն, բարբարոս, անկիրթ նվաճողները բնազդորեն գլխի էին ընկնում, թե որքան մեծ հոգևոր արժեք ունեն հայի համար գրքերը: Ուստի, օրինակ՝ Լենկ Թեմուրը, փորձելով խաղալ հայ բնակչության զգացմունքների հետ, «գերեվարում» էր հայերից խլված մեծաքանակ ձեռագիր մատյանները, ապա մեծ «փրկագնով» վաճառում հայությանը՝ հարստացնելով իր գանձատունը:

Հայի ընդգծված հատկանիշներից է այն, որ նա միշտ փորձում է ներգրավվել ամեն մի նորարար շարժման մեջ՝ ընկալելով այն որպես առաջադիմության դրսևորում. առաջինն էր, որ ընդունեց քրիստոնեությունը, առաջիններից մեկն ընդունեց հելլենիստական մշակույթը և անգամ դարձավ դրա տարածողներից, առաջիններից էր, որ ակտիվորեն մասնակցեց թուրքական բռնատիրության դեմ ազատագրական պայքարին, առաջիններից էր, որ ներգրավվեց ցարիզմի դեմ հեղափոխական պայքարին, առաջիններից էր, որ միացավ գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությանը՝ ծավալելով համազգային շարժում: Շատ հաճախ հայի զգացմունքայնությու-

նը խանգարում է սառը դատողություններ անելուն, թուլացնում ապագայի կանխատեսումներ անելու ունակությունը:

Զարմանալի ներդաշնակությամբ հային բնորոշ են հայրենասիրությունը, անձնազոհությունը, քաջությունը, հայը իր բնույթով ստեղծարար է ու արարող:

Հայերի դավանաբանական բնութագրությունը: ***Հավատացյալ հայերը՝ որպես միաբնակ քրիստոնյաներ, մասամբ՝ կաթոլիկներ ու բողոքականներ: Քրիստոնեությունը՝ Մեծ Հայքի պետական կրոն (301 թ.):***

Հայաստանն աշխարհում առաջին երկիրն է, որը 301 թ. ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Դա հայ ժողովրդի պատմության մեջ դարակազմիկ իրադարձություն էր: Տրդատ Գ. Մեծ Արշակունին (287-330) աշխարհում առաջինը ճանաչեց քրիստոնեությունը որպես պետական-պաշտոնական կրոն: Քրիստոնեությունը հիմնադրվել է I դարում՝ 33 թ.: Սուրբ տեքստն է Աստվածաշունչը: Դավանում է շուրջ 2.5 միլիարդ մարդ: Գաղափարախոսության կազմավորման վայրը Երուսաղեմն է: Կրոնի հատկանիշն է միաստվածությունը: Ավելի քան 9 միլիոն հայեր Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են: Հայ առաքելական եկեղեցին Արևելյան հնագույն եկեղեցիների շարքին է դասվում: Քրիստոնությունը Հայաստանում մուտք է գործել I դարում Հիսուս Քրիստոսի առաքյալներ սուրբ Թադեոսի և սուրբ Բարդուղիմեոսի քարոզչությամբ, որոնք Հայ առաքելական եկեղեցու կողմից հետագայում հռչակվեցին Հայոց առաջին լուսավորիչներ: Գրիգոր Լուսավորիչը, դառնալով առաջին քահանայապետ, շարունակել է Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների գործը և ապահովել հայոց առաքելահաստատ Աթոռի ժառանգականությունն ու հարատևությունը: Վերջինս հայոց եպիսկոպոսապետ

է հռչակվել 302 թվականին, Ամենայն Հայոց առաջին կաթողիկոսն էր:

Հայոց եկեղեցու դերը ազգային մշակույթի զարգացման, ազգային պետականության կայացման գործում: *Այն ազգային մշակույթի զարգացման, վանքերին կից կրթական և բարեգործական հաստատությունների, դպրոցների, հազարավոր ձեռագրերի ընդօրինակման, գրականության և արվեստի, գիտական արժեքավոր գործերի ստեղծման, հայոց ազգային պետականության կայացման, հայոց անկախության, ազգային-ազատագրական տնական պայքարի առաջնորդող հաստատություն է:*

Ինքնաստուգման հարցեր

– Թվարկել հնդեվրոպական էթնոլեզվաբնտանիքի մեջ մտնող լեզուները:

– Ի՞նչ գիտեք հայերենի մշակման և զարգացման ընթացքի շրջափուլերի մասին:

– Հայ բնակչության ո՞ր հատվածներն են խոսում արևելահայերեն և ո՞րը՝ արևմտահայերեն:

– Որո՞նք են արմենոիդ ենթառասայի մարդաբանական հատկանիշները և կրող ժողովուրդները:

– Բնութագրեք հայերին բնորոշ խառնվածքային հատկանիշները:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. **Բարսեղյան Լ.,** Հայերի էթնիկական մարդաբանության ուսումնասիրության արդի վիճակը // ՊԲՀ, 1972, № 3, էջ 58-74:

2. **Հովսեփյան Լ.,** Հայերեն // ՀՍՍՀ, հ. 6, Երևան, 1980, էջ 159-160:

3. **Պետրոսյան Արմեն,** Հայոց ազգածագման հարցեր, Երևան, 2006:

4. **Պետրոսյան Արմեն,** Հնդեվրոպական նախահայրենիքի խնդիրը և վաղնջահայերենը // ՊԲՀ, 2014, № 1, էջ 196-208:

5. **Ջահուկյան Գ.,** Ջրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992:

6. **Ջահուկյան Գ.,** Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

7. Քրիստոնյա Հայաստան (հանրագիտարան), Երևան, 2002:

8. **Абдушелишвили М.,** Антропология древних и современных народов Кавказа, М., 1994, с. 7-92.

9. Армянский язык и диалекты // Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, էջ 75-80:

10. **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.,** Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Тб., 1984, том II.

11. **Герасимовна М.,** Исторнко-антропологические данные // Армяне, էջ 33-42:

12. **Мелик-Шахназарян Л.,** Характер армянского народа, Ереван, 1999.

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

1.1. Ժայռապատկերներ (Ք.ա. IX-I հազարամյակներ)

Ժայռապատկերների գիտական հետազոտության պատմական ակնարկ: *Ժայռապատկերները ժայռերի, ժայռաբեկորների մակերեսին, խորը կիրճերում, լեռնահովիտներում, քարանձավների պատերի՝ նախապատմական ժամանակաշրջանում կարծր քարով փորված, ներկով արված հնագույն պատկերներ են, տեսարաններ, առանձնապես որսը պատկերող հորինվածքներ, որոնք վկայում են ստեղծողների տնտեսական կյանքի՝ կենցաղի, զբաղմունքների, նաև գաղափարական պատկերացումների, հմայական ըմբռնումների մասին: Դրանք անցյալի կենդանի վկայություններ են: Ժայռապատկերները Հայկական լեռնաշխարհի Ք. ա. IX-I հազարամյակի պատմական իրականության բացահայտման կարևորագույն մշակութաբանական սկզբնաղբյուր են, նախնադարյան մշակույթի կրող, դրա տեսակ, ձև և ունեն կարևոր գիտաճանաչողական արժեք: Դրանցում բացահայտվում են, որ Հայկական լեռնաշխարհը եղել է հնագույն և հին աշխարհի անքակտելի մաս, մարդկային մշակույթի բնօրրաններից մեկը, նախնադարյան արվեստի, ինքնատիպ ու բազմաբովանդակ ժայռապատկերներով լեցուն հայրենիք:*

Թեմայի ուսումնասիրության կարևորությունն ու արդիականությունը, Հայաստանի տարածքում հայտնաբերման վայրերը, դրանց ուսումնասիրության արդյունքները, փուլերը:

Հայկական լեռնաշխարհի լեռները ամենուրեք հարուստ են ժայռապատկերային արվեստի նմուշներով: Դրանց ուսումնասիրությունը հայագիտության մեջ ընթացել է երեք փուլով.

I փուլ – 1910 թ. Մեսրոպ Տեր-Մովսիսյանը և Կոմիտասը, բարձրանալով Արագած լեռը, առաջին անգամ հանդիպեցին ժայռապատկերների և 1913 թ. այդ մասին նյութ հրապարակեցին «Արարատ» ամսագրում: 1920-ական թթ. սկսվում է դրանց գիտական հետազոտությունը՝ հանձինս նշանավոր գիտնականներ Աշխարհիբեկ Քալանթարի, Գր. Ղափանցյանի, ապա՝ Ս. Սարդարյանի, Բ. Թումանյանի, Ս. Պետրոսյանի և այլոց:

II փուլ – 1960-70-ական թթ. դարձան ժայռապատկերների հայտնաբերման ու հետազոտման կարևոր փուլ, երբ կազմակերպվում են հնագիտական արշավախմբեր: Գ. Կարախանյանի և Պ. Սաֆյանի՝ Սյունիքում, Հ. Մարտիրոսյանի և Հ. Իսրայելյանի՝ Գեղամա լեռներում կատարած հայտնագործություններն ու մեկնաբանությունները բացառիկ ներդրում էին գիտության մեջ:

III փուլ – 1990-ական թթ. նորանոր հայտնագործություններ կատարեցին Բ. Գասպարյանը, Կ. Թոխաթյանը և ուրիշներ, որոնց շնորհիվ եզրակացություն արվեց, որ դրանք հզոր միջոց են դառնում հայոց պատմության և մշակույթի անհայտ էջերի վերհանման, հայոց ծագումնաբանության, բնիկության ու ժողովրդագրական խնդիրների բացահայտման համար:

Հայկական լեռնաշխարհը՝ որպես մարդկային մշակույթի հնագույն օրրան, հարուստ է ժայռապատկերներով, որոնք գիտնականների կողմից դիտարկվում են որպես Ք. ա. IX-I

հազ. պատմական իրականության բացահայտման մշակութաբանական սկզբնաղբյուրներ, պատկերագրորեն արտացոլում են անցյալը:

Ժայռապատկերները «քարե հանրագիտարաններ» են, ժամանակակից տարբեր գիտությունների սաղմեր կրող, նշանային համակարգեր, պատկերանշաններ են (օրինակ՝ արևը պատկերվել է ճառագայթավոր անիվի ձևով, կենդանիների տեսքով, և ոչ միայն արևը, լուսինն ու կայծակը, այլև ողջ աստղազարդ երկինքը և այլն), գաղափարագրեր են, տիեզերական աստղագիտական պատկերացումներ ներկայացնող պատկերներ, լուսնա-արեգակնային տոմարի, օրացույցի, կրոնա-գաղափարական, արգասավորման հմայական գործողությունների պատկերացումներ արտահայտող նշանագրեր, պատկերագրեր, նաև համարվում են գրի նախնական տեսակ, մաշտոցյան գրի նախատիպ, խորհրդանշանային համալիր, նախնադարի կենցաղի ու մշակույթի, բուսական ու կենդանական աշխարհի, զբաղմունքների, հատկապես որսորդության, հավաքչության, նախնական երկրագործության և անասնապահության, կրոնապաշտամունքային և այլ երևույթների ուսումնասիրության անփոխարինելի սկզբնաղբյուր: Հայաստանի տարածքում հայտնաբերվածները շատ բազմազան են ու բազմաբովանդակ:

Գրականություն

1. **Աբրահամյան Ա.,** Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Եր., 1982, էջ 26-48:
2. **Բարսեղյան Լ.,** Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ // ՊԲՀ, 1966, № 3, էջ 147-160:
3. **Թոխաթյան Կ.,** Մաշտոցեան տառաձևերի և դրանց ժայռապատկերներ նմանակների աղերսների շուրջ // «Բազմավեպ», 2003, № 1-4, էջ 60-99:

4. **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.,** Սյունիքի ժայռապատկերները. Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 4, ժայռապատկերներ, պր. 1, Եր., 1970:

5. **Մարտիրոսյան Հ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները. Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, ժայռապատկերներ, պր. 3, Եր., 1981:

6. **Մարտիրոսյան Հ.,** Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978:

7. **Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները. Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, ժայռապատկերներ, պր. 2, Եր., 1971:

8. **Մովսիսյան Ա.**, Նախամաշտոցյան գրային համակարգերը, Եր., 2003:

9. **Նահապետյան Ռ.,** Ժայռապատկերները որպես Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների ազգաբանական ուսումնասիրության սկզբնաղբյուր // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 39-55:

10. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության աղբյուրներ (հնագույն շրջանից մինչև XVIII դ. երկրորդ կես) / Ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., էջ 60-75:

1.2. Հնագիտական պեղածո նյութերը որպես ազգագրության ուսումնասիրության սկզբնաղբյուր

Ազգագրական և հնագիտական նյութերի համադրության կարևորությունը հին հասարակությունների կառուցվածքի, տնտեսական կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի, կիրառական արվեստի, հավատալիքների, պաշտամունքի, կրոնի ուսումնասիրության և հետագա վերակազմությունների գործում:

Ազգագրության և հնագիտության անխզելի կապը. ազգագրագետն իրերն ու երևույթները պարզաբանում է հնագիտության միջոցով, իսկ հնագետը՝ ազգագրական տվյալների օգնությամբ:

ա) Նեոլիթյան (IX–VI հազ. Ք.ա.), պղնձաքարի (V–IV հազ. I կես, Ք.ա.) և վաղ բրոնզի դարաշրջան (Ք.ա. 3500-2400/2200 թթ.)

Հնագիտական նյութերով բացահայտված է, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները դեռևս նեոլիթյան դարաշրջանում հավաքչությունից անցել են հողագործության և որսորդությունից՝ կենդանիների ընտելացման, հիմնել են բնակատեղիներ ու բնակարաններ, հասել են փայտի, քարի, ոսկորի մշակման կատարելության, հյուսել են խսիր, կողով, ձկնորսական ցանց, բուսական թելերից՝ կտավ, պատրաստել են կավե ամաններ, գործել են զգեստներ և այլն:

Պղնձաքարի դարաշրջանին բնորոշ Շամիրամ-Ալթի (Վան քաղաք), Շենգավիթի (Երևան), Թեղուտի (Էջմիածին), Ակնաշենի, Առատաշենի, Մոխրաբլուրի, Մեծամորի (Արմավիրի մարզ), Ծաղկունքի, Աղստևի հովտի Կուր-արաքսյան կամ Վաղ անդրկովկասյան կամ Շենգավիթյան հնագիտական

մշակույթը Հայկական լեռնաշխարհի տնտեսական կենցաղի, զբաղմունքների մասին: Ցորենի, գարու շտեմարան՝ հորերի, սեպաձև քարե խոփերով ու պարզունակ արորի և լծկան խոշոր եղջերավոր անասունների օգնությամբ վարուցանքի, մետաղե հնձի գործիք մանգաղի կիրառման, գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահպանման համալիրների (աղորիք, սանդ, ոռոգման համակարգ), այգեգործության, ծիրանի մշակության, որսորդության, ձկնորսության, անասնապահության, արհեստագործության՝ խեցեգործության, մետաղագործության, քարամշակման, ոսկերչության, կաշեգործության, մանածագործության խաղացած դերերը տեղական բնակչության տնտեսական կյանքում: Բնակավայրերի աճը, նախաքաղաքային բնակավայրերի առաջացման նախադրյալները, նահապետական մեծ ընտանիքներին բնորոշ բնակարանային համալիրների, պաշտամունքային կառույցների, կնոջ արձանիկների՝ իբրև մայր աստվածության պաշտամունքի, առնականության տարրերի պաշտամունքների հետքերի, թաղման կառույցների՝ հիմնահողային, քարարկղային դամբարանների գտածոները և այլն:

Հնագիտական հուշարձանների նոր բացահայտումները, ինչպես, օրինակ, Արենի գյուղում բացահայտված Ք.ա. V հազարամյակի վերջերի քարանձավի գտածոները՝ թարմ պահպանված թաղումներ, խաղողի հնձաններ, ոտնաման և այլն, վերջիններիս միջազգային եզակի արժեքը:

բ) Միջին բրոնզի դարաշրջան (մոտ 2400/2300 – 1500 թթ. Ք.ա.)

Հայկական լեռնաշխարհը թևակոխում է Շենգավիթյան մշակույթի քայքայման ժամանակաշրջան՝ զիջելով ասպարեզը Թռեղք-վանաձորյան, Սևան-արցախյան և Կարմիր-բերդ-

յան մշակույթին, և՛ ***ուշ բրոնզի*** (Ք.ա. 1500-1200), և՛ ***վաղ երկաթի*** (Ք.ա. 1200 – Ք.ա. IX դ. վերջ) դարաշրջանները բնութագրվում են տնտեսական նոր ճյուղերի երևան գալով, նյութական մշակույթի և սոցիալական կյանքի նոր տեղաշարժերով, պետական կազմավորումների առաջացմամբ: Այդ են բացահայտում Դվինի, Լազարավանի, Մեծամորի, Լճաշենի և բազմաթիվ այլ հուշարձանների պեղածո նյութերը: Օրինակ՝ Լճաշենից հայտնաբերված կամարակապ ծածկով երկանիվ և քառանիվ սայլերը, Դվինի հսկա կարասները, կոշկաձև անոթները և այլն:

գ) Ք.ա. VIII դ. սկզբից թևակոխում է երկաթի դարաշրջանը՝ որպես կայուն պետական կազմավորման շրջան

Թոփրակ-կալեի (Ռուսախինիլի), Թեյշեբաինիի, Հայկաբերդի, Էրեբունիի, Արգիշտիխինիլիի և հնագիտական այլ պեղումներից հայտնաբերված երկրագործական գործիքների՝ **բահի, խոփի, եռաժանու, մանգաղի, կացնի, ուրագի, կավե ամանների, հացահատիկի** շտեմարանների, դաշտամշակության, այգեգործության, խաղողագործության, գինեգործության, բանջարաբոստանային մշակաբույսերի մշակության լավ զարգացած լինելու մասին նյութական այլ մնացորդների հավաստումները: Արգիշտիխինիլիում հայտնաբերվել են գինու վիթխարի կարասներով մառաններ: Զարմանք են պատճառում ուրարտական ջրանցքները: Անչափ հարուստ նյութեր են բացահայտվել Կարմիր բլուրի և Էրեբունիի պեղումներից:

Վանի թագավորության քաղաքաշինության, քաղաքային կյանքի, բնակարանային ճարտարապետության, պաշտամունքային, տաճարային կառույցների, վիմափոր կառույցների, զգեստի, գործվածքեղենի, փոխադրամիջոցների, ուտեստի և նյութական մշակույթի այլ տարրերի առկայությունը բարձր

զարգացման հասած լինելու հավաստումներ են: Զարգացած էր նաև հոգևոր մշակույթը՝ հավատալիքներ, պաշտամունք, գրավոր մշակույթ, երաժշտական արվեստ, կերպարվեստ, քանդակագործություն, կիրառական արվեստներ, հուղարկավորման սովորույթներ և այլ բնագավառներ: Վանի թագավորության քաղաքներից էին՝ Տուշպան, Ռուսախինիլին. վարչատնտեսական խոշոր կենտրոններից էին՝ Արգիշտիխինիլին, Թեյշեբաինին, Օշականը, Էրեբունին, Բաստամը (Ռուսախինիլին) և այլն:

Գրականություն

1. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայ ազգագրության պատմություն, ուսումնական ձեռնարկ, մաս 1, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված է որպես ուսումնական ձեռնարկ բուհերի պատմության ֆակուլտետների ուսանողների համար, Եր., հեղ. հրատ., 2010:

2. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայ ազգագրության աղբյուրներ. ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Եր., ԵՊՀ հրատ., 2023, էջ 11-60:

ԹԵՄԱ 2
ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

ա) Շումերա-աքքադական սկզբնաղբյուրներ

Հայկական լեռնաշխարհի պատմության հնագույն շրջանի մասին ամենավաղ տեղեկությունները՝ Ք.ա. III հազարամյակի սկզբից մինչև II հազարամյակի սկիզբը, հաղորդում են սեպագրերը ստեղծած շումերները և Ք.ա. XXIV դարից սեպագրերը իրենց լեզվին հարմարեցրած աքքադացիները: Միջագետքի այս աղբյուրներում Միջագետքից հյուսիս ընկած տարածքը՝ Հայաստանը, ներկայացված է որպես «փրկիչ» սրբազան տարածք, արարչագործության կենտրոն, աստվածաբնակ երկիր, դրախտավայր, մարդկության բնօրրան, վերածննդի երկիր, Արևի երկիր:

Շումերական աղբյուրները Արատտա երկրի և ժողովրդի մասին (Ք.ա. XXVIII-XXVII դդ.). դրանց վերաբերյալ եղած տեսակետները հայագիտության մեջ: Արատտան Հայաստանի տարածքում շումերական աղբյուրներում մինչև օրս հիշատակված է որպես առաջին հնագույն պետական կազմավորում, որպես Հին Արևելքում քաղաքակրթական արժեքներ տարածող երկիր (Ա. Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհ, 2004, էջ 22-27): Հին միջագետքյան դիցաբանությունը Հայկական լեռնաշխարհի հետ է կապում աստվածներից իմաստնագույնի՝ արարչագործ, իմաստնության, համաշխարհային ու ստորերկրյա ջրերի աստված Հայա-Էնկիի պաշտամունքը: Հայա աստվածը նույնացվել է հայոց անվանադրի նախնի Հայկի հետ:

Շումերական դյուցազնավեպում «Արատտա» երկրի ժողո-

վուրդը «ընտրյալ» է համարվել. «Ժողովուրդն (Արատտայի), որ առավել է մյուս ժողովուրդներից»: Արատտայում, ըստ շումերական բնագրերի, գործածվել է սեփական գրային համակարգ, հիշատակված Արատտան՝ որպես «Աստվածային սուրբ օրենքներով երկիր»: Արատտա անվամբ երկիրը զուգադրվել է Աստվածաշնչի Արարատ-Հայաստանի հետ:

Ք. ա. XXIV դ. երկրորդ կեսի աքքադական պետության հիմնադիր Սարգոն Աքքադացու Ք. ա. XXIII դարի սկզբնաղբյուրները Արմանի, Արման(ում) և Արամ երկրի անվանումների, գիտնականների կողմից դրանց տեղադրության հարցի շուրջ եղած վարկածները: Ուսումնասիրողները այդ անվանումները զուգադրելի են համարում «Արմենիա» անվանաձևին: **Այլ տեղեկություններ**: Ըստ աքքադական սեպագրերի՝ Հայկական լեռնաշխարհից հարավ էր տարվում շինարարական հումք՝ «լեռնային քարեր»՝ տաճարային շինարարության համար: Այնտեղ էին հրավիրվում նաև արատտացի շինարար վարպետներ Ուրուկի Էաննա նշանավոր տաճարի կառուցման համար: Հաղորդվում են տեղեկություններ Արատտայում սեփական գրային համակարգերի մասին: Տնտեսության մեջ միայն արատտացիներն են որպես փոխադրության միջոց, նաև ռազմական արվեստում գործածել ձի դեռ Ք. ա. III հազ.: Սա ձիու վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունն է:

Արատտան լեռնային երկիր էր, որտեղ կարևոր դեր է խաղացել նաև երկրագործությունը, հիշատակվել է ցորենի և սիսեռի մշակություն (Ա. Մովսիսյան, Հայաստանը Ք.ա. III հազ., էջ 97): Հիշատակվում է նաև, որ արատտացիները Շումերում մետաղները փոխանակում էին «այգիների պտուղների», գինու հետ:

Ըստ շումերական աղբյուրների՝ Արատտայում առաջնա-

կարգ դեր է խաղացել անասնապահությունը, ունեցել են հովվության աստված՝ Դումուզի անվամբ, արտահանել են մետաղներ, թանկարժեք քարեր: Հայտնի է եղել հանքային հարստություններով՝ ոսկու, արծաթի, բրոնզի, կապարի, լաջվարդի, սարդիոնի հանքերով և դրանց մշակությամբ:

բ) Ասորեստանյան սեպագիր արձանագրությունները

Շնորհիվ ասորեստանյան արձանագրությունների՝ մեզ հասել են բացառիկ արժեքավոր և մեծածավալ տեղեկություններ: Դրանք վերաբերում են ոչ միայն մեր լեռնաշխարհի քաղաքական պատմությանը, այլև հոգևոր և նյութական մշակույթին, սոցիալ-տնտեսական և հասարակական հարաբերություններին՝ սկսած Ք.ա. XIV դ. վերջերից մինչև Ք.ա. VII դ. երկրորդ կեսը:

Ուշագրավ են Ք.ա. XIX-XVIII դդ. Հայկական լեռնաշխարհի մետաղի արդյունահանման և առևտրի գլխավոր մայրուղու, ցեղային կազմավորումների, առևտրական կապերի մասին հիշատակությունները: Սեպագրերից հայտնի է դառնում, որ դեպի Հայկական լեռնաշխարհ արշաված Ասորեստանի արքաներին առաջին հերթին հետաքրքրում էին տեղի բնական ռեսուրսները, հատկապես մետաղները: Քանեշի (Քյուլթեփե) հնավայրում գտնված արձանագրություններում հիշատակված է Խախ անվամբ բնակավայրը, ոսկու արտահանման կարևոր մի շրջան, որը հիշատակել են նաև հայ մատենագիրները: Այն տեղադրվում է Բարձր Հայքի տարածքում: Ասորեստանյան արձանագրություններում հիշատակված են նաև Հայկական լեռնաշխարհի տասնյակ իշխանություններ՝ Ծուփանա (Ծոփք), Թեգարամա (Թորգոմա տուն) և այլն:

Ք.ա. XV-IX դդ. հիշատակությունները Նաիրի և Ուրար-

տու երկրանունների մասին. Ուրարտու (Ուրուատրի ձևով) անվամբ պետության (XIII դ.) Սալմանասար I արքայի (Ք.ա. 1266-1243) և Թուկուլտի – Նինուրտա I-ի (Ք.ա. 1243-1221) հիշատակած Նաիրի անվամբ երկրի մասին: Նաիրյան «երկրների» և դրանց 43 առաջնորդների կամ «թագավորների» հիշատակությունները, մեկուկես դար անց Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1115-1077) արձանագրությունները նաիրյան «երկրների» ընդարձակ, հպատակություն չճանաչող և անծանոթ երկրի, «մեծամեծ քաղաքների», «նրանց հարստությունների, «նրանց բազմաթիվ ձիերի ու ջորիների երամակների, երինջների հոտերի և նրանց երկրագործական անթիվ ունեցվածքի» մասին»: Աշշուրնաձիրապալ II արքայի (Ք.ա. 883-859) արձանագրությունները «Նաիրի»՝ արդեն մեկ միասնական երկրի, նրա «250 պարսպապատ քաղաքների» մասին է: Նրա օրոք սովորություն է դառնում Ուրարտու տերմինի հետ հիշատակել նաև Նաիրի անվանումը:

Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ տեղանունների, երկրագործության, անասնապահության, ձիաբուծության, մարտակառքերով մարտավարության, ջրանցքաշինության, Ուրարտուի պաշտպանական ամրությունների, Խալդի աստծո տաճարի հարստության կողոպուտի, «թագավորական տների» և այլ հիշատակություններ: «Թագավորական տների» անդամների թիվը, ըստ Սարգոն II արքայի (Ք.ա. 721-705) հիշատակությունների, հասնում էր 120-260-ի: Նա իր տարեգրություններում հիշատակում է ուրարտական ձիաբուծարանների, զինախաղերի (ինչպես օրինակ՝ Մենուա արքան իր ձիով ցատկել է 22 կանգուն (=11,4 մ) երկարություն, իսկ Արգիշտի II-ի արձակած նետը թռել է 950 կանգուն (492 մ) տարածություն): Նույն արքայի վկայությամբ ուրարտական զորաբանա-

կում օգտագործում էին երաժշտական փողային գործիքներ և թմբուկներ՝ իրենց մարտիկներին ոգևորելու և հակառակորդին ահաբեկելու նպատակով:

գ) Խեթական սեպագիր արձանագրություններ

Ք.ա. XV-XIII դարերի խեթական սկզբնաղբյուրները Հայասա պետական կազմավորման մասին: Գիտնականների (Գր. Ղափանցյան, Ն. Ադոնց) տեսակետները Հայասա երկրանվան, մեր ժողովրդի ինքնանվանման՝ հայ, և երկրի՝ Հայաստան անվանումների կապի մասին եղած տեսակետները (Hayasa անունը բաղկացած է Haya հիմքից և sa վերջավորությունից, բառացի՝ հայերի երկիր՝ Հայաստան նշանակությամբ, քանզի sa վերջածանցը նշանակում է երկիր, այն տեղանվանակերտ վերջածանց է):

Հայասա-Ազզի երկիրը տեղադրվում է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի, Փոքր Հայքի, հնարավոր է նաև հարակից այլ տարածքներում:

Հայասայի կարևոր կենտրոններից Կումախան Բարձր Հայքի Անի-Կամախն է, որտեղ էլ թաղվում էին հայոց արքաները: Նրանցում հաղորդվում է Հայասա պետության արքունիքի, բանակի, դիցապաշտական կենտրոնների, նրա դպիրների, արքունի դիվանի (գրասենյակի), պետական գրագրության, բանակի 700 մարտակառքի, 10-հազարանոց հեծելազորի, երկրի բազմաթիվ տեղանունների նույնացումը Աստվածաշնչյան (Թոգարմա), Մելիդի (Մալաթիայի), Թիլ Հայասայի (Թիլի) և այլ բնակավայրերի անվանումներին:

Խեթական սկզբնաղբյուրները ամուսնության ամենավաղ սովորույթների (մերձավոր ամուսնություն)*, երկրագործութ-

* Խեթական թագավոր Սուպպիլուլիումման ուշագրավ հրահանգ է տալիս (Հայասա երկրի արքա) Հուկկանային՝ իր քրոջ հետ նրա ամուսնության

յան, խաղողագործության, մարտակառքերով մարտավարության և այլնի մասին:

Հայկական լեռնաշխարհի խեթական պետության հարևանությամբ տեղանունները ըստ խեթական սեպագիր աղբյուրների. Հայասան և Ազզին մեկնաբանվել են որպես միմյանց մոտ գտնվող երկու քաղաքական կազմավորումներ, որոնց տարածքի տեղադրությունը, ըստ գիտնականների, գտնվել է. ա) Երզնկա-Տրապիզոն-Էրզրում եռանկյան միջև, բ) Գայլ գետի ստորին հոսանքների շրջանում, գ) Եփրատի, Ճորոխի և Իրիս-Յեշիլըրմակի միջև, դ) Սև ծովի ափին՝ Ճորոխի հյուսիսային ավազանում: Այսպիսով, Հայասան կարող էր գտնվել սևծովյան Տրապիզոն-Գիրեսուն հատվածից մինչև Վանա լիճ ընկած ընդարձակ տարածությունում՝ Ազզիի հարևանությամբ: Կա տեսակետ, որ Հայասա և Ազզի տերմիններով բնորոշվող տարածքը եղել է էթնոլեզվական առումով միմյանց սերտորեն կապված երկու ցեղային միություն: Խեթական տեքստերից

առիթով: Ասում է նրան հետևյալը. «Քույրս, որ քեզ կնության եմ տվել, նույնպես ունի քույրեր և կիսաքույրեր, իսկ նրանք, քո ամուսնության հետևանքով, մերձեցել են քեզ: Այսպես, ուրեմն, Խաթթի երկրում օրենք գոյություն ունի, ըստ որի՝ չի կարելի իր քույրերին ու զարմիկներին դիպչել, դա անթույլատրելի է: Խաթթիում նման արարք թույլ տվողը չի ապրի, նա կմեռնի»: «Քանի որ ձեր երկիրը քիչ զարգացած է, ապա դուք սովոր եք ապրել ձեր քույրերի և զարմիկների հետ: Խաթթիում դա արգելված է: Երբ մի օր քո կնոջ քույրը, կիսաքույրը կամ զարմուհին քեզ հյուր գա, նրանց առաջարկիր խմելիք և ուտելիք: Խմեցե՛ք, կերե՛ք, լավ ժամանակ անցկացրե՛ք, սակայն նրանցից ոչ մեկին մի՛ դիպչիր: Անթույլատրելի է, դա մահացու մեղք է»: «Զգուշացիր նաև պալատի կանանցից… ազատ կամ ստրուկ, մի մոտենար նրան, մի խոսիր նրա հետ: Լինի դա քո ծառան կամ սպասուհին, նրան մի մոտենար, զգուշացի՛ր»: «Երբ Հայասա վերադառնաս, մի դիպչիր քո եղբայրների կանանց և քո քույրերին. Խաթթիում դա անթույլատրելի է: Եթե պալատ վերադառնաս, արգելված բան մի անի՛ր: Նաև նոր կին չառնես Ազզի երկրից: Եթե արդեն մեկն ունես, թող նա լինի քո հարճը, բայց նրան մի դարձնիր քո կինը (տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանի պատմություն, 1978, էջ 30):

պարզվում է, որ հայասացիները հիմնականում երկրագործ էին: Խեթական հիերոգլիֆ արձանագրությունները հայագիտության համար ունեն բացառիկ կարևորություն, կարևոր սկզբնաղբյուրներ են վաղնջահայերենի ուսումնասիրության համար, նախամաշտոցյան գրային մտածողության վերականգնման տեսակետից:

դ) Վանի թագավորության արձանագրություններ

Քարի, մետաղյա, ոսկրե իրերի, կավե սալիկների վրա Հայաստանի տարածքում հայտնաբերված ավելի քան 600 արձանագրությունների հիշատակությունները հայկական մի շարք տեղանունների, տնտեսության տարբեր ճյուղերի՝ երկրագործության, խաղողագործության, ջրանցքաշինության, ջրաղացների ջրով սպասարկման, անասնապահության, արհեստների, կիրառական արվեստի, շինարարական տեխնիկայի, քաղաքների հիմնադրման (Տուշպա (Տոսպ)՝ Սարդուրի I-ի օրոք՝ Ք.ա. 840-825 թթ., Մենուախինիլիի՝ Մենուա արքայի (Ք.ա. 810-786 թթ.), Էրեբունիի՝ Արգիշտի I-ի՝ Ք.ա. 782 թ., Արգիշտիխինիլիի (Արմավիր) Ք.ա. 776 թ., Թեյշեբաինի, Գիարնիա-Գառնի և այլն), ջրանցքների՝ Մենուայի (72 կմ), Ռուսա արքայի Ռուսախինիլիի 25 կմ-ոց, Ումեշինի ջրանցքի և այլնի կառուցման, տեղանունների, ուրարտական պանթեոնի աստվածությունների, պաշտամունքային հարցերի, նվիրաբերման, զոհաբերությունների, զորահավաքի, արշավանքների, հաղթանակների, ավարառության, հարկահավաքման, վերաբնակեցումների և այլնի վերաբերյալ: Ուրարտական արձանագրությունները կարևորվում են որպես տնտեսական, շինարարական, ռազմական և ծիսապաշտամունքային տեղեկությունների սկզբնաղբյուրներ:

Փաստորեն, ուրարտական արձանագրությունները ունեն

տնտեսական բովանդակություն, շինարարական աշխատանքների, քաղաքների, բերդերի, ջրանցքների կառուցման, գյուղատնտեսական մթերքների ամբարման և այլնի մասին: Ուրարտական աստվածների պանթեոնի գլխավոր աստվածներն են եղել Խալդին թեյշեբան, Շիվինին: Այն բաղկացած էր 70 աստվածներից՝ 35 կին, 35 տղամարդ և 30 սրբություններից:

Արգիշտի I Մինուայի որդին թողել է արձանագրություն Ուլուանե երկրի (ներկայիս Աբովյան քաղաքի շրջակայքում), Դարանի քաղաքի (Աբովյան քաղաքի տեղում), Էրեբունի-Երևանի «ծննդյան վկայականի մասին»:

Ե) Բեհիսթունյան արձանագրություն

Հին պարսկական հիշատակությունները (521-330 թթ. Ք.ա.):

Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը՝ որպես հայ ժողովրդի հնագույն պատմության կարևորագույն սկզբնաղբյուր (թարգմանված տեքստերը Կ. Բասմաջյանի և Գ. Նալբանդյանի): Դարեհ I-ի (522-486) եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն, աքքադերեն կամ բաբելերեն) 414 տող արձանագրությունը (պարագրաֆ 26-30-ում), Արմենիա անվան միջազգայնացումը, դրանում Հայաստանի տարածքի, սահմանների, հարկերի, տուրքերի տեսակների, Հայաստանի՝ Պարսկաստանի նկատմամբ ունեցած հարկային պարտականությունների, հարկահանության եղանակների, արմենների՝ ռազմիկ ժողովուրդ լինելու, հայերի ազատասեր ոգու և ձգտումների, Հայաստանի հարևան երկրների, Արմինա-Հայաստան երկրի աշխարհագրական վայրերի հիշատակությունների մասին և այլն:

զ) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնված օտարալեզու արձանագրություններ

Ք.ա. IV – Ք.հ. III դդ. Հայաստանում օտարալեզու արամեատառ (թվով՝ 10), լատիներեն (թվով՝ 8) և հունարեն (թվով՝ 16) արձանագրությունները խոշոր կառույցների, քաղաքների ու բերդերի կառուցման, ընդարձակման, քաղաքներում ծավալվող առևտրի և փոխանակչության, տնտեսական զբաղմունքների, զանձվող հարկերի, հողային սահմանների, քաղաքների հիմնադրման, նրանց ինքնավարության մարմինների, վերաբնակեցումների, Գառնիի բաղնիքի հանդերձարանի առասպելադիցաբանական հունարեն գրության, ընտանեկան հարաբերությունների, աստվածների պաշտամունքների, քաղաքների, սրբավայրերի հիմնադրման, արքայական նվիրատվությունների և այլնի մասին:

Գևորգ Տիրացյանի՝ արամեերեն, Հ. Մանանդյանի՝ հունարեն արձանագրությունների վերաբերյալ ուշագրավ ուսումնասիրությունները և դրանց արժեքը: Արամեերենը և հունարենը համարվել են հելլենիստական Հայաստանի պաշտոնական գրասենյակային, պետական-վարչական լեզու: Արամեերեն արձանագրություններով գտնվել են 18 սահմանաքարեր, որոնք որոշ գիտնականների կարծիքով, օր.՝ ըստ ֆրանսիացի սեմագետ Դյուպոն Սոմերի՝ առնչվել են ձկան որսի պաշտամունքին, հայ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի կարծիքով՝ տապանաքարեր են: Արամեերեն արձանագրություններում պատմական մեծ արժեք ունեն Արտաշես I արքայի վերաբերյալ եղած տիտղոսները (նա իրեն համարել է «Արտաշես արքա Բարի), իր իսկ սահմանաքարերի վրա գյուղերի և ագարակների սահմանների որոշման վերաբերյալ արքայի հրամանները, Տրդատ I-ի (66-88 թթ.) թողած հունարեն արձանագ-

ության մեջ (77 թ.) Գառնիի ամրոցի հիմնադրման և այլ հիշատակությունները:

Գառնիի, Ապարանի, Արմավիրի արձանագրությունները, դրանց բովանդակությունը: Առանձնանում են հետևյալ բովանդակությամբ. 1. արքայական արձանագրություններ՝ նվիրված աստվածների պաշտամունքին, 2. թագավորական նախնիներին ձոնված արձանագրություններ, 3. թագավորական իշխանության և արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ, 4. արքայական արձանագրություններ քաղաքների, սրբավայրերի և այլ շինությունների հիմնադրման մասին, 5. արքայական նվիրատվական արձանագրություններ, օր.՝ Տրդատ արքայի կողմից Գնթունիների նախարարական տոհմին շնորհված տիտղոսները և ծառայության դիմաց շնորհած Նիգ քաղաքը, 6. հոգևոր-պաշտամունքային բնույթի բնագրեր և այլն:

Է) Վիմագրական արձանագրություններ

Վիմագիր արձանագրությունները (վեմ-քար և գրություն), բառացի՝ քարագրություն, միջազգային տերմինաբանությամբ՝ էպիգրաֆիկա-մակագրություն: Հայերենում գործածվում են բազմաբնույթ եղանակներով՝ քաղաքական, օրենսդրական, առևտրական, նվիրատվական, ռազմական, շինարարական, հիշատակագրային, կրոնաբարոյախոսական՝ որպես պատմության, մշակույթի և լեզվի վերականգնման աղբյուրներ: Հայկական հուշարձաններին (սկսած VI դարից) փորագրված ավելի քան 10 հազար արձանագրությունները՝ հայոց կենցաղի և մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրներ: Վիմագրերի՝ որպես արժանահավատ սկզբնաղբյուրի նշանակությունը[1]:

[1] Հայոց «քարե մատյանները» վերծանելու, ընդօրինակելու և հրատարակելու

Հայկական գիտական վիմագրության սկզբնավորումն ու զարգացումը կապված են **Ն. Մառի** «Ани-столица Армении, М., 1898, **Հ. Օրբելու** «Դիվան վիմագրության» մատենաշարի, **Գարեգին Հովսեփյանի** «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» (եռահատոր ուսումնասիրություն), **Աշխարհբեկ Քալանթարի** (Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի հիմնադիրներից մեկը) «Արագածը պատմության մեջ», **Մեղրակ Բարխուդարյանի** «Դիվան հայ վիմագրության» և «Հայ միջնադարյան ճարտարապետներ և քարագործ վարպետներ», **Կարո Ղաֆադարյանի** «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» (1948), «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները» (1957), «Հաղբատ» (1863), «Երևանի միջնադարյան հուշարձանները» (1975), «Հայկական գրի սկզբնական տեսակները» (1939) և այլն, **Պարույր Մուրադյանի, Գր. Գրիգորյանի, Արգամ Այվազյանի, Գագիկ Սարգսյանի, Հուսիկ Մելքոնյանի, Ա. Հարությունյանի** և այլոց անունների հետ:

ասպարեզում գիտական մեծ ջանքեր են գործադրում **Մինաս Բժշկյանը՝** «Պատմություն Պոնտոսի» «Ճանապարհորդություն ի Լեհաստան», Վենետիկ, 1830, **Հովհաննես Շահխաթունյանցը՝** «Ստորագրութիւն կաթողիկե Էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ», հ. 2, Էջմիածին, 1842, **Սարգիս Ջալալյանցը՝** «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Բ, Տփղիս, 1858, **Մկրտիչ Էմինը՝** «Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М., 1881, **Մակար Բարխուդարյանցը՝** Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Հայագիտակ մատենադարան, «Գանձասար» հրատ., Երևան, 1999, **Մեսրոպ Սմբատյանցը՝** «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի», Վաղարշապատ, 1895, **Քաջբերունին՝** «Ճանապարհորդական նկատողութիւնք», ամբողջական աշխարհաբար հրատ., Երևան, 2003, **Կարապետ Բասմաջեանը՝** «Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Մարմաշենու», Պարիս, 1931, **Ղևոնդ Ալիշանը՝** «Շիրակ», «Սիսուան», «Այրարատ», «Սիսական», «Կամենից», Վենետիկ (1881-1896), **Կարապետ Կոստանյանը՝** «Վիմական տարեգիր», Ս.Պ., 1913:

Գրականություն

1. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայ ազգագրության աղբյուրներ, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2023:

2. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայ ազգագրության պատմություն, մաս 1, ԵՊՀ հրատ., 2010, էջ 42-71:

ԹԵՄԱ 3
ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

3.1. Հերոդոտոսի (V դ. Ք.ա.) «Պատմության» տեղեկությունները Հին Հայաստանի ու հայերի մասին: Աղբյուրագիտական արժեքը

Հարցեր և առաջադրանքներ:

Հերոդոտոսի վկայությունները Հին Հայաստանի պատմական աշխարհագրության, վարչատարածքային սահմանների, տնտեսության ու հասարակական-քաղաքական հարաբերությունների, Աքեմենյան Պարսկաստանի նկատմամբ ունեցած հարկային պարտականությունների, Հայաստանից Եփրատ գետով լաստանավերով, կավե սափորներով դեպի Բաբելոն, Միջագետք գինի արտահանելու, անասունների մեծաքանակ հոտեր ունենալու, Հայաստանով անցնող Արքայական ճանապարհի և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Հերոդոտոսի՝ արմենների փոյուգիական գաղութաբնակներ լինելու, նրանց նման հագուկապի, սպառազինության, մի խոսքով՝ հայ ժողովրդի ծագման փոյուգիական վարկածի մասին:

Հերոդոտոսը հին հունական պատմագրության ամենաականավոր դեմքն է և իրավամբ վաստակել է Պատմահայր պատմատիտղոսը: Ծնվել է Ք.ա. 484 թ. Փոքր Ասիայի հունական Հալիկառնաս քաղաքում, վախճանվել է Ք.ա. 425 թ., եղել է բազմաթիվ երկրներում և իր տեսածի ու լսածի հիման վրա գրել է հռչակավոր «Պատմություն» աշխատությունը, որը հետագայում Ալեքսանդրիայի գիտնականները բաժանել են 9 գրքերի: Աշխատության առանցքը հույն-պարսկական Ք.ա.

500-447 թթ. տեղի ունեցած պատերազմներն են: Նրա գիրքը հայերեն հրատարակվել է Ս. Կրկյաշարյանի թարգմանությամբ 1986 թ.:

ա) Հայաստանի պատմական սահմանները ըստ Հերոդոտոսի: Ըստ նրա՝ Հայաստանի տարածքը ընդգրկել է Աքեմենյան Պարսկաստանի 13-րդ և 18-րդ սատրապությունները: Նրա օրոք Մեծ Հայքն ու Փոքր Հայքը միավորված էին, հյուսիսային սահմանները կազմում էին Հալիս գետի ակունքները, հարավարևմտյան սահմանը՝ Կիլիկիան և նավարկելի Եփրատ գետը: Ըստ նրա՝ Հայաստանով է անցնում Սուսայից Սարդես Արքայական ճանապարհը Եփրատ գետի վրայով: Ճանապարհը ունեցել է վարչական, ռազմական, առևտրական կարևոր նշանակություն և 56,5 փարսախ երկարություն (1 փարսախը = 5.5 կմ), այսինքն՝ 340 կմ, որի վրա կառուցված է եղել 15 օթևան-կայան: Հայաստանը ընդգրկել է Կիլիկիայից մինչև Մատիենեի միջև ընկած տարածքը: Ըստ Հերոդոտոսի վկայությունների՝ Արմենիա-Հայաստանի միջով հոսել են 4 խոշոր գետեր՝ Հալիսը, Տիգրիսը, Եփրատը (Զաբ)՝ երկու ճյուղավորումներով, և Գյունդեսը: Այսպիսով, Հալիս գետի ակունքները ձգվում էին Հայաստանից, Եփրատը սկզբնավորվել է Հայաստանից, Կիլիկիայի և Հայաստանի սահմանը կազմում էր Եփրատ գետը, Մեծ (Վերին) Զաբ գետը սկզբնավորվում էր Հայաստանից: Փաստորեն տվել է Հայաստանի արևմտյան և հարավային սահմանների ուրվագիծը:

բ) Հայերի փռյուգիական վարկածը: Ըստ նրա՝ արմենները ունեին փռյուգիացիների նման հագ ու կապ, միանման սպառազինություն, լեզվով և արտաքինով նման էին և փռյուգիական գաղութաբնակներն էին: Իսկ փռյուգիացիները հնդեվրոպական ժողովուրդ են, Փոքր Ասիա են անցել Թրակիայից

(Բալկաններից) Ք.ա. XIII-XII դարերում:

Այդուհանդերձ, նրա վկայությամբ հայ արմենների հանդերձանքը և զենքերը նույնն էին, ինչ փռյուգիականը: Նա վկայում է, որ արմենների սաղավարտները հյուսածո էին, նիզակները՝ կարճ, վահանները՝ փոքր: Ճտքավոր կոշիկների, տեգերի ու սրերի մասին ակնարկից հետո անցնում է հայ-արմենների տնտեսական կենցաղին (տե՛ս Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1966, գիրք VII, էջ 409):

գ) Տնտեսական կյանքը: Հայաստանը գինեգործության հարուստ երկիր էր, որտեղից Եփրատ գետով նավերով, կարմիր կարասներով (հիշատակել է «փյունիկյան» անվամբ) գինի էին տանում Բաբելոն: Նավերը, ըստ Հերոդոտոսի, վահանի նման կլոր էին և ամբողջովին կաշեպատ: Նավավարները երկուսն էին՝ լայնաբերան թիակներով. մեկը՝ նավի ընթացքը ուղղորդելու, մյուսը՝ արագությունը զսպելու համար: Նավերում տեղավորում էին նաև ավանակներ՝ նավի կաշին ետ բերելու համար: Հայկական գինին աչքի էր ընկնում իր առանձնահատուկ բուրավետությամբ: Ամենամեծ նավերը կշռել են 5 հազար տաղանդ (1 տաղանդը = 30,3 կգ = 151,5 տ.): Մեր կարծիքով՝ դրանք եղել են տիկերի վրա ամրացված լաստանավեր՝ նավերը կառավարելի դարձնելու և թեթև լինելու համար: Հերոդոտոսի վկայությամբ՝ Հայաստանը աչքի էր ընկնում հարուստ արոտներով, զարգացած անասնապահությամբ և տարբեր արհեստներով:

Հայաստանը Պարսկաստանին որպես հարկ վճարել է 13-րդ սատրապությունը՝ 400 տաղանդ արծաթ, Փոքր Հայքը՝ 200 տաղանդ (մանրամասն տե՛ս «Հայ ազգագրության պատմություն», ձեռնարկում. մաս 1, Երևան, 2010, էջ 133-145): Ըստ

պատմահոր՝ Արմենիայում մի շարք ներկատու բույսերով ներկում էին բրդեր և դրանցով պատրաստված նկարազարդ գործվածքներ, որոնք միշտ պահում են իրենց պայծառ գույնը:

Ուշագրավ են վկայությունները նաև հայերի հարևանությամբ ապրող էթնիկ ընդհանրությունների, ամուսնության, հուղարկավորության, հավատալիքային ու պաշտամունքային սովորույթների վերաբերյալ հիշատակությունները: Պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհում հայերից բացի, բնակվում էին նաև **սասպեյրներ, ալարոդներ, մատիններ, մարդեր**: Դրանց ինքնությունը ամբողջությամբ դեռևս բացահայտված չէ: Հերոդոտոսի՝ հայ-արմենների վերաբերյալ վկայությունների համալիր մեկնաբանությունները տե՛ս Ռ. Նահապետյան, «Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին», ԵՊՀ հրատ., Եր., 2018, էջ 9-24:

3.2. Հայաստանը և հայերը ըստ Քսենոփոնի (430-355/6 Ք.ա.) աշխատությունների

«Անաբասիս» և «Կյուրոպեդիա» երկասիրությունների արժեքը՝ որպես պատմական սկզբնաղբյուրներ

Հունական պատմագրության ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ «Ատտիկյան մեղու» պատվանունով հայտնի Քսենոփոնը ծնվել է Ք.ա. 430 թ. Աթենքում, մահացել է Կորնթոսում 355/56 թթ.: Նրա գրչին են պատկանում «Կյուրոպեդիա» («Կյուրոսի դաստիարակությունը» բարոյախոսական-քաղաքական, բայց ազգագրական տեղեկություններով շատ արժեքավոր աշխատությունը և «Անաբասիս» («Նահանջ բյուրու») նշանավոր երկը: Այս գրքերի հայերեն թարգմանությունները կատարել է Սիմոն Կրկյաշարյանը: Առաջինը վերաբերում է նաև Հայաս-

տանի Ք.ա. VI դարի իրադարձություններին, հայ-մարական, հայ-պարսկական հարաբերություններին: Իսկ «Անաբասիսը» ամբողջությամբ անգնահատելի սկզբնաղբյուր է անտիկ շրջանի հայերի և Հայաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Գրքի շարժառիթը հունական վարձկան 10-հազարանոց զորաբանակի մասնակցությունն էր պարսից արքայի եղբայր Կյուրոս Կրտսերի՝ արքայի դեմ կազմակերպած ապստամբությանը Ք.ա. 401 թ.: Հունական զորքը տեղ հասավ, երբ արդեն Կյուրոս Կրտսերը Կունաքսայի ճակատամարտում պարտվել և սպանվել էր: Հունական վարձկան բանակի նահանջի ճանապարհը հայկական լեռնոտ ուղին էր՝ պարսկական հեծելազորի հետապնդումից խուսափելու համար:

Հարցեր և առաջադրանքներ:

Քսենոփոնի վկայությունները Հայկական լեռնաշխարհի էթնիկ կազմի (խալդայների, խալյուբների, կարդուխների, մարդերի, տաոխների, փասիաների և այլոց), նրանցով բնակեցված տարածքների, նրանց անվանումներով հայկական տեղանվանումների, Հայաստանի տարածքային սահմանների վերաբերյալ:

Քսենոփոնի հաղորդումները հայ-արմենների նստակյաց և երկրագործ լինելու, ոռոգման համակարգերի, Տիգրիս գետից սնուցվող խորը և լայն չորս ջրանցքների, նրանցում նավարկվող հածանավերի, գինու և գարեջրի ընտիր տեսակների արտադրության, կավածեփ հորերում և մեծ կարասներում պահպանման, պարենի և բարիքների՝ հացի, մորթելու անասունների, անուշահոտ գինիների, ամեն տեսակ ընդեղենի, խոզաճարպի, քնջութի, դառը նշի ու բնեկնի յուղի առատության մասին: Հին հայերը գարեջրի պատրաստման համար օգտագոր-

ծել են գարի, կորեկ, բույսերից՝ գայլուկ, և այլն, խմել են եղեգներով: Քսենոփոնը հիշատակում է թունդ գարեջրի մասին, որն առաջին գրավոր վկայությունն է այդ խմիչքի մասին: Հիշատակություն է թողել նաև տնայնագործության ու արհեստների, անասնապահության, ձիաբուծության, որսորդության, փոխադրության միջոցների ու հարմարանքների, հաղորդակցության ուղիների, վտանգի դեպքում կիրառվող ազդանշանային համակարգերի, տարածության և ժամանակի չափման միավորների վերաբերյալ:

Քսենոփոնի վկայությունները հայերի բնակավայրերի տեղադրության (ջրառատ տեղերում, գետերի ափերին, լեռների լանջերին), տների տեսակների (աշտարակավոր և գետնափոր) վերաբերյալ, դրանց նկարագրությունը, դրանք՝ որպես գլխատան նախահիմք: Զգեստների, ուտեստի, հյուրընկալման, զենքերի, ռազմական սովորությունների, հայոց բանակի, այրուձի ունենալու, կրոնական հավատալիքների վերաբերյալ հանգամանալի նկարագրությունները:

Առանձին խումբ են ընտանիքի, հասարակական, միջանձնային հարաբերությունների, ժառանգական իրավունքի, հուղարկավորման սովորությունների և այլ երևույթների վերաբերյալ հիշատակությունները «Կյուրոպեդիա» աշխատությունում: Նրան հիացրել է հայ կնոջ բարոյական անբասիր վարքը, ամուսնուն, ընտանիքին անսահման նվիրվածությունը:

ա) **Ըստ «Անաբասիս» աշխատության՝** տրված են Ք.ա. V դարի կեսերի Հայաստանի հարավարևելյան և հյուսիսարևմտյան սահմանների վերաբերյալ դիտարկումները. Հայաստանը սահմանակից էր Մարաստանին և Պոնտական լեռներում ապրող խալդայներին, հարավարևելյան սահմանը Կենտրիտես գետն էր (Արևելյան Տիգրիս, հետագայում Բոնտան-սու), որը Հայաստանը բաժանում էր կարդուխների երկ-

րից (Կորդուք), իսկ հարավային սահմանի արևմտյան հատվածում Արևմտյան Տիգրիսն էր և Մասիոսը՝ Տուր-Աբդին լեռնաշղթան (Հայաստանի արևելյան և արևմտյան սահմանների մասին նշում է Հերոդոտոսը): Ըստ Քսենոփոնի՝ «Հայաստանը մեծ և ընդարձակ երկիր էր»: Նա արժանահավատ հեղինակ է, քանզի անձամբ է եղել Հայաստանում:

բ) **Հայաստանի էթնիկ կազմի** մասին խոսելիս նշում է, որ Հայկական լեռնաշխարհում բնակվում են նաև **խալդայները, խալյուբները, փասիաները, հեսպերիտները**: Պատմագիտական գրականության մեջ նրանց վերաբերյալ կան տեսակետներ, ըստ որոնց՝ մեծ մասամբ ձուլվել էին հայերի հետ՝ հետք թողնելով լեզվի, մշակույթի մարդաբանական տիպի, բնութագրի վրա: Ըստ եղած տեսակետների՝ ալարոդներից առաջացել է Արարատյան դաշտավայր անվանումը, մարդերից՝ Մարդաստանը կամ Մարդուղի գավառը, սասպեյրներից կամ Հեսպերիտներից՝ Սպերը, Կարդուխների երկիրը համապատասխանում է «Կորդվաց» աշխարհին, խալդայները՝ Խաղտիք երկրամասին, տառխներից ծագել է Տայքը, փասիաներից՝ Բասեն գավառի անվանումը: Քսենոփոնի հիշատակած խալդայներին չպետք է շփոթել Սև ծովի առափնյա շրջանում ապրող խալդայների հետ: Քսենոփոնի հիշատակածը ըստ տեղանքի՝ Սասունի և Խութի լեռնային շրջաններում բնակվող էթնիկ տարր են: Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, ըստ պատմիչի, նրա միջնաշխարհը բնակեցված էր հիմնականում մեկ ժողովրդով՝ հայերով:

գ) Տնտեսաարտադրական բնութագիրը: Քսենոփոնը հմուտ ազգագրի և բանահավաքի տպավորություն է թողնում: Նրանից առաջ և հետո ոչ միայն օտար, այլև նույնիսկ հայրենի պատմագրության մեջ նման ամբողջական նկարագիր ներկայացնող հեղինակ չի եղել: Նրա հաղորդումները վերաբերում

են հայ-արմենների նստակյաց և երկրագործ ժողովուրդ լինելուն: Հայաստանը բնութագրվում է որպես «ընդարձակ և բարեբեր» երկիր, գինու և գարեջրի ընտիր տեսակների հայրենիք, գինին սովորաբար պահվում էր «կավածեփ հորերում», երկիրը հարուստ էր ամեն տեսակ պարենով և բարիքներով, մորթելու անասուններով, հացով, չամիչով, ընդեղենով, խոզաճարպով, քնջութով, դառն նշով ու բևեկնի յուղով, խոշոր և մանր անասուններով, ուներ ձիերի ընտիր տեսակներ, Պարսկաստանին ձիահարկ էր տալիս: Զարգացած անասնապահության շնորհիվ արմենների կերակուրները հիմնականում մսից էին պատրաստվում: Ամենաուշագրավը այն է, որ գրավոր առաջին հիշատակությունն է թողել հայոց տներում կարասներում լի գարեջրի գոյության մասին. հույն զինվորները ագահաբար խմել են «գարուց պատրաստված գինի, որ կարասների երեսին լողում էին գարու հատիկներ, խմում էին մեծ ու փոքր եղեգներով… այն թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր» (տե՛ս մանրամասն՝ Քսենոփոն, «Անաբասիս», գլ. IV, էջ 97): Հայերը ունեին նաև գինին հորելով կարասների մեջ պահելու սովորույթ (էջ 98):

Իբրև ականատես նշում է հայ-արմենների անչափ հյուրասեր լինելու, օտարականներին լիառատ կերուխումի արժանացնելու, սեղանները գարու և ցորենի հացով, հավի, հորթի, գառան, ուլի մսով ծածկելու, հորված կարասներից անուշահամ գինի հրամցնելու մասին. «…երբ մեկը մտերմաբար կամենար մի ուրիշի կենացը խմել, քարշ էր տալիս նրան գինու կարասի մոտ և պետք է խմեր՝ կռանալով ու ծծելով եզան նման» («Անաբասիս», IV, էջ 93): Նկարագրում է հյուրերին անվտանգ, ապահով ճանապարհելու, վտանգավոր և անծանոթ տեղանքներում ուղեցույց-առաջնորդ տրամադրելու սովո-

րույթների մասին:

Նրա «Կյուրոպեդիա» աշխատության մեջ հիշատակվում է, որ Հայաստանում կիրառվել է անասնապահության սարվորային հեռագնա համակարգը, հակամարտող խալդայների հետ ձեռք էր բերվել համաձայնություն՝ նրանց ալպյան մարգագետիններով հարուստ արոտավայրերից օգտվելու մասին: Հեծելազորը սեփական ձիերով է ապահովվել, և պարսիկ թագավորին էլ որպես տուրք 20 հազար մտրուկ է հանձնվել:

Նշվում է նաև գեղարվեստական մետաղագործության, ոսկե ըմպանակների, գորգերի առկայության մասին և այլն:

Բնակավայր, բնակարան: Բացառիկ և եզակի են Քսենոփոնի՝ հայկական գյուղերի և տների նկարագրությունները: Ըստ նրա՝ գյուղերը տեղավորված էին ջրառատ տեղերում, գետերի ափերին, լեռների լանջերին՝ ամրության ու պաշտպանության համար: Տները գետնափոր և աշտարակավոր էին: Կենտրոնական և հյուսիսային երկրամասերում «տները գետնափոր էին, մուտքը ջրհորի բերանի նման, իսկ ներքևի մասը ընդարձակ, մարդիկ և անասունները բնակվում էին համատեղ, անասունների համար մուտքը փորված էր գետնի միջով, իսկ մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում պահվում էին այծեր, ոչխարներ, կովեր, եզներ, հավեր, բոլոր անասունները կերակրվում էին խոտով» («Անաբասիս», IV, էջ 97): Ակնհայտ է, որ տները գետնափոր լինելով՝ գյուղերը ևս գրեթե գետնի մակերեսին հավասար էին լինելու:

Մեծ գյուղերն ունեցել են ամրության և պաշտպանության համար շինված աշտարակավոր տներ, որոնք, ըստ մեր դիտարկումների, կոչվել են **քոշք**, ինչը բնորոշ էր Սասունին: Դրանք 2-3 հարկանի լեռ քարերից պատրաստված տներ էին (տե՛ս հեղինակի «Ազգաբանական ուսումնասիրություններ», գիրք 3, Երևան, 2020, էջ 39-54): Ի դեպ, հելլենները քաղաք չեն

համարել անպարիսպ բնակավայրերը: Քսենոփոնի նկարագրած գետնափոր և աշտարակավոր շենքերի մասին հաղորդումները ստույգ են, հաստատում են նաև XIX-XX դարերի մի շարք ճանապարհորդների վկայությունները:

Տարազ: Հիշատակության կա արմեն երեխաների «բարբարոսական զգեստների», տրեխի, ձյան մեջ չխրվելու համար թաղիք գործածելու, կանանց և տղամարդկանց կողմից զարդեր կրելու, նշի և խնկենու եթերայուղերից օծանելիքներ պատրաստելու և գործածելու, զինվորական հագ ու կապի, հայ զինվորի զինվածության, զենքի տեսակների, հույն զինվորների ոտնամանները տեղականով փոխարինելու, գորգերի, արծաթագործության նմուշների և այլն մասին (առավել հանգամանալի տրված է «Կյուրոպեդիա» աշխատության մեջ): Հայերի խրթին ձյունապատ վայրերը անվտանգ անցնելու համար հույները հագել են հյուսածո ոտնամաններ, հաստ թաղիքով փաթաթել են անասունների ու իրենց ոտքերը: Պատմիչը մի տեղ գրում է արմեն երեխաների «բարբարոսական զգեստների» մասին, ակնարկում է Տիգրանի խույրի, հայ ունևոր կանանց զարդեր կրելու սովորության մասին և այլն (տե՛ս «Կյուրոպեդիա», էջ 116-117):

Ընտանեկան, հասարակական հարաբերություններ: «Կյուրոպեդիա» աշխատության մեջ հեղինակը ակնարկներ ունի հայ կնոջ բավականաչափ ազատության և հեղինակության, օտարների հետ ազատ զրույցի, անգամ զորքում ծառայության մասին: Ըստ պատմիչի՝ հայուհին նվիրված է ամուսնուն, օրինակ՝ հայոց արքայազն Տիգրանի կինը գերությունից ազատվելու և իր հավատարմությունը խանդոտ ամուսնուն վկայում է Արամազդ աստվածության անունով երդվելով: Կա նաև հիշատակություն այն մասին, որ հայոց արքան ունեցել է բազմաթիվ կանայք և հարճեր:

Հայոց բանակը, ըստ «Կյուրոպեդիայի», կազմված էր 8 հազար հեծյալից, 40 հազար հետևակ գերազանց նետաձիգներից: Նշվում են զենքի տարբեր տեսակներ՝ նետ ու աղեղ, նիզակ, պարսատիկ, դաշույն, սուր, սվին, կապարճ, սակր, վաղր, մուրճ, զրահ, թաղիքե հատուկ թիկնոց և այլն: Արմենները գերազանց նետաձիգներ էին, ունեին համարյա երեք կանգուն երկարությամբ աղեղներ և ավելի քան երկու կանգուն երկարությամբ նետեր («Անաբասիս», IV, էջ 105):

«Կյուրոպեդիայում» ուշագրավ հիշատակություններ կան հայերի մահվան և հուղարկավորման ժամանակ զգեստների պատառոտման, կանանց կողմից երեսները ճանկռոտելու, աղեկտուր լաց ու կոծի, անձնական իրերը, զարդերը, զենքն ու զրահը ննջեցյալի հետ հուղարկավորելու մասին: Պատմիչը նշում է նաև արմենների ազատատենչ ոգու մասին, նրանք եղել են ռազմիկ ժողովուրդ, ձգտել են ազատ ու անկախ լինել, թոթափել օտարի լուծը («Կյուրոպեդիա», էջ 94): Կարելի է ասել, որ հայ-արմենների կենցաղի ու նրա մշակույթների վերաբերյալ նյութերի պակասը հնարավոր է լրացնել այն տվյալներով, որոնք ներկայացնում են Հայաստանի անմիջական հարևան ժողովուրդներին: Այդպիսի տվյալներ շատ ունի Քսենոփոնը[1]:

---

[1] **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն, մաս I, Երևան, 2010, էջ 82-95, **նույնի՝** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 145-164:

3.3. Ստրաբոնի (63–21/25 Ք.ա.) «Աշխարհագրությունը» Հայաստանի և հայերի մասին

Հարցեր և առաջադրանքներ:

Ստրաբոնի «Աշխարհագրությունը» (17 գրքից բաղկացած)՝ որպես անգնահատելի սկզբնաղբյուր Հայաստանի պատմության, աշխարհագրության, կենցաղի ու մշակույթի ուսումնասիրության համար:

Ստրաբոնի վկայությունները մեր երկրի սահմանների և ընդգրկած տարածքի, Արտաշես արքայի՝ երկրի չորս ուղղություններով կատարված արշավանքների, հայոց երբեմնի ծայրագավառների վերամիավորման, հայերենի ընդհանուր լեզու լինելու, Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների հիմնադրման, այնտեղ օտարներով բնակեցման (սինոյկիսմոս) վերաբերյալ ժողովրդագրական այլ տեղեկություններ: Ստրաբոնի վկայությունները Հայաստանի բնական հարստությունների վերաբերյալ:

Ստրաբոնը և հայ ժողովրդի ծննդաբանության հիմնահարցը: *Հայերի ծագման թեսալական վարկածի, արգոնավորդների առասպելի, Արմենոսի անվան հետ Արմեն-Արմենիա անվանումները զուգադրելու, նաև ասորիների, արաբների հետ ցեղակցություն տեսնելու հարցերի վերաբերյալ Ստրաբոնի հիշատակությունները: Ստրաբոնի վկայությունները հայերի տնտեսական զբաղմունքների՝ երկրագործության, ցորենի, ձիթապտղի, մեղրի, այգեգործության, ձիթենու, խաղողի մշակության, գինեվետ երկիր լինելու, անասնապահության, հատկապես ձիաբուծության, տարեկան 20 հազար ձիու քուռակ Պարսկաստանին հարկ վճարելու, արհեստագործական, հայ-արմենների նյութական մշակույթի՝ տարազի, այն թեսալականին նույնացնելու, Հայաստանում և հարևան երկրներում գոր-*

ծածվող կոշիկների տարբեր տեսակների, սուր-սուր գամերով կոշիկների, եզան թարմ կաշուց պատրաստված կոշիկ-տրեխների, արմենների մարա-պարսկական առնչությունների, նրանց հետ խնամիական կապեր հաստատելու, կապի միջոցների, առևտրական կապերի, ուխտերով քարավանային առևտրի, չափ ու կշռի, բժշկության, Անահիտ դիցուհու պաշտամունքի, նրան նվիրված տոների, նրա տաճարներին ճակատները ջահաձև խարանած երինջների զոհաբերությունների, կրոնական հետերիզմի, ազնվական ծագմամբ աղջիկների անձնատրության՝ կուսությունը աստվածուհուն նվիրելու սովորույթների ու ծեսերի, հուղարկավորման սովորույթների և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Հույն աշխարհագիր և պատմագիր Ստրաբոնը ծնվել է Ք.ա. 63 թ. Պոնտոսի Ամասիա քաղաքում, մահացել է մոտավորապես 23 թ. Ք.հ.: Գրել է 43 գրքից բաղկացած «Պատմական հիշատակարաններ» աշխատությունը, որը մեզ չի հասել: Շատ է ճանապարհորդել, այդ թվում նաև մեր երկրում, ուստի Քսենոփոնի նման նրա վկայությունները ևս անչափ վստահելի են: Նրա տեղեկությունները հաճախ եզակի են: Ստրաբոնի 17 գրքերից բաղկացած «Աշխարհագրություն» հանրագիտարանային աշխատությունը անգնահատելի սկզբնաղբյուր է Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի երկրների, այդ թվում նաև մեր պատմության և մշակույթի համար: Հայերեն թարգմանությունը Հայաստանի և հայերի վերաբերյալ հատվածները կատարել է Հր. Աճառյանը (Ստրաբոն, 1940):

Թեսալական վարկածը: Նրա հավաստմամբ՝ իբր հայերն ունեն թեսալական ծագում, նրանց անվանադիր նախնին եղել է արգոնավորդների առասպելի նշանավոր հերոսներից մեկը՝ Արմենոս Թեսալացին: Ստրաբոնը այս պատումը վերցրել է

Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներ Կյուրսիլոս Փարսալացու և Մեդիոս Լարիսացու ինչ-որ աշխատությունից: Առասպելի համաձայն՝ արգոնավորդ Արմենոս Թեսալացին, իր ուղեկիցների հետ Կողքիսից (Կոլխիդայից) անցնելով Հայաստան, բնակություն է հաստատում Եկեղեք և Սպեր գավառներում՝ երկիրն անվանակոչելով իր անունով: Այս առասպելի իսկությունը փորձում է բացատրել հայերի և թեսալացիների համահունչության և կենցաղային զուգադիպող երևույթների ու տեղանունների համանմանությամբ:

Ստրաբոնը նշում է հայկական և թեսալական զգեստների նմանությունների մասին, որը մեզ համար անընդունելի է: Նշում է հայկական և մարական հագուկապի միանմանության մասին, ըստ որում՝ այդ միանմանությունը բացատրում է. «Որովհետև աշխարհներն էլ նմանվում են միմյանց» (Ստրաբոն, գիրք XI, XIII, 9-10):

Այս, ինչպես և Հերոդոտոսի՝ հայերի ծագման փոյուգիական վարկածը զուրկ են պատմական հենքից, քանզի արգոնավորդների առասպելը ձևավորվել է Ք.ա. XI-X դդ., երբ Արմենիա պետական միավորում գոյություն չուներ: Պատմիչը թյուր ըմբռնում ունի հայերի, ասորիների ու արաբների ցեղակից ու լեզվակից լինելու մասին:

Ժողովրդագրական ակնարկներ: Ուշագրավ տեղեկություններ կան Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրման, հունական 12 քաղաքների բնակչությանը Տիգրանակերտում և նոր հիմնադրած քաղաքներում վերաբնակեցնելու և այդ եղանակով երկրի շենացման, զարգացման վերաբերյալ: Նա մեր երկիրը համարում է միաձույլ, միաէթնիկ թագավորություն, մեկ լեզվով՝ հայերեն խոսող «միալեզու» ժողովրդով:

Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական և վարչաքաղա-

քական բնութագիրը: Ներկայացվում են Մեծ Հայքի սահմանները բոլոր ուղղություններով և հայկական թագավորությունները՝ Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե, Կորդուք: Մանրամասն տրված է ջրագրությունը՝ գետերն ու լճերը, լեռնագրությունը, պատմաաշխարհագրական փոփոխությունները. Արտաշես Ա արքայի՝ չորս ուղղություններով արշավանքների ու նվաճումների մասին. Մարաստանից՝ Կասպիանե կամ Կասպից երկրի, Փայտակարանից՝ Պարսպատունիքի, Իբերներից՝ Գուգարքի, Խորզենե, Գողերձական գավառների, արևմուտքում՝ Կարնո և Դերջան գավառների, կատառոններից՝ Եկեղիք, իսկ ասորիներից՝ Տմորիքի Մեծ Հայքին միացնելու և ամենուրեք միալեզու՝ հայերեն դառնալու մասին: Խոսում է Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների մասին:

Ակնարկներ կան Հայաստանի բնական հարստությունների մասին. Մանտիանե (Կապուտան) և Արսենե (Վանա) լճերի՝ աղի պաշարներով, ոսկու հանքերի (Սպեր), սանդիքս հայկական ներկի և այլնի մասին: Անսխալ են նաև այն հաղորդումները, որոնք աշխարհագրի աշխատության մեջ վերաբերում են Հայաստանի բնությանը, կլիմային և հայերի նիստ ու կացին: Այդ հաղորդումների ճշտությունը հաստատվել են Ստրաբոնից հետո այլ աղբյուրներով:

Տնտեսություն: Հայաստանը հիշատակվում է որպես այգեգործության, գինեգործության, պտղատու այգիների, ձիթենիների, ձիաբուծության, մեղվապահության, միջազգային քարավանային առևտրի երկիր: Ժողովուրդն առավելապես երկրագործությամբ էր զբաղվում: «Ամբողջ այս երկիրը լիքն է հացահատիկներով, պտղատու և մշտադալար ծառերով: Կան նաև ձիթենի: Հայաստանը համարվում է խաղողի, թզի, ցորենի ու մեղրի երկիր, ինչպես և Վրաստանը և Մարաստանը» (տե՛ս

Ստրաբոն, էջ 13, 37 և այլն): «Հայաստանը,- գրում է նա,- հարուստ է ձիաբուծական արոտներով, մեծաքանակ պատերազմական ձիերով» (տե՛ս 56, 57, 61): Ստրաբոնը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում սառցապատ լեռները բարձրացողների «կրունկների տակին սուր-սուր գամերով» կոշիկներ կրելու մասին: Դրանք ալպինիստների մարզակոշիկներ հիշեցնող ոտնամաններ են եղել: Վկայում է նաև «եզան կաշուց կոշիկների» (տրեխների – Ռ. Ն.) օգտագործման մասին: Անդրադառնում է նաև կապի հնավանդ միջոցներին՝ բնակավայրում և ռազմական ամրություններում աշտարակների՝ որպես դիտարանների կառուցմանը, տեսողական պայմանական նշաններ կիրառելուն, որոնցից են կրակը, ծուխը, ձեռքի շարժումները, ժայռերի, ծառերի վրա արվող նշանները, լսողական-ձայնային պայմանանշաններին՝ թմբուկներ զարկել, փողեր փչել, բարձր գոռալ և այլն: Հայաստանի հյուսիսային շրջաններում ձմռան բուքերի ժամանակ ճանապարհորդները ձողեր էին ունենում, որոնցով ձյան մեջ խրվելիս շնչելու համար անցքեր էին բացում և միաժամանակ ցցված ձողերով փրկարարներին ազդանշան տալիս (տե՛ս էջ 57):

Պաշտամունքային սովորույթների մասին: Առանձնահատուկ անդրադառնում է Անահիտ դիցուհու պաշտամունքին: Ի դեպ, Անահիտի պատվին, ըստ Ստրաբոնի՝ մեհյաններ են կառուցվել Արտաշատում, Արմավիրում, Աշտիշատում, Եկեղիք գավառի Երիզա ավանում (Երզնկա), որի համար այդ գավառը կոչվել է Անահտական: Ստրաբոնի հավաստմամբ՝ Անահիտի պաշտամունքը Հայոց մեջ գերազանցում է բոլորին. զանազան տեղեր նրա անվամբ տաճարներ են կանգնեցրել (էջ 67-69): Պատմիչը գրում է, որ ամենաերևելիները դիցուհուն են նվիրաբերում իրենց կույս դուստրերին, որոնք, ըստ սովորության,

երկար ժամանակ դիցուհու տաճարում իրենց աստիճանի օտար երիտասարդների հետ պոռնկանում էին հանուն աստվածուհու, ոչ ոք անվայել չէր համարում այդպիսիքի հետ ամուսնանալը: Ըստ նրա՝ այնքան բարեհաճ էին վերաբերվում այդ հայ կույսերը իրենց սիրահարներին, որ ոչ միայն հյուրընկալություն էին ցույց տալիս, այլև նվերներ էին հանձնում նրանց, հաճախ ավելի շատ, քան իրենք էին ստանում: Գիտնականների կարծիքով՝ կրոնական այս հետերիզմը սերտ աղերսներ ունի պտղաբերության և ծննդաբերության գաղափարի հետ:

3.4. Հռոմեական անտիկ պատմագիրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին

Հարցեր և առաջադրանքներ:

Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոս

Պլինիոս Ավագի (23–79 թթ.) «Բնական պատմությունը»՝ որպես անտիկ բնական մտքի յուրահատուկ հանրագիտարան: Պլինիոսի տեղեկությունները Հայաստանի տարածքի մասին. երկարությունը՝ արևմուտքից՝ Փոքր Հայքից մինչև Կասպից ծովի ափը, ըստ նրա, եղել է 1,3 միլ. քայլ, իսկ լայնությունը՝ Տիգրանակերտից մինչև Իբերիա, որի սահմանագիծը անցնում էր Կուր գետով, այդ թվի կեսը: Այսինքն՝ արևմուտքից դեպի արևելք ձգվում է 1.300 մղոն կամ 1950 կմ, իսկ հարավից հյուսիս՝ 650 մղոն կամ 975 կմ: Ըստ հաշվումների՝ տարածքը ընդգրկել է 285.195 կմ^2: Անդրադարձել է նաև բնակլիմայական պայմաններին, բնաշխարհին, հանքային հարստություններին, ակնարկներ ունի դեղաբույսերի, ժողովրդական բժշկության վերաբերյալ, քաղաքների (Արշամաշատ, Արկաթիոկերտ, Տիգրանակերտ, Արտաշատ և այլն) ու վարչական բաժանումների՝

120 ստրատեգիաների, նաև Տիգրան Մեծի կատարած վերաբնակեցումների, մշակութային պատմության ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ: Ուշագրավ են Անահիտ դիցուհուն նվիրված ազգագրական տեղեկությունները: Խոսում է նաև Անահիտի ոսկյա արձանը Եկեղյաց գավառի Երիզա ավանում հռոմեացի զորավար Կրասոսի կողմից՝ Ք.ա. 35 թ. դեպի Հայաստան կատարած արշավանքի ժամանակ ջարդուփշուր անելու և իրար մեջ բաժան-բաժան անելու մասին: Կան ակնարկներ նաև Հայաստանի սահմանակից երկրների ու ժողովուրդների մասին:

Ուշագրավ հեղինակներից է **Գայոս Կոռնելիոս Տակիտոսը (55/57–125 թթ.):** Նա կայսերական ժամանակաշրջանի ամենանշանավոր պատմագիրն է: Նրա գրչին են պատկանում «Գերման ժողովրդի ծագման և Գերմանիայի տեղադրության մասին», «Պատմություն» և այլ երկասիրություններ: Գլուխգործոցը «Տարեգրություններ» երկն է: Թեև երկը շարադրված է Հռոմի զավթողական քաղաքականության ջատագովի տեսանկյունից, բայց արժեքավոր տեղեկություններ է պարունակում հայերի և Հայաստանի մասին: «Տարեգրություն» գրքի հայերին վերաբերող հատվածները թարգմանել է Պ. Սոտնիկյանը (տե՛ս «Օտար աղբյուրները հայերի մասին» մատենաշարի 3-րդ պրակ, Եր., 1941):

Գայոս Կոռնելիոս Տակիտոսի «Տարեգրությունները» գրքի վկայությունները Հայաստանի և հայերի մասին: *I դարի Հայաստանի քաղաքական կյանքի, հայ-պարթևական կապերի, Հայաստանի աշխարհագրական սահմանների, տարածքի, հարևանների հետ ունեցած տնտեսական ու մշակութային կապերի, հավատալիքների, հայ ընտանեկան կենցաղի, հայերի նկատմամբ նրա անհարգալից վերաբերմունքի և այլնի մասին:*

Հայերի և Հայաստանի մասին Տակիտոսը անհարգալից է

արտահայտվում: «Հայերը,- գրում է նա,- տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով և, որովհետև ազատությունը նրանց անծանոթ էր, ավելի էին հակվում դեպի պարթևական սովորությունը»: Մոտ էին նաև մշակույթով, տնտեսաձևով, պետական կառուցվածքով, կրոնով և մեծ տեղ էին հատկացնում ինքնավարության սկզբունքին:

Լինելով նվաճողների՝ Հռոմի ջատագով պատմիչ՝ անվանարկում է հայերին՝ տատանվող ու նենգ անվանելով: Ահա թե ինչ է գրում նա. «Մեծագույն տերությունների միջև է տեղավորված Հայաստանը, ստրկության սովոր երկիր է, և շատ հաճախ հայերը երկպառակ են և երկդիմի, որովհետև նրանք ատում են թե՛ հռոմեացիներին և թե՛ նախանձում են պարթևներին»: Սակայն «ստրկության սովոր» հայերը մեկ անգամ չէ, որ ջարդել են հռոմեացիներին, դա թշնամու գնահատական էր: Հաշվի առնելով, որ այս փոքրաթիվ ժողովուրդը անընդհատ տառապել է օտարների ասպատակությունների տակ, ենթադրում է, որ նրանք սովոր են ստրկության (տե՛ս Տակիտոս, քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյան, Երևան, 1941, էջ 57), թեև իր իսկ վկայությամբ «ստրկության սովոր» հայերը քանիցս դաս են տվել թե՛ պարթևներին և թե՛ հռոմեացիներին: Նա ինքն է պատմում, թե ինչպես հռոմեացիներին պարտության մատնելուց հետո հայ ռազմիկները նրանց լեգեոններն անցկացրել են լծի տակով (էջ 15):

Տակիտոսի տեղեկությունները առավել չափով վերաբերում են ռազմադաշտային սովորություններին, պետական գործիչների հյուրընկալությանը, դաշինք կնքելու հնագույն սովորություններին, առանց արյուն թափելու զորգերով խեղդամահ անելու մահապատժի ձևերին, որսագնացությանը, ժողովրդի բարքերին, բնավորության գծերին, ինքնատիպ սովո-

րություններին, հայերի, նրանց հարևանությամբ ապրող վրաց և աղվան ժողովուրդների խառնվածքների բնութագրմանը, տարազին, երկրագործությանը, կրոնին և այլն:

Գրքում ներկայացվում է մի դրվագ, երբ հայերը փրկում են Հայաստանից փախչող Հռադամիստի հղի կնոջը գետում խեղդվելուց, տնական սպեղանիներով վերքերը դարմանում են և «հասարակական ծախսով» նրան հանձնում հայկական արքունիք:

Նշվում է հայկական սովորույթի համաձայն հաղթողին ոսկե պսակով դիմավորելու, պետական գործիչների դիմավորելու, դաշինք կնքելու հնագույն սովորույթների մասին: «Թագավորներն դաշինք կնքելիս՝ միախառնում են իրենց աջ ձեռքերը, բութ մատները միասին կապում են և հանգույցով ամրացնում: Արյունը դեպի ծայրանդամներն են հոսում, թեթև ծակոցով արյունը հանում և փոխադարձաբար լիզում: Այս տեսակ դաշինքը համարվել է գաղտնի ուժ ունեցող, իբրև փոխադարձ արյունով սրբագործված»:

Հին աշխարհի մի սովորույթ էլ այն էր, երբ թագադրելիս գոտի են կապում նրանց, որը ոչ միայն իշխանական խորհրդանիշ էր, այլև ուներ պահպանակի նշանակություն: Միաժամանակ՝ տղամարդկանց ծանր ու լայն գոտիները ունևորության, բարեկեցիկ կյանք վայելելու խորհրդանիշ էին համարվում:

«Հաղթող զորավարին մեծարում էին դափնեպսակով զարդարելով: Նշում է նաև Տիգրան Մեծի թագի վրա երկու արծիվների առկայությունը, մեջտեղում արևը խորհրդանշող ութաձև աստղ պատկերված լինելու մասին»:

Նշվում է Անտոնիոսի կողմից Արտավազդ II-ի նենգաբար ձերբակալման և հռոմեական զորքի հաղթահանդեսի ժամանակ հայոց արքայի արժանապատիվ պահվածքի, տիրողների

առջև ծնկի չգալու, կյանք չաղերսելու և հպարտ մահ ընդունելու մասին:

Տակիտոսը պատմում է նաև պատերազմից վերադարձող զինվորների՝ թշնամիների գլուխներ իրենց հետ բերելու սովորույթի մասին՝ որպես ապացույց իրենց գործած սխրանքների: Համառոտակի ներկայացրել է Զենոն-Արտաշես թագավորի՝ հայկական դաստիարակություն և կրթություն ստացած լինելու, ժողովրդի հետ ունեցած կապերի և որսագնացության սովորույթների մասին (էջ 15):

Ակնարկներ ունի փոխադրության միջոցների ու սարքերի, արքունական կանանց ու երեխաների շքեղազարդ ծածկած կառքերով ճամփորդությունների մասին, նաև արհեստագործության, մասնավորապես՝ թամբագործության, ձիասարքերը զարդարելու արհեստների, ժամանակի և տարածության չափման միավորների (օրինակ՝ քայլ, օրը, ստադիոնը), ռազմական ամրություններ քանդող հարմարանքների՝ բաբանների, շեփորների գործածության, ծխի արձակման միջոցով ահազանգելու և այլնի վերաբերյալ:

3.5. Բյուզանդական աղբյուրներ

Օտար հեղինակների մեջ իր ազգագրական հաղորդումներով առանձնահատուկ տեղ ունի բյուզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացին: Նա այդ գրանցումներն արել է VI դ. կեսերին՝ արդեն հայ պատմիչներին զուգընթաց:

Պրոկոպիոս Կեսարացի (V դ. վերջ - 562): Աղբյուրագիտական կարևոր արժեք են ներկայացնում «Կառուցումների մասին», «Գաղտնի պատմություն», «Պատերազմների մասին» գրքերը: Բացառիկ տեղեկություններ է հավաստում Հայաստանի և հայերի մասին: Կեսարացու վկայությունները Արա-

բատյան հովտի, նրա բնակավայրերի, մարդաշատության, ձիավարության, Դվինի հարուստ բնակատեղի լինելու, հայերի տնտեսական կյանքի, անասնապահության, առևտրի, հայերի դեպի Պոնտոս տեղաշարժերի մասին: Համշենահայության պատմության համար չափազանց կարևոր է հեղինակի հաղորդումն այն մասին, որ Պոնտոսում բնակված են եղել «պարսկահայ կոչվածները, ինչպես և հռոմեացիներին ենթակա հայերը, որոնք տարածված են մինչև Իբերիայի սահմանները» (էջ 244): Նա Բուզանդից հետո երկրորդ պատմիչն է, որ վկայում է հայոց Արշակ երկրորդ թագավորի անվան շուրջ հյուսված ավանդության մասին. դա Արշակին Պարսկաստանում նենգորեն ձերբակալելու, նրան դավադիր համարելով՝ Անհուշ բերդում շղթայակապ անելու և Վասակ զորավարին գազանաբար սպանելու պատմությունն է՝ իբրև առանձին փոփոխակ (էջ 11-13): Նա անդրադառնում է նաև ամուսնության հայկական սովորույթներին, ունեցվածքի ժառանգման կարգին, ընտանեկան հարաբերություններին և այլն: Շատ ուշագրավ է Կեսարացու 535 և 536 թթ. հրապարակված՝ Հուստինիանոս կայսեր «Հայոց ժառանգական իրավունքի մասին» էդիկտն ու 21-րդ նովելլան, որոնցում կայսրը դատապարտում է հայկական օրենքները: Դրանց համաձայն՝ հայ աղջիկը հայրական ունեցվածքից ժառանգություն ստանալու իրավունք չուներ: Այնուհետև նա վկայակոչում է այն օրենքները, որոնք կիրառվել են Հռոմեական կայսրության մեջ, որ պարտադիր էին լինելու նաև նրա ենթակայության ներքո գտնվող Փոքր Հայքի հայության համար: Կայսեր հրովարտակում ասված է, թե պարտադիր է, որ Հայաստանում «...ժառանգելու իրավունքը նույնը լինի, ինչպես ընդունված է հռոմեացիների օրենքներում, որ Հայաստանում ևս տարածում ստանա Հռոմեական

ժառանգման կարգը և՛ տղամարդկանց, և՛ կանանց վրա»: Դատապարտվում է գնմամբ ամուսնության սովորույթի մնացուկները Հայաստանում (VI դ.)՝ այն համարելով «մարդկային բնության անպատվություն, կանանց սեռի ստորացում»: Կայսեր հրապարակած օրենքներից երևում է, որ նույն ժամանակներում Հայաստանում պռույզը կամ օժիտը հարգի չի եղել, կամ եթե ընդունված է եղել, ապա աննշան չափով, ուստի Հուստինիանոսի օրենքն ասում է, որ «կանայք առանց պռույզի չամուսնանան» (տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 5: Բյուզանդական աղբյուրներ, հ. Ա, Պրոկոպիոս Կեսարացի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967): Այդ հրովարտակների նպատակն էր ունեզրկել հայկական վերնախավին, վերացնել նրանց ինքնուրույն գործելակերպը: Պրոկոպիոս Կեսարացու հաղորդումների բարձր արժեքն այն է, որ նա, հայկականին հակադրելով հռոմեականը, երկուսն էլ ներկայացրել է ամբողջական վիճակում, որ հայ իրավունքի պատմության համար կարևոր է եղել և դեռ կլինի:

Կոնստանդին Ծիրանածինի (բյուզանդական հայազգի կայսր՝ 905-959) «Կայսրության կառավարման մասին», «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» գրքերի ուշագրավ տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին:

Թեոփանես Շարունակողի (IX դ. - X դարի կեսեր) «Ժամանակագրությունը»՝ որպես անփոխարինելի սկզբնաղբյուր նաև Հայաստանի պատմության համար: Այն հսկայական նյութ է պարունակում այդ շրջանում Բյուզանդիայում գործած հայազգի ռազմական, քաղաքական և մշակույթի բարձրաստիճան բազում գործիչների, այդ թվում՝ ծագմամբ հայազգի կայսրերի մասին:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974:

2. **Նահապետյան Ռ.,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, «Հայաստան» հրատ., Եր., 2018, 262 էջ:

3. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության աղբյուրներ, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Եր., 2023, 424 էջ:

4. **Քսենոփոն,** Անաբասիս, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970:

ԹԵՄԱ 4
ՀԱՅԵՐԻ ԿԵՆՑԱՂԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

4.1. V-XVIII դարեր

Հարցեր և առաջադրանքներ:

Միջնադարյան հայ մատենագրության ազգագրական նյութերի դասդասման և բնութագրման նախնական ջանքերը: Առ այսօր այդ նյութերի ուսումնասիրության անբավարար լինելու պատճառները և դրանք գիտական շրջանառության մեջ դնելու կարևորությունը: Որո՞նք էին հայ մատենագրության մեջ ազգագրական երևույթները գրի առնելու շարժառիթները:

Հայ մատենագիրների երկերի թեև կցկտուր, բայց հույժ կարևոր ազգագրական նյութերի բովանդակությունը: Ազգագրական նյութերի գրառման եղանակները:

Նշանակությունը:

Հայ պատմագրության ու գեղարվեստական գրականության վաղ միջնադարյան ազգագրական վկայությունների ընդհանուր բնութագիրը Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Եզնիկ Կողբացու, Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Հովհան Մանդակունու, Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդի և ուրիշների երկերում: Հայ մատենագիրները որպես տարերային բանահավաքներ: Մովսես Խորենացին որպես առաջին բանահավաք և բանագետ:

Վաղ ավատական դարաշրջանի երկու հեղաշրջող իրադարձություններից մեկը 301 թ. քրիստոնեության ընդունումն էր որպես պետական կրոն, երկրորդը՝ հայ գրերի գյուտը, որոնք լիովին փոխեցին երկրի մշակութային պատկերը և հոգևոր մթնոլորտը: Հայ մատենագիրներն ու գրողները ազգագ-

բական երևույթների առանձին նպատակադրված նկարագրություններ չեն ներկայացրել, ազգագրությունը որպես գիտական-պատմական արժեք չի ընկալվել, իրենց նպատակը միայն քաղաքական պատմությունը շարադրելն էր: Ուստի և ազգագրական հարյուրավոր երևույթներ անդարձ կորստյան են մատնվել:

Թեև կցկտուր, կոտորակված, ցաքուցրիվ են նրանց հաղորդած տեղեկությունները, սակայն մեծարժեք են: Բացի ազգայինից, հայ պատմագրության մեջ կուտակված են նաև Հայաստանի հարևան ու հեռավոր երկրների ժողովուրդների կենցաղի ու մշակույթի վերաբերյալ մեծ քանակությամբ նյութեր, որոնք արևելագիտության համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն:

Հիմնական շարժառիթները:

1. Քրիստոնեության պայքարը հեթանոսության, այդ շրջանին հատուկ կենցաղավարության, ամուսնաընտանեկան հարաբերությունների, բարքերի, ժողովրդական հեթանոսական տոնակատարությունների, դիցապաշտության, թատերախաղերի դեմ էր:

2. Օտար տիրողների և նրանց բռնությունների նկարագրությունները, ազգային և այլազգի սովորությունների ու կրոնի հակադրությունների բացահայտումը: Եթե ազգագրական նյութերի այս գրառումները չլինեին, այժմ խիստ դժվար կլիներ ամբողջական պատկերացում կազմել միջին դարերի հայկական կենցաղի և մշակույթի մասին:

Չկա որևէ բնագավառ, որին շատ թե քիչ անդրադարձած չլինեն հայ մատենագիրները: Դրանք դասդասելով և թեմատիկ բաժանումներ անելով միայն հնարավոր կլինի ստանալ ամբողջ միջնադարի ընդհանուր պատկերը:

Ըստ որում, պատմագիրները ազգագրական երևույթները գրառել են երեք եղանակով. 1) նյութի համառոտ ակնարկով, 2) փոխաբերական իմաստով նյութին անդրադառնալով, 3) բանահյուսության միջոցով: Աշխարհիկ և հոգևոր երգերի, առակների, վեպերի և այլ սեռերի միջոցով հաղորդակից են դարձնվում բազմապիսի ազգագրական երևույթների: Այս առումով հայ մատենագիրները ներկայանում են որպես տարերային բանասացներ: Ազգագրական նյութեր կարելի է քաղել նաև թարգմանական գրականությունից: Նրանց հաղորդած ազգագրական նյութը կարելի է դասակարգել հետևյալ թեմաների.

- Երկրագործություն, երկրագործական տեխնիկա, այգեգործություն, երկրագործական պաշտամունք:
- Անասնապահություն, դրա ձևերը, ժողովրդական հմտությունները, հավատալիքները:
- Արհեստագործություն. մետաղագործություն, երկաթագործություն, ոսկերչություն, դարբնություն, բրուտագործություն, մանածագործություն և այլն:
- Զենքեր, զինվորական սովորություններ և ռազմավարժական արարողակարգեր և այլն:
- Զինանշաններ, դրոշներ, պետական նշաններ և այլն:
- Որսորդություն, ձկնորսություն, մեղվաբուծություն, թռչնաբուծություն և այլն:
- Արվեստներ. երաժշտություն, թատերական ներկայացումներ, քանդակագործություն, նկարչություն և այլն:
- Բնակարանային շինարարության ձևեր, բնակավայրերի ժողովրդագրական վկայություններ:
- Առտնին կենցաղ, կենցաղային առարկաներ:
- Զգեստներ, գլխանոցներ, ագանելիքներ (ոտնամաններ, գուլպաներ), զարդեր:

- Ճաշեր, ըմպելիքներ և խնջույքներ, ուտեստների տեսակների:
- Ձեռագործ արհեստներ, բանվածքներ, հյուսվածքներ, գործվածքներ:
- Սոցիալական հարաբերություններից՝ ամուսնաընտանեկան և ազգատոհմային, համայնքային ու դրացիական հարաբերություններ:
- Որդեծնության հետ կապված ծեսեր ու սովորույթներ:
- Մահվան և հուղարկավորման ու հիշատակման հետ կապված սովորույթներ:
- Դատական, պատժի և հասարակական այլ սովորություններ:
- Մարզական խաղեր:
- Տոներ և տոնածիսական արարողություններ:
- Դիցաբանական տվյալներ, առասպելներ, հավատալիքներ, նախնիների պաշտամունք, սնահավատություններ, հմայություն, կենդանիների, թռչունների և առհասարակ բնության, երկնային մարմինների պաշտամունքի հետքեր:

Այդ նյութերը կարելի է քաղել հիմնականում հայ պատմագրության առավել աչքի ընկած ներկայացուցիչներից, որոնց ներդրած ավանդի մասին կխոսենք ստորև, ըստ ժամանակագրության:

Եզնիկ Կողբացին առաջիններից էր (V դ.), որի նշանավոր ստեղծագործությունը «Եղծ աղանդոց» գիրքն է[1]: Լինելով Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի անմիջական աշակերտն

[1] **Եզնիկ Կողբացի,** Եղծ աղանդոց (Աղանդների հերքումը), աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970:

ու թարգմանիչներից մեկը՝ հմուտ տիրապետել է հունարենին և ասորերենին, նաև նշանավոր մտածող էր: Աշխատության հիմնական խնդիրը հայկական ու պարսկական հեթանոսական կրոնների դեմ մղվող պայքարն էր՝ հանուն քրիստոնեության ամրապնդման և ընդդեմ պարսկական նվաճողական քաղաքականության: Իր առջև դրված խնդիրները հիմնավորելու համար հեղինակը նկարագրել է բազմաթիվ երևույթներ, ինչպիսիք են՝ հայկական նախնական և հեթանոսական պաշտամունքը, ժողովրդի զբաղմունքների որոշ տեսակներ, ինչպես նաև պարսկական կրոնի բազմաթիվ դրույթներ: Ուշագրավ են առանձնապես հիվանդությունների առաջացման պատճառների և բուժման մեթոդների վերաբերյալ դատողությունները: Մերժում է հիվանդությունների առաջացումը չարքերի հետ կապելու մտայնությունը: Անչափ ուսանելի է գիտնական մտածողի բարոյականության մասին իր պատկերացումները: Պակաս սրությամբ չեն քննադատվում ճակատագրի հավատքը, նախապաշարումները, սնոտիապաշտությունը, աստղագուշակությունը և այլն:

Նույնպիսի նյութեր է հաղորդել նաև **Ագաթանգեղոսը**՝ «Ագաթանգեղայ պատմութիւն» գրքում[1] (V դ.): Ագաթանգեղոսի երկը III-IV դդ. Հայաստանի կրոնամշակութային կյանքի մեծագույն երևույթներից մեկի՝ հայոց քրիստոնեական դարձի, եկեղեցու հիմնադրման հարցերին է նվիրված: Նա Եզնիկից տարբերվում է կրոնական նյութերին զուգընթաց սոցիալ-տնտեսական նշանակություն ունեցող երևույթների վերհանմամբ: Ագաթանգեղոսի ամենակարևոր ծառայությունը, սակայն, համարվելու է Հայաստանի հեթանոսական պետական

[1] **Ագաթանգեղոս,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ., ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983:

կրոնի համակարգը համառոտակի ներկայացնելը: Դրա մեջ մտնում են՝ հայկական դիցարանը, աստվածություններին նվիրված արձանների նկարագրությունները, տաճարները, բագինները, զոհաբերությունները, ինչպես նաև աստեղային կրոնի տվյալները, բնության պաշտամունքը ևն: Նա ակնարկներ ունի արքունի և մասամբ՝ աշխատավորների ընտանեկան և ազգակցական հարաբերությունների, ամուսնության ձևերի, ժողովրդի դասերի և նրանց իրավահարաբերությունների, հուղարկավորության և նրա ծեսերի վերաբերյալ: Սակավ, բայց ուշագրավ են տարազին, շենքերին, կահույքին ու լուսավորությանը, արհեստներին, հողագործությանը, զենքերին ու ռազմի սովորություններին վերաբերող նյութերը:

Շատ կարևոր վկայություններ ունի **Փավստոս Բուզանդը** (V դ.), որի «Պատմութիւն հայոց»-ը պարունակում է ազգագրական մեծարժեք նյութեր[1]: Այն բացառիկ տեղ և արժեք ունի հայ պատմագրության մեջ: Ճշմարտապատում և եզակի սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի, մասնավորապես Սասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Նրան իրավամբ կարելի է համարել մեր հնագույն մատենագիրը՝ բանահավաքչության սկզբնավորողը: Մ. Աբեղյանը Փավստոսին նմանեցնում է ժողովրդական մի բանասացի, որն ինչ լսել է նախնիներից, նույնությամբ վերարտադրում է պատմության մեջ: Ժամանակագրական առումով Բուզանդի երկը շարունակվում է այնտեղից, որտեղ վերջանում է Ագաթանգեղոսի պատմությունը: Տեղեկությունները բավականին

[1] Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832: Տե՛ս նաև **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, թարգմ., ծանոթագրություններն ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968:

բազմազան են և ընդգրկում են հայ ժողովրդի սոցիալական կազմը, ընտանեկան կենցաղը, արյունակից ընտանիքների խմբերը, նրանց իրավահարաբերությունները, հուղարկավորության հետ կապված ծեսերը, հմայությունները, հավատալիքները, բնության տարրերի և երևույթների, երկնային լուսատուների և կենդանիների պաշտամունքը և այլն: Ժողովրդի զբաղմունքներից այդ աշխատության մեջ արտացոլվել են անասնապահության, դաշտամշակության, այգեգործության, որսորդության և արհեստների վերաբերյալ հակիրճ տեղեկություններ: Արժեքավոր են պետական և եկեղեցական վերնախավերի տարազի, զարդերի, մազերը հարդարելու ձևերի, շենքերի, վրանների և ռազմական գործին վերաբերող հաղորդումները:

Լավ են ներկայացված արքունի և նախարարական տների կահույքի տեսակները, պետական դրոշները, նշանները, պատիվներն ու բարձերը և այլն:

Մովսես Խորենացին (V դ.) միջնադարյան հայ պատմագրության ամենաերևելի դեմքն է, ով ըստ արժանվույն վաստակել է «Հայոց պատմահայր», «Քերթողահայր» պատվատիտղոսները: Հայ պատմագրության գլուխգործոցը նրա «Հայոց պատմությունն է»[1]: Ազգագրական տեսակետից շատ ուշագրավ հեղինակ է. իր հակիրճ ոճով նա ներկայացրել է հայ ժողովրդի բոլոր խավերին վերաբերող տեղեկություններ: «Հայոց պատմություն» գիրքը ազգագրական մանրապատումների հանրագիտարան է: Ընտանիքը և ամուսնության ձևերը, հարճեր պահելու սովորությունները, երեխաների դաստիարակությունը և այլն նա ներկայացրել է հակիրճ ակնարկներով: Հայ-

[1] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, թարգմ., ներածությունը և ծանոթագր. ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968:

կական արքունի և նախարարական կենցաղային երևույթները, կերուխումի և մարզախաղերի սովորությունները, ժողովրդի կենցաղային տարբերությունները, հանցանքը, վրիժառությունն ու պատիժները, պետական գործիչների նամակագրական կապերի ձևերը և այլն տեղ են գտել պատմահոր աշխատության մեջ: Ազգային դյուցազունների և զինվորական խոշոր գործիչների կյանքն ու ռազմական ընդհարումները նկարագրելիս նա երբեմն ուշագրավ ձևերով ներկայացնում է իր ժամանակի զենքն ու զրահը և զինվորական սովորությունները: Նրա աչքից չեն վրիպել նյութական մշակույթի առանձին տեսակներ՝ շենքերը, կահույքը, տարբեր խավերի տոնական, պաշտոնական և առօրյա զգեստները, զարդերը և հարդարման ձևերը:

Մ. Խորենացին լրացնում է Ագաթանգեղոսի կողմից ներկայացված դիցաբանության պակասները: Նրան ենք պարտական Հայկի ու Բելի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի, Արամի, Տորք Անգեղի և Վահագնի առասպելների համար: Բնության պաշտամունքից, աստեղային կրոնից, թաղման սովորություններից բացի, նա տեղեկություններ է հաղորդել նաև հույների, ասորա-բաբելոնական ժողովուրդների կենցաղի ու պաշտամունքների վերաբերյալ:

Եղիշե Վարդապետը (V դ.) «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին»[1] երկի մեջ ակնարկային կարգով մեզ է ներկայացրել նյութական և հոգևոր մշակույթները, սոցիալական հարաբերությունները և այլն: Պետական նշանակություն ունեցող գույքի տեսակներից հիշել է դրոշները, պսակները, հաղթանակի նշանները, պատիվներն ու կնիքները: Առանձին դեպքերում

[1] **Եղիշե,** Վարդանի և Հայոց պատերազմի մասին, թարգմ. և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989:

նա ցույց է տվել ողջունման ձևերը, դիմավորման ծեսերը, երդումը և այլն: Եղիշեի գիրքը գրական ու պատմական արժեքավոր հուշարձան է, նաև կարևոր սկզբնաղբյուր Հայաստանի և հարևան երկրների պատմության և մշակույթի ուսումնասիրության համար:

Ղազար Փարպեցու (V դ.) «Հայոց պատմությունը»[1] նույնպես ազգագրական նյութերով հարուստ աշխատություն է: Հասարակական խմբերի ավանդական կոչումներին (ցեղ, ազգ, ազգատոհմ, տուն) զուգահեռ՝ ներկայացնում է ընտանեկան հարաբերությունները, ամուսնության ձևերը ևն: Արարատյան հովտի գեղեցիկ նկարագրի մեջ նա ցույց է տվել ժողովրդի տնտեսական որոշ զբաղմունքներ՝ երկրագործությունը, անասնապահությունը, որսորդությունն ու կավագործությունը: Ակնարկներ ունի նաև երկրագործական գործիքների մասին: Խոսում է Այրարատյան դաշտի առատաբեր հատկանիշների, երկրի հարուստ բնական պաշարների մասին: Ժողովրդական ճարտարապետության նմուշները, կահույքը, ամանները, կերակուրները և տարազի մի քանի ուշագրավ տեսակներ լավ են ներկայացված: Մանրամասն պատկերված է նաև հայ կնոջ հագուկապը: Պետական-ռազմական հարցերի շարքում շոշափված են զենքերը, նշանները և այլն: Սովորություններից ուշագրավ են ծիսական ողջունման ձևերը, ընդունելության և հուղարկավորության ծեսերը: Հուղարկավորման ժամանակ կանայք, ամոթխածությունից դուրս գալով, գլխաբաց թավալվում էին գետնին, ողբում էին, կրծքերը ծեծում քարով, ճակատներին խփում, պոկում մազերը, վայում, ճչում,

---

[1] **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն. թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.՝ Բ. Ուլուբաբյան, Երևան, ԵՊՀ հրատ., 1982, 540 էջ:

տղամարդիկ էլ կտրում էին մորուքները և այլն: Հեթանոսական կրոնը ներկայացված է բնության տարրերի պաշտամունքով և հավատալիքներով: Ինչպես Եղիշեի գրքում, այստեղ էլ բավական հարուստ տեղեկություններ կան պարսկական հեթանոսական կրոնի, նյութական մշակույթի, դեղաբույսերի, հիվանդությունների և այլ հարցերի վերաբերյալ:

Հովհան Մանդակունու (V դ.) կրոնական գրքերից ամենակարևորը «Ճառք»[1]-ն է, որը ազգագրական անհաշիվ նյութեր է բովանդակում: Ղեկավարելով V դ. եկեղեցին՝ նա մեծ պայքար է տարել հեթանոսության դեմ: Այդ իմաստով էլ շատ արժեքավոր են մինչքրիստոնեական կրոնի և սովորույթների վերաբերյալ այն նյութերը, որ գալիս են հնագույն ժամանակներից: Օրինակ՝ նա զայրույթով է խոսում հայոց մեջ հուղարկավորության բարբարոսական հեթանոսական սովորույթների մնացուկների, ողբ ու կոծի, ճակատներին քարով խփելու, երեսները ճանկռոտելու, արյունաշաղախ անելու, կիսով չափ մերկանալու, հերարձակ լինելու, գլուխներին մոխիր թափելու, մարմինները եղինջով արյունաշաղախ անելու և այլնի մասին՝ դրանք անառակություն համարելով: Իբրև կաթողիկոս՝ չի հանդուրժում բազմակնությունը, պնդելով՝ պետք է տիրի «մի կին, մի ամուսին» օրենքը: Նա քարոզում է հավատարմություն ամուսինների միջև: Կարևոր տեղեկություններ ունի հայ ժողովրդի խավերի, սոցիալ-տնտեսական պայքարի ձևերի, զբաղմունքների, հայկական թատրոնի, դիցաբանության մասին և այլն: Ազգագրական արժեքավոր դիտողություններ են պարունակում հեղինակի վերլուծությունները ավելորդապաշտությունների, հուղարկավորության ծեսերի ու սովորությունների վերաբերյալ:

---

[1] «Տեառն Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք», ի Վենետիկ, 1860:

Սեբեոսի (VII դ.) «Պատմությունը», որը արևելահայերենով լույս է տեսել 2005 թ., բացառիկ տեղեկություններ է պարունակում ոչ միայն հայերի, այլև հարևան ժողովուրդների ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական ու հոգևոր ոլորտների վերաբերյալ: Սեբեոսի «Պատմությունը» VII դարի միջազգային անդրադարձներն ամփոփող մի մատյան է, որտեղ հեղինակին հուզում են երկրի ճակատագիրն ու եկեղեցու անկախության խնդիրը:

Հովհան Մամիկոնյանի և Զենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ» գիրքը[1] (VII դ.) կարևոր աղբյուր է բանագիտության և ազգագրության համար: Ազգագրական նյութերը թեև կոտորակված, բայց թեմատիկ տեսակետից բազմազան են: Կնոջ և նրա բարոյականության նորմերի, մանկանը դայակով դաստիարակելու, որդեգրության և հարճ ունենալու սովորության վերաբերյալ ակնարկները կազմում են ընտանիքը ներկայացնող տարրերը: Կան տվյալներ արյունակցության, խնամիության, հանցանքի ու պատժաձևերի և հուղարկավորության վերաբերյալ: Ժողովրդական ու մոնումենտալ շենքերի, կահավորման, տարազի ու զարդերի վերաբերյալ տվյալները սակավ են, հակառակ որոնց՝ հարուստ տեղեկություններ կան զենքերի վերաբերյալ:

Ազգագրական սակավ երևույթները, որ տեղ են գտել **Մովսես Կաղանկատվացու** (VII դ.) «Պատմութիւն Աղուանից» երկի[2] մեջ, վերաբերում են Խորին Հայքի հասարակական կենցաղին, պետական նշանակություն ունեցող գույքին, հայ տարազի մի շարք տեսակների, շենքերին ու զենքերին, տնային

---

[1] **Հովհան Մամիկոնյան,** Տարոնի պատմություն, աշխատասիրությամբ Վ. Հ. Վարդանյանի, Երևան, 1989:

[2] **Մովսես Կաղանկատվացի,** Աղվանից աշխարհի պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագ. Վարագ Առաքելյանի, Եր., 1969:

գույքին, հաղորդակցության միջոցներին և այլն: Ընտանիքը, ամուսնությունը, հանցանքն ու պատժաձևերը և ծիսային-բարոյական սովորույթները չափազանց սուղ են գրանցված: Սակավ են նաև աստեղային կրոնի, բնապաշտության, կենդանապաշտության և կռապաշտության վերաբերյալ տեղեկությունները: Ագաթանգեղոսից հետո երկրորդ հեղինակն է, որ մանրամասն տեղեկություններ է թողել Գրիգոր Լուսավորչի և նրա սերունդների գործունեության, ապա՝ Վրաստանի ու Աղվանքի քրիստոնեություն ընդունելու մասին: Նաև ակնարկներ ունի հեթանոսական խառնակ ամուսնական սովորույթների մասին և այլն:

Անանիա Շիրակացին (VII դ.) վաղմիջնադարյան հայ մատենագրության ականավոր դեմքերից է: Նա իրավամբ համարվել է բնական գիտությունների հիմնադիրը հայ իրականության մեջ: Նրա «Աշխարհացոյցը»[1] ազգագրական կարևոր տեղեկություններ է պարունակում: Դրանք հատկապես վերաբերում են հին հայկական հավատալիքներին ու սնոտիապաշտական ըմբռնումներին: Զգալի տեղ են գրավում բնապաշտական, տիեզերագիտական ըմբռնումները: Մարդը մշտապես ձգտել է ճանաչել բնության բազմազան երևույթները և բացատրել դրանք: Երկնային լուսատուներն ու համաստեղությունները մարդիկ դիտում էին իբրև կենդանի էակներ և կենդանակերպեր ու նրանց իշխանությանն էին վերագրում մարդկանց ծնունդի ու մահվան, բախտի ու դժբախտության հանգամանքները:

Ղևոնդ Երեց (VIII դ.): Հայ պատմագրությունը արաբական տիրապետության շրջանում անկում ապրեց: Շուրջ երեքդար-

---

[1] **Անանիա Շիրակացի,** Մատենագրություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979:

յա ժամանակաշրջանում միայն մի պատմիչ է հայտնի՝ Ղևոնդ Երեցը[1]: Գրքում շարադրված է արաբների դաժանությունների, ժողովրդագրական փոփոխությունների, երկրում ոչնչացված և տեղահանված հայ բնակչության փոխարեն արաբական ցեղախմբերի հաստատման մասին: Նրա «Պատմության» մեջ պատշաճ հարգանքի է արժանանում Թեոդորոս Ռշտունու, Գրիգոր և Համազասպ Մամիկոնյանների, Աշոտ Բագրատունու գործունեությունը և հիշատակվում է եկեղեցական մի շարք համալիրների կառուցումը՝ Զվարթնոց, Հռիփսիմե, Գայանե, Արուճ, Թալին, Սիսիան, Օձուն: Ղևոնդը պատմիչներից առաջինն էր, որ դեպքերի ժամանակաշրջանը տալիս է հայկական մեծ թվականով:

Հովհաննես Դրասխանակերտցու (IX-X դդ.) «Պատմութիւն հայոց»-ի[2] մեջ բավականին ազգագրական տվյալներ կան, որոնք վերաբերում են դաշտամշակությանն ու այգեգործությանը, աշխարհիկ, հոգևոր ոլորտներին և զինվորական տարազի կոչումներին, զարդերին, արհեստներին, ընտանեկան հարաբերություններին ու սովորույթներին, հուղարկավորությանը և այլն: Նրա պատմությունը ընդգրկում է վաղնջագույն շրջանից մինչև 924 թ.:

Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկը (Թիֆլիս, 1917) (X դ.) Վասպուրականի և Սասունի ազգագրության հարուստ աղբյուրներից է: Հեթանոսական դիցարանի, սնոտիպաշտությունների և հուղարկավորության սովորությունների մասին հեղինակն ունի հակիրճ նկարագրություններ: Հասարակական կազմակերպությունները ներկայաց-

---

[1] **Ղևոնդ,** Պատմություն, աշխարհաբար թարգմ., ներած. և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982:

[2] Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912:

ված են տոհմ, ցեղ, ազգ և տուն ձևերով: Վերնախավերում ժամանակին ընդունված սովորությունները, պետական պարգևներն ու նշանները ևս տեղ են գտել երկում: Ընտանիքը չի նկարագրել, բայց ունի նրա տարրերը ներկայացնող շատ արտահայտություններ՝ ընտանիք, ամուսնալուծություն, դայակ, սերնդական կոչումներ, բարոյական նորմեր, ազգակցական կապեր ու կոչումներ և այլն: Թ. Արծրունին հիացմունքով է գրում Արտաշատի գինեբեր այգիների և պտղատու բույսերի մասին, չի մոռանում այգեգործության տեսարաններ ցույց տալ Աղթամարի քանդակապատկերների մեջ: Զբաղմունքներից Արծրունին հաստատագրել է դաշտամշակությունը, այգեգործությունը, արհեստները, ինչպես նաև նշել է քաղաքաշինության, շենքերի, տարազի ամենատարբեր տեսակների ու զարդերի, իսկ հաղորդակցության միջոցների ու սպորտի և օտար ժողովուրդների ազգագրական երևույթների մասին: Պատմիչը ցավով է արձանագրում արաբական զորքերի հետ Հայաստան թափանցած արաբների հաստատման մասին, որի պատճառով տեղի հայ բնակչությունը հեռանում էր իր պատմական հայրենիքից: Հետաքրքիր տեղեկություններ կան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, հարկային հարաբերությունների, ծավալվող շինարարության և այլնի մասին: Նա Վասպուրականի, առավել ևս Սասունի, սասունցիների մասին հիշատակություններ թողած առաջին պատմիչն էր:

«Պատմութիւն հայոց»[1] և «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» աշխատություններում **Ուխտանես Եպիսկոպոսը** (X դ.) ազգագրական մասնակի տեղեկություններ է հաղորդել, որոնք վերաբերում են Հայկ, Անահիտ, Արամազդ, Արա Գեղե-

[1] **Ուխտանէս Եպիսկոպոս,** Պատմութիւն հայոց, Ա և Բ, Վաղարշապատ, 1871:

ցիկ և Բարշամինա աստվածություններին, սնոտիապաշտությանը, ազգակցությանը, արյունառությանը, տնային գույքի տեսակներին, տարազին և սպորտին:

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը (X-XI դ.) նկարագրել է մարզական մի քանի ձևեր՝ մենամարտը, նիզակաձգումը, կառարշավը, ցլի հետ մենամարտը, ծանրություն նետելը և այլն: Երկրագործական, անասնապահական, որսորդական զբաղմունքների, շենքերի տեսակների և քաղաքաշինության մասին հաղորդել է մասնակի տեղեկություններ: Նրա գիրքը կոչվել է Տիեզերական պատմություն (աշխ. թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Վ. Հ. Վարդանյանի, Եր., 2000): Գրքում խոսվում է Տարոն աշխարհի, Մամգուն՝ Մամիկոնյան տոհմի տիրակալման մասին: Խոսում է Չորրորդ Հայքում 996 թ. երկրաշարժի հետևանքների, ավերածությունների մասին:

Արիստակես Լաստիվերցու (XI դ.) «Պատմութիւն»[1] աշխատության մեջ կան որոշ տեղեկություններ հողը մշակելու, այգեգործության, դաշտային վնասատուների, անասնապահության, որսի, բնակավայրերի, մոնումենտալ և ժողովրդական շենքերի ու կահույքի, կանացի և տղամարդու հագուստների ու զարդերի վերաբերյալ: Հանգամանալի տեղեկություն է հաղորդում Արծն քաղաքի մասին, ըստ որի՝ այդ խոշոր քաղաքը պարիսպ չուներ, որովհետև բնակչության թիվը արագ աճում էր:

Մատթեոս Ուռհայեցին (XII դ.) իր «Ժամանակագրութիւն» (Վաղարշապատ, 1898) երկրի մեջ ազգագրական տեղեկություններ է հաստատագրել հայերի, բյուզանդացիների և սելջուկների կենցաղից: Նա ակնարկներ ունի նաև երկնային

---

[1] **Արիստակես Լաստիվերցի,** Պատմություն, թարգմ. Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971:

նշանների, գիսավոր աստղերի և երկրաշարժի, սովի, անասունների անկման մասին, անոտիապաշտական պատկերացումների վերաբերյալ:

XIII դ. գրող և իրավագիր **Մխիթար Գոշի** «Դատաստանագիրք հայոց»[1] և «Առակներ» (Երևան, 1951) երկերը ազգագրական բազմապիսի նյութեր են պարունակում: Առակների նյութերի զգալի մասը ներկայացված է այլաբանությամբ: «Դատաստանագրքում» կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող իրավական հարցերի հետ շաղախված են ազգային բազմաթիվ սովորություններ. այստեղ ներկայացված են հասարակական-տնտեսական հարաբերությունների շատ կողմեր, հատկապես ընտանիքն ու նրա կենցաղը, ամուսնալուծության պատճառները, ժառանգական իրավունքն ու դրանից բխող սովորույթները, երկրագործությունը, այգեգործությունը և արհեստները: «Դատաստանագիրքը»՝ որպես միջնադարյան իրավունքի նշանավոր գործ, առաջնակարգ տեղ է գրավում աշխարհի ճանաչված օրենսդրական հուշարձանների շարքում:

Կիրակոս Գանձակեցու (XIII դ.) «Պատմութիւն հայոց» մեծարժեք աշխատության (Երևան, 1961) մեջ արտացոլված են բազմապիսի ազգագրական նյութեր, որոնք վերաբերում են ամուսնության սովորույթներին, ազգակցությանը, հուղարկավորությանը, ժողովրդական տոներին, բնության պաշտամունքի հետքերին, ոգեպաշտությանը, ագրարային պաշտամունքի մնացուկներին, կերակրի որոշ տեսակների, եկեղեցական սպասքին, զինվորական սովորույթներին ու զենքերի տեսակներին, գյուղատնտեսության ճյուղերին, տարազի տեսակներին, շինարարությանը ևն: Նա մոնղոլական տիրապետության շրջանի ամենաճշմարտախոս պատմագիրն է: Նրա գրքում

[1] Մխիթար Գոշի Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:

բացահայտվել է թաթար-մոնղոլական ռազմա-վարչական և սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, հարկահավաքման համակարգը, նրանց նիստ ու կացը, հավատալիքները և այլն:

Գանձակեցու երկում տեղեկություններ կան մոնղոլների և այլ ժողովուրդների սովորությունների, նրանց նախնիների պաշտամունքի, ամուսնության և այլ հարցերի վերաբերյալ: Անդրադառնում է նաև հայոց եկեղեցական տոներին ու սովորույթներին: Նրա «Հայոց պատմությունը» բազմաբովանդակ հուշարձան է: Այնտեղ արժեքավոր նյութեր կան նաև եկեղեցու ներքին կյանքի՝ դպրոցների ու դպրության, գիտության ու մատենագրության, արվեստի ու արհեստի, ճարտարապետության, շինարարության, հայ և հույն, վրացի, հայ և լատին եկեղեցիների փոխհարաբերությունների մասին:

Ազգագրական տեսակետից մեծարժեք գործ է **Ստեփանոս Օրբելյանի** (XIII դ.) «Պատմութիւն նահանգին Սիսական»-ը[1]: Այնտեղ գտնում ենք տեղեկություններ ոչ միայն Սյունիքի, այլև բովանդակ երկրի պատմության, Վայոց ձորի, Գեղարքունիքի, հարևան շրջանների տեղանունների և այլնի մասին: Պատմիչը տեղեկություններ է տալիս նաև վանքապատկան գործատների, գետնափոր գաղտնարանների, կարասատների, ջրաղացների, ամբարատների, այգիների դիտանոցների, կահույքի, փոխադրամիջոցների, հոգևորականների 9 դասի տարբեր զգեստների, արքունական պաշտոնական տարազների, հարուստ խավերի տոնական հագուստների տեսակների ու զարդերի վերաբերյալ: Նախորդ ոչ մի հեղինակ Օրբելյանի չափ առատ տվյալներ չի հաղորդել այգեգործության ու գինե-

[1] **Ստեփանոս Օրբելյան,** Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911:

գործության և համապատասխան շենքերի վերաբերյալ: Նա նյութեր ունի անասնապահության, կաթնատնտեսության, դաշտամշակության, ոռոգման, կիրառվող կոլեկտիվ աշխատանքի՝ հարակաշի, երկաթագործության, ձկնորսության ու որսորդության և բազմատեսակ զենքերի մասին: Կենցաղից ներկայացրել է ազգակցական ու ընտանեկան հարաբերությունները և հուղարկավորության ծեսերը:

Հեթում պատմիչի (XIII դ.) երկի («Հեթում պատմիչ [Պատմութիւն] թաթարաց…»), ի Վենետիկ, 1842) ազգագրական տեղեկությունները գրեթե ամբողջովին վերաբերում են օտարներին: Թաթարների վարք ու բարքին և կրոնին նա նվիրել է առանձին գլուխ: Խոսել է մոնղոլների, կաթայեցիների, յոգուտների, խորեզմների, հնդիկների, պարսիկների և վրացիների կրոնների մասին: Ակնարկներ ունի միջինասիական ժողովուրդների վրանաբնակության, ինչպես և հնդիկների, եգիպտացիների, Միջագետքի ժողովուրդների ուտեստի վերաբերյալ: Համեմատել է հայկական և մոնղոլական տարազաձևերը, զենքերը և ռազմական սովորությունները:

Ազգագրական տեսակետից նշանավոր հեղինակ է XIV-XV դդ. գրական-հոգևոր գործիչ **Գրիգոր Տաթևացին**: Նրա «Գիրք հարցմանց»-ը (Կ. Պոլիս, 1729, վերահրատարակվել է 2023 թ. Երուսաղեմում) և քարոզ գրքի «Ամառան» ու «Ձմեռան» հատորները (Կ. Պոլիս, 1941) ազգագրական գանձարաններ են: Այդ գործերում արտացոլված են հայ ժողովրդի կենցաղը, նյութական ու հոգևոր մշակույթները, զբաղմունքի տեսակները և այլն:

XVII դարից ազգագրական առատ նյութերով մեզ է ներկայանում **Առաքել Դավրիժեցին** իր «Պատմություն»[1] գրքով:

[1] Առաքել Վարդապետի Դավրիժեցւոյ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896,

Նախ անդրադառնում է Շահ Աբաս 1-ին պարսից շահի հրամանով 1604 թ. հայերի բռնագաղթին, ժողովրդի տառապանքներին: Հարուստ է ազգագրական տեղեկություններով: Ներկայացնում է Զատիկի տոնին առնչվող կարգավորումները, Դվինում Սուրբ Սարգիս եկեղեցու կառուցման, որն այժմ գոյություն չունի, Հաղպատի ու Սանահինի (964 թ.), Անիի Կաթողիկե (993 թ.) եկեղեցու կառուցման պատմությունը, որը ճշգրիտ վավերագրություն է: Ուշագրավ են Նոր Ջուղայի հիմնադրման մասին տեղեկությունները: Ժողովրդական բնակարաններն ու արտադրական կառույցները Էջմիածնում և Սպահանում հեղինակը նկարագրել է մանրամասներով: Էջմիածնի վանքի տնտեսական շենքերից թվարկում է սեղանատունը, փռնտունը, տնտեսատունը, ամբարտունը, բնակելի տները, ժամատունը, հյուրատունը, «շուրջանակի պարիսպը» և այլն, նաև՝ Էջմիածնի և Ապարանի ժողովրդական տներն ու արտադրական կառույցները: Խոսում է նաև Էջմիածնի վանքի զանգակատան կառուցման ավարտի մասին:

Ակնարկներ ունի կահույքի, տարբեր խավերին պատկանող զգեստների, տնային գույքի, դաշտամշակության, այգեգործության և անասնապահության վերաբերյալ: Նա խարազանել է ընտանիքի և ամուսնական սովորությունների մեջ պահպանված վատ բարքերը, ազգակցական հարաբերությունների հետ ներկայացրել է իր ժամանակի ազգանվան ձևերը: Ծիսական կարգերից հիշատակել է մարդկանց հարաբերությունները կարգավորող մի շարք սովորություններ, ինչպես նաև թաղման ծեսեր, հեթանոսական կրոնի մնացուկներ: Նա տվյալներ է թողել նաև օտար ժողովուրդների կենցաղի,

---

տե՛ս նաև՝ **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Եր., 1998:

նաև Հայաստանում եղած երկրաշարժերի և դրանց պատճառած ծանր հետևանքների, թանկագին քարերի և դրանց հատկությունների մասին:

Նույն՝ XVII դ. պատմագիր **Հակոբ Կարնեցու** «Տեղագիր Վերին Հայոց» (Վաղարշապատ, 1903) փոքրածավալ գրքում արծարծված են Բարձր Հայքի տեղագրությանը, բնակավայրերին, ճարտարապետական հուշարձաններին և գյուղատնտեսական բերքերին վերաբերող ուշագրավ տեղեկություններ:

Զաքարիա Ագուլեցու «Օրագրութիւն» (Երևան, 1938) խորագրով երկի մեջ ազգագրական տեսակետից առանձին կարևորություն ունեն ազգանվան այն ձևերը, որ XVII դարում գործածվում էին՝ -ացց, -եց, -ենց, -ից, -ինց և -եանց (Քալանթարեանց) վերջավորություններով: Հեղինակը որոշ մանրամասներ է հաղորդում գերդաստանի քայքայման, փոքր ընտանիքների ապրելակերպի, թաղման սովորությունների, մեկ և երկհարկանի բնակելի շենքերի բաժանմունքների և հավատալիքների վերաբերյալ: Գրքի առաջին մասը բովանդակում է առևտրական երթուղիների, քաղաքների, գյուղերի, իջևանատների, գործող մաքսերի չափերի և այլնի մասին: Ուշագրավ է իր հայրական տան նկարագրությունը. ձմեռնատունը, սրահը՝ ներքնատունը, մաղազան, քոշքը, օթախը և այլն:

Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին (XVII դ.) «Պատմագրութիւն» (Վաղարշապատ, 1870) երկի մեջ նկարագրել է Կարբի գյուղի հայ առևտրականի մեծ գերդաստանը, նրա աշխատանքի բաժանման կարգը և այլն: Պատմիչը գերդաստանն անվանում է տուն, իսկ նրա բաղկացուցիչ մասերը՝ ընտանիքներ: Ամուսնության, ամուսնալուծության և բարոյականության մասին ևս ունի համառոտ տվյալներ: Ազգակցական հարաբերություններին զուգահեռ՝ հեղինակը հաստատագրել է Քանա-

քեռի ազգանվան ձևերը՝ -անց, -ոց, -ոնց, -ոնք, -ենք, -ենց վերջավորություններով:

Ծիսական կարգերի մասին ունի մի քանի տեղեկություն: Հստակորեն նկարագրել է կամը և կալսման ընթացքը: Բազմաթիվ տեղեկություններ ունի գյուղական շենքերի տեսակների, գետնափոր կամ կիսագետնափոր տների, կահույքի, կնոջ տարազի, կեռկեռ կոշիկների, «երեսաց քողի» ու զարդերի, հաղորդակցության միջոցների, հավատալիքների և պարսիկների կենցաղի մասին:

Աբրահամ Կրետացու (XVIII դ.) «Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին Պարսից» (Վաղարշապատ, 1870) երկի մեջ Նադիր շահի արշավանքի պատմությանը զուգակցում են հայկական և պարսկական սովորությունները, որ հակիրճ դրվագներով են ներկայացված: Հայկական նյութերը վերաբերում են ընտանիքին, նրա բարքերին, ծիսական կարգերին, վարուցանքին, ոռոգման համակարգերին, կրկեսային խաղերի վերապրուկներին և այլն: Ուշագրավ են նաև հողագործության նկարագրությունները՝ գարի, ցորեն, կտավատ մշակելու վերաբերյալ հիշատակությունները: Պարսկականին վերաբերող տվյալներն ամբողջապես ներկայացնում են բանակի կենցաղը՝ վրաններն ու ժամանակավոր կառույցները, Սյունիքի բարձրաբերձ ժայռափոր կացարանները, կահկարասին, սպասքեղենը, հյուրատները, կերուխումը, շահի հագուստը, նրա թագադրման ծեսը, զինվորական զգեստներն ու պաշտոնները, կրոնական արարողությունները, հյուրերին դիմավորելու ծեսերը և հյուրասիրման կարգը, երաժիշտների դերը բանակում և այլն:

Սիմեոն Երևանցի (XVIII դ.): Եկեղեցական-քաղաքական գործիչ, կաթողիկոս, գրել է «Ջամբռ» (Վաղարշապատ, 1873)

աշխատությունը, որը բացառիկ աղբյուրագիտական արժեք ունի Հայաստանի տնտեսական կյանքի և կենցաղի ու մշակույթի պատկերը ուսումնասիրելու համար:

Ինչպես նշվեց վերևում, այն բոլոր նյութերը, որ վերոհիշյալ պատմագիրների և այլոց ձեռքով գրի են առնվել, հատուկ ազգագրական նպատակներով չեն արվել: Բացառությամբ իրավաբանական գրականության, որում կենցաղն ու փոխհարաբերությունները ակամա պետք է նպատակային կարգով գրանցվեին, մնացած բոլոր երևույթները գրի են առնվել տարերայնորեն:

Աղբյուրներ

1. Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին Պարսից, Վաղարշապատ, 1870:
2. **Ագաթանգեղոս,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983:
3. **Առաքել Դավրիժեցի,** թարգմ., ծանոթագր. Վարագ Առաքելյանի, Երևան, 1998:
4. **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգմ. Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971:
5. **Եզնիկ Կողբացի,** Եղծ աղանդոց (աղանդների հերքումը), աշխ. թարգմ., ներած., ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970:
6. **Եղիշե,** Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխ. թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1989:
7. Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938:
8. Զաքարիա Սարկավագի Պատմություն, Ա, Բ, Գ հատոր, Վաղարշապատ, 1870:
9. **Թովմա Արծրունի,** Պատմություն Արծրունյաց տան, թարգմ. և ծանոթ. Վրեժ Վարդանյանի, Երևան, 1978:
10. **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն Հայոց, առաջաբանը Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, թարգմ. և ծանոթ. Վարագ Առաքելյանի,Երևան, 1961:
11. **Հովհաննես Դրասխանակերտցի,** Պատմություն, աշխարհ. թարգմ. և ծանոթ. Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 1989:

12. **Մխիթար Գոշ,** Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975:

13. **Մովսես Խորենացի,** Հայոց Պատմություն, աշխ. թարգմ. և մեկնաբ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1981:

14. **Մովսես Կաղանկատվացի,** Աղվանից աշխարհի պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթ. Վարագ Առաքելյանի, Երևան, 1969:

15. **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, թարգմ., ծանոթագր. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987:

Ուսումնական ձեռնարկներ

1. **Աբեղյան Մ.,** Հայոց հին գրականության պատմություն (սկզբից մինչև X դար), Երկեր, հ. 3, Եր., 1968:

2. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, Եր., 1974, էջ 3-7:

3. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության աղբյուրներ, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, ԵՊՀ հրատ., Երևան, 2003, 424 էջ:

4.2. Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին (IX-XVIII դդ.)

Միջնադարյան հայ ազգագրական նյութերի գրանցման տեսակետից կարևոր է նաև օտար՝ արաբ և եվրոպացի ճանապարհորդների տեղեկությունները հայոց տնտեսական, արտադրական, հասարակական կյանքի, մշակույթի ու սովորությունների վերաբերյալ: Լինելով օտարներ՝ նրանք գրանցել են իրենց ընկալմամբ խորթ բարքերն ու սովորությունները:

ա) IX–XV դդ. արաբ ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին. Ջահիզ (VIII-IX դդ.), **Բալազուրի** (մահ. 892), **Ալ-Յուկուբի** (մահ. 897), **Ալ-Իսթախրի** (մահ. 951 թվականից հետո), **Իբն Հաուկալի** (մահ. 977

թ. հետո), **Մուկադդասի** (946/947-1000), **Յակուտ Ալ Համավի** (1178-1239), **Իբն ալ-Ասիրի** (XII-XIII դդ.), **Իբն-Խալդուն** (1332-1406) և ուրիշների ուղեգրություններում:

Հայաստան այցելած արաբ ճանապարհորդների ուշադրությունը հատկապես գրավել է տեղի գործվածքների արտադրությունը, որին հատուկ էր ներկելու, դաջելու բարձր արվեստը, նրբահյուսությունը: Հայաստանում գործածված ամենաարժեքավոր և ճանաչված ներկը եղել է «որդան կարմիրը», որին արաբները հիշատակել են «կիրմիզ» անվանումով: Ըստ նրանց՝ որդան կարմիր ներկը մեծ ճանաչում է ունեցել աշխարհում, քանի որ դրանով ներկված գործվածքները և մետաքսե կտորները զարմանալիորեն երկար ու ձիգ դարեր պահպանել են վառ կարմիր գույնը:

IX դ. արաբ ճանապարհորդ **Ալ-Ջահիզին** «Գիրք մեծ քաղաքների ու երկրների հրաշքների մասին» աշխատության մեջ Հայաստանը հռչակել է թաղիքներ, գորգեր, նուրբ փսիաթներ, թամբեր, գոտիներ, բուրդ և զգեստներ, գլխաշորեր, վարագույրներ, քող՝ շղարշ արտահանող երկիր:

Ալ-Յակուբին (IX դ.) իր «Պատմություն» («Տարիխ» հանրագիտարանային գրքում) գրում է, թե Հիշամ խալիֆի պատվերով (VIII դար) Հայաստանում պատրաստվում են հայկական մետաքսե փայլուն բանվածքներ, գունազարդ կտորեղեն և զգեստի տարբեր տեսակներ: Նրա «Գիրք երկրների» աշխարհագրական երկում Հայաստանը ներկայացվում է երեք մասից բաղկացած: Առաջին մասը ընդգրկում է Դվինը, Կարնո քաղաքը, Խլաթ, Շիմշատ քաղաքները և սրանց միջև ընկած տարածքները: Երկրորդը՝ Վիրքը, Տփղիս և Դարբանդ քաղաքը և Ալանքը և սրանց միջև ընկած հողերը: Երրորդ մասն ընդգրկում է Պարտավը, որն Առանի գլխավոր քաղաքն է, Փայտակարանը և Դարբանդը: Այս տեղեկությունները էապես պար-

զություն է մտցնում Արմենիայի վարչական բաժանումների վերաբերյալ:

Ալ-Իսթախրին (X դ.) իր «Գիրք թագավորությունների ճանապարհների մասին» գրքում գործվածքեղենի նշանավոր կենտրոն է համարում մայրաքաղաք Դվինը, մանրամասնորեն տալիս է որդան կարմիր ներկի և նրա ստացման աղբյուրի մասին: «Ունեն մի ներկ, որ կոչվում է կիրմիզ» (կարմիր): Ըստ նրա հավաստման՝ «Հայաստանից արդյունահանվում էր մեծ քանակությամբ դիպակ (բազյան՝ մետաքսե ծաղկավոր ծանր գործվածք): Պատմիչը մանրամասն թվարկում է ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսակները (տե՛ս Արաբ. աղբ. Գ, էջ 574-575): Ըստ նրա՝ Դվինը միջազգային առևտրի նշանավոր կենտրոններից էր: Նա հաղորդում է նաև շատ կարևոր պատմաաշխարհագրական տեղեկություններ: Ըստ նրա՝ «Հայոց թագավորությունը (մամլաքար ալ Արման) սահմանակից է Հոռոմներին (Ռոմ), նրանց մի սահմանը հասնում է Պարտավ, մյուս սահմանը՝ Ջազիրա (Միջագետք), իսկ մի սահմանը՝ Ատրպատական և Հայաստանից դեպի հոռոմների կողմերը, առաջին սահմանային ամրությունը՝ Կարնո (Յալիկալա) քաղաքն է»: Խոսում է Հայաստանի գետերի, լճերի, հատկապես Վանա լճի տառեխ ձկան վաճառքի մասին:

Ալ-Մուկադդասին (X դ.) իր «Լավագույն բաժանումները երկրամասերի ճանաչման համար» աշխարհագրական երկում խոսում է Բաղեշ քաղաքի նշանավոր առևտրի կենտրոն լինելու մասին, Հայաստան երկրի՝ մրգերով, հատկապես խաղողով հարուստ լինելու և նրանում ցածր գների, լեռների վրա առատ մեղրի, տափաստաններում ոչխարի անհամար հոտերի մասին, որից ելնելով Արմենիան անվանել է «ընդարձակ հովիտների երկիր»: Այստեղ արտադրվում են վարագույրներ, բրդե թանկարժեք գորգեր, բազում հատուկ արտադրանքներ:

Խոսում է նաև արհեստների, զբաղմունքների, առևտրի մասին:

Ալ-Մուկադդասին ուշագրավ վկայություններ ունի Դվինի և այնտեղ կազմակերպվող հարուստ տոնավաճառների ու շուկաների, կատարվող աշխույժ առևտրի մասին: Նախիջևանը, ըստ արաբ ճանապարհորդների, համարվել է բացառապես հայերով բնակեցված «վաճառական քաղաք»:

IX-X դարերի արաբ մատենագիր **Իբն ալ-Ֆակիհը** «Գիրք երկրների մասին» աշխատության մեջ նշում է ջորիների քարավաններով կատարվող մեծածավալ առևտրի, Հայաստանի՝ Արևելքից-Արևմուտք և Արևմուտքից-Արևելք միջազգային առևտրում ունեցած դերակատարության մասին: Նշում է Հայաստանի ընդգրկած տարածքների, 18 հազար գյուղ ունենալու, հայկական ընկույզի փայտից արհեստագործական երևելի արտադրանքի մասին:

X դարի մեկ այլ ճանապարհորդ՝ **Իբն-Հաուկալը** «Երկրի պատկերը» գրքում նկարագրում է հայերի տնտեսական զբաղմունքները, Հայաստանի այդ ժամանակաշրջանի առևտրաշահ քաղաքները: Նշում է Անիի, Դվինի առևտրական քաղաքներ լինելու, առանձնապես հայկական գործվածքեղենի, որդան կարմիր ներկի, մետաքսի ստացման, թավշակերպ արտադրանքի առատության մասին:

Առատ նկարագրություն ունի նաև Հայաստանի հարավային քաղաքների՝ Բերկրիի, Խլաթի, Արճեշի և մասնավորաբար Վանա լճից արդյունահանվող աղի և հայտնի «տառեխ» ձկան մասին: Արաբ պատմիչը ուշագրավ տեղեկություններ է հայտնում հայ թագավորների կողմից արաբական տարազի որոշ տարրերի օգտագործման մասին: Ուշագրավ տեղեկություններ է տալիս նաև Հայաստանի սահմանների, ընդգրկած տարածքների մասին:

XII-XIII դդ. ճանապարհորդ **Իբն ալ-Ասիրը** «Լիակատար կամ տիեզերական պատմություն» գրքում թվարկում է Հայաստանի վարչական բաժանումների, Կալի-կալա՝ Կարին քաղաքի, Արտաշատի՝ որդան կարմիր ներկի արտադրության կենտրոն լինելու՝ «Կիրմիզի գյուղ» անվանելու, Վանա լճի ձկնառատության՝ տառեխ ձկնատեսակը համարելով աշխարհի հրաշալիքներից մեկը, նաև Եդեսիա քաղաքի մեծամասամբ հայաբնակ լինելու և այլնի վերաբերյալ: Ի դեպ, Իբն ալ-Ասիբը Նոյյան տապանի հանգրվանը համարում է ոչ թե Արարատյան երկրի Մեծ Մասիս լեռան գագաթը, այլ Կորճայք նահանգի Արարադ լեռան գագաթը:

XII-XIII դդ. մեկ այլ ճանապարհորդ՝ **Յակուտ ալ-Համավին,** «Աշխարհագրական բառգիրք» աշխատությամբ ընդարձակ նկարագիր ունի Հայաստանի տնտեսական-քաղաքական կյանքի, պատմության, քաղաքների, կենցաղի տարբեր բնագավառների, արհեստագործական արտադրանքների մասին: Արաբ աշխարհագիրը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայկական բնակավայրերի, ամրոցների, եկեղեցիների վերաբերյալ, որոնք ունեն աղբյուրագիտական և ազգագրական մեծ արժեք (օգտվել ենք «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյանը, Եր., 1961, գրքից):

Իբն-Խալդունը (1332-1406)՝ «Մեծ» կամ «Համաշխարհային պատմություն» գրքում նշում է, որ Հայաստանը որպես հարկ խալիֆայությանը վճարել է 20 գորգ, որից մեկի երկարությունը 60 ոտնաչափ էր:

XV դարի մատենագիր Աբու Դուլաֆը հիացմունքով է հիշատակում հայկական երաժշտության մեղեդայնությունը:

բ) XIII–XV դդ. Եվրոպացի ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին. Ռուբ-

րուքվիս Ռուբրոք (1215/20-1293), Մարկո Պոլո (1254-1324), Ռույ Գոնսալես դի Կլավիխո (?–1412), Կատերինո Զենո, Ջոզեֆա Բարբարո, Ամբրոսիո Կոնտարինի, Ջիովաննի Մարիա Անջիոլելլո և ուրիշներ, որոնք դիվանագիտական առաքելությամբ անցել են Հայաստանով և հարևան երկրներով:

XVI-XVIII դդ. ուշագրավ վկայություններ են թողել Վենետիկի Հանրապետության դեսպան Վիչենցո դ'Ալեսանդրին, անգլիացի Անտոնի Ջենկինսընը, Մաստր Ջեֆրեյը, Դուգետը, Ջոն Նյուբերին, ֆրանսիացի Տավերնիեն:

Եթե այս կամ այն չափով հայագիտության մեջ արաբ ճանապարհորդների վերաբերյալ հրատարակություններ կան, ապա նույնը չի կարելի ասել եվրոպական, թուրքական և օտար այլ մատենագիրների, ուղեգրողների մասին, թեպետ նրանց երկերում ևս կան կարևոր, երբեմն էլ բացառիկ արժեք ունեցող նյութեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի ոչ միայն հասարակական և քաղաքական կացությանը, կրոնական պատկերացումներին, մշակույթի որոշ հարցերին, այլև կենցաղամշակութային երևույթներին: Այդ աղբյուրները միանգամայն արժանի են հատուկ ուսումնասիրության, առանձին-առանձին թարգմանվելու և ներկայացվելու հայ գիտական հանրությանը: Մեզ համար եվրոպացի ուղեգրողների վերաբերյալ հիմնական աղբյուրը Հովհ. Հակոբյանի «Ուղեգրություններ», հ. Ա (ԺԳ – ԺԶ դդ.), Եր., 1932, հ. Զ, Եր., 1932, աղբյուրագիտական աշխատությունն է: Եվրոպացի XIII-XV և XV-XVII դդ. Ճանապարհորդների վերաբերյալ հրատարակել ենք երկու հոդված (տե՛ս Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, էջ 211-250):

Միջնադարյան հայ ազգագրական նյութերի գրանցման տեսակետից կարևոր ծառայություն են մատուցել նաև Եվրո-

պացի ճանապարհորդները, որոնք տնտեսական ու քաղաքական նպատակներով Արևելքի երկրներն այցելելու տարիներին անցել են Հայաստանով: Դրանցից մեկը ֆրանսիացի **Ուիլյամ Ռուբրուքն** էր, որը 1253-1255 թթ. ճանապարհորդել է մոնղոլական տիրապետության տակ գտնվող երկրներում: Նա Հայաստանով անցնելիս եղել է Նախիջևանում, Երևանում Մանազկերտում, Երզնկայում, Կամախում, Սեբաստիայում, Կեսարիայում և Սիսում: Ու. Ռուբրուքին հետաքրքրել են ոչ միայն պատմական անցքերը, այլև ազգագրական առանձին երևույթներ: Նրա հավաստմամբ Նախիջևանի գեղեցիկ տեսք ունեցող գյուղերում և քաղաքում բնակիչներն իրենց տներում պահելիս են եղել «Մի փայտյա ձեռք՝ խաչը բռնած և մի վառվող ճրագ, դրած նրա առջև»: Նախիջևան քաղաքում Ռուբրուքը նկարագրել է հայ քահանայի հուղարկավորության արարողությունները, լսել է հայ եկեղեցու հետ կապված ավանդություններ և մարգարեություններ՝ Հայաստանը Եվրոպայի ձեռքով ազատագրվելու վերաբերյալ: Նոյի մասին պատմող ավանդության մեջ հիշատակվում է մի կարևոր վկայություն, որ Արարատ լեռը աշխարհի մայրն է համարվել, ուստի և նրա վրա բարձրանալը սրբապղծություն է դիտվել: Ուղևորը հյուրընկալվել է Հեթում թագավորի (XIII դ.) և Զաքարիա Սպասալարի ընտանիքներում, որոնց հյուրասիրություններից ուշագրավ տպավորություններ է պատմում: Նկարագրելով Երուսաղեմի կողմերում ճգնավոր եղած մի վանականի երկաթե գոտին վերարկուի տակից կապելու և մազե վերարկու հագնելու սովորության մասին՝ դիտել է, թե այդ միամիտ վանականը, ներկայանալով Մանկու խանին և վերջինիս բնակատեղիին մոտիկ քրիստոնեական տաղավար ստեղծելով, իբրև թե Աստծու հարկադրանքով տիրակալին ուզեցել է քրիստոնյա դարձնել:

Ծագումով վենետիկցի **Մարկո Պոլոն** 1271-1295 թթ. դեպի Չինաստան ուղևորվելիս երկու անգամ անցել է Հայաստանով՝ Այաս-Կեսարիա-Սեբաստիա-Երզնկա-Մուշ-Մերդին ուղեգծով: Վերադարձին անցել է Թավրիզ-Սևանա լճի ավազան-Էրզրում-Բաբերդ-Տրապիզոն երթուղով: Նա ևս քաղաքական իրադրության վերաբերյալ բազմաթիվ վկայություններ հաղորդելուց բացի, հիշատակել է կենցաղային երևույթներ: Նա Կիլիկիայի նավահանգիստ Այաս քաղաքը դիտել է իբրև միջազգային առևտրի հանգուցակետերից մեկը՝ ավելացնելով. «Բոլոր համեմեղենները և մետաքսյա ու արծաթյա կերպասները, և ուրիշ արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը»: Փ. Ասիայում ապրող հայերն ու հույները, նրա հավաստմամբ, «հյուսում են աշխարհի ամենանուրբ և ամենագեղեցիկ գորգերը, և նույնպես մեծ քանակությամբ մետաքս, որդան կարմիր և ուրիշ գույներով և առատությամբ ուրիշ կտորեղեններ»:

Երզնկայում, որտեղ գովում է «Բնական աղբյուրներից լավագույն բաղնիքները», ցույց է տվել, թե «հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները»՝ նշելով, թե Մուշ և Մերդին քաղաքներում ժողովուրդն զբաղվում է արհեստներով, հավաստում է մեծ քանակությամբ բամբակ ու բեհեզ արտադրելու իրողությունը: Թիֆլիսի շրջակայքի հայկական և վրացական գյուղերը նրա վկայությամբ պարսպապատվում էին, որպիսի սովորությունը Արարատյան գավառներում արձանագրվել է նմանապես XVIII դարում: Մարկո Պոլոն ակնարկ ունի Սևանա լճում ձկնորսությամբ զբաղվելու մասին, ըստ որում՝ հավատացել է, թե իբրև ձուկը այս լճում հրաշքով է հայտնվում պահքի օրերին և հեռանում Զատիկից հետո:

Կարևոր տեղեկություններ կան իսպանացի ճանապար-

հորդ **Ռույ Գոնսալես դի Կլավիխոյի** ուղեգրություններում: Նա ճանապարհորդել է 1403-1406 թթ.: Սամարղանդ մեկնելիս նա անցել է Սամսուն-Տրապիզոն-Երզնկա-Էրզրում-Ալաշկերտ-Բայազետ-Մակու-Խոյ-Թավրիզ ուղեգծով և վերադարձին՝ տեսել էր քարերի վրա փորագրված խաչի նշաններ»,- գրում է Կլավիխոն, որոնք ամենայն հավանականությամբ երկրագործական-այգեգործական բերքը պաշտպանող ցասման խաչեր են եղել: Նա համշենահայության մեջ նշել է հայերի հարկադրական մահմեդականացումն ու զարմանալիորեն բարքերի վատացման հանգամանքները:

Բացի թեմայի առումով կարևոր այս երեք ճանապարհորդներից, Հայաստանի և հայերի մասին նյութեր են հաղորդել նաև XV դարի ուղևորները: Դրանցից են Վենետիկի երեք դեսպանները՝ Կատերինո Զենեն (1471-1475), Ջոզեֆա Բարբարոն (1471-1478) և Ամբրոսիո Կոնտարինին (1473-1477): Այդ դարում նյութեր է հաղորդել նմանապես վենետիկցի Ջիովաննի Մարիա Անջիոլելլոն, իսկ XVI դ. սկզբին՝ մի անհայտ ուղևոր (1511-1520):

Ջուղայեցի հայ վաճառականների մասին որոշ նյութեր կան Վինչենցո դ'Ալեսանդրի ուղեգրություններում: 1557-1572 թթ. հայերի վերաբերյալ որոշ տեղեկություններ կան անգլիացի ուղևոր Անտոնի Ջինկինսընի գործերում, իսկ 1578-1582 թթ. ընթացքում՝ նաև անգլիացի Ջոն Նիուբերի ուղեգրություններում[1]: XVII-XVIII դդ. բազմաթիվ այլ ճանապարհորդներից ու գիտնականներից կարելի է հիշատակել Գրոմովին, որը գրի է առել հայերի, վրացիների, ինչպես և կովկասյան ու այլ ժողովուրդների հարսանեկան սովորությունները[2]:

---

[1] **Հովհ. Հակոբյան,** Ուղեգրություններ, Ա, Երևան, 1932, էջ 16-143, 147-460:

[2] Позорище странных и смешных обрядов при брако-сочетаниях разных

Գրականություն

1. Արաբ մատենագիրները Հայաստանի մասին, հավաքեց և թարգմանեց Բ. Խալաթյանցը, Վենետիկ, 1919:

2. Արաբական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981:

3. Արաբական աղբյուրներ, Գ, թարգմ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005:

4. Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Յակուտ ալ-Համավի, Աբուլ-ֆիդա, Իբն Շաղդադ, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Եր., 1965:

5. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 7-10:

6. **Հակոբյան Հովհ.,** Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. Ա, Եր., 1932, հ. Զ, Եր., 1932:

7. **Նահապետյան Ռ.,** Միջնադարյան Հայաստանի գործվածքեղենը արաբ և եվրոպացի ճանապարհորդների գնահատմամբ (IX-XV դդ.) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, էջ 211-230, **նույնի՝** Արաբ մատենագիրների վկայությունները հայերի մասին (Թ-ԺԴ) // նույն տեղում, էջ 191-210, **նույնի՝** XV-XVII դդ. Եվրոպացի ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին // նույն տեղում, էջ 230-251:

8. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության աղբյուրներ (Հնագույն շրջանից մինչև XVIII դ. երկրորդ կես), ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Եր., ԵՊՀ հրատ., 2023:

чужеземных и в России обитающих народов и при том нечто о холостых и женатых, СПб., 1797.

ԹԵՄԱ 5

ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ: ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆ

Հայ ազգագրական գիտությունը XVIII դ. երկրորդ կեսից XIX դ. 50-60-ական թվականները բնութագրվում է իբրև ազգագրական գիտության ձևավորման առաջին պարբերաշրջան, ազգագրական նյութերի առավել արդյունավետ գրանցման, տարերայնությունը հաղթահարելու ժամանակաշրջան:

XVIII երկրորդ կես – XIX դ. 50-60-ական թթ. ժամանակաշրջանի բնութագրությունը: Ակնառու է եղել Եվրոպական և ռուսական միջավայրի բարերար ազդեցությունը ժամանակի հայ գործիչների՝ Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի, Հ. Ալամդարյանի, Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի և այլոց գործունեության վրա: XVIII դ. վերջին և, հատկապես, XIX դ. սկզբներին Եվրոպայում և Ռուսաստանում նշանակալից տեղաշարժերը կապված բուրժուական հարաբերությունների առաջացման և ազգային ինքնագիտակցության աշխուժացման հետ, առատ արձագանքներ է գտել հայագիտական հրատարակություններում, հայ ժողովրդի սովորույթներին, վարք ու բարքին, ընտանեկան-հասարակական կենցաղին, հոգևոր մշակույթին վերաբերող անդրադարձներով: XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դ. 50-60-ական թթ. ժամանակաշրջանը բնութագրվում է իբրև ազգագրական նյութերի նպատակային գրանցման ժամանակաշրջանի սկիզբ, իբրև ազգագրական գիտության ձևավորման առաջին պարբերաշրջան՝ հայագիտական հրատարակությունների առատությամբ: Այս առումով, նշանակալի է Մխիթարյան միաբանության գիտնական հայրերի ավանդը՝ հայ ազգագրությունը տարերայնությունից դուրս բերելու և գիտական ուղու վրա դնելու բնագավառում:

5.1. Մխիթարյան միաբանության խաղացած դերը հայ ազգագրական գիտության ձևավորման գործում

Եվրոպայի հայկական գաղթօջախների խաղացած դերը, Վենետիկի Ս. Ղազար կղզում հաստատված միաբանությունը: Ազգային զարթոնքի առաջին արտահայտություններն ի հայտ եկան հայկական գաղթօջախներում: Մեծ էր Եվրոպայում կրթություն ստացած գիտնականների, մասնավորապես Մխիթարյան միաբանության անդամների դերը հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման գործում: Այն հիմնվել է 1717 թ. Մխիթար Սեբաստացու (1676-1749 թթ.) կողմից Վենետիկի Սուրբ Ղազար կղզում՝ որպես կրոնական (կաթոլիկ) և մշակութային կազմակերպություն: 1780 թ. Ավստրիայում հիմնվում է դարձյալ Մխիթար Սեբաստացու անվամբ միաբանություն, որը 1811 թ. ճանաչվում է Վենետիկի միաբանության մասնաճյուղ Վիեննայում: Շուտով երկուսն էլ վերածվում են նաև գիտակրթական նշանավոր կենտրոնների: 2000 թ. սրանք միավորվում են, որի կենտրոնատեղին Վենետիկի Ս. Ղազար կղզու Մայրավանքն է, իսկ Վիեննայինը՝ առաջին գլխավոր մենաստանը: Ձեռագիր ֆոնդն ավելի քան 5 հազար միավոր է, տպագիր ֆոնդը՝ 100 հազար, շուրջ 2600-ի են հասնում գրչագիր մատյանները:

Ղ. Ինճիճյան, նրա ազգաբանական գործունեությունը (1758–1833): Ականավոր հայագետ-աշխարհագետ, ծնունդով Կ. Պոլսեցի Ղ. Ինճիճյանը թողել է գրական, պատմաաշխարհագրական և ազգագրական հարուստ ժառանգություն: «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» բազմահատորյակի՝ Օսմանյան կայսրության պատմական աշխարհագրությանը նվիրված 5-րդ և 6-րդ հատորների հեղինակն է: 1806 թ. հրատարակվում է նույն շարքի Ասիա աշխարհամասին նվիր-

ված «Նոր Հայաստան» հատորը: «Ստորագրութիւն Հայաստանեայց» (1822) աշխատության մեջ հարուստ տեղեկություններ կան Մեծ Հայքի 15 աշխարհների և 191 գավառների մասին, կատարել է նաև տեղանունների ստուգաբանություն:

«Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատությունը: Մեծածավալ եռահատոր սույն աշխատությունում ի մի են բերվել մատենագրության մեջ հաստատագրված ազգագրական տվյալները: Դրանք գիտնականի ձեռքով խմբավորվել են ըստ թեմաների: «Զինվորութիւն Հայաստանեայց» խորագրի տակ Ղ. Ինճիճյանը ամփոփ ներկայացրել է պատմագիրների տվյալները: Մատենագրությամբ հավաստված պատմաազգագրական տեղեկությունների հիման վրա ներկայացված են հայոց միջնադարյան ռազմական մարտավարության պատկերը, զինվորների զգեստները, պաշտպանական զենքերը, զենքի տեսակները, ամրոցները, պարսպաքանդ սարքերը, վրանները, ազդարարիչ եղջերափողերը և այլն:

«Սովորութիւն Հայաստանեայց» վերնագրի տակ նա ուրվագծել է արքունական կենցաղի որոշ կողմերը՝ թագավորների պաշտոնական տարազը, թագն ու խույրը, թագադրության հանդեսները, օծման արարողությունները, պալատականների սովորույթները, միջնադարի հայկական պետական-զինվորական դրոշները, միջնադարյան հայոց ամուսնական սովորույթները, բարքերը, պետական-նախարարական օրենքներն ու իրավաբանական նորմերը, դաշն կնքելու ժամանակ ազգային սովորությունների կիրառումը, հոգևոր մշակույթի շատ կողմեր՝ ճարտարապետությունն ու երաժշտությունը, միաժամանակ անդրադարձել է նաև հեթանոսության ու քրիստոնեության հետ կապված դավանաբանական հարցերին, հոգևորա-

կանների նիստուկացին, ծիսական արարողակարգին: Հուղակավորության ծեսերը ներկայացրել է սգավորության, մահարձաններ կանգնեցնելու սովորությունների նկարագրությամբ:

Ժողովրդական տարազի ձևերին, զարդերին ու գործածության եղանակներին և օծանելիքներին անդրադարձել է ավելի համառոտ:

Աշխատության երրորդ հատորում հանգամանորեն քննել է հայկական երկրագործության, որսորդության, ճարտարապետության, քանդակագործության ու երաժշտության վերաբերյալ տվյալները, հեթանոսությանը, քրիստոնեությանը, եկեղեցականների կենցաղավարությանը նվիրված հարցեր և այլն: Գիտնականի աչքից չեն վրիպել նաև հայկական կենցաղն առողջ հիմքերի վրա դնելու խնդիրները[1]:

Ի դեպ, նշենք, որ հայ կենցաղավարության մեջ առաջավոր ձևերը մտցնելը Ինճիճյանի վաղեմի նպատակներից էր: Նա դեռևս 1815 թ. հրատարակած «Ազգասեր» աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է հայ կենցաղավարության մեջ առաջավոր ձևեր մտցնելու հարցերին: Նա նախանձի, քինախնդրության, չարախոսության, կեղծավորության և նմանատիպ երևույթների դեմ պայքարելու խնդիր է դրել: Եվ, որպեսզի կենցաղագիտական նոր երևույթները դյուրըմբռնելի լինեն, հեղինակն այդ գործը շարադրել է բարբառախառն գրական լեզվով: Այստեղ նա բազմաթիվ օրինակներ է բերել հռոմեական, հունական, ռուսական և այլ ժողովուրդների վարք ու բարքերից՝ չմոռանալով նաև ներկայացնել հայկական միջնադարյան կենցաղավարության գեղեցիկ օրինակները:

---

[1] Հնախոսթիւնք աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի / տն Հ. Ղուկաս աթոռակալ վարդապետի Ինճիճեան, հատոր Բ, ի Վենետիկ, 1833, էջ 236-403:

Գիտնականի հրատարակած ծավալուն գործերից է «Ընդհանուր պատմություն» կամ «Դարապատում» յոթհատորյակը, որի վերջին հատորը երկու գրքով է: Այն թարգմանված է եվրոպական մի շարք լեզուներով: Աշխատության մեջ գիտնականը անդրադարձել է տարբեր ժողովուրդների ազգագրական նկարագրերին՝ հիմնականում հենվելով իր թարգմանած աղբյուրագիտական նյութերի վրա:

Ղ. Ինճիճյանին հաջորդեց Տրապիզոնում ծնված և Մխիթարյան միաբանության անդամ դարձած, ականավոր գիտնական Մինաս Բժշկյանը (1777-1851): Գիտնական, որը հատուկ դիտավորությամբ զբաղվել է հայ և օտար ժողովուրդների կենցաղի ու մշակույթների վերաբերյալ նյութեր հավաքելով:

Մինաս Բժշկյանի հիմնական աշխատությունները՝ «Ճեմարան գիտելեաց», «Հմտութիւն մանկանց», «Պատմութիւն Պոնտոսի» և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», դրանց նշանակությունը և ավանդը հայ ազգագրության մեջ:

Լինելով Ղրիմի հայ եկեղեցու թեմի առաջնորդ՝ Մինաս Բժշկյանը արևմտահայոց մեջ, որպես առաջին բանահավաք և դաշտային ազգագրական նյութեր գրառող, հատուկ նպատակադրմամբ է զբաղվել հայ և այլ ժողովուրդների կենցաղով ու մշակույթով՝ ճամփորդությունների ընթացքում անձամբ գրանցելով արժեքավոր ազգագրական նյութեր: Կորստից փրկել է նաև հսկայական գիտական արժեք ունեցնող ազգագրական նյութեր, արձանագրություններ: Այդ գործին հատկապես նպաստել են երկու անգամ երկարատև ճանապարհորդելու պատեհ առիթները, ինչպես նաև Ղրիմի հայկական գաղութում առաջնորդի պաշտոն վարելը: Հեղինակի բանահավաքչական վաստակի արտահայտությունն են «Պատմութիւն Պոնտոսի» և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» աշխատու-

թյունները: Նա հատուկ նպատակով ճանապարհորդել է Սև ծովի առափնյա բոլոր շրջաններում: Գրի է առել աշխարհագրական, պատմական, հնախոսական, ճարտարապետական, ազգագրական և այլ կարգի տեղեկություններ: Նրա գրի առած նոր նյութերը գիտական ու ճանաչողական մնայուն արժեքներ են: Հանգամանորեն նկարագրում է համշենահայերի դաշտամշակության, պարտիզամշակության, ծխախոտամշակության, ընտիր կաթնամշակության զբաղմունքները, Տրապիզոնի հայերին համարում է անեցիներ և այլն: Նա անդրադարձել է ոչ միայն հայոց, այլև այն ժողովուրդների ազգագրական պատկերին, որոնց միջավայրում (թուրքեր, հույներ, աբխազներ, աբազներ, վրացիներ, չերքեզներ, ինգուշներ, թաթարներ, օսեր, մեգրելներ, Դոնի կոզակներ, բուլղարներ, լեհեր, հունգարներ…) ապրել են հայերը:

Լեհաստան կատարած ուղևորության ընթացքում այդ երկրում, ինչպես նաև Բեսարաբիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Ղրիմում և հայաբնակ այլ վայրերում մեծարժեք աղբյուրագիտական նյութեր է գրառել, որոնք վերաբերում էին հայերի ամուսնության ձևերին, կրոնական համոզմունքներին, արհեստներին ու արհեստավորական միություններին, ժողովրդական տոներին, նյութական մշակույթին՝ բնակարան-բնակավայրերին, տարազին, ուտեստին և այլն:

Լեհաստանում և Հունգարիայում Մ. Բժշկյանը ներկայացրել է հայկական ավանների, արվարձանների ու գյուղերի, եկեղեցիների, վանքերի, դպրոցների, աղբյուրների, ժողովրդական կառույցների ստեղծման պատմությունը, մոմի գործարանի կառուցումը, թատրոնի նախագծի ստեղծումը և այլն:

Նշանավոր այդ երկու աշխատությունները գրել է հիմնականում իր կողմից տարբեր ժողովուրդներից գրառած դաշ-

տային ազգագրական նյութերի հիման վրա: Հունգարիայում 1703 թ. կառուցված Հայաքաղաքը 1880-ական թթ. ուներ 6000 հայ բնակիչ: Ղրիմում հիշատակում է Խարասու քաղաքի հայաշատ լինելը:

Մ. Բժշկյանի գիտական հետաքրքրությունների շրջանակներում են եղել նաև ազգային երգարվեստի, միջնադարյան խազագրերի և հայկական ձայնագրության նոր համակարգի խնդիրները:

Մ. Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» (Վենետիկ, 1815) մեծածավալ աշխատությունը, որ շարադրվել է չափածո, հարց ու պատասխանի ձևով, ներկայացվում է որպես դասագիրք պատանիների համար: Կարևոր են հատկապես դասագրքի այն հատվածները, որոնք ներկայացնում են աշխարհամասերի բնակչության մարդաբանական կազմը, դրանց վիճակագրությունը և քաղաքակրթական առանձնահատկությունները:

Պատանիների համար էր նախատեսված նաև «Հմտություն մանկանց» (Վենետիկ, 1818) քառահատոր աշխատությունը: Այն, որպես ընդհանուր ազգագրության համառոտ ժողովածու, չինացիների, հնդիկների, հարավամերիկյան բնիկների, ճապոնացիների, նորզելանդացիների, աֆրիկյան ժողովուրդների, արաբների, թուրքերի, պարսիկների, վրացիների և այլոց կենցաղամշակութային սովորությունների և կրոնական համոզմունքների մասին է: Դասագիրքը գրված է աշխարհաբար մատչելի լեզվով: Հեղինակն առանձին սիրով նկարագրել է հնդիկ ժողովրդի ցեղային սովորությունները, կերակուրները և ցեղերի մեծամասնության մեջ տոտեմիզմի պահպանված լինելը, աստվածություններին երեխաներ զոհելու սովորությունները, քուրմերի ծառայությունները, ամուսնության նպատակով մեծերի կողմից երկու տարեկան աղջկան գնելը և տուն

տանելը, աղջիկների ոտքերին փոքրուց երկաթե կոշիկ-կաղապար հագցնելու զարհուրելի սովորույթը, նաև հյուրասիրության, ողջունման ձևերը, հուղարկավորության ծեսերը և այլն: Այսպիսի նկարագրություններ ունի նաև արաբների, թուրքերի, վրացիների և այլ ժողովուրդների մասին:

Այսպիսով, հայրենիքից դուրս Մխիթարյան միաբանության գիտնականները, մասնավորապես Ղ. Ինճիճյանը և Մ. Բժշկյանը, XIX դ. առաջին կեսին զգալի ներդրում ունեցան իրենց աշխատություններով հայ ազգագրությունը գիտական հիմքերի վրա դնելու, ազգագրական նյութերն առավել արդյունավետ գրանցելու, համակարգելու գործում:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 10-14:
2. **Բժշկեան Մ.,** Ճանապարհորդութիւն ի Լեհաստան ..., ’Ի Վենետիկ, 1830:
3. **Բժշկեան Մ.,** Պատմութիւն Պանտոսի որ է Սեաւ ծով, ’Ի Վենետիկ, 1819:
4. **Ինճիճեան Ղ.,** Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1835:
5. **Նահապետյան Ռ.,** Վենետիկի Մխիթարյանների դերը հայ ազգագրության ձևավորման գործում ԺԹ դարի առաջին կեսին (Ղուկաս Ինճիճյան, Մինաս Բժշկյան) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 113-136:
6. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն (XVIII դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը), ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, էջ 9-29:

5.2. Մեսրոպ Թաղիադյանի և Խ. Աբովյանի ազգագրական գործունեությունը

Մեսրոպ Թաղիադյան (1803-1858): **«Ճանապարհորդություն ի Հայս», «Դիցաբանություն» աշխատությունների բնույթը, նշանակությունը, ավանդը հայագիտության, առանձնապես հայ ազգագրության մեջ:**

Մեսրոպ Թաղիադյանի աշխատությունները հարուստ նյութ են պարունակում Հայաստանի և Արևելքի պատմության ու մշակույթի, ազգային բարքերի ու սովորույթների վերաբերյալ:

Ճանապարհորդել է Արևելյան Հայաստանի գավառներում և գրի է առել ազգագրական ու բանահյուսական նյութեր: Դրանցում ունի արժեքավոր դիտողություններ:

«Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ բացառիկ տեղեկություններ են հաղորդվում Քանաքեռի, Օշականի, Կարբիի, Մեղրիի և այլ վայրերի այգեգործության, դաշտերը ոռոգելու համակարգերի, Էջմիածնի վանքի կալվածքների վարուցանքի, բերքահավաքի, կալսելու գործիքների, Ջրվեժում ընտիր ձեթ ստանալու միջոցների ու եղանակների, Նորքում կավե անոթների արտադրության, Արարատյան հովտում բամբակամշակության, Սյունիքում երկաթամշակության և հայ բնակչության տնտեսական այլ զբաղմունքների մասին: Հակիրճ տեղեկություններ տալով բոստանամշակության, վայրի և մշակովի մի շարք բույսերի վերաբերյալ՝ հեղինակը միաժամանակ հավաստում է, որ թուրինջը (նարինջ), բամիան, կարտոֆիլը և այլն Հայաստան են բերվել XIX դ. սկզբին տարբեր երկրներից:

Նա ուշագրավ նկարագրություն է թողել ամռանը վրանաբնակ և ձմռանը դաշտում գետնափոր խրճիթներում ապրող սեղլու և ղարափափախ վաչկատուն ցեղերի կենցաղի, զբաղմունքների, տարազի վերաբերյալ: Ըստ այդմ՝ կանանց հիմնա-

կան զբաղմունքները եղել են խաշնարածությունը ու բրդի մշակումը, իսկ տղամարդկանցը՝ ավազակությունը:

Աշխատությունը յուրատեսակ ընդարձակ ծրագիր էր, որով նա գիտնականի խորիմացությամբ առաջարկում էր տնտեսական բարեփոխումներ իրականացնել երկրում. նա խոսում էր գետերը նավարկելի դարձնելու և առևտրական նպատակներին ծառայեցնելու, երկրի հարուստ ընդերքը օգտագործելու, խոպանացած դաշտերը բերքատու դարձնելու, արհեստների զարգացման բազմապիսի հնարավորությունների և այլ միջոցառումների վերաբերյալ, փորձում էր կռահել երկրի արտադրողական ուժերի կազմակերպման իրական հնարավորությունները, ուղի հարթել կապիտալիզմի զարգացման համար: Այդ նպատակով Մ. Թաղիադյանը առաջարկում էր կազմակերպել ընկերությունների լայն ցանց, ամրապնդել կապը արևմտյան հայ հատվածի հետ, նպաստել հայրենադարձությանը, հայ առևտրականների կապիտալները սեփական հողի վրա օգտագործելուն՝ խոպանացած երկիրը շենացնելու համար:

1830 թ. հրատարակած «Դիցաբանություն» աշխատությունում, որի նյութերը քաղված են հունական առասպելաբանությունից, զուգահեռ նյութեր են մատուցվում հայկական, հռոմեական, պարսկական իրականությունից՝ հարց ու պատասխանի ձևով: Հայկական դիցաբանությունից հեղինակն ուսումնասիրել է Անահիտի, Նանեի և Աստղիկի մասին առասպելները: Անահիտին վերաբերող ուսումնասիրության մեջ, վկայակոչելով Դիոդորոս Սիկիլիացուն, հավաստում է, թե Հայաստանում նրան մեր նախնիները զոհաբերում էին «ուստերս և դստերս իւրեանց»: Նանեին վերագրել է կանանց պարկեշտության մղելու գործառույթը, ձեռքի աշխատանքների հովանավորումը՝ մանել, կարել, ոստայնանկություն և այլն: Նույն ձևով նկարագրել է նաև

Աստղիկ դիցուհու դերը:

«Դիցաբանություն» աշխատությունը ամբողջությամբ ևս մի անսպառ աղբյուր է, որտեղից անհատնում նյութեր կարող են քաղել և՛ գրողը, և՛ պատմաբանը, և՛ արվեստագետը:

Մ. Թաղիադյանը հետաքրքրվել է նաև Հնդկաստանի հայկական գաղթավայրերի պատմությամբ, որտեղ հայերն արձանագրել են տնտեսական ակնառու նվաճումներ: Նա հեղինակ է Հնդկաստանի պատմության եռահատորյակի, որի առաջին հատորն է միայն լույս տեսնում: Ուշագրավ է Թաղիադյանի՝ «Պատմութիւն Պարսից» (Ա հատոր, Կալկաթա, 1846) աշխատությունը, որտեղ արժեքավոր են հատկապես այն հատվածները, որոնք վերաբերում են Պարսկաստանի հայկական գաղթավայրերի և մանավանդ՝ Նոր Ջուղայի պատմությանը:

Մ. Թաղիադյանի աշխատությունները ուշագրավ են ոչ միայն որպես գրական գործ, այլև իբրև ազգագրական աղբյուրներ: Նրա գործունեությունը նշանակալի դեր խաղաց ազգագրական գիտությունը հունի մեջ դնելու, տարերայինից դեպի գիտության ուղին մղելու տեսակետից:

Խաչատուր Աբովյան (1809–1848): Նա հայագիտության մեջ գնահատված է որպես հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ ու մանկավարժ, հասարակական գործիչ, սակայն, ցավոք, նրա ազգագրական ժառանգությունը առ այսօր լիարժեքորեն ուսումնասիրված ու պատշաճ գնահատված չէ, մինչդեռ նա մեծ դեր է խաղացել հայ գիտական ազգագրության հիմնադրման գործում: Արևելահայ իրականության մեջ Աբովյանը նպատակամիտված ազգագրական և բանահյուսական նյութերի գրառման նախաձեռնողն է: Սույն ձեռնարկի հեղինակը բազմաթիվ հոդվածներով (տե՛ս գրականության ցանկը) ցույց է տվել, որ Խ. Աբովյանը նաև հայ ազգաբանա-

կան գիտության սկզբնավորողն է:

Խ. Աբովյանի համար ազգագրական նյութերի գրառումն ու դրանց հիման վրա վեպեր ու զրույցներ կազմելը ունեին հայրենասիրական, ազատասիրական զգացմունքներ արթնացնելու, երկրի տնտեսական, մշակութային կյանքը առաջ մղելու նպատակ: Ռուսական և եվրոպական առաջավոր գաղափարներին առնչվելը, մասնավորաբար՝ Դորպատի համալսարանում ստացած կրթությունը և շփումները առաջավոր մտքի ներկայացուցիչների հետ խթան դարձան ազգագրական գործունեության ծավալման համար: Նա գերմաներեն գրեց մեկ տասնյակից ավելի ազգագրական գործեր, որոնք շուրջ մեկ դար մնացին չհրատարակված: Դրանք են՝ «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին», «Գյուղական տների կառուցվածքը», «Քրդեր և եզդիներ», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին», «Համառոտ ակնարկ հայերի մասին», «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտություն», «Ռուսական իջևանատների մասին» և այլն, որոնց մեծ մասը գրվել է եվրոպացի ճանապարհորդներ՝ Հաքստհաուզենի, Պարրոտի, Վագների և այլոց խնդրանքով ու խորհրդով: Ազգագրական առումով ոչ պակաս արժեքավոր, նշանակություն ունի Խ. Աբովյանի Դորպատյան օրագրերը, որ գրվել են 1830-ական թթ.: Դրանք առ այսօր ազգագրորեն դեռ ուսումնասիրված չեն:

Ներկայացնենք նրա արժեքավոր գործերից մի քանիսը. 1840 թ. գերմաներեն գրած՝ «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի ու հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» հոդվածում նկարագրում է Թիֆլիսի վերակա-

ռուցումը, շենքերը, շինարարության մեջ եվրոպական ոճի կիրառումը, իջևանատները, քաղաքային տարազի եվրոպականացման գործընթացը, կահույքը, երաժշտությունը և այլն: Հեղինակը ցույց է տվել ամուսնությունը կազմակերպելու մի քանի սովորություններ: Դրանք էին՝ օրորոցախազի սովորությունը, հոր կամքով միայն տղա կամ աղջիկ ամուսնացնելը և այլն: Այնուհետև անդրադառնում է ավանդական հարսանեկան սովորություններին և ընտանեկան հարաբերություններին, աղջկա ու կնոջ իրավազուրկ վիճակին[1]:

«Գյուղական տների կառուցվածքը» հոդվածում անդրադառնում է շինականների ընտանեկան հարաբերություններին և ամուսնության հարցերին, չխոսկանությանը, ծնողների և զավակների փոխհարաբերություններին, ավագության կարգի պահպանմանը և այլն: Առանձին տեղ է հատկացված Քանաքեռի ժողովրդական շենքերի տեսակներին, տնային գույքին, կահույքին և այլն[2]: Աբովյանի հատուկ նպատակով գրված մյուս ուսումնասիրությունների վերաբերյալ մենք անդրադարձներ ունենք մեր մի քանի գիտական հոդվածներում (տե՛ս գրականության ցանկում):

Յուրացնելով ժամանակաշրջանի առաջադիմական գաղափարները, ծանոթանալով եվրոպական քաղաքակիրթ կենսակերպին՝ Աբովյանը վերադարձավ հայրենիք լուսավորական և քաղաքակրթական մեծ առաքելությամբ ու ծրագրով: Նա եղավ իր դարաշրջանի առաջին բանագետն ու բանահավաքը, նշանավոր ազգագրագետը: Նրա հաղորդած ազգագրական նյութերը մեզ են հասել երկու ճանապարհով՝ նյութեր, որ

---

[1] **Աբովյան Խ.,** Երկերի լիակատար ժողովածու, VIII հատոր, Երևան, 1958, էջ 154-190:

[2] **Խ. Աբովյան,** Երկեր, հ. X, էջ 59-95:

ցրված են գրական ստեղծագործությունների մեջ և նյութեր, որոնք հատուկ նպատակադրումով ուսումնասիրված են:

«Վերք Հայաստանի» վեպը, «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» ծրագիրը, դրանց բնույթը և ուղղվածությունը: «Վերք Հայաստանի» վեպը Այրարատ նահանգը ներկայացնող, ազգագրությամբ հագեցած երկասիրություն է:

Հեղինակի գեղարվեստական արձակում առհասարակ տեղ են գտել հայ ժողովրդի զբաղմունքների՝ երկրագործության, այգեգործության, բերքահավաքի ու կալսելու, անասնապահության, որսորդության վերաբերյալ նկարագրություններ: Նյութական մշակույթից ներկայացվում է բնակարանը, զգեստը, զարդերը, ասեղնագործությունն ու կահույքը, փոխադրամիջոցների տեսակները, զենքերը, երաժշտական գործիքները, ուտեստները: «Վերք»-ում և այլ ստեղծագործություններում առանձին ուշադրության են արժանացել ժողովրդական մարտական խաղերը, ձիով մականախաղերը, գնդակախաղերը: Ժողովրդական տոներից հատկապես ուշագրավ է Ծաղկավանքում պատկերված Վարդավառի տոնակատարությունը: Հոգևոր մշակույթի առումով նյութեր ունի կենդանիների, ջրի, արևի, չար ու բարի ոգիների, վիշապների, քաջքերի, պաշտամունքի վերաբերյալ:

Խ. Աբովյանը հայ և օտար ժողովուրդների ազգագրությամբ զբաղվել է եվրոպական տիպի գիտնականի մակարդակով ու բարեխղճությամբ: 1836 թ. ռուսական կառավարությանը ներկայացրած «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» դիմում-գրությունն ինքնին մի ծրագիր էր՝ Արևելահայաստանը տնտեսապես ու կրթամշակութային առումով ոտքի հանելու,

արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը առաջադիմական հիմքերի վրա դնելու, մասնագետ նոր կադրեր պատրաստելու համար ինստիտուտ հիմնելու և այլն: Դրան հասնելու նպատակով նա համառոտակի նկարագրել է գյուղատնտեսության ճյուղերն ու դրանց տեխնիկայի հետամնացությունը:

XIX դ. առաջին կեսը՝ մինչև 60-ական թվականները, դիտարկվում են որպես հայ ազգագրության ու բանագիտության սաղմնավորման մի շրջան, երբ սկսեցին երևան գալ նաև քննական հետազոտական աշխատություններ:

Գրականություն

1. **Աբովյան Խ.,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Եր., 1958, հ. 10, Եր., 1961:
2. **Աբովյան Խ.,** Վերք Հայաստանի, Երկեր, կազմեց՝ Հ. Ֆելեքյան, Առաջաբանը Պ. Հակոբյանի, Եր., 1984:
3. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 14-15:
4. **Թաղիադյան Մ.,** Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր: Գրական ժառանգություն, 9, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1975:
5. **Հակոբյան Պ.,** Խաչատուր Աբովյան, Կյանքը, գործը, ժամանակը (1809-1848), Եր., 1967:
6. **Նահապետյան Ռ.,** Հայոց ընտանեամուսնական սովրույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում // Գիտական աշխատություններ, VIII, 2005, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Գյումրի, էջ 53-59:
7. **Նահապետյան Ռ.,** Աբովյանը որպես ազգագրագետ // Աբովյանագիտական հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 123-130:
8. **Նահապետյան Ռ.,** Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ // «Էջմիածին», 2007, Ա, էջ 88-94:
9. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, № 3, էջ 132-148:
10. **Նահապետյան Ռ.,** Աբովյանը քրդերի ազգագրության հետազոտող // «Էջմիածին», 2011, Ա, էջ 76-90:

11. **Նահապետյան Ռ.,** Աբովյանը որպես հայ ազգաբանական գիտության սկզբնավորող // Աբովյանագիտական հոդվածների ժողովածու, Եր., 2012, էջ 111-119:

12. **Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 28-113:

13. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, էջ 30-48:

ԹԵՄԱ 6

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. 70-80-ԱԿԱՆ ԹԹ. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՅՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

XIX դ. 70-80-ական թվականները՝ որպես տարերային բանահավաքչության հաղթահարման, ազգագրական հարցարանների ստեղծման, հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում հավաքչական բուռն գործունեության իրականացման պարբերաշրջան՝ ընդգրկելով պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շրջանները: Մ. Միանսարյանցի (1830-1880), Ալեքսանդր և Սրբուհի Երիցյանների ուսումնասիրությունները («Ընդհանուր հարցեր հայոց բանաց և սովորությանց», «Տոմար ընտանեկան») մասնագիտական գրականության մեջ փորձ է արվել դիտարկել որպես հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարան: Մ. Միանսարյանցի ազգային, մշակութային, լուսավորական գաղափարները ամփոփված են նրա «Մտածությունք ազգային լուսավորության» հոդվածում, որտեղ խոսվում է միայն մշակութային, բարոյահոգեբանական կյանքի մասին: Դրանք հարցարան դիտարկել հնարավոր չէ, քանզի ընդգրկում են ազգագրության սահմանափակ բնագավառներ:

«Ծանիր զքեզ» իմաստուն միտքը ժողովրդի խավերին հասցնելու գաղափարը XIX դ. հայ մտավոր գործիչների սրբազան գործն էր համարվում:

6.1. Գարեգին Սրվանձտյանցի (1840–1892) ազգագրական, բանահավաքչական գործունեությունը

Հայ ազգագրության և բանագիտության մեջ XIX դ. երկրորդ կեսը նշանավորվում է Գ. Սրվանձտյանցի բեղմնավոր գործունեությամբ: Հայ ազգագրության ինքնուրույն գիտու-

թյուն դառնալու գործում մեծ է Գ. Սրվանձտյանցի վաստակը: Մինչև նրա հանդես գալը հայ իրականության մեջ չեն եղել ազգագրությամբ զբաղվող մարդիկ, որոնք շրջեին գավառները, լսեին ժողովրդին, գրի առնեին կենցաղը, սովորույթները, ժողովրդական բանավոր ստեղծագործությունները և այլն: Ազգագրության և բանահյուսության հավաքման գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար մեծ ներդրում էր Գ. Սրվանձտյանցի մշակած ուղղությունը:

Նա տասնամյակներ շարունակ անձանձիր շրջագայեց գրեթե ամբողջ Հայաստանում և իրար հետևից հրատարակեց ժողովրդի հոգևոր գանձերը ներկայացնող երկեր: Դրանց ազդեցությամբ արևմտահայ իրականության մեջ առաջին անգամ գրականության նյութ են դառնում ժողովրդի կյանքը, զբաղմունքը, տառապանքները, սովորույթները, հոգևոր արժեքները և ապրած բնատարածքի՝ պատմական հայրենիքի մանրամասն նկարագիրը:

Եթե նախքան Գ. Սրվանձտյանցը գրողները հայ ազգագրական նյութը ծառայացրել էին գեղարվեստին, ապա Սրվանձտյանցը ընդհակառակը՝ գեղարվեստը ծառայեցրեց ազգագրությանը՝ հարազատ մնալով ժողովրդական բառ ու բանին, ոճին՝ ազգագրական տվյալները չաղավաղելով, չխաթարելով: Թուրքական հարստահարությունների և քաղաքական անլուր հալածանքների դեմ մաքառելու տարիներին Գ. Սրվանձտյանցը պարզապես հայտնագործեց ազգագրությունն ու բանահյուսությունը որպես հոգևոր զենքեր և դրանցով ազգային զարթոնքի քարոզման գործը դրեց մի նոր ուղղության վրա:

1860-1861 թթ., որպես նվիրակ և քարոզիչ, Մ. Խրիմյանի հետ ճանապարհորդում է Արևելյան Հայաստանի գավառներում, որի ընթացքում գրում է ազգագրական և հրապարակա-

խոսական մի շարք հոդվածներ. «Երևան քաղաք», «Տփղիս քաղաք», «Սյունյաց աշխարհ» և «Շուշի քաղաք» վերնագրերով: Վերջիններս հագեցած էին ազգագրական ուշագրավ տվյալներով:

Գ. Սրվանձտյանցի անվան հետ է կապվում՝ ա) ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման վերելքը, բ) դաշտային ազգագրական նյութերի գրառման ծրագիր-հարցարանի ստեղծումը, որպիսին էր նրա «Գրոց ու բրոց» աշխատությունը:

Ազգագրական ու բանահյուսական նյութերի հավաքման՝ Գ. Սրվանձտյանցի մշակած «Գրոց ու բրոց» ծրագիրը և դրա նշանակությունը: Բացառիկ է «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքի (Կ. Պոլիս, 1874) դերը հայ ազգագրության և բանագիտության ասպարեզում: Այդ գրքով հայ ազգագրությունն ու բանահյուսությունը դարձան հոգևոր զենքեր՝ նոր մակարդակի բարձրացնելով ազգային զարթոնքի քարոզչությունը: «Գրոց ու բրոց»-ը՝ որպես յուրօրինակ ծրագիր, իր «կառուցվածքով ու հարցերի առաջադրումով, իհարկե միանգամայն տարբերվում էր Եվրոպայում կազմված ծրագրերից: Նախ՝ այն խիստ պարզ ու նախնական փորձ էր, համակարգված չէր, հարցերը թեմատիկ խմբավորման ենթարկված ու համարակալված չէին, առաջադրված հարցերը շաղկապված էին հարց ու պատասխան նկարագիրների հետ: Ընթերցողները և գիտնականները բոլոր պարագաներում ընդունել են «Գրոց ու բրոցի» բարերար-վարակիչ ազդեցությունը, բայց չեն նկատել, որ հեղինակն այն ներկայացրել է իբրև ծրագիր: «…Այս իմ գրական գործս իբրև հուշարար և ծրագիր կուզեմ ներկայացնել … ո՞ւր տարավ և ո՞ւր բերավ զիս այս նկարագիրը, զոր միայն իբր ծրագիր կը գրեմ»:

Հեղինակը «Գրոց ու բրոց»-ի տիտղոսաթերթի վրա գրել է՝

«Ծրագրեաց Գ. Վ. Սրվանձտեանց», Նախաբանի տակ էլ գրել է՝ «ծրագրողն»: Ի դեպ, մակագրության այս ձևը չի կրկնվել հեղինակի մյուս գրքերից ոչ մեկում:

«Գրոց ու բրոց»-ը որպես ծրագիր-հարցարան: Այն ընդգրկում էր հայ ազգագրության գրեթե բոլոր հիմնական խնդիրները՝ երկրի տեղագրություն, բնության նկարագրություն, տնտեսական կենցաղ և նյութական մշակույթ, ընտանեկան և հասարակական կենցաղ, հոգևոր մշակույթ: Այն իսկական հորդոր էր՝ ուղղված գավառական մտավորականությանը՝ զբաղվելու ազգագրությամբ և բանահավաքչությամբ:

Մշակութային երկրորդ խոշոր իրադարձությունը «Սասունցի Դավիթ» ազգային հերոսական էպոսի հայտնագործությունն էր: 1873 թ. Մշո Առնիստ գյուղում երեսփոխան Կրպեից գրի առած այս տարբերակը մինչև օրս գրառված 160-ից ամենակատարյալն է և իրավամբ համաշխարհային մշակույթի գերազանց նմուշ է: «Գրոց ու բրոցի», «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» էպոսի հրատարակմամբ սկսվում է հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում հավաքչական բուռն գործունեություն:

Բացառիկ է Գ. Սրվանձտյանցի երկերի ներգործությունը ժամանակի հայ գավառաբնակ մտավորականության շրջանում. նրանց ջանքերով ազգագրության և բանահյուսության ասպարեզում մեծաքանակ նյութեր կուտակվեցին տարբեր գավառներից և բնակավայրերից՝ ընդգրկելով և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստանը, նաև հայկական գաղթօջախները: Մեծ էր նաև Գ. Սրվանձտյանցի «Թորոս Աղբար», «Մանանա», «Համով-հոտով», «Հնոց-նորոց» աշխատությունների դերը ազգագրությունը և բանագիտությունը գիտության վերածելու, ինչպես նաև բանահավաք կադրերի պատրաստման գործում: Ոչ մի

հայ բանահավաք XIX դ. և հետագայում այդպիսի արժեքավոր նյութեր գրի չի առել: Ցավոք, Գ. Սրվանձտյանցի հրատարակած գործերը ամբողջական չեն, քանզի զգալի մասը կորուստի է մատնվել: Նրա գործերը դարձան գիտակցական բանահավաքչության օրինակ, որին հետևելու էր գավառաբնակ մտավորականության մի ամբողջ սերունդ. **Արիստակես վարդապետ Սեդրակյան** («Քնար մշեցվոց և վանեցվոց», Վաղարշապատ, 1874, նույնի՝ «Ամուսնական խնդիրներ», Մոսկվա, 1891), **Արիստակես վրդ. Սարգսյանց** («Պանդուխտ վանեցին», Կ. Պոլիս, 1875), **Պետրոս վրդ. Կալհոկեցի** («Ասիական ճանապարհորդություն ի հայրենիս», Կ. Պոլիս, 1881), **Գևորգ Գ. Շերենց** («Վանա սազ», Թիֆլիս, մաս Ա, 1885, մաս Բ, 1899), **Մ. Կ. Միրախորյան** («Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի…», Կ. Պոլիս, մասն Ա, Կ. Պոլիս, 1884, Բ. 1885, Գ. 1886), **Հակոբ Հ. Ալահվերդյան** («Ուլնիա կամ Զեյթուն», Կ. Պոլիս, 1884), **Հովհաննես Նազարյանց** («Նախապաշարմունք», Թիֆլիս, 1878, **նույնի՝** «Անեկդոտներ», Թիֆլիս, հ. 1, 1876, հ. 2, 1877), **Երեմիա եպ. Տեր-Սարգսենց-Տեկանց** («Տոհմային հիշատակարան», գիրք Ա և Բ, Վարագ, 1881), **Սիմոն վ. Ճուլարտյան** («Առածք ազգայինք», Վենետիկ, 1880), **Հ. Կ. Ճանիկյան** («Հնությունք Ակնա», Թիֆլիս, 1895), **Գևորգ Տեր-Աղեքսանդրյան** («Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», Թիֆլիս, 1886) և այլք: Փաստորեն Գ. Սրվանձտյանցի ամենամեծ ծառայությունը հայ ազգագրության ու բանահյուսության գծով բանահավաքչության գործի կազմակերպումն էր (մանրամասն տե՛ս Հայ ազգագրության պատմություն, էջ 61-78):

XIX դ. երկրորդ կեսին հրատարակվեցին նաև մի շարք նոր պարբերականներ, որոնք ուշադրություն դարձրին ազգագրական թեմաներին: Դրանցից էին՝ «Մասիս» օրաթերթը,

«Արծուի Վասպուրական» ամսաթերթը, «Հյուսիսափայլ», «Կռունկ հայոց աշխարհին», «Արարատ», «Արևելյան մամուլ» ամսագրերը, «Մշակ» օրաթերթը, «Բիւրակն» ամսաթերթը, «Արաքս» ամսագիրը և այլն:

6.2. Գրիգոր Խալաթյանցը (1858-1912) հայ գիտական ազգաբանության հիմնադիր

Հայ ազգագրության հետագա զարգացման գործում մեծ է եղել Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, նշանավոր հայագետ, պատմաբան, բանասեր Գրիգոր Խալաթյանցի՝ պատմագիտության, ազգաբանական գիտության, լեզվի ու գրականության բնագավառներում ունեցած դերը: XIX դարավերջին կուտակված մեծ փորձի հիման վրա Գ. Խալաթյանցը կազմում է նոր ծրագիր, որն արդեն լիովին համապատասխանում էր ժամանակի ոգուն:

Բացառիկ է նրա «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» (Մոսկվա, 1887) ազգագրական հարցարանի նշանակությունը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում: Այն, որպես համակարգված կուռ կառուցվածքով գիտական գործ, նորույթ է: Վիթխարի էր ծրագրի դերը ազգագրագետ կադրերի պատրաստման, նպատակադրված դաշտային ազգագրական հետազոտությունների իրականացման, բանահավաքչական նյութերի համակարգված գրառման, գիտական արշավախմբերի կազմակերպման գործում: «Ծրագրով» սահմանվում էր առարկան, ուղղություն էր տրվում բանահավաքներին՝ բազմապատկելով նրանց թիվը: Այն ընծայված էր Գ. Սրվանձտյանցին: Ծրագրից հետո մեծ հետաքրքրություն է առաջանում դեպի ազգաբանությունը: Այն կազմվել էր Գ. Սրվանձտյանցի «Գրոց

ու բրոցի», ինչպես նաև ռուսական համապատասխան ծրագրերի հիման վրա:

Ծրագրի բովանդակությունը, կառուցվածքը: Ծրագիրն ընդգրկում էր 500 հարց և 10 բաժին, որ վերաբերում են կենցաղի և մշակույթի ամենատարբեր բնագավառների. 1) աշխարհագրական և պատմական տեղեկություններ, 2) մարդաբանական տեղեկություններ, 3) բնակարանը և իր պարագաները, 4) զգեստ և զարդ, 5) կերակուր և խմիչք, 6) կենցաղ և զբաղմունք, 7) ընտանեկան բարք ու սովորույթ, 8) հավատք, 9) լեզու և գիր, արվեստ, ձեռագիր, 10) ժողովրդական բանավոր գրականության տեսակները: Ծրագրի երկրորդ բաժինը վերաբերում է իրավունքին և կազմված է երեք գլխից՝ 1) հասարակական կացություն և վարչություն, դատ ու պատիժ, 2) քաղաքացիական իրավունք, 3) քրեական իրավունք:

Գ. Խալաթյանցը բանահավաքներին խորհուրդ է տալիս հարգանքով վերաբերվել բոլոր այն տեղեկություններին, որ իրենց կհաղորդվեն, հարկավոր է դիտել ու գրել այն, ինչ կա, և ոչ թե այն, ինչ պետք է լիներ բանահավաքի կարծիքով: Նա միաժամանակ հորդորում է, որ նյութեր հավաքելը շատ անհրաժեշտ է, բայց պետք չէ դրանով բավարարվել, քանի որ այն միջոց է միայն և ոչ վերջնական նպատակ: Դա ատաղձն է, ոչ՝ գեղարվեստական շենքը: Պետք են ուսումնասիրություններ, վերլուծություններ:

Այսպիսով, «Ծրագիրը» էական դեր խաղաց ազգագրական գործը հայ իրականության մեջ գիտական սկզբունքներով իրականացնելու հարցում:

Գ. Խալաթյանցը «Նյութեր հայ ազգագրության պատմության համար» հոդվածում մատնանշում էր հայ ազգագրագետների անելիքները. 1) հավաքել դաշտային ազգագրական նյու-

թեր, 2) կազմել ազգագրական մատենախոսական լիակատար նկարագրություններ, 3) դրանց հիման վրա կատարել ուսումնասիրություն, 4) աշխուժացնել ազգագրական գործունեությունը, 5) ձեռնարկել գիտական արշավախմբեր, գիտական համաժողովներ, 6) հիմնել ազգագրական թանգարան, բուհերում դասավանդել կովկասյան և հայ ազգագրությանը վերաբերող առարկաներ:

6.3. «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի (1901-1913) դերն ու նշանակությունը հայ ազգագրական գիտության, պատմության մեջ: Մկրտիչ Էմինի (1815-1890) հայագիտական և հայանպաստ գործունեությունը

«Էմինյան ազգագրական ժողովածու»-ն հրատարակվեց 1901-1913 թթ., 9 հատորով: Այն հրատարակվեց Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինի բարերարությամբ, նրա կտակած միջոցների հաշվին:

ԷԱԺ-ի խաղացած դերը հայ գիտական ազգաբանության զարգացման գործում անչափ մեծ է: 1-8-րդ հատորների անփոփոխ խմբագիրը Գր. Խալաթյանցն էր, իսկ 9-րդ հատորը նրա մահից հետո խմբագրել է հայագետ Կ. Կոստանյանը: Ժողովածուի խնդիրն էր՝ հրատարակել հայ ազգագրությանը և ժողովրդական գրականությանը վերաբերող հավաքածուներ, նյութեր, գիտական հետազոտություններ: Առաջին հատորում հրատարակվեց Ալեքսանդր Մխիթարյանցի (1846-1916) «Փշրանք Շիրակի ամբարներից» վերնագրով նյութերի ժողովածուն: Ժողովածուի 4 գիրք նվիրված է վաստակաշատ բանահավաք Սարգիս Հայկունու (1838-1908) բանահյուսական նյութերի հավաքածուներին: Երեք հատորներում լույս է տեսել Հրաչյա Աճառյանի (1876-1953) «Թուրքերենի ազդեցությունը

հայերենի վրա և թուրքերեն փոխառյալ բառերը», «Հայ բարբառագիտություն», «Հայերեն գավառական բառարան» աշխատությունները: Է հատորում էլ լույս են տեսել Գր. Խալաթյանցի թարգմանությամբ ազգագրության և բանահյուսության վերաբերյալ եվրոպացի գիտնականների տեսական բնույթի ուսումնասիրություններ[1]:

6.4. Մխիթարյան միաբանների ազգաբանական գործունեությունը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին

XIX դ. վերջին տասնամյակները և XX դ. սկիզբը նշանավորվեցին ազգագրական գիտելիքների աննախադեպ կուտակմամբ: Ղ. Ալիշանի ու Վ. Հացունու ժառանգության համառոտ բնութագրությունը:

Ղևոնդ Ալիշան (1820-1901). գիտական ժառանգությունը. «Այրարատ», «Շիրակ», «Սիսական», «Սիսուան», «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց», «Հայ բուսակ կամ հայկական բուսաբանություն» (1895), «Հայ-Վենետ» (1896), «Հայապատում» (1901) և այլ աշխատություններ: «Հին հավատք» կամ «Հեթանոսական կրոնի Հայոց» (1895) աշխատությունը՝ որպես հոգևոր մշակույթի արժեքավոր ուսումնասիրություն: Մանրամասն քննության են առնված հայոց հեթանոսական հին հավատքին և պաշտամունքին վերաբերող բազմաթիվ հիմնահարցեր: Նշված աշխատությունները հետազոտական աշխատանքի տեղագրական, պատմաքաղաքական, մատենագիտական, հնագիտական, ազգագրական անհամար փաստերի համահավաք շտեմարաններ են (տե՛ս Հայ ազգագրության պատմություն, էջ 95-99):

---

[1] **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն, ԵՊՀ հրատ., 2023, էջ 78-89:

Վարդան Հացունի (1870-1944). ազգագրական գործերը. «Ճաշեր եւ խնճոյք Հին Հայաստանի մեջ», «Դաստիարակությունը հին հայոց քով», «Պատմություն հին հայ տարազին», «Հայ դրոշները պատմության մեջ», «Երդմունք հին հայոց մեջ», «Հայուհին պատմության առջև», անչափ գնահատելի է դրանց ազգագրական արժեքը: Գիտնականը դրանցում ի մի է բերել պատմագիրների երկերում տեղ գտած ուտեստի և կերակրատեսակների, ազգային տարազի՝ աշխարհիկ և եկեղեցական ծիսական զգեստների, նախարարական և զինվորական հագուստների, կանանց իրավական և բարոյական դրության, մանկան դաստիարակության վերաբերյալ տեղեկությունները:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., ԵՊՀ հրատ., 1974, էջ 16-23:

2. **Խալաթյանց Գր.,** Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887:

3. **Խալաթյանց Գ.,** Նյութեր հայ ազգագրության պատմության համար, ԷԱԺ, հ. Է, Մոսկվա, 1908:

4. **Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Եր., ԵՊՀ հրատ., 2019, էջ 113-192:

5. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2023:

6. **Սրվանձտյանց Գ.,** Երկեր, հ. 1, 1978, հ. 2, Եր., 1983:

6.5. Ազգագրական գիտության կայացման ավարտական պարբերաշրջանը (XIX դ. 90-ական թթ.- XX դ. սկզբներ)

Երվանդ Լալայանի (1864-1931) ազգագրական, բանահյուսական, հնագիտական, թանգարանաստեղծ գործունեությունը: Բացառիկ է ականավոր ազգագրագետ, բանագետ ու հնագետ, խմբագիր ու հրատարակիչ, մանկավարժ ու թանգարանաստեղծ Երվանդ Լալայանի[1] դերը հայ ազգագրական գիտության վերջնական կայացման և հետագա զարգացման գործում: Նա թողել է գիտական ու մշակութային հարուստ ու բազմազան ժառանգություն, որը, ցավոք, առ այսօր խորքային ուսումնասիրության չի արժանացել: Նրա բանահավաքչական, գիտական գործունեության ընդգրկման ժամանակաշրջանը եղել է 1880-ական թթ. մինչև 1920-ական թթ. վերջը: Նա ազգագրական նյութերը գրի առել գիտական-հետազոտողի բարեխղճությամբ՝ շնորհիվ արդեն իսկ գործող Գր. Խալաթյանցի «Ծրագրի»: Գրի առնելիս նա առաջնորդվում էր նյութերի ամբողջականությունը պահպանելու սկզբունքով:

«Ազգագրական հանդես»-ի հիմնումը (1896-1916) և նրա պատմական նշանակությունը հայ ազգագրական գիտության զարգացման ու տարածման գործում: Ե. Լալայանը Շուշիում հիմնում է հայ իրականության մեջ առաջին, ցարդ նմանը չունեցող ազգագրական մասնագիտական պարբերական՝ «Ազ-

---

[1] Ծնվել է 1864 թ. մարտի 13-ին Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1885 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և իբրև ուսուցիչ հինգ տարի աշխատել Ախալցխայում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում: 1894 թ. ավարտելով Ժնևի համալսարանի հասարակագիտական բաժինը, ստացել է սոցիալական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Վեց ամիս աշխատել է Վիեննայի Մխիթարյանների հետ, ավարտել է նաև Լոզան քաղաքի համալսարանի մանկավարժության դասընթացը: 1895-1897 թթ. դասավանդել է Շուշիի թեմական դպրոցում:

գագրական հանդես» վերտառությամբ (այսուհետ՝ ԱՀ), որը նշանակալից երևույթ էր հայ ժողովրդագիտության բնագավառում: Անդրանիկ համարը լույս տեսավ Շուշիում 1895/96 թթ., 2-րդ համարից՝ Թիֆլիսում: Նրա խմբագրությամբ ու ղեկավարությամբ լույս ընծայվեց 26 հատոր մինչև 1916 թվականը: Հանդեսի առջև դրված էր խնդիր՝ նպաստելու, որ ամեն մի հայ ճանաչի իր ազգի մշակութային ժառանգությունը, իր երկիրը, իրեն շրջապատող ժողովուրդներին: «Մեր կոչումն այժմ միայն,- գրում է բանահավաքը,- նյութեր հավաքելն է, որովհետև դրանց պակասության պատճառով՝ գիտական ուսումնասիրություններն անհնարին էր: Մենք կկրենք քարերը և երանի նրան, ով կգա այդ քարերով ազգային ինքնուրույնության շենքը կառուցանելու և համամարդկային էվոլյուսիոնի օրենքները գծելու»: Նա կոչ էր անում հայ մտավորականությանը համախմբվելու իր հանդեսի շուրջը:

Ե. Լալայանի գիտական ու համառ կազմակերպչական ջանքերի և քարոզչական աշխատանքների շնորհիվ հանդեսի շուրջը համախմբված ականավոր մտավորականների կողմից բանահավաքչական լայն գործունեություն ծավալվեց: 1896-1900 թթ. Ե. Լալայանի և իր համակիրների ջանքերով գրի են առնվել ու հրատարակվել Ջավախքի (1889), Վարանդայի (Արցախ, 1897), Սիսիանի (1898), Սանահինի (1898), Լոռվա (1898), Զանգեզուրի (1898), Համշենի հայերի (1898), հայ բոշաների (1898), Բուլանըխ-Հարքի (1899), Ալաշկերտի (1899), Գանձակի (1899) ազգագրությունն ու բանահյուսությունը: Հանդեսին նյութեր են առաքել շուրջ 50 բանահավաքներ, օրինակ՝ Բենսեն՝ Հարք գավառի, Հովհ. Մալխասյանը՝ Ջավախքի («Հայ գեղջուկի ալբոմը»), Հովհ. Մուրադյանը՝ համշենահայերի, Վ. Փափազյանը՝ հայ բոշաների կենցաղի, Գ. քահանա Նժդեհյանը՝

Ալաշկերտի բանահյուսության, Ե. Շահազիզը՝ Նոր Նախիջևանի հայոց, Քաջբերունին՝ Շարուր Դարալագյազի, Շիրակի, Կարսի, Բասենի և այլնի վերաբերյալ: Արցախի տնտեսական կենցաղը նկարագրել է Ղ. Տեր-Ղազարյանը (ԱՀ, Բ, էջ 77-101), հայ ժողովրդական արհեստագործության վերաբերյալ նյութեր և ուսումնասիրություններ է հրատարակել Մ. Թառայանցը (ԱՀ, Գ, էջ 3-71), Կովկասի ժողովուրդների, այդ թվում՝ հայերի կաթնամթերքների վերաբերյալ՝ Ա. Քալանթարը (ԱՀ, Դ, էջ 276-292) և այլն: Բացի զուտ բանահավաքչական աշխատանքներից, տպագրվում էին ժամանակի նշանավոր մտավորականների ուսումնասիրությունները: ԱՀ-ում լույս են տեսել Խ. Սամուելյանի բազմաթիվ ուսումնասիրությունները: ԱՀ-ի VI հատորով փակվում է XIX դարը:

Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը (1900 թ. հոկտեմբեր) և Հայոց ազգագրական ընկերությունը (1906): Նպատակներն էին՝ դյուրացնել «ԱՀ»-ի հրատարակությունը և նպաստել Ե. Լալայանի գործունեությանը, տպագրել գրքեր, քարտեզներ, բացել տպարաններ, գրավաճառանոցներ և այլն, աշխուժացնել աշխատանքները լուսավորչական, հասարակական, մարդաբանական, ազգագրական գործունեության ասպարեզներում, ուսումնասիրել Կովկասը և հարակից երկրները, հայկական գաղթօջախները, կատարել պեղումներ, ընդլայնել Թիֆլիսի և Էջմիածնի թանգարանների ազգագրական բաժինները, բացել թանգարան, գրադարան, կազմակերպել դասախոսություններ:

Ե. Լալայանը որպես տարածաշրջանային, տարածքային ազգագրական ուսումնասիրության մեթոդի հիմնադիր: Նրա դերը մասնագիտական հարցարանների ստեղծման և հավաքած նյութերը «ԱՀ»-ում հրատարակելու գործում: 1901-1916 թթ.

Ե. Լալայանի և նրա շուրջը հավաքված հայ նշանավոր մյուս մտավորականների գործունեության շնորհիվ կորստից փրկվում և գիտական շրջանառության մեջ են դրվում պատմական Հայաստանի մեծ մասի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ: Ե. Լալայանը 1904-1916 թթ. ԱՀ-ում հրապարակում է՝ Շարուր Դարալագյազի գավառ, Ա մասն՝ Վայոց ձոր, Սևան, Բորչալուի (Լոռի) գավառ, Նախիջևանի գավառ. Ա մասն՝ Գողթն, Զանգեզուրի գավառ (Ղափան), Ծիսական կարգերը հայոց մեջ, մեծ զրկանքների գնով նաև՝ Վասպուրական, Մուշ-Տարոն աշխատությունները:

Բացառիկ է Ե. Լալայանի գլխավորությամբ 1915 թ. սեպտեմբերին՝ Առաջին աշխարհամարտի ծանր օրերին, արևմտահայ գաղթականության մեջ կազմակերպված արշավախումբը, որը հաղթահարելով բազմաթիվ նյութական և այլ կարգի դժվարություններ՝ կարողացավ անդարձ կորստից փրկել հսկայական թվով ազգագրական և բանահյուսական նյութեր՝ հատկապես Վասպուրականի, Մուշ-Տարոնի, Մոկսի պատմաազգագրական շրջանների վերաբերյալ: Գիտական այս արշավի աշխատանքը տևում է չորս ամիս. հավաքվում է 874 հեքիաթ և բազմաթիվ երգեր, զուգահեռաբար Լալայանը գրի է առնում Մշո հայերի ազգագրությունը, որը և տպագրվում է հանդեսի վերջին XXVI հատորում: Հանդեսը 1916-1917 թթ. դադարում է հրատարակվել, թեև այդ ծանր օրերին էլ գիտնականը դադար չէր առնում:

Երվանդ Լալայանը ծավալեց նաև թարգմանչական ծավալուն գործունեություն՝ հայերենացնելով Եվրոպայի ժամանակակից ազգագրության բազում գոհարներ[1]:

---

[1] **Ռ. Վիրխով,** Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ (ԱՀ, Ա, էջ 50-116), **պրոֆ. Պետրի,** Մարդաբանության պատմական զարգացումը (ԱՀ,

Արևելյան Հայաստանում ապրող էթնիկ փոքրամասնությունների ազգագրական ուսումնասիրությունները նույնպես տեղ գտան Երվանդ Լալայանի աշխատություններում: Ծանրակշիռ է նաև մեծ գիտնականի բանահյուսական ժառանգությունը:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ին հրատարակել է նրա երկերի հինգհատորյակը:

Ահա թե ի՞նչ է գրում ժամանակակիցներից մեկը. «Հիրավի, Ե. Լալայանը ծավալեց մի այնպիսի էքսպանսիվ աշխատանք, գլուխ է բերել այնպիսի հսկա գործ, որի նմանը թե՛ արտասահմանի, թե՛ Ռուսաստանի գիտական հետազոտական ասպարեզներում կատարել են հատուկ ընկերություններ, ինստիտուտներ՝ կազմակերպված հավաքական ուժերով, կոլեկտիվ խմբական էքսպեդիցիաներով» (**Խ. Սամուելյան,** Մահախոսական):

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 24-27:
2. **Ե. Լալայան,** Երկեր, հ. 1, Երևան, 1983, հ. 2, 1988, հ. 3, 2004, հ. 4, 2021, հ. 5, 2024:
3. **Նահապետյան Ռ.,** Ե. Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 192-214, **նույնի՝** Ե. Լալայանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող // նույն տեղում, էջ 214-235:

Ա, հավելված, էջ 3-52), **Շ. Լետուրնո,** Ամուսնության զարգացումն (ԱՀ, Ա, հավելված էջ 53-120), **Ա. Պոզադա,** Նորագույն տեղեկություններ գերդաստանի, հասարակության և պետության ծագման մասին (ԱՀ, Գ, հավելված, էջ 3-50, ԱՀ, գ. IV, հավելված, էջ 3-26, գ. V, հավելված, էջ 3-24), **Ֆ. Ռատցել,** Տարերք ազգագրության (ԱՀ, գ. IV, հավելված, էջ 59-96, ԱՀ, գ. V, հավելված, էջ 25-40, գ. VI, հավելված, էջ 3-40):

4. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, էջ 112-150:

ԹԵՄԱ 7
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920-1980-ԱԿԱՆ ԹԹ.)

7.1. Ազգագրական գիտությունը խորհրդային շրջանում (1920-1940 թթ.)

Երվանդ Լալայանի, Ստեփան Լիսիցյանի, Խաչիկ Սամուելյանի և այլոց ազգագրական գործունեությունը 1920-1940 թթ.: Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջափուլ թևակոխեց իբրև պատմամշակութային լիովին կազմավորված ուրույն բնագավառ, երբ տակավին գործում էին դեռևս նախահեղափոխական շրջանից հայտնի բազմավաստակ ազգագրագետներ և բանագետներ Ե. Լալայանը, Խ. Սամուելյանը, Ստ. Լիսիցյանը և ուրիշներ:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով պետությունն իր ձեռքում կենտրոնացրեց կրթական, մշակութային, գիտական գործունեության կազմակերպումը: Նյութական հնարավորություններ ու հեռանկարներ բացվեցին ինչպես գիտահետազոտական, այնպես էլ դաշտային բանահավաքչական աշխատանքների ծավալման համար, թեև հասարակական գիտությունների ուսումնասիրությունը քաղաքականացվում էր: Գլխավոր խնդիր էր դառնում պետական իշխանության ու կոմկուսի վարած քաղաքականության քարոզչությունը, սոցիալիստական վերափոխումները ներկայացնելը, և նման պայմաններում անկաշկանդ զարգացումը ըստ էության դարձել էր անհնար: Նոր պայմաններում ազգագրագետ կադրերի խիստ պակաս կար, բացակայում էր ազգագրագետ կադրեր պատրաստելու հնարավորությունները: Այդուհանդերձ, ձեռքբերումները ակնառու էին:

1920-ական թթ. **Ե. Լալայանը** ազգագրորեն, տեղագրորեն և հնագիտորեն հետազոտել է Կոտայքի շրջանը: Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի միջոցներով նախ՝ 1926 թ., ապա 1928 թ. գործուղվում է Կոտայքի շրջան: Նրա ուսումնասիրությունների մեջ են ներառվում նաև Երևանը, շրջակա գյուղերը: Գիտարշավի խումբը գրի առավ 400 հին ու նոր ժողովրդական խաղիկներ, հինգ տասնյակ հեքիաթներ, զրույցներ ու առակներ: Երվանդ Լալայանի գործերից 1920-ական թթ. վերջերին հրատարակվեցին «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից», «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ», «Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում» հոդվածները, «Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում» մենագրությունը (տե՛ս գրականության ցանկում):

Ե. Լալայանի թանգարանաստեղծ գործունեությունը Հայաստանում հիրավի անգնահատելի է: 1921 թ. օգոստոսի 20-ին իր դռները բացեց «Գեղարվեստական թանգարան» անվանումով ներկայիս Հայաստանի պատմության թանգարանը, որտեղ նույն թվականի ձմռանը Ե. Լալայանի ջանքերով Թիֆլիսից տեղափոխվեցին իր ստեղծած թանգարանի նյութերը և շուրջ 20 հազար կտոր մասնագիտական գրականություն, լուսժողկոմատի հանձնարարությամբ Ե. Լալայանը կազմակերպում է թանգարանի հնագիտական և ազգագրական բաժինները, որոնց առաջին վարիչը ինքն է նշանակվում, որպիսի ծառայության մեջ մնում է մինչև 1928 թվականը:

1922 թ. Երևան են տեղափոխվում Մոսկվայի Լազարյան ճեմարանի թանգարանի նյութերը, Նոր Նախիջևանի հայկական համայնքի ազգագրական հավաքածուները: Այս բոլորը փոխում են Գեղարվեստական թանգարանի պատկերը, ուստի

նույն թվականի վերջերին այն վերանվանվում է Պետական կենտրոնական թանգարան: Ե. Լալայանը ժամանակավորապես դառնում է թանգարանի տնօրեն: Նա 1926 թ. այստեղ է տեղափոխում Սանահինում պահվող «Անվո հնադարանը», որը փրկվել էր թուրքական վայրագություններից, իսկ 1929 թ. տեղափոխում է XIX դ. վերջերին Մ. Խրիմյանի ձեռքով կազմված Էջմիածնի վանքի ազգագրական թանգարանը: 1930 թ. հավաքված նոր նյութերը հնարավորություն են ընձեռում ստեղծելու նաև ճարտարապետության բաժին, որի առաջին վարիչը դառնում է Թ. Թորամանյանը: Բոլորվում է Պետական կենտրոնական թանգարանի կազմավորման առաջին շրջանը: Այն վերանվանվում է «Կուլտուրապատմական թանգարան»:

1935 թ. թանգարանը բաժանվում է երեք ինքնուրույն թանգարանների՝ 1) ներկայիս Պատմության թանգարանը, որը ստեղծվում է հնագիտության, ազգագրության և ճարտարապետության բաժինների հիման վրա, 2) Գրական թանգարանը (այժմ՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան), 3) Կերպարվեստի թանգարանը (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ):

1928-1946 թթ. թանգարանի ազգագրության բաժնի վարիչը Ստ. Լիսիցյանն էր, որի անունով էլ այժմ կոչվում է ազգագրության բաժինը: Ե. Լալայանի և Ստ. Լիսիցյանի օրոք թանգարանը այն օջախն էր, որտեղ էլ ծավալվում էին գիտահետազոտական աշխատանքները:

Խորհրդային կարգերի օրոք նշանակալից գիտական աշխատանք ծավալեց հայ ազգագրության նշանավոր տեսաբան **Խ. Սամուելյանը** *(1873-1940):* Հին հայկական սովորութային իրավունքի, տոհմական կառույցների, ամուսնության ձևերի, օժիտի, գլխագնի, քավորի, ժողովրդական հավատալիքների

ուսումնասիրությունները Խ. Սամուելյանի աշխատություններ-ի հիմնական թեմատիկան էր: Ի մի բերելով նախահեղափոխական շրջանում գրած աշխատությունները՝ մարքիստական նոր մեկնաբանությամբ քննության առարկա դարձրեց վերոնշյալ նյութերը: Խաչիկ Սամուելյանի հանրագումարային «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատոր աշխատությունը, «Հայ ընտանեկան պաշտամունքը» և այլն մինչև օրս չեն կորցրել իրենց գիտական արժեքը: «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության մեջ առաջին փորձն է կատարվում ներկայացնելու Հայաստանի նյութական, հոգևոր և սոցիալական մշակույթի զարգացման փուլերը՝ սկսած նախնադարյան համայնական կարգերից մինչև XX դարը: Նա առաջինը կիրառեց պատմահամեմատական, դաշտային ազգագրական հարցարաններ-ի մեթոդները: Խ. Սամուելյանը տեսաբան ազգագրագետ էր, լավատեղյակ եվրոպական և ռուսական առաջավոր գիտությանը:

Մեծ էր նաև նրա դերը հայ իրավագիտության պատմության ուսումնասիրության բնագավառում: Առաջինն էր, որ քննարկման նյութ դարձրեց սովորութային իրավունքի նորմերը և փորձեց տալ իրավունքի սահմանը, նրա տեղն ու դերը: Նրա «Հին հայ իրավունքի պատմություն» (Երևան, 1939) աշխատությունը գրված է գլխավորապես ազգագրական նյութերի հիման վրա:

Խ. Սամուելյանի բանահյուսական ուսումնասիրություններից նշելի է «Աշխատանքը հայ ժողովրդական երգերում» և այլն: Խ. Սամուելյանը՝ որպես արխիվային գործի հմուտ կազմակերպիչ՝ 1924-1934 թթ. գլխավորում էր Հայաստանի պետական կենտրոնական արխիվը:

Մեծ է **Ստեփան Լիսիցյանի** (1865-1947) ներդրումը հայ

ազգագրական գիտության կազմակերպման և զարգացման գործում:

1924 թ. Հայաստանի կառավարության հրավերով Թիֆլիսից տեղափոխվել է Երևան, որտեղ սկսվել է Ստ. Լիսիցյանի գործունեության մի նոր, բեղմնավոր ժամանակաշրջան: Այդ ասպարեզում նրա մեջ զուգակցվել են անխոնջ հետազոտողը և գիտության հմուտ կազմակերպիչը:

Հայ ազգագրական գիտության բնագավառում Ստ. Լիսիցյանի ծավալած գործունեության երեք հիմնական ուղղություններն են. ա) թանգարանի ֆոնդերի հարստացումը և դաշտային ազգագրական նյութերի հավաքչական աշխատանքների խրախուսումը, բ) գիտահետազոտական՝ գործունեության աշխուժացումը, գ) գիտակազմակերպչական՝ ազգագրագետ կադրերի պատրաստման ջանքերը և այլն: Նրա գործունեության ժամանակաշրջանը 1920-40-ական թթ. կեսերն էին: Ստ. Լիսիցյանի ազգագրական գործունեությունը սկսվում է Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտում աշխատելու տարիներից:

1928 թ. Ստ. Լիսիցյանը նշանակվում է Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի վարիչ և գլխավորում է այն մինչև կյանքի վերջը (1947 թ.): Նա գիտակազմակերպչական վիթխարի ջանքեր գործադրեց: Գրի առավ ոչ միայն վիթխարի ազգագրական նյութ, այլև թանգարանի համար հայթաթեց 1000 ցուցանմուշ, այդ թվում՝ հազվագյուտ համալիրներ:

Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի կազմակերպած (1924-1930-ական թթ.) արշավախմբի (Ստեփան Լիսիցյանի գլխավորությամբ)՝ Արցախում, Սյունիքում, Ջավախքում, Ախալցխայում, Արցախում, Լոռիում, Շիրակում,

Սևանի ավազանում կատարած ուսումնասիրությունների ծանրակշիռ արդյունքն էին այնպիսի հիմնարար աշխատությունները, ինչպիսիք են՝ «Ազգագրական հարցարան» (1946), «Զանգեզուրի հայերը» (հետմահու՝ 1969), «Լեռնային Ղարաբաղի հայերը» (հետմահու՝ ՀԱԲ, հ. 12, 1981), «Очерки этнографии дореволюционной Армении» (КЭС, М., 1955) և այլն: «Народы мира» շարքից «Народы Кавказа» т. II, Армяне բաժինը (М., 1962) հիմնականում գրված է նրա նյութերի հիման վրա:

Ստ. Լիսիցյանի ազգագրական ուսումնասիրությունները հայ ժողովրդական մշակույթի հետազոտման բնագավառում անգնահատելի են: 1920-ական թթ. կեսերին Կովկասի պատմահնագիտական ինստիտուտի «Լրաբեր»-ում նրա հրատարակած ռուսերեն՝ «Բարձր Հայքի գյուղական շենքերը», «Մեղրու գյուղական շենքերը», «Նոր Բայազետի հազարաշենք և դիտողություններ հարևան Փամբակի ու Դարալագյազի գյուղական շենքերի մասին» ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում էին հայկական գյուղական բնակարանի առանձնահատուկ կողմերին, ապացուցում էին հայ ճարտարապետության տեղաբնիկ բնույթը: Նա ապացուցեց, որ հայկական միջնադարյան եկեղեցական, վանական համալիրների հորինվածքային յուրահատկությունների ակունքները բխել են հայ ժողովրդական բնակարանաշինության դարավոր ավանդներից: 1927 թ. լույս են տեսնում գիտնականի «Շատախի պատմաազգագրական ուրվագիծ» և «Սրբավայրերը լեռնանցքներում», 1936 թ.՝ «Հայ ազգագրությունը 15 տարիների ընթացքում» («ՀՍ» ամսագրում) ռուսերեն ուշագրավ հոդվածները:

Վերջապես, Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանը» կարևոր դեր խաղաց հայ ազգագրական գիտության զարգացման, բանահավաք կադրեր հավաքագրելու գործում: Նա

նախապատրաստեց ազգագրագետ կադրերի նոր սերունդ՝ Վ. Բդոյան, Կ. Մելիք-Փաշայան, Դ. Վարդումյան, Է. Կարապետյան, Ա. Օդաբաշյան, որոնք էլ դարձան 1959 թ. ՀԽՍՀ ԳԱ համակարգում հիմնված ՀԱԻ ազգագրագետ կադրերի հիմնական կորիզը:

Արժեքավոր են նաև խորհրդային մի շարք այլ հայագետների՝ Գր. Ղափանցյանի, Մ. Աբեղյանի, Հ. Օրբելու և այլոց ազգագրական և բանահյուսական հետազոտությունները:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 27-29:
2. **Բդոյան Վ.,** Սովետահայ ազգագրության հիսնամյակը // «Հայագիտությունը 50 տարում», Եր., 1971:
3. **Լալայան Ե.,** Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931:
4. **Լալայան Ե.,** Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից // «Տեղեկագիր» ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1927, № 2, էջ 220-225:
5. **Լալայան Ե.,** Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը // նույն տեղում, 1928, № 3:
6. **Լալայան Ե.,** Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ // նույն տեղում, 1930-1931, № 4-5:
7. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Եր., 1946:
8. **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Եր., 1969:
9. **Լիսիցյան Ստ.,** Լեռնային Ղարաբաղի հայերը // ՀԱԲ, 1981, պր. 12:
10. **Ղաֆադարյան Կ.,** Հայաստանի առաջին թանգարանը // «Լրաբեր հաս. գիտ.», 1972, № 10:
11. **Մելիք-Փաշայան Կ.,** Ե. Լալայան, Երկեր, հ. 1, Եր., 1983:
12. **Մելիք-Փաշայան Կ.,** Խաչիկ Սամուելյան (Ծննդյան 100-ամյակի առթիվ) // ՊԲՀ, 1974, № 1:
13. **Մելիք-Փաշայան Կ.,** Ստ. Լիսիցյան // ՊԲՀ, 1965, № 4:
14. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրական գիտությունը խորհր-

դային շրջանում (1920-1940-ական թթ.) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, 2019, էջ 236-275:

15. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2023:

16. **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Եր., 1931, հ. 2, 1941, հ.3, 1941:

17. **Վարդումյան Դ.,** Ազգագրությունը Սովետական Հայաստանում 50 տարում // ՊԲՀ, 1970, № 4:

18. **Варданян Л. М.,** Ст. Лисициан и истоки армянской этнографии, Ер., 2005.

7.2. Ազգագրական գիտության զարգացման միտումները (1950-1980-ական թթ.)

1953 թ. ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում կազմակերպվեց ազգագրության խումբ՝ Է. Կարապետյանի, Դ. Վարդումյանի, Ա. Ավդալի, Վ. Թեմուրճյանի, Ա. Օդաբաշյանի մասնակցությամբ: Պատմության ինստիտուտի, Պատմության թանգարանի հնագետ ու ազգագրագետ կադրերի, նաև ՀՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի ինստիտուտների բանահյուսության ու պարարվեստի մասնագետների համախմբմամբ 1959 թ. հիմնվեց ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը, հիմնադիր տնօրեն՝ Բաբկեն Առաքելյան (1912-2004 թթ.): Ազգագրության բաժնի (վարիչ՝ Դ. Վարդումյան (1923-2005 թթ.)) ստեղծումը նշանակալից դեր խաղաց հայ ազգագրական գիտության զարգացման գործում: Մեծ է եղել ինստիտուտի դերը կադրերի հավաքագրման ու պատրաստման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, հանրապետության և արտերկրի հարակից շրջաններում

գիտարշավների կազմակերպման, ազգագրական ու բանագիտական նյութերի հավաքման գործում:

Ինստիտուտի կարևոր ձեռքբերումներից մեկը «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի ստեղծումն է 1970 թ., որի նպատակը ինստիտուտի գիտնականների գիտական նվաճումները ամփոփելն էր՝ վերականգնելով «Ազգագրական հանդես»-ի ընդհատված ավանդույթները:

Պատմաշրջանի կարևոր նվաճումներից մեկն էլ Հայ ազգագրության պետական թանգարանի (Սարդարապատ) հիմնումն է 1978 թ.: Բացառիկ է նրա դերը ազգագրական ու հնագիտական նյութերի ու իրերի հավաքման ու ցուցադրման գործում:

Հաջորդը ԵՊՀ Ազգագրության ամբիոնի բացումն էր 1989 թ., որի կարևոր խնդիրներից է մասնագետ-ազգագրագետների պատրաստումը:

Այս պատմաշրջանի ազգագրագետ երախտավորներից են՝ Վ. Բդոյանը (1910-1986), Կ. Մելիք-Փաշայանը (1919-1981), Է. Կարապետյանը (1920-1997), Ա. Օդաբաշյանը (1924-1998), Ս. Դավթյանը (1893-1978), Վ. Աբրահամյանը (1908-1986), Դ. Վարդումյանը (1923-2005), Ն. Ավագյանը (1923-2005), Կ. Սեղբոսյանը (1928-2009), Լ. Պետրոսյանը (1929-2010), Յու. Մկրտումյանը (1940-2005) և ուրիշներ:

Այս շրջափուլում հայ ժողովրդի ազգագրական հետազոտությունը համապարփակ բնույթ է ստանում թե՛ դաշտային ազգագրական նյութեր և թանգարանային ցուցանմուշներ հավաքելու և թե՛ թեմատիկ ուսումնասիրություններ կատարելու առումներով: Ի տարբերություն նախախորհրդային շրջանի, երբ վերապրուկային ազգագրական նյութեր էին հավաքվում՝ հիմնականում նախնադարյան տոհմային կարգերի բնույթը

պարզաբանելու համար, խորհրդային ազգագրության խնդիրն է դառնում այդ նյութերի հիման վրա ժողովուրդների մշակույթի և կենցաղի արդի վիճակը ուսումնասիրելը և նոր պայմաններում կատարված փոփոխություններն ու հեռանկարները բացահայտելը:

Հայ ազգագրությունը XX դ. երկրորդ հիսնամյակում ուսումնասիրվում է գլխավորապես ըստ թեմաների: Պատմության թանգարանի և ՀՍՍՀ ԳԱ գիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական բաժինները կատարել են մի շարք ուսումնասիրություններ:

Ուշագրավ են Դ. Վարդումյանի (ՀԱԻ ազգագրության բաժնի վարիչ), Է. Կարապետյանի (ՀԱԻ էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ), Յու. Մկրտումյանի (ԵՊՀ Ազգագրության ամբիոնի վարիչ), Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի վարիչ Ն. Ավագյանի, Լ. Բարսեղյանի (ՀԱԹ-ի տնօրեն), ՌԴ ԳԱ Ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի Կովկասի բաժնի վարիչ, ՌԴ ԳԱ թղթ. անդամ Սերգեյ Հարությունովի, պ.գ.դ. Ալլա Տեր-Սարգսյանի դաշտային ազգագրական հետազոտությունները, թանգարանային ցուցանմուշների հավաքման, թեմատիկ և պատմաազգագրական մարզերի համալիր ուսումնասիրությունների գործընթացները: 1980-ական թվականներից ցայժմ առանձնահատուկ են ԵՊՀ պատմության ֆակուլտետում ազգագրագետ կադրերի պատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքները: Այս հատվածում նշելի են ամենամյա գիտարշավների կազմակերպումը, ազգագրական համատարած հետազոտությունները Խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր պատմաազգագրական շրջաններում, այդ թվում նաև՝ Արցախում ու Ուտիքում, Ջավախքում, Ռուսաստանի հարավային հայաշատ երկրամասերում: Հրատա-

բակված աշխատություններից են. Դ. Վարդումյանի «Լոռեցիների նոր կենցաղը», «Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը (համահեղինակ՝ Է. Կարապետյան), Է. Կարապետյանի «Օժիտը հայոց մեջ», «Армянская семейная община», «Родственная группа «азг» у армян», Վ. Բդոյանի «Երկրագործական մշակույթը Հայաստանում», «Հայ ժողովրդական խաղեր» երեք հատորներով, «Հայկական աղամաններ», «Ջավախքի հայոց ազգագրությունը և բանարվեստը» (վերջինս 1964-1972 թթ. գիտական գործունեությունը համատեղել է նաև դասախոսական աշխատանքի հետ՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետում դասավանդելով «Հայ ազգագրություն» և «Ազգագրության հետազոտման մեթոդներ» առարկաները), Կ. Մելիք-Փաշայանի «Անահիտ դիցուհու պաշտամունքը», Ա. Օդաբաշյանի «Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում», Լ. Պետրոսյանի «Հայ ժողովրդական փոխադրամիջոցները», Ն. Ավագյանի «Հայ ժողովրդական տարազը», Կ. Սեղբոսյանի «Արհեստագործական ավանդները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում», Յու. Մկրտումյանի Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX-начало XX в.) և այլն[1]:

1990-2020-ական թթ. ազգագրական գիտակազմակերպչական և գիտահետազոտական գործունեությունը ներկայացված է սույն գրքի հեղինակի՝ 2023 թ. լույս ընծայած «Հայ ազգագրության պատմություն» ուսումնական ձեռնարկում:

1990-2020-ական թթ. ազգագրագետների սերնդի ներկայացուցիչներից են՝ Յուրի Մկրտումյան, Լիլյա Վարդանյան, Ռաֆիկ Վարդանյան, Էմմա Պետրոսյան, Ռաֆիկ Նահապետյան, Լևոն

[1] Մանրամասն տե՛ս **Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, ԵՊՀ հրատ., 2019, էջ 235-360:

Աբրահամյան, Համլետ Սարգսյան, Անուշավան Պետրոսյան, Զավեն Խառատյան, Հրանուշ Խառատյան, Սուրեն Հոբոսյան, Սվետլաննա Պողոսյան, Արմենուհի Ստեփանյան, Հարություն Մարության, Արթուր Մկրտչյան, Սամվել Մկրտչյան, Աշխունջ Պողոսյան, Աստղիկ Իսրայելյան, Կարինե Բազեյան, Հասմիկ Հարությունյան, Միհրան Գալստյան, Մխիթար Գաբրիելյան, Աղասի Թադևոսյան, Գայանե Շագոյան, Հռիփսիմե Պիկիչյան և այլք: Նշված ազգագրագետների գործունեությունը հակիրճ ներկայացված է «Հայ ազգագրության պատմություն» ուսումնական ձեռնարկում:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԹԵՄԱ 1
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1.1. Հայկական լեռնաշխարհը որպես երկրագործական մշակույթի հնագույն կենտրոն

Խորհրդային և հետխորհրդային տարիներին տնտեսության բազմաթիվ ճյուղեր սակավ արդյունավետության և նահապետական՝ իր դարն ապրած արտադրաեղանակների ու արտադրամիջոցների անհամատեղելիության պատճառով դուրս մղվեցին կիրառությունից: Ժամանակակից երկրագործությունը հագեցավ նորագույն տեխնիկայով, որով դյուրացավ մարդու աշխատանքը և աճեց նյութական բարիքների արտադրությունը: Ֆաբրիկագործարանային արտադրությունը լիովին փոխարինեց տնայնագործությանը: Տնտեսական արտադրական մշակույթի համալիրի մեջ, հնագույն ժամանակներից սկսած, մտել են մարդկանց համար կենսական բարիքներ արտադրող երկրագործությունը՝ իր դաշտամշակությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, բոստանամշակությամբ, անասնաբուծությունը՝ իր ենթաճյուղերով, տնայնագործությունը և արհեստագործությունը՝ իրենց բազմաթիվ տեսակներով, որսորդությունն ու ձկնորսությունը՝ իրենց օժանդակ տնտեսություններով, հաղորդակցության ու կապի միջոցները՝ իրենց բազմազան ձևերով:

Հարցեր և առաջադրանքներ:

Երկրագործության ուսումնասիրության հիմնահարցը հայ ազգագրության մեջ (Վ. Բդոյան, Ս. Երեմյան, Է. Խանզադյան,

Ե. Բայբուրդյան, Հ. Մալխասյան, Ս. Հոբոսյան և ուրիշներ. տե՛ս գրականության ցանկում)

Հնագիտության և հնաբուսաբանության տվյալները և գրավոր աղբյուրների՝ սեպագիր արձանագրությունների, անտիկ գրականության, միջնադարյան հայ պատմագրության, օտար ճանապարհորդների ուղեգրությունների, բանահյուսական ու գեղարվեստական և ազգագրական մասնագիտական գրականության համաձայն Հայկական լեռնաշխարհը՝ հացահատիկային մշակաբույսերի, բանջարաբուծության, բոստանային մշակաբույսերի մշակության, այգեգործության, խաղողագործության, գինեգործության հնագույն կենտրոններից մեկը լինելու մասին: Հնագիտական նոր նյութերի, Արենի հնավայրի գտածոնների միջազգային նշանակությունը:

Դաշտամշակություն, գրաված տեղը տնտեսության մեջ, ճյուղերը: Զարգացման ընթացքը:

Հայկական լեռնաշխարհը եղել է երկրագործական մշակույթի հնագույն հայրենիք: Մի շարք նշանավոր գիտնականներ պնդում են, որ ցորենի մշակման բուն հայրենիքը եղել է Հայաստանը՝ դեռևս նեոլիթյան պատմաշրջանում Ք.ա. IX-VI հազարամյակներում. այն եղել է բրիչային երկրագործության ծաղկման շրջան: Հայաստանը եղել է մշակովի ցորենի և գարու տարբեր տեսակների նախահայրենիքը. գիտնականները այն հասցնում են ուշ կամ վերին հին քարե դար: Ճանաչված գիտնական Կոմարովը նշում է, որ աշխարհի ոչ մի երկրում ցորենի այնքան տարատեսակ չի հայտնաբերվել, որքան Հայաստանում: Ըստ ակադ. Վավիլովի՝ Հայաստանը ցորենի և գարու մշակության համաշխարհային հնագույն կենտրոններից է: Ք.ա. V-IV հազ. առաջին կեսին պղնձի և քարի դարի և վաղ բրոնզի՝ Ք.ա. 3500-2400/2300 դարաշրջանի մշակութային

բնակատեղիներում՝ Շենգավիթ (Երևան), Թեղուտ, Ակնաշեն (Էջմիածնի մոտ), Առատաշեն (Արմավիր մարզ), Աղստևի հովիտ (Տավուշ), Ազոխ (Արցախ) հայտնաբերվել են ցորենի, գարու, կորեկի շտեմարաններ, հազարավոր երկրագործական գործիքներ (այս մասին հանգամանորեն տրված են Վ. Բդոյանի՝ «Երկրագործական մշակույթը Հայաստանում» (Երևան, 1972) և Ռ. Նահապետյանի՝ «Գյուղական մշակույթի հիմնական համալիրները հայոց մեջ (Երևան, 2022) ուսումնական ձեռնարկներում:

Բրիչային երկրագործությունը արորային երկրագործության նախափուլն է: Բրիչային կամ մարկեղային երկրագործության արտադրամիջոցներն են փայտե և մետաղե բրիչները, դանակները, որոնք անցել են զարգացման երկարատև ուղի: Բրիչածայրերի քարե, ապա մետաղե օրինակները ունեցել են նաև զենք–բրիչ և բրիչ-զենք դերեր: Փայտե գավազանաձև գործիքները հետագա բոլոր բրիչների նախատեսակներ են: Եղանի, հողուրագի և բահի առաջացումը մեծ առաջընթաց են համարվել: Ձեռքի ու ոտքի ճնշմամբ և ձեռնահարվածով գործող բրիչների առաջացումը, այդ թվում՝ հարվածային գործիքները՝ մուրճ, կացին, քլունգ, հողուրագ, հեղաշրջում մտցրին երկրագործության մեջ: Տղամարդու մասնակցությունը և դերը երկրագործական աշխատանքներում մեծապես նպաստել է երկրագործության առաջընթացին:

Նյութերի վերամշակման և ամբարման նախնական պարագաներն էին՝ տաշտակները, աղորիքները, թակերը, մորթե փռոցները և այլն (Տախտակ 1): Բրիչային, նախնական երկրագործության հիմնական աշխատավորը կինն էր:

Դաշտամշակության ավանդական համակարգերը (եռադաշտ, բազմադաշտ), սերմնափոխության (ցանքաշրջանառու-

թյան) եղանակները, դաշտային աշխատանքները սկսելու և ավարտելու ժամկետները, երկրագործական աշխատանքներին մասնակցության կարգը գիտական ուսումնասիրության նյութ են եղել: Հնագիտական, մատենագրական, ազգագրական հարուստ նյութերը ակներևաբար ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհը եղել է ոչ միայն մարդկային հասարակության, այլև հնագույն քաղաքակրթությունների, վաղ երկրագործության առաջացման հնագույն կենտրոններից մեկը:

Վաղ բրոնզեդարյան ամենատարբեր հուշարձաններում հայտնաբերվել են աշխարհի ամենաընտիր ցորենի տեսակը՝ կլոր հատիկ, փափուկ և մերկահատիկ ու թեփուկավոր գարին: Կարևոր նվաճումներից էր քարե խոփերով, երբեմն նաև սեպաձև (Էջմիածնի Շրեշ բլուր) ու պարզունակ արորով և լծկան անասուններով վար անելը: Գեղամա և Սյունյաց լեռներում հայտնաբերված ժայռապատկերներում պարզ երևում է, որ արորը Հայաստանում ամենավաղն է գործածվել՝ դեռևս վաղ բրոնզի դարաշրջանում՝ Ք.ա. 3500-2400 թթ.: Հայտնաբերվել են նաև հնձի առաջին մետաղե մանգաղները, մթերքների վերամշակման գործիքներ՝ աղորիքներ, սանդեր և այլն, կալսող գործիք կամը (ամենահներից մեկը Լճաշենից հայտնաբերել է հնագետ Հ. Մնացականյանը), ժայռապատկերներում նկատելի է նաև բեռնափոխադրման գործիք սայլի՝ լծված եզներով, գործածությունը և այլն (Լճաշենից հայտնաբերված սայլի ամենահին օրինակներից մեկը ցուցադրվում է Հայաստանի պատմության թանգարանում):

1.2. Արորագութանային երկրագործությունը և հացահատիկային մշակաբույսերի մշակությունը Հայաստանում

Հարցեր և առաջադրանքներ:

Արորագութանային երկրագործության ծագումը, պատմական զարգացման առանձնահատկությունները, բնորոշ գծերը, հիմնական ձևերը, համակարգերը հայոց մեջ:

Արորը՝ որպես բրիչների համակցության արդյունք, դրա առաջացման պատմատնտեսական, աշխարհագրական՝ բնաէկոլոգիական գործոնները, տնտեսական շարժառիթները (նստակեցության և անասնապահության դերը) և դրանցով պայմանավորված բազմազանությունը: Բրիչային հողագործությունից արորայինի անցման տնտեսական շարժառիթները. նստակեցությունը որպես կարևոր պայմաններից մեկը:

Նստակեցություն ու անասնապահությունը կարևոր տնտեսական նշանակություն են ունեցել. լայնորեն կիրառվել է մարդու և անասունների ուժով հողը փորող, հերկող, հարթեցնող գործիք արորը, հիշատակվում է նաև բանահյուսության մեջ, այդ թվում՝ «Սասնա ծռեր» էպոսում, երկրագործական պաշտամունքում կարևոր տեղ է գրավել: Դրա տեղական անվանումներն էին՝ **արոր, հարոր, ճղլա, կըռ, վեսկի, տրի խարոր, չութ, գործեն, չորոց** և այլն: Արորը ուներ 4 հիմնական մաս. 1) **առատամ**, 2) **համաձող**, 3) **թուր**, 4) **մաճ**, որոշակի էին դրանց դերերը: Արորը հողը հերկելու, վարելու, կրկնավար կատարելու գյուղատնտեսական գործիք էր (Տախտակ 2):

Գութանը բազմագործառույթ, մետաղյա լայն խոփով հողը հերկելու երկրագործական գործիք էր, որի ձևիչը հողը կտրում էր ուղղաձիգ, իսկ խոփի միջոցով հողաշերտը կտրվում է հորիզոնական (Տախտակ 3, 4):

Վար ու ցանքի ավանդական համակարգը հայոց մեջ: *Արորի և գութանի առաջացման ժամանակը, դրանց կառուց-*

վածքը, գործառույթները, տարածքային խմբերը, դրանց տարբերակման տնտեսամշակութային, աշխարհագրական, բնաէկոլոգիական, պատմաքաղաքական, ազգային ավանդութային գործոնները: Արորագութանային համակարգի հարատևումը մինչև XX դարի կեսերը:

Քաշող ուժի տեսակները: Արորի տարածքային տեսակները:

Հայաստանում արորի և գութանի կառուցվածքի ընդհանրացում չի եղել՝ 1) ազգագրական շրջանների մեկուսացվածության, տնտեսական սերտ կապերի բացակայության, լանդշաֆտի բազմազանության, բնակլիմայական պայմանների բազմազանության և այլ պատճառներով: Հայաստանում արձանագրվել է վարող հին տեխնիկայի յոթ համալիր՝ Բարձր Հայքի, Այրարատի, Սյունիքի, Վասպուրականի, Ծոփքի, Աղձնիքի և Պոնտական Հայաստանի: Ամեն տեսակ հողեր հերկելու համար դրանց լծել են 4-12 զույգ եզ ու գոմեշ (Տախտակ 3):

Գութանների առավելությունը արորների համեմատ մեծ էր՝ 1) նորանոր խամ ու խոպան տարածություններ յուրացնելու, 2) կեղևակալած, քարքարոտ հողեր յուրացնելու, 3) հողը ավելի խորը (25-40 սմ) փորելու՝ խոնավությունը պահպանելու և բարձր բերքատվությունը ապահովելու առումներով: Այդուհանդերձ, արորը գործառությունից չհանվեց, քանզի լանջային տեղանքներում գութանը չէր գործածվում, իսկ հողն էլ մի քանի անգամ արորավարի կարիք ուներ: Դրանք գործածությունից հանվեցին XX դ. 50-60-ական թթ.:

Ցանքսի ձևերը: Շարացան և շաղացան համակարգեր, արդյունավետությունը: Շաղացանը՝ որպես ընդհանրացած ձև, իսկ շարացանը՝ որպես անջրդի հողերի վրա կիրառվող եղանակ: Շարացան համակարգի արդյունավետությունը: Շա-

բացան արորը կոչվում էր **տրի խարոր, իսկ** դրանով կատարվող ցանքի անվանումը՝ **տիր դնել**: Տրի խարորին ուղեկցող հարակից գործիքներից էին՝ տափանը, փոցխը, կեղևակալված արտի փխրեցնող միջոցները և այլն:

Հայաստանը միակ երկիրն էր Առաջավոր Ասիայում, որ Վանա լճի ավազանում և մերձակա լանջային շրջաններում շաղացանին զուգընթաց պահպանել էր շարացան համակարգը: Շարացան վարուցանքի ժամանակ ցորենի հատիկները խնամքով թաղվում էին ուղիղ ձգվող ակոսի մեջ, և սերմի կորուստ չէր լինում ու խոնավությունն էլ պահպանվում էր:

Երաշտի դեպքում ստացվում էր բավարար, իսկ անձրևառատ եղանակին՝ գերազանց բերք: Վանա լճի ավազանը հռչակված էր բարձր բերքատվությամբ (այս մասին լավագույնս հիշատակված է Խրիմյան Հայրիկի «Պապիկ և թոռնիկ» պատմվածքում): Շաղացանը կատարվում էր ձեռքի ափով, սերմը շաղ էր տրվում մոխրախառն կամ սպիտակ հող խառնելով՝ նոսր տեղերը լրացնելու համար: Սերմը հավասար շաղ տալու համար վարածի ուղղությամբ արտը բաժանում էին նեղ շերտերի՝ կորիների:

Սերմնացանը՝ որպես բարձր բերքատվության երաշխավոր, փորձառու, զավակների տեր ընտանիքի գլխավորն էր. այդ իրավունքը ավանդույթ էր, և միայն նրա մահվանից հետո այդ դերը անցնում էր եղբորը կամ ավագ որդուն:

Հարթիչների տեսակները. փոցխեր, փայտե և ցախե տափաններ, կառափներ, դրանց դերերը: Հողը ավանդաբար լավ մշակելու պայմաններից մեկը դրա փխրեցումն ու հարթեցումն էր: Հնագույնը փայտե մահակաձև, մուրճաձև թակերն ու ծառերի ճյուղերի տրցակներն էին, օգտվել են նաև ավելի հնավանդ ձևերից, որոնցից մեկը ոչխարի հոտը կամ տավարի

նախիրը արտի երեսին պտտեցնելն էր: Գործածում էին նաև փայտե փոցխը, ցախե տրցակները՝ **տափանները**, իսկ փոսերը լցնելու, բլրակները վերացնելու հարմար միջոց էր կալաքաշը՝ **կառափը**, այն դերը, ինչ այսօր կատարում են **բուլդոզերները** (Տախտակ 5):

Ե՞րբ և ի՞նչ փոփոխություններ կատարվեցին գործիքների կիրառման հարցում: Ի՞նչ տվեցին խորհրդային կարգերը: Ներկայումս ի՞նչ միջոցներով են իրականացվում: (Հարցերի պատասխանը ստանալ ուսանողներից):

Յանքերի խնամքը, *վնասատուներից, մոլախոտերից ազատումն ու փխրեցում կատարելը:*

Պարարտացման եղանակներն ու միջոցները*. մոխիրը, աղբը, գոմաղբը կամ սնահողը (Տախտակ 6):*

Բերքահավաքի և կալսող գործիքների ավանդական տեսակները, տիպաբանությունը և աշխատաեղանակները:

Հնձի գործիքներ. մանգաղներ, գերանդիներ: Հնձի օժանդակ գործիքները (Տախտակ 7):

Կալսող գործիքներ. թակեր, **կոռի**՝ եզների խմբի տրորման եղանակով կալսելու հնավանդ ձևի պահպանվածությունը Սասունում, Մոկսում: **Կամ.** կալի երեսին լծկան զույգ եզներով քաշվող փայտե կալսող գործիքը՝ հակառակ երեսին խրված սուր վանակատե (օբսիդիան, հրաբխային ապակի), հետագայում նաև մետաղե շեղբերով (Տախտակ 8):

Գլանաձև փայտե կալսիչներ՝ կամնասայլ-**ճառճառ**, կալսելու ձևերը: Ինչպե՞ս էին բերքը տեղափոխում դաշտից (տղամարդկանց շալակով, սայլով, գրաստով): Նյութերի վերամշակման գործիքներ. սանդեր, աղորիքներ, տեփուրներ, տարբեր մեծության անցքերով մաղեր (Տախտակ 9), պարկերի տեսակներ (Տախտակ 10), հացահատիկի պահեստավորման մի-

ջոցներ՝ շտեմարան՝ փայտե, կավե ամբար-փեթակներ, հորեր, քարի շարվածքով ամբարներ և այլ միջոցներ: Հարդի պահեստավորման միջոցներ՝ մարագ, ձեղնահարկ և այլն, դրանց գոյատևման ժամանակները:

Ի՞նչ փոփոխություններ են կատարվել, ինչպիսի՞ն է այն ներկայումս: (Պատասխանը ստանալ ուսանողից:)

*Երկրագործության մեջ աշխատանքի կազմակերպման հնավանդ կոոպերացիաները (**հարակաշ, զուբարա**), համագործակցության և փոխօգնության եղանակները, մաճկալի և սերմնացանի ընտրությունը: Ցանքի ընթացքը (տևում էր 30-40 օր, մինչև մարմնի վրայի և տրեխների միջի հատիկների ծլելը):*

*Հազարամյակներ շարունակ վարը իրականացվել է աշխատանքային կոլեկտիվներով՝ հարակաշ եղանակով, որը տարբեր գավառներում կոչվել է տարբեր անվանումներով. Իջևանում՝ **համկալ**, այլ տեղերում՝ **շրիք-շրիք, ընկերովի**, **օրթաղ**, Սասունում՝ **բադել, զուբարա** և այլն: Դրանք կիրառելի էին վարի, հնձի, կալսման, նյութերի վերամշակման և այլ աշխատանքներում, դրանց պահպանվածության մնացուկները ներկայումս: Ժամանակակից հնձի, բերքահավաքի, կալսող միջոցներ և նորույթներ (նշել կամովի մեկնաբանությամբ):*

1.3. Հայկական լեռնաշխարհը որպես այգեգործության, խաղողագործության, գինեգործության հնագույն հայրենիք

Հարցեր և առաջադրանքներ:

Խաղողի և պտղի տեսակները, անվանումները: Խաղողի մշակության և գինեգործության հնագույն կենտրոնները, ավանդական եղանակներն ու միջոցները: Աշխարհում հնագույն գինու ստացման հնձանների հայտնաբերումը (Արենի բնակավայրում, դրա միջազգային նշանակությունը) (Տախ-

տակ 11)։ Ի՞նչ տեղ են գրավում այգեգործությունն ու պտղաբուծությունը տնտեսության մեջ։ Ո՞ր տեսակներն են ավելի տարածված։ Գործածված և գործածվող տեխնիկան։ Կարմիր բլուրի մառանում տեղադրված կարասները (Տախտակ 12)։ Բերքի անկորուստ ստացման համար իրական և սնահավատ գործողություններն ու արարողակարգերը։ Փոխադարձ օգնության համակարգերը, տոներն ու հանդեսները։ Խաղողի բերքին նվիրված տոնը (Խաղողօրհնեք)։ Հարցումներ տեղական սովորությունների վերաբերյալ։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհը նաև այգեգործության, խաղողագործության, պտղաբուծության հնագույն հայրենիքներից էր։ Դեռ վաղ բրոնզի դարաշրջանում Գառնիում հայտնաբերվել է ծիրանի, Շենգավիթում՝ կեռասի, հոնի, սալորի, դեղձի կորիզներ։ Հնագիտական պեղումներից հայտնաբերվել են ավելի քան 500 տեղական խաղողատեսակների կորիզներ։

Միայն Վայոց ձորի տարածաշրջանում աճել են 200 աբորիգեն տեսակներ (տե՛ս **Հարությունյան Ս., Քալանթարյան Ա.** և ուրիշներ, Գինին հայկական ավանդական մշակույթում, Եր., 2005, էջ 11-15, **Ս. Հոբոսյան, Բ. Գասպարյան** և ուրիշներ, Խաղողի ու գինու հայոց մշակույթը (Եր., 2021)։ Արենի 1 քարանձավում հայտնաբերվել է Ք.ա. V-IV հազ. թվագրվող գինու արտադրական համալիր, որը հնագույնն է աշխարհում։ Դեռ Ք.ա. III հազ. շումերական աղբյուրներում հաղորդվում է, որ Եփրատ գետով Միջագետք էր արտահանվում կավե անոթներով ընտիր գինի։ Գինեգործությունը լավ զարգացած է եղել հատկապես Ուրարտուում։ Միայն Կարմիր բլուրում բացվել է գինու 8 մառան, հսկայական՝ 900 լիտր տարողությամբ 480 կարասներով։ Իսկ անտիկ հունական աղբյուրներում համաշ-

խարհային նշանակության տեղեկություններ են հաղորդվում Եփրատ գետով, նավերին բարձած կարասներով արմենների երկրից Բաբելոն գինի արտահանելու մասին (Հերոդոտոս)։

Գինուց բացի, սկզբնաղբյուրներում հիշատակվում են նաև **ցքի** և **օղի** եզրերը։ Գնահատելի է համարվել սալորի, խնձորի, հոնի, ծիրանի, թթի, տանձի, քոլի տանձի և այլ մրգերից թորած օղին։

Միջնադարյան և ապա XIX-XX դդ. տվյալները հաստատում են, որ Հայկական լեռնաշխարհը այգեվետ էր մասնավորապես իր գետերի և լճերի ավազաններում։ Այգեգործությունն ու պտղաբուծությունը ընդարձակ տարածություններ էին գրավում։ Խորհրդային և հետխորհրդային Հայաստանում այն աննախընթաց վերելք է ապրում։ Բացի բարենպաստ բնակլիմայական պայմաններ ունեցող շրջաններից, ցրտադիմացկուն խաղողատեսակներ ու ծառեր ստեղծելու շնորհիվ արդի այգեգործությունն ու պտղաբուծությունը տարածում են գտնում նաև լեռնային շրջաններում (մանրամասն տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները», ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., 2022, էջ 66-95)։

Պահածոյացման, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների պատրաստման, ձեթի ստացման եղանակներն ու միջոցները անցյալում և ներկայումս։ Գինին և օղին պահպանելու պարագաները, եղանակները (Տախտակ 13)։

Բանջարաբուծություն։ Բանջարանոցների և բոստանների գտնվելու վայրերը (բնակավայրերի մերձակայքում, այգիներում, արտերի մոտ)։ V դարում գրանցված հայերեն «պարտեզ» բառը նշանակել է այգի, բանջարանոց, ծաղկանոց, մրգաստան և այլն։

Գլխավոր բոստանային բույսերը (կարտոֆիլ, կաղամբ, ձմերուկ, սեխ, դդում, սմբուկ, պոմիդոր, սոխ, բազուկ, գազար,

կանաչու տարբեր տեսակներ (անմեռուկ, անանուխ, գինձ, կոտեմ, թարխուն, մաղադանոս, սպանախ, կարկառ, ռեհան, ծիթրոն, սամիթ, շրեշ, սոխ, սխտոր և այլն), որոնք ախորժելի համի ու սննդարարության շնորհիվ գործածվում են նաև այսօր: Լայն տարածում են ունեցել նաև սիսեռը, ոսպը:

Հայ մատենագիրների երկերում հանդիպում ենք բոստանային մի շարք մշակաբույսերի՝ կաղամբ, ճակնդեղ, շաղգամ, ձմերուկ, շաման, սեխ, գինձ, սխտոր, չաման և այլնի վերաբերյալ բազում հիշատակություններ[1]: Մեսրոպ Թաղիադյանը հաղորդում է, որ կարտոֆիլը Հայաստան է բերվել Հնդկաստանից Հայոց Եփրեմ կաթողիկոսի կողմից[2] XIX դարի սկզբին: Կարտոֆիլի մշակության լայն տարածումը պետք է կապել նաև 1840-1880-ական թթ. ռուս աղանդավորների Հայաստան վերաբնակության հետ: Ճակնդեղի մշակությունը Հայաստանում ունեցել է արդյունաբերական նշանակություն՝ շաքար արտադրելու համար: Իսկ ստեպղինի մշակության մասին հիշատակվում է «Վաստակոց» գրքում, Մ. Գոշի «Առակներում»:

Հայերի համար, որպես ոչ տեղական մշակույթ, հայտնի է պոմիդորը (**լոլիկ, տոմաթես, տոմաթ**): Երզնկայի հայերը 1880-90-ական թթ. մշակում էին սեխ՝ **ոսկեխնձոր** անվանումով: Ձմերուկը հայտնի էր ուրարտական դարաշրջանից:

1.4. Երկրագործական պաշտամունքի տարեշրջանը

Ծեսեր և ծիսական արարողություններ (համայնական և ներզբաղմունքային): Աշխատանքային յուրաքանչյուր բնագավառ մարդը ոգիների և աստվածությունների հովանավորու-

---

[1] **Նահապետյան Ռ.,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, Եր., 2022, էջ 95-100:

[2] **Թաղիադյան Մ.,** Ուղեգրություններ, Եր., 1975:

թյանն էր հանձնում: Առաջանում էին հավատալիքներ դաշտամշակության, այգեգործության վերաբերյալ: Ստեղծվում էր տարին բոլոր կրոնական մտահայեցողությունների անընդմեջ շղթա՝ ցանքի նախապատրաստում, ցանքի կատարում, ցանքի խնամք, բնական աղետների կանխում, բերքահավաք, նյութերի վերամշակում և իբրև շղթայի ավարտ՝ բերքի տոն: Ժողովրդական հմայական գործողությունների էին դիմում. ա) գյուղատնտեսությանը սպառնացող աղետների՝ երաշտ, մորեխ և այլն, բ) բնության հետ կապված ծայրահեղ համարվող իրավիճակների և բնական աղետների (արևի կամ լուսնի խավարումներ, ջրհեղեղ, երկրաշարժ և այլն), գ) եղանակի անոմալիաների (երկարատև անձրևներ, սառնամանիքներ և այլն), հիվանդությունների և համաճարակների ժամանակ:

Հայկական հեթանոսական դիցարանի աստվածություններից մի քանիսը իրենց դերերով անմիջական կապ ունեին երկրագործության և մարդկային պտղաբերության գաղափարի հետ: Այսպես, Նարը եղել է բնության զարթոնքի, ջրային տարերքի, բերքի, մայրության ու մանկության հովանավոր աստվածուհին: Հետագայում նրան փոխարինել է Անահիտը: Արա Գեղեցիկը՝ բնության ու բուսականության զարթոնքի աստվածությունն էր, տարեգլխի ուրախությունները մարմնավորող Ամանոր-Վանատուրը՝ այգիների ու պարտեզների խնամակալն էր, դպրության Տիր աստվածությունը՝ ցանքի հովանավորն էր: Այստեղից էլ մեծ տեղ էին զբաղեցնում երկրագործությանը աղերսվող տոները: Երկրագործությունը հովանավորող ոգիները բազմազան էին, նրանց ուղղված աղոթքներն ու զոհաբերությունները՝ բազմաթիվ: Արտերը կարկուտից, մկներից, մորեխներից, թռչուններից և այլ վնասատուներից, չար աչքից պահպանելու միջոցները աղերսվում էին ժո-

ղովրդական դարավոր հմայությանը (Տախտակ 14)։ Բազմաթիվ ու բազմազան էին երկրագործական ամեն ցիկլի սկզբին և ավարտին, աշխատանքային օրվա սկզբին, յուրաքանչյուր նոր գործի հաջող սկիզբն ու ավարտը ապահովելուն միտված ծեսերն ու արարողությունները։ Զբաղմունքի հովանավոր սրբի կամ ոգիների պատվին մատուցվում էին որոշակի ծիսակատարություններ։

Ահա թե ինչու տոների մեծ մասը ուներ երկրագործական բնույթ։ Դրանք էին՝ Նոր տարի, Ս. Սարգիս, Բարեկենդան, Ծաղկազարդ, Համբարձում։ Նոր տարվա նախորդ օրը թխում էին ծիսական հարցեր։ Դրանց մի մասը նվիրվում էր հացի ամբարին և լծկաններին։ Աստղալից երկինքը պատկերող մեծ հացը, որ «տարի» էր կոչվում, խորհրդանշում էր երկրագործի տարին՝ երկրային և երկնային պաշտամունքներով հանդերձ։ Ս. Սարգսի տոնը դիմավորում էին աղի բլիթ, փոխինդ, ածիկ պատրաստելով։ Ածիկը երկրագործական մշակույթի կերակրատեսակ է, քանի որ կապված է ցորենի ծիլի գաղափարի հետ։ Տոնին հնգօրյա ծոմ պահելով՝ մեծարում էին նույնանուն սրբին, որը կապվում էր բերքի առատության և բնության զարթոնքի հետ։ Տյառնընդառաջին խարույկի միջոցով մոգական գործողություններ էին կատարում գարնանամուտն արագացնելու համար։ Ծաղկազարդին ուռենու ճյուղերով կատարվող ծեսերով ազդարարում էին գարնան մուտքը։ Նույն կերպ Համբարձման տոնին կատարվում էր ծաղկահավաք և այլն։ Նշվում էին նաև բերքի, հացի, խաղողի օրհնության և այլ տոներ։ Բագավանում Նավասարդի 1-6-ը տևող բերքի տոնին մասնակցում էին Հայաստանի բոլոր գավառներից հավաքված ուխտավորները։ Թագավորների մասնակցությունը տոնին մեծ շուք էր տալիս։ Տեղի էին ունենում բազմաթիվ մարզախաղեր, ձիար-

շավներ և այլն:

Մշակվող բույսերը երաշտից, կարկուտից և բնական այլ չարիքներից պաշտպանելու համար ձեռնարկվում էին բազում միջոցառումներ: Ժողովուրդը Աստծո ցասումը կանխելու համար ցասման խաչեր էր կանգնեցնում, ուխտագնացություններ կազմակերպում և զոհեր մատուցում: Անձրև բերելու համար թաղված մարդու գանգը ջուրն էին գցում, կանանց արորին լծելու և կին մաճկալի ձեռքով չորացած գետի հունը վարելով անձրև են ակնկալել:

Ինչպես բոլոր երկրագործ ժողովուրդների, հայերի հավատքի համաձայն էլ վարող առաջին գործիքը և առաջին վարուցանքը Աստծո պարգևն է եղել: Գութանը գութաներգերի մեջ համարվել է սրբազան գործիք:

Իհարկե, բազմաթիվ ու բազմազան էին նաև ժողովրդական իրական հնարները, ինչպես, օրինակ՝ եղանակը կանխագուշակելու եղանակներն ու միջոցները:

Գրականություն

1. **Բայբուրդյան Ե.,** Աշխատանքային գործիքները հին Հայաստանում // ՀՍԽՀ պատմ. և գրակ. ինստ. «Տեղեկագիր», № 1, Եր., 1938, էջ 193-231:
2. **Բդոյան Վ.,** Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972:
3. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 30-53:
4. **Զելինսկի Ս.,** Բույսերի գործածությունը Երևանի նահանգում // ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 177-202:
5. **Թումանյան Գ.,** Գինեգործության մշակույթը Հայաստանում, Եր., 2008:
6. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Եր., 1946:
7. **Հարությունյան Ս., Քալանթարյան Ա.** և ուրիշներ, Գինին հայկական մշակույթում, Եր., 2009:

8. **Հոբոսյան Ս., Գասպարյան Բ.** և ուրիշներ, Խաղողի և գինու հայոց մշակույթը, Եր., 2021:

9. **Հոբոսյան Ս.,** Հայոց ձիթահանության մշակույթ (XIX-XX դդ. առաջին կես) // ՀԱԲ, պր. 23, Եր., 2007:

10. **Հովհաննիսյան Ն., Եսայան Ա., Բոբոխյան Ա. և ուրիշներ,** Հայկական խաղող և գինի, Եր., 2017:

11. **Նահապետյան Ռ.,** Հայկական լեռնաշխարհը երկրագործական մշակույթի հնագույն կենտրոն // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Եր., 2020, էջ 6-28:

12. **Նահապետյան Ռ.,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, ԵՊՀ հրատ., 2022, էջ 14-136:

13. «Армяне», Серия «Народы и культуры», М., 2012, էջ 97-131:

ԹԵՄԱ 2
ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհը որպես անասնապահական մշակույթի հնագույն կենտրոն

Անասնապահական մշակույթի ուսումնասիրության հիմնախնդիրը հայ ազգագրության մեջ: Յու. Մկրտումյանի «Անասնապահության ձևերը Արևելյան Հայաստանում (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ) // ՀԱԲ, № 6, Եր., 1974, էջ 7-90), ռուսերեն աշխատությունը՝ որպես հիմնարար ուսումնասիրություն:

Հնագիտության, հնակենդանաբանության, պատմագրության և ազգագրության տվյալների համաձայն՝ Հայկական լեռնաշխարհը նաև անասնապահական մշակույթի հնագույն կենտրոն է և երկրագործությունից հետո հայերի երկրորդ հիմնական տնտեսական զբաղմունքն էր:

Հարցեր և առաջադրանքներ:

Երկրագործության և անասնապահության համակցված բնույթը: Անասնապահության զարգացման առանձնահատկությունները և դրսևորումների ձևերը հայոց մեջ:

Անասունների արածեցման և աշխատանքի կազմակերպման համագործակցության ավանդական սկզբունքները, սովորույթները: Հովիվներ վարձելու կարգը, վերաբերմունքը նրանց նկատմամբ, հագուստը, ոտնամանները, համայնքի պարտականությունները՝ հագուստով, ապրուստով ապահովելու առումով, նրանց աշխատանքային ժամանակամիջոցը, իրավունքներն ու պարտականությունները, հովիվների ընտրությունը:

Անասնապահների աշխատանքի բաժանման կարգը ընտանիքում: Մանուկների աշխատանքի կիրառման եղանակները: Տղամարդկանց և կանանց մասնակցության բնույթը:

Անասունների սեփականության նշանները (ականջները կտրելով ու ճեղքելով, դեմքերը կամ ազդրերը դաջելով նշաններ թողնելը): Տոներ, ծիսակատարություններ՝ կապված անասնապահության հետ: Անասունների գանգերը, եղջյուրները և այլ մասերը պաշտելու սովորությունները: Ծախված և գնված անասունների նկատմամբ կիրառվող սովորությունները: Ոչխար խուզելու գործիքները և խուզելու ձևերը:

Անասնապահության հաջողությունն ապահովող ժողովրդական հավատալիքների համակարգը: Կաթնամթերքների պատրաստման, բուրդը խուզելու հետ կապված սնահավատ գործողությունները:

Կաթնատնտեսություն: Կաթի մշակման ժողովրդական եղանակները և հմտությունները: Կաթնամթերքների տեսակները: Կաթի ընկերակցությունները. ***խաբ****-ի տարածման շրջանները, նպատակը, բնույթը: Փոխադարձ օգնության այլ ձևերը: Ինչ փոփոխություններ կատարվեցին սովետական շրջանում:*

Համայնական և ներզբաղմունքային ծեսեր և ծիսական արարողություններ, այդ թվում՝ իրավիճակային, տոնացուցային, հավատալիքներ և սնահավատություններ, ավանդույթներ և սովորույթներ, խորհրդանիշներ և տարբերանշաններ, հմտություններ և գիտելիքներ: Ժողովրդական բժշկության հնարները, գուշակության և սնոտիապաշտության արարողությունները: Անասունները գողերից, գազաններից պահպանելու եղանակները, օրինակ՝ գելկապի եղանակը: Մոգական գործողություններ: Հիվանդությունները, անկումը կանխելու ժողովրդական հնարները, չար աչքը խափանող դաղդաղանների, թալիսմանների լայն կիրառությունը (Տախտակ 16): Անասնապահական տոներ, աղոթքներ, ծիսակատարություններ՝ առաջին անգամ արոտ հանելու, սար ուղարկելու, սարից

իջնելու, գոմում պահելու հետ կապված: Անասնապահությանն առնչվող երգեր, աղոթքներ, անեծքներ, կախարդություններ: Հատուկ անուններ դնելը, կանչելու, քշելու ժամանակ դիմելու ձևերը:

Հակիրճ հիմնավորել հարցի ուսումնասիրության կարևորությունը:

Հարցի ուսումնասիրությունը բացառիկ կարևոր է ինչպես տնտեսամշակութային կյանքի, այնպես էլ հայոց կենսապահովման մշակույթի՝ բնակարանային համալիրների ձևերի ու տիպերի, ներսույթի կազմակերպման, բնակավայրային համալիրների՝ հիմնական և սեզոնային բնակավայրերի, ուտեստի ու սննդի կազմակերպման, տարազի նյութի և կիրառման կողմերը բացահայտելու, նաև հայոց ընտանիքի կազմի, կնոջ դերի գերակայության, հավատալիքների ու պաշտամունքային բազում երևույթների ուսումնասիրության համար:

Ուսումնասիրության աղբյուրները: Հնագիտական տվյալները ակնառու են վաղ բրոնզեդարյան մշակույթում (Ք.ա. 3500-2300): Թեղուտի, Շենգավիթի, Մոխրաբլուրի, Հառիճի հնավայրերից հայտնաբերվել են կավից, քարից պատրաստված քանդակներ՝ ոչխարի, շան, խոյի կերպարանքով, նաև սայլի մանրակերտ, ցուլի կավե արձանիկներ և այլն:

Բավական առատ են գրավոր, մասնավորապես՝ հունական և հռոմեական անտիկ աղբյուրները (տե՛ս գրականության ցանկում):

Անասնապահության ավանդական ձևերը և աշխատանքի կազմակերպման հնավանդ եղանակները բազմազան ու բազմաթիվ էին:

Հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանում կիրառվել են նստակյաց և հեռագնա աշխատանքի կազմակերպման զա-

նազան ձևեր, սովորույթներ ու ծեսեր, որոնց ազգագրական ուսումնասիրությունը ունի և՛ գիտաճանաչողական, և՛ պատմամշակութային նշանակություն, քանզի հնարավոր է դառնում մշակված արտադրական հմտությունների որոշ մասի կիրառումը նաև մեր օրերում: Բացահայտվում են նաև վաղեմի հասարակական կազմակերպությունների շատ մնացուկներ: Հայ բնակչության նստակեցությունը պայմանավորված էր ոչ միայն բնակլիմայական պայմաններով, այլև երկրագործական, անասնապահական համակցված համալիր տնտեսավարմամբ:

Անասնապահության նստակյաց ձևը տարածում ուներ զարգացած երկրագործական շրջանների ինչպես ցածրադիր, այնպես էլ ալպիական ու մերձալպիական գոտիներում:

Նստակյաց անասնապահության հովտային տիպը ձևավորվել է Արարատյան հովտի գյուղերում, իսկ լեռնային ենթատիպը՝ Շիրակի, Գեղարքունիքի, Ջավախքի, Արցախի, Սյունիքի բարձր լեռնային արոտներով հարուստ գյուղերում: Այստեղ մսուրային շրջանը տևում էր կես տարի՝ նոյեմբերից ապրիլ: Խնամքը՝ աշնանը, ձմռանը և գարնանը, իսկ ամռանը՝ բացառությամբ լծկանի, կազմակերպվում էր հեռավոր արոտավայրերում՝ ընտանիքի մի մասի՝ անասնապահ տղամարդկանց և կաթնամշակ կանանց հետ, հիմնելով նաև ժամանակավոր բնակատեղիներ՝ բինաներ: Սյունիքին, Լոռիին, Արցախին և Տավուշին բնորոշ էր **գյուղ-գոմահանդ-վերին սար, ապա՝ վերին սար-գոմահանդ-գյուղ** երթուղին: Այս ձևի պայմաններում անասունը ձմռանը պահում էին ձմեռանոցներում (գոմահանդ) կամ գյուղի գոմերում:

Մեծ նշանակություն էր ստանում անասունների արածեցման համար ընկերակցությունների կազմակերպումը: Տավու-

շում այն հայտնի է «սարի համգյալ» անունով: Ազգագրագետ Յու. Մկրտումյանը արձանագրում է անասունների արածեցման ընկերակցությունների 3 ձևեր. 1) կարողությամբ հավասար ազգական ընտանիքներից կազմված ընկերակցություն, 2) կարողությամբ հավասար հարևաններից բաղկացած ընկերակցություն, 3) կարողությամբ տարբեր ազգականներից ու հարևաններից կազմված ընկերակցություն[1]:

Կային գյուղական համայնքներ, շրջաններ, որոնք ոչխարի հոտը ձմռանը պահում էին ձմեռանոցներում, ինչը պայմանավորված էր անասնակերի հայթայթման ձևով: Այստեղ ձմեռում էին ինչպես ունևոր ընտանիքների անասնապահները, այնպես էլ ընկերությունների հովիվները, որոնք հերթական կարգ էին սահմանում: Այսպիսի ձմեռանոցներում երբեմն նոր գյուղեր էին գոյանում, որով վերանում էր հեռագնացությունը (ավանդության համաձայն՝ Վարանդայի Շուշի գյուղի ձմեռանոցը գյուղի վերանալուց հետո դարձել է Շուշի քաղաք):

Համայնքների արոտատեղիների սակավության պատճառով հեռագնացության հնագույն ձևերը հասան նաև հետագա դարաշրջաններ, անգամ խորհրդային իշխանության տարիներ, երբ կոլտնտեսությունները ավելի կազմակերպված ձևերով էին անցկացնում սարվորային կյանքը և կաթնամշակությունը:

Ընդհանուր հովիվների ընտրությունը կատարվում էր համայնքային ժողովներում:

Հովիվների և նախրապանների վարձակալումը կատարվում էր ինչպես առանձին ունևոր տնտեսությունների, այնպես էլ գյուղի ամբողջ հասարակության կողմից: Այդ նյութերի հա-

[1] **Ю. И. Мкртумян,** Некоторые формы сообществ в армянской деревне // ՊԲՀ, 1967, № 4:

մեմատությունը բացահայտում է հայերին բնորոշ հետևյալ առանձնահատկությունները. 1. Հայերը ավելի շատ, քան այլ ժողովուրդներ, կիրառել են այլ ազգություններից տարբեր կարգի անասնապահների վարձակալման եղանակը: 2. Հայերը ավելի, քան այլ ժողովուրդներ, իրականացրել են անասունների արածեցման համայնական եղանակը՝ հերթական կարգով՝ ըստ ծխերի, օրերի տևողությունը որոշելով ըստ անասունների գլխաքանակի: Պարտադիր էր հայ համայնքի կոլեկտիվ աջակցությունը հովիվներին սննդով, հագուստով, տրամադրում էր նաև զինված խմբեր՝ ասպատակիչների թալանը կանխելու նպատակով: 3. Հայերը ավելի շատ, քան Անդրկովկասի այլ ժողովուրդներ, անասնապահների աշխատանքը վարձատրել են հացահատիկով՝ ցորենով ու գարիով, հանգամանք, որը վկայում է հայերի զարգացած երկրագործ ժողովուրդ լինելու մասին:

Հայերի մեջ հովիվների ընտրությունը և վարձատրման կարգը, համայնքի պարտավորությունները որոշվում էին համայնքային ժողովներում:

Կաթնատնտեսություն: Բազմազան ու բազմաբնույթ էին կաթի մշակման ժողովրդական եղանակները և հմտությունները, կաթնային արտադրության տեսականին: Անասնապահական տնտեսության մեջ ևս կարևոր սկզբունք էր աշխատանքի սեռատարիքային բաժանումը: Տարին բոլոր անասունները գտնվում էին գերդաստանի անասնապահ տղամարդկանց խնամքի ու հսկողության ներքո, իսկ կանայք զբաղվում էին կաթնատնտեսությամբ և տնայնագործությամբ: Պատանիներն ու աղջիկները նրանց օգնականներն էին: Այս է պատճառը, որ երկրագործա-անասնապահական համալիր տնտեսաձևի կիրառումը պահանջել է աշխատողների բազմանդամություն,

հետևաբար՝ գերդաստանով ապրելու պահանջ: Անասնապահ գերդաստանական ընտանիքներում զգալիորեն մեծանում էին կնոջ դերակատարությունը և հեղինակությունը:

Հնագույն ժամանակներից հայոց մեջ սովորույթ է եղել կաթը հերթով իրար փոխ տալը՝ ամբողջ տարվա կաթնամթերքը պատրաստելու համար, մի սովորույթ, որը հայտնի էր **խաբ, խաբ ու խազ, փոխարա** անվանումներով: Շիրակում, Ջավախքում այն գոյատևեց մինչև 1950-ական թթ.: Ընկերությունը կազմվում էր դրկից-հարևաններից և ինքնին կանանց միավորում էր:

Խաբ և խազի ընկերությունը չգրված կանոններ ուներ. կաթը ժամանակին տեղ հասցնել, ապահովել կաթի մաքրությունը, կաթը չխարդախել՝ ջուր կամ այծի կաթ չխառնել (այն նվազ յուղայնություն ուներ), յուղայնության ապահովման համար սեզոնային հավասարություն ապահովել: Կաթի փոխտվության կարգը սահմանվում էր ըստ կաթնաքանակի. առաջինը տալիս էին ամենաշատ կովեր և ոչխարներ ունեցողին:

Հայոց ավանդական սննդի համակարգում զգալի էր և այժմ էլ մեծ է կաթնամթերքի տեսակարար կշիռը: Հայոց կաթնատնտեսության առանձնահատկություններից էր կաթի անթափոն մշակումը, որի արդյունքում ստացված բոլոր մթերքները ևս գործածվում էին սննդի մեջ՝ ենթարկվելով երկրորդային մշակման: Հայ տանտիկիները մեծ հմտությամբ պատրաստում էին մածուն, քամած մածուն, կաթնաշոռ, կաթի սեր, չորաթան, պանրի զանազան տեսակներ, կարագ և այլն: Կարագը ստանում էին խնոցու, կավե ծափի (կարաս), ձձումի մեջ հարելու եղանակով (Տախտակ 15):

Հավատալիքներ: Դարերի ընթացքում անասնապահությունը ուղեկցվել է հմայական ծեսերի շարքով՝ ուղղված ըն-

տանի կենդանիների առողջ ու անկորուստ բազմացմանը, «չար աչքից» և հիվանդություններից զերծ պահելուն: Գարնան առաջին օրը խոշոր անասուններին դուրս հանելիս ճակատին ձու էին ջարդում՝ «չար աչք չկպչելու համար», տոնակատարության էր վերածվում գարնանը գոմեշին գոմից դուրս հանելը: Կազմակերպվում էին արու անասունների զվարճալի մենամարտեր, ակնահարությունից կանխելու նպատակով կոտոշներից, վզից կախում էին թալիսմաններ՝ դաղդաղաններ, կամ կանաչ, կապույտ թելերի փունջ (Տախտակ 16): Նոյեմբերին բեղմնավորումը ապահովելու նպատակով խոյը խառնում էին ոչխարի հոտին, որը կոչում էին **ղոչը խառնել**: Այդ ամիսն էլ կոչվում էր ղոչի ամիս: Ղոչի գլուխը այդ օրը խաչաձև ներկում էին կարմիր գույնով, որպեսզի հոտից ծնված բոլոր գառներն էլ էգ լինեին: Սասունում անասուններին ակնահարությունից պաշտպանելու համար **զիպ** պահելու սովորույթն են ունեցել: Փետրվարի վերջին երեք օրում և մարտի առաջին չորս օրում տնից ոչ մի բան դուրս չէին տալիս՝ տան հաջողությունից չզրկվելու համար և այլն:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 30-53:

2. **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի անասնապահական ընկերակցությունների կազմակերպման որոշ ձևեր ու սովորույթներ // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 184-200:

3. **Նահապետյան Ռ.,** Հայկական լեռնաշխարհը՝ անասնապահական մշակույթի հնագույն կենտրոն // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Եր., 2020, էջ 28-39:

4. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆա-

կուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Եր., 2022, էջ 137-172:

5. **Քալանթար Ա.,** Կաթնային արդյունքներ // ԱՀ, գ. Դ, 1898, էջ 276-292:

6. **Мкртумян Ю.,** Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX - начало XX в.). Историко-этнографическое исследование // АЭФ, 1974, вып. 6, с. 7-90.

7. **Мкртумян Ю.,** Скотоводство // Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, с. 131-137.

ԹԵՄԱ 3
ՅՈՒՐԱՅՆՈՂ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՏՆՏԵՍԱՁԵՎԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Ներկայումս ազգագրական գիտության մեջ կարևոր նշանակություն են ստանում նաև հավաքչության, որսորդության, ձկնորսության, թռչնաբուծության, մեղվապահության, ձիթահանության, շերամապահության, մետաքսի արտադրության տնտեսավարման ավանդութային ձևերը, դրանց պահպանվածության աստիճանը արդի տնտեսության մեջ: Այս զբաղմունքների ավանդական ձևերի ուսումնասիրությունը հայագիտության մեջ իրականացրել են՝ Վ. Բդոյանը՝ «Երկրագործական մշակույթը Հայաստանում», Ա. Պետրոսյանը՝ «Շերամապահական մշակույթը Հայաստանում», նաև՝ «Ձկնորսական մշակույթը Հայաստանում», Ա. Գասպարյանը՝ «Մեղվապահական մշակույթը Հայաստանում» և այլն: Ուշագրավ է նաև Ս. Հոբոսյանի՝ «Ձիթահանության մշակույթը Հայաստանում» աշխատությունը: Այդուհանդերձ, հարցը դեռևս ամբողջականորեն ուսումնասիրված չէ հայ ազգագրության մեջ:

Հարցեր և առաջադրանքներ:

Հավաքչությունը որպես յուրացնող տնտեսաձև, դերը և նշանակությունը անցյալում և ներկայում: Որսորդությունը և ձկնորսությունը տեղական տնտեսության մեջ անցյալում և ներկայում: Գործածվող միջոցները, եղանակները, ծեսերը:

Ձկնորսություն: *Ձկնորսության ժողովրդական եղանակները (XIX-XX դդ.): Ձկան և ձկնորսության հետ կապված հավատալիքները: Գործածվող միջոցները, եղանակները, ծեսերը:*

Թռչնաբուծություն, մեղվապահություն, շերամապահություն, դրանց տեղը հայ բնակչության տնտեսական կյանքում, փոփոխությունները այժմ: Համագործակցության եղանակները և այդ զբաղմունքների հետ կապված ծեսերն ու հավատալիք-

ները: Արդի տնտեսական զբաղմունքների զարգացման հեռանկարները ՀՀ-ում:

Հայերի դերը շերամապահության տարածման և մետաքսի միջազգային առևտրում, համառոտ պատմական ակնարկ:

Շերամապահության ժողովրդական եղանակները (օրինակ՝ շերամի սերմը (ձվիկները) ծոցի մեջ պահելով աճեցնելու սովորությունը և դրան փոխարինող մյուս միջոցները: Շերամանոցները և շերամի որդը կերակրելու ձևերը: Բոժոժի ստացումը և ստացման եղանակները: Շերամապահության տնտեսական նշանակությունը անցյալում: Համագործակցության ձևեր ու սնահավատություններ, չար աչքից պահպանելու միջոցներ:

Մետաքսի ստացման և ներկման ժողովրդական եղանակները:

Մեղվապահություն: *Մեղվապահության տնտեսական, բուժական և այլ նշանակությունները: Փեթակների տեսակները, ձևը և պատրաստման եղանակները. Ճիպոտահյուս փեթակ և կավով ծեփելը, կավե փեթակ արկղը, տախտակե արկղաձև փեթակների մուտքը: Մեղվի պարսը (երամը) հանդարտեցնելու և փեթակի մեջ հավաքելու եղանակները՝ թիթեղյա և պղնձե ամանները ծեծելով, զանազան ձայներ հանելով, ցախավելներ տնկելով: Ակնահարությունից հեռու պահելու, նոր մայր ստանալու սնահավատություններ:*

Մեղվապահությունը հնում և այսօր:

Որսորդություն: *Որսորդության տեղը տնտեսական կյանքում: Որսորդի զենքերը. Հրացան, դաշույն, սվին, նետ ու աղեղ, թակարդ, ծուղակ և այլն: Որսի ժամանակ օգտագործվող շների տեսակները: Որսից առաջ կատարվող միջոցառումներ. աղոթքներ, հմայիլ կրել, կենակցելուց խուսափել և այլն: Որսորդությունը ներկայումս:*

Հավաքչության մշակույթ: Հայաստանի նախաարտադրական կենցաղի ուսումնասիրության մեջ շատ ուշագրավ է յուրացնող տնտեսաձևերի հետազոտման հիմնահարցը: Հազարամյակներ շարունակ յուրացնող տնտեսաձևերը հարատևել են, պահպանվել մեր օրերում՝ ժամանակի ընթացքում կորցնելով իրենց երբեմնի նշանակությունը: Հայկական լեռնաշխարհում ևս ստեղծվել է յուրացնող տնտեսաձևերին բնորոշ ինքնատիպ մշակույթ, որի վերաբերյալ գրավոր վկայությունները հարուստ չեն: Դա հատկապես վերաբերում է ինչպես հավաքչությանը, այնպես էլ որսորդությանն ու ձկնորսությանը և շերամապահությանը:

Ք.ա. IX-I հազ. ամենահեռավոր անցյալի կենդանի վկայություններից են ժայռապատկերները, որոնք արտացոլում են լեռնաշխարհի հնագույն բնակիչների առօրյան, կենցաղը, զբաղմունքները, բուսական և կենդանական աշխարհը, գաղափարական պատկերացումները, կրոնահմայական ըմբռնումները: Դրանցում Ք.ա. IX-VI հազ.՝ նեոլիթյան և V-IV հազ. I-ին կեսի էնեոլիթյան տնտեսության ձևավորման հիմքում ամենուրեք նկատվում են հավաքչության և որսորդության հետքեր՝ վաղ բնակավայրերում պահպանված հացաբույսերի ու վայրի կենդանիների ու ժայռերին փորագրված որսի տեսարաններով[1]:

Մինչև նեոլիթյան հեղափոխությունը՝ անցումը արտադրող տնտեսաձևին, մարդը բացառապես սնունդ է հայթայթել հավաքչության և որսորդության միջոցով: Անգամ արտադրող տնտեսաձևին անցնելու դարաշրջաններում յուրացնող տնտե-

[1] **Նահապետյան Ռ.,** Ժայռապատկերները՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների ազգաբանական ուսումնասիրությունների հնագույն սկզբնաղբյուր // Ազգաբանական ուսումնասիրություններ, գ. 1, Եր., 2019, էջ 39-55:

սաձևը՝ հավաքչությունը, դեռևս մեծ տեղ է զբաղեցրել: Ցորենը չէր մշակվի, եթե մարդը որպես սնունդ նախ չհավաքեր վայրի ցորեն: Մեր օրերում անգամ հավաքչությունը շարունակում է գոյություն ունենալ, թեև այն արդեն տնտեսության մեջ կենսապահովման կարևոր ճյուղ չէ:

Հավաքչության մնացուկը հայ բնակչության համար նյութական իմաստով տնտեսության մեջ ունեցել է միայն օժանդակ բնույթ՝ իբրև յուրացնող տնտեսաձև: Մասնակի մնացուկներ են նկատվում լեռնային և անտառաշատ շրջաններում նաև այժմ. բուսական մի շարք օգտակար տեսակներ հավաքում են որպես սննդի միջոց և բուժական նպատակներով: Թեև հայ ժողովրդի հիմնական զբաղմունքները դարեր շարունակ եղել են երկրագործությունն ու անասնապահությունը, սակայն դրանց կողքին ուրույն տեղ է ունեցել նաև վայրի բույսերի և արմտիքների հավաքչությունը: Վայրի բույսերի պահանջը մեծ է եղել հատկապես գարնանը, երբ զգացվել է ամբարված սննդամթերքների, մրգերի և բանջարեղենի պակաս:

Հավաքչության վերապրուկների հարատևությունը պայմանավորված էր մի քանի գործոններով. 1. բույսերի թարմ կամ պահածոյացված վիճակում գործածում՝ որպես օժանդակ սննդանյութեր, որոնք ներկայումս վերածվել են անգամ ապրանքային տեսականու, 2. բույսերի բուժական հատկանիշ՝ որպես ժողովրդական բժշկության հիմք, 3. որպես համեմունք, 4. տնտեսական գործառույթներով հավաքչության ավանդների պահպանում, 5. Հայաստանում ավատական կարգերի խիստ երկարատևությունը և տնտեսության ինքնաբավ բնույթը, հողասակավությունը, քաղաքական անկայուն վիճակը, մշտական հարձակումների ու պատերազմների, կոտորածների ու հալածանքների, տեղաշարժերի հետևանքով մշակաբույսերի

խիստ կրճատումը, հետևապես մարդուն բնությունից կախման մեջ պահելը, 6. ոռոգման համակարգերի սակավությունը, 7. աշխարհագրական գործոնը. խիստ լեռնային կլիման անպատաստ էր բանջարաբուծության համար, 8. մի շարք բույսեր էլ գործածվել են տեխնիկական ու կենցաղային նպատակներով՝ իբրև վառելիք (օր.՝ փուշ գազը), իբրև սոսնձանյութ (օր՝ շրեշը) և այլն:

Հայոց կենցաղում օգտագործվում էր ավելի քան 300 տեսակի վայրի բույս, այդ թվում՝ ավելուկ, եղինջ, բլդրղան, բոխի, դանդուռ, դաղձ, ուրց, եզան լեզու, թելուկ, թրթնջուկ, ծնեբեկ, սունկ, սինդրիկ, շրեշ, կոտեմ, համեմ, ղանձիլ, ճնճղապաշար, մանդակ, շուշան, սիբեխ, սպանախ, փիփերթ[1]: Վայրի բույսերից պատրաստված ճաշատեսակներն ու կերակրատեսակներն ունեցել են հիմնականում ամենօրյա, ինչպես նաև՝ ծիսական բնույթ: Վայրի բույսերից մի քանիսը գործածվել են նաև բուժիչ նպատակներով:

Ուտելի բույսերը ժողովուրդը օգտագործում էր աղցանի ձևով, տապակած յուղով և ձվով, կաթով ճաշեր պատրաստելով, իսկ ավելուկը՝ սխտորի հետ գործածելով և այլն:

Շուրջ տարին բուսական ծագմամբ ուտեստները շրջանառության մեջ դնելու նպատակով հայ բնակչությունը կիրառել է պահածոյացման բազմազան ձևեր: Վայրի մրգեր՝ խնձոր, տանձ, հոն, զկեռ, ալոճ, մամուխ, բռինչ, թութ, սալոր հավաքելով՝ ճաշեր, չրեր ու պաստեղ էին պատրաստում, նաև օղի թորում՝ հիմնականում Արցախում, Տավուշում, Լոռիում, Սյունիքում: Հայ բնակչությանը ծանոթ են եղել նաև հատապտուղները՝ մոշը, գետնանուշը, հաղարջը, ելակը, և այլն, որոնք այսօր համարվում են օգտակար թե՛ ժողովրդական բժշկության մեջ

[1] Հայաստանի բնաշխարհ, Եր., 2006:

և՛ թե ուտեստի համալիրում (թարմ վիճակում, նաև որպես մուրաբա, ջեմ, քաղցրեղեն, հյութ, կոմպոտ և այլն)։ Օրգանիզմի վաղաժամ ծերացումը կանխելու նպատակով գործածում էին ուրց, սոխ, սամիթ, մասուր, թուզ, շաքարախտի բուժման համար՝ դդումի, նռան, սալորի, սերկևիլի հյութերը, բանջարեղենից՝ սամիթի, կարոսի, դանդուռի սերմերը, հազարն ու եղերդակը։ Ուտելի բույսերը առանձնանում էին նաև զովացնող, հոտավետ հատկանիշներով, նաև իբրև համեմունք (օր.՝ պանրի, լոռի հետ)։

Բույսեր հավաքելը կանանց և աղջիկների գործն է համարվել։ Հավաքված հատիկները վերամշակման ենթարկելով՝ հազարամյակների ընթացքում մարդը հասել է հաց պատրաստելու աստիճանին։

Որսորդական մշակույթ։ Հայոց տնտեսական կենցաղում կարևոր տեղ էր գրավում նաև որսորդությունը։ Թեև եղել է տնտեսության օժանդակ ճյուղ, բայց հնադարում, առավել ևս միջնադարում ուներ նաև ռազմական նշանակություն։

Որսի հետապնդումը հետիոտն և հեծյալ ձևերով, դարանակալելու բազմազան ձևերը, գազանների դեմ կռվելը, զենքի տեսակների օգտագործման եղանակները, օղապարանով կենդանիներ որսալը և այլն, փաստորեն, ռազմական վարժություններ էին։ Ուստի պատահական չէր, որ միջնադարում որսորդությունը պետական հսկողության ներքո էր գտնվում։

Այն պետականություն ունեցող արևելյան ժողովուրդների շրջանում համարվել է պետական գործ և պատերազմի վարժվելու ամենաճշգրիտ եղանակը։

Ուշագրավ վկայություններ են թողել Ագաթանգեղոսը, Ղազար Փարպեցին և մասնավորապես Մովսես Խորենացին։ Պատմահայրը անդրադարձել է ձիերով ցիռերին (վայրի էշ)

հետապնդելու և կրակի օգնությամբ կինճեր (վարազ, արու վայրի խոզ) որսալու եղանակներին: Նա անդրադարձել է նաև օղապարանի գործածությանը[1]: Ուշագրավ է, որ երբ Խորենացին փորձում է հայ նախարարական որոշ տների անունների ծագման մասին խոսել, դրանք բխեցնում է արծիվներից և բազեներից, որոնք օգտագործվում էին որսորդության մեջ:

Լայն տարածում է ունեցել բազեով և որսաշներով որս անելը, որի վերաբերյալ ուշագրավ վկայություններ է թողել Փարպեցին: Որսաշներով, թակարդներով որս անելը հիշատակել են գրեթե բոլոր պատմիչները: Անանիա Շիրակացին խոսում է թակարդով, նետահարման միջոցով և նիզակով որս անելու ձևերի մասին[2]:

Միջնադարյան որսորդության սովորությունների մեջ աչքի ընկնողը արքունական և նախարարական վերնախավերի խմբական կարգով որսի դուրս գալն էր: Հայկական պետականությունը կորցնելուց հետո այս սովորությունները ևս վերացան: Հրազենը երևան գալուց ի վեր օտար տիրապետություններն արգելք դրին այդ զենքի վրա, ուստի զինաթափված ժողովուրդը ևս զրկվեց որսորդական սպորտի մեծ հաճույքից:

Որսորդությունը մեզանում հիմնականում մարզական նշանակություն ուներ, իսկ ինչ վերաբերում է գայլի և աղվեսի որսին, անցյալի նման այժմ էլ այն գտնվում է որսորդական կազմակերպությունների վերահսկողության տակ:

Թռչնորսությունը իրագործվել է թակարդներով, ծուղակներով, բազեների և շների օգնությամբ, գազանորսը՝ թույլատրված զենքով ու մահակներով, իսկ եղնիկների և մյուս

---

[1] **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, գիրք 2-րդ, գլ. ԽԱ, էջ 166, գլ. ԿԱ, էջ 191, գլ. Ը, էջ 265 և այլն:

[2] **Անանիա Շիրակացի,** Տիեզերագիտություն և տոմար, առաջաբանը և ծանոթ. Ա. Աբրահամյանի, Գ. Պետրոսյանի, Եր., 1979, էջ 58:

կենդանիների որսը՝ օղապարանով և այլն: Սակայն ժամանակ առ ժամանակ, որոշ գավառներում հայ ժողովուրդը հնարավորություն էր ունենում ինքնաշեն կամ ձեռքբերովի զենքերով որս անելու: Արևելյան Հայաստանում, մասնավորապես Արցախում, որտեղ իշխում էին մելիքները, իրազեն զենքով որսորդությունը շարունակվում էր երկար ժամանակ: Այդ նույնը պահպանված էր Սասունում, Զեյթունում:

Ձկնորսության մշակույթ: Հայաստանի նախաարտադրական կենցաղի համալիրում ուշագրավ տեղ է գրավում նաև ձկնորսությունը:

Հիմնախնդրի վերաբերյալ պատմաազգագրական ուսումնասիրություն է կատարել ազգագրագետ Ա. Պետրոսյանը[1]:

Հայաստանի գետերն ու լճերը հարուստ էին ձկներով, որով պայմանավորված էր ձկնորսության կարևոր տեղն ու դերը հայերի տնտեսական կյանքում: Ձկնորսությունն ունեցել է նաև մարզաժամանցային իմաստ: Տեղական ձկնատեսակներից հայտնի էին սազանը, սուդակը, շեղաձուկը, ծածանը, կոդակը, կարմրախայտը, լոքոն, տառեխը և այլն, որոնք բացառությամբ տառեխի (բազմանում է Վանա լճում), այսօր էլ հիմնականում պահպանվել են ՀՀ ջրային պաշարներում: Բացի սեփական կարիքները բավարարելուց, կային նաև շուկա հանվող ձկան պաշարներ, որոնք կարևոր սնունդ էին և այժմ էլ այդպիսին են Վանա և Սևանա լճի ավազաններում:

Հայաստանում տարածված ձկնորսական գործիքներ ու սարքեր էին՝ սուզանիվները, սուզաքարերը, ծանրոցները, հարպունը, ցանցը, թարփը, ուռկանը, կարթը և այլն: Ըստ որում, եթե ցանցը, թարփը, ուռկանն ու կարթը հազարամյակներ անց մեզ են ներկայանում կատարելագործված տեսքով,

---

[1] **Պետրոսյան Ա.,** Ձկնորսական մշակույթը Հայաստանում, Եր., 2015:

ապա ձկնորսական մյուս պարագաները ժամանակի ընթացքում դուրս են եկել կիրառությունից՝ փոխարինվելով առավել կատարելագործված աշխատանքային գործիքներով:

Ձկնորսությունը Հայկական լեռնաշխարհում հազարամյակների վաղեմություն ունի[1]: Հայ մատենագրության և վիմագրության մեջ հիշատակվում են տեղեկություններ ձկների տեսակների, նավերի, ձկնավազանի, արքունական ձկնորսարանների, ձկնորսության վրա սահմանված հարկերի, ձկնորսական սարքերի և այլնի մասին: Ձկնորսությունը տարածված էր Եփրատ, Տիգրիս, Արաքսի գետերի և սրանց վտակների, Վանա և Սևանա լճերի շրջաններում և այլուր: Բացի սեփական-ընտանեկան կարիքները բավարարելուց, երբեմն այն հանվում էր շուկա: Փ. Բուզանդի հավաստմամբ Առեստ ավանում Բերկրի փոքր գետակի վրա էր գտնվում արքունական ձկնորսարանը: Այստեղ մեծ խմբերով Վանա լճից ձկներ էին թափվում գետակ: Արշակունի արքաների սեփականությունն էր, և մեծ քանակությամբ աղ դրած տառեխ ձուկ էր հանվում միջազգային շուկա[2]:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին ձկան օգտագործումը հայերի կենցաղում միանշանակ չի եղել: Սյունիքում այն քիչ թե շատ ամենօրյա ուտեստ էր համարվում: Իսկ ահա Շիրակում ձուկն ուներ գերազանցապես տոնածիսական, իսկ Այրարատում՝ և՛ տոնածիսական, և՛ ամենօրյա կիրառական նշանակություն: Արաքս գետից և նրա վտակներից որսում էին **ծածան, լոքո**, Սևանա լճից՝ **իշխան, կարմրախայտ:** Արաքսում ձուկ բռնում էին գրեթե շուրջ տարի:

---

[1] Տարբեր հնավայրերից գտնվել են բազալտե խարիսխ-ծանրոցներ (տե՛ս **Սարդարյան Ս.**, Հայաստանը քաղաքակրթության օրրան, Եր., 2004):

[2] **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, Եր., 1987, V դպր., գլ. ԻԷ, էջ 339: Ավելի մանրամասն տե՛ս **Նահապետյան Ռ.,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, էջ 14-15:

Ձկնորսության ժողովրդական ավանդական եղանակները: Ուշագրավ են ձկնորսության մեջ կիրառված և ներկայումս էլ կիրառվող ժողովրդական բազմազան եղանակները, որոնցից շատերը տեղական ինքնատիպության կնիքն էին կրում: Դրանցից են՝ **ջրաղացի թարփով ձկնորսությունը**, **պարանով ձկնորսությունը**, **ձեռքով**, **գետի ճյուղը կտրելով, բանդով, կարթով, թարփով** և տարածում գտած այլ եղանակները: Ոչ արդյունավետ եղանակներից էր **խշտով, գետի կեռով ու բահով** ձկնորսությունը: Խոր հնադարում հայոց մեջ տարածում է ունեցել նաև **եռաժանու** և **նիզակի** օգնությամբ ձկնորսությունը: Սևանա լճի ավազանի բնակչության շրջանում տարածված եղանակներից մեկն էլ հնուց ի վեր եղել է **կարթավոր ուռկանը** (Տախտակ 17):

Հավատալիքներ՝ կապված «պահպանիչ» բնույթի ծեսերի ու արարողությունների հետ: Դրանք նպատակ են ունեցել պահպանել ձկնորսական ցանցը, թոռը և ձկնորսական գործիքներն ու ձկան որսը «չար աչքի» ազդեցությունից:

Հավատալիքների մի խումբն էլ առնչվել է «բուժիչ» ծեսերին ու արարողություններին:

Ձկների որոշ տեսակներ օգտագործվել են ինչպես եղանակի ու երկրաշարժերի կանխագուշակման, այնպես էլ ժողովրդական բժշկության բնագավառներում:

Թռչնաբուծական մշակույթ: Հայոց մեջ տնտեսության օժանդակ ճյուղերից էր թռչնաբուծությունը: Հավը, սագը, բադը, հնդկահավը, աղավնին ընտանի թռչնաբուծության մեջ տարածված թռչուններն էին: Հայ ընտանիքը մշտապես թռչուն էր պահում իր ներքին կարիքները բավարարելու, ձուն և միսը նաև վաճառքի, փերեզակների հետ փոխանակելու համար: Թռչունների խնամքը կանանց զբաղմունքն էր: Կինն էր նրանց

կերակրողը, ձվատվությանը հետևողը, թուխս նստեցնողը, հետևում էր ճտերի աճին, բայց նրանց կողմից հավի, թռչնի մորթ անելը մեղք է համարվել, դա տղամարդու գործն էր: Սև հավերը հարգի են համարվել, դրանց արյունը «բուժում» էր հիվանդություններ, գլխի, դեմքի վրա առաջացած ուռուցքներ և այլն: Թռչունների փետուրն օգտագործում էին բարձերի մեջ լցնելու, հազվադեպ նաև վաճառքի համար: Բադ և սագ պահում էին առվակների, գետակների շրջաններում, իսկ հնդկահավը պահելը սակավադեպ էր հայերի շրջանում: Աղավնին՝ տղայոց գործն էր:

Շերամապահական մշակույթ: Շերամապահությունը՝ որպես գյուղական տնտեսության օժանդակ բնագավառ, Հայաստանում բազմադարյա պատմություն ունի: Տնտեսության կարևոր բնագավառներից հետո Հայաստանի պատմաազգագրական մի շարք շրջանների բնակչության տնտեսական կենցաղում այն ունեցել է իր ուրույն տեղն ու նշանակությունը: Այդ զբաղմունքը կոչվել է **բոժոժ պահել**:

Այս հիմնախնդիրների վերաբերյալ ազգագրական հետազոտություն է կատարել Ա. Պետրոսյանը՝ «Հայոց շերամապահական մշակույթը» վերնագրով (Եր., 1987): Գրքում հեղինակը անդրադարձել է շերամապահական մշակույթի տեղին ու դերին, զարգացման փուլերին, յուրահատկություններին:

Ինչպես բուն շերամապահությունը, այնպես էլ մետաքսագործության հայրենիքը Չինաստանն ու Հնդկաստանն են: Շերամապահությունն այդ երկրներում առաջացել է իրարից անկախ: Հայտնի է, որ չինական հնագույն ձեռագրերը գրված են եղել մետաքսե կտորի վրա, իսկ չինացի պատմիչները հիշատակում են մետաքսի օգտագործման մասին դեռևս 2600 տարի առաջ:

Հայաստանը կարևոր տեղ է գրավել մետաքսի միջազգա-

յին առևտրում, քանզի այստեղով էին անցնում առևտրական ուղիները [1]: Մետաքսի ցամաքային առևտրի մենաշնորհը գտնվում էր Իրանի ձեռքում: Իրանից Սև ծով տարանցիկ ճանապարհը ձգվում էր Հայաստանով: Այնտեղով էր անցնում նաև երկրորդ՝ քարավանային ճանապարհը, որը հայտնի էր որպես «Մետաքսի ճանապարհ»: Չինաստանից եկող «Մետաքսի ճանապարհը» Ք.հ. I-II դդ. Միջին Ասիայով ձգվել է Իրանի հյուսիսային առևտրական կենտրոնները, ապա՝ Արաքսի հովիտը՝ Ջուղայի գետանցով դեպի Նախիջևան և Արտաշատ մայրաքաղաք: Բոլոր հիմքերը կան կարծելու, որ հայերը ծանոթ են եղել մետաքսի գործվածքներին դեռևս Ք.ա. IV-III դդ., առավել ևս Ք.ա. II-I դդ.՝ Արտաշեսյան թագավորության հզորության շրջանում: Մետաքսի գործածության մասին բազմիցս են հիշատակել Փավստոս Բուզանդը, Ագաթանգեղոսը և այլ պատմիչներ: Վերջինս խոսում է **ծիրանի** զգեստի մասին, որը նույնպես մետաքսե գործվածք է՝ ներկված հայկական որդան կարմիր ներկով, Եղիշեն կիրառում է «զպատուական հանդերձ», «զօսկեհուռն վերարկուսն», Ղազար Փարպեցին՝ «նափորտ» (ոսկե գործվածք – Ռ. Ն.), Խորենացին՝ «բեհեզ» անվանումները: Միջնադարյան հետագա բոլոր մատենագիրները արձանագրել են մետաքսի առկայության հանգամանքները: Արաբ մատենագիրների հաղորդած տեղեկություններից ակնհայտորեն երևում է, որ այն Հայաստանից զգալի չափով արտահանվել է այլ երկրներ:

Բացառիկ դեր ունեցան հայ, մասնավորապես՝ Ջուղայի վաճառականները մետաքսի միջազգային առևտրում: Ահա թե ինչու պարսից Շահ Աբաս I-ը (1571-1629) ջուղայեցիներին

---

[1] **Манандян А.,** О торговле и городах Армении в связи с мировой торговлей с древних времен (V в. до н.э.), Ер., 1954.

(1603-1604 թթ.) տեղափոխեց Սպահան՝ Նոր-Ջուղա՝ Պարսկաստանում մետաքսի արտադրությունն ու առևտուրը աշխուժացնելու համար: Մետաքսի առևտրին աշխուժորեն մասնակցել են Թավրիզի հայ վաճառականները:

Նշանակալի է եղել հայերի դերը Ռուսաստանում մետաքսի առևտրի և շերամապահության զարգացման գործում: Ռուսական ցարերը արտոնություններ էին շնորհում հայերին: Հայ խոջաները Ալեքսեյ Միխայլովիչ ցարին (XVII դ.) նվիրեցին այսպես կոչված «Ադամանդե գահը», որը հայ վարպետների հոյակերտ գործն էր, ինչպես նաև Բոգդան (Աստվածատուր) Սալթանովի «Խորհրդավոր ընթրիք» նկարի կոմպոզիցիան: Հայերը պարբերաբար ստանում էին արտոնություններ Աստրախանում, Մոսկվայում, Նովգորոդում, Արխանգելսկում իրենց գործունեությունը ծավալելու համար: Պետրոս Ա-ի արտոնությամբ Աստրախանում Սաֆար Վասիլևը հիմնում է մետաքսի գործարան: Նման արտոնություններ են շնորհվում Աննա Իվանովնայի, Ելիզավետա Պետրովնայի և հատկապես Եկատերինա II-ի կողմից: 1773 թ. Ջուղայից Ռուսաստան տեղափոխված Լազար Լազարյանին արտոնություն տրվեց Մոսկվայի մոտ հիմնել մետաքսի գործարան: 1747 թ. այդպիսին հայերը հիմնում են Մոսկվայում, 1752 թ.՝ Աստրախանում: 1763 թ. Եկատերինա II-ի արտոնագրով Մովսես Սարաֆյանն է հիմնում գործարան Աստրախանի նահանգում, Ղզլարում: XIX դ. սկզբներին հայ ձեռներեցները աշխույժ գործունեություն են ծավալում Անդրկովկասում՝ Ռուսաստանի կազմի մեջ անցնելուց հետո: Թիֆլիսում, ապա Պետերբուրգում մետաքսամշակման գործարաններ են հիմնվում: Այնուհետև մետաքսամշակությունը զարգանում է Հարավային Կովկասում, Նախիջևանում, Ղարաբաղում, Երևանում և այլուր:

Հարկ է նշել, որ 1. մետաքսի և դրանից պատրաստված գործվածքների օգտագործումը Հայաստանում հայտնի էր դեռևս Ք.ա. IV-III դդ.: Այստեղով է անցել Արևելքից Արևմուտք ձգվող «Մետաքսի ճանապարհը», որով Հայաստանը եղել է միջազգային առևտրի տարանցիկ երկիր:

2. V-VII դարերի պատմիչներին արդեն հայտնի էր կերպասը՝ «մետաքս», «ծիրանի», «թութ», «զոսկեհուռն դիպակ», «բեհեզեայ», «կտավեայ», «նափորտ», «ապրեշում», «սնդուս» անվանումներով: Սրանց VII-XIV դդ. ավելանում են «մետաքս յորդանց», «բեհեզագործ», «կտավագործ», «ապրեշումագործություն», «ղրմզի» և այլն՝ արդեն արհեստանիշ անվանումներ: Վաղ միջնադարում այն Հայաստանում լայն տարածում ստացած օժանդակ զբաղմունք էր:

3. Շերամապահությունը Հայաստան է անցել Իրանից: Այդ է վկայում նաև նշված եզրույթների, մասնավորաբար՝ «մետաքս», «ապրեշում» եզրույթների իրանական ծագումը:

4. Բագրատունիների թագավորության շրջանում Հայաստանը վերածվում է նաև մետաքսի արտադրության կարևոր կենտրոնի, մետաքսն ու մետաքսե գործվածքները դառնում են արտահանման կարևոր ապրանք: Հայկական պետականության կորստից հետո հայերը իրենց գործունեությունը ծավալում են օտար ափերում՝ մեծ դեր խաղալով տարբեր երկրներում շերամապահության և մետաքսի արտադրության ու զարգացման գործում: Հայերը դառնում են Արևելք-Արևմուտք միջազգային առևտրի ակտիվ մասնակիցներ:

5. Սկսած XVI-XVII դդ.՝ հատկապես XVIII դարում ստանալով ռուսական արքունիքի օժանդակությունը՝ հայերը զգալի ծառայություն են մատուցել ինչպես Ռուսաստանում շերամապահություն հիմնելու, այնպես էլ մետաքսամշակման գործարաններ կառուցելու գործում:

6. Հայերի մեջ դարեր շարունակ մշակվել են ժողովրդական հմտություններ, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ:

7. Կիրառվել են զանազան նմանողական բնույթի հավատալիքներ, որոնք խորհրդանշել են սերնդաճ, զարգացում, բազմացում, ունեցել են սերմը, որդերը և բոժոժները «չար աչքի» հարվածներից պահպանելու նպատակ:

Մետաքսից գործել են շալ, վզնոց, ձեռնոց, գուլպա, վերմակի երես, խուրջին, ձիու վրայի շոր, **չարղաթ՝** կանանց գլխաշոր, կանանց գոտիներ և այլն: Շրջիկ մետաքսագործ արհեստավորները ամռանը շրջել են տեղից տեղ՝ իրենց հետ ունենալով հսկայածավալ **մանջուլիկ** սարքը և մեծ կաթսա՝ բարձած գրաստին: Նրանք վարձատրվել են դրամով կամ բնամթերքով: Տնայնագործական եղանակով ստացված մետաքսաթելը հիմնականում ծառայել է տան ներքին կարիքների բավարարմանը: Այն ներկել են զանազան միջոցներով ու գույներով: Ներկեր ստացել են բույսերի ծաղիկներից ու արմատներից, հանքատեսակներից, ինչպես նաև միջատներից: Լայն տարածում է ունեցել **որդան կարմիր** միջատը: Անանիա Շիրակացին հիշատակել է նաև **գիստորը** ու **որդան կարմիրը**[1]:

Մետաքսը ոսկեգույն ներկելու համար օգտագործել են թթենու դեղնած տերևներից ստացված ներկը: Ներկատներ են եղել Գանձակում, Նուխիում, Շամախիում, Շուշիում, Երևանում և այլ կենտրոններում: Հայտնի էին **շիլաչիների՝ կարմիր գույնի** և **բոյախչիների՝ կապույտ գույնի ներկատները:**

Մեղվապահական մշակույթ: Մեղվաբուծությունը համարվում է յուրացնող տնտեսաձևի եկամտաբեր ճյուղերից մեկը: Այն զբաղվում է մեղրատու մեղուների բուծմամբ՝ մեղր, մեղրամոմ, ակնամոմ, մեղվակաթ, մեղվաթույն, ծաղկափոշի և

---

[1] **Աբրահամյան Ա.,** Անանիա Շիրակացի, Եր., 1941, էջ 349-351:

այլն ստանալու, ինչպես նաև գյուղատնտեսական բույսերի խաչաձև փոշոտումն ապահովելու համար: Միջնադարում մեղվաընտանիքներից ստացված մեղրն ու մոմը օգտագործվել է նաև եկեղեցու կարիքների համար, մոմը՝ վառելու, մոմակերոն պատրաստելու, մագաղաթներ մշակելու, մեղրը՝ պաս օրերին որպես ուտեստ օգտագործելու համար: Հատկապես խորհրդային տարիներին ճյուղը բուռն զարգացում է ապրել և առաջատար դիրքեր զբաղեցրել: Որպես օժանդակ զբաղմունք՝ մեղվապահությունը չի կորցրել իր տնտեսական նշանակությունը նաև մեր օրերում:

Ուստի և՛ ավանդական, և՛ ժամանակակից մեղվապահության ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլև արդիական կիրառական կարևոր նշանակություն, որովհետև հնարավորություն կընձեռի մեծացնելու աշխատունակ տարիքի բնակչության ընդգրկվածությունն այս բնագավառում, ինչպես նաև որոշելու բնակչության հիմնական տնտեսական զբաղմունքների համակարգում մեղվապահության՝ իբրև եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուրի տեղն ու նշանակությունը:

Հայաստանը համարվում է մեղվաբուծության հնագույն կենտրոններից մեկը: Այստեղ մարդը մեղվին ծանոթ է տակավին իր պատմության արշալույսից և, ինչպես վկայում են հնագույն ժայռապատկերների և հետագա աղբյուրների նյութերը, մինչև ընտելացնելն արդեն բավականաչափ պատկերացում է ունեցել մեղվի վարքի, կազմվածքի, մեղրի, մոմի, խայթի, թույնի վերաբերյալ:

Մեղվին ընտելացնելը և բուն մեղվապահությամբ զբաղվելը մարդուն հնարավորություն է ընձեռել ժամանակի ընթացքում ավելի մոտիկից ճանաչելու և ըստ ամենայնի գնահատելու մեղվի արժանիքները:

Մեղվաբուծությունը Հայաստանում զարգացել է մի քանի փուլով. ա) **վայրի մեղվաբուծություն** (մեղրը և մոմը հայթայթում էին վայրի մեղուների բներից), **փչակափեթակային** (մեղուներին պահում էին փչակներում, չքանդվող փեթակներում), **կոճղափեթակային մեղվաբուծություն** (մեղուներին պահում էին կոճղերում), բ) տնային՝ ծառի դալար ճյուղերից գործած՝ քթոց, **պլոլ** և փայտե **շրջանակավոր մեղվաբուծություն** (մեղուներին բուծում էին հանվող շրջանակներով հավաքվող փեթակներում), (Տախտակ 18)։

Ազոխում (Արցախ) և Ուղտասարում (Սյունիք) գտնված հնագիտական հուշարձանների վրա մեղուների հետքերը վկայում են այն մասին, որ դեռևս Ք.ա. III-II հազարամյակներում մարդն այստեղ գիտեր մեղուների մասին և սկսել է նախ զբաղվել վայրի մեղուների մեղրի հավաքմամբ, իսկ հետո՝ մեղվաբուծությամբ[1]։

Ամենահավաստի տեղեկությունները, թերևս, գրավոր աղբյուրների տեղեկություններն են։ Հույն պատմիչ Քսենոփոնը վկայում է, թե հույների 10.000-ոց զորքի նահանջի ժամանակ, Հայաստանով անցնելիս կոլխերի սահմանագծի մոտ հանդիպել է մեղվի բազմաթիվ փեթակների, և որ զինվորներն ուտելով դրանց մեղրից, թունավորվել են ու նմանվել հարբածների[2]։ Ըստ հույն աշխարհագիր Ստրաբոնի՝ արմենների երկրում՝ Արաքսենում մեղուները ծառերի բներին և ճյուղերի մեջ փեթակներ են շինում, և մեղրը տերևների վրայով հոսում է։ Ստրաբոնը վկայում է նաև, որ հայերը, խալդերը մեղրը օգտագործել են թշնամու զինվորներին ոչնչացնելու համար. «Տեղի

---

[1] **Осипян С. А.,** В горах Карабаха, «Пчеловодство», 1974, № 1, էջ 11, **Կարախանյան Գ. Հ., Սաֆյան Պ. Գ.**, Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Եր., 1970, աղ. 48, նկ. 4։

[2] **Քսենոփոն,** Անաբասիս, Եր., 1970, էջ 79-82։

բնակիչները (նկատի ունի հայ-արմենիներին - Ռ. Ն.) ծառերի չբացված բողբոջներից ստացված շշմեցնող մեղրով լիքը լցված ամաններ են դրել ճանապարհի եզրին՝ երբ զինվորները խմել են այդ մեղրը, կորցրել են գիտակցությունը: Ապա տեղացիները հարձակվել ու առանց դժվարության սպանել են նրանց»[1]: Այդ մեղրը ստացվում էր տեղի թունավոր բուսատեսակների նեկտարից: Որպեսզի մեղրը թունազերծվեր, տեղացիները այն եռացնում էին, ապա օգտագործում: Հույն մեկ այլ պատմիչ՝ Դիոդորոս Սիցիլիացին (Ք.ա. I դ.), վկայում է, թե Հայաստանում, «տեղաբնիկներին հայտնի է մի ծառ, արտաքինով կաղնու նման, որի տերևներից մեղր է ծորում, ոմանք այն հավաքում են և առատորեն օգտագործում իրենց սննդի կարիքների համար: Այնտեղ կա նաև թռչող մի կենդանի՝ **անթրեդոն** անվամբ. սա փոքր է, բայց մեծագույնս օգտավետ: Սրանք լեռների տարբեր ծաղիկներից հյութ են հավաքում, տեղափոխում քարաձերպերի ճեղքերը և շանթահարված ծառերի փչակների մեջ՝ այնտեղ խորիսխ են պատրաստում և արտադրում հիանալի քաղցր մեղր»[2]:

Գ. Սրվանձտյանցը նկատի ունենալով Տարոն լեռնաշխարհի քաղցր գազպեն, իր երկերից մեկը կոչել է «Մանանա», որի առաջաբանում էլ տալիս է բացատրությունը[3]:

Ուշագրավ է, որ մեղրի անվանումը հնագույն ժամանակներից պահպանվել է գետանվան՝ Մեղրագետ, և տեղանվան մեջ՝ Մեղրի: Մշո դաշտում են հիշատակվել Մեղրաձոր ան-

---

[1] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Հունական աղբյուրներ-1: Ստրաբոն, քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան, Եր., 1940, գ. II, գլ. I, 14, գ. XI, գլ. VII, 2:

[2] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Հին հունական աղբյուրներ, Բ, Դիոդորոս Սիցիլիացի, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1985, գ., գ. 14, XVII, գլ. 75, 3-6:

[3] **Գ. Սրվանձտյանց,** Երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 119:

վամբ գետակը, Մեղրաքար ժայռը, Մեղրագոմ գյուղը, Մեղրաձոր կիրճը:

Մխիթար Հերացին (XII դ.) «Ջերմանց մխիթարութիւն» գրքում զանազան հիվանդությունների դեղատոմսեր է տալիս, որոնց մի զգալի մասի բաղադրության մեջ անպայման մտնում են մեղրը և մոմը: Այսպես, փորկապության, գլխացավի, այտուցման, զանազան վերքերի և այլ հիվանդությունների դեպքում մեղվի արտադրանքը այս կամ այն համամասնությամբ մտցրել է բաղադրատոմսերի մեջ, մի երևույթ, որը, անշուշտ, առնչություն ունի ժողովրդական բժշկության հետ, որն այժմ էլ մեծ կիրառություն ունի:

Ամիրդովլաթ Ամասիացին (XV դ.) իր բազմաթիվ աշխատություններում ներկայացրած 3754 դեղատոմսերի մեջ լայնորեն օգտագործել է մեղվի արտադրանքները որպես կարևոր բուժիչ միջոցներ: Ըստ նրա՝ մեղրը մեկուսիչ է, հականեխիչ և այլն[1]:

Մեղվապահության ժողովրդական եղանակների շուրջ: Հայոց մեղվապահության մշակույթում փեթակների տարբեր անվանումներ կան. Սասունում այն կոչվել է **փլուլ** կամ **պլուլ**, Վայոց Ձորում՝ **տոլոզ** և այլն, բայց առավել տարածված են **փեթակ** կամ **քթոց** անվանումները:

Մարդու կողմից դարերի ընթացքում մեղվի համար պատրաստվել են տարբեր կացարաններ՝ կոճղավոր, հյուսածոգլանաձև, կավե գլանաձև, հարդե-ծղոտե (ծղոտե զամբյուղավոր), գրքաձև և տախտակե շրջանակավոր փեթակներ:

Մեղրը բացառիկ կարևոր սննդամթերք և դեղամիջոց է: Այն մարդու օրգանիզմին և արյան շրջանառությանը հաղոր-

---

[1] Ամիրդովլաթ Ամասացւոյ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1926, էջ 380:

դում է եռանդ, մկանային ամրություն, նյարդերի հանգստություն, թեթևություն, թարմություն, մարդու տրամադրության բարձրացում, խաղաղ ու հանգիստ քուն, ունի հաճելի համ ու բուրմունք: Նրա մեջ կան երկաթի, պղնձի, մանգանի աղեր, որով այն նաև արժեքավոր դեղ է, բուժում է չարորակ նորագոյացություններ, վերքեր, ուռուցքներ, ճիճվոտություն և այլն: Մեղրը հզոր բուժկանխարգելիչ միջոցների մի ամբողջ զինանոց է:

Մեղրը համարվում էր «Աստվածների սնունդ»: Կարևոր նշանակություն ունեն մեղուների կենսագործունեության նյութերը՝ ծաղկափոշին, մեղվակաթը, ակնամոմը և այլն:

Գրականություն

1. **Առաքելյան Ա.,** Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում, Ստեփանակերտ, 1959:
2. **Բդոյան Վ.,** Հավաքչության վերապրումների պատճառները, աշխատանքի բնույթը, կազմակերպման եղանակները // Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 4-12:
3. **Գասպարյան Ա.,** Մեղվապահությունը Հայաստանում (ՊԱՌԻ), Երևան, 1989:
4. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Երևան, 1946:
5. **Նահապետյան Ռ.,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմ. ֆակ. «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2022, էջ 173-230:
6. **Պետրոսյան Ա.,** Շերամապահական մշակույթը Հայաստանում (ՊԱՌԻ), Երևան, 1987:
7. **Պետրոսյան Ա.**, Ձկնորսական մշակույթը Հայաստանում, Երևան, 2015:
8. **Петросян А., Обосян С.,** Шелководство и пчеловодство // Армяне, с. 143-149.

ԹԵՄԱ 4
ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

4.1. Հայոց տնայնագործական մշակույթը

Հայոց արտադրական մշակույթում առանձնահատուկ տեղ են գրավել տնայնագործությունն ու արհեստները: Ծագելով դեռևս նեոլիթյան դարաշրջանում (Ք.ա. IX-VI հազ.) երկրագործության և անասնապահության հետ զուգընթաց՝ զարգանալով ու կատարելագործվելով հասել են մինչև մեր օրերը:

«Տնայնագործություն» և «արհեստագործություն» հասկացությունները, դրանց տարբերությունները:

Ինչ է տնայնագործությունը: Տնայնագործությունը ձեռքի աշխատանքի վրա հիմնված մանր արտադրություն է, որտեղ չկա աշխատանքի հասարակական բաժանում, որն իրականացվում է գյուղական բնակավայրերում և որը կոչված է եղել բավարարելու ընտանիքի ինքնաբավ կարիքները: Դա տնային մանր արդյունաբերություն է:

Հարցեր և առաջադրանքներ:

Տնայնագործության և արհեստների հիմնական ճյուղերը, դրանց հարաբերակցությունը, տարածվածության աստիճանը գյուղում և քաղաքում: Տնայնագործությունը հայոց ավանդական ընտանիքում. բրդամշակություն, կաթնամշակություն, կաշվի, բամբակի, վուշի, փայտի մշակում, թաղիքագործություն, գորգագործություն, մազմանություն (պարանագործություն), ոստայնագործություն, կավագործություն, կաշեգործություն, կոդովագործություն, դարբնություն, դերձակություն, որմնադրություն, փայտի մշակում, կահույքագործություն, փայտե հողը վարող գործիքների պատրաստում, շենքեր ծած-

կելը, ատաղձագործություն, հյուսնություն և այլն: Դրանց հետ կապված աշխատանքային գործիքներն ու աշխատանքի նկարագիրը: Աշխատանքի բաժանումն ըստ սեռի և հասակի: Արտագնա աշխատանքի մեկնման պատճառները անցյալում և ներկայումս (որմնադիրներ, հյուսներ, ասֆալտ փռողներ, շինարարներ և այլն): Տնայնագործության աստիճանական անհետացումը և զարգացած արհեստների ներթափանցումը հայկական գյուղ:

Քաղաքային արհեստները միջնադարում և հետագայում, ընդհուպ մինչև XX դարը: Արհեստների ճյուղերի տարածվածությունը և դրանց առանձին օջախների գնահատականը:

Կավագործություն, դարբնություն, զինագործություն, պղնձագործություն, ոսկերչություն, կաշեգործություն, ջուլհակություն, թաղիքագործություն, ոստայնանկություն և ասեղնագործություն, գորգագործություն, փայտամշակություն, շինարարական արհեստներ, կազմակերպման սկզբունքները, աշխատանքային գործընթացները XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին:

Տնայնագործական և արհեստագործական աշխատաեղանակները, վայրը, գործիքները և դրանց հետ կապված հավատալիքները, ծեսերն ու սովորույթները:

Տնայնագործության և արհեստագործության դերը Հայաստանում արդյունաբերական ձեռնարկությունների՝ նախ արտելների, ապա ֆաբրիկաների և գործարանների առաջացման գործում: Մեր օրերում քաղաքային արհեստների կենտրոնացումը ֆաբրիկաներում և գործարաններում:

Տնայնագործություն: Գյուղական տնային մանր արդյունաբերության մեջ մտնում էին՝ բրդամշակությունը, դերձակությունը, թաղիքագործությունը (քեչա), կարպետագործությունը,

գորգագործությունը, շալագործությունը, պարանագործությունը (մազմանություն), կաշեգործությունը, ատաղձագործությունը, հյուսնությունը, որմնադրությունը, ձիթհանությունը, ալրաղացությունը, կաթնատնտեսությունը, դաշտամշակության, բանջարաբուծության, այգեգործության, անասնապահության, որսորդության, ձկնորսության, թռչնաբուծության, մեղվապահության հետ կապված իրերի և գործիքների զգալի մասի արտադրությունը: Գյուղական արհեստագործությունը շատ վայրերում չէր կարողանում բավարարել բնակչության պահանջները: Այդ պակասը լրացնում էին քաղաքային այն արհեստավորները, որոնք հիմնականում արտադրում էին գյուղատնտեսական գործիքներ, սայլեր, կենցաղային առարկաներ, զենքեր, գործվածքներ: Ժամանակի ընթացքում տնայնագործությունը թուլանում և վերանում է XIX դարի վերջում և XX դարի սկզբներին, իսկ վերջնականապես՝ խորհրդային իշխանության առաջին տարիներին:

Գյուղական տնայնագործները և արհեստավորները դարեր շարունակ տեղում արտադրանք տալուց բացի, անհատ կամ խմբովի մեկնում էին նաև հարևան բնակավայրերը տեղական կարիքները բավարարելու համար: Այդպիսի խմբեր էին կազմում պայտարարները, ատաղձագործները, որմնադիրները, վարսավիրները, թաղիքագործները և այլն:

Ամենալայնն ու տարածվածը **բրդի մշակումն** էր, որով զբաղվում էին հիմնականում կանայք, բացի ոչխարը խուզելուց: Բուրդը թակերով լվացվում էր գետափերին, աղբյուրների մոտ: Բուրդը զգելու գործիքն էր **սանդերքը, անեղը** (Տախտակ 17)**:** Սանդերքով աշխատում էին կանայք, իսկ անեղով՝ նաև տղամարդիկ: Բուրդ լվանալը, զգելը, հիմնականում իրականացվում էր ազգակից և հարևան ընտանիքների խմբային աշ-

խատանքով, փոխադարձ օգնության սկզբունքով: Նրանց թիվը երբեմն հասնում էր 30-ի: Կոլեկտիվ, խմբային այդ աշխատանքը կոչվում էր **մաճի** (բառացի՝ գալուստ), իրականացվում էր կանանց և աղջիկների կողմից: Դրա համար էլ նման տները Կարնո հայության մեջ կոչվում էին **գեղտուն**՝ բուրդ զզելու տուն: Այս խմբային աշխատանքը հարսնացու ընտրելու, հավանելու մեծ հնարավորություն էր ընձեռում:

Շալագործություն: Հայաստանի անասնապահական շրջաններում տնայնագործության մեջ ամենակարևոր բնագավառներն էին՝ շալագործությունը, գորգագործությունը, թաղիքագործությունը[1]: Այս արհեստի հարատևումը հիմնականում պահպանված էր տղամարդկանց շալե անդրավարտիքների, բաճկոնների, չուխաների, արխալուղների, կանանց աշխատանքային դովրերի՝ փեշի և գոգնոցների, երբեմն էլ՝ խրխաների (վերնազգեստի տեսակ) պատրաստման գործընթացներով: Երեխաների վերնազգեստներն էլ հաճախ շալից էին կարվում: Շալագործության դազգահը **շալի հոր** էր կոչվում:

Հյուսվածքագործություն: Հայերի տնայնագործական մշակույթի հնամենի զբաղմունքներից էր նաև հյուսվածքագործությունը, որն այսօր էլ կատարվում է **շյուղերով** և **հելուններով:** Հյուսվածքների շարքի տարրերից են՝ գուլպան, հողաթափերը, ձեռնոցները, թիկնոցը, շալը, կարճ վերնազգեստը, վզնոցը, տաք հագուստները, հագ ու կապի այլ պարագաներ: Ջուլհակությունը կրում էր անհատական-ընտանեկան արտադրության բնույթ:

Բրդից գործված շալը առանց վերամշակման չէր կարող հագուստի նյութ դառնալ: Այն պետք էր տաք ջրով թրջել և երկար ժամանակ տրորելով խտացնել: Այդ գործողությունը կոչ-

[1] **Вермишев Х. А.,** նշվ. աշխ., էջ 182-184:

վել է **շալ լմել**: Շալ լմելը նույնպես փոխադարձ օգնությամբ, հարևանական-ազգակցական-խմբային ջանքերով էր իրագործվում: Մասնակիցները առատ հյուրասիրության էին արժանանում:

Անասնապահական շրջաններում, պայմանավորված բրդի առատությամբ, լայն տարածում են ունեցել նաև գորգագործությունը, կարպետագործությունը: Գորգի համար ընտրվում էր ոչխարի գարնան բուրդը: Կարպետը, բրդե պարկերը, խուրջինները, անկողնապարկերը՝ **մաֆրաշները,** ընտանեկան տնայնագործական պահանջված արտադրանքն են համարվել: Դրանք գործվում էին հասարակ բրդից կամ բրդի և չոփի խառնուրդից:

Հայոց տնայնագործության մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում **խեցեգործությունը**, որը առավել զարգացած էր Արարատյան դաշտում, Կարնո և Մշո կիրառական արվեստում: Այն ևս համարվել է կանանց ձեռքի աշխատանք:

Թաղիքագործություն: Թաղիք (քեչա) թափող արհեստավորները, որ շատ հաճախ Մշո, Վասպուրականի, նաև Ապարանի շրջաններից էին, շրջիկ խմբեր կազմելով՝ անցնում էին բնակավայրից բնակավայր, ձմռան ամիսներին իրականացնում տեղական բնակչության պահանջները: Նրանք միաժամանակ հմուտ հեքիաթասացներ ու երգիչներ էին, հյուրընկալվում էին գյուղական օդաներում իրենց աշխատանքի գործիքներով, զվարճացնում տեղացիներին:

Խսիրագործություն: Խսիրը գյուղական կենցաղում տարածված փռոցներից էր՝ հողե կամ քարե բազմոցների վրա խոնավությունը մեկուսացնելու նպատակով: Խսիրը (փսիաթ) հյուսվում էր առանձնահատուկ՝ **ջիլ** (ճիլ) կամ **ղոնա** խոտից: Դրանք աճում էին գետամերձ, լճամերձ ճահճուտներում:

Խսիրագործությունը մարդու հնագույն զբաղմունքներից էր: Խսիրը, որպես հյուսվածք, նախորդել է գործվածքի այլ տեսակների: Հայոց մեջ այն լայնորեն տարածված տնայնագործական զբաղմունք էր և մինչև XX դարի կեսերը պահպանվել էր բոլոր պատմաազգագրական շրջաններում: Խսիրը աղքատ ընտանիքների համար անկողին է ծառայել: Հնագիտական մի շարք հուշարձանների՝ Արենի-1 քարանձավի էնեոլիթյան շերտից, Նոր Օշականի միջին բրոնզեդարյան, Կարմիր բլուրի բերդաքաղաքի՝ Թեյշեբայինիի (Ք.ա. VII դ.), Անիի (IX-XIV դդ.) պեղումներից հայտնաբերվել են խսիրների շատ մնացորդներ, ինչը վկայում է դրանց վաղնջական ծագման ու շարունակական կիրառության մասին:

Մազմանություն: Մազմանությունն իրականացնում էին յուրահատուկ ճախարակ ունեցող տղամարդիկ: Տարվա տաք եղանակներին շրջելով գյուղերում, մազմանները այծի մազից, տավարի պոչի մազից և բրդի տեսակներից պարաններ, սայլի ճոպաններ էին հյուսում:

Մաղագործություն: Այս զբաղմունքի վերաբերյալ ուշագրավ հետազոտություն է կատարել Վ. Փափազյանը[1]: Մաղերը լինում էին տարբեր՝ փոկե մաղ՝ կաշվե թելերից հյուսված, մազե մաղ, ձարե մաղ՝ պղնձե նուրբ թելերից պատրաստված: Մաղագործը օրական կարող էր հյուսել 6-8 մաղ: Մաղագործների զբաղմունքի մեջ էր մտնում նաև փայտե դույլերի, խոզանակների, ձիթհանքերի մազե սալաների, կողովների, զամբյուղների, քամիչ սալաների պատրաստումը: Վերջիններիս համար որպես հումք էին ծառայում հորթի կաշին, մորթիները, ձիու պոչի մազերը, տախտակաթերթը, ծառաճյուղերը: Կաշին, մորթին և մազը հայ բոշաները, Գրիգոր Վանցյանի հաղորդ-

[1] **Փափազյան Վ.,** Հայ բոշաներ, ԱՀ, գ. Գ, էջ 74-90 և գ. Դ, էջ 203-275:

ման համաձայն, ձեռք էին բերում գյուղերում ապրանքափոխանակության կարգով (տե՛ս «Մուրճ», 1892, էջ 7-9):

Տարբեր մեծության անցքերով մաղը օգտագործվել է՝ որպես հացահատիկը աղբից մաքրող, զտող հարմարանք: Միջնադարյան Հայաստանում մաղագործությունը չի ենթադրում առանձին արհեստանոցի գոյություն: Սովորաբար այս արհեստով զբաղվողներն աշխատում են իրենց տներում և արտադրանքը վաճառում տեղից տեղ շրջելով:

Սկսած XVI-XVII դարերից՝ հայ գնչուներն իրենց ձեռքում են կենտրոնացնում մաղագործությունը, որը դառնում է նրանց հիմնական ու կենսական զբաղմունքներից մեկը: Դրա վկայությունն է այն, որ բոշաներին նաև «մաղագործ» էին կոչում:

Դերձակություն: Յուրաքանչյուր ընտանիք ուներ բոլոր ներքնազգեստները կարող դերձակ, կային նաև գյուղական բնակավայրերում վերնազգեստների ձևարարներ ու կարողներ, որոնք պատվերով կատարում էին իրենց գործը՝ պահպանելով տեղական ազգային տարազի ձևերը:

Մուշտակակարներ: Բացի սեփական բնակավայրից, սպասարկում էին նաև հարևան գյուղերը: Դրանք կոչվում էին նաև **թարզի**:

Խեցեգործություն և բրուտագործություն: Կավի մշակումը և խեցեղեն պատրաստելու տնայնագործական արհեստը գյուղական կարևոր զբաղմունքներից էր և լայն տարածում ուներ: Ունենալով տնայնագործական բնույթ՝ խեցեղենի արտադրությունը երեք տիպի էր. առաջինը և ամենատարածվածը տնային արտադրությունն էր՝ սեփական սպառման նպատակով, երբ արտադրողները կանայք էին: Երկրորդը՝ շրջիկ բրուտագործ տղամարդու ձեռքով տարբեր գյուղերում թոնիր պատրաստելն էր: Երրորդ եղանակը խեցեղենի ապրանքային ար-

տադրությունն էր՝ աշխատանքում ընտանիքի նաև տարբեր անդամների ներգրավմամբ: Կատարում էին նաև ապրանքափոխանակություն:

Բրուտները հիմնականում կանայք էին, որոնք մեծ մասամբ չունենալով ձեռքի դուրգ, իրենք պտույտ էին գործում պատրաստվող ամանի, անոթի շուրջ: Սակավ դեպքերում ունենալով ձեռքի դուրգ (տուրք)՝ նստած էին աշխատում: Խեցեղենի թրծումը կատարվում էր թոնրի մեջ կամ դրսում խորը փոսի մեջ:

Կողովահյուսություն: Ամեն տեսակ քթոցներից բացի, պատրաստվում էին զամբյուղներ (ծղիկ)՝ հիմնականում հացենու, կաղնու թփի ճյուղերից:

Գյուղական տնայնագործական զբաղմունք էր դարբնությունը, որն արդեն գրեթե արհեստի մակարդակի էր հասել: Արտադրվում էին աշխատանքի հողագործական գործիքներ, կենցաղային իրեր, անիվներ, պայտեր, թեև դարբնությունը առավել չափով կենտրոնացված էր քաղաքներում: Դրանց թվում էր նաև պղնձագործությունը:

Արհեստագործություն: Համքարային կազմակերպություններ: Սա խոշոր արտադրություն է, որ կենտրոնացված էր քաղաքներում, և որը թեև դարձյալ հենված էր ձեռքի աշխատանքի վրա, բայց այստեղ կար աշխատանքի մասնագիտական, հասարակական բաժանում: Սա տնայնագործության զարգացած ձևն է: Տնային մանր արդյունաբերության հետագա զարգացումը հանգեցրել է արհեստների: Կար նաև աշխատանքի սեռատարիքային բաժանում: Արհեստները առաջացել են մարդկային հասարակության վաղ ժամանակաշրջանում և մինչկապիտալիստական արդյունաբերության բնորոշ ձևերն էին: Քաղաքային արհեստների արտադրանքը կոչված էր բավարարելու շուկայի պահանջները:

Մետաղագործական բոլոր արհեստները իրականացրել են տղամարդիկ, իսկ գործվածքեղենի արհեստները՝ հիմնականում կանայք: Նշենք, որ արհեստների զարգացումը Հայաստանում պայմանավորված է եղել՝ 1. երկրագործության և անասնապահության բարձր մակարդակով, որը բավարարում էր նաև տնայնագործի հումքային պահանջները, 2. երկրի ընդերքի բնական հարստություններով: Ահա թե ինչու բարձր զարգացման էին հասել կաշեգործությունը, ջուլհակությունը, մանածագործությունը, կոշկակարությունը, դերձակությունը, ոստայնանկությունը (մետաքսագործություն), գորգագործությունը, կավագործությունը, բրուտագործությունը (կարասներ, կուժեր, խնոցիներ, կճուճներ ևն), փայտամշակությունը, շինարարական արհեստները (որմնադրություն, հյուսնություն, քարակոփություն, ատաղձագործություն), երկաթագործություն, որը բավարարում էր ազգաբնակչության համար կարևոր երկաթեղեն իրերի ու գործիքների պահանջները, նաև զինագործությունը, դարբնությունը, ոսկերչությունը, պղնձագործությունը: Նշենք, որ Հայաստանը հարուստ էր շինարարական քարի և ավազի տարբեր տեսակներով, երկաթի և պղնձի, ոսկու և արծաթի հանքերով (Ռշտունիք, Սասուն), ոսկու հանքերով (Սոթքի և Սյունիքի հանքեր, պատմական Սպեր գավառ), պղնձի հանքերով (Ալավերդի, Արցախ, Սյունիք), քարի (տուֆ) (Շիրակ), նաև ավազի հանքերով: Ոսկերչության, արծաթագործության և երկաթագործության կենտրոններն էին՝ Վասպուրականը՝ Վան քաղաքով, Սասունը, Տարոն աշխարհը, Շատախը, Արաբկիրը, Սեբաստիան, Մալաթիան, նշանավոր կենտրոններ՝ Արտաշատ, Դվին, Կարին, Բաղեշ քաղաքները, հետագայում՝ Գյումրին և Երևանը:

Երկաթագործությունից ավելի հին է պղնձագործությունը,

որի զարգացածությունը վկայված է նաև XIX-XX դդ. արտադրությամբ: Պղնձագործական արհեստանոցները մեծ մասամբ տեղավորված էին քաղաքներում: Հիմնականում արտադրվում էր տարբեր տեսակի ամանեղեն: Նրանում հիմնականում զարգացած էր արտադրանքը զարդարելու արվեստը՝ փորագրությամբ ու դրվագմամբ: Ժողովրդական կիրառական արվեստի բնագավառում մեծ տեղ ուներ ոսկերչական-արծաթագործական արհեստն իր զարգացած արվեստով:

Նկատենք, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հայաստանը արհեստագործական, տնայնագործական երկիր էր, չկար ֆաբրիկա-գործարանային արտադրություն, բացառությամբ Երևանի Շուստովի և Սարաջևի գինու և օղու փոքր գործարանների, Ալավերդու պղնձաձուլական գործարանի: Որո՞նք էին պատճառները: Հայաստանի շուկան շատ փոքր էր, գնողունակությունը ցածր, կտրված էր հաղորդակցության ուղիներից, ուստի և հայ ձեռներեցներն իրենց կապիտալները արտահանում էին երկրից դուրս, ներդնում հիմնականում մայրուղիների հանգույցներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Աստրախանում, Մոսկվայում, Պետերբուրգում, Ղրիմում և այլուր: Արևելյան Հայաստանը XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին ներկայանում էր երկու փոքր քաղաքներով, 13-16 հազ. բնակիչներով՝ Գյումրին և Երևանը, որոնք ընդամենը գավառական կենտրոնների դեր էին կատարում: Նշենք, որ դրանց փոխարեն հայ արդյունաբերողները մեծ հռչակ էին վայելում Բաքվում՝ Մանթաշյանները, Թիֆլիսում՝ Արամյանները, Աստրախանում՝ Սարաֆյանները և այլն:

Արևելյան Հայաստանում արհեստագործական խոշոր կենտրոնը Ալեքսանդրապոլն էր, որտեղ Երևանի համեմատությամբ, արհեստագործության որոշ ճյուղեր ավելի բարձր

զարգացման էին հասել: Այստեղ բնակչությունը 1839 թ. հաշվվում էր 16337 մարդ: Ալեքսանդրապոլում (Կումայրի) 1860-ական թթ. եղել են 1460 մեծ ու փոքր խանութներ, 17 քարավանատներ, 36 գործատներ:

4.2. Արհեստագործական մշակույթը: Համքարական կազմակերպությունները քաղաքներում, դրանց դերը, նշանակությունը, դրոշները և սովորությունները

Հարցեր և առաջադրանքներ:

Դրանց առաջացման նախադրյալները, ժամանակը, անվանումները, տարածվածության մակարդակը, կանոնադրությունը, կազմակերպման սկզբունքները, կազմը, անդամների իրավունքներն ու պարտականությունները, դերերը, դրոշները: Սովորութական իրավունքը համքարություններում:

Համքարության ներքին և վարչական կառուցվածքը:

Համքարային կազմակերպությունները Անդրկովկասի հայաշատ քաղաքներում: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և համքարությունների դերի թուլացումը:

Համայնական տոնացուցային ծեսեր: Ներարհեստագործական ծեսեր և արարողություններ: Համայնական և ներարհեստային նշանակության հավատալիքներ և սնահավատություններ:

Համքարությունների առաջացումը հետևանք էր մրցակցային արհեստագործության զարգացման: Դրանց զարգացմանն ու ծավալմանը մեծապես նպաստել են IX-XI դդ. հայկական պետականության վերականգնման, օտարի լուծը թոթափելու, մասնավորապես Բագրատունյանց թագավորության տարիներին ընձեռված հնարավորությունները: Առանձին արհեստատեսակներ առավել արտադրողական դարձնելու հա-

մար միավորվում էին ընկերակցությունների մեջ՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով և՛ արտադրությունը, և՛ վաճառքի կազմակերպումը: Համքարությունները հիմնված էին լայն փոխադարձ օգնության հիմունքներով: Քանի որ արհեստավորները իրենք էլ վաճառում էին իրենց արտադրածը, ուստի նրանք պետք է հոգ տանեին նաև արտադրանքի սպառման համար: Համքարությունները, իրենց ձեռքը վերցնելով արհեստի տվյալ ճյուղը, հոգ էի տանում թե՛ արտադրության, թե՛ արտադրանքի սպառման մասին, այդ նպատակով զբաղեցնելով քաղաքներում առանձին շարքեր, ընդհանուր շենքեր: Համքարություններին հաջողվում է վերացնել մրցակցությունը իրենց ներսում և մյուս համքարությունների հետ: Համքարությունների մեջ միավորված արհեստավորները պարտավոր էին խիստ կերպով պահպանել իրենց արհեստի գաղտնիքը: Արհեստավորներն ու առևտրականները զբաղեցնում էին հատուկ թաղամասեր, որոնք նաև միաժամանակ շուկայի էին վերածվել: Արևելյան Հայաստանում արհեստագործական խոշոր կենտրոնը Ալեքսանդրապոլն էր:

Առաջին արհեստավորական միությունները կոչվել են **եղբայրություններ**, հետագայում՝ Արևելյան Հայաստանում՝ **համքարություններ**, Արևմտյան Հայաստանում՝ **էսնաֆություններ**: Սրանք ունեին իրենց ղեկավար վարպետը, որ ընտրվում էր ընդհանուր ժողովում: Մի վայրի համքարությունները, որ կազմավորվել են ըստ արհեստների, ղեկավարվել են վարպետաց վարպետի (ուստաբաշու) գլխավորությամբ, որն իր դիրքով և հեղինակությամբ հայտնի անձնավորություն պետք է լիներ: Վերջինս ուներ իր տեղակալները՝ **աղսաքսկալները**, գանձապահը, ցրիչը և այլն: Ամեն մի համքարություն ուներ իր դատարանը, բանավոր կամ գրավոր կանոնադրությունը: Կանոն-

ները կարգավորում էի արհեստավոր վարպետների, նրանց օգնականների ու աշակերտների ներքին փոխհարաբերությունները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, աշակերտներին վարպետություն հասցնելու պայմանները, տարիքը, տևողությունը, տոնակատարությունների կարգը:

Համքարություններն ունեցել են նաև իրենց սեփական դրոշակը՝ տվյալ արհեստին յուրահատուկ որևէ խորհրդանշանով:

Համքարությունների հետ կապված ուսումնասիրությունները տե՛ս գրականության ցանկում:

Գրականություն

1. **Աբրահամյան Վ.,** Արհեստները Հայաստանում 4-18-րդ դարերում, Եր., 1956:
2. **Աբրահամյան Վ.,** Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբ), Եր., 1971:
3. **Առաքելյան Բ.,** Քաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դարերում, հ. 1, Եր., 1958, հ. 2, Եր., 1964:
4. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., ԵՊՀ հրատ., 1974, էջ 54-57:
5. **Դավթյան Ս.,** Հայկական ժանյակ, Եր., 1966, **նույնի՝** Հայկական ասեղնագործություն, Եր., 1972, **նույնի՝** Հայկական կարպետ, Եր., 1975:
6. **Թադևոսյան Ա.,** Դարբնության մշակույթը Հայաստանում // ՀԱԲ, պր., 23, Եր., 2007:
7. **Թեմուրճյան Վ.,** Գորգագործությունը Հայաստանում, Եր., 1955:
8. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Եր., 1946:
9. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Եր., ԵՊՀ հրատ., 2022, էջ 231-268:

10. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագիր, էջ 51-56:

11. **Պողոսյան Ա.,** Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ // ՊԲՀ, 2001, 2, էջ 236-250:

12. **Սեղրոսյան Կ.,** Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում // ՀԱԲ, գ. 6, Եր., 1974, էջ 159-252:

13. **Ахвердов Ю.,** Тифлисские амкары, Тифлис, 1883.

14. **Вардумян Д., Еремян С., Карапетян Э., Лисициан С.,** Армяне // Народы Кавказа, т. II, М., 1962.

15. **Егиазаров С.,** Городские цехи, Казань, 1881.

16. «Армяне», Серия «Народы и культуры», М., 2012, с. 162-205.

ԹԵՄԱ 5
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԸ: ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1. Ժողովրդական փոխադրամիջոցները որպես սոցիալ-մշակութային ֆենոմեն: Հայկական լեռնաշխարհը որպես գրաստային ու լծկան-անվային փոխադրամիջոցների բնօրրաններից մեկը

Հայաստանը հետիոտն, գրաստային, անիվավոր և անանիվ լծկան փոխադրամիջոցների բազմազան տեսակների բնօրրաններից էր՝ տեղական առանձնահատկություններով հանդերձ:

Հարցի պատմաազգագրական ուսումնասիրության գիտաճանաչողական և գործառութային նշանակությունը ազգագրական գիտության մեջ (Լ. Պետրոսյանի Հայ ժողովրդական փոխադրամիջոցները (պատմաազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, հ. 6), Վ. Բդոյանի (Հայ ազգագրություն, Եր., 1974) հետազոտությունների արդյունքները և այլն): Փոխադրության, հաղորդակցության և կապի ժողովրդական միջոցների դերը և տեղը էթնիկ մշակույթների համալիրներում, ազգային ավանդույթներն ու զարգացման միտումները:

Հայաստանում փոխադրության, հաղորդակցության և կապի ժողովրդական միջոցների ձևավորման և զարգացման հիմնական պատմական փուլերը, բնաէկոլոգիական, սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական նախադրյալները:

Ազգագրական առումով այս հիմնախնդրի ուսումնասիրության նպատակն է պարզաբանել տնտեսական կյանքի և կենսապահովման մշակույթի այս բնագավառում հայ ժողովրդի ձեռք բերած փորձն ու հմտությունները, սովորույթ-

ներն ու հավատալիքները, փոխադրության անհրաժեշտ և օժանդակ միջոցների ասպարեզում արհեստագործական ու զանազան զբաղմունքների զարգացման մակարդակը՝ դրանով իսկ ընդգծելով փոխադրամիջոցների խաղացած դերն ու դրանց պատշաճ տեղը ժողովրդական տնտեսության ու կենցաղի տարբեր ոլորտներում: Այս հիմնախնդրին են նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ (տե՛ս գրականության ցանկում):

Ամենանախնականն ու ամենատարածվածը եղել է հետիոտն փոխադրությունը: Այս ձևը հնուց ի վեր ենթադրել է սեռատարիքային աշխատանքի բաժանման համակարգ, փոխադրումների ողջ ծանրությունը հիմնականում ընկած է եղել մարդու վրա: Հնագույն ժամանակներից գործել են բեռնակիրների համքարություններ, մշակների՝ համբալների համքարությունները, ինչպես օրինակ՝ թուլուզչիները՝ ջրկիրները (տե՛ս **Н. Ахвердов**, Тифлисское амкары, Тиф., 1893): Բեռները փոխադրելու որոշ արգելքներ էին գործում կանանց և տղամարդկանց համար: Օր.՝ տղամարդու համար գյուղամիջով կուժը ուսին կամ դույլը ձեռքին ջուր կրելը, կանանց համար՝ ջրաղացից ալյուր, անտառից փայտ տեղափոխելը անհարիր երևույթներ էին համարվում: Մարդիկ տարածության վրա բեռները փոխադրել են շալակով, ուսին դրած, գրկած, հրելով, ձգելով (Տախտակ 18) թևատակին, քարշ տալով, գլխին դրած: Բեռների փոխադրումը հեշտացնելու համար օգտագործել են լծակ՝ ուսափայտ՝ ջուր կրելու համար, համետ կամ կուրտիկ (փալան)՝ ուսը, թիկունքը չվնասելու համար, տիկ (Տախտակ 20)՝ օղի, գինի փոխադրելու համար, խուրջին, բոխչա, կողով և այլն: Հետիոտն բեռները փոխադրելու հարմարանքներից էին՝ համետները՝ (փալան) ուսին կամ մեջքին կրելով, ձմռանը՝ լեռ-

ներում **հետիկ, լական** անվանումներով կոշիկ հագնելը և այլն: Ձյան կամ սառույցի վրայով ազատ երթևեկելու համար հագնում էին գամերով տրեխներ, դահուկաձև կոշիկ՝ լական (Տախտակ 20): Ուշագրավ է բնակարանաշինության համար Սասունում կիրառված գերանի տեղափոխումը 16-40 տղամարդկանց ուսերով, բ) ջրաղացքարի տեղափոխման ձևերից մեկը՝ ուսով, գ) ջրաղացքարի տեղափոխումը գլորելու եղանակով, դ) հրելով և քաշելով եղանակով, ե) գրաստներով (Տախտակ 20):

Հայկական լեռնաշխարհը որպես գրաստային ու լծկանանվային փոխադրամիջոցների բնօրրաններից մեկը:

Հայկական փոխադրամիջոցները որպես առաջավորասիականի տեղական առանձնահատկություններով տարբերակ: Ցամաքային փոխադրամիջոցները ըստ զարգացման փուլերի, մարդը՝ շալակով (հետիոտն), գրաստային բարձկան ու հեծկան փոխադրամիջոցներ, լծկան սահքային և անիվային տարատեսակներով:

Գրաստային բարձկան կամ հեծկան փոխադրամիջոցներից էին՝ եզը, ձին, էշը, գոմեշը, ջորին, մասամբ նաև ուղտը:

Ինչպես Առաջավոր Ասիայի հնագույն քաղաքակիրթ երկրներում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհում, վաղնջական ժամանակներից բուծել են էշ և էշի ու ձիու սերումից՝ ջորի: Վերջինս երկար ճանապարհների համար առավել հարմարավետն էր, քանզի այն և՛ դիմացկուն էր, և՛ երկար կյանք ուներ (30-40 տարի), և՛ կրկնակի ծանր բեռներ էր փոխադրում, քան ծնողները: Ջորեգրաստով է կատարվել միջազգային ցամաքային առևտուրը:

Հայկական լեռնաշխարհում ձին հիմնականում ծառայել է ռազմական նպատակներին, նույնը՝ դեռ II հազարամյակից

Ք.ա.՝ ձիակառքերը: Անիվավոր փոխադրամիջոցը սայլն է եղել, սահկային, դահուկաձև անանիվ փոխադրամիջոցները՝ քարշակները և այլն:

Ջրային փոխադրամիջոցների մասին վկայությունները նույնպես 3-2-րդ հազարամյակներից էր հայտնի (ըստ շումերական սեպագիր աղբյուրների), դրանք լաստանավեր են եղել, որ Եփրատ գետով Հայաստանից գինի են տարել Միջագետքի Մարի քաղաքը: Հայաստանը ծովափնյա երկիր չէ, սակայն նրա տարածքում, բացի Սևանա լճից, կան նաև Վանա և Ուրմիո կամ Կապուտան լճերը: Սևանա լիճը ուներ 146 քառ. կմ մակերես, 45 մ խորություն՝ միանգամայն հարմար էր նավարկության համար: Վանա լիճը ուներ 3733 քառ. կմ մակերես, միջին խորությունը՝ 16 մ: Կապուտանը ամենախոշորն է՝ 5775 քառ. կմ մակերեսով: Երեք լճերն էլ եղել են նավարկելի՝ ոչ միայն ձկնորսական մակույկներով, այլև ըստ հայ մատենագիրների՝ խոշոր նավերով: Օր.՝ Ստ. Օրբելյանի հիշատակմամբ՝ Սևան լճի վրա լողում էին «սրավար» (հավանաբար՝ առագաստանավ) նավակներ: Արաբ Յակուտի հավաստմամբ՝ Կապուտան լճի լայնքը կարել է կտրել մեկ օրում, իսկ շուրջը՝ 4 օրում: Առավել մանրամասն հաղորդում է Հերոդոտոսը:

Հարցեր և առաջադրանքներ:

Ջրային փոխադրամիջոցներ. լաստեր, մակույկներ, նավակներ: Դրանց տեսակները, պատրաստման և օգտագործման եղանակներն ու հմտությունները, արեալային առանձնահատկությունները, տարածվածությունն ու պահպանվածությունը Հայաստանի տարբեր վայրերում: Ազգային ավանդույթները կապված ջրային փոխադրամիջոցների հետ:

Փոխադրության սարքերն ու հարմարանքները: Բարձելու, կապելու եղանակներն ու ձևերը որպես մարդու աշխատան-

քային գործունեության և ստեղծագործական հմտությունների արգասիք: Համետագործությունն ու թամբագործությունը, անվագործությունը, սայլագործությունը, արհեստագործական հմտություններն ու արեալային առանձնահատկությունները: Ծիսական սովորույթների պահպանվածության դրսևորումները դրանցում: (Մանրամասնորեն ներկայացված է հեղինակի «Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները» գրքում, էջ 269-290):

5.2. Հաղորդակցության և կապի ավանդական միջոցները

Հաղորդակցության և կապի ժողովրդական միջոցները որպես սոցիոմշակութային տարր, դրանց տեղը կենսապահովման մշակույթի համակարգում: Հաղորդակցության ազդանշանային կապի միջոցները, դրանց ուսումնասիրությունը հայ ազգաբանական գիտության մեջ (Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Եր., 1960, Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, Եր., 1936, Ստ. Լիսիցյան, Средства передвижения и транспорт, «Народы Кавказа, т. 2, М., 1962, Լ. Պետրոսյան, Հաղորդակցության միջոցները // ՀԱԲ, հատոր 6, էջ 98-110 և այլն):

Հաղորդակցության միջոցները հայոց մեջ և դրանց նշանակությունը մշակութային գործընթացներում: Ճանապարհներ, կամուրջներ, գետանցներ, քարավանատներ, լեռնանցքներ: Հայոց հաղորդակցության միջոցների մշակույթի բնորոշ գծերը պատմական տարբեր դարաշրջաններում: Հայաստանը որպես ներքին և տարանցիկ ճանապարհների խիտ ցանցով պատած երկրամաս և կարևորագույն ճանապարհների խաչաձևման բանուկ հանգուցակետ, բնաաշխարհագրական,

տնտեսական, ռազմաքաղաքական և մշակութային գործոնների հարաբերակցության խնդրի շուրջ:

Յուրաքանչյուր երկրի տնտեսական և մշակութային զարգացման մակարդակը շատ չափով պայմանավորված է եղել հաղորդակցության ուղիների առկայությամբ: Հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանով էին անցնում Եվրոպան և Ասիան միացնող Աքեմենյան արքայական ճանապարհը ձգվում էր Իրանից մինչև Էգեյան ծովափ, այն անցնում էր Հայաստանով շուրջ 340 կմ (56,5 փարսախ կամ 340 կմ) և այլ ուղիներ, գործել են մետաքսի, աղի, ինչպես նաև Թավրիզ-Ջուղա-Երևան-Թիֆլիս մայրուղիները: Մետաքսի ուղու մի հատված Իրանի հյուսիսային շրջաններից ձգվում էր Արաքսի հովիտը՝ Ջուղայի գետանցով դեպի Նախիջևան և Արտաշատ, այնտեղից՝ Սև ծովի նավահանգիստները: Մեծ ուշադրություն է հատկացվել մայրուղիների վրա օթևան-իջևանատներ կառուցելուն: Լեռնանցքներից են՝ Փամբակի լեռնաշղթան կտրող Դիլիջանի լեռնանցքը, Սյունյաց լեռնաշխարհով անցնող Սոթքի կամ Սիսիանի լեռնանցքները, Գեղամա լեռնաշղթան կտրող Սելիմի լեռնանցքը, Բազումի լեռնաշղթան կտրող Բզովդալի կամ Դավալի լեռնանցքը (Պուշկինի), Հայկական պար լեռնաշղթան կտրող Քարվանսարա, Մնձուր, Բյուրակնյան (Բինգյոլ) և այլն:

Թվարկենք քարակերտ կամուրջներից մի քանիսը. Սանահինի կամուրջը՝ Դեբեդի վրա, Տափերական և Հովվի կամուրջները՝ Արաքսի վրա, Անիի կամուրջը՝ Ախուրյանի վրա, Աշտարակի և Օշականի կամուրջները՝ Քասախի վրա, Լոռե-բերդ քաղաքի կամուրջը՝ Ձորագետի վրա և այլն:

Հայկական լեռնաշխարհում լեռների, կիրճերի, ռելիեֆի կտրտված լինելու պատճառով փոխադրումների բազմազա-

նությունը, ըստ զարգացման փուլերի, հետևյալ պատկերն է կազմում. ա) մարդը՝ շալակով, բ) գրաստներով, գ) անանիվ քարշակներով և անիվավոր փոխադրամիջոցներով, դ) ջրային փոխադրամիջոց լաստերով և լաստանավակներով, մակույկներով:

Տեսողական և լսողական կապի միջոցներ: Տեսողական կապի միջոցներն էին. դիտարաններ, աշտարակներ, բնական բարձունքներ: Տեսողական ազդանշաններ. կրակ, ծուխ, ձեռքերի շարժումներ, ծառերի ու ժայռերի վրա պայմանական նշաններ գծելը, քարերին պայմանական դիրք տալը, ձողեր վարսելը և այլն: Լսողական ազդանշաններ. բացականչություններ, սուլոցներ, զանգահարման եղանակներ, թռչունների և կենդանիների ձայներ հանելը, թմբուկներով, պղնձամաններով, տակառներով և այլ միջոցներով ձայն տալը, հարևանների կից պատերի պատուհաններից (ակնատ) լուր հաղորդելը, մունետիկների միջոցով հայտարարություններ անելը և այլն: Փոխադրության և կապի միջոցների հետ կապված հավատալիքները՝ բազմաթիվ են ու բազմազան:

Տրանսպորտի և կապի ժամանակակից միջոցները (ներկայացնել ձեր մեկնաբանությունը):

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 58-65, «Տեղափոխման մոռացված ձևերը» // ԼՀԳ, ՀՍՍՀ ԳԱ, № 10, 1972:
2. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Եր., 1946:
3. **Մանանդյան Հ.,** Հայաստանի գլխավոր ճանապարհները, Եր., 1936, էջ 224-231:
4. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության

բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Եր., ԵՊՀ հրատ., 2022, էջ 269-290:

5. **Նահապետյան Ռաֆիկ,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, ուսումնամեթոդական ձեռնարկ, էջ 70-73:

6. **Պետրոսյան Լ.,** Հայ ժողովրդական փոխադրամիջոցները (ՊԱՈՒ) // ՀԱԲ, պր. 6, Եր., 1974:

7. **Պետրոսյան Լ.,** Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղերսները // ՀԱԲ, հ. 22, Եր., 2007, էջ 241-255:

8. **Армяне.** Серия «Народы и культуры», М., 2012, с. 150-161.

9. **Есеян Ст.,** Из истории колесного транспорта древней Армении // ՊԲՀ, 1960, № 3.

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅՈՑ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԸ

ԹԵՄԱ 1
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ, ՏԻՊԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնակավայրը որպես սոցիալ-մշակութային ֆենոմեն, բնակավայրի ուսումնասիրության հիմնախնդիրը արդի ազգաբանական գիտության մեջ

Հայաստանի գյուղական բնակավայրերի ձևավորման գործոնները (պատմաքաղաքական, անվտանգության, սոցիալ-տնտեսական, բնաէկոլոգիական, ազգային-ավանդութային և այլն):

Կենսապահովման մշակույթի կարևոր տարրերից է բնակավայրը, որի ուսումնասիրությունը ուշագրավ նյութ կարող է տալ ոչ միայն կենսապահովման, այլև հասարակական կյանքի, ընտանեկան հարաբերությունների, տնտեսության և բնակչության կյանքի մյուս կողմերի մասին: Հնագույն բնակավայրերի վերաբերյալ մեծաքանակ նյութ է տալիս հնագիտությունը, պեղումների շնորհիվ բացահայտվել են մինչ այդ անհայտ բնակատեղիներ՝ կառուցապատման ձևերով: Մեծ արժեք են նաև մատենագրական և ուղեգրական տեղեկությունները, թեև դրանք չափազանց կցկտուր են ու հպանցիկ: Բավարար չեն նաև եղած ազգագրական հետազոտությունները:

Ազգագրական առումով այն չափազանց սակավ է ուսումնասիրվել (ուսումնասիրությունները տե՛ս գրականության ցանկում):

Հայկական լեռնաշխարհի տարածքում նստակեցությունը

վկայվում է դեռևս նեոլիթյան շրջանից: Նստակեցությունը հանգեցրել է գյուղակների ու գյուղերի առաջացմանը: Բնակավայրերի և գետնափոր տների վերաբերյալ գրավոր տվյալներ են պահպանված Քսենոփոնի «Անաբասիս» աշխատության մեջ: Գերմանացի գեներալ Մոլտկեն, վերհիշելով Քսենոփոնի նկարագիրը, ավելացնում է իր կողմից. «Մինչև այսօր էլ (XIX դ. կեսեր – Ռ. Ն.) հայերն ապրում են այդպիսի գետնափոր բնակարաններում, որոնք շատ անգամ այնպես խոր են, որ սրանց տանիքները՝ գետնից հազիվ մի քիչ բարձր են՝ նման փոքր բլուրների շարքի: Շատ անգամ ճանապարհորդը, հասնելով գյուղը և կանգնած լինելով նրա տների տանիքների վրա, գյուղն է փնտրում, չնկատելով այն: Միայն այն ժամանակ է նա գլխի ընկնում, երբ իր ձիու առջևի ոտները ծխնելույզի (երդիկի) մեջ են խրվում կամ երբ ինքը հանկարծակի է գալիս, տանիքից ներս ընկնելով ու բազմելով ընտանիքի շրջապատում» (**Խ. Սամուելյան,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Եր., 1941, էջ 197):

Ըստ հայ մատենագրական տեղեկությունների՝ գյուղական բնակավայրերը կոչվել են՝ գյուղ, գյուղակ, շեն, ավան, ավանագյուղ, գյուղաքաղաք, քաղաքագյուղ և այլն: Քաղաքային բնակավայրերը կոչվել են՝ քաղաք, ոստան՝ մայրաքաղաք նշանակությամբ, գահանիստ քաղաք, բերդաքաղաք և այլն: Դրանց կառուցման, ավերման, վերակառուցման, անունների ծագման և հարակից այլ հարցերի վերաբերյալ կոտորակված տեղեկություններ կարելի է գտնել գրեթե բոլոր պատմագիրների երկերում[1]: Սակայն դրանցում գրեթե բացակայում են բնա-

[1] **Եղիշե,** 61, 69, 70, 83, 84, 158, 161, **Հովհան Մամիկոնյան,** 43, 92, 131, 132, 162 և այլն, **Ա. Լաստիվերտցի,** 26, 31, 127, **Թ. Արծրունի,** 97-99, 138, 284, 357, 405-407, **Ասողիկ,** 72, 194, **Մ. Կաղանկատվացի,** 92, **Ա. Դավրիժեցի,** 163 և այլն:

կավայրերի կառուցվածքի, արտաքին ձևերի, փողոցների ու թաղերի նկարագիրները:

Գրավոր աղբյուրները մեզ են հասցրել թե՛ քաղաքային, թե՛ գյուղական շինարարությանը վերաբերող տվյալներ: Մոնումենտալ ճարտարապետության հարցերից են՝ եկեղեցական շինարարությունը, սրա շինանյութերը, տաճարների ներքին բաժանմունքները, հարդարման արվեստը[1], արքունի և քաղաքացիական շենքերը[2], քաղաքների պաշտպանական կառուցումները[3], բաղնիքները[4] և այլն:

Բուն ժողովրդական ճարտարապետության մասին, տուն[5] կամ շենք և այլ ընդհանուր արտահայտություններից բացի, պատմագրության մեջ կան հակիրճ նկարագիրներ: Այնպես որ, որոշ դեպքերում շենքերի համալիրի միայն մոտավոր գաղափարն է կազմվում: Այդ տվյալները մեծապես արժևորվում են պեղածո շենքերի տվյալների հետ համեմատելիս, պատմական զուգահեռներ անցկացնելիս:

Բնակավայրերի ձևավորման և կառուցապատման վրա մեծապես դրոշմվել է տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունները, ջրամատակարարումը, քամիների ուղղությունը, արևահայացությունը, դաշտերի, արոտատեղիների հեռավորությունը, թշնամական հարձակումներից պաշտպանվելու անհրաժեշտությունը, ամբողջ շրջակա միջավայրը: Դրանց առաջացմանը

---

[1] **Ագաթանգեղոս,** 348, 440, **Եղիշե,** 56, 73, 257, **Թ. Արծրունի,** 481-487, **Ստ. Օրբելյան,** 225, **Ասողիկ,** 185, 256, **Հովհ. Մամիկոնյան,** 49-50, 203, 248-249, **Ա. Դավրիժեցի,** 2, 13, 17, 47, 298, 405, **Մ. Կաղանկատվացի,** 420-421, **Կ. Գանձակեցի,** 10, 221, 41, **Երևանցի,** 26, 217:

[2] **Փ. Բուզանդ,** 20, 115, **Եղիշե,** 25, 49, 58, 83, 155, 158, 189, 193, **Ա. Կրետացի,** 103, **Ղ. Փարպեցի,** 14, 51, 71, 91, 112, **Զ. Սարկավագ,** II-37, III, 6, **Հ. Կարնեցի,** 44:

[3] **Ասողիկ,** 72, **Հովհ. Երզնկացի,** 151, 155, 162, 179:

[4] **Ա. Դավրիժեցի,** 625:

[5] **Ագաթանգեղոս,** 8, 87, 445, **Հովհան Մամիկոնյան,** 77:

նպաստել են նաև հասարակական հարաբերությունները, պատմաքաղաքական իրավիճակը, տարբեր զբաղմունքները և այլն:

Հայաստանի XIX դ. երկրորդ կեսի – XX դ. սկզբների գյուղական բնակավայրերի տիպաբանության խնդիրն արդի հայ ազգագրության մեջ (ըստ կառուցվածքի, տնտեսական զբաղմունքների, անվտանգության, գոտիականության, հատակագծման և պատմաազգագրական շրջանների):

Ազգագրական գիտության մեջ կարևորվել է ռուս ազգագրագետ Վիտովի «О классификации поселении» (СЭ, 1953, № 3, էջ 27-38) հետազոտության մեջ բնակավայրային համալիրների դասակարգման սկզբունքները.

1) Ըստ աշխատանքի հասարակական բաժանման կամ սոցիալ-տնտեսական հատկանիշի՝ բնակավայրերը բաժանվում են քաղաքայինի կամ գյուղականի: Այս բաժանումը պայմանավորված է տվյալ բնակավայրի բնակչության մեծամասնության գերակա զբաղմունքով: Այդ առումով հայկական բնակավայրերը XIX դ. վերջին և XX դ. սկզբներին հիմնականում պատկանել են գյուղական բնակավայրերի շարքերին:

2) Բնակավայրերի տիպաբանում կամ դասակարգում ըստ գոտիականության՝ ֆիզիկա-աշխարհագրական գործոնների՝ ա) հովտային, բ) լեռնային, գ) նախալեռնային, դ) գետահովտային, ե) գետանախալեռնային:

3) Տիպաբանում կամ դասակարգում ըստ հատակագծի կամ մակերևույթի ձևի՝ ա) տների փողոցավոր, բ) շարքերով կամ գծավոր, գ) տների անկանոն դասավորությամբ, դ) կոմպակտ, կուտակային դասավորությամբ, ե) շրջանաձև, համախմբված, փակ դասավորությամբ, զ) ցրված տներով: Որպես առանձնահատկություն՝ ձգտել են տների միմյանց կպած ազգակցական

թաղերով կառուցապատման, հետագայում ազգատոհմային կապերի թուլացմամբ և տեղանքի սահմանափակմամբ պայմանավորված՝ հարևանական կցաթաղերով, հիմնականում՝ ինքնապաշտպանության նպատակներով: Մի ազգատոհմի ընտանիքների տները հիշեցնում էին միասնական ճարտարապետական համալիր: Թաղամասերը, ազգատոհմային անվանումներից բացի, ընդարձակվելիս կարող էին փոխել անվանումները՝ աշխարհագրական տեղադիրքով պայմանավորված (ձորի թաղ, ներքին կամ վերին թաղ, ժամու թաղ, աղբրի թաղ և այլն):

Առանձնահատկությունները. ա) հատակագծման առումով՝ տների անկանոն դասավորությունն էր, բ) կոմպակտ, կուտակային, միմյանց կպած տներով, բոլորաձև հատակագծով, նեղլիկ, ծուռումուռ փողոցներով կառուցապատումը թողնում էր յուրատեսակ ամրոցի տպավորություն, գ) ինքնապաշտպանության նպատակով անմատչելի տեղանքներում, ձորաբերաններին, գետափերին, ձորամիջերում, կիրճերում բնակավայրերի տեղադրումն էր (Տախտակ 21), դ) ազգատոհմային կապերով համատեղ թաղ կազմած բնակեցումն էր, որոնք տոհմային կարգերից հասած մնացուկներ էին, որոնց գումարվում էին նաև հողի սեփականատիրական իրավունքները: Ազգակից ընտանիքները երկար ժամանակ բնակվում էին միևնույն հողատարածքի վրա. առանձնացվող դուստր ընտանիքների տները իրար պատկից էին լինում: Երբեմն ազգակիցներն այնքան էին աճում, որ հարկադրված բոլոր կողմերից դռներ էին բացվում: Դրա համար էլ թաղն ընդունում էր տձև կերպարանք (Տախտակ 21), ե) հովտային շրջաններում ինքնապաշտպանության և տաքացման ապահովման նպատակով՝ գետնափոր, լեռնային անառիկ տեղանքներում ժայռաբեկոր քարերից 2-3 երկանի տներով կառուցապատումն էր, զ) տեղանքի լեռնային, բլուրների տեղադիրքով,

տնամերձ հողամասերին, արոտներին, տնտեսական-արտադրական կառույցներին մոտ լինելու հանգամանքներով պայմանավորված՝ ցրված տներով դասավորությունն էր (Սասուն, Պոնտոս), որոնցում բնակչությունը օգտվում էր երկրի բնական պաշտպանվածությունից և բնակչությունն էլ ընդհանրապես զինված էր լինում, ռազմապես միշտ պատրաստ: Եվ վերջապես, բացառապես ինքնապաշտպանությամբ պետք է բացատրել այրաբնակությունը: Ինքնապաշտպանության նկատառումով էր, որ Առաջավոր Ասիայի շատ ժողովուրդների մեջ հայտնի կծկված գյուղատեսակը առավել չափով տարածում ուներ Հայաստանում:

Ավանդական բնակավայրը ներկայանում էին իբրև կառուցապատ որոշակի տարածական համալիր՝ բաղկացած. ա) բնակելի թաղամասից, բ) հասարակական նշանակության (կենտրոն-հրապարակ, աղբյուր, հյուրատուն) կառուցապատումներից, գ) տնտեսական-արտադրական կառույցներից՝ դարբնոց, գյուղական կալ, գոմեր, ձիթհան, ջրաղաց, մշակելի հողատարածություններ, արոտավայրեր, անտառներ, խոտհարքներ, ժամանակավոր՝ ամառանոց, ձմեռանոց բնակավայրերից և այլն, դ) մշակութակենցաղային կառույցներից՝ դպրոց, ակումբ, խանութ, վարսավիրանոց, պաշտամունքային ճարտարապետական կոթողներից՝ եկեղեցի, մատուռ, վանական համալիր, սրբավայրերից, գերեզմանատնից և այլն[1]:

Բնակավայրերը միջնադարում, XIX դարում ու XX դարի սկզբներին ձևավորվել էին կենտրոնում գտնվող եկեղեցու շուրջ,

---

[1] Ցանկալի կլինի ուսանողներին հանձնարարել՝ գրել ռեֆերատներ իրենց արդի բնակավայրերի կառուցապատումների, անվանումների, տնտեսական, արտադրական, հասարակական, պաշտամունքային նշանակության, պատմաճարտարապետական հուշարձանների, բնակավայրերի հետ կապված ավանդազրույցների, պատմությունների, հավատալիքների վերաբերյալ:

որտեղ էլ անցկացվում էին ծիսական և հասարակական բնույթի բազմապիսի արարողություններ: Եկեղեցու հրապարակը տարեց տղամարդկանց զրուցարանն ու ժողովարանն էր: Բնակավայրը մեկ ամբողջություն էր, յուրօրինակ ամրոց: Գրեթե ամենուրեք գյուղից հեռու ունեին ժամանակավոր՝ այգեգործական և արոտավայրային համայնքային կացարաններ: Համայնքի ընդհանուր ուժերով ու միջոցներով կառուցվում էին օդա-հյուրանոցներ: Իսկ Արևմտյան Հայաստանում նյութական ու բարոյական վնասներից զերծ մնալու նպատակով օտար վայրենաբարո «հյուրերից» դրանք տեղաբնիկ հայ բնակչության անվտանգության ապահովման լավ միջոց էին:

Անցյալում ազգային ավանդույթներով, գերդաստանական տներով համատեղ ապրելու, մշակելի հողերի սակավությամբ, դրանց խնայման ու հատկապես ինքնապաշտպանության ապահովման նպատակով կառուցվել են միմյանց կպած տներ, որոնք հաղորդակցվել են ինչպես դրսից այնպես էլ ներսից՝ ակնատներով՝ միջնորմ պատերից բացված նեղլիկ դռներով կամ պատուհաններով: Դրանք ծառայել են լուրեր և իրեր փոխանցելու, վտանգի դեպքում միմյանց տներում պատսպարվելու և թշնամուն համատեղ դիմագրավելու ու այլ նպատակների: Գյուղական բնակավայրերը կծկված էին, տների կտուրները միմյանց կպած լինելու պատճառով առաջացնում էին անհարթ տարածություններ. դրանք վեր էին ածվել հատկապես աշնանն ու ձմռանը անցուղիների, զրույցների, հավաքների, կոլեկտիվ աշխատանքների կազմակերպման վայրերի, ժողովարանների, խաղերի, ժողովրդական մրցումների, մենամարտերի, հարսանեկան և այլ հանդեսների պարերի հրապարակների: Ընդունված սովորույթի համաձայն՝ բնակավայրի բոլոր մարդիկ կարող էին օգտվել համագյուղացու կտուր բարձրա-

ցող ելարանից ու կտորներից՝ ամենակարճ ճանապարհով տեղ հասնելու համար:

Ընդհանուր կտուրները բացառվում էին թեք, լանջային տեղանքներում, որովհետև ամֆիթատրոնի ձև ունեցող այդ-օրինակ բնակավայրերում մի ազգակցի կամ հարևանի կտուրը մյուսի համար բակ էր դառնում: Թաղերը ազգատոհմային բնույթի էին և կրում էին տոհմային անվանումներ, ինչը շարունակվեց մինչև XX դարի 20-30-ական թթ.: Ազգակցական և հարևանական կացարանների ձևը թույլ չէր տալիս, որ փողոցները կանոնավոր ձև ստանային: Ըստ որում՝ գերեզմանոցը և ժամանակավոր, սեզոնային բնակավայրերը նույնպես հիմնվում էին ազգատոհմային կառուցապատման սկզբունքով: Դատելով մեզ հասած պատմագրական և ազգագրական նյութերից՝ կարող ենք ասել, որ XIX-XX դդ. սկզբներին մենք ունեցել ենք ազգակիցներով համախմբված ապրելու երեք ձև. 1. ողջ ազգն է զբաղեցրել մի գյուղ, որ բնորոշ է եղել հին հասարակություններին, 2. եղել է ազգակցական թաղերով բնակվելու սովորույթ, 3. ամենատարածված ձևը փոքր կազմ ունեցող ազգակցական թաղերն էին՝ առավել մերձավոր ընտանիքներով բնակվելը:

Խորհրդային Հայաստանի բնակավայրերը 1930-40-ական թթ. սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների պայմաններում սկսեցին կրել լուրջ փոփոխություններ: Ազգատոհմային ինքնապաշտպանության երբեմնի անհրաժեշտության վերացմամբ, յուրաքանչյուր անհատական ընտանիքին տնամերձ հողամասի հատկացմամբ երբեմնի գերդաստանական տները մասնատվեցին ինքնուրույն առանձին տնտեսությունների, հին գյուղերից դուրս հիմնեցին նորանոր թաղեր՝ ուղիղ փողոցներով, լուսավոր, նորաձև տներով, այգի, պարտեզ, բանջարանոց և այլ հարմարություններով: Գյուղեղուրս թաղե-

ը հիմնվում էին մեծ մասամբ նորապսակների ձեռքով, շատ տեղերում դրանք ստացել էին «անկիսուր մահլա» անունը: Բնակավայրում կատարվող փոփոխությունները առնչվում էին տնտեսական, կենցաղային, մշակութային օբյեկտների առաջացմամբ: Հատկանշական է դառնում ջրի պաշարների, աղբյուրների ավելացումը: Բնակավայրերի հիմնովին կերպարանափոխումն ավարտվեց XX դարի 60-70-ական թթ. (Տախտակ 21):

ԹԵՄԱ 2
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ, ՏԻՊԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Բնակարանը որպես սոցիոմշակութային տարր, նրա տեղը կենսապահովման մշակույթի համակարգում

Բնակարանի ուսումնասիրության հիմնախնդիրը հայ ազգագրության մեջ (տե՛ս գրականության ցանկը)։

Հայ էթնոսի լիարժեք ներկայացման ու բնութագրման համար մեծ նշանակություն ունի նաև էթնիկ առանձնահատկությունները կրող ցայտուն համալիրներից մեկի՝ ժողովրդական բնակարանի ուսումնասիրությունը։ Այն ունի ոչ միայն տեսական, գիտաճանաչողական, այլև գործառական կարևոր նշանակություն՝ բացօթյա թանգարանաշինության, ժամանակակից գյուղերի և ավանների հատակագծման ու կառուցապատման գործում։

Պատմագրության մեջ կան հակիրճ վկայություններ, որով մոտավոր գաղափար կարելի է կազմել ժողովրդական տների համալիրի վերաբերյալ։ Անտիկ պատմագրության անվանի ներկայացուցիչ Քսենոփոնը հայկական տների վերաբերյալ գրել է. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ջրհորի բերանի նման, իսկ ներքևն ընդարձակ։ Կենդանիների համար հատուկ մուտք կար փորված, իսկ մարդիկ իջնում էին ցած սանդուղքներով» (Տախտակ 22)։ Մի այլ տեղում հույն հեղինակը արձանագրում է. «Այն գյուղը, ուր նրանք (հույները – Ռ. Ն.) եկան՝ մեծ էր, ուներ սատրապի համար ապարանք-ամրոց և տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ»։ Քսենոփոնի նկարագրած գետնափոր և աշտարակավոր տների մասին

հիշատակություններ կան նաև միջնադարյան հայ պատմագիրների և օտար միջնադարյան ճանապարհորդների երկերում, XIX-XX դդ. ազգագրական դիտարկումներում:

Քսենոփոնյան տների՝ միջնադարում գոյությունը շարունակվելու վերաբերյալ հայ պատմագրության էջերում հանդիպում ենք կցկտուր հիշատակությունների: Հովհ. Մամիկոնյանը երկու անգամ գրել է. «Լցին զգանձսն ի տուն գետնափոր», «…գանձուցն ցուցանել և զդրունս գետնափոր տանն»[1]: Թ. Արծրունին նշում է. «Զի էր նորա գանձ բազում ի կարաս թակուցեալ ի գետնափոր տանն»[2], որ հավանորեն նկուղային հարկ էլ կարող էր լինել: Կ. Գանձակեցին գրել է, թե մարդիկ անոթները և ոսկե պարագաները, արծաթե և այլ առարկաններն ու տեսակ-տեսակ հանդերձները թաքցրել են «ի դարանս և ի տունս գետնափորս»[3]: Զ. Սարկավագ Քանաքեռցու վկայությունն անուղղակի է, բայց ամենակարևորներից է: Նա գրում է, որ ջորի նստած մարդը Էջմիածնից Երևան մեկնելիս ճանապարհին կավակերտ գյուղում շփոթությունից «ելեալ ջորւով ի տանիս մի, և բլավ տունն, և անկաւ ինքն ու ջորին ի տունն»[4]: Նշանակում է՝ կավակերտ գյուղը XVII դարում շարունակում էր գետնափոր կամ առնվազն ¾-ով կիսագետնափոր մնալ: Ղ. Փարպեցին և Ա. Կրետացին հիշատակել են այն այր-բնակարանները[5], որոնք նույնպես յուրօրինակ գետնափոր տներ էին, և որոնք հարատևեցին մինչև XX դ. առաջին կեսը:

Շենքերի զարգացման պատմությունը ցույց է տվել, որ Հայաստանին հատուկ է եղել մեկ բաժնով, երկու բաժնով և մի

---

[1] **Հովհ. Մամիկոնյան,** էջ 79, 105:
[2] **Թ. Արծրունի,** էջ 191:
[3] **Կ. Գանձակեցի,** էջ 237:
[4] **Զաքարիա Սարկավագ Քանաքեռցի**, II, 68:
[5] **Ղ. Փարպեցի,** էջ 187, **Ա. Կրետացի,** էջ 74:

քանի բաժնով տան համալիր ունենալը: Ըստ հայ պատմագրության տվյալների՝ Հայաստանին բնորոշը բազմաբաժին շենքերի համալիրներ էին, թեև սոցիալ-տնտեսական պատճառներով հարատևել էին նաև մեկ բաժնով տները:

Ա. Դավրիժեցին Սպահան գաղթեցված հայերի մասին խոսելիս գրել է. «…Տարեալ հասուցին ի քաղաքն Սպահան՝ և անդին բնակեցուցին զնոսա տուեալ նոցա տեղի շինութեան, որք շինեցին հարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք կամարակապ փողոցօք [փողան, միջանցք], թևաւոր ապարանօք, և ամարասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պէս պէս երանգաց ակնախտիղ տեսողաց»[1]: Իսկ Էջմիածնի տնտեսական շենքերից թվարկել է սեղանատունը, փռնատունը, տնտեսատունը, ամբարատունը և բնակության շենքերից՝ «Դարբասք և տունք ի պէտս ինքեանց և հիւրոց» և «խցեր ի բնակութիւն միաբանից»: Մի այլ առիթով էլ գրել է. «Հայոց վանքերի «յուրաքանչյուր սևագլուխ ուներ իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, փեթակ և տուն, և մարան, և համբարանոցս»: Ս. Երևանցին արձանագրել է բնակելի տուն, որտեղ խուց-օդաներից[2] բացի՝ չարդախը, գոմը, ջորետունը, իշատունը, ուղտատունը և նախրատունը: Ագուլիսում Զ. Ագուլեցին նկարագրել է իր հայրենի տունը, որի համալիրը ներկայացրել է. **ձմեռնատունը, սրահը, վերնատունը, ներքնատունը, մաղազան, քոշքը, օրթա օթախը, քաշ թավան օթախը և երկրորդ հարկի թավան օթախը**: Օշականում վկայվում է պարսպատուն՝ ներքնատնով, վերնատնով, գինետնով, ձիանոցով, մարագով[3]: Նկարագրվում են նաև առանձին դերեր ունեցող

---

[1] **Ա. Դավրիժեցի,** էջ 63-64, 188, 306, 288:
[2] **Ս. Երևանցի,** էջ 22, 35-36, 203:
[3] **Ս. Երևանցի,** էջ 183, 204:

բաժանմունքներ՝ շտեմարաններ՝ մառաններ, կարասատներ ու հնձաններ, ամբարանոցներ, մարագներ, ինչպես նաև թոնրատներ, փռնատներ, երեսբացեր, սպանդանոցներ, փարախներ, գոմեր, լուսամուտավոր բնակարաններ, գործատներ, խանութներ, իջևանատներ են:

Պատմագրական նյութերից երևում է, որ միջնադարից սկսած ժողովրդական շենքերի վերաբերյալ տվյալները համապատասխանում են XIX դարի և XX դարի առաջին կեսի ճարտարապետությանը: Փոփոխությունները, որ մեծ չեն, գլխավորապես վերաբերում են բաժինների բազմացմանն ու հարկայնությանը: Այսպիսի շենքերը հիշատակվում են գլխավորապես ունևոր շերտերի և եկեղեցական միաբանությունների միջավայրում:

Կովկասի մարդաբանական, հնագիտական ինստիտուտի տեղեկագրում Ստ. Լիսիցյանը Ղարաբաղում, Զանգեզուրում, Լոռի-Փամփակում, Նոր Բայազետում, Շիրակում և այլուր գրառած ազգագրական նյութերի հիման վրա ցույց տվեց, որ վաղ միջնադարյան հոգևոր կառույցների ճարտարապետական-հորինվածքային լուծումները սնուցվել են հայ ժողովրդական բնակարանաշինության ավանդույթներից, և մի քանի հատկանիշների հիման վրա բացահայտել է նրանց միանմանությունը. գմբեթաձև ծածկը, լուսավորությունը երդիկից, ծածկի ծանրությունը կրող որմնասյունները (առորմի), գլխատուն կառույցի թմբիկաձև վերին մասը, որ կոչվում էր վերին տուն՝ կիսակլոր աբսիդի եկեղեցու բեմին նմանվող կառույց լինելը, աջ ու ձախ կողմերի մառանները, որ եկեղեցու բեմի վրա եղած երկու խորաններն էին հիշեցնում, գլխատան ներքին, ընդարձակ մասը, որ **մեծ տուն** կամ **ներքին տուն** էր կոչվում, եկեղեցու դահլիճն էր հիշեցնում, գոմի օդան նույն բազիլիկ կառույցն էր՝ իր ծածկով, գլխատան սրահը, որ եկեղեցու

գավիթն էր նմանակում և այլն: Խնդրի մասնագիտական հետազոտության հարցում ուշագրավ են նաև ճարտարապետներ Թ. Թորամանյանի, Ս. Վարդանյանի, Ս. Մնացականյանի, Հ. Խալփախչյանի, ազգագրագետներ Դ. Վարդումյանի, Վ. Բդոյանի, Հ. Մարությանի, Յու. Մկրտումյանի հետազոտությունները: 1983 թ. արժեքավոր ուսումնասիրություն հրատարակվեց «Культура жизнеобеспечения и этнос» վերտառությամբ: Վերջին տարիներին սույն գրքի հեղինակը հրատարակել է հայ ժողովրդական բնակավայրի և բնակարանի մասին համալիր ամբողջական ուսումնասիրություն[1]:

Հարցեր և առաջադրանքներ:

Հայաստանի XIX դ. երկրորդ կեսի – XX դ. սկզբների ժողովրդական բնակարանի տիպաբանությունն ըստ կառուցվածքի, գործառույթների, աշխարհագրական գոտիների և պատմաազգագրական շրջանների (մեկ սենյակով, բազմասենյակ, պատշգամբ, մեկ մուտքով, թե մի քանի և այլն): Կանանց, ամուսնացած զույգերի առանձնացման բաժանմունքի առկայությունը: Օժանդակ կառույցները: Գոմ և ախոռ: Տնից առանձին, թե նրա հետ միացած: Գոմի օդա, գործառույթը: Մարագ, խոտանոց, բակ, արտաքնոց: Չքավոր, միջակ, ունևոր կարողությամբ բնակարանային համալիրները: Շենքերի առողջապահական պայմանները, օջախի պաշտամունքը:

Հայոց ավանդական բնակարանային համալիրների տեսակները: Գլխատուն, նրա տարրային կառուցվածքը, կառուցվածքաբանական առանձնահատկությունները, ծածկերը: Գլխատան գործառութային բնութագիրը և էկոլոգիան: Առաստաղը, նրա զարդարման ձևերը:

---

[1] **Նահապետյան Ռ.,** Հայկական ավանդական բնակավայր և բնակարան (պատմաազգագրական ուսումնասիրություն), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2026:

Հայկական ժողովրդական բնակարանի պատմական զարգացման օրինաչափությունները, բնորոշ գծերը և յուրահատկությունները, դրանք պայմանավորող պատմաքաղաքական, բնաէկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ազգային ավանդութային գործոնները:

* * *

Դեռևս նեոլիթից սկսած (նոր քարի դար)՝ Հայկական լեռնաշխարհի մարդը որպես բնակարան օգտագործել է քարանձավները, հետո հասել է ժայռափոր բնակարանների ստեղծմանը, շինել է գետնափոր տներ, որոնք անցել են զարգացման երկարատև ուղի՝ պարզ հյուղակից կամ քարանձավից մինչև արդի հարմարավետ բնակելի տները:

Բնակարանի առավել տարածված տիպը Հայաստանի բոլոր պատմաազգագրական շրջաններում եղել է **գլխատունը**: Գլխատուն անվանումը ստացել է իր գլխով տուն, գմբեթաձև ծածկով ճարտարապետական հորինվածքից և բնակարանի բազմագործառույթ նշանակությունից (Տախտակ 22): Քանզի գլխատները ծառայել են նաև որպես խոհանոց, սեղանատուն, աշխատանոց, ննջարան, հյուրանոց, պաշտամունքային օջախ, ընտանեկան արարողությունների՝ հարսանիքի, ծննդաբերության, հուղարկավորման, տոների և այլ արարողակարգերի իրականացման վայր: Ժողովրդական տներն ըստ բաժանմունքների եղել են մեկ բաժնով և մեկից ավելի բաժիններով: Մեկ բաժնով՝ չքավոր ընտանիքներին պատկանող տները բազմագործառույթ կառույցներ էին, որոնց մեջ ընտանիքն ապրել է ամբողջ ունեցվածքով: Մեկ բաժնում շենքերը ծագմամբ հնագույնն էին: Դրանց առանձին տեսակները պահպանվում են մինչև մեր օրերը՝ իբրև դաշտերի, այգիների ու բանջարանոցների կացարաններ:

Գլխատները սկզբնապես եղել են միաբջիջ՝ մեկ սենյականոց, որտեղ բացի մարդկանցից, ընտանիքից, տեղադրվել է նաև գոմը, փարախը, մառանը: Այդպիսի նկարագրության հանդիպում ենք անտիկ աղբյուրներում, մասնավորապես Քսենոփոնի «Անաբասիս» աշխատությունում: Անասնապահությամբ ու համատեղ դաշտավարությամբ զբաղվող շրջաններում գլխատանը կից կառուցվածքների մեջ զգալի տեղ էին գրավում գոմը, ախոռն ու փարախը, մինչդեռ դաշտավարական և այգեգործական շրջաններում՝ շտեմարանները՝ հացի ամբարը, հացի հորը, մառանը, հնձանը, ձիթհանը: Ունևոր խավերի գերդաստանական տները, որ ունենում էին 50-80 անձ, բաղկացած էր լինում 4-15 բաժնից՝ անհատական ընտանիքներին հատկացվող ննջարաններից, 2-3 գոմերից ու գոմի օդաներից, այդ թվում՝ տնտեսական պահեստային շինություններից և արտադրական կառույցներից:

Գլխատները իրենց գործառույթներով և ճարտարապետական հորինվածքով բաժանված են եղել երկու տիպի՝ 1. հովտային, մեղմ կլիմայով, անտառաշատ վայրերում գլխավորապես գլխատնից առանձնացած և անջատ էին տեղադրվում գոմը (թավլա), ոչխարների փարախը, մարագը, ձիթհանը, արտադրական մյուս կառույցները: Այդպիսի ազգագրական շրջաններն էին Լոռին, Տավուշը, Սյունիքը, Արցախը:

2-րդ տիպը հանդես է եկել գլխատան և օժանդակ ու արտադրական կառույցները համախմբված, մե՛կ մուտքով, մե՛կ ծածկի տակ կոմպակտ համալիրի ձևով, որը պայմանավորված էր մի կողմից ձմռան երկարատևությամբ, խստաշունչ կլիմայով, վառելիքի պակասությամբ, ընտանիքը, թոնրից բացի, անասունների շնչով տաքացնելու հանգամանքով, դրա համար գոմն ու բնակելի մասը միացվում էին:

Գլխատան մեծությունը կախված էր ընտանիքի մեծությունից: Բնակելի մասը գոմից բարձր էր լինում 40-50 սմ: Ե՛վ գոմի, և՛ բնակելի մասի միջև բաժանարարը անասունների մսուրքն էր և ճիպոտահյուս միջնորմ պատնեշը, կամ էլ՝ կավե կամ փայտե հացի ամբարները: Այս տիպը բնորոշ էր հիմնականում ցրտաշունչ կլիմայով վայրերին և, բացի այդ, հայերի համար գողությունը, թալանը կանխելու, ունեցվածքը հսկողության տակ առնելու նպատակ է հետապնդել:

Այս համալիրում շատ կարևոր տեղ էր գրավում նաև գոմի օդան: Այն զուտ հայկական կառույց էր. 6-7 ամիս տևող ձմռան պայմաններում ջեռուցման դժվարությունները հաղթահարելու հարկադրանքով առաջացած բաժանմունք: Այն մեկ, երկու կամ երեք բացվածքներով կցվելով գոմին՝ ջեռուցվում էր անասունների շնչի և բուխարու ջերմությունից: Առաջավոր Ասիայի մյուս երկրներին գոմի օդան լիովին անծանոթ էր: Ուստի և սխալ է վրացագիտության մեջ տարածված այն թեզը, թե Վրաստանի հայերով բնակեցված (Ջավախք, Ծալկա և այլն) շրջաններին բնորոշ օդաները դիտարկվել են որպես վրացական մշակութային երևույթ (տե՛ս **Վ. Բդոյան,** Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, Ե., 2014, էջ 175-176): Հայկական մեծ ընտանիքը հարկադրաբար կիսվում էր՝ գիշերելով գլխատանը և գոմի օդայում: XIX դ. եվրոպացի և հայ ճանապարհորդները գոմի օդան հիշատակել են որպես ընտանիքի մի մասի ձմեռանոց բնակարան, տղամարդկանց հավաքատեղի, ժողովարան, երաժշտաթատերական բեմ, հյուրասենյակ, իջևանատուն: Առաջավոր Ասիայի մյուս երկրներում օդան գոմին կցված ձևով հայտնի չէ, մինչդեռ հայկական իրականության մեջ այս կառույցը գործել է գրեթե ամենուրեք (Տախտակ 22): Այդպիսի շրջաններից էին Արևելյան Հայաս-

տանում Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի, նաև Ջավախքի տարածաշրջանները, որոնցում հիմնականում հաստատվել էին Բարձր Հայքից 1830-ական թթ.-ից Արևելյան Հայաստան վերաբնակեցված արևմտահայերը, որոնք իրենց հետ բերեցին այս կենսաձևը: Այս բարդ կառույցները բաղկացած էին փակ միջանցք համարվող շվաքից, գլխատնից, որ շատ տեղերում կոչվել է **թոնրատուն, թնդրտուն, քուրսատուն, մեծ տուն, տան տուն, հացատուն, կենալատուն, ծխատուն, խորընտուն, կրակտուն, հազարաշեն** և այլն, նրան կից երկու մառաններից, վերին և ներքին տուն կոչված բաժանմունքներից, գոմից, բոլոր տեսակի անասունների համար առանձնացված բաժիններից, գոմի ճակատային մասը կազմող գոմասենյակ-օդայից, որոնք միմյանցից տարանջատվում էին միջնորմ պատնեշներով, բաժանումներով և մարագից: Այդպիսի տները պարտադիր գմբեթածածկ էին, որոնք հայտնի էին **հազարաշեն** անվամբ՝ իր տարատեսակներով (Տախտակ 23, 24): Վերջինս նշանակում է հազար կտոր գերաններից կազմված: Այս ծածկաձևը տարածված էր հատկապես անտառազուրկ, շինափայտով սակավ շրջաններում՝ բարձրաստիճան բարձրացող գմբեթով, կենտրոնում բացվող երդիկով՝ թոնիր-օջախի ծխի արագ հեռացման, լուսավորությունը բնակարանով մեկ ապահովելու, անձրևաջրի արագ հեռացման նպատակով: Ծածկաձևը կախված էր բնակլիմայական պայմաններից, տնտեսական զբաղմունքների բնույթից, կացարանի գործառույթներից, երբեմն նաև պատմաքաղաքական իրողություններից: Գլխատան մեծությունը կախված էր ընտանիքի մեծությունից և տնտեսաարտադրական գործունեությունից, սոցիալական կարգավիճակից: Գոմի ծածկը երկնավ կամ եռանավ էր՝ հաճախ շուռ տված տաշտի ձև է ունեցել, կամ էլ՝ ձկնամեջք է կոչ-

վել: Հարթ ծածկերին նախընտրություն է տրվել գլխավորապես դաշտային այգեգործական շրջաններում, որտեղ մթնոլորտային տեղումները սակավ էին, պատերի շինանյութը հում աղյուսն էր կամ կավաշաղախի զանգվածը: Ամենուրեք իբրև ծխաքաշ օգտագործվել են նաև երդիկի վրա դրվող կիսակարասները կամ ճիպոտահյուս կողովաձև, մոտ մեկ մետր բարձրությամբ ծխաքաշերը:

Հայկական գյուղական տան պատմական զարգացման հիմնական փուլերը և առանձնահատկությունները: Ինչպես ասվեց վերը, հնագույն, հին և միջնադարյան բնակարանային համալիրներն ըստ հնագիտական և մատենագրական տվյալների եղել են՝ գետնահյուղակ, ժայռախորշ, գետնափոր, կիսագետնափոր, ժայռափոր, գետներեսյա միաբջիջ և բազմաբջիջ և վերջապես, քսենոփոնյան տիպի գետնափոր բնակարաններ, որոնք գլխատան նախահիմքն էին:

Ժողովրդական բնակարանի տիպի, կառուցվածքի և ներսույթի վրա մեծապես ազդել են ոչ միայն բնաէկոլոգիական և աշխարհագրական պայմանները, այլև՝ սոցիալ-տնտեսական հարաբերությունները, քաղաքական պայմանները, տնտեսության բնույթը, բնակչության սոցիալական շերտավորման աստիճանը, ընտանիքի ձևերը, կազմը, կրոնական հավատալիքները, ազգային ավանդույթները և այլն:

Թոնրատուն-գլխատունը բաղկացած էր երկու մասից՝ **վերին տուն, թնդրտուն, թնդրափ** կամ **պզտի տուն** բարձրադիր հատվածից, իսկ ցածրադիր մեծ մասը կոչվում էր **ցածի տուն, մեծ տուն** կամ **տափներես**:

Պզտի կամ փոքր տան կենտրոնում տեղադրվում էր 1-2 թոնիր՝ մեկը հաց թխելու և մյուսը, որ ավելի փոքր էր՝ ջուր տաքացնելու և արագ կերակուրներ պատրաստելու և կենցա-

ղային այլ կարիքների համար: Պզտի տունը գերդաստանի խոհանոցն էր, նաև կանանց հարկաբաժինը, եթե հյուրեր էին ունենում: Իսկ փոքր վերին տուն չունեցող բոլոր գլխատներում թոնիրները տեղադրվում էին գլխատան կենտրոնում: Փոքր կամ վերին տունը մեծ կամ ներքին տնից բարձր էր 40-50 սմ և հաճախ մեծ տնից առանձնանում էր հացի և ընդեղենի ամբար-փեթակներով և երկու աստիճան սանդուղքով:

Ունևոր և բազմանդամ գերդաստանները երիտասարդ անհատական ընտանիքների համար երբեմն թոնրի շուրջը մի քանի ննջարան էին կառուցում, որոնք դռներով կապվում էին դրա հետ: Վերին կամ պզտի տանը հաղորդակցվում էին նաև աջ և ձախ կողմերում գտնվող երկու մառաններով (Տախտակ 25):

Գյուղական և քաղաքային բնակարանային համալիրների վերափոխման ու զարգացման հիմնական միտումները սկսվեցին խորհրդային և հետխորհրդային տարիներին:

Հարցեր և առաջադրանքներ:

Ներկայացնել նորաձևությունները խորհրդային (առանձնատների, տնտեսական արտադրական կառույցների համալիրներով, այգով, բանջարանոցով, պարսպապատ բակերով) և ***հետխորհրդային տարիներին*** *(ժամանակակից, նոր միահարկ, բազմահարկ, կոմունալ-կենցաղային հարմարավետ և դեռևս անկատար համալիրներով ու հարմարություններով):*

2.2. Բնակարանային համալիրների ներառույթը

Հարցեր և առաջադրանքներ:

Հայկական ավանդական տան համալիրների ջեռուցման և լուսավորության բնական և արհեստական համակարգերը, կահույքը, կարասին, սպասքը: Ամբողջ ներսույթը պայմանավորված է եղել բնակչության տնտեսական զբաղմունքներով,

սոցիալ-ունեցվածքային զարգացման աստիճանով, մշակութային, ընտանեկան ծիսական կյանքով և այլ գործոններով:

Ավանդական տան լուսավորության պարագաները (ճրագ, ճրագակալ, մոմ, մոմակալ, նավթավառ միջոցները):

Ջեռուցման միջոցները (թոնիր, օջախ, բուխարի, շարժական կրակարան (մանղալ), թիթեղյա վառարան և այլն):

XIX դ. երկրորդ կեսի – XX դ. սկզբների գյուղական բնակարանի ավանդական կահույքը, տեսակները, հատկացվելիությունը, տիպաբանությունը և դրանք պայմանավորող գործոնների բազմազանությունը, այդ թվում՝ գործածվող կահ-կարասիքը (շարժական և անշարժ), պահարանները, նստելու, ճաշելու, պառկելու կահույքը: Փռոցներ, անկողին (բարձ-մութաքա, ներքնակ, վերմակ, թաղիք, խսիր, ջեջիմ, կարպետ, գորգ և այլն): Սպասքեղեն:

Բնակարանի դեկորատիվ կիրառական տարրերը և ներսույթի գեղարվեստական-ճարտարապետական լուծումների բազմազանությունը, դրանք պայմանավորող գործոնները, դերերը:

Ավանդական բնակարանի կարասու տեսակները, հատկացվելիությունը, խոհանոցային և սեղանի սպասքը և դրանց վերափոխումները XX–XXI դդ.:

Ուշագրավ է ընդգծել սոցիալական շերտերի կահույքի և կարասու տարբերությունները, յուրաքանչյուրի տեղական անվանումները, ամանեղենը (խոհանոցի, սեղանի), դանակ, գդալ, պատառաքաղ գործածելու, պահելու եղանակները, դրանց պղծվելուց «մաքրվելու» պատճառները, արարողությունները:

Լուսավորման համակարգեր: Հարցի ազգագրական համալիր ուսումնասիրություն է կատարել Հ. Մարությանը իր

«Интерьер армянского народного жилища» (ՀԱԲ, պր. 17, 1989): Ավանդական հայկական բնակարանը լուսավորվում էր ինչպես բնական, այնպես էլ արհեստական միջոցներով: Բնական լուսավորումն իրականացվում էր ցերեկը՝ երդիկի, դռան բացվածքի, նաև վերջին շրջանում առաջացած պատուհանների միջոցով, որոնցով էլ կատարվում էր նաև օդափոխությունը: Երդիկի ձևը, չափը և ձևավորումը կախված էին կացարաններրի գործառույթից: Դրանք հիմնականում քառակուսի էին, թեև կարող էին լինել ուղղանկյուն, բազմանկյուն: Դրանք նաև օդափոխության միջոցներ էին: Բացի **երդիկ, երթիս, հուրթ** (Մեղրի, Սյունիք) անվանումներից, կոչվում էին նաև **ծխքաշ, մխքաշ** (Տախտակ 26):

Հարց է առաջանում. ինչո՞ւ գյուղական ծխամատյաններում շատ հաճախ ընտանիք, գերդաստան եզրույթի փոխարեն օգտագործվել է ծուխ, երդ[իկ]: Այս եզրույթը ոչ միայն նյութական մշակույթի տարրի նշանակություն ուներ, այլև խորհրդանշում էր հասարակության սոցիալական պատկերը, ընտանիքի կազմն ու կառուցվածքը, և պատահական չէ, որ ժողովրդական օրհնանքներում և անեծքներում հաճախ է արտահայտվում. «ծուխդ չմարի, օջախդ վառ մնա, …» և այլն: Լուսամուտը որպես լուսավորման միջոց համեմատաբար ուշ երևույթ էր: **Լուսավորման արհեստական ավանդական միջոցներից է ձեթի ճրագը:** Ձեթի ճրագները լինում էին քարաշեն, կավաշեն, մետաղյա: XIX դարի կեսերից՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո, գործածական դարձան նավթավառները՝ լամպերը:

Ջեռուցման ավանդական համակարգը: Ցրտից պաշտպանվելու համար օգտագործվել է ինչպես բնական, այնպես էլ կոնստրուկտիվ միջոցներ: Կայուն ջեռուցում ունենալու հա-

մար ցրտաշունչ և լեռնային շրջաններում տները հիմնականում կառուցվում էին լանջային տեղանքներում՝ երեք պատերը հողի մեջ, միայն մուտքի պատը գետնաերեսին: Կային տներ նաև, որ չորս պատերն էլ գետնի մեջ էին թաղված և միայն երդիկի միջոցով կարելի էր գուշակել բնակարանի գոյության մասին: Երկրորդ միջոցը այն է, որ բնակելի տները ցրտաշունչ շրջաններում հանդես են եկել գոմի հետ միացված, մեկ ծածկի տակ՝ անասունների շնչով տաքությունն ապահովելու համար: Այս հանգամանքը պայմանավորված էր նաև ընտանիքի ունեցվածքը հսկողության ներքո պահելու, գողունը, թալանը կանխելու նպատակով: Հայկական տների պատերը և ծածկը հաստ էին կառուցվում:

Կրակարանները. 1) առաջին տեսակը բաց օջախն էր, որը Սասունում, Մոկսում հայտնի էր **թվեք, հանգութ** անվանումներով: Դրանք պատրաստվում էին կավից, քարե սալից, սովորաբար դա թոնրի մեկ քառորդ մասն էր՝ թամբաձև կառուցվածքով, 2) օջախ-**թոնիր**: Հայաստանում ամենատարածվածը թոնիրն էր (Տախտակ 27): Թոնիրը ամենատարածված կրակարանն էր ոչ միայն Հայաստանում, այլև Առաջավոր Ասիայում, բայց, ի տարբերություն առաջավորասիականի, հայկական թոնիրները խորանում էին գետնի մեջ, և հացթուխ կինը նստած պարտադիր կռանում էր թխելու և հացը պոկելու համար: Մինչդեռ մյուս երկրներում թոնիրը գետներեսյա էր, և հացթուխ կինը կանգնած դիրքով էր հացը թխում: Նման թոնիրներ գործածվել են պատմական Աղձնիքի դաշտային՝ Բշերի և Սլիվանի շրջանների հայ բնակչության կողմից:

Թոնրի կրակը միշտ անթեղ էր պահվում: Թոնիրը և օջախը կրակարան եզրույթի հոմանիշներ են, և երկուսն էլ հաճախ նույնականացվել են ու կապվել ընտանիքի, տոհմի հարատևության գաղափարի հետ, որտեղից էլ՝ «օջախի զավակ»

ասույթը: Թոնիրն ընկալվել է «սրբազան կառույց»: Բնակավայրի որոշ թոնրատներ ձեռք են բերել նաև սրբազան վայրի նշանակություն:

Երրորդ կրակարանը պատի միջի ծխնելույզով **բուխարի** (**բուխարիգ, աշխանա**) (Տախտակ 28) կոչվածն էր, որ սովորաբար տեղադրվում էր գոմասենյակներում՝ գոմի օդաներում, տան սրահներում: Հայտնի է, որ հայկական օդան նաև տղամարդկանց հավաքատեղին էր, ժողովարանը, հեքիաթասացությունների վայրը, գյուղական ակումբի նշանակություն է ունեցել, ուստի և պարտադիր էր այնտեղ նման կրակարանների առկայությունը:

Հայոց ավանդական կահույքը և կարասին: Բնակարանի ներսույթի կարևորագույն մասն էր կահույքը, որ ծառայել է մարդկանց տարբեր կարիքների բավարարմանը: Կահույքը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ շարժական և անշարժ: Ավանդական կահույքը շատ բազմազան էր, այն կարելի է դասակարգել ըստ ձևի և կառուցվածքի, պատրաստման նյութի, գործառութային նշանակության. 1) պառկելու կահույք (Տախտակ 29), 2) մանկական կահույք, 3) ճաշելու կահույք, 4) տնային իրերի պահպանման համար նախատեսված կահույք: Լայն առումով կահույքի մաս են կազմել նաև փռոցները, լուսավորության պարագաները, ցուցադրական-գեղարվեստական բնույթի ամանները, ասեղնագործությունները, անկողնակալները և այլն: XIX-XX դդ. տվյալները ներկայացնում են կահույքի այն տեսակները, որոնք հատուկ էին ժողովրդի տարբեր խավերին: Տնտեսական ծանր պայմանների պատճառով շատ տեղերում պահպանվել էին նախնադարյան ճիպոտահյուս կարասիների գրեթե բոլոր տեսակները, որոնք ծեփվում էին մղեղախառն կավով կամ թրիքով:

Այս պարագայում կավի շաղախի մեջ մազեր էին խառ-

նում, որոնք կապիչի դեր ունեին: Փեթակները մեծ մասամբ տեղավորվում էին գլխատներում, որտեղ սերմացուներն ու ալյուրը չոր էին մնում: Կավե մեծ ու հղկված ամբարների գլխավոր ճակատների վրա փորաքանդակվում էին ծաղկազարդեր, տղամարդու և կնոջ ու թռչունների պատկերներ, եզան գլուխ:

Կահույքի մեջ ամենակարևորը տախտակե ամբարներն էին՝ պահարանները, սնդուկի տեսակները, փայտե և գործվածքով գդալամանները և այլն: Ամբարների և գլխատների խոյակների քանդակազարդերը ներդաշնակություն էին ապահովում:

Գյուղական հասարակության մեջ XIX դարում և XX դ. առաջին քառորդում կիրառելի չէին քաղաքներում գործածվող բարձրաոտ սեղանները: Պատճառն այն էր, որ ժողովուրդը, մեծ մասամբ կանայք, դեռևս պահպանում էին համեստությունը մատնանշող ծնկած և ծալապատիկ նստելու ձևերը: Ճաշասեղանի դեր են կատարել նմանապես քուրսին՝ իր փռոցով, զարդանախշված փայտե և պղնձե սկուտեղները, հասարակ և ասեղնագործված սփռոցները, կաշվից և մորթուց պատրաստված փռոցները, ճիպոտահյուս սալաները և այլն:

Հակառակ քաղաքների ունևոր խավերի, որոնց կենցաղում բարձրաոտ սեղանների հետ գործածվում էին աթոռներ, թիկնաթոռներ ու բազկաթոռներ, հայկական գյուղում դրանց փոխարինում էին փռոցները, դմփիկները, եռոտանի կամ քառոտանի ցածրիկ նստարանները, անշարժ նստարանները, շարժական թախտերը և այլն: Գյուղական վայրերում գետնին պառկելու համար գործածվում էին հաստ խսիրներ, թաղիքներ, կարպետներ, գորգեր և այլն: Չքավորական շրջաններում, սակայն, հաճախ թաղիքն ու կարպետը ծառայում էին նաև անկողնի փոխարեն: Սովորաբար անկողինը ծալք էին անում

և ծածկում: Ծխից և փոշուց պաշտպանելու համար գործածական էին փայտե, կարպետահյուս անկողնակալներ՝ մաֆրաշներ: Նշված կարգը աստիճանաբար վերացավ խորհրդային շրջանի առաջին մի քանի տասնամյակներին: 1930-ական թվականներից գյուղական բնակավայրեր մուտք գործեցին ֆաբրիկա-գործարանային կահույքի տեսակներ:

Հին քաղաքներն ու գյուղերը ջեռուցման սահմանափակ միջոցներ ունեին: Պատի օջախը և մետաղյա կրակարանը քաղաքային բնակարանների միջոցներ էին: Գլխատները գյուղական բնակավայրերում ջեռուցվում էին թոնիրներով, իսկ թոնիր չունեցող շրջաններում՝ գլխատան կենտրոնում բաց օջախ էին ունենում: Կրակը անմար պահելու սովորույթ կար. գերանի ծայրը դնում էին օջախի մեջ և անընդհատ վառում էին: Թոնրի անբաժան մասն էր քուրսին: Վերջինս վերացավ 1940-50-ական թթ.: 1950-ական թթ. թիթեղյա վառարանների տիրապետող վառելիքը դարձավ քարածուխը:

Լուսավորության հիմնական միջոցները մոմն ու ձեթի ճրագն էին, ապա՝ նավթավառ լամպերը: Խորհրդային շրջանից դրանց փոխարինեցին էլեկտրական լամպերը: Հայկական գյուղը 1930-ական թվականների կեսերից մինչև 1950-ական թթ. վերջերը լիովին ազատվեց լուսավորության հնագույն միջոցներից:

Ամաններից տիրապետողը խեցեղենն էր, մասամբ նաև՝ պղնձամանները, անտառային շրջաններում՝ փայտեղենը: Ապակու արտադրությունը Հայաստանում վերականգնվեց խորհրդային կարգեր հաստատվելուց հետո: Քաղաքային բնակարաններում խորհրդային տարիներին կիրառելի դարձան քարե սկահակները, թասերը, փորագիր զարդանախշերով այլ առարկաներ, փայտե, քարե սկուտեղները:

1930-ական թվականներից սկսած՝ ճաշելու կավամաններին փոխարինեցին ճենապակյա ափսեները, որով վերացավ միևնույն ամանից օգտվելու սովորությունը: Կենցաղից աստիճանաբար դուրս մղվեցին կավե, փայտե, մորթե ամանեղենը, 1960-ական թվականներին դրանց փոխարինեցին ապակյա և ճենապակյա անոթները:

Գլխատունը, ինչպես ասվեց վերը, գրեթե միակ խոհանոցն էր, որտեղ թխվում էին առօրյա ու ծիսական հացերը և եփվում կերակուրները: Այդ պատճառով էլ եփելու և ուտելու բոլոր ամաններն այնտեղ էին պահվում: Ընդհանրապես նախ տղամարդիկ, ապա կանայք էին ճաշում թոնրատանը: Բացառիկ շրջաններում տղամարդիկ ճաշում էին օդաներում, իսկ կանայք՝ թոնրատանը:

Գլխատունը ննջարանն էր. բացի նորապսակներից, ամբողջ գերդաստանը քնում էր այնտեղ. անկողինները փռվում էին թոնրի շուրջը՝ ննջողների ոտքերը թոնրի կողմն ուղղելով: Երեխաների անկողինները գցվում էին ծնողների անկողիններին մոտ:

Ունևոր գերդաստանները գլխատուն-թոնրատան պատերի տակ հիմնում էին տախտակե անշարժ ու լայն որմնաթախտեր, որոնց վրա ննջում էին, իսկ ցերեկը՝ հանգստանում և աշխատում: Բնորոշ էր նաև շարժական մեծ թախտերի գործածությունը: Նորապսակների համար իբրև ննջարան էին ծառայում գոմի օդան, թոնրատան կից մառանը և որոշ տեղերում՝ գլխատան վրա բացվող այն փոքրաձավալ սենյակները, որոնք դուռ կամ վարագույր էին ունենում:

Թոնրատունն ամբարանոց էր այն բոլոր ընտանիքներում, որոնք առանձին ամբարատուն չունեին: Այդտեղ էին տեղավորում սերմի, աղունի և ալյուրի պաշարները:

Թոնրատունն աշխատանոց էր: Բրդի և կավի մշակման գրեթե բոլոր գործընթացները, զգեստներ գործելն ու կարելը, երեխաների խնամքն ու դաստիարակությունը և կանանց բոլոր աշխատանքները կատարվում էին այստեղ:

Գլխատները ծառայել են կանանց հասակային դասերի միությունների կազմակերպած արարողություններին:

Գլխատունը նաև սրբազան բաժանմունք էր, աղոթարան: Այն շատ հաճախ, եթե բնակավայրում եկեղեցի չի եղել, փոխարինել է դրան, որտեղ էլ թոնրի շուրջը կատարվել է պսակի կամ կնունքի արարողություն:

Մառանը հատուկ էր ուսնոր տնտեսություններին, որը փակի տակ էր պահվում: Ցերեկային լուսավորության սակավությունը մթերքները սառը պահելու պայմաններից մեկն էր: Կառուցվում էին նաև ամբարատներ:

Հայոց ավանդական բնակարանի մուտքի դռները եկեղեցիների մուտքերի նման լայն էին, բայց ցածր, որպեսզի անասունները ազատ ելումուտ անեին, և որ կարևոր էր՝ ավարառուները չկարողանային երիվարով ներխուժել բնակարան: Այն կառուցվում էր ուղղահայաց հաստ և լայն տախտակներից, որոնք իրար էին ամրացվում երկու կամ երեք տեղով հորիզոնական տախտակներով, որոնք կոչվում էին գոտի:

Ժողովրդական տան համակառույցների մեծ մասի ներքին հարդարումը կատարվում էր բարձր արվեստով, մինչդեռ արտաքին հարդարումը՝ կառուցապատումը, ցանկապատումը, ձևավորումը, որպես ժողովրդի դարավոր ճնշման հետևանք, հարկադրաբար գեղեցիկը թաքցնելու միտում ուներ:

Տնտեսական, արտադրական, հասարակական, պաշտամունքային կառույցներ: *Հարցումներով պարզաբանել դրանց կառուցվածքային, գործառութային և արեալային առանձնահատկությունները և հարաբերակցությունը բնակարանային*

համալիրների հետ: Նմանատիպ կառույցների (ջրաղաց, ձիթհան, արհեստանոց, վարսավիրանոց, դարբնոց, դպրոց, եկեղեցի, մատուտ և այլն) պայմանավորվածությունը բնակչության տնտեսական զբաղմունքների, հասարակական, ընտանեկան և ծիսական կյանքի ավանդույթների հետ: Դրանց վերափոխումները խորհրդային և հետխորհրդային տարիներին:

Արտադրական կառույցներ: Երկրագործական, այգեգործական արտադրանքների վերամշակման ավանդական միջոցներն էին ջրաղացը, ձիթհանը, գինեհան-օղեհան սարքերը:

Ջրաղացում ցորեն, գարի աղալուց բացի, եղել է ձավար պատրաստելու սարք, որը **դինգ** էր կոչվում: Ջրաղացների շենքերը, տեղադրվում էին հոսող ջրերի ափին, հասարակ կառույցներ էին՝ հարթ կտուրներով ու փոքրիկ երդիկներով: Ջեռուցման համար կային պատի օջախներ և թոնիրներ, որոնց մեջ հաճախորդները բաղարջ էին թխում:

Ջրաղացքարերը շարժման մեջ դնելու համար ջրաղացի թիկունքում թեք դիրքով տեղավորվում էին տախտակներ, փորված գերաններից ու տուֆ քարից պատրաստված ճնշման խողովակներ: Այդ բանի համար ջրաղացները հիմնվում էին ջրերի անկման կետերում և, որքան հնարավոր էր՝ ճանապարհներին մոտիկ:

Ձիթհաններում ձեթն ստացվել է քարե ծանրոցների ճնշմամբ: Ե՛վ ջրաղացը, և՛ ձիթհանը Հայկական լեռնաշխարհին հայտնի էր և զարգացած էր դեռևս ուրարտական ժամանակաշրջանից: Ուրարտական ժամանակաշրջանից հասած տեխնիկայի կատարելագործմամբ հայերը հասել էին վիթխարի գերան-մամլիչների ստեղծմանն ու աշխատանքի կատարելագործմանը: Ձիթհանի գլխավոր տարրերն էին՝ բոված կտավատը, ճմլող հսկայական քարը, 2-4 մամլող գերանները, վերջիններիս շարժման համակարգի պտուտակաձև պողոսակը և

շարժող գոմշի լծասարքերը: Հակառակ ջրաղացների՝ ձիթհանները կարելի էր կառուցել ամեն տեղ՝ թե՛ գյուղերում, թե՛ քաղաքներում: Ձիթհանների տարածվածությունը բացատրվում էր կենցաղի մեջ ձեթի առատ օգտագործման հանգամանքով: Այն, սննդից բացի, օգտագործվել է նաև լուսավորության համակարգում: Տնտեսության մեջ օգտագործվող փոկերի, մորթիների, տրեխների և այլ պարագաների մշակումը ձեթով էր կատարվում: Գոմեշներին ձմռանն առողջ ու մաքուր պահելուն հաճախ ձիթելն էր օգնում:

Այգեգործական շրջաններում գինեհանությունը՝ հնձանային մշակույթը, և արտադրանքը պահպանող շենքերը՝ մառանները, շատ հին պատմություն ունեն: Հնձանը այն ավազանն է, որի մեջ խաղողը ոտքերով տրորելով՝ հյութը հոսեցնում էին քաղցուի ամանի մեջ: Եղել են նաև տակառաձև հնձաններ, որոնք գործածվում էին շենքերից դուրս, այգիներում: Մառանները միջնադարում հայտնի կարասատներն էին: Նկատենք, որ ուրարտական պեղված հնձանների և կարասների ձևերը գրեթե նույնությամբ պահպանվել են մինչև XX դարի վերջին տասնամյակները:

Գրականություն

1. **Աբովյան Խ.,** Գյուղական տների կառուցվածքը // Երկեր, հ. 10, 1961, էջ 59-96:
2. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Երևան, 1974, էջ 66-73:
3. **Բդոյան Վ.,** Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, Երևան, 2014, էջ 147-208:
4. **Թորամանյան Թ.,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, հ. 2, Երևան, 1948:
5. **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Երևան, 1969:
6. **Մնացականյան Ս.,** Հայկական գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Եր., 1956:

7. **Խալփախչյան Հ.,** Հայաստանի արտադրական կառուցվածքները, Երևան, 1961:

8. **Մարության Հ.,** Հայոց ավանդութային շտեմարանները (ըստ ազգագրական շրջանների) // ԼՀԳ, 1987, № 7, էջ 65-77:

9. **Նահապետյան Ռ.,** Օջախ-թոնրի պաշտամունքի մի քանի սովորույթներ Աղձնիքում // Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ, միջազգային առաջին գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 124-140:

10. **Նահապետյան Ռ.,** Հայկական ժողովրդական ավանդական բնակարանն ըստ գրավոր սկզբնաղբյուրների // «Էջմիածին», 2019, Է, էջ 85-106:

11. **Նահապետյան Ռ.,** Հայկական լեռնաշխարհը բնակարանաշինական ավանդների հնագույն կենտրոն // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 39-54:

12. **Նահապետյան Ռ.,** Գլխատան ավանդութային տիպերը Արևելյան Հայաստանում (XIX դար – XX դարասկիզբ) // ԲԵՀ, Հայագիտություն, 2021, № 1, էջ 25-40:

13. **Նահապետյան Ռ.,** Հայկական ավանդական բնակավայր և բնակարան. ազգագրական ուսումնասիրություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան, 2025:

14. **Պապուխյան Ն.,** Սյունիքի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը, Երևան, 1972:

15. **Վարդանյան Ս.,** Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, Երևան, 1969:

16. **Арутюнов С., Мкртумян Ю.,** Сельские поселения Армении (КЖЭ, Ведение).

17. **Витов В.,** О классификации поселений // СЭ, 1953, № 3, էջ 27-38:

18. Культура жизнеобеспечения и этнос, Ереван, 1983.

19. **Марутян А.,** Поселения и жилища // Армяне, Серия, «Народы и культуры», М., 2012.

20. **Марутян А.,** Интерьер армянского народного жилища (Вторая половина XIX - начало XX в.) // АЭФ, т. 17, Ер., 1989, с. 65-143.

21. **Мелконян Э.,** Сельские поселения Армении // Культура жизнеобеспечения и этнос, Ер., 1983.

22. **Халпахчян О.,** Гражданское зодчество Армении, М., 1971.

ԹԵՄԱ 3
ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶՆ ՈՒ ԶԱՐԴԱՐԱՆՔԸ

3.1. Տարազն ու զարդարանքը որպես սոցիոմշակութային տարր

Տարազի պատմահամեմատական, տարածքային-տիպաբանական և խորհրդանշանային ուսումնասիրության հիմնախնդիրը հայագիտության մեջ, ուսումնասիրության արդի վիճակը

Հայկական տարազն ըստ հնագույն և միջնադարյան աղբյուրների: Անբավարար է հիշատակված: Սուղ են բուն ժողովրդից առնված տարազի վերաբերյալ օրինակները: Քսենոփոնը մի տեղ գրում է արմեն երեխաների «բարբարոսական» զգեստների մասին: Ակնարկել է նաև Տիգրան Մեծի խույրի մասին: Նրա մի ակնարկից պարզվում է, որ հայ ուսնոր կանայք զարդեր կրելու սովորություն են ունեցել: Իսկ Կյուրոսի հետևյալ խոսքերից երևում է, որ զարդեր կրել են նաև տղամարդիկ. «Դու ուղարկիր որդուդ զորքի մեջ (ասում է Կյուրոսը հայոց թագավորի կնոջը) ու դրանցով (այսինքն՝ ոսկե դրամներով) ամենագեղեցիկ կերպով նրան զարդարիր»[1]: Հայկական զգեստների վերաբերյալ Ստրաբոնի մի ակնարկը տարակուսանք է առաջացնում, իբր, արմենները թեսալացիներ են եղել. «Հայոց զգեստը թեսալական է, ինչպես այն երկար վերարկուները, որ ողբերգությանց մեջ թեսալական են կոչվում և գոտիով կապում են կրծքի վրա և այն շորերը՝ որ ողբերգակները օրինակել են թեսալացիներից....»: Այս առթիվ ազգագրագետ Վ. Բդոյանը տալիս է հետևյալ բացատրությունը. «Հունական և արև-

[1] **Քսենոփոն,** Կյուրոպեդիա, Երևան, 2000, III, 116-117:

մտահայկական զգեստի որոշ նմանության կամ սահմանակից շրջաններում դրա որոշ տեսակների փոխառության հնարավորությունը չի բացառվում: XIX դարում Բարձր Հայքում և Հունաստանի որոշ շրջաններում դիտվում էին կանանց շրջազգեստների ու գոգնոցների նմանություններ, որոնք հաստատում են այդ հնարավորությունները: Սակայն ամբողջ Հայաստանի զգեստները թեսալական համարելու ստրաբոնյան վարկածը միանգամայն անընդունելի է (տե՛ս Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, էջ 96):

Հայ պատմագիրների հաղորդած տեղեկությունները մեծ մասամբ կապված են ֆեոդալական արքունիքի, իշխանական և քաղաքային ուننոր դասերի, վանական միաբանությունների և եկեղեցական տարազի ամենատարբեր ձևերի ու զարդերի հետ: Այդուհանդերձ, շատ կարևոր են հայագիտության մեջ նրանց կցկտուր վկայությունների հիշատակությունները հայկական տարազի վերաբերյալ:

Տղամարդու ժողովրդական տարազի նկարագիր է թողել Փավստոս Բուզանդը: Նա գրում է. «Նրան (Հովհան եպիսկոպոսին) պատահեց մի անծանոթ աշխարհական մարդ. պատանի հասակով, ձի հեծած, մեջքին սուր կապած, գոտուց թուրը կախած, մեջքին աղեղ ու կապարճ, մազերը լվացած, օծած, կոկած, գլխին վարսակալ դրած, ուսին լոդիկ (վերնազգեստ) ձգած»[1]: Ըստ Թ. Արծրունու՝ ճգնավոր կրոնավորները հագնում էին այն հասարակ, կոշտ ու խարանող զգեստները, որոնք պատրաստվում էին մազեղեններից, այծի մորթուց, կոպիտ գործվածքների այլևայլ տեսակներից և այլն[2]: Այդ զգեստները հագնում էին մերկ մարմնի վրա, ինչպես անհիշելի ժամանակ-

---

[1] **Փ. Բուզանդ,** Հայոց պատմություն, աշխ. թարգմ., էջ 301:

[2] **Թ. Արծրունի,** Պատմութիւն տունն Արծրունեաց, էջ 203:

ներում: Դրանք հայտնի էին **քուրձ, ձորձ, այծենի, օդիկ, լեշկամաշկ զգեստ** (մազը թափած մորթուց), **մազեղեն** և այլն:

Կանանց աշխարհիկ տարազի նկարագիր չկա հայ պատմագիրների երկերում, կամ էլ շատ կցկտուր են: Ըստ Հովհ. Մանդակունու՝ սգավոր կանայք սգո քուրձ էին հագնում[1]: Երկու սեռի զգեստների բոլոր տեսակների փոխարեն հաճախ ակնարկներ են արված հանդերձ և զգեստ հոմանիշ բառերով[2]:

Նրանք ոտնամաններից հիշատակել են տրեխը[3] և կոշիկը[4]: Պատմագիրները տեղականի հետ նկարագրել են օտարը, անդրադարձել են նմանության որոշ հարցերի: Պատմուճանը, որ երկար զարդարուն զգեստ էր, արքայական վերարկուները, անդրավարտիքները, գոտիները, թագերն ու գլխարկները, վարսակալները, խույրերը, սամույրները, կոշիկները, ծիրանիները[5] և այլն, ոսկերիչ և ասեղնագործ վարպետների ձեռքով այնպես էին զարդարվում, որ լույսից փայլատակում էին, ինչպես նշում են պատմիչները: Որպես կարգ՝ պիտի լինեին շքեղաշուք և պատվական ակներով ու մարգարիտներով զարդարված:

Պատմագրությունը բազմապիսի տեղեկություններ է թողել եկեղեցական ծիսական արարողությունների ժամանակ գործածվող և հոգևոր դասի առօրյա տարազի վերաբերյալ:

Միջնադարյան զարդերը, որ պատրաստվել են ոսկուց, արծաթից, թանկագին քարերից և այլն, պատմագիրների գոր-

---

[1] **Հովհ. Մանդակունի,** նշվ. աշխ., էջ 51, 176:

[2] **Ագաթանգեղոս,** էջ 133, 160, 426-427, 465, 481, **Հովհ. Մամիկոնյան,** էջ 228, **Կ. Գանձակեցի,** էջ 67, 202, 283, 318, **Թ. Արծրունի,** էջ 279, **Ստ. Օրբելյան,** 7, 33, 172:

[3] **Թ. Արծրունի,** էջ 203, **Դրասխանակերտցի,** էջ 15, 190, **Ա. Դավրիժեցի,** էջ 176, 177, 609 և այլն:

[4] **Փ. Բուզանդ,** էջ 37, 220, 286, **Թ. Արծրունի,** էջ 318, **Ստ. Օրբելյան,** էջ 7, 15 և այլն:

[5] **Ագաթանգեղոս,** էջ 8, 11, 12, 13, 37, 38, 53, 103, 104, 137, 142, 301, 442, 462 և այլն:

ծերում հիշատակվում են այն դեպքերում, երբ առիթ է ներկայանում նկարագրելու տոնական ու պաշտոնական զգեստները: Դրանք հաճախ հիշատակվում են զարդեր անվան տակ, թեև ունեն նաև իրենց անվանումները. մատանի, ապարանջան, մանյակ, գինդ, գոտու զարդ, ասպիզակ (կրծքի զարդ) և այլն:

Հիշատակություններ կան օծանելիքների, օծվելու, շպարվելու սովորությունների, կանանց աչքերը հարդարելու դեղդիրների և դեղերի մասին:

Հայկական ավանդական տարազի ուսումնասիրվածությունը: Տարազը հայոց կենսապահովման մշակույթի անհամեմատ լավ ուսումնասիրված հիմնախնդիրներից է: Ավատական վերնախավի հագուստին է անդրադարձել Ղ. Ինճիճյանը՝ «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», Վենետիկ, 1835, Ե. Լալայանը իր երկերում՝ «Զգեստ և զարդ» բաժիններում, մասնագիտական քննության առումով մեծ է Ա. Պատրիկի (Հայկական տարազ, Եր., 1983), Ն. Ավագյանի (Հայ ժողովրդական տարազ, Եր., 1983), Վ. Բդոյանի (Հայ ազգագրություն, Եր., 1974), իսկ միջնադարյան մատենագիրների տեղեկությունների հիման վրա՝ Վ. Հացունու (Պատմութիւն հին հայ տարազին, 1923) աշխատությունների նշանակությունը: Տարազի ուսումնասիրության հարցում զգալի է Ս. Պողոսյանի ներդրումը:

Զգեստն ու զարդարանքը որպես սոցիոմշակութային տարր, դրանց տեղը կենսապահովման մշակույթի համակարգում: Տարազը կենսապահովման մշակույթի առավել վառ էթնիկ առանձնահատկությունները արձանագրող սոցիոմշակութային երևույթ է, ամենից ավելի կայուն տարրերից է, ամենանախնական երևույթների լուռ վկայությունը, որ առնչվում է

մայր ժողովրդի խորը անցյալին:

Տարազը պատմական տարբեր դարաշրջաններում զանազան երկրներին, ժողովուրդներին, էթնիկական և տարածքային խմբերին, բնակչության որոշակի շերտերին բնորոշ հագուստն է՝ 1) ձևվածքի, 2) գույնի, 3) նյութի տեսակի, 4) արտաքին հարդարանքի ու զարդանախշման առանձնահատկություններով[1]:

Ամեն մի ժողովրդի տարազը պայմանավորված է եղել տվյալ երկրի բնակլիմայական և աշխարհագրական պայմաններով, ազգային մշակույթով, կենցաղով, տվյալ երկրի բնական արտադրանքով, տնտեսավարման եղանակով ու զբաղմունքով, պատմաքաղաքական իրողություններով: Կարևոր նշանակություն են ունեցել նաև բնակչության ներգաղթերն ու արտագաղթերը, հարևան ժողովուրդների հետ ունեցած մշակութային, տնտեսական կապերը:

Միջէթնիկ կապերի արգասիքները հայոց ավանդական տարազախմբերում նույնպես իրենց դերն են ունեցել:

Կանանց և տղամարդկանց առօրյա և տոնածիսական տարազի և զարդարանքի համալիրները ներկայանում են ըստ տարիքային և գյուղական ու քաղաքային տարբերակների:

Ավանդական տարազը մարդու ցեղային, դասային, սեռային պատկանելությունը ցույց տվող մի յուրահատուկ անձնագիր է: Այն առավել վառ է կրում էթնիկական ընդհանրության, հոգեկերտվածքի, ազգային խառնվածքի, պատմական ճակատագրի շատ առանձնահատկություններ: Հագուստով կարելի է բացահայտել նաև կրողի ներաշխարհը, տրամադրություն-

---

[1] **Ս. Պողոսյան**, Հայկական տարազի համալիրները (պատմաազգագրական ակնարկ) // **Փափազյան Հ.,** Հայկական տարազը (Երևան, 2008), ներածություն, էջ 13-27:

ները, գաղափարական հայացքները: Հայկական տարազը համապատասխանել է հայ մարդու վարք ու բարքին, նրա՝ հասարակության մեջ գրաված դիրքին, բարոյական չափանիշներին, մասնագիտական հմտություններին, պահվածքին ու ճաշակին: Դրանում ամփոփված էին հայ մարդու ամոթխածությունը, արժանապատվությունը, կրթական մակարդակը, ընտանեկան դաստիարակության կնիքը, բանիմացությունը, մասնագիտությունը:

Իսկ որո՞նք են տարազի գործառույթները. 1) կիրառական (մերկությունը ծածկել), 2) սոցիալական (դիրքը, պաշտոնը), 3) սեռատարիքային (սեռը և տարիքը ընդգծելու), 4) գեղագիտական (հմայքը ցուցադրելու), 5) ծիսահմայական (չարակամ ազդեցությունը կանխելու), 6) հարգի համարվելու (ներկայանալի դառնալու), 7) էրոտիկ (սեռական հակումները ցուցադրելու) գործառույթներ:

Տարազային համալիրների և դրանց կրած փոփոխությունների առանձնահատկությունները: Տարակույս չկա, որ վաղ շրջանից ժառանգված տարազաձևերն իրենց անընդհատ զարգացման ճանապարհին կրել են որոշակի փոփոխություններ՝ արտացոլելով նաև այն ժողովուրդների տարազաձևերի մասնակի ազդեցությունները, որոնց հետ երկարատև շփման մեջ են եղել: Այդ երևույթը հատուկ է եղել նաև հայերին: Բացի այդ, մեր ժողովուրդը հազարամյակների ընթացքում անընդմեջ ենթարկվել է տեղահանությունների, տեղաշարժերի, և բնական է, որ այն պետք է կրեր որոշակի փոփոխություններ: Միաժամանակ, միջնադարյան ֆեոդալական օրենքների համաձայն՝ վասալական կախում ունեցող Հայաստանի պաշտոնական շրջաններում պարտավոր էին կրել այն տարազը, որը հատուկ էր տվյալ տերությանը: Հաճախ նկարագրվել են արաբական

երկրների կողմից հայ թագավորներին և արքունի այլ պաշտոնյաների նվիրված կամ պարտադրված տարազաձևերը: Այս երևույթը հայ տարազն ուսումնասիրողներին հանգեցրել են այն սխալ հետևությանը, թե իբր մեր ազգային տարազը օտարների ազդեցությամբ շարունակ փոփոխվել է: Սակայն հայկական տարազը միշտ էլ պահպանել է իր ուրույն գծերը: Ոչ մի էթնիկական հանրույթ կուրորեն չի փոխառում այլէթնիկ մշակութային այս կամ այն տարրը և նույնիսկ յուրացնելու պարագայում դա հարմարեցնում է իր կենցաղամշակութային համալիրի առանձնահատկություններին: Հայկական ավանդական տարազի համակարգում կան օտարամուտ անվանումներ, որոնք հաճախ զուտ լեզվական փոխառություններ են, և դրանք ոչ մասնագետներին թյուրիմացությունների մեջ են գցում, որպիսի երևույթն առկա է ժողովրդական մշակույթի մյուս բնագավառներում ևս: Սակայն, ի տարբերություն ազնվական դասի, անաղարտ է մնացել գեղջկական տարազը, հատկապես կանանց հանդերձանքը: Դա լիովին համապատասխանում էր հայ գյուղական բնակչության թե՛ զբաղմունքներին և թե՛ հոգևոր պահանջմունքներին, ժողովրդական ավանդույթներին: Սեփական տարազը պահպանելուն մեծապես նպաստել են հասարակական և կրոնաբարոյական ավանդները:

Տարազի փոփոխությունը առավել նկատելի էր հայկական գաղթօջախներում: Բայց հայոց տարազն իր ամբողջության մեջ բուն երկրում միանգամայն ինքնուրույն է՝ հարուստ բազմազանությամբ ու ասեղնագործական բարձր արվեստով:

Գյուղական ավագ սերնդի տղամարդիկ, սոցիալ-տնտեսական փոփոխություններով պայմանավորված, հինը թողեցին 1950-ական թթ. կեսերին: Գյուղական երիտասարդ կա-

նանց շրջանում քաղաքային տարազը վերջնականապես արմատացավ 1950-ական թթ. վերջերին: Բայց ավագ սերնդի կանայք, դժվարությամբ հրաժարվելով հնից, 1960-ական թթ. որոշ վայրերում և որոշ չափով տակավին պահպանում էին հին տարազը (Զանգեզուր, Արցախ) կամ ազգային քաղաքային տարազների խառնուրդները (Ապարան, Գեղարքունիք և այլն):

Հայկական ավանդական տարազի տարածքային համալիրների տիպերը: Հայկական ավանդական տարազը իր արտաքին տեսքով, ձևավորմամբ, կտորի նյութով, զարդանախշման արվեստով տարբեր պատմաազգագրական շրջաններում տեղի կլիմայական ու աշխարհագրական պայմաններին, բնակչության զարգացման աստիճանին, տնտեսավարման ձևերին, ազգային ավանդներին համապատասխան ունեցել է որոշակի առանձնահատկություններ (Տախտակ 30): Առաքել Պատրիկը «Հայկական տարազ» գրքում կազմել է պատմական Հայաստանի 15 աշխարհների քարտեզը, Նազիկ Ավագյանը՝ «Հայ ժողովրդական տարազը» աշխատության մեջ, Վ. Բդոյանը՝ «Հայ ազգագրություն» ձեռնարկում առանձնացրել են 7-8 տարածքային տարազային տարբերակներ: Դրանք են՝ Վասպուրականի, Այրարատյան, Աղձնիք-Ծոփքի, Սյունիք-Արցախի, Բարձր Հայքի, Տուրուբերանի, Կիլիկյան Հայաստանի, իսկ Բդոյանի կարծիքով՝ նաև Համշենի՝ Պոնտոսի հայության տարազային համալիրների: Ավանդապահության շնորհիվ կանանց տարազը խմբավորման համար ավելի լավ հիմք է ծառայել:

Հայոց ավանդական տարազային համալիրները գրեթե համընկնում են պատմական Հայաստանի աշխարհներին: Տարազային այդ խմբերը ունեցել են իրենց սեռատարիքային

տարբերակները: Կանանց դեպքում այն զուտ տարիքային էր՝ մանկական, արբունքի շրջան, երիտասարդ կանանց և ապա տարեց կնոջ համալիր, տղամարդկանց պարագայում՝ մանկական, երիտասարդական և ապա տարեց տղամարդու համալիր: Դրանք ունեցել են նաև գյուղական և քաղաքային տարբերակներ: Հայաստանի պատմության թանգարանում պահպանվում է հայկական տարազային համալիրում 47 տարազանմուշ, գրեթե նույնքան, որքան հայկական բարբառները: Հայաստանի Արևմտյան և Արևելյան տարազի համալիրները տարբերվել են այն բանով, որ արևմտյան գավառներում հագուստը ճոխ է ասեղնագործվել, և զոգնոցը տարազի բաղկացուցիչ մասն է եղել, մինչդեռ արևելյանում՝ դրանք գրեթե բացակայել են:

Հայ կնոջ զգեստը բոլոր գավառներում գրեթե նույնն էր՝ ներքնազգեստ շապիկը (սպիտակ կամ կարմիր), կարմիր վարտիքը՝ ներքին եզրում ասեղնագործված: Զգեստը պճղնավոր էր՝ կողքերից ճեղքվածքներով: Բոլոր համալիրներում կրծքի և կողքերի ճեղքվածքները հարդարվել են ասեղնագործությամբ, կտրվածքը՝ կտորից նեղ երիզներով: Տարազի պարտադիր մաս էին երկար կտորից կամ մետաքսյա մի քանի տակ իրանի շուրջը փաթաթվող գոտիները:

Արևելահայ տղամարդու տարազը: Արևելյան Հայաստանում տղամարդու տարազը, ի տարբերություն կնոջ տարազի, բնութագրվում էր ընդհանուր գծերով: Այն ավելի փոփոխական էր և անհամեմատ արագ է կորցրել ազգային նկարագիրը: Տղամարդու տարազը բաց ու ընկալունակ համակարգ էր, ինչը արդյունք էր տղամարդկանց հասարակական, տնտեսական և ընտանեկան ազատ դրության, միջէթնիկական բազմակողմանի, երկարատև մշակութային, տնտեսական կապերի: Արևել-

յան Հայաստանում տարածված էր «կովկասյան» կոչված տարազաձևը, որը կազմված էր ներքնազգեստից, արխալուղ կոչված կարճ վերնազգեստից ու չուխայից (երկարափեշ տաք վերնազգեստ): Ձմռանը հագել են երկար լայն մուշտակ, առանց գոտու, գլխին կրել գառան կամ ոչխարի մորթուց գլխարկ (Տախտակ 31):

Արևմտահայ տղամարդու տարազը: Արևմտահայ տղամարդու տարազն էականորեն տարբերվում էր. այն կազմված էր ասեղնագործ տարրերից՝ ելակ-կարճ, անթև զգեստ, վերնաշապիկ, կարճ վերնազգեստ: Հագուստը զարդարվել է գերազանցապես երկրաչափական պատկերներով, բուսանախշերով: Շապիկի թևքերը հարդարվել են ասեղնագործ հավելվածով, մեջքին կապել են բրդյա գոտի, որը միաժամանակ գրպանի դեր է կատարել: Ձմռանը բամբակե ներդիրով զգեստների վրայից հագել են ոչխարենուց մուշտակներ կամ այծի մազից կարճ վերնազգեստներ: Գլխի հարդարանքը կազմել են թաղիքե սպիտակ գդակները՝ մետաքսյա ծոպազարդ գլխաշորով: Տղաները կրել են ամբողջովին ասեղնագործ գունազարդ գոտի: Արևմտահայ տղամարդկանց տարազն առանձնանում է ինչպես կարճ վերնազգեստի առկայությամբ, այնպես էլ ասեղնագործ բանվածքներով: Գույնի, զարդանախշերի, կապույտ ուլունքների, ծոպերի ու կապ-հանգույցների միջոցով փորձել են ապահովել հագուստը կրողի պաշտպանությունը փորձանքներից, չարակամ, վնասաբեր ուժերից (Տախտակ 32):

Հարսանեկան տոնական զգեստներ: Տոնածիսական հագուստն արտացոլում է մարդկային կյանքի այս կամ այն փուլը՝ ծնունդ, հարսանիք, մահ: Հարսանեկան հանդերձներն արտահայտում են կյանքի ամենացնծուն հանդեսի խորհուրդներն ու խնդիրները: Այն կրողը համեմատվել է ծաղկող ծառի

հետ, իսկ հանդերձանքը ծառայել է որպես զարդարանք: Այն ուղեկցվել է սրբազան նշանակություն ստացած տարրերի՝ գոգնոցի, գոտու, քողի, ուսակապի պարտադիր առկայությամբ: Հարսանեկան զգեստի ամեն մի տարր իր գունագեղությամբ և ծաղկազարդերով միտված է եղել ամուսնական զույգի բեղմնավորության, արգասավորության խթանմանը (Տախտակ 33):

Մեծ եղեռնից մազապուրծ Արևմտյան Հայաստանի բնակչությունը Սփյուռքում կարճ ժամանակամիջոցում իսպառ կորցրեց ազգային տարազը և ընդունեց եվրոպականը: Խորհրդային տարիներին եվրոպական տարազը լայն տարածում ստացավ նաև Արևելյան Հայաստանում: Այսպիսով, հայկական ավանդական տարազը XX դարի կեսերին գլխովին դարձավ պատմական: Հայկական տարազը համազգային բնույթի չհասավ. այն մնաց ազգագրական շրջանակներում:

Գյուղական բնակավայրերում ներկայումս տակավին հարատևում են հայկական ազգային տարազի հին կամ մասնակի փոփոխված ձևերը: Ավագագույն սերնդի տղամարդիկ և հատկապես կանայք դեռևս պահպանում են ազգային ամենօրյա տարազի որոշ տեսակներ: Այդպիսինների թիվը շատ փոքր է: Պառավները Զանգեզուրի, Արցախի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի հեռավոր գյուղերում պահպանում են գլխակապման ու բերանը փակելու հին սովորությունները, հին տարազի մասնակի փոփոխված ձևերը՝ շրջազգեստները, երկմասյա զգեստը և գոգնոցը, գլխաշորը, պարանոցը փաթաթելու սովորությունը և այլն:

Հայկական տարազը ըստ պատմաազգագրական շրջանների:

1. Արարատյան տարազ: Սա ընդգրկում էր արդի Արարատյան հովտի շրջանները, Երևանը, Կոտայքը, Թիֆլիսի հայ-

կական թաղերը, ինչպես նաև Պարսկահայքն ու Պարսկաստանի հայ գաղութները:

Այս պատմաազգագրական շրջանի կանանց տոնական տարազին հատուկ էին հետևյալ գծերը. ամենօրյա և տոնական շրջազգեստը միակտոր էր, կրծքափակ էր, իսկ Թիֆլիսում՝ կրծքաբաց: Տոնական շրջազգեստի վրայից կապվում էր գոտին, որի երկար ծայրերը՝ ասեղնագործված ժապավենները, կախվում-հավասարվում էին քղանցքին: Գյուղական բնակավայրերում շրջազգեստի վրայից հագնում էին երկար, իսկ քաղաքներում՝ կարճ, բաճկոնանման վերարկու, բայց տարբեր գույների էին, շրջազգեստը և վերարկուն ասեղնագործական զարդարանքներ չունեին: Գլխի հարդարանքը բաղկացած էր ոսկեշար-ճակատակալ զարդից, արծաթե քունքազարդից: Որոշ վայրերում գլխաշորի կամ բերանակալ թաշկինակի կեսը ծածկում էր ուսերը, մինչդեռ քաղաքներում քթկալին փոխարինել է զարդարուն կոտիկի վրա փռվող գլխաշորը:

2. **Սյունիք-Արցախյան տարազի առանձնահատկությունները**: Սպիտակեղենի վրա հագնվող միակտոր հալավ-շրջազգեստը կարմիր էր և հասնում էր մինչև կրունկները, բազուկներն ու թևքաբերանները զարդարվում էին արծաթե զարդկախիկներով: Վերարկուները տարբեր գույնի էին, թևերը և քղանցքները կարճ էին, առջևը՝ բաց և կողքերը՝ պճղնավոր: Ունենում էին նաև կեղծ թևեր, որոնց եզրերը զարդարվում էին: Վերարկուի վրայից կապվում էր կտավե կամ արծաթե լայն գոտի: Գլխի հարդարանքի տարրերը տասից ավելի էին, միայն բերանակալ գույնզգույն թաշկինակների թիվը հասնում էր 5-7-ի: Ճակատակալ զարդերը գլխի հարդարանքին տալիս էին բարձր գլանի ձև: Քունքերը զարդարվում էին արծաթե գնդիկավոր կախիկների շղթաներով:

3. Բարձր Հայքի տարազ: Այն Արևմտյան Հայաստանի մասշտաբով գրեթե համազգային էր դարձել: Կարնոհայության զանգվածային արտագաղթի պատճառով Բարձր Հայքի տարազը լայնորեն տարածվեց Շիրակում, Ջավախքում, Ախալցխայում, Ծալկայում: Կանանց տոնական տարազը աշխատանքայինից տարբերվում էր զարդարման ճոխությամբ:

4. Վասպուրականի տարազ: Այն տարածված էր Վանա լճի ավազանում և հարևան մի քանի գավառներում՝ Մոկսում, Շատախում, Մանազկերտում: Վերնազգեստներն ու գլխարկները պահպանված էին ըստ հասակային դասերի: Կանանց տարազի մեջ իշխող ձևը երկար շրջազգեստներն էին՝ գոգնոցի ուղեկցությամբ, իսկ տղամարդու տարազի մեջ՝ երկմասյա զգեստը՝ շալե թանձր գոտու զուգակցությամբ: Կիսաթև բաճկոնը **աբա** էր կոչվում, պատրաստվում էր այծի մազից: Տղամարդու գդակը կոնի ձև ունեցող՝ 15-20 սմ բարձրությամբ թաղիքե **քոլոզն** էր, որին փուշի էին փաթաթում: Տաք եղանակներին սրան փոխարինում էր գլանաձև **արախչին,** որը գործվում էր գույնզգույն թելերից:

Գուլպաները գույնզգույն նախշազարդվում էին, հագնում էին տրեխներ և սոլեր:

Կանանց տարազը շալից էր կարվում: Ե. Լալայանի վկայությամբ՝ տոն օրերին կանայք իրար վրա հագնում էին 2-5 **զբուն**, որոնց տարբեր գույները պիտի երևային: Բոլոր շրջազգեստների կրծքամասը բաց էր. լանջը ծածկվում էր ասեղնագործված կրծքակալով: Կոլոտիկ-բաճկոնի վրայից փաթաթվում էր 2-4 մ երկարության կարմիր կտավից մեջքակապը: Արծաթե գոտին ուներ գորտակերպ ճարմանդ, իսկ գոգնոցը երկու տեսակ էր՝ սովորական և ամբողջ լանջն ու առաջամասը ծածկող: Տոնականը՝ կարճ գոգնոցը, զարդարվում էր ասեղնագործ բուսական զարդերով:

Վասպուրականի տարազի մեջ իշխողը կարմիր գույնն էր:

5. Կիլիկյան տարազ: Առաջացել է միջնադարում այստեղ տեղափոխված տարբեր ազգագրական շրջանների զգեստների միաձուլումից: Դրանց մեջ գերազանցում էին Բարձր Հայքի և Վասպուրականի տարազաձևերը: Այդ ընդհանրական տարազի ձևավորումը տեղի է ունեցել նոր բնակլիմայական պայմաններին և նոր շրջապատին համապատասխան:

Տարազը, զարդն ու զարդարանքը ըստ սեռի և տարիքի: *Տարազի և զարդարանքի հետ կապված հավատալիքները՝ հմայելու, կախարդելու, չար աչքից զերծ պահելու, որդեծնությանը նպաստելու, ամուսնու սերը ավելի ամուր պահելու և այլ նպատակների ծառայեցնելու միտմամբ:*

Եկեղեցու դերը՝ խաչեր, մասունքներ, օրհնած մատանի կրելը՝ կրողի անվտանգության նպատակով:

Զգեստի և զարդարանքի առողջապահական նշանակությունը:

Ներկայացնել մարմնի առողջապահության միջոցներն ու եղանակները՝ լվացվելը, լողանալը, մարմինը օծելը, ներկելը և այլն:

Զարդը՝ իբրև ավանդական մշակույթի տարր, արտահայտել է կրողի գեղագիտական նախասիրությունները, կրողի կարգավիճակը, կենսական այս կամ այն իրադրությունը: Զարդը կրելը, գեղագիտական դերից բացի, ունեցել է կիրառական, պաշտպանական, հմայական նշանակություն՝ սեռատարիքային առանձնահատկություններով (Տախտակ 34):

Հագուստի համալիրները խորհրդային և հետխորհրդային շրջանում: *Արդի տարազը Հայաստանում և Սփյուռքում հիմնականում եվրոպական է՝ իր արագ փոփոխություններով: Այն օգտագործում են միջին և նոր սերնդի բոլոր ներկայացուցիչնե-*

ը: Սակայն այս նորի թիկունքում, լեռնային խորքերում ընկած գյուղական վայրերում պահպանված են հնի մնացուկները:

Հարցերի միջոցով պարզաբանել նորաձևությունը որպես սոցիալական երևույթ, դրանց համապատասխանությունը սոցիալ-տնտեսական, պատմաքաղաքական, գաղափարական նոր իրողություններին: Հագուստի ժամանակակից համալիրների էթնոմշակութային զարգացումները: Ազգային տարազի տեղի տալը, փոփոխություններն ու փոխազդեցությունները նորագույն շրջանում, ավանդական տարազի և զարդարանքի առանձին տարրերի պահպանումն ու կիրառումը թատերականացված ներկայացումներում, ֆոլկլորային համույթներում, տոնախմբություններում:

Հարցեր և պատասխանների միջոցով պարզել *տեղի ունեցած փոփոխությունները. ո՞ր սեռի և տարիքի զգեստն ու զարդարանքն է ավելի շատ փոխվել: Զգեստի ո՞ր մասերն են ավելի արագ փոփոխություններ կրել:*

3.2. Հայոց ավանդական և ժամանակակից գլխարկները, գուլպաներն ու կոշիկները, դրանց տարրային դերերը և յուրահատկությունները

Հարցեր և առաջադրանքներ:

Կանանց և տղամարդու ավանդական գլխարկները, գլխի հարդարանքները, դրանց գործառական, սոցիոմշակութային, ծիսահմայական բնութագրությունը: Սոցիալական և տարիքային գլխարկներ: Գլխարկը կամ գլուխը ծածկող հարդարանքները որպես տարիքային հասունացման խորհրդանիշներ:

Երիտասարդ կնոջ դեմքը, քիթն ու բերանը ծածկելու, ճակատը հարդարելու, գլխի բարդ հարդարանքներ կրելու գործնա-

կան, սոցիալական, ծիսական, գեղագիտական, իմաստային բնութագրությունը (Տախտակ 35, 36)։

Տղամարդու գլխարկներ (արախչի, քոլոզ, փափախ). դրանք որպես կիրառական, սոցիալական, պատվազգացման խորհրդանիշներ։

Հարցը լավագույնս ուսումնասիրվել է Ա. Ստեփանյանի «Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը», Երևան, 2007, գրքում։

Գլխի հարդարանքը տարազի կարևոր մասերից է։ Երկու սեռի գլխի հարդարանքներն էլ պահպանում էին սեռատարիքային դասակարգման բազմաթիվ մանրամասներ։ Տարիքային մի փուլից մյուսին անցնելուն զուգընթաց՝ զգեստի տարատեսակների հետ փոփոխության էր ենթարկվում նաև գլխի հարդարանքը։

Տղամարդկանց գլխի հարդարանքներում զարդանախշմամբ առանձնանում էր **արախչին** կոչված գլխարկը՝ քաթանից կարված 10-15 սմ բարձրությամբ գլանաձև և տափակ գագաթով ասեղնագործված գդակ էր, մյուս տեսակներից՝ **քոլոզը, փափախը** և այլն։

Գլխարկը տղամարդու պատիվն ու արժանապատվությունն էր խորհրդանշում, հնում դիտվել է նաև իբրև իշխանության խորհրդանիշ, որոշ դեպքերում փոխարինել է նաև տիրոջը։ Վիպասան Ռաֆֆու հավաստումների համաձայն՝ պանդխտության մեկնած փեսացուի բացակայության դեպքում նրա գլխարկը մի ձիու գլխին գցած՝ հարսի հետ տանում էին եկեղեցի՝ պսակադրության (տե՛ս Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1967, էջ 329)։ Գլխարկը գլխի կամ անձնավորության նշանակություն ուներ։

Կանանց գլխի հարդարանքը բազմամաս էր ու բարդ կա-

ռուցվածք ուներ: Դրանում ցայտուն էին արտահայտված սոցիալական և տարիքային փոփոխությունները: Աղջկա, ամուսնացած կնոջ և այրի կնոջ գլխի հարդարանքը տարբերվել է ինչպես կառուցվածքով, այնպես էլ զարդանախշմամբ ու գույնով: Գլխաշորը տարիքային հասունացման խորհրդանիշ էր, որի պատճառով նշանդրեքին ասում էին: «Եկել ենք մի լաչակ ուզելու»: Փաստորեն կնոջ հարդարանքը՝ իբրև սոցիոտարիքային ցուցիչ, նաև կնոջ խորհրդանիշն է: Այն հիմնականում կարմիր էր և համարվել է կյանք խորհրդանշող գույն՝ որպես «պահպանակ» և «չարախափան»: Կարմիրը խորհրդանշել է նաև ամուսնությունը: Կարմիր էին հարսի քողը, զգեստը, փեսայի զգեստը, նարոտը: «Կարմիր հարս» նշանակում է «նշանված աղջիկ», «կարմիր թել կապել»՝ նշան դնել, «կարմիր խնձոր»՝ հարսի անարատության խորհրդանիշ, նաև հարսանիքի հրավերքի նշան: Ստ. Լիսիցյանի հավաստմամբ՝ Արցախում ծիածանը տեսնելիս ասում էին՝ «Կանաչ-կարմիրը իմ ախպոր գլխին, սևն ու սպիտակը՝ թուրքի գլխին»: Կարմիրը կինն էր՝ իբրև կյանքի սաղմն իր մեջ կրող, կանաչը՝ տղամարդը՝ իբրև սերնդաշարունակությունն ապահովող: Սևը և կապույտը այրի և ծեր կանանց շորի գույնն էին, թեև երեխաներին հագցնում էին կապույտ գույնի շոր՝ «չար աչք» չկպչելու համար: Սպիտակ գույնը՝ «մաքուր», «անբիծ» նշանակությամբ, կիրառվել է իբրև մկրտության հագուստի գույն:

Գլխի հարդարանքի մեջ կապ-հանգույցները գործնականից և գեղագիտականից զատ, ունեցել են նաև ծիսական նշանակություն: Հավատում էին, որ այն ապահովում է տան բարեկեցությունը, ամուր ու հաստատուն պահում տունն ու ընտանիքը: Այն յուրօրինակ պահպանակ է ընկալվել՝ ապահովելով կրողի անձեռնմխելիությունը:

Ավանդական գուլպաներն ու ոտնամանները Հայաստանում (տրեխ, չմուշկ, փափուճ, սախկ, սոլ, քոշ, չարուխ և այլն): Կանանց և տղամարդկանց կոշիկները և գուլպաները, տեսակները, զարդարման մակարդակը ըստ տարիքի և նշանակության:

Գուլպան և կոշիկը ըստ հնագիտական, անտիկ և միջնադարյան սկզբնաղբյուրների վկայությունների, դրանց նյութը, տեսակները, ձևերը, զարդանախշման արվեստը ըստ սեռատարիքային խմբերի, ծիսական և խորհրդանշանային իմաստները:

Ստրաբոնը ուշագրավ տեղեկություններ ունի Հայաստանին և հարևան երկրներին հատուկ այնպիսի կոշիկների մասին, որոնց ներբանները սուր-սուր գամեր ունեին: Երթևեկողները այդ կոշիկներով դյուրությամբ հաղթահարում էին լեռնային ճանապարհների սառցապատ հատվածները (Տախտակ 37): Ստրաբոնը նաև նշում է, որ Հայաստանում և Ատրոպատյան Մարաստանում սառցապատ լեռները բարձրացողների «կրունկների տակ դնում են նաև փայտյա անվակներ՝ տակին սուր գամերով»: Այդպիսի լեռներ բարձրացողները «իջնելու ժամանակ նստում են կաշու վրա՝ իրենց բեռներով և ցած են սահում, ինչպես անում են Մասիոս լեռան վրա՝ Հայաստանում» (Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Եր., 1940, XI, III 2-3):

Ագանելիքի հետ կապված հավատալիքներ (օրինակ՝ գուլպա, կոշիկ թարս հագնելը՝ որպես անհաջողության նշան, հագուստի փեշը Տյառնընդառաջի տոնի կրակին այրելը՝ հաջողության, բեղմնավորման, առողջության և այլն): Գուլպան ձախ ոտքին թարս հագնելը իբրև թե կանխում էր կնոջ դավաճանությունը, հարս գնացողի գուլպայի մեջ հատիկ լցնելը,

մանկանը գուլպա նվիրելը՝ արգասավորման խորհրդանիշ էր համարվում և այլն:

Գուլպան և կոշիկը վաղնջական ժամանակներից տարազի անբաժանելի մասեր էին: Դրանք հայտնի են եղել դեռևս 6 հազար տարի առաջ, ինչի վկայությունն է Վայոց ձորի Արենի բնակավայրի № 1 քարանձավի պեղումներից հայտնաբերված տրեխը: Զարդանախշ գուլպաներն օժիտի պատվավոր տարր էին հայոց մեջ: Չէին մոռանում դրանց մեջ մեկական նուռ դնել՝ արգասավորման և չարախափան նշանակությամբ: Տղամարդիկ նաև **սռնապան**՝ մինչև ծնկները հասնող գուլպա, կրել են դեռևս ուրարտական շրջանում՝ երկայնակի կամ լայնակի գծանախշերով: Դրանք գործվել են բրդյա, բամբակյա, մետաքսյա թելերից, նախշազարդել են երկրաչափական, մարդակերպ, թռչնաձև, շրջանաձև, խաչաձև զարդանախշերով: Բուսանախշերից ամենատարածվածը կենաց ծառի ծաղկանախշերի մոտիվն է: Գուլպան պտղաբերության մոգական խորհուրդ է ունեցել, քանզի գուլպաների լայն փոխանակություն է կատարվել ոչ միայն պսակվողների ազգականների, այլև խնամիների միջև (Տախտակ 38):

Ոտնամանները ևս մոգական խորհուրդ են ունեցել: Տունը չար աչքից զերծ պահելու համար շեմի վերնամասում հին ոտնաման էին կախում, իսկ հարսանիքի օրը ցորեն կամ կորեկ էին լցնում հարսի կոշիկի մեջ, քաղաքներում էլ՝ մանր դրամ, որպեսզի հարսը պտղաբեր լինի:

Գոգնոց: Գոգնոցի գործածությունը կապված էր աղջիկների տարիքային հասունացման որոշակի փուլի՝ հարսնության հետ: Գոգնոցի ներքևի անկյուններում ասեղնագործվում էին կենաց ծառեր՝ վրաները մեկական թռչուն: Սրանք ծլարձակման, զույգի բեղմնավորման, կյանքի հարատևության, սերն-

դաշարունակման, նաև բարեկեցիկ կյանքի, հարստության խորհրդանիշներ էին (Տախտակ 39):

Կարմիր գոգնոցը, կարմիր գոտին և գլխի կարմիր քողը սեռային խորհրդանիշներ էին և խորհրդանշում էին բեղմնավորման, սեռական կյանքով ապրելու, նաև՝ չարախափանման գաղափարը. շատ զավակներ ունենալու օրհնանք էր՝ «գոգդ լիքը լինի»: Գոգնոցը խորհրդանշել է ամուսնացած կնոջը, կարմիր գոգնոց նշանակել է կին: Չամուսնացած աղջիկը այն չէր կրում:

Գոտի: Գոտին լինում էր շալե գործվածք, կաշվեղեն և մետաղական: Գոտին՝ իբրև մոգական շրջանակ, ըստ ժողովրդական մտածողության, ունեցել է պահպանակի նշանակություն, որով պայմանավորված է ծիսական գոտիների առկայությունը հոգևոր դասի հանդերձանքում: Ծանր ու լայն գոտիները ունևորության չափանիշ էին համարվում. «Գոտին լայն կապել» նշանակում է բարեկեցիկ կյանք վարել, «գոտին հաստացնել»՝ հարստանալ և այլն: Տղամարդու գոտին ի սկզբանե նաև իշխանության խորհրդանիշ էր: Գոտին արձակելը նշանակում էր ոչ միայն պատվազրկել, այլև անպաշտպան թողնել, քանզի այն, որպես հմայիլ պահպանակ, կրողին պաշտպանելու խորհուրդն ուներ: Հարսի գոտին կապելն ամուսնական կապի մեջ մտնելու առաջին քայլն է համարվել, իսկ արձակելը՝ հարսանեկան ծիսակարգի ավարտական փուլը: Հարսի գոտին շատ տեղերում կապում էր քավորը՝ «Աստված քեզ որդի տա», կամ՝ «Յոթն ինձ նման, մին քեզ նման» մաղթանքով (Տախտակ 40):

Այսպիսով, կնոջ գոտին, ինչպես գոգնոցը, անմիջականորեն կապված էր հարսնանալու գաղափարի հետ, ուստի հարսի գոտին կապելը հատուկ ծիսական արարողություն էր:

Կոշիկ: **Կոշիկի հետ կապված պատկերացումներ** (կոշիկները քթերով դեմ դիմաց դնելը՝ որպես վեճի, անախորժության, քթերով դեպի տուն ուղղելը՝ ուղևորվելու, կոշիկի թայը (զույգը) կորցնելը կնոջ կամ ամուսնու մահվան, անհաջողության նշան է ընկալվել:

Զարդեր: Դրանք կրողի գեղագիտական նախասիրությունների, ճաշակի արտահայտությունն էին: Ունեցել են նաև կիրառական, պաշտպանական, հմայական նշանակություն՝ սեռատարիքային առանձնահատկություններով: Առանձնանում են գլխազարդերը, ճակատակալները, ապարանջանները, բազպանները, մատանիները, կրծքազարդերը և այլն: Հատուկ խումբ են կազմել հմայիլ պահպանակները՝ աչքաուլունք, հուռութքներ, օձակերպ մատանիներ, կիսալուսնաձև, նշաձև կախիկներով կրծքազարդեր, մանյակներ, ականջօղեր և այլն (Տախտակ 34, 35, 36):

Զենքերը: Զենքը թեև իր յուրահատուկ դերն ունի, բայց հնագույն շրջանից մինչև ուշ միջնադարյան Հայաստանում տղամարդու տարազի յուրօրինակ մասն էր՝ իբրև նրա լրացուցիչ զարդը (օր.՝ դաշույնն իրեն հարմարեցրած կաշվե մետաղազարդ գոտիով, կայծքարային ատրճանակը շալե թանձր գոտու մեջ, հովվական մականը յափնջու ձախ կրծքի տակ, գոտուց կախված դանակն իր պատյանով և այլն):

Պարսկաստանում ու Թուրքիայում հայ ժողովրդին զինաթափելու պատճառով XIX դարում զինակիր մարդիկ հազվադեպ էին, զենքը պահում էին տանը, թաքստոցներում: Հնագույն նախնական զենքերից դեռևս պահպանվում էին՝ մահակը, մական-նիզակը, պարսատիկը, դաշույնը, պարանը, օղապարանը: Օղապարանով երբեմն կենդանիներ էին որսում: Պարանը որոշ տեղերում գործածում էին լախտախաղերին,

իսկ պարսատիկը՝ մանկապատանեկան խաղալիք էր: Այնուհանդերձ զինագործությունը XIX դարում պահպանվում էր՝ ազատագրական պայքարի կազմակերպման համար:

Հին և միջնադարյան Հայաստանում հարձակողական զենքեր էին նետ ու աղեղը, պարսատիկը, նիզակը, տեգը, գեղարդը, դաշույնը, թուրը, սուրը, սվինը, սակրը, վաղրը, մուրճը, ճիկռը:

Պաշտպանական զենքեր էին՝ վահանը, սաղավարտն ու դիմակալը: Պարսպակործան սարքեր էին՝ բաբանը, էշը և փիլիկվանը:

Հայ պատմագիրները բազմիցս են անդրադարձել հայկական զենք ու զրահին:

Գրականություն

1. **Ավագյան Ն.,** Հայ ժողովրդական տարազը, Եր., 1983:
2. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, Եր., 1974, էջ 95-112:
3. **Բրուտյան Գ.,** Հայկական տարազ, Եր., 2007):
4. **Գրիգորյան Ֆ.,** Հայկական ազգային տարազ, Եր., 2011:
5. **Դեմոյան Հ.,** Հայկական ազգային խորհրդանշաններ, Եր., 2012:
6. **Հացունի Վ.,** Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923:
7. **Նահապետյան Ռ.,** Հայկական ազգային հագուստի էթնոմշակութային բնութագրի շուրջ // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Եր., 2020, էջ 55-79:
8. **Պատրիկ Ա.,** Հայկական տարազ, Եր., 1983:
9. **Պողոսյան Ս.,** Շիրակի և Ջավախքի հայոց ավանդութային տարազը, պ.գ.թ. ատենախոսության սեղմագիր, Եր., 1994:
10. **Ստեփանյան Ա.,** Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (Ծիսային և գունային համակարգեր) // ՀԱԲ, հ. 22, Երևան, 2007:
11. **Փափազյան Հ.,** Հայկական տարազ, Երևան, 2008:
12. **Армяне.** Серия «Народы и культуры», М., 2012, էջ 247-275.

ԹԵՄԱ 4
ՈՒՏԵՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ: ԸՄՊԵԼԻՔ

4.1. Ուտեստը որպես սոցիոմշակութային տարր, առօրյա ուտեստներ և ըմպելիք

Ուտեստի տեղը կենսապահովման մշակույթի համակարգում: Այն հացկերույթային համալիրի տարրերից է:

Ուտեստը, որպես նյութական մշակույթի բաղադրիչ, որպես հիմնական ամենօրյա կենսական միջոց, ազգային մշակույթի ավանդականությամբ ու կայունությամբ առավել աչքի ընկնող մշակութային տարրերից է:

Ազգային մշակույթի կարևոր բաղադրիչներից և ժողովուրդներին բնորոշող իրողություններից մեկը ազգային խոհանոցն է՝ իրեն բնորոշ կերակրատեսակներով: Ազգային կերակուրները զարգանում և փոփոխություններ են կրում տվյալ ազգի զարգացմանը զուգահեռ և ձեռք են բերում նոր առանձնահատկություններ՝ փոխանցվելով սերնդեսերունդ: Այն իր երկրի զբոսաշրջային գրավչությունը բարձրացնող բաղադրիչներից է:

Ուտեստի համակարգը կենցաղի և մշակույթի բաղկացուցիչ տարրերից է, ուստի այն ևս ներառվում է ազգագրության ուսումնասիրության շրջանակներում: Այն մարդու կենսական պահանջմունքները բավարարելուց զատ, կատարում է նաև այլ գործառույթներ. միավորում ու միաժամանակ տարբերակում է էթնիկ հանրույթները: Ուտեստի միջոցով բացահայտվում են ինչպես տվյալ էթնոսի ազգային ավանդութային շատ գծեր. տնտեսավարման եղանակները, սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթներին առնչվող բազում հարցեր, քանզի ուտեստը, կենսական նշանակությամբ հանդերձ, միջնորդա-

վորում է մարդկանց և մարդկային խմբերի միջև եղած կապերը: Ուտեստը էթնոպահպան գործառույթ ունի: Այն յուրօրինակ էթնիկ անձնագիր է: Ուտեստի համակարգը կայուն, բայց և կարծրացած չէ, ենթարկվում է անընդհատ փոփոխությունների[1]: Այն հասարակական հարաբերությունների արտահայտման ցուցիչ է, քանի որ մարդիկ սեղանի շուրջ են շփվում, ճանաչում միմյանց: Ուտեստը մարդկանց սոցիալական շփման, բարեկամական և ազգակցական կապեր հաստատելու միջոց է, իսկ եթե այսպիսիք առկա են՝ այն ավելի է ամրապնդում դրանք: Այդպիսի ճաշկերույթների թվում են մանկան ծննդի, մկրտության, ամուսնության, հարսանեկան, հուղարկավորման, մեռելոցների արարողությունները, մեծարման երեկոները, դրանց պատվին կազմակերպված հացկերույթները:

Ազգագրագետի համար չափազանց կարևոր է ոչ միայն նշել, վեր հանել ճաշատեսակների, կերակրատեսակների, թխվածքների կենցաղավարման պատճառներն ու եղանակները, սոցիալական գործառույթները, այլև ցույց տալ, թե մարդիկ ինչպես են սնվում, սնվելիս ինչ սպասքից են օգտվում, ինչպես են այն օգտագործում, այլապես ուտեստին նվիրված ուսումնասիրությունները կվերածվեն խոհարարական ձեռնարկների:

Հայկական խոհանոցը, որ ձևավորվել է հազարամյակների ընթացքում, ստեղծել է իր բնակության միջավայրին բնորոշ կերակրատեսակներ՝ կապված այդ միջավայրի ֆլորային և ֆաունային բնորոշ բազմազանության հետ:

Ուտեստի համակարգը ներառում է՝ հացը և հացահատիկային մթերքները, մսեղենը, կաթնեղենը, ձվեղենը, ձկնեղենը,

---

[1] Система питания у армян // Культура жизнеобаспечения и этнос, Ер., 1983, էջ 206-253:

բանջարեղենը, մրգային կերակրատեսակները, աղցանները, նախուտեստները, աղանդները, ըմպելիքը: Դրանց բազմազան ու բազմաբնույթ լինելը պայմանավորված է պատմաքաղաքական, բնաէկոլոգիական, տնտեսության բնույթի, սոցիալական, հոգեբանական, կրոնաճիսական նախադրյալներով:

Ուտեստի համակարգի ուսումնասիրության կարևորությունը և արդիականությունը: Ուտեստի պատմահամեմատական, տիպաբանական, արեալային, զոտիական, առտնին ու տոնաճիսական, նշանային ուսումնասիրության հիմնախնդիրը հայ ազգագրության մեջ: Ուտեստի հիմնախնդրի վերաբերյալ տեսական, ազգաբանական հիմնավոր վերլուծություններ են կատարել ՌԴ նշանավոր գիտնական Սերգեյ Հարությունովը և Յու. Մկրտումյանը (Система питания. Введение и классификация. В кн. Культура жизнеобестачения и этнос, Ер., 1983, с. 189-270, Проблемы классификации элементов культуры (На примере армянской системы питания) // СЭ, 1998, № 1, с. 3-15), Ս. Հարությունովը և Գ. Սերգեևան, (Пища // Арутюнов С., Сергеева Г., Кобычев В., Материальная культура. Пища и жилище (материалы к серии «Народы и культуры», Народы Кавказа), М., 1995, кн. 4, с. 7-134), տոնական ուտեստին է անդրադարձել Ռ. Ծատուրյանը: Ուշագրավ են գրականության ցանկում նշված այլ ուսումնասիրություններ ևս: Այդուհանդերձ, այսօր գիտական հրապարակի վրա դեռևս չկան հայկական ուտեստի ամբողջական համալիր ուսումնասիրություններ:

Հարցեր և առաջադրանքներ:

Հայոց ուտեստի դասակարգման սկզբունքները: Բուսական, կենդանական և հանքային բաղադրամասերը և դրանց հարաբերակցության տարբերակները տարբեր աշխարհա-

գրական գոտիներում, պատմաազգագրական շրջաններում, տարվա եղանակներին: Ուտեստի (բուսեղեն, կաթնեղեն, մսեղեն, ձվեղեն, ձկնեղեն) տեսակներն ու տարածվածության աստիճանը տարբեր պատմաազգագրական շրջաններում:

Ուտեստը և տնտեսական զբաղմունքները: Ամեն մի ժողովուրդ ունի իր նախընտրած ուտեստների, խմիչքների ցանկը: Իհարկե, այն պայմանավորված է հիմնականում տնտեսամշակութային տիպերով, էթնոսի տարածքային յուրահատկություններով, բնակլիմայական պայմաններով, ազգային ավանդույթներով, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, կրոնական աշխարհայացքով, պատմաքաղաքական իրողություններով և այլն:

Հայոց մեջ ավանդական ուտեստում անհամեմատ գերակշռել է բուսական ծագում ունեցող սննդամթերքները (հացահատիկ, միրգ, բանջարեղեն), որոնց հաջորդում էին կենդանական ծագում ունեցողները՝ կաթ, կաթնամթերք, մսեղեն, ձկնեղեն, ձվեղեն: Այսպես, Արարատյան դաշտավայրին բնորոշ էր հացահատիկ-միրգ-բանջարեղեն, կաթնեղեն-մսեղեն սննդամթերքների հաջորդական համալիրները, Շիրակին՝ հացահատիկ-կաթնամթերք-մսեղեն-բանջարեղեն, Սյունիքին և Տավուշին՝ հացահատիկ, կաթնամթերք, բանջարեղեն և ապա՝ մսեղեն: Փաստորեն այս հաջորդականությունը պայմանավորված է եղել տնտեսավարման բնույթով[1]:

Հացի տեսակը, պատրաստման ձևը, պահելու տևողությունը, թխելու միջոցները: Ծիսական և տոնական հացեր և թխվածքներ: Հացի վերաբերյալ սնահավատություններ: Մեր ժողովուրդը լինելով նստակյաց՝ երկրագործ, հիմնական ուտեստեղեն ունեցել հազարամյակներ շարունակ հացեղենը,

[1] Культура жизнеобестечения и этнос, էջ 254-270:

և պատահական չէ, որ մեզանում «հաց ուտել» արտահայտությունը բազմախորհուրդ է: Այն, բացի սնվելու՝ ուտելու, ճաշելու իմաստից, նշանակում է նաև ճաշկերույթ, հավաքույթ և այլն: Ամենատարածված հացատեսակը լավաշն է, որը 2014 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում է գրանցվել:

Հայերի մեջ գոյություն ուներ փոխադարձ օգնությամբ հաց թխելու սովորույթը: Այն բոլոր շրջաններում, ուր հացը կարելի է երկար պահել, մեծ քանակությամբ թխելու համար հրավիրում են փոխադարձ օգնության ազգակից կամ հարևան կանանց, սովորույթ, որ հարատևել է հնագույն ժամանակներից:

Լավաշը օժտված է այնպիսի հատկանիշներով, որ այն կարող էր ծառայել նաև որպես ափսե, պնակ կամ սկուտեղ, նաև գդալ, անձեռոցիկ և վերջապես՝ որպես բրդուճ: Այն հայոց ընկալումներում համարվել է սրբություն, Աստծո պարգև: Նաև արգասավորության, առատության, անվտանգության, չարախափան խորհուրդ է ունեցել: Հյուրասեր մարդկանց անվանել են **աղուհացով մարդ**, հյուրին դիմավորում էին աղ ու հացով՝ աղը մաքրագործող էր, հացը՝ սրբություն, հարստություն: Դժվար ծննդաբերող կնոջ որովայնին թոնրի առաջին հացն էին դնում՝ կարծեցյալ չարքերին նրանից վանելու համար, իսկ հարսանեկան արարողության ժամանակ հարսին դիմավորում էին շերեփով և հարս ու փեսայի ուսերին լավաշներ զցելով: Հացը ծառայել է նաև որպես հարսանիքների հրավերքի միջոց: Հարսի հոր տանը թխված հացը, որ «հարսնալոշ» էր կոչվում, ուղարկվում էր ազգականներին՝ հարսանիքի հրավիրելով: Տոնածիսական տարբեր խորհրդանշան հացեր են թխվել Ամանորին և այլ տոնական արարողություններին: Տոնածիսական նշանակությամբ աչքի էր ընկնում հատկապես

«տարի» կոչված հացը, որով կատարում էին նաև գուշակություններ:

Հին և միջնադարյան Հայաստանում լայնորեն տարածված է եղել հացի տարբեր տեսակների պատրաստումը: Հացահատիկային կուլտուրաները հայոց մեջ հազարամյակներ շարունակ մեխանիկական և ջերմային եղանակով վերամշակելով՝ ստանում էին ալյուր, փոխինդ, ձավար, կորկոտ, բլղուր, մակարոն (ոշտա): Ավանդական ուտեստի համակարգում մեծ տարածում ունեին հացահատիկային մթերքներից պատրաստված մի քանի տասնյակի հասնող կերակրատեսակները:

Հայոց ավանդական ուտեստի համակարգում զգալի էր և այժմ էլ մեծ է կաթնամթերքի տեսակարար կշիռը: Հայոց կաթնատնտեսության առանձնահատկություններից էր կաթի անթափոն մշակումը. մածուն, կաթնաշոռ, կաթի սեր, չորաթան, պանրի զանազան տեսակներ, կարագ և այլն: Կարագ ստանում էին կաթը խնոցում և կավե կարասում՝ ձձումում, հարելու միջոցով, որը տանտիրուհուն էր վստահված: Հայոց կենցաղում տարածված են եղել պանրի բազմապիսի տեսակներ՝ չեչիլ, թել, հյուսած, հորած՝ զանազան խոտաբույսերով, գլուխ անքաշ պանիր, «լոռի», «չանախ», «բրինձ» և այլն:

Դարերի ընթացքում մեր ժողովուրդը կուտակել է մեծ փորձ ու հմտություններ միսը մթերելու, պահպանելու ասպարեզում: Մեծ մասամբ օգտագործում էին հարսանիքների, թաղումների, հիշատակման արարողությունների, մատաղների, ուխտագնացությունների ժամանակ: Ամենահարգին եղել է գառան մսի խորովածը և այլն: Հին Հայաստանում տարածված էին մսե ծիսական ուտեստները՝ հարիսան, խաշը, մատաղը:

XIX դ. և XX դ. սկզբին ձկան օգտագործումը միանշանակ չի եղել. եթե Սևանի ավազանում, Այրարատյան հովտում,

Սյունիքում ամենօրյա ուտեստ էր, ապա Շիրակում միայն տոնածիսական բնույթ էր կրում:

Բազմազան կիրառություն է ունեցել և այժմ էլ ունի ձուն: Ձուն համարվել է նոր կյանքի խորհրդանիշ, կյանքի և բեղմնավորման, իսկ ներկվածը՝ արևի, վերածննդի, սիրո խորհրդանիշ:

Հացի և մյուս սննդամթերքների տարատեսակները տարվա տարբեր սեզոններին շրջանառության մեջ դնելու նպատակով հայ բնակչությունը հարյուրամյակներ շարունակ կիրառել է պահածոյացման բազմազան ձևեր: Այսպես, միսը պահածոյացվում էր սեփական յուղի մեջ սառը տեղ պահելով (տհալ) և ապխտելով, ձուկը՝ չորացնելով և աղը դնելով, պանիրը՝ աղաջրով կամ պանիրն ու լոռը կճուճում հորելով և տիկերի մեջ պահելով, մածունը՝ քամելով, կարագն ու չոր սերը՝ քամած մածնի մեջ դնելով, թանը՝ չորթանի ձևով, լավաշ հացը՝ արևի տակ չորացնելով, խաղողը, ձմերուկը և հատապտուղները՝ հով նկուղներում կախելով, խնձորը՝ չոր հողով, խաղողը և ընկույզի միջուկը՝ շարոցով, դեղձը՝ ալանի անելով, շաղգամը, գազարը, կաղամբը գետնի մեջ թաղելով, բոլոր վայրի և մշակովի բանջարեղենները՝ թթու դնելով (մանրամասն տե՛ս **Նահապետյան,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, էջ 79-121):

Հարցեր և առաջադրանքներ: Հանձնարարել գրել ռեֆերատներ իրենց բնակավայրերի տեղական սովորույթների մասին:

Առօրյա և տոնածիսական հացկերույթներ:

Ձավար և բլղուր պատրաստելու եղանակները, կերակուրները:

Յորենի այլ ձևով գործածելը (կորկոտ, փոխինդ, էրիշտա

(արիշտա)), ինչ առիթով էին օգտագործում: Հաճար, կորեկ, եգիպտացորեն, բրինձ. դրանցով պատրաստած կերակուրները, եղանակները:

Բանջարեղեն (վայրի և մշակովի), տարածվածության հարաբերակցությունը տարբեր պատմաազգագրական շրջաններում: Գործածության ձևերը. պահածոյացված, թարմ, թթու դրած, աղ դրած: Բոստանային կուլտուրաներ. վարունգ, ձմերուկ, սեխ, դդում, դրանց տարածվածությունը, պահածոյացման եղանակները:

Պտուղ, ընդեղեն, մսեղեն ուտեստներ: Կաթնեղեն, ձվեղեն ուտեստներ: Ըմպելիքներ. ալկոհոլային և ոչ ալկոհոլային: Դրանց պատրաստման եղանակները, գործածությունը: Ճաշելու ռեժիմը: Տոնական և ծիսական ուտեստների տեսականին, տարածվածության աստիճանը:

Ուտեստի ավանդական և ժամանակակից համալիրների, առօրյա և տոնածիսական ենթահամալիրները: Հացկերույթի և հյուրասիրության վարվելակարգեր: Տոնածիսական ուտեստի օրացուցային պահքի համալիրները, կենսափուլերի հետ կապված՝ հարսանեկան, ծննդյան, կնունքի, անվանակոչության, քառասունքի և այլն, թաղման, հիշատակի հացկերույթներ, վարվելակարգերի առանձնահատկությունները: Զոհաբերություններ՝ հասարակական, ընտանեկան, անհատական: Սննդի ժողովրդական հիգիենայի ավանդույթները հայոց մեջ:

Ազգայինը և միջազգայինը հայոց ավանդական ուտեստի համակարգում: Առաջավորասիական, կովկասյան, արևմտաեվրոպական, ռուսական կերակրատեսակների փոխհարաբերակցության հարցը:

Ավանդական խոհանոցի քաղաքային և գյուղական համալիրների, սնման, մթերքների պատրաստման ու պահպան-

ման առանձնահատկությունները: Ժամանակակից տոնական ուտեստում դրսևորվող կենսափուլերի և տոների հետ կապված հացկերույթների առանձնահատկությունները (տոնական, հյուրասիրության, մատաղի հացկերույթների բնութագրությունը):

Սեռատարիքային, նշանային, սոցիալական և այլ գործառույթների բնութագրությունը: Ուտեստը որպես մշակույթի տարր, կապը կյանքի մյուս կողմերի՝ հասարակության մեջ մարդկանց փոխհարաբերությունների, վարքի նորմերի հետ. ի՞նչ են ուտում, ինչպե՞ս են նստում, ի՞նչ սպասք և կարասի են գործածում և այլն:

Առօրյա հացկերույթի վարվելակարգը: Պահքի ուտեստի նպատակը (մարմինը և հոգին մաքրել):

Բուժական կերակուրներ, մթերքներ: Հյուրասիրության վարվելակարգ: Տոնական ուտեստ, տոնական հացկերույթի վարվելակարգը: Պահքի ուտելիք: Հարսանեկան, ծննդի, կնունքի, հացկերույթներ, վարվելակարգը: Ծիսական ուտեստներ: Թաղման և սգո հացկերույթ: Զոհաբերություններ: Ժամանակակից ուտեստներ: Օտարամուտ կերակուրներ:

Հայոց ուտեստի համակարգի համալրման և փոփոխման հիմնական միտումները XX դարում և XXI դ. սկզբին: Արժեքների համակարգի և հոգեբանական այժմեականացման գործընթացները հայոց մեջ: Ավանդույթների և նորամուծությունների հարաբերակցությունը ժամանակակից ուտեստի համակարգում: Ըստ պատմաազգագրական շրջանների (Տախտակ 41):

Հայաստանը հարուստ է միրգ-բանջարեղենի տասնակներով: Հայկական ազգային ուտեստի յուրահատկություններից մեկը տարբեր համեմունքների կիրառմամբ համի և բույրի ապահովումն է: Արևահամ բույրով շուրջ 70 անուն մրգատե-

սակներ են հիշատակվում. ծիրանը, խաղողը, թութը, կեռասը, բալը, թուզը, նուշը, նուռը, հոնը, դեղձը և այլն: Բազմաքանակ են նաև վայրի մրգերը: Դրանց մեծ մասը ունի բուժական և այլ հատկություններ:

Ըմպելիքներ: Հայերն ունեն գինու՝ որպես աստվածային և անմահական հեղուկի առասպելական ընկալումը, որը լայնորեն վկայված է հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրներում (տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ԵՊՀ հրատ., Երևան, 2018), հայ միջնադարյան և ավանդական մի շարք պատկերացումներում, ծեսերում ու տոնախմբություններում:

Հնագույն ժամանակներից Հայաստանում տարածված էր գինեգործությունը: Այդ են վկայում նաև հնագիտական պեղումները, հատկապես Արենի բնակավայրի մոտ՝ Արենի-1 քարանձավում (Վայոց ձոր, Ք.ա. V-IV հազ.) հայտնաբերված գինու արտադրական համալիրը, որն աշխարհում դեռևս զուգահեռը չունի և համարվում է հնագույնը: Ք.ա. III հազ. աքքադական սեպագիր տվյալների համաձայն՝ նավերին բարձած կավե սափորներով գինի են առաքել Տավրոսի լեռներից Եփրատ գետով Միջագետքի Մարի քաղաք: Մեծ արժեք ունի Ք.ա. XXII-XVIII դարերով թվագրվող Քարաշամբի «արքայական դամբարանի» թեմատիկ տեսարաններով քանդակազարդ արծաթե գավաթը՝ վրան «ծիսական խնջույքի» մի դրվագ, որտեղ արքան գինով է փառաբանում իր հաղթանակը: Թեյշեբաինիի (Կարմիր բլուր) և Արին Բերդի պեղումներից հայտնաբերվել են գինու ընդարձակ-մառաններ՝ հսկայական կարասներով: Միայն Կարմիր բլուրում բացվել է գինու 8 մառան, միջին՝ 900 լիտր տարողությամբ 480 կարասներ: Կարմիր բլուրում բաց-

վել է նաև գարեջրի պատրաստման արհեստանոց: Հայերը ունեին գինին կրաշաղախով ծեփված հորերում պահելու սովորույթ: Քսենոփոնը մասնավորապես ընդգծում է, որ հայկական գինիները տարբեր տեսակների են՝ բարձրորակ, հնեցված, բուրավետ: Հնուց ի վեր հայկական գինին առանձնանում էր սպիտակ, վարդագույն և կարմիր գույներով: Գինին ամենօրյա և տոնական խմիչք է համարվել, բժշկարաններում էլ հիշատակված է, որ այն առողջարար է, մաքրում և պարզեցնում է արյունը, օգնում է կերածը մարսելուն[1]: Այն չարաշահելու դեպքում ազդում է լյարդի վրա, խոցեր է առաջացնում, ավերում է ստամոքսը, ավելացնում է թթվայնությունը: Միջնադարյան հնձանների դասական օրինակ է Զվարթնոցինը (VII դար): Ներկայումս ևս մեր հանրապետությունը հռչակված է գինու արտադրությամբ:

Օղին հայերը հնուց ի վեր պատրաստել են խաղողից և այլ մրգերից: Շատ գնահատելի են համարվել հոնի, ծիրանի, քոլի տանձի, թթի օղիները: Առօրյա կյանքում համատարած ոգելից խմիչք օգտագործելու սովորույթ չի եղել: Երիտասարդ տղաները ավագների ներկայությամբ գինի կամ օղի խմելու իրավունք չունեին:

Հայկական կոնյակն այսօր փառաբանված է աշխարհում (Տախտակ 42):

Ոչ ալկոհոլային խմիչքներից հայերի կենցաղում տարածված էին թեյը, թանը, օշարակը, իսկ 1940-ական թթ. կեսերից՝ սուրճը: Բուժման նպատակով խմում էին սառը և տաք թեյեր տեղական բույսերից՝ ուրց, դաղձ, մասուր գործածելով:

Բուժիչ հատկությունով հայտնի է դոշաբը՝ թթից և խաղո-

---

[1] **Ամիրդովլաթ Ամասիացի,** Օգուտ բժշկության, Երևան, 1940, էջ 113, 156, 167, 178, 333, 416, 418, 519:

ղից, ծիրանից, դեղձից, սերկևիլից, բալից, հատապտուղներից (ազնվամորի, մոշ, հոն) պատրաստված կոմպոտները: Ուշագրավ են և ուսումնասիրության կարոտ միջնադարյան բժշկարանների և մատենագիրների հիշատակությունները:

Հացկերույթներին նստել են գետնին փռած սփռոցների շուրջը, կերակրատեսակները՝ սալաների, սկուտեղների մեջ, ուտում էին ընդհանուր ամանից, մատներով կամ լավաշով: Գդալներից հազվադեպ էին օգտվում: Գոյություն են ունեցել սեռատարիքային սահմանափակումներ: Տղամարդիկ ճաշում էին առանձին՝ երեք տարեկանից բարձր տղա երեխաների հետ, կանայք նրանցից հետո և փոքր հարսը՝ առանձին կամ կանանց հետ՝ թեքված դիրքով, իբր առանձին է ճաշում:

Այսպիսով, աշխարհագրական, բնաէկոլոգիական պայմանների բազմազանությամբ, երկրագործական դարավոր մշակույթով, ազգային ինքնատիպ ավանդույթներով ու կենցաղով պայմանավորված՝ հայոց երկրում ձևավորվել և հազարամյակներ շարունակ կիրառվել է տեղական հայ բնակչության խառնվածքին, պահանջներին, նախասիրություններին հարիր սննդակարգ:

Գրականություն

1. **Ամիրդովլաթ Ամասիացի,** Օգուտ բժշկության, Երևան, 1940:
2. **Ադամյան Վ., Բաբայան Ժ.,** Հայկական խոհանոցի բառարան, Երևան, 2015:
3. **Ամիրխանյան Ա.,** Վայրի մրգերի հավաքչությունը Լոռիում // Հայ ժողովրդական մշակույթ. XVII, Երևան, 2018, էջ 403-412:
4. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 114-115:
5. **Բեգլարյան Հ.,** Հացագործությունը միջնադարյան Հայաստանում // ԼՀԳ, 1987, № 5:
6. **Ծատուրյան Ռ.,** Հայոց ավանդական տոնական ուտեստը, Երևան, 2011:
7. **Հակոբյան Ս.,** Հայկական լեռնաշխարհի դեղաբույսերը,

Երևան, 1975:

8. Հայկական խոհանոց, Երևան, 1965:

9. **Հարությունյան Ս., Քալանթարյան Ա. և ուրիշներ**, Գինին հայկական ավանդական մշակույթում, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2005:

10. **Հացունի Վ.,** Ճաշեր և խնճոյք հին Հայաստանի մեջ, Վենետիկ, 1912:

11. **Հորոսյան Ս., Գասպարյան Բ. և ուրիշներ,** Խաղողի և գինու հայոց մշակույթը, ՀՀ ԳԱԱ, ՀԱԻ հրատ., Երևան, 2021:

12. **Նահապետյան Ռ.,** Հայոց ավանդական ուտեստի էթնոմշակութային բնութագրության շուրջ // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 79-122:

13. **Պողոսյան Ս.,** Հայկական ազգային ուտեստի առանձնահատկությունները // «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք ու սովորույթ», Միջազգային չորրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2007, **նույնի՝** Հայկական ավանդական խոհանոց, Երևան, 2008, 62 էջ:

14. **Քալանթար Ա.,** Կաթնային արդյունքներ // ԱՀ, Գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 276-292:

15. Армянская кульинария, М., 1960.

16. **Арутюнов С., Сергева Г.,** Пища // Арутюнов С., Сергеева Г., Кобычев В., Материальная культура. Пища и жилище (Материалы к серии «Народы и культуры», Народы Кавкаьа), Москва, 1995, книга 4, с. 7-134.

17. **Арутюнян С., Мкртумян Ю.,** Вершина хлебопечения-лаваш // Хлеб в народной культуре. Этнографические очерки, М., 2004.

18. **Арутюнян С., Мкртумян Ю.,** Система питания. Общие выведы // КЖЭ, Ер., 1983,

19. **Барсегян И., Енгибарян С.,** Система питания // КЖЭ, 1983, с. 206-253.

20. **Обосян С.,** Виноградарство и виноделие // Армяне, М., 2012, с. 124-131.

21. Пища // Армяне, М., 2012, с. 233-247.

22. **Тер-Саркисянц А.,** Традиционная пища армян, М., 2001.

23. **Токарев С.,** К методике этнографического изучения материальной культуры // СЭ, 1970, № 4.

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅՈՑ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ԹԵՄԱ 1
ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ԸՆՏԱՆԻՔ

1.1. Ընտանիք հասկացությունը, տիպերը, բնույթը, գործառույթները

Ընտանիքի հիմնախնդիրը հայ ազգաբանական գիտության մեջ: Հասարակական-ընտանեկան հարաբերություններն իբրև մշակութային արժեքներ: Ուսումնասիրության կարևորությունը, արդիականությունը, նպատակը, խնդիրները:

Նախ՝ ի՞նչ է ընտանիք հասկացությունը. ընտանիքը ամուսնությամբ կամ ազգակցական կապերով միավորված մարդկանց սոցիալական խումբն է, որն ունի ձևավորված կառուցվածք, անդամների կենցաղավարության ընդհանրություն, ընդհանուր շահերով, փոխադարձ օգնությամբ ու բարոյական պատասխանատվությամբ կենցաղավարման համակարգ է: Ընտանիքը սերնդի վերարտադրության հիմնական բջիջն է: Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ենթարկվում է որոշակի նորմերի, վարքի կանոնների, ունի իրավունքների և պարտականությունների որոշակի շրջանակ, որոնցով կարգավորվում են ամուսինների, ծնողների, զավակների, մերձավոր ազգականների միջև եղած հարաբերությունները (տե՛ս **Գալստյան Մ.** և ուրիշներ, Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Եր., 2017, էջ 10):

Ընտանիքի անդամները ապրում են նույն տանիքի տակ և վարում են ընդհանուր տնտեսություն: Ընտանիքը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային արժեքային գործոններ կրող

համակարգ է:

Տարբեր ժամանակաշրջանների հասարակական փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողել ընտանիքի սոցիալ-մշակութային արժեքային համակարգի վրա: Ընտանիքի անդամների միջև հարաբերությունները մշտապես կարգավորվել են սովորույթների, վարքի բանավոր կանոնների, կենսակերպի ընդունված նորմերի միջոցով, որոնք ընդգրկել են հասարակական կյանքի բոլոր բնագավառները: Որպես սոցիալական ինստիտուտ՝ կոչված է իրականացնելու մի շարք գործառույթներ. 1. Վերարտադրողական գործառույթ. իրականացնում է սերնդի վերարտադրությունը, 2. Տնտեսական-կենցաղային գործառույթ. ապահովում է ընտանիքի անդամների նյութական բարեկեցությունը, համատեղ ապրելակերպի և կենցաղի կազմակերպումը, 3. Սոցիալական գործառույթ. երեխաների խնամքն ու դաստիարակությունը, պաշտպանվածության ապահովումը, զարգացման և հասունացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, 4. Բարոյահոգեբանական գործառույթ. շփվելու, հաղորդակցվելու պահանջմունքների բավարարումը, համատեղ ապրելու կերպի և կենցաղի կազմակերպումը և այլն, 5. Ժամանցի կազմակերպման գործառույթ. այն նպաստում է ազատ ժամանակի ճիշտ կազմակերպմանը, 6. Ընտանիքը պետք է ունենա սոցիալական վերահսկողության գործառույթ, որն ուղղված է լինելու ընտանիքի անդամների վարքի վերահսկմանը:

Որպես արտաքին գործառույթ՝ երեխային նախապատրաստել հատուկ սոցիալական դերերի կատարմանը, ընտանիքի անդամների մասնակցությունը պետական կառավարման, երկրի պաշտպանության, տնտեսության, մշակույթի, կրթության, գիտության և հասարակական կյանքի այլ ոլորտներին:

Որպես սոցիալական կառույց՝ ընտանիքը մեծ դեր ունի հասարակության կյանքում, քանի որ պայմանավորում է հասարակության ապագան, ընտանիքում են ձևավորվում երեխայի՝ որպես անձի անհատականությունը, բարոյական հատկանիշները:

Ընտանիքը իրականացնում է նաև ազգային մշակութային ու սոցիալական կյանքի վերարտադրությունը, ընտանիքն է, որ իրականացնում է ընտանեկան արժեքների՝ սովորույթների, ծեսերի, ավանդույթների փոխանցումը սերնդեսերունդ, ապահովում փոխադարձ պարտավորությամբ համագործակցությունը՝ ծնող-զավակ-պապիկ-տատիկ-թոռներ ջերմ համագործակցությունը, սերտ հարաբերությունները. հանգամանք, որով պայմանավորված է ընտանեկան ավանդույթների պահպանումը:

Ընտանիքին բնորոշ արժեքային համակարգը: Հայ ընտանիքին բնորոշ են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ ընտանեսիրությունը, մանկասիրությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, առողջ ապրելակերպը, հարգանքը տարեցների նկատմամբ, նրանց կենսափորձից դասեր քաղելը, հոգատարությունը, ընտանեկան և ազգային տոների նկատմամբ զգայուն լինելը, հյուրասիրությունը և այլն: Պատմության ցանկացած ժամանակաշրջան առաջադրում է իր պահանջները, և դրանց համապատասխան օրենքներն են սահմանվում, որոնք հստակեցնում են մարդկային տարաբնույթ հարաբերությունները: Այդպես եղավ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո: Քրիստոնեական արժեքները ներթափանցեցին հայ կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ մշակութային, կենցաղավարական, հասարակական, քաղաքական, տնտեսական, պետական, եկեղեցական, և շրջադարձային փոփոխություններ կատարվեցին: Ահա թե ինչու հայկական ընտանիքը միշտ

գտնվել է սերունդների հասարակական վերահսկողության ներքո:

Ընտանիքի ուսումնասիրության հիմնախնդիրը: Հայ իրականության մեջ ընտանիքն ունեցել է պատմական զարգացման առանձնահատկություններ. վաղնջական ժամանակներում այն հանդես է եկել ընտանեկան մեծ կազմով և անվանվել է «ընտանեկան համայնք», «գերդաստան», «մեծ ընտանիք», երբեմն նաև՝ տոհմ, ցեղ: Երկրորդ տիպը փոքր ընտանիքն է: Ընտանիքի այս երկու ձևերն էլ սակավ և հպանցիկ արձանագրվել են պատմագրական աղբյուրներում: Օրինակ՝ Հովի. Մանդակունին V դարի վերջին ակնարկել է եռասերունդ ընտանիք (**Հովի. Մանդակունի**, էջ 220): Լինելով կաթողիկոս՝ նա չի հանդուրժել բազմակնության դեպքերը. մի կին, մի ամուսին՝ այս է նրա սկզբունքը, ընդ որում՝ ամուսինը պետք է համարվի կնոջ գլուխը, նրա փառքը և օրենքը (էջ 218-219): Նույն հեղինակը միաժամանակ հորդորում է հավատարմություն ամուսինների միջև (էջ 130, 133, 160): Կնոջն ատելը՝ անձնասպանություն և եղբորն ատելը մարդասպանություն է դիտում (էջ 138-139): Աստծու առջև չար է համարում բոլոր նրանց, ովքեր չքավորության կամ այլ առիթներով ատում են իրենց զավակներին (էջ 138-139): Չի հանդուրժում, երբ գորովագին մորը տանջում է անառակ որդին (էջ 28), և ընտանիքում խարդախությունն է տիրում (էջ 110): Երեխաների դաստիարակությունը և նրանց տարերքից հեռու պահելը համարում է ընտանիքի մեծերի առաջնահերթ խնդիրը (էջ 161): Իսկ Եղիշեն չի հանդուրժում պարսիկներին, որոնք ստիպում են հավատափոխ լինել և ընդունել բազմակնությունը՝ հանուն ընտանիքի արագ աճման գաղափարի (**Եղիշե,** էջ 63): Կիրակոս Գանձակեցին զայրույթով է խոսում բարոյական կերպարանքը կորցրած հոգևորականության մասին (**Կ. Գանձակեցի**, էջ 306):

Ղազար Փարպեցին գրում է նորահարսի ամոթխածության և իր առագաստի մեջ մնալու՝ որոշ ժամանակ այլոց չերևալու մասին (**Ղազար Փարպեցի**, էջ 178): Որոշ հեղինակներ ակնարկել են որդեգրության, դայակ և ստնտու ունենալու, ամլության և միայնակ մայր լինելու մասին: Ուշագրավ վկայություններ է հաղորդում ընտանիքի և նրա կենցաղի մասին Փ. Բուզանդը: Նա մեզ է հաղորդում 354 թ. եկեղեցական ժողովի (Աշտիշատի) ընդունած կանոնների մասին, որտեղ արձանագրվել է մերձավորների ամուսնության արգելքի, երկկնության, բազմակնության, հարճեր պահելու սովորույթի արգելման մասին (**Փավստոս Բուզանդ**, էջ 43): Առատ նյութ է կուտակված հայ գեղարվեստական գրականության մեջ:

Ընտանիքի, ներընտանեկան հարաբերությունների, դերի ու նշանակության մասին մասնագիտական ուսումնասիրությունները ավելի քան մեկ հարյուրամյա պատմություն ունի և առավել լավ է ուսումնասիրված: Այն ազգագրական նյութի հիման վրա ներկայացված է Ե. Լալայանի բազմաթիվ աշխատություններում, Բենսեի և մյուս ազգագրագետ-բանահավաքների կողմից: Մասնագիտական վերլուծության է ենթարկվել Խ. Սամուելյանի «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության III հատորը, Ստ. Լիսիցյանի «Очерки этнографии дореволюционной Армении», «Զանգեզուրի հայերը», «Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատությունների մեջ, Է. Կարապետյանի «Армянская семейная община», Վ. Բդոյանի «Հայ ազգագրություն», Դ. Վարդումյանի՝ «Լոռեցիների նոր կենցաղը», Դ. Վարդումյանի և Է. Կարապետյանի համատեղ գրած՝ «Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը», Ա. Տեր-Սարգսյանցի՝ «Современная семья у армян», Ռ. Նահապետյանի՝ «Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը», Մ.

Գաբրիելյանի՝ «Հայկական ընտանիքը անցումային շրջանում», Մ. Գալստյանի և խմբի՝ «Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում» ուսումնասիրությունները:

1.2. Գերդաստանը հայոց մեջ

Գերդաստանը որպես վաղնջական ընտանիքի գոյաձև, առաջացման ժամանակը, երկարատև հարատևման դրդապատճառները, կազմը, կառուցվածքը: Մինչև հինգից-վեց աստիճանների շրջանակներում համատեղությամբ ապրելու սովորույթը հայոց մեջ:

Հարցեր և առաջադրանքներ, ռեֆերատների հանձնարարություն:

Ոչ արյունակից անդամների առկայությունը գերդաստանում՝ որդեգրում (հոգեզավակ, հոգեորդի): Որդեգրման ձևերը (ծննդաբերության նմանեցումը, որդեգրվողին մորացուի շապիկի միջով անցկացնելը, արյան խառնումը և այլն): Նրանց իրավունքներն ու պարտականությունները: Տանու ծառաներ: Տնփեսայություն:

Գերդաստանի տնտեսական և գաղափարական հիմքերը: Սեփականության ձևերը:

Գերդաստանի եկամուտները, հայթայթման միջոցներն ու եղանակներն ըստ տնտեսական ճյուղերի: Հիմնական և օժանդակ եկամուտներ, պանդխտությունից ստացվող եկամուտներ: Սեփականության ձևերը գերդաստանում:

Գերդաստանի ղեկավարությունը: Գույքային, աշխատանքային, իրավական և բարոյական հարաբերությունները գերդաստանում: Ընտանեկան վարվելակարգը (էթիկետ):

Աշխատանքի սեռատարիքային բաժանման կարգը գերդաստանում: Ավագության կարգը: Ղեկավարման համակար-

գը: Դաստիարակության նորմերը գերդաստանում, ընտանեկան, աշխատանքային, ազգակցական, համայնքային, հայրենասիրական, ռազմական, բարոյական, կրոնական:

Տան մեծը (տղամարդ և կին), տան մեջ վարչական իշխանության բաժանման կարգը, իշխանությունը հորից որդուն անցման կարգը: Տան մեծին ցուցաբերվող պատվի և հարգանքի ձևերը, սիմվոլները: Առանձին անդամների դրությունը ընտանիքում, միմյանց դիմելու ձևերը:

Կնոջ դրությունը ընտանիքում. աղջկա, հարսնացուի, նորահարսի, մայր դարձածի, պառավի, այրի կնոջ: Բարոյական նորմերի խստիվ պահպանումը ընտանիքում: Վերաբերմունքը ընտանեկան դավաճանության նկատմամբ. ամուսնու, կնոջ, տղամարդ, կին անդամների: Խախտման դեպքում կիրառվող պատիժները:

Ամուսնալուծության դեպքերը: Մանկան դաստիարակության սովորույթներն ու ձևերը, «դայակություն»:

Արգելանքների (տաբուներ) համակարգը գերդաստանում. բերանակապություն, չխոսկանություն, դրանց մեկնաբանությունը. խուսափումները որպես ամուսնական մտերմությունը քողարկելու ձև: Կեցվածքի բարեկրթություն. նստելու, ճաշելու, ննջելու, դիմելու ավանդական ձևերը գերդաստանում: Գերդաստանը որպես սերնդաձև ապահովող հիմնական միավոր:

Հյուրընկալման համակարգը գերդաստանում:

Օտարական հյուրերի, զավթիչների, տեղական պատվավոր անձանց, տղամարդ, կին հյուրերի դիմավորման ձևերը, տեղավորման, հյուրասիրության, ճանապարհելու կարգը: Նրանց ուտեստը: Բանահյուսական երկխոսություններ (հասկացնելու համար նրանց հեռանալու մասին), ասույթներ, դրանց ազգաբանական մեկնությունները:

ա) Գերդաստանը որպես ընտանիքի վաղնջական ձև: Հայ իրականության մեջ ընտանիքն անցել է պատմական զարգացման երկարատև ուղի: Վաղ շրջանի հայ ընտանիքը հայտնի էր ընտանեկան համայնք կամ գերդաստան, մեծ ընտանիք անվանումներով: Հայությանը բնորոշ էր ապրել գերդաստանական ընտանիքներով ու ավանդույթներով՝ նահապետի միանձնյա առաջնորդությամբ, բազմանդամ, չորսից-հինգ սերնդային կազմով, քառասունից-հիսուն, երբեմն անգամ հարյուրի հասնող անդամներով: Գերդաստանական ընտանեձևը հայոց մեջ գոյատևեց ընդհուպ XX դ. սկզբները[1]: Ընտանիքի այդ ձևը համապատասխանում էր հին հռոմեական *«Famili»*-ին, սերբական և բուլղարական *задруга*-ին, ռուսական *большая семья*-ին կամ *печище*-ին ու *дворище-ին*, վրացական *էրթուդիս սախլիին* կամ *սաէրթո սախլիին* և այլն: Այն իբրև վաղնջական արյունակցական կապերով կապված մեծ ընտանիքի վերապրուկ մինչև XIX դ. վերջ և XX դ. սկզբները գոյատևեց միայն գյուղական բնակավայրերում, թեև փոքր կամ անհատական ընտանիքը գյուղերում մեծամասնություն էր, իսկ քաղաքներում համատարած էր:

Գերդաստանը կամ ընտանեկան համայնքը առաջացել է տոհմական հասարակության քայքայման պահին, տնտեսության նոր ձևերի՝ արորային երկրագործության, անասնապահության հետ համակցված, անասնապահական զբաղմունքների ընդլայնման, մասնավորապես սարվորային անասնապահության ինտեսիվ աճին համընթաց, երբ արտադրողական ուժերի և գործիքների զարգացման տվյալ մակարդակում գերադասելի էր տնտեսությունը վարել ընտանեկան մեծ կազմով, ինչը ջանքերի համախմբում էր պահանջում: Աշխատա-

[1] **Карапетян Э.,** Армянская семейная общена, Ер., 1958.

վոր ձեռքերի համախմբման միտումը ցայտուն կերպով արտահայտվում էր XIX դ. վերջերին կայուն մնացած հայ գերդաստաններում, որտեղ արյունակիցների հետ գործում էին տանու ծառաները, մշակները, հոտաղները:

բ) Բնույթը: Այս ընտանեձևին բնորոշ էր արտադրամիջոցների կոլեկտիվ համընտանեկան սեփականությունը, կոլեկտիվ արտադրությունը և համատեղ ու հավասար սպառումը: Գերդաստանում չի եղել մասնավոր սեփականություն, բացառությամբ կանանց օժիտի ու զարդերի, որոնք գոյանում էին ամուսնական ծեսերի ժամանակ նվիրատվություններից: Այն նրանց անձնական սեփականությունն էր, իսկ գերդաստանի նահապետի ու մյուսների անձնական գործածության իրերն էին՝ զենքը, գավազանը, ձին և այլն: Գերդաստանի ընդհանուր սեփականությունն էին մշակելի հողերը, այգիները, բնակելի և տնտեսական, արտադրական կառույցները, այդ թվում՝ ջրաղացներն ու ձիթհանները, նաև շարժական ունեցվածքը՝ անասունները, կահույքն ու կարասին, տնային արհեստների արդյունքները, աշխատանքային գործիքները, գերդաստանի անդամների վաստակը: Գերդաստանն ուներ իր դրամագլուխը, որը գոյանում էր առևտրից, արտագնա աշխատանքի վաստակից: Այն գտնվում էր նահապետի, նրա կնոջ հսկողության ներքո՝ **պահոցք** կոչվող մոմապատ կտավի քիսիկում կամ պատերի մեջ պահվող կճուճում (տե՛ս նաև **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Եր., 2004):

գ) Կազմն ու կառուցվածքը: Ուներ կայուն կազմ և բարդ կառուցվածք: Ընդգրկում էր հայրական գծով, մեկ նախահորից սերված 4-5, երբեմն էլ ավելի հորիզոնական (եղբայրների, հորեղբոր որդիների) և ուղղահայաց (նահապետից սերված ճյու-

ղավորումներով) սերունդներ: **Գերդաստանի անդամների թիվը,** եթե Արևելյան Հայաստանում հասնում էր 20-30-ի, ապա Արևմտյան Հայաստանում՝ առանց ծառաների կարող էր հասնել 15-50-ի, առանձին դեպքերում՝ 70-80-ի, իսկ երբեմն էլ՝ ավելի շատ: Օրինակ՝ բանահավաք Սարգիս Հայկունին Բագրևանդ գավառում հիշատակում է 100 հոգանոց ընտանիք, վիպասան Ռաֆֆին Ռշտունիք գավառում արձանագրել է մեկ տանը 20 մանկան օրորոցի առկայությունը, Ռաֆիկ Նահապետյանն էլ նշում է, թե սասունցիների ընտանիքն այնքան բազմամարդ էր, որ ճաշին բացակայողների թիվը կարողանում էին որոշել գդալնոցում մնացած գդալների քանակով (տե՛ս **Ռ. Նահապետյան,** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, գրքում):

դ) Ղեկավարման կարգը և փոխհարաբերությունները ընտանիքում: Գերդաստանն ուներ կուռ ղեկավարություն, փոխհարաբերությունները կարգավորող կարգ ու կանոն, միանձնյա ղեկավարություն: Ընտանիքի կայունության ու գոյատևման նախապայմաններից մեկը նրա ներքին կյանքի ճիշտ կազմակերպումն էր, բոլոր անդամների պարտականությունների, գործառույթների ու իրավունքների համամասնական բաշխումը, որ, անշուշտ, պայմանավորված էր ընտանիքում տիրող սեփականության ձևերով, տնտեսական ու քաղաքական հիմքով: Մինչև XIX դարավերջ և XX դ. սկզբները ավանդական հայ ընտանիքում տիրող ներքին կյանքը, վարքն ու բարքը դեռևս խարսխված էին դարերի խորքից եկող ավանդույթների վրա, որոնք էլ պայմանավորում էին ընտանիքի յուրաքանչյուր անդամի տեղն ու դերը ներընտանեկան կյանքում:

Նահապետի և նրա կնոջ կարգավիճակը շատ բարձր էր, նրանք էին ընտանիքի կայունության, ամրության երաշխավո-

ը: Փոխհարաբերությունների կարգավորման և կայունության գործում կարևորվում էին ավագության կարգի պահպանումը և երկու սեռերի պարտականությունների ճիշտ բաշխումը: Աշխատանքը բաժանվում էր ըստ սեռի և տարիքի ու մասնագիտական հմտությունների. տղամարդիկ «դրսի»՝ տնտեսաարտադրական ոլորտներում, իսկ կանայք «ներսի»՝ տնային աշխատանքներում, այստեղից էլ թևավոր խոսքը՝ «տղամարդը դրսի պատ է, իսկ կինը ներսի»:

Գերդաստանի ղեկավարը, որը ավագ տարիքի, փորձառու, ամենքի կողմից հարգված ու սիրված տղամարդ էր, կրում էր **նահապետ, տանուտեր, տան գլուխ, սպիտակ մորուս, տան մեծ, տան խոսող, տան ղեկող, տան քոթուկ** պատվանունները: Նրա ձեռքում էր կենտրոնացված ընտանիքի բյուջեն, ողջ ունեցվածքի իրավատերն էր, համայնքում ընտանիքի շահերը ներկայացնողը: Նրա իրավունքները անսահմանափակ էին, նա էր իր ձեռքի տակ ապրող սերունդների ճակատագիրը որոշողը: Նրա իրավունքն էր՝ խրախուսել գերդաստանի օգտին գործող անձանց և պարսավել ու պատժել նրա շահերի դեմ գործողներին: Ըստ սովորույթի ուժի՝ նրան իրավունք էր վերապահված ժառանգազրկելու անհնազանդ զավակներին կամ թոռներին և բացառիկ դեպքերում անգամ հեռացնելու ընտանիքից: Հակասություններն ընտանիքում առանձնապես ուժեղացան կապիտալիստական հարաբերությունների շրջանում, երբ գերդաստանի առանձին անդամներ, դրամական վաստակ ձեռք բերելով քաղաքներում, հրաժարվում էին այն միացնել ընտանիքի ունեցվածքին, կամ խախտում էին բարոյական նորմերը:

Նահապետի մահից հետո ավագ որդուն էր փոխանցվում գերդաստանի ղեկավարությունը: XIX դարում գերդաստանի

զառամյալ նահապետն իր ղեկավարությունը ավագ որդուն հանձնելիս ծիսական կարգով ձեռքերը լվանում էր նրա ձեռքերի վրա և նրան համբուրում, որպեսզի հարստություն պարգևող էությունն անցներ հաջորդողին:

Կանանց գործերի ղեկավարը նահապետի կինն էր, որին անվանում էին **մեծ նան, նանի, մեծ մամ (մայր), խաթուն մամ**: Նա պահպանում էր իր հսկողական իրավունքները մինչև մահ, վայելում էր մեծ հեղինակություն: Վերջինս զբաղվում էր առտնին կենցաղի կարգավորմամբ: Նրա ձեռքում էր կենտրոնացված սննդամթերքների ամբարման և մատակարարման աշխատանքների ղեկավարությունը, մառանների բանալիները, նա էր գերդաստանի հացավորողը, ճաշի շերեփն ու բանալիները նրա դերի խորհրդանիշներն էին: Նա էր կարգավորում տնային տնտեսությունը, հարսների ու աղջիկների աշխատանքը, ընտանիքի դաստիարակն էր և բարոյական նորմերի ուսուցիչը, նահապետի հեղինակության քարոզիչը, ազգի մեծից ու ավագ որդուց հետո նրա խորհրդատուն էր և օգնականը, լրաբերը և լրատարը: Ընտանեկան ավանդույթների հսկողությունը և հոգևոր արժեքների պահպանման մեծագույն առաքելությունը մշտապես նրա վրա է դրված եղել: Ավագ որդու կինը սովորաբար սկեսուրի անմիջական օգնականն էր, որով և վարժվում էր նրա գործերում: Ամուսնու մահից հետո էլ, որպես հարգանք և երախտիք, պահպանվում էր մեծ մոր հսկողական իրավունքները:

Գյուղթղթակիցները, ժամանակի հետազոտողները արձանագրել են, որ հայկական գերդաստանի նահապետը բռնակալ է, բայց իրականում նա ժողովրդավար էր: Առերևույթ դեսպոտությունը իրականացրել է նրա կինը՝ անհնազանդներին, կենտրոնախույս ուժերին ահաբեկելով ամուսնու կողմից իրա-

կանացվելիք պատիժներով: Այս երևույթը նկատելի էր գերդաստանների տրոհման շրջանում:

Նահապետի իշխանությունը ժառանգում էր ավագ որդին կամ նահապետի կրտսեր եղբայրը, իսկ կանանց ղեկավարությունը անցնում էր վերջինիս կնոջը: Հազվադեպ խախտելով ավագության այս ավանդական կարգը, տան ղեկավարությունը հանձնում էին նահապետի այն զավակներից մեկին, որն առավել ընդունակ էր ղեկավարելու գերդաստանը:

Հայկական ընտանիքում հազարամյակներով գործել են իրավահարաբերությունները կարգավորող բանավոր կանոններ: Դրանց մեջ ամենաէականը երկու սեռերի փոխհարաբերությունների հարցն էր և ապա՝ ավագության կարգը:

Վարվելակարգը: Տղամարդիկ և կանայք պարտավոր էին ճաշել առանձին, նախ՝ տղամարդիկ, ապա՝ կանայք՝ երեխաների հետ: Ավագության կարգի ամեն մի խախտում դատապարտվում էր խիստ դիտողություններով: Կրտսերները ավագների ներկայությամբ չէին նստում, իսկ նահապետի թույլտվության դեպքում առաջնորդվում էին ավագության կարգով:

Խստորեն պահպանվում էին բոլոր ծիսական կարգերը: Կենցաղում տարածում ուներ աղջիկների և հարսների կողմից ավագ կանանց և բոլոր տղամարդկանց ձեռքերը համբուրելով կամ համբույրի ձևանմանությամբ ողջունելու հնագույն սովորույթը: Գրեթե անփոփոխ էր մնացել նաև մերձավորների, խնամիների, ընկեր-ընկերուհիների շրջանում երեսը համբուրելով ողջունելու նախնական ձևը: Պահպանվել էր նաև անբարոյական կանանց ու տղամարդկանց մազերը կտրելով պատժելը, որից ծագում են «մազդ մկրատվի», «ծամդ կտրվի» և այլ անեծքներ:

Խիստ տարբերակում է արվել տղա և աղջիկ երեխաների

միջև: Տղան տան սյունն էր, հեղինակությունը, տունը ծխացնողը, զենք վերցնողը, սերունդ վերարտադրողը, իսկ աղջիկ երեխայի ծնունդը դժբախտություն է համարվել, ծնվելիս ընտանիքը կարեկցանքի էր արժանանում համայնքի կողմից: Աղջիկները մինչև ամուսնությունը կանանց համեմատ որոշ ազատություն ունեին, բայց պատանիների համեմատ ճնշված էին: Աղջիկը արբունքի շրջանում հասարակության մեջ զուսպ ու ամոթխած էր լինելու, հարսնության շրջանում՝ չխոսկան մեծերի նկատմամբ: Հագնելու էր ծանր զգեստներ, կրելու էր գլխի ծանր հարդարանքներ, որոնցով կապվում էին քիթն ու բերանը: Կանայք տղամարդկանց ներկայությամբ երեխաներին կրծքով կերակրելու, գրկելու, գուրգուրելու իրավունք չունեին: Երեխաները հոր սեփականությունն էին համարվում: Երիտասարդ կինը ամուսնու հլու հպատակն էր, սահմանափակ էր նրա իրավունքները կյանքի բոլոր բնագավառներում: Նա ամուսնու անունով դիմելու իրավունք չուներ, իսկ ամուսինը նրան կանչում էր ծննդավայրի (աշտարակցի), կամ հոր անունով (Մինասի աղջիկ) և այլն: Սովորույթի համաձայն՝ տղամարդը տնտեսական և հասարակական հարցերում կնոջ հետ հաշվի չէր նստում. նա հաշվետու էր միայն նահապետին: Կինը նրա համար սերունդ աճեցնող էր:

Կնոջը հայհոյելն ու անգամ ծեծելը որոշ վայրերում համարվել է «տղամարդկություն»: Նույնիսկ տոնական օրերին ամոթ էր, որ տղամարդն իր կնոջը շնորհավորի կամ որևէ բան նվիրի (տե՛ս **Ե. Լալայան,** «Ջավախք, էջ 232): Հայ իրականության մեջ գերդաստանական ընտանիքներում ամուսնական ջերմ ու մտերմիկ հարաբերությունները ոչ միայն չեն խրախուսվել, այլև երբ տղամարդն իր կնոջ հանդեպ հրապարակավ ցուցաբերում էր սեր ու ջերմություն, կարող էր անարգան-

քի արժանանալ ընտանիքի անդամների կողմից: Կանայք ոչ մի դեր չեն ունեցել իրենց շուրջը տեղի ունեցող հասարակական իրադարձություններում (տե՛ս **Սամուելյան Խ.,** ԱՀ, գ. XVII, էջ 140):

Տղաների և աղջիկների ամուսնությունը հիմնականում որոշում էր նահապետը՝ կնոջ հետ մասամբ խորհրդակցելուց հետո: Առավել ծանր էր ամուլ կնոջ բարոյական կացությունը:

Գերդաստանում խստորեն պահպանվում էին բոլոր ծիսական կարգերը, ավագների նկատմամբ հնազանդությունը: Այդ ծեսերից էին՝ նահապետի և սկեսրայրների ոտքերը լվանալը, սրբելը և համբուրելը, սկեսրայրի ոտքերը մաժելով քնեցնելը, բոլոր մեծերին ողջունելիս խոնարհվելը, բոլորի ձեռքերին ջուր ածելուց հետո դրանք համբուրելը, իսկ տան տղամարդիկ պարտավոր էին նահապետի մորուքից կարճ մազեր պահել, տոներին նահապետին ու մեծ նանին մեծարել և նրանցից ընծաներ ստանալ և այլն: Ծայրահեղության հասնող այս երևույթները ոչ թե ստրկություն, այլ հարգանքի ու ակնածանքի դրսևորում են համարվել:

Մինչև բազմազավակ մայր դառնալը կինը կաշկանդված էր, որից հետո միայն նա որոշ ազատություններ էր վայելում: Միաժամանակ, կինը հայ ընտանիքի հպարտությունն էր և պատիվը, բայց նա պարտավոր էր պահպանել խստագույն ավանդութային նորմերը: «Ընտանիքը նման է եկեղեցու, որի քահանան մայրն է»: Հայ եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին կնոջը համեմատում է ծովի հետ, որի մեջ լցված են բազում գետեր, քանզի կինն իր բնությամբ համարվում է սնուցող, ժողովող և համախմբող[1]:

Գերդաստանի տրոհման սոցիալ-տնտեսական դրդա-

[1] **Գրիգոր Տաթևացի**, Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, վերատպեալ ի տպարանի սրբոյ Յակոբեանց, Երուսաղէմ, 1998, էջ 196:

պատճառները, փոքր, անհատական ընտանիքների առաջացումը: Հարցերի միջոցով բացահայտել գերդաստանների տրոհման պատճառները:

Գերդաստանի տրոհման առաջին նշանները: Կնոջ օժիտը որպես մասնավոր սեփականության նորովի դրսևորման միջոց: Առանձնացման միտումները և բաժանքի հասնելու միջոցառումները: Բուն բաժանք, դրա տնտեսական ու բարոյական պատճառները: Բաժանքի իրավական կարգավորումը: Շարժական և անշարժ ունեցվածքի բաժանման սովորութային կարգը, ձևերը: Գերդաստանների իսպառ վերացումը Արևմտյան Հայաստանում եղեռնի հետևանքով և Խորհրդային Հայաստանում՝ կոլեկտիվացման քաղաքականության պատճառով:

Հայոց մեջ երկար գոյատևեց գերդաստանական ընտանեձևը, քանզի շարունակվում էին տնտեսության մեջ հին, իրենց դարը ապրած աշխատանքային գործիքների և արտադրության կազմակերպման հնավանդ ձևերը, պետականազրկությունը, հայ կյանքի անապահով վիճակը, տոհմական հարաբերությունների պահպանումը, հավելած նաև բնակլիմայական և աշխարհագրական ոչ նպաստավոր պայմանները և այլն:

XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին գերդաստանների տրոհման դրդապատճառներն էին. ա) անընդհատ կրկնվող պատերազմական իրավիճակները, օտար հարձակումները և սովն ու համաճարակները, բ) օտար երկրներ վաստակի մեկնելը՝ պանդխտությունը, գ) շուկայական հարաբերությունների ներթափանցումը հայկական գյուղ, դ) գերդաստանում մասնավոր սեփականության առաջացումը (կնոջ սարմիան (արնեգինը) վաշխառության առարկա ծառայեցնելը), ե) գերդաստանի առանձին անդամների վաստակը ընդհանուր սեփակա-

նությանը չմիացնելը, բարոյական սահմանված նորմերի խախտումը, գերդաստանի նահապետի երբեմնի բարձր հեղինակության անկումը և այլն, որոնք կապիտալիստական հարաբերությունների հետևանք էին, հետևապես՝ անհատական, ինքնուրույն ընտանիքների դերի մեծացումը:

Գերդաստանական ընտանեձևը վերջնականապես անհետացավ արևմտահայերի եղեռնի և հայրենազրկության, իսկ արևելահայերի շրջանում՝ խորհրդային իշխանության վարած տնտեսական և սոցիալական քաղաքականության հետևանքով, երբ կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպվեցին, ընտանիքների մանրացան, իսկ մանրացող տնտեսություններին որպես առանձին ծուխ հաշվառեցին, հողամասեր հատկացրին և այլն:

Բաժանման կարգը: Գերդաստանի միասնության խորհրդանիշը դեռևս անկողինների ընդհանուր ծալք ունենալն էր, որն առանձին ընտանիքների միջև բաժանվելու դեպքում տրոհումն անկասելի էր: Բաժանքը տեղի էր ունենում հիմնականում նահապետի մահվանից հետո: Բաժանքը ժողովուրդը աղետ էր ընկալում, որը կանխելու համար նահապետի խստություններն այլևս օգուտ չէին տալիս, կանխելն անհնարին էր: Ահա այս շրջանում ժամանակի մամուլը և որոշ ուսումնասիրողներ երբեմնի ժողովրդավար նահապետին բնութագրում են բռնակալ, դեսպոտ: Գերդաստանի տրոհման նշաններն էին՝ «իմն ու քոնը» տարբերակելը, ունեցվածքը սեփականացնելը, դրամական վաստակը, անկողինների ծալքն ըստ անհատական դուստր ընտանիքների առանձնացնելու գործընթացները: Հարևանները այս երևույթը համեմատում էին հղիության հետ. «Մարգարի տունը ծանդրուոտք է», «շուտով բաժանք է լինելու», իսկ երբ տան շունը գիշերով ոռնում էր, դա համարվում էր չարագուշակ երևույթ, ընտանիքի բա-

ժանքի նախանշան: Գերդաստանի բաժանքը ողբալի ազդեցություն էր ունենում ոչ միայն նահապետի ու նրա կնոջ, այլև հենց բաժանվողների վրա: Ժողովրդական մտածողությամբ՝ բաժանքը մահու չափ մեղք էր համարվում, որով քայքայվում էր մեծ տնտեսությունը:

Հնագույն սովորույթի համաձայն՝ բաժանքը պետք է տեղի ունենար նահապետի ու նրա կնոջ մահից հետո՝ եղբոր կամ զավակի ավագության տարիներին: XIX դ. վերջերին բաժանքը երբեմն արձանագրվում էր նաև նահապետի և նրա կնոջ կենդանության օրոք, քանի որ ուժեղանում էին կենտրոնախույս ձգտումները: Դա անխուսափելի գործընթաց էր:

Շարժական գույքը բաժանվում էր վիճակահանությամբ: Թոնրատունը կամ գոմը իր օդայով, որ խորհրդանշում էր պապենական, տոհմական կապերը, հատկացվում էր նահապետին կամ նրա կնոջն ու կրտսեր որդուն, մնացածը բաժանվում էր առանձնացվող զավակներին ու թոռներին: Նահապետի ընտրած բնակարանային, հողային և գույքային այլ հասույթներն առանձնացնելուց հետո մնացածները գյուղի ավագի ու սպիտակամորուսների ներկայությամբ բաժան-բաժան էին արվում վիճակահանությամբ: Ամբողջ շարժական ունեցվածքը բաժանվում էր հավասար՝ «ախպերաբաժին» եղանակով: Կես «ախպերաբաժին» հատկացվում էր նահապետին կամ նրա կնոջը որպես «փառու» (նվեր)՝ հայրական տան ավանդույթները իրագործելու համար:

Ընդհանուր բաժնից առանձնացվում էին չամուսնացած տղաների և աղջիկների ամուսնության, այդ թվում՝ օժիտի պատրաստման հետ կապված ծախսերը: Բաժանքի արարողությունը սրբագործվում էր հայրական օջախից նորաստեղծ տները կրակ տեղափոխելու հնամենի սովորությամբ:

Փոքր ընտանեձևի տարածումը:

Հայկական փոքր ընտանիքը XIX-XX դդ. սկզբներին:

Հարցեր և պարզաբանումներ:

Փոքր ընտանիքը, առաջացման ժամանակը, տնտեսական հիմքերը, սեփականության ձևերը, կազմը, կառուցվածքը, գերդաստանական հարաբերությունների պահպանվածության աստիճանը փոքր ընտանիքում: Իրավահարաբերությունները փոքր ընտանիքում: Կնոջ իրավասությունը փոքր ընտանիքում:

XIX դ. վերջին և XX դարասկզբին գերդաստանները, իբրև պատմական անցյալի վերապրուկային երևույթներ, անհետացան: Գերդաստանը Հայաստանի տնտեսական ու քաղաքական երերուն պայմաններում փոխօգնության յուրօրինակ խմբավորում էր: Սոցիալ-մշակութային փոփոխություններով պայմանավորված՝ կատարվեց ընտանիքի կառուցվածքի, կազմի թվաքանակի փոփոխություն: Նահապետական, տոհմային կացութաձևը կայուն պահպանած բնակավայրերում ընտանիքի բնորոշ ձևը գերդաստանն էր, իսկ դեռ միջնադարից ոչ կայուն պահպանված կենսաձևերով բնակավայրերում՝ փոքր ընտանիքը: Հնագույն և գրավոր նյութերի համաձայն՝ գերդաստաններից ավելի լայն տարածում են ունեցել փոքր ընտանիքները: Այդ երևույթը բնութագրական էր նաև XIX դարում և առավելապես XX դարի առաջին քառորդում: Սակայն այս ձևով ընտանիքում ևս մթնոլորտը գերդաստանական էր, կայուն էր տղամարդու իշխանությունը՝ ավագության սկզբունքով: Այդ տեսակետից առանձնապես աչքի էին ընկնում եռաստիճան ընտանիքները, որոնցում դեռևս պահպանվում էին կնոջ և տղամարդու անհավասար հարաբերությունները:

Կազմն ու կառուցվածքը: Մինչև խորհրդայնացումը գերակշռում էր եռասերունդ ընտանիքը՝ գերդաստանական իրավասովորութային շատ տարրերի պահպանմամբ, մասնավորապես տղամարդու և կնոջ միջև իրավունքների և պարտականությունների անհավասար վիճակը, չխոսկանությունը: Տնտեսական և ավանդական շահերով պայմանավորված՝ շարունակում էին գոյատևել նաև եղբայրական ընտանիքները, որոնք առանձնանում էին երրորդ սերնդի ժամանակ:

Երկաստիճան ընտանիքներում կինը դառնում էր ամուսնու խորհրդականը. երեխաներին խնամելու գործի անկախությունը, գերդաստանի համար պարտադիր ծեսերի կրճատումը կամ վերացումը և այլն այս ընտանիքին շնորհում էին ազատ հարաբերությունների հնարավորություններ: Սակայն երկրագործական և անասնապահական աշխատանքների կազմակերպման տեսակետից երկսերունդ ընտանիքները կանգնում էին դժվարին դրության առջև. շատ երեխաներ ունեցող կինը գրեթե անկարող էր մասնակցել դաշտային աշխատանքներին: Հիմնականում այս էր պատճառը, որ եռասերունդ ընտանիքները նախահեղափոխական Հայաստանում թվով գերակշռում էին, որովհետև այստեղ փոխօգնության հնարավորություններն ակնբախ էին: Ընտանիքների հին ձևերը պահպանվեցին մինչև 1930-ական թթ. սկիզբները, երբ արմատապես փոփոխվում էին հողային հարաբերությունները, երբ գերդաստաններն ամբողջապես անցան պատմության գիրկը:

1915-1920 թթ. կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանից աշխարհասփյուռ հայությունը որոշ ժամանակ կորցրեց ընտանիքների բնական ձևերը. գերդաստաններն իսպառ վերացան. ընտանիքները դարձան որբերի ու այրիների օջախներ: Նախկինում բաժանված ընտանիքների ողջ մնացած

անդամների վերամիավորումը դարձավ անխուսափելի երևույթ. որբացած երեխաները որդեգրվում կամ միացվում էին հարազատների և այլոց ընտանիքներին:

1.3. Հայերի ընտանիքը խորհրդային և անցումային շրջանում (1920-1990)

Հարցեր և առաջադրանքներ:

Հայկական ընտանիքը խորհրդային շրջանում: Սոցիալ-*տնտեսական և պատմաքաղաքական, մշակութային և գաղափարական վերափոխումները և դրանց հետևանքները հայկական ընտանիքի կազմի, կառուցվածքի վրա, ներընտանեկան իրավահարաբերությունների նորովի դրսևորումները: Ուրբանիզացիոն գործընթացները, դրանց անդրադարձները հայ ընտանիքում: Գյուղական և քաղաքային ընտանիքները, հնի և նորի դրսևորումները դրանցում:*

Հայկական ընտանիքը անցումային շրջանում:

Սոցիալ-տնտեսական, քաղաքական նորովի դրսևորումները և հայ ընտանիքը անցումային շրջանում: Սոցիալական նոր իրողությունները և ընտանիքը:

Մշակութային փոփոխությունների ազդեցությունն անցումային շրջանի ընտանիքի վրա:

Ներընտանեկան հարաբերությունները անցումային շրջանի հայկական ընտանիքում: Այս հարցերին նվիրված ուշագրավ հետազոտություններից է ազգագրագետ Մ. Գաբրիելյանի «Հայկական ընտանիքն անցումային շրջանում» (Երևան, 2005) մենագրությունը:

Հայաստանում, խորհրդային կարգերի հաստատման առաջին տասնամյակներից սկսած, ընտանիքի կառուցվածքի, կենցաղի և ներընտանեկան փոխհարաբերություններում նկատելի

փոփոխություններ կատարվեցին: Քաղաքային բնակչության կենցաղը, պայմանավորված արդյունաբերական և մշակույթի կենտրոնների ստեղծմամբ, որոշակի փոփոխությունների ենթարկվեց, իսկ գյուղացիական կյանքի վերափոխման գործում որոշիչ դեր կատարեց գյուղի կոլեկտիվացումը՝ կոլեկտիվ տնտեսությունների ստեղծումը: Տնտեսական այդ քաղաքականությամբ վերջնականապես վերացան գերդաստանական ընտանիքների մնացուկները, գյուղական ընտանիքներն սկսեցին մանրանալ և գերիշխող ձևը դարձավ երկաստիճան ընտանիքը: Սակայն ավանդապահ շրջաններում շարունակեցին գոյատևել եռաստիճան՝ ծնող-զավակ-թոռ, երբեմն էլ՝ համատեղ եղբայրական ընտանիքները (օրինակ՝ արևմտահայերով բնակված շրջաններում՝ Թալին, Գեղարքունիք, Արագածոտն): Գյուղական երկաստիճան և եռաստիճան ընտանիքներին բնորոշ էր բազմազավակությունը:

Իրավահարաբերությունները փոքր ընտանիքում: Խորհրդային ընտանիքի ձևավորման գործառույթում կարևորվում էր հասարակական կյանքում կնոջ իրավունքների մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Խորհրդային դեկրետներով կնոջ իրավունքները հավասարվում էին տղամարդու իրավունքներին հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային և ընտանեկան կյանքի բոլոր բնագավառներում: Տնտեսության մեջ կինը ամուսնու հիմնական խորհրդականն էր, երեխաների անմիջական խնամողն ու դաստիարակը, տնային տնտեսության փաստական ղեկավարը: Բազմազավակ մայրը չէր կարող մասնակցել դաշտային աշխատանքներին, որով և բացատրվում էր եռաստիճան ընտանիքների պահպանվածությունը: Եթե ավանդական ընտանիքում այլազգիների հետ ամուսնությունները դատապարտվում էին,

ապա խորհրդային տարիներին դրանց թիվը որոշակիորեն աճեց: Վերացան որոշ ծեսեր՝ դրանց նախնական իմաստի մթագնելու պատճառով, զգալիորեն կրճատվեցին ամուսնա-հարսանեկան ծիսակարգի շատ արարողակարգեր:

Խորհրդային և հետխորհրդային շրջանում հանդիպում են այրիացած զոքանչի, երբեմն և այրի աներոջ բնակվածությունը փեսայի հարկի տակ, նաև՝ տնփեսայությամբ ընտանիքներ: Մեծացել է երկսերունդ ընտանիքների, արտագնացության պատճառով՝ միայնակ տնտեսությունների թիվը:

Ներընտանեկան հարաբերությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) ամուսինների միջև, 2) ծնողների և զավակների միջև: Բուն ընտանեկան հարաբերություններից բացի, կան նաև հեռու և մոտիկ ազգականների միջև հարաբերություններ:

Ավանդական ընտանիքում տան գլխավորը ավագ տղա-մարդն էր, որի խոսքը օրենք էր մյուսների համար և ուներ ան-գամ սեփականազրկելու իրավունք: Դա պայմանավորված էր՝ 1) տղամարդուց կնոջ տնտեսական կախվածությամբ, 2) աշ-խատանքի և գործառույթների հստակ բաժանմամբ:

Ներկայումս կինը հավասարապես մասնակցում է ընտա-նիքի կառավարմանը, մասնավորապես երկսերունդ ընտանի-քում: Այսօր տղամարդուն «տան գլխավոր» համարելը հաճախ բխում է սովորութային ուժից, ինչը ձևական և ցուցադրական բնույթ է կրում: Ընտանիքը ներսից «կառավարող» կինը մարդ-կանց ներկայությամբ ամուսնուն է ներկայացնում որպես տան գլխավոր, բայց իրականում ինքն է ղեկավարում ընտանիքը: Կնոջ մեծ դերը ավելի է մեծանում, երբ ինքն է համարվում ըն-տանիքի հիմնական կերակրողը: Գյուղական բնակավայրերի եռասերունդ ընտանիքների գերակշռող մասը տան ավագ տղամարդուն կամ «մեծին» ընտանիքի գլխավոր են համա-

րում, թեև երբեմն դա էլ ձևական բնույթ է կրում, երբ հարսն է հիմնական «կերակրողը», իսկ ամուսինը արտագնա աշխատանքի է: Աստիճանաբար ավելանում են ամուսնացած դստեր պարտավորություններն իր ծեր ծնողների նկատմամբ. որքան մեծանում են դստեր պարտականությունները, նույնքան պակասում են հարսի հանձնառությունները:

Ներկայումս տան տղամարդուն ընտանիքի գլխավոր համարելը պայմանավորված է նրա՝ որպես ընտանիքի կերակրողի կարգավիճակով, որտեղ էական են մի շարք գործոններ. 1) շատ դեպքերում կանանց համար աշխատանք գտնելը ավելի հեշտ է, քան տղամարդկանց, 2) տղամարդը արտագնա աշխատանքի պատճառով երկար բացակայում է բնակության վայրից, այդ դեպքում կինն է որոշում առօրյա կենցաղային խնդիրների հետ կապված հարցերը:

Իսկ ինչպիսի՞ն են ծնող-ամուսնացած զավակ փոխհարաբերությունները ներկայումս: Ըստ էթնոսոցիոլոգիական հարցումների (տե՛ս **Մ. Գալստյան** և ուրիշներ, «Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում»)՝ ներկայումս ծնողների հետ համատեղ բնակվելու հիմնական պատճառներն են՝ ա) սովորույթը, բ) ծեր ծնողների խնամքը, գ) ծնողների օգնությունը երիտասարդ ընտանիքներին, դ) ծնողների փորձը և խորհուրդները, ե) երեխաների խնամքը: Երիտասարդ ընտանիքի առանձին ապրելու ձգտումը արտահայտվում է այն ժամանակ, երբ նա կարողանում է ինքնուրույն հոգալ իր կեցությունը: Ծնողների օգնությունը կարևորվում է հատկապես 18-29 տարեկան երիտասարդների դեպքում, որոնք չունեն ինքնուրույն տնտեսություն վարելու փորձ կենցաղում և երեխաների խնամքի ու դաստիարակության հարցերում: Համեմատած քաղաքաբնակների հետ՝ գյուղաբնակնե-

ը ավելի են հակված ծնողների հետ ապրելուն, ինչը պայմանավորված է և՛ ավանդույթով, և՛ ներկա սոցիալ-տնտեսական պայմաններով՝ ա) նոր բնակարաններ ձեռք բերելու դժվարություններ, բ) կենցաղային առօրյա խնդիրներ, գ) մսուր-մանկապարտեզների պակաս և այլն:

Ավանդական և ժամանակակից ընտանիքներին բնորոշ մի քանի յուրահատկությունների շուրջ: Միմյանցից տարբերվում են կազմով ու կառուցվածքով, ինչը պայմանավորված է սոցիալ-մշակութային փոփոխություններով: Ավանդական ընտանիքին բնորոշ էր բարդ կառուցվածքը (հորիզոնական և ուղղահայաց սերունդներով համատեղ ապրելակերպը), բազմանդամությունը, իսկ փոքր ընտանիքին բնորոշ էր հիմնականում եռասերունդ կազմն ու կառուցվածքը, կողմնային ճյուղավորումները առանձնանում էին:

Ավանդականի դեպքում շարունակում էին պահպանվել գերդաստանական հարաբերությունների շատ մնացուկներ: Գերիշխանությունը ընտանիքում գտնվում էր սերնդով և տարիքով ավագ անդամների ձեռքում, առավելությունը միշտ եղել է ավագինը:

Արդի ընտանիքին բնորոշ է՝ ա) ամուսնական զույգը՝ իր զավակներով և թոռներով, բ) ամուսնական զույգը՝ իր զավակներով, գ) ամուսնական զույգը՝ առանց զավակների: Ընդհանուր առմամբ՝ ավելի փոքրացան ընտանիքները, թուլացան և վերացան գերդաստանական հարաբերությունների մնացուկները, իշխող ձևը դարձավ երկաստիճան՝ ամուսիններ-զավակներ ընտանեձևը:

Այս և այլ հարցերի ուսումնասիրության համար կարևորում ենք հետևյալ ուսումնասիրությունները՝ 1) Դ. Վարդումյան, Է. Կարապետյան, Հայաստանի կոլտնտեսականների

ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Եր., 1963, 2) Դ. Վարդումյան, Լոռեցիների նոր կենցաղը, Եր., 1956, 3) Մ. Գաբրիելյան, Հայկական ընտանիքը անցումային շրջանում, Եր., 2005, 4) Միհրան Գալստյան և հեղինակների խումբի, Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Եր., 2017 և այլն:

ԹԵՄԱ 2
ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔ ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Ամուսնության ավանդութային ձևերն ու սովորույթները հայոց մեջ

Հարցեր և առաջադրանքներ:

Հայոց ավանդական և ժամանակակից ամուսնության ու հարսանեկան արարողակարգի ուսումնասիրության աղբյուրներն ու գրականությունը, ուսումնասիրության ներկա վիճակը (տե՛ս գրականության ցանկը): Թեմայի ուսումնասիրության արդիականությունը, նպատակը, խնդիրները:

Այս հիմնախնդրին մասնագիտորեն անդրադարձել են՝ Ռ. Նահապետյան, Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան ավանդական սովորույթներն ու ծեսերը, Եր., 2007, նույնի՝ Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված է որպես ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009, Գ. Շագոյան, Յոթ օր, յոթ գիշեր, Եր., 2011 և այլն:

Ինչպիսիք էին ամուսնության հնավանդ ձևերի՝ բազմայրության, բազմակնության, տեգրամուսնության, քենամուսնության, առևանգմամբ և գնմամբ ամուսնության վերապրուկային դրսևորումները ըստ բանահյուսական, մատենագրական, ազգագրական և այլ կարգի սկզբնաղբյուրների հավաստումների:

Ամուսնացողների սոցիալական և ֆիզիկական տարիքը. «Օրորոցախազով» ամուսնություն: Վաղ տարիքի ամուսնության սոցիալ-տնտեսական, պատմաքաղաքական, սոցիալ-հոգեբանական դրդապատճառները: Հարսնացուի ընտրության

առաջնորդվող նկատառումները անցյալում և ներկայում:

Ամուսնության թույլատրելիության ազգակցական կապերի հաշվառման կարգը՝ հայրական և մորական գծով: Պատմագրական տեղեկություններ: Հասի և չհասի սովորույթի կենսունակության խնդիրը: Աղջիկ առնանգելու դրդապատճառները, դրանց վերաբերյալ վերապրուկների դրսևորումների հետքերը հարսանեկան ծիսաշարում:

Ընտրության սովորույթը անցյալում և մեր օրերում: Ամուսնություն հասկացությունը հասարակական հաստատություն է, որը օրինականացնում է տղամարդու և կնոջ միությունը՝ ընտանիք կազմելու և սերունդ աճեցնելու համար:

Մատենագրական սակավ տեղեկություններից անգամ երևում է, որ ամուսնությունը քրիստոնեության մուտքից առաջ ավելի ազատ ու անկաշկանդ փոխհարաբերությունների վրա էր հիմնված: Սիրային ազատ կապերը քրիստոնյա գաղափարախոսների կողմից մերժվելը և նույնիսկ անառակություն դիտվելը ցույց է տալիս, որ զույգն ինքը ամուսնությունից առաջ տնօրինելիս է եղել իր ճակատագիրը: Երիտասարդությունը բավականին օժտված է եղել ընտրության ազատությամբ: Դրա հաստատուն վկայությունն է ժողովրդական բանահյուսությունը: Հին հայերը ևս սահմանել են **նշանդրեք, հարսանիք** և դրանց հետ կապված բազմաթիվ ծեսեր, որոնց միջոցով էլ օրինականացվել են ամուսնությունները: Պատմագրական աղբյուրներից ակնառու է, որ հեթանոս հայերի մեջ գոյություն ուներ մերձամուսնություն: Քրիստոնեության ընդունումից հետո ամուսնությունն արգելվել է մինչև չորրորդ արյունակցական աստիճանը ներառյալ, արգելվում էր նաև այն աղջկա պսակը, որն իր ընտրած երիտասարդի հետ մինչև ամուսնության ծեսեր կատարելը սեռական կապի մեջ է եղել: Առաքելական կանոնը պահանջում է չամուսնանալ մոտ ազ-

գականի, քրոջ, դստեր, հորաքրոջ, մորաքրոջ, հոր կնոջ, որդու կնոջ, մորեղբոր հետ: Ներսես Մեծը արյունակցական մերձավոր ամուսնությունը որակում էր «խառնակցություն», «անարժան և չար վարք», «պիղծ ամուսնություն» (տե՛ս **Ադոյան Ա.,** Հայկական ամուսնաընտանեկան հարաբերությունները միջնադարյան օրենքներում // ՊԲՀ, հ. 3, 1965, էջ 49-66): Սսի 1246 թ. ժողովում ընդունված յոթը պորտը մինչև օրս համարվում է վերջնական արգելական կետը և թույլատրական աստիճանը ազգակցական ամուսնությունների պարագայում (տե՛ս **Մելիք-Թանգյան Ն.,** Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Բ, Ս. Էջմիածին, 2011, էջ 71, 394-395): Սովորութային իրավունքով միևնույն կնոջ կաթով սնված, բայց տարբեր հոր զավակները չէին կարող ամուսնանալ միմյանց հետ, քանի որ համարվել են «կաթնաղբեր», «կաթնաքույր»: Եկեղեցին բացարձակապես արգելում է որևէ ամուսնություն քավորի և սանամոր միջև, քանզի կնքահայրը սանիկի հոգևոր ծնողն է: Եկեղեցին մկրտությամբ սանիկին հոգևոր ազգակից է դարձնում քավորին և այդ ազգակցությունը հավասար և նույնիսկ նախապատիվ է համարում արյունակցականից (տե՛ս **Ղլտճյան Ա.,** Ամուսնություն …, էջ 34):

Ամուսնական սովորույթը ըստ պատմագրական տվյալների: Ամուսնության ձևերը հայ պատմագրության մեջ արտացոլված են կցկտուր, թեև շատ կարևոր է այդ տվյալների համադրությունը միջնադարյան պատկերը ներկայացնելու առումով: Պատմագիրներից Փ. Բուզանդը Արշակավանի կառուցման մասին խոսելիս նշել է, որ Արշակ թագավորը մի շարք հանցագործերի թվում անմեղ է ճանաչել նաև նրանց, ովքեր առևանգել են այլոց կանանց[1]: Հայոց առաջին ազգային եկեղե-

[1] **Փ. Բուզանդ,** նշվ. աշխ., էջ 106:

ցական՝ Շահապիվանի ժողովի (443 թ.) կանոններից մեկում ուղղակի ասված է, որ առևանգման սովորության մնացուկը պահպանված է եղել թե՛ շինականների և թե՛ ազատների շրջաններում, և որ գլխավորն է՝ առևանգումը կատարվելիս է եղել հրոսների՝ «սուտ փեսայի» ընկերների խմբի օգնությամբ[1], որը հնագույն երևույթներից մեկն էր: Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված է առևանգման այն ձևը, երբ օգտագործվել է մարդաորս օղապարանը[2]:

Ամուսնության օրինական ձևը Հին Հայաստանում եղել է և այժմ էլ համարվում է ընտրված աղջկա ծնողներին պատգամախոսությամբ դիմելը[3]: Ընտրության այս ձևի կիրառմամբ կանխվում էին մերձավորների ամուսնության դեպքերը, ամուսնացողների տարիքների անհամապատասխանությունը[4] և այլն: Այս ձևը ժառանգած եկեղեցին իր կանոններին համապատասխան պահպանում էր մենամուսնության կարգը[5] և պայքարում էր երկկնության[6] ու կնաթողությամբ այլոց կանանց հետ ամուսնանալու սովորությունների դեմ[7]:

Պատմական հանգամանքների բերումով հայերը մշտապես շրջապատված են եղել այնպիսի էթնիկ տարրերով, որոնց կյանքում գլխավոր տեղ է գրավել բազմակնությունը: Բայց պատմությունը վկայում է, որ հայերը միշտ միակնության ջատագով են եղել: Քրիստոնեական արժեհամակարգով բազմակնությունը չի կարող համարվել ամուսնական նախընտրե-

---

[1] Կանոնագիրք հայոց, Ա., աշխատասիրությունը Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 439-440:
[2] **Մ. Խորենացի,** գիրք Բ, գլ. Ծ:
[3] Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն հայոց, ՍՊբ, 1891, էջ 8:
[4] **Զաքարիա Ագուլեցի**, էջ 78:
[5] **Եզնիկ Կողբացի,** էջ 190:
[6] **Առաքել Դավրիժեցի**, էջ 223, 289, 290:
[7] **Փ. Բուզանդ**, էջ 229:

լի ձև: Բարոյական արժեքների պահպանման տեսանկյունից բազմակնությունը չի բավարարում կանանց ներքին պահանջները:

Միջնադարում ամուսնության դասակարգային բնույթը պահպանվում էր ամենայն խստությամբ. ավատական խավերի և աշխատավորական դասերի միջև ամուսնությունն իսպառ արգելվում էր: Պատմագրության մեջ առավելապես խոսվել է արքունիքներում ու նախարարություններում տեղի ունեցող ամուսնությունների վերաբերյալ: Միևնույն ժամանակ ակնարկներ կան քաղաքական նկատառումներով ամուսնության սովորությունների մասին, որ կիրառվում էին Հայաստանի հետ ունեցած ռազմաքաղաքական տարբեր հարաբերությունների ժամանակ: Այստեղից էլ՝ հայերի կամա կամ ակամա խնամիության հաստատումը պարսիկների[1], արաբների[2], վրացիների[3] հետ և այլն:

Միջնադարում, եկեղեցական խստության պայմաններում, ամուսնալուծությունը դատապարտվել է, այդուհանդերձ այն տեղի է ունեցել զանազան պատրվակներով. Փ. Բուզանդի հավաստմամբ՝ Արշակ արքայի օրոք բազմաթիվ տղամարդիկ ու կանայք թողնում էին իրենց կանանց ու ամուսիններին և ամուսնանում այլոց հետ[4]:

Դատաստանագրքերը անօրինական են համարել ամուսնությունը, եթե կողմերից մեկը հոգեկան հիվանդություն ուներ, եթե բորոտ էր, եթե կողմերը երկուստեք ատելությամբ էին լցված, եթե ամուսինը կրոնափոխության, նաև՝ անբարոյականության ու կախարդության էր դիմում, եթե անուժ էր:

---

[1] **Փ. Բուզանդ,** էջ 132-133:
[2] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 165:
[3] **Հովհ. Դարդել,** էջ 14, 27:
[4] **Փ. Բուզանդ,** էջ 107:

Պատմագիրները ամենայն խստությամբ ձաղկել են հասարակության մեջ ստախոսությունն ու բամբասասիրությունը, չար նախանձը, ատելության ախտը, ագահությունը, գողությունը, շվայտությունը, հարբեցողությունը, որովայնամոլությունը, անբանությունը, կախարդությունը, նենգությունը, խորամանկությունը, խարդախությունը, կեղծավորությունը, գոռոզամտությունը, բանսարկությունը, քինախնդրությունը, հայհոյասիրությունը, սնափառությունը, վրեժխնդրությունը, կաշառակերությունը և այլն[1]:

Սերունդ ունենալու և դաստիարակելու հարցն ամենակարևորը համարելով՝ ամլությունը տխուր երևույթ է համարվել: Ուստի Հովհ. Մանդակունին հորդորում է լինել առողջ և հավատուրաց չդառնալ[2]: Պատմագիրների երկերում բավական հիշատակություններ կան մանկաբարձի, դայակի, կնունքի, մանկան օրորոցի ձևերի և այլնի մասին[3]:

Միանգամայն անընդունելի է այն տեսակետը, թե իբր փոխադարձ սիրո հիման վրա ամուսնությունը բացառված էր:

Ինչպես պատմագրական, այնպես էլ մամուլի տվյալներով՝ առևանգմամբ ամուսնությունները տեղի էին ունենում հետևյալ պարագաներում. 1. երբ կողմերը միմյանց հետ կապված էին փոխադարձ սիրով, 2. երբ կողմերն իրար անծանոթ էին, 3. երբ երիտասարդը միակողմանի սեր էր ցուցաբերում, 4. երբ աղջկա ծնողները համաձայն չէին տղայի սոցիալական

---

[1] Տե՛ս **Եզնիկ Կողբացի**, էջ 278, **Փ. Բուզանդ**, էջ 8, 14, 33, 34, 38, 47, 76, 83, 84, 155, 171, 174, 176, 191, 240, **Եղիշե,** էջ 44, **Ղ. Փարպեցի,** էջ 19, 22, 167, 190, 191, **Հովհ. Մանդակունի,** էջ 18, 35, 42-43, 45, 74, 82, 85, 126, 130, 142, 160, 189, 196, 216-217, **Հովհ. Մամիկոնյան,** էջ 255, 280, 125-126, **Հ. Կարնեցի,** էջ 54-59, **Հ. Երզնկացի,** 162, **Զաքարիա Ագուլեցի**, էջ 47 և այլն:

[2] **Հովհ. Մանդակունի,** էջ 40, 170, 204:

[3] Տե՛ս **Փ. Բուզանդ**, էջ 10, 11, 12, 80-81, 155, **Ղ. Փարպեցի,** 2, 28,, 31, 56, 91 107, 108, 193, **Ա. Լաստիվերտցի,** 94, **Հովհ. Մամիկոնյան,** 62, 72 և այլն:

դրությանը, տեսքին կամ բարոյական կերպարին և այլ պատճառներով, 5. երբ աղջկա հայրը համաձայն չէր, բայց մայրը համաձայն լինելով մեծապես նպաստում էր առևանգմանը, 6. երբ տղայի ծնողներն էին մերժում, 7. երբ տղան չէր կարող վճարել աղջկա գլխագինը և այլն:

Միջնադարյան իրավական աղբյուրներում կնոջ առևանգման արդյունքում ծնված երեխաներին անօրեն զավակներ են համարել, քանի որ այդ զավակները լույս աշխարհ են եկել առանց օրինավոր պսակադրության (տե՛ս **Սմբատ Սպարապետ (Գունդստաբլ),** Դատաստանագիրք, Երևան, 2008, էջ 96):

Միջնադարյան աղբյուրներում հանդիպում ենք նաև **վարձանք** կամ **գլխագին** արտահայտություններին: Դրանց փոխարեն գործածվել են նաև մեր երկրին հերթով տիրացած օտար, անասնապահ նվաճողների գործածած հոմանիշ անվանումներ՝ **խալան, հալզատ, բաշլրդ, հադեմասի**: XIX դարում և XX դարի սկզբներին, սովորության համաձայն, փեսացուն և նրա ազգականները տարբեր առիթներով հարսնացուին և նրա ընտանիքին դրամական ու նյութական նվերներ էին տալիս, որոնք հայտնի էին **արնագին, կաթնագին, ծծագին, հղե կտրել, ճնապահ** (ճանապարհի գին), **սարմիա,** իսկ միջին դարերում՝ **երեսացտես** անվանումներով:

Ինչպես միջնադարում, հետագայում էլ աղջիկները ծնողների տնից օժիտ էին տանում փեսացուների տները: Մեր համոզմամբ՝ գլխագնով ամուսնության հետքերը հայոց մեջ օտար, մահմեդական նվաճողների սովորութային ազդեցության հետևանք էին, իսկ օժիտը նորաստեղծ, նոր կազմավորվող ընտանիքի համար՝ նյութական ապավեն (տե՛ս հեղինակի՝ «Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան ավանդական սովորություններն ու ծեսերը», Երևան, 2007):

Ավանդույթի համաձայն՝ ամուսնացողների տարիքային և արտաքին անհամապատասխանությունը հաշվի չի առնվել, կարևորը կողմերի ծնողների վարքի և հեղինակության դրսևորումներն էին, ժառանգականությունը, իսկ ամենից գլխավորը՝ «օջախն» էր, «ազգուտակը», աղջկա մոր վարքագիծը, նրա բարոյական կերպարը. «Եթե մայրը ծառ է բարձրանում, աղջիկները ճյուղերի վրա վազ կտան»: Ըստ Մ. Գոշի «Դատաստանագրքի»՝ արգելվում էին «տղայոց պսակ դնելը» մինչև նրանց չափահաս դառնալը կամ եթե կողմերից մեկը հոգեկան հիվանդ էր:

Ամուսնության հարցում պարտադիր է համարվել ծնողների համաձայնությունը: Ներկայումս կարևորվում են երիտասարդների զգացմունքները, շատ հաճախ ծնողները հաշվի են առնում երիտասարդների ազատ ընտրելու իրավունքը:

Գյուղական բնակավայրերում ներկայումս էլ շատ դեպքերում ամուսնությունը իրագործվում է ծնողների համաձայնությամբ, անգամ նրանց ընտրությամբ: Այստեղ երիտասարդները հարգանքով են վերաբերվում ավագ սերնդի կարծիքին, քանզի կինը ապրելու էր նույն հարկի տակ, ծնողների հետ: Փաստորեն, այսօր դեռ գործում են հնից եկող ավանդույթի ուժը և սոցիալ-տնտեսական վիճակի առանձնահատկությունները: Այժմ տեղ է գտել նաև վիրտուալ շփումների հանգամանքը:

Ամուսնության տարիքը: Ավանդական հայ ընտանիքում ամուսնական տարիք էր համարվում՝ աղջկա համար 10-12 տարեկանը, տղայի համար՝ 14-15-ը, իսկ նշանադրությունը շատ հաճախ կատարվում էր ավելի վաղ հասակում[1], նույնիսկ

[1] Պարսկական բռնակալության տարիներին Արևելյան Հայաստանում, երբ խաներն առևանգում էին հայ աղջիկներին, ծնողները շտապում էին իրենց

դեռ չծնված: Հայոց ավանդական ընտանիքում բավական շեղումներ են եղել եկեղեցական կանոններից: Աղջիկներին ավելի վաղ էին ամուսնացնում, օրինակ, Գանձակում՝ 8 տարեկանում: Գետաշենում երեխային կանգնեցրել են թախտի վրա, և նա չի էլ հասկացել, թե ինչ է կատարվում: Շահուլեցի Եղիսաբեթը, ով պսակվելիս տասը տարեկան է եղել, հարսանիքի օրը փախել և թաքնվել է թոնրի մեջ (տե՛ս **Ե. Լալայան,** Բորչալուի գավառ, Ամուսնության և հարսանիքի սովորություններ, էջ 212): Ըստ Ստ. Լիսիցյանի՝ Զանգեզուրում աղջիկներին ամուսնացնում էին 10-12 տարեկանում, իսկ տղաներին՝ 14-15 (տե՛ս Զանգեզուրի հայերը, էջ 185), Մշո Հարք գավառում աղջիկներին՝ 12, տղաներին՝ 15 տարեկանում (**Բենսե,** էջ 117-118): Հ. Թումանյանի «Մարո» պոեմում Մարոն ընդամենը 9 տարեկան աղջնակ էր, երբ տղայի մերձավորները նրա հայրական տուն են այցելում կնության առնելու նպատակով՝ պահպանելով ավանդական երկխոսության հետևյալ բանաձևը. «Տաշտներդ լի հաց լինի / Դուռներդ միշտ բաց լինի, / Հաց չենք ուզում ձե-

---

դուստրերին շուտ պսակել, քանի որ ամուսնացած կնոջը չէին հափշտակում, իրենց հարեմի համար ընտրում էին միայն կույսերի: Եվ պատահում էր, որ այն տղան, ում հետ ցանկանում էին ամուսնացնել իրենց դստերը, գտնվում էր պանդխտության մեջ ու պսակի խորհրդին ներկա լինել չէր կարող, այդ ժամանակ իր փոխարեն ուղարկում էր իր գդակը, որը գցում էին մի ձողի վրա և հարսի հետ տանում էին եկեղեցի (տե՛ս **Ռաֆֆի,** Հայ կինը // «Մշակ», հ. 35, էջ 2): Ռաֆֆին մեկ այլ առիթով գրել է. «Աղջիկ երեխաները դեռևս դուրս չեկած իրենց մանկական հասակից, տրվում էին ամուսնության: Եվ, բնականաբար, կարելի է հասկանալ, որ այդպիսի վաղ տարիքում նրանք չէին կարող սիրել իրենց ապագա ամուսնուն. «Աղջիկը տեսնում է իր փեսային այն օրը, երբ նրան տանում էին եկեղեցի պսակելու: Այնտեղ քահանան ձևական հարցնում էր աղջկա հոժարությունը, արդյոք սիրում էր իր փեսային: Աղջիկը ոչինչ չի պատասխանում և միայն գլխով դրական շարժում է անում: Բայց եթե նա չգիտեր ինչպես վարվել, մի կին ետևից նրա գլուխը ցած էր խոնարհեցնում՝ իբրև համաձայնության նշան» (**Ռաֆֆի,** Հայ կին // «Մշակ», հ. 38, էջ 1):

զանից / Հող տվեք մեզ ձեր տանից»: 17-18 տարին լրացած աղջիկը համարվել է «տանը մնացած», «քացախած», «անբախտ»: Ե. Լալայանը գտնում է, որ վաղ տարիքում ամուսնացնելու պատճառներից մեկը նաև այն էր, որ աղքատ ընտանիքները հնարավորինս շուտ «ազատվում էին մի ուտող բերանից», իսկ հարուստ գերդաստանները, աշխատող ձեռքերի կարիք զգալով, շուտ էին ամուսնացնում իրենց տղաներին:

Մանկական հասակի նշանադրությունը հայտնի էր որպես «օրորոցախազով ամուսնություն»:

Ըստ ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ ամուսնության տարիք է համարվում 18 տարեկանը, աղջկա համար լավագույն տարիք է համարվում 18-22-ը, որոշ հանգամանքներում՝ 23-25-ը, տղաների համար՝ 23-25-ը, որոշ հանգամանքներում՝ 26-30-ը՝ քաղաքային բնակավայրերում: Ցածր կամ բարձր տարիքի ամուսնությունը մի դեպքում պայմանավորված է ավանդականությամբ, մյուս դեպքում՝ սովորելու, մասնագիտություն ստանալու և սեփական կենսակերպը ապահովելու միտումով:

2.2. Նախահարսանեկան արարողակարգ

Հարցեր և առաջադրանքներ:

Միմյանց ծանոթանալու առիթները, միմյանց դուր գալու միջոցները: Ընտրության և ամուսնության հարցում նահապետի կնոջ դերը:

Աղջիկտես. խնամախոսություն. խոսքկապ: *Խոսքկապի հոմանիշները.* ***խոսք առնել, անուն անել, արաղ խմել, բեհ դնել, ծրռախազեք*** *և այլն: Բանակցողները: Խնամախոսների տեղական անվանումները (****պատգամ, ուզընկան, էլչի, խնամախոս, խնդրարկու*** *և այլն): Միջնորդների խաղացած դերը, ովքեր էին և ինչպես էին անվանվում: Խնամախոսության գնա-*

լու ժամանակը, օրը, ժամը և տեղական երկխոսությունները: Փեսատես. խնամախոսությունից հետո փեսայի ընտանիքին աղջկա բարեկամների այցելությունները:

Նշանդրեք. *անվանումները, ձևերը, ժամանակը, մասնակիցները, նշանը, խնամիների հյուրասիրությունը, նշանօրհնեքն ու «նշան» տալը, հարսի նվերները: Ժողովրդական մեկնաբանությունը նշանդրեքի վերաբերյալ: Տոնական նշանադրություն.* ***Ծաղկազարդի, Վարդավառի նշանադրություն****: Նշանադրության մասնակիցները:*

Ընծայաբերություն և փոխանակում: *Նշանի օրհնության արարողակարգը: Հաց կտրելու արարողակարգը: Հացկերույթը, առաջարկվող կենացները: Հարսնտես և փեսատես, «հղե կտրել» կամ «օր կապել», հարսանիքի հետ կապված նյութական խնդիրները և ժամկետները, դրանց արարողակարգերը հայոց մեջ:*

Մինչհարսանեկան ծիսաշար. *գլխագնի և օժիտի մեկնաբանությունը մասնագիտական գրականության մեջ: Գլխագին, տեղական անվանումները (****բաշլրդ****,* ***հադեմասի****,* ***խալան****,* ***դալան****,* ***խալանկտուր****):*

Նախահարսանեկան արարողակարգի կարևոր բաղադրիչներից էին **խոսքկապն** ու **նշանդրեքը**: Անցյալում աղջկա ծնողների համաձայնությունը ստանալուց հետո աղջկան հանձնում էին նշան՝ մատանի կամ մի այնպիսի զարդ, իր, որը կարող էր վկայել, որ նա արդեն նշանված է: Ամուսնությունը ամրագրվել է «խոսք առնելու», նշանդրեքի, հարսանիքի և դրանց առնչվող բազմաթիվ ծիսական արարողակարգերի միջոցով: Դրանք էին՝ **խնամախոսությունը, խոսքկապը, նշանդրեքը, հարսնտեսները, շորձևեքը** և այլն: Նշանդրեքից հետո հարսնացուին տնից դուրս հանելու կամ տոներին մասնակից դարձնելու իրավունքը վերապահվում էր միայն տղայի կող-

մին: Նշանդրեքից հետո մինչև հարսանիքը ընկած ժամանակահատվածը կարող էր տևել մի քանի ամսից մինչև երկու և ավելի տարի, որի պատճառներից կարող էին լինել՝ ամուսնացողների փոքր տարիքը, օժիտի պատրաստման ընթացքը, փեսայի օտարության մեջ գտնվելը և այլն:

Առանց խոսք առնելու ամուսնությունը բացառիկ երևույթ էր, երբ երիտասարդները ծնողների անհամաձայնությանը դեմ գնալով՝ փոխադարձ համաձայնությամբ դիմում են աղջիկ փախցնելու հնամենի սովորությանը:

Նշանդրեքի արարողությունը ոչ բոլոր սոցիալական խմբերին էր մատչելի: Նշանադրեք կատարելը աղջկա կողմի պարտականությունն էր, և հաճախ սոցիալապես անապահով ընտանիքները, ավելորդ ծախսերից խուսափելով, այն շրջանցում էին, կամ խոսքկապն ու նշանդրեքը միավորում են մի արարողության մեջ: Լինում էին դեպքեր, երբ սոցիալապես ապահով ընտանիքների կողմից կատարվող նշանդրեքները իրենց ճոխությամբ չէին զիջում բուն հարսանիքին*:

---

* Նշանադրության որոշված օրը փեսացուի տնից աղջկա տուն էին ուղարկում մի ոչխար՝ ճակատը սպիտակ և կարմիր ներկած, պոզերից և վզից խնձորներ և ընկույզի շարան ձգած: Այս ամենը աղջկա տուն տանողը նվեր էր ստանում և հյուրասիրվում: Տղայի տանը հավաքվում էին՝ նախ քահանան, քավորը և տանուտերը: Նրանք վերցնում էին մի խնձոր, մեջը դնում արծաթյա կամ ոսկյա մի մատանի ու տան կանանց կողմից մի քանի դրամներ էին խրում մեջը: Քահանան վերցնում էր խնձորը, շնորհավորում և մի մետաղյա դրամ էլ ինքն էր խրում մեջը: Այսպես խնձորը փոխանցում էին բոլոր հյուրերին, որպեսզի նրանք ևս խնձորի մեջ մետաղադրամ դնեն: Հետո խնձորը դնում էին մետաքսե գլխաշոր՝ քոռի մեջ, որին **չարղաթ** էին անվանում, երկու զույգ կանաչ-կարմիր **քոշերի**՝ առանց ճտքի և երեսը բաց ոտնամանի հետ, որոնցից մի զույգը հարսնացուի համար էր, իսկ մյուսը՝ նրա մոր: Հարսնացուն մի կնոջ առաջնորդությամբ, երեսը մինչև գոտին չարղաթով ծածկած դուրս էր գալիս և կանգնում քահանայի մոտ: Մի սկուտեղի մեջ քահանային էին մոտեցնում մատանին ու մի քանի մոմ և մրգեղեն: Քահանան օրհնում էր այս ամենը, հետո վերցնում էր մատանին ու տալիս փեսացուին: Նա էլ անցկացնում էր հարսնացուի մատնեմատին:

Նախահարսանեկան ծիսաշարն ուներ երկու նպատակ՝ 1. ամուսնացող կողմերի միջև նախնական բանակցություններ վարելը և 2. համաձայնությունը հաստատելը: Առաջինին էին ուղղված աղջիկտեսն ու խնամախոսությունը, իսկ երկրորդին՝ խոսքկապը, նշանադրությունն ու հարսնտեսը և նվերների հանրային փոխանակումը[1]: Նախահարսանեկան ծեսերը հարսանեկան ծիսաշարի առավել արխայիկ մասն է:

Նախահարսանեկան ծիսաշարի կարևոր մասն են երբևէ գոյություն ունեցած գլխագնի և օժիտի հարցերը: Գիտնականների մի զգալի մասը սխալ է համարում այն, որ գլխագնի երևույթը առաջացել է օժիտից, քանզի անցյալում գլխագին տալիս էին նույնիսկ օժիտ չունեցող աղջիկներին: Բացի այդ, գլխագնի անհետացումը չի հանգեցրել օժիտի վերացմանը: Գիտության մեջ գերակայում է գլխագնի և օժիտի՝ միմյանցից անկախ առաջանալու տեսակետը[2]:

2.3. Հարսանիք: Հարսանեկան արարողության ավանդական ընթացակարգը

Հարցեր և առաջադրանքներ (նյութեր գրառելու նպատակով):

Հարսանեկան զգեստ, շորձևեքի արարողակարգը: Ժամանակը հարսանիքում: Քավորի ընտրությունը և իրավերքը: Հարսնևորների ընտրությունը:

Հրավերք, արարողակարգերը ըստ առանձին պատմաազգագրական շրջանների:

Հարսանեկան նախապատրաստությունը. «ալրմաղեքի»,

---

[1] Մանրամասն տե՛ս **Գայանե Շագոյան,** «Յոթ օր յոթ գիշեր» հայոց հարսանիքի համայնապատկերը, Երևան, 2011, էջ 135-145:

[2] Նույն տեղում, էջ 137:

«գինեթափեքի», «եզմորթեքի», հարսանքատան հարդարման ու «թախտ կապելու» արարողակարգերը: Ընջեցյալների օրինությունը (գերեզմանոցում կամ տանը): Հարս պտտեցնելն (բարեկամների, հարևանների, քավորի տանը) ու հարսին բաղնիք տանելը:

Հարս ու փեսայի «թագադրությունը» (գովերգվում են փեսայի և հարսի զգեստները), մակարների և ծաղկոցավորների ընտրությունը, «հալավօրհնեք» և «ազպանստում» (փեսայի ամուրի ընկերների խնջույքը, որի ժամանակ աճուրդով որոշվում է ազապ բաշին), «ազպալվածք» և «բաղնիքի ծես» (քավորի մասնակցությամբ փեսային և ազապներին լողացնելու արարողությունները), «փեսաթրաշ», «թագվոր կարգել» և «ծառ կապել», «փեսի ծառ», «ուռք», «նուռձ» (կենաց ծառ), «ծաղկոցներ», «հինադրեք» (չամուսնացած աղջիկների և ամուրի տղաների մատները հինայելու արարողությունը), «հարս հագցնել» և դրանց ուղեկցող այլ արարողակարգեր:

Քավորը հայոց ամուսնահարսանեկան արարողակարգում:

Փեսայի շքախմբի անդամները կոչվում էին ***մակար, թագավորցի, փեսամանուկ, փեսաղբեր, փեսավեր, փեսածու, մանկտիք, մոմկտիք****, ինչպես նաև օտար անուններով՝* ***ազաբ(պ) չարի****, իսկ հարսնացուի ընկերուհիները՝* ***քուրիկ ծաղկոց, ծաղկվոր****:*

Բուն հարսանիք*:*

Հարսնառ (երթն ու վերադարձը), շարժման սխեման և խնամիների «ճակատամարտերի» ծեսեր: Աղվեսի այցելությունները (հաճախ նաև նշանդրեքի թափորի տեղաշարժերի մասին նախապես լուր հասցնելը): Հարս հագցնելը (գլուխը կապելը), աղջկա սանրվածքը կնոջ սանրվածքի վերածելու

արարողությունը: Հարսանեկան խնջույքը հարսի տանը, ուտեստը, կենացների հերթականությունը: Փեսայի բերանբացեքը (փեսայի աներոջ կողմից տրվող նվերը): Հարսի հրաժեշտը (ծիսականացված հրաժեշտը ծնողներին, բարեկամներին, թոնրին), կեղծ կռիվները, դուռ բռնելը (հարսի եղբոր հարուցած խոչընդոտները, սակարկվող գումարը կամ նվերը): Հարսնառի՝ աղջկա հոր տնից վերադարձը (սխեմա տալ), եկեղեցական պսակը, պսակվողներին «կապվելուց» զերծ պահելու գործողությունները: ԶԱԳՍ [ՔԿԱԳ] (ամուսնության պաշտոնական գրանցումը): Սրբազան կենտրոնների այցելությունը: ***Խնամապաչը*** *(հարսնաքրոջը կամ բարեկամուհուն հարսնեղբոր համբուրման փորձը), ճանապարհ փակելը, մենամարտերը: Սեղան դուրս հանելը (հարևան-բարեկամների կողմից): Տղայի տան շեմի դիմավորման ծեսեր,* ***կռիվ*** *բռնելու ծեսը, զոհաբերություն (մատաղ) շեմին, լավաշով դիմավորելու, թրի տակով անցնելու, ափսե կոտրելու և այլ ծեսերը, մեկնաբանությունները: Օջախին բարևելու,* ***հարս նստեցնելու*** *արարողակարգերը:*

Խնջույքը փեսայի տանը. նվիրատվություն, «կանչ», «երեստեսնուկ», տարոսը փոխանցելու ծեսերը, օժիտ բացելը, հարսի պարը, մոմերով կամ վերջին պարը, «նարոտ», «հավթռոնք», «փեսադատ»: Հարսանիքի հետ կապված ծախսերը: Խաշի օրը:

Առագաստի արարողակարգ: «Թագվերաց» առագաստ, «Կարմիր խնձոր», կուսության ինստիտուտի «կրոնական» և «ազգային» ծիսականացումը:

Հարսանեկան շարք: Հարսանիքը ամուսնական ակտի սրբագործումն է, որովհետև այն հանրագումարի է բերում այն ամենը, ինչ վերաբերում է պսակվող զույգի նոր սկսվող կյանքի օրինականացմանը:

Բուն ավանդական հարսանեկան արարողություններից կարևորվել են՝ հարսին և փեսային հագցնելու, փեսաթրաշի արարողությունները, մակարների ընտրությունը, հարսնառի երթը հարսի տուն, խնջույքը հարսի տանը, դուռը բռնելը, երթը փեսայի տուն, փեսայի բարեկամ-հարևանների՝ առատ ուտեստներով, խմիչքներով սեղան դուրս հանելու և փեսայի տան բակում հարսին դիմավորելու, փեսայի ծնողների կոխ բռնելու, շեմին զույգ ափսե կամ կավե աման կոտրելու, հարսին նստեցնելու, նրա գիրկը տղա երեխա դնելու ծեսերը, խնջույքը փեսայի տանը, կենացներն ու նվիրատվությունները, հարսի պարը, առագաստը և այլն:

Անցյալում հարսանիքները գրեթե բացառապես տեղի էին ունենում աշնան և ձմռան ամիսներին, երբ դաշտային աշխատանքներն ավարտված և տարեկան պաշարները հավաքված էին լինում: Նախքան հարսանիքն սկսելը համայնքին հայտնի էր դառնում դրա ժամկետը: Հարսանեկան նախապատրաստությունները սկսվում էին բարեբեր համարվող հինգշաբթի օրը: Ըստ հնագույն ավանդների՝ այդ հանդեսները հարատևելու էին յոթ օր՝ չորեքշաբթից մինչև երեքշաբթի: Միայն բուն հարսանիքը կատարվում էր երեք օրվա ընթացքում՝ ուրբաթ, շաբաթ, կրակի: Վ. Բդոյանի կարծիքով՝ յոթ թիվն ուներ կախարդական և դրական նշանակություն, որի էությունն ըստ երևույթին աղերսվում էր հայ հեթանոսական յոթ աստվածությունների անվան հետ:

Հարսանիքի հրավիրելու հին ձևերից էր փեսայի տան կտրից նվագախմբով հրավիրելու եղանակը, կամ հարսնետան ներկայացուցչի ուղեկցությամբ նվագախումբը շրջում էր տնից-տուն, կամ էլ բանավոր խոսքով տանտիրոջը առաջարկում էին մի բաժակ օղի կամ մրգաչիր: Հրավիրատոմսով հրավերքը ուշ երևույթ է:

Հարսանիքի առաջին օրը նշանավորվում էր կանանց հավաքով: Պահպանվել էին այդ օրը սննդամթերքներով հարսնետուն ներկայանալու հնագույն տոհմային սովորույթները: Այդ օրը երեցկնոջ գլխավորությամբ կանայք նվագի ուղեկցությամբ մաղում էին պտղաբերությունը մարմնավորող հարսանեկան գաթայի ալյուրը: Խմորի տաշտի վրա մոմեր էին վառում, որ հարսը լույսի նման պայծառանար, ալյուր մաղողները գլուխներին և տաշտի երեսին կարմիր քող էին զցում, որ հարսը ամոթխած, համով ու հնազանդ լիներ. ալյուրը մաղում էին լուռ, որ հարսը չխոսկան լիներ:

Թեև ժամանակակից հարսանիքը զգալիորեն փոփոխվել է, այլևս յոթ օր հարսանիք չեն անում, սակայն պահպանվել են իրենց իմաստը չկորցրած որոշակի ավանդական տարրեր, որոնց կատարումը հարսանիքի ժամանակ պարտադիր է (դուռ բռնելը, շեմի ծեսերը և այլն): Այդուհանդերձ, արդի հարսանեկան արարողությունները կատարվում են ազգային սովորույթների մասնակի պահպանմամբ և եվրոպական սովորույթների բազմաթիվ նորամուծություններով: Ըստ սոցիալական կարգավիճակի՝ ամուսնությունը նշում են նաև խնջույքի տեսքով կամ ամուսնական զույգը գնում է հարսանեկան ճանապարհորդության: Այսօրվա հարսանեկան արարողություններում առանձնահատուկ նշանակություն ունի եկեղեցական պսակադրությունը, որը ներկայումս վերականգնել է իր կորցրած իրավունքները: Ըստ որում՝ եկեղեցական պսակադրությունը, ինչպես նաև մկրտությունը, կատարվում է ոչ թե կրոնական դրդապատճառներով, այլ որպես հարգանքի տուրք ազգային սովորույթներին:

Հայկական հարսանեկան ծիսակարգից վերացել են այնպիսի ծեսեր, ինչպիսիք են՝ **հարսնատեսը, ազպանստումը,**

փեսային սափրելն ու հագցնելը, փեսածառի զարդարումը, տաշտադրոնքի, գինեթափեքի, եզմորթեքի և այլ արարողություններ: Եզակի դեպքերում, հիմնականում գյուղական բնակավայրերում, կարելի է հանդիպել եզ մորթելու, թոնրի գաթա թխելու արարողությանը:

Ինչպես անցյալում, ժամանակակից հարսանիքներում ևս կարևորվում է քավորի և քավորկնոջ, հարսնաքրոջ և ազապբաշիի (մակար) դերակատարումը բուն հարսանեկան արարողակարգում: Հատկապես կարևորվում է քավորի դերը թե՛ հարսանեկան հանդեսի ընթացքում, թե՛ նորաստեղծ ընտանիքի հետագա կյանքում:

Մեծ մասամբ հարսանիքի քավորը հետագայում դառնում է զույգի երեխաների կնքահայրը: Ի տարբերություն սերնդեսերունդ փոխանցված պապենական քավորի՝ այսօր շատ դեպքերում քավորի պարտականությունը իր վրա է վերցնում հարազատներից կամ ընկերներից մեկը: Ժամանակակից հայ հասարակությունում քավորի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով. 1) քավորն ընկալվում է որպես ունևոր և ազդեցիկ հովանավորող ձեռք բերելու հնարավորություն: 2) Կնքահայր նախընտրում են տեսնել փեսայի, երբեմն էլ հոր մտերիմ ընկերոջը: 3) Անցյալում քավորը պետք է լիներ բազմանդամ ընտանիքի հայր, հասարակության մեջ բարձր հեղինակություն ունեցող ազդեցիկ և «խերով» անձ, որի հետ էին կապում նորաստեղծ ընտանիքի հետագա հաջողությունները. օրինակ՝ քավորին փոխում էին, եթե երիտասարդ ընտանիքը հայտնվում էր անպտուղ վիճակում կամ միայն աղջիկ երեխաներ էր ունենում և այլն, մինչդեռ հիմա քավոր կարող է լինել անգամ չամուսնացած, ընտանիք չկազմած մեկը: Անցյալում նա պետք է լիներ սեղանի փորձառու թամադա, ամբողջ

հարսանիքի կառավարողը, մինչդեռ այսօր մեկ խնջույքի սահմաններում նրա կենացը նշելուց հետո, նրա դերը հիմնականում ավարտվում է:

Այսօրվա հարսանիքի ավանդական դեմքերից են նաև հարսնաքույրը և ազապբաշին, որոնց ներկայությունը նույնպես պարտադիր է, բայց ավելի շատ արարողակարգային իմաստով, առանց նախկին դերակատարումների[1]:

Ավանդական հարսանեկան ծեսերից շատերը, կորցնելով իրենց նախկին մոգական իմաստը, այսօր էլ փոփոխված ձևով շարունակում են կիրառվել հատկապես գյուղական բնակավայրերում. դրանք են՝ հարսին հագցնելիս կոշիկի զույգը գոռանալը, հերանց տնից հանելիս եղբոր կողմից դուռ պահելը, տղայի տան շեմին նորապսակների ոտքերի տակ ափսե դնելը, նրանց ուսերին լավաշ գցելը, մեղր հրամցնելը, զույգերի գլխին քաղցրավենիք շաղ տալը, հարսի գիրկը տղա երեխայի նստեցնելը և այլն:

Բացի հարսանեկան արարողությունից, 1980-ական թթ. առ այսօր, հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների շրջանում արդիական է դարձել հարսանեկան խնջույքը, որը ներառում է որոշակի ավանդական տարրեր՝ քավորի առկայությունը, ազգային ուտեստը, կենաց-մաղթանքների ավանդական հերթականությունը և այլն: Սոցիալապես ապահովված երիտասարդ զույգերը նախընտրում են նաև հարսանեկան ճանապարհորդությունը:

---

[1] **Նահապետյան Ռ.,** Քավորը հայոց ամուսնահարսանեկան ծիսակարգում (ըստ Աղձնիքահայերի ազգագրական տվյալների) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 242-262:

2.4. Հետհարսանեկան արարողակարգ

Հարցեր և առաջադրանքներ:

Նորահարսի առօրյա պարտականությունների և իրավունքների մեկնարկային արարողակարգերը: «Ոտնլվա»-ի սովորույթը: «Գլուխլվա», «խնամականչ», «քառասունք», «դարձ» արարողակարգերը, մեկնաբանությունները: Քավորի պատասխանը:

Օժիտի սովորույթը հայոց մեջ, օժիտի կազմը, օժիտն արդի կենցաղում: Նորահարսի առաջին մասնակցությունը տնային աշխատանքներին: Նորահարսի դրությունը ընտանիքում: Տոնական «փայերը» (երկուստեք տրվող նվերները նշանդրեքից մինչև հարսանիք), արնագին (սարմիա):

Հայոց ամուսնահարսանեկան ավանդույթների արդի դրսևորումները սոցիալ-մշակութային փոխակերպումների համատեքստում:

Հետհարսանեկան հիմնական ծեսերից էին՝ «կարմիր խնձորը», «գլուխլվան», «խնամականչը», «դարձը մոր տուն» և այլն:

«Կարմիր խնձորի» ծեսը աղջկա անմեղության վկայության խորհրդանիշն էր: Անցյալում աղջկա կույս լինելու հանգամանքը պարզելու նպատակով հավաքվում էին հեռու-մոտիկ ազգական-հարևան փորձառու կանայք: Հաճախ սկեսուրը առաջին գիշերվա սպիտակեղենը կախում էր պարանին՝ ի ցույց բոլորին: Այնուհետև տղայի մերձավոր 2-3 կին քավորի կնոջ հետ կարմիր խնձորով զարդարված սկուտեղով ուղևորվում էին հարսի հոր տուն: Այսօր էլ հատկապես գյուղական բնակավայրում հարսի ընտանիքին և նրա կուսությունը խորհրդանշող «կարմիր խնձոր» ուղարկելու այս ծեսը պահպանվել է: Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ գյուղական

բնակավայրում հարսնացու ընտրելու հարցում կարևորվում են աղջկա անմեղությունը հաստատող կարմիր խնձորի առկայությունը:

Որոշակի փոխակերպումով պահպանվել են նաև գլուխլվան և Տեառնընդառաջի տոնն ուղեկցող սովորույթները և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերում:

Օժիտ: Նախկինում հարսանիքից առաջ աղջկա տանը նախնառաջ կարգին էին բերում օժիտը, որը բաղկացած էր լինում անկողնուց, գորգից, կարպետից, անձնական իրերից, կենցաղային առարկաներից, որոնք որպես տնտեսական օգնություն տրվում էին ամուսնական զույգին՝ մեծ ընտանիքում իր անձնական սեփականությունը ունենալու նպատակով: Օժիտը հարսի ունեցվածքն էր, որը ոչ ոք իրավունք չուներ տնօրինելու: Մեր օրերում ևս որոշ փոփոխություններով պահպանվել է օժիտ տալու սովորությունը: Ի դեպ, օժիտի կազմում էին լինում նաև փեսային և նրա ազգականներին հանձնվող նվերները:

Ամուսնության օրինականացում: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը ամուսնության օրինականացումը դրված էր եկեղեցու վրա: Եկեղեցին, առաջնորդվելով կանոնագրքերով, ամուսնությունը թույլատրելի էր համարում «յոթը պորտը» (սերունդը) լրանալուց հետո: Արգելվում էր ամուսնությունը կողմերից մեկի և երկուսի անբուժելի հիվանդությունների դեպքում, դատապարտվում էր հարբեցողությունը, անբարոյական վարքը և այլն: Խորհրդային և հետխորհրդային շրջանում ամուսնություններն օրինականացվում են համապատասխան պետական հաստատությունում՝ ԶԱԳՍ-ում:

Երեխաների ցանկալի թիվը: Երեխաների ցանկալի թիվը որոշակի թվով երեխաներ ունենալու պարտականությունն է:

Մեր օրերում երեխաների խնամքի, դաստիարակության, կենցաղային գործերի հիմնական մասը ընկած է կանանց ուսերին: Հայրական գծով սերնդի վերարտադրությունը հայ հասարակության գիտակցության մեջ հանգեցրել է արական սեռի գերադասության ամրագրմանը: Աղջիկը ընկալվում է որպես «գնացող» և ընտանիքի ժամանակավոր անդամ: «Աղջիկը ուրիշի տան պատն ա» և այլ ժողովրդական ասացվածքները վկայում են, որ տղա երեխային դիտում են որպես տոհմի շարունակող: Հայոց ընտանիքում տղա երեխայի առկայությունը պարտադիր է, որպեսզի «տան ծուխը չմարի», և ծնողները մենակ չմնան: Ակնկալվում է, որ ամուսնացած որդիներից մեկը կբնակվի ծնողների հետ և հետագայում հոգ կտանի նրանց մասին: Տղամարդու՝ որպես ընտանիք «պահողի», ապրուստ հայթայթողի դերը ավելի է արժևորվում, քան կնոջ դերը: Բացի այդ, տղա երեխաների առկայությամբ է ապահովվում ծնողների ծերության ապահով անցումը, ազգանունը պահելու, քույրերի պաշտպան լինելու հանգամանքը:

Այսպիսով, Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական և արժեքային արմատական փոփոխությունները իրենց կնիքն են դրել արդի հայ ընտանիքի կողմից իրականացվող գործառույթների վրա:

Ցավոք, դրանց հետևանքով նվազում են ամուսնությունները, ծնելիությունը, արձանագրվում է ամուսնալուծությունների թվի աճ, նվազել է նաև ընտանիքի՝ որպես սոցիալականացման, ազգային արժեքները պահպանողի և փոխանցողի դերը: Այսօր նկատելի է այնպիսի երևույթների աճ, որոնք երբեք հարիր չեն եղել հայ ընտանիքին, դրանք են. 1) երկսերունդ ընտանիքների թվի նվազում, 2) միասերունդ և միայնակ ընտանիքների թվաքանակի ավելացում, 3) նվազել է 5 անդամ ունե-

ցող ընտանիքների թիվը, 4) անհամեմատ իջել է ծնելիությունը: Բացի այդ, 2016 թ. ապրիլյան, 2020 թ. 44-օրյա և 2023 թ. սեպտեմբերյան հայ-ադրբեջանական պատերազմների ընթացքում 19-25 տարեկան չամուսնացած հազարավոր երիտասարդների զոհվելու հետևանքով չկազմվեցին մեծ թվով հայ ընտանիքներ: Մի հանգամանք ևս. նկատվում է տղամարդու և կնոջ դերերի արժեքային համակարգի որոշակի փոփոխություն. հատկապես երկսերունդ այն ընտանիքներում, որտեղ ընտանիքի հիմնական կերակրողը կինն է, զգալի չափով նկատվում է տղամարդու դերի անկում: Ավելին, թե՛ տղաների և թե՛ աղջիկների շրջանում անհամեմատ բարձրացել է ամուսնական տարիքի շեմը, այստեղից էլ՝ ծնունդների պակասը[1]:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974:
2. **Գաբրիելյան Մ.,** Հայկական ընտանիքն անցումային շրջանում, Երևան, 2005:
3. **Գալստյան Մ.** և ուրիշներ, Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հայ հասարակություններում, Երևան, 2017:
4. **Իփեկյան Գ.,** Քավոր, ԱՀ, գ. XXIV, Թիֆլիս, 1913, էջ 89-112:
5. **Լալայան Ե.,** Ջավախք, Ամուսնություն և հարսանյաց սովորություններ, Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 138-166:
6. **Լալայան Ե.,** Ջավախք, Ամուսնություն և հարսանյաց սովորություններ, Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 339-360:
7. **Լալայան Ե.,** Վարանդա, Երկեր, հ. 2, էջ 92-120:
8. **Լալայան Ե.,** Բարչալուի գավառ, Երկեր, հ. 3, Եր., 2004, էջ 121-143:
9. **Լալայան Ե.,** Գողթն, Հարսանիք // ԱՀ, գ. XII, Թիֆլիս, 1905, էջ

[1] **Միհրան Գալստյան, Ռուբեն Օհանջանյան, Թամարա Զաքարյան, Գայանե Հակոբյան,** Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Երևան, 2017:

111-117:

10. **Լալայան Ե.,** Վայոց ձոր // ԱՀ, գ. XIII, 1906, էջ 139-166:

11. **Լալայան Ե.,** Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք // ԱՀ, գ. XVI, էջ 29-190:

12. **Լալայան Ե.,** Վասպուրականի ազգագրություն // ԱՀ, գիրք XX, 1910, էջ 142-160:

13. **Լալայան Ե.,** Մուշ-Տարոն // ԱՀ, գիրք XXVI, 1916, էջ 155-175:

14. **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 185-199:

15. **Լիսիցյան Ստ.,** Լեռնային Ղարաբաղի հայերը // ՀԱԲ, գ. 12, Եր., 1981, էջ 44-49:

16. Կանոնագիրք հայոց, հ. Ա., Երևան, 1964, հ. Բ, Երևան, 1971:

17. **Կարապետյան Է.,** Օժիտը հայոց մեջ, Երևան, 1978:

18. **Հովհաննիսյան Ս. Հ.,** Ամուսնաընտանեկան իրավունքը վաղավատական Հայաստանում, Երևան, 1976:

19. **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Եր., 2004:

20. **Նահապետյան Ռ.,** Քավորը հայոց մեջ // ՊԲԸ, 2007, № 1, էջ 123-137:

21. **Նահապետյան Ռ.,** Աղձինքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (ՊԱՌԻ), Եր., 2007, 304 էջ:

22. **Նահապետյան Ռ.,** Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, Եր., 2009:

23. **Շագոյան Գ.,** Յոթ օր, յոթ գիշեր, Երևան, 2011:

24. **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Եր., 1931, հ. 2, հ. 3, Եր., 1941:

25. **Карапетян Э.,** Об одном персонаже армянской свадьбы //ՊԲՀ, 1965, № 2, էջ 211-216:

26. **Карапетян Э.,** Выкуп в свадебных обрядах армян и его социально-экономические корни // ԱՀՊԹ, հ. 3, Եր., 1950, էջ 73-144:

27. **Армяне,** М., 2012, с. 327-342.

ԹԵՄԱ 3
ՄԱՆԿԱՆ ԾՆՆԴԻ, ԽՆԱՄՔԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

3.1. Մինչծննդյան սովորույթներ ու ծեսեր

Հարցեր և առաջադրանքներ:

Թեմայի ուսումնասիրության արդիականությունը, նպատակը, խնդիրները:

Աղջիկների հասունացման ծեսերը:

Աղջիկների վերարտադրողական կարողություններն ապահովող ծեսերը: Սեռական հասունացման շրջանում աղջիկների վարքագիծն ու տարազը: Վերաբերմունքը անզավակ կնոջ նկատմամբ: Ամլությունը կանխարգելող ծեսերը, ծիսական գործողությունները: Ամլությունը բուժելու ժողովրդական իրական և սնոտիապաշտական սովորույթներն ու ծեսերը (ամլությամբ տառապող զույգի մեկուսացումը, բարձ փոխելը, սենյակ փոխելը, հմայիլների կիրառումը, ուխտագնացությունը, մերկ փորով քարերին պառկելը, պորտաքարի շուրջը պտտվելը, ծակ քարի միջով անցնելը, սուրբ ծառի տակ սուտ բարուր օրորելը, ննջեցյալի գերեզմանին ջուր խմելը, Բարեկենդանին՝ երդիկից անցնելը, Տյառնընդառաջին՝ խարույկի վրայով թռչելը, Զրօրհնեքի, Համբարձման և Վարդավառի նախօրեին գետում լողանալը): Միջոցներ զավակ, մասնավորապես տղա զավակ ունենալու համար:

Հղիության պահպանությանն ուղղված իրական և սնոտիապաշտական սովորույթներն ու ծեսերը. պտուղը և մորը չար ուժերից պաշտպանող գործողություններ: Հղի կնոջ խնամատարությունը:

Ապագա երեխայի սեռի, տեսքի ու բնավորության վերա-

բերյալ գուշակությունները՝ ըստ հղի կնոջ ֆիզիկական վիճակի, բնավորության և պահվածքի (օր.՝ գուշակում էին նմանություն այն մարդուն, ում ներկայությամբ պտղի խաղը մայրն առաջին անգամ զգացել է և այլն):

Ապագա երեխայի կազմավորման վրա ազդող ծեսերը՝ հղի կնոջ ձեռնարկած հատուկ մոգական գործողությունները (նմանողական մոգություն) երեխային այս կամ այն ֆիզիկական հատկանիշը հաղորդելու նպատակով (օր.՝ հղի կնոջ կողմից ձու գողանալը՝ երեխայի թշերին փոսիկներ առաջացնելու համար, երեխայի մարմնին խալ առաջացնելու նպատակով տավարի փայծաղ ուտելիս սեփական մարմնի համապատասխան մասին դիպչելը, երկար վիզ ունենալու համար երկարավիզ կժով ջուր խմելը և այլն):

Ընտանեկան կյանքի կարևորագույն՝ մանկան ծննդի այս կենսափուլը անմիջականորեն առնչվում է հասարակության մեջ մայրության և մանկության տեղին ու դերին, մոր ու մանկան կյանքի ու առողջության պահպանման, ծննդօգնության, նորածնի խնամքի ու դաստիարակության հետ կապված ժողովրդական պրակտիկ գիտելիքներին, հմտություններին, հայ մարդու արժեքային կողմնորոշումներին:

Թեմայի արդիականությունը: Ոչ նյութական մշակույթի այս ոլորտի ուսումնասիրությունը կարևորագույն հիմնահարցերից է, ունի ինչպես գիտական, ճանաչողական, այնպես էլ պրակտիկ նշանակություն: Ներկա պայմաններում էթնոմշակութային ժառանգությունը կորցնելու վտանգը մեծանում է նաև պարբերաբար էթնիկ տարածքներ, լոկալ վայրեր կորցնելու պատճառով, որը ոչ միայն զրկում է էթնիկ մշակույթը անհրաժեշտ բազմազանությունից ու ամբողջականությունից, այլև սահմանափակում է ավանդույթները ժառանգաբար փո-

խանցելու ու պահպանելու հնարավորությունը:

Այս հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև նոր ապրելակերպի պայմաններում ծեսերի ու սովորույթների փոխակերպումների ու նորահայտ երևույթների վերլուծության անհրաժեշտությամբ: Բացի այդ, նախորդ շրջափուլերից մեզ են հասել մեծաքանակ վերապրուկներ, որոնք հարուստ նյութ կարող են տալ համապատասխան պատմամշակութային վերակառուցումների համար: Ժողովրդական բժշկության բնույթի բազմաթիվ նյութեր կորստից փրկելու ու գիտական շրջանառության մեջ դնելու շնորհիվ հարստանում է մեր ազգային մշակութային գանձարանը:

Մանկան ծնունդը կարևոր իրադարձություն է ոչ միայն ընտանիքի համար, այլև ունի հասարակական մեծ նշանակություն, քանզի սերնդաճի շնորհիվ ազգատոհմը, համայնքը, պետությունը համալրվում են նորաստեղծ ընտանիքներով, երկրի աշխատուժն ու անվտանգությունն ապահովող բնակչությամբ:

Ուսումնասիրության արդի վիճակը:

Հայ ազգաբանական գրականության մեջ տակավին չկա հայոց ընտանեկան ծիսակարգի այս հիմնախնդրի վերաբերյալ համակողմանի և ամփոփ հետազոտություն, որ ներառեր պատմաազգագրական բոլոր շրջանների ազգագրական երևույթների ուսումնասիրությունը: Այդուհանդերձ, անուրանալի է Ե. Լալայանի հրատարակած հսկայական նյութերի նշանակությունը: Ազգագրական հանդեսում հրատարակած «Զավախք», «Գանձակի գավառ», «Վարանդա (Արցախ)», «Բորչալուի գավառ», «Զանգեզուր», «Սիսիան», «Նախիջևանի գավառ», «Վայոց ձոր», «Նոր Բայազետի գավառ», «Վասպուրական«, «Մուշ-Տարոն» աշխատություններում առանձին բաժին է

կազմում «Տղաբերք և մանկատածություն» խորագրով ենթագլուխը: 1931 թ. հրատարակվում է գիտնականի «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ» ուշագրավ ուսումնասիրությունը: Ի դեպ, Ե. Լալայանը մանկածնությունը անվանել է տղաբերք, սակայն նկատի ունի առհասարակ զավակածնությունը:

Այս թեմայով ուշագրավ նկարագրություններ ունի նաև Բենսեն՝ ԱՀ-ում հրատարակված «Բուլանըխ կամ Հարք գավառ» աշխատության մեջ: Հիմնախնդիրը շոշափվել է նաև Ստ. Լիսիցյանի «Очерки этнографии дореволюционной Армении» ուսումնասիրության մեջ: 1946 թ. հրատարակվեց նրա «Ազգագրական հարցարան», 1969 թ.՝ «Զանգեզուրի հայերը», 1981 թ.՝ «Լեռնային Ղարաբաղի հայերը», որոնցում գիտնականը զգալի տեղ է հատկացրել սերնդաճին և մանկան դաստիարակությանը:

Մասնագիտական առումով ուշագրավ է նաև Զ. Խառատյանի (, Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян» // ՀԱԲ, հ. 17, Եր., 1989), Ա. Տեր-Սարգսյանցի (Армяне, М., 1998) աշխատությունները: Հիմնախնդրի վերաբերյալ ուշագրավ է նաև Ս. Մելիքյանի և Ն. Մարգարյանի համահեղինակած , Обряды родильного цикла и система личных имен» (Армяне, Серия «Народы и культуры», М., 2012, էջ 342-352) ուսումնասիրությունը: Թերևս, ավելի համալիր ուսումնասիրություն կարելի է համարել սույն ձեռնարկի հեղինակի՝ , Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը» (Եր., 2011, 214 էջ) մենագրությունը՝ պատմաազգագրական այլ շրջանների հետ զուգահեռ ազգագրական նյութերի մեկնաբանությամբ: Աշխատության մեջ ներկայացված են նորապսակների արգասավորմանն ուղղված հարսանեկան և

հետհարսանեկան ծիսակարգը, ամլության դեմ կիրառված ժողովրդական հնարները, մանկածնությանը, նորածնի մկրտությանը, քառասունքին, խնամքին ու դաստիարակությանն առնչվող ժողովրդական սովորույթներն ու ծեսերը:

Մինչծննդյան սովորույթներ և ծեսեր: Մանկածննդյանն առնչվող ծեսերն ու սովորույթները կարելի է բաժանել երեք փուլի՝ **մինչծննդյան, ծննդյան** և **հետծննդյան**: Մինչծննդյան սովորույթներն ու ծեսերը ևս կարելի է բաժանել երեք փուլի՝ 1) ծեսեր և սովորույթներ, որոնք ուղղված են աղջիկների վերարտադրողական կարողությունների ապահովմանը, ամուսինների արգասավորությանը, 2) ամլությունից խուսափելու համար ձեռնարկվող սովորույթներ և ծեսեր և ամլությունը բուժելու ժողովրդական հնարներ, 3) հղի կնոջ վարքագիծը կարգավորող սովորույթներ և ծեսեր:

Աղջիկների հասունացման շրջանին վերաբերող սովորույթներն ու ծեսերը գիտական գրականության մեջ անվանվել է «նվիրագործման ծեսեր» և «անցումային ծեսեր»:

Կնոջ վերարտադրողական կարողությունների մասին իրական մտահոգությունը կերպարանք է ստանում աղջկա սեռահասունացման փուլում՝ կապված առաջին դաշտանի սպասման հետ: Առաջին դաշտանը («լուսին ա տեսել», «ծաղիկ ա տեսել», «ամսականի մեջ» և այլն) սեռահասունացման և կենսաբանական մի կարգավիճակից ամուսնական տարիքի անցման փուլի սկիզբն է:

2. Ամլությունից խուսափելու համար ձեռնարկվող սովորույթներ և ծեսեր, այն բուժելու ժողովրդական հնարների շարքը: Հայ ընտանիքի համար դարեր ի վեր ամենակարևոր խնդիրը եղել է երիտասարդ ընտանիքի կազմակերպումը, ամուսնությունը և սերնդի վերարտադրությունը, ամլության

կանխումը, երեխաների առողջ և հետևողական աճը: Դարերի ընթացքում ժողովուրդը մշակել է բազմաթիվ ու բազմապիսի իրական (ռացիոնալ) և հմայական (իռացիոնալ) հնարներ, որոնցում մի կողմից դրսևորվել են ժողովրդական բժշկության դարավոր փորձն ու հմտությունները, մյուս կողմից՝ հմայական սնոտիապաշտական միջոցները:

Ամլությունը դիտվել է վերուստ տրված պատիժ և արժանացել է ոչ միայն ափսոսանքի, այլև նախատինքի՝ «ճժբեր չէ», «մարդ չէ», «մարդություն չունի», «անբար», «անպտուղ ծառ», «ապառաժ քար», այսինքն՝ սերնդագործելու ընդունակ չէ: Ամուլ կինը կամ տղամարդը պատիվ չունեին ընտանիքում և հասարակության մեջ, կարեկցանքի էին արժանանում: Նման տղամարդուն ասում էին «էրիկ մարդ չէ», այսինքն՝ բեղմնավորելու ընդունակ չէ: Ամլությանը հավասար դատապարտվել է արհեստական վիժեցումը:

3. **Մինչծննդյան ծիսական հաջորդ շարքը կապված է եղել հղիության պաշտպանության հետ.** պտուղը և մորը չար ուժերից կամ այլ վտանգներից պաշտպանող բազում գործողություններ և սահմանափակումներ էին կիրառվում:

Հղի կինը տարբեր ազգագավառներում տարբեր կերպ է կոչվել. «երկու հոգով», «ծանր ոտք», «ծոցվոր», «մացուկ», «էրեխով». «պատճառավոր», «տղոցկան», «ծննդկան», իսկ մանկաբարձուհին՝ «տատմեր», «պորտ կտրող», «թիկմար», «փթթող» (բարուր փաթաթող), «դեղրար» և այլն:

Հանուն առողջ և բարետես սերնդաճի՝ հղի կինը արժանանում էր ընտանիքի, մերձավորների հոգատարությանը, նրան արգելել են կատարել ծանր աշխատանքներ, բավարարում էին ուտեստի նկատմամբ նրա բոլոր ցանկությունները, որպեսզի «երեխու աչքը ծուռ չմնա»: «Չարքերի» ներգործությունից ազա-

տելու համար նրան արգելվել է անցնել ջրի վրայով, մտնել ձիանոց, հորդորել են խուսափել չբեր կանանցից, չար աչքով մարդկանցից, չանցնել երկու մարդկանց արանքով՝ «չկոխվելու» համար, քանզի «կոխվելը» ծանր հիվանդություն է համարվել, չհանդիպել շան, օձի, կատվի՝ «չթպղոտելու» համար, քանզի «թպղոտությունը» ևս ծանր հիվանդություն է համարվել: Բոլոր հղի կանայք պարտադիր կրում էին պահպանակներ՝ օրհնված երկաթյա խաչեր, օղաձև զարդեր և այլն:

Ծեսերի մի շարք վերաբերում էր ապագա երեխայի սեռին, տեսքին, բնավորությանը:

Հայկական ընտանիքում առավել ցանկալին ու խրախուսելին համարվել է արու զավակի ծնունդը, որի համար գոյություն ունեին սեռը որոշելու գուշակման բազմապիսի հնարներ:

Տղայի ծնունդը աչքալուսանքով, տոնախմբությամբ էր նշվում, աղջկա ծնունդը՝ կարեկցանքով, մաղթում էին, որ առաջնեկը տղա լինի, յոթը որդով սեղան նստեն:

Բազմանդամ ընտանիքում ամեն նոր աղջկա ծնունդ բեռ է համարվել, ուստի նման դեպքերում աղջկան երբեմն մականունով էին դիմում՝ Բավական, Հերիք, որոնք էլ ժամանակի ընթացքում անձնանունների էին վերածվում: Հայ ընտանիքի կանգունը, օջախը վառ պահողը, ծուխը շարունակողը տղան էր, ուստի և տղայի՝ իբրև օջախի այան ծնունդը երջանկաբեր է համարվել, և երկրորդ՝ տղան աշխատող ձեռք էր, հրացան բռնող, ընտանիքի նեցուկ:

Հղիության ամբողջ ժամանակամիջոցը բախտորոշ, երջանկաբեր, բայց և վտանգաշատ փուլ է համարվել հայ ընտանեկան կյանքում:

3.2. Մանկածնությանն առնչվող սովորույթներն ու ծեսերը

Հարցեր և առաջադրանքներ:

Ծննդաբերություն բառի տեղական հոմանիշները (պառկել, ազատվել և այլն: Ծննդաբերողին կոչում են՝ «ծննդկան», «տղոցկան»): Ծննդաբերության կառուցման տեղը, մանկաբարձը, մասնակիցները, ընթացքը, տեղական անվանումները:

Ծննդաբերությունը դյուրին դարձնելու իրական միջոցները *(թափ տալը, ձեռքերը կախ տալը, դեղ տալը) և* ***հմայական միջոցները*** *(հանգույցներ քանդելը, ջրի մյուս ափն անցած մարդու կամ ամուսնու, քավորի կամ գորտին օձի բերանից ազատած մեկի փեշից ջուր խմեցնելը, կտուրին հրացան արձակելը՝ չարքերի մուտքը կանխելու համար, ամուսնու կողքը պառկեցնելը և ծննդաբերական ցավերը մեղմացնելու համար ամուսնու տնքալը, «ցավդ տանեմ» արտահայտությունները, աղոթքները և այլն):*

Ծննդաբերությանը բարի ուժերին ներգրավելու և չարը վանելու հնավանդ ծեսերը *(օր.՝ ծննդկանի տակը թոնրի մոխիր լցնելը, աղոթք ասելը, ծննդկանի գլխավերևում Աստվածածնին աղոթքով դիմելը, տարբեր հմայիլներ օգտագործելը, ծննդկանին տղամարդու գլխարկ դնելը, հավի կտրած գլուխը կամ այծի լյարդը երդիկից դուրս գցելը, ծննդկանի դեմքին լեղակ քսելը, ուշագնաց ծննդկանին օգնության հասած տղամարդկանց՝ քավորի, ամուսնու ներկայությունը և այլն): Նմանողական մոգությամբ ծնունդը հեշտացնելու նպատակով կատարվող գործողությունները (տան և կահույքի դռների, կողպեքների ու կարասիների խուփերի բաց անելը, կոճակները, գոտիները և կապերը արձակելը, ծննդկանի ոտքերի մոտ երդիկից ձու գցելը, ամուսնու, քավորի կամ սկեսրայրի փեշից ջուր խմելը և այլն): Ծննդկանին հովանավորող ոգիներ (բարի*

հրեշտակ և այլն) անվանումները:

Նորածնի պորտը կտրելու ծեսերը:

Նորածնի հետ կապված ծեսերի շարքը, որոնք միտված էին նորածնին պաշտպանելուն, նրա առողջությունն ու հաջողությունը ապահովելուն (օր.՝ ընկերքը շեմի տակ թաղելը, աղաջրում լողացնելը, «չարքերի» հարվածներից ազատելու համար ջրի մեջ պողպատ, ածուխ ձգելը, կտուրում պտույտ տալը, արևին ցույց տալը, ուղեկցվող աղոթքները, օրորոցից հմայիլներ կախելը և այլն):

Նորածնի պորտը կտրելու ծեսերը նպատակ ունեին նորածնին համապատասխան ապագա ապահովելու: Մեր օրերում բժշկական, մանկաբարձական, գինեկոլոգիական պետական վերահսկողության իրականացումը, բոլոր ծախսերը պետական հոգածության հանձնելը և այլն:

Ծննդկան կնոջ սնունդը: *Ընծայաբերություններ: Ծննդկանի առողջությունը վերականգնելուն ուղղված ծիսական գործողություններ (ծննդկանին լողացնելը, նրա մեկուսացումը, քահանայի կողմից տունը փարատելը, խունկ ծխելը, հմայիլներով պաշտպանելը, եղաձու, յուղ ու մեղր ուտեցնելը և այլն): Ընտանիքում երեխաներ չմնալը, դժբախտությունը կանխող արարողությունները (մանկանը կեղծ վաճառելը, երեխային իբր թե գողանալը, գողացած զգեստ կամ ցնցոտիներ, մուրացկանի շորեր հագցնելը, տղային աղջկա կամ թուրքի անուն տալը և այլն):*

Աղջիկ ծնվելը կանխարգելելու արարողությունները:

* * *

Մանկածնությանն առնչվող սովորույթներն ու ծեսերը:

ա) Սնոտիապաշտական արարողություններ: Ծննդաբերությանը բարի ուժերին ներգրավելու և չարը վանելու ծեսերը խիստ բազմազան են եղել: Ծննդաբերության ընթացքում բարի

ուժերի աջակցությունն ապահովող ու կարծեցյալ չար ուժերին՝ **ալքերին, նիաթներին, թփղիներին** և այլ վնասաբերներին վանելու կամ մոլորեցնելու գործողություններ էին իրականացնում: Դրանցից էին՝ ծննդկանի տակը մոխիր (մաքրագործող և չարը խափանող) փռելը, աղոթելը, գլխավերևում Նարեկ կարդալը, հմայիլներ օգտագործելը, ծննդաբերության տեղում չորս պատերին խաչեր գծելը, դռան շեմին խաչերկաթ, դաշույն, շղթա, շամփուր դնելը, որոնք իբր ունեին չարահալած նշանակություն: Բացի այդ, ուղիղ դռան առաջ, գետնի վրա շրջան էին գծում և դրա կենտրոնում կրակ վառում, ծննդկանի կողքին, ականջի տակ հրացանաձգություն կատարում, թոնրի առաջին հացը չորս մաս արած խաչ ու փաթ ծննդկանի որովայնին էին դնում, ապա տալիս շանը՝ կարծեցյալ չարքերի ուշադրությունը ծննդկանից շեղելու համար, մոլորեցնելու միտումով ծննդկանի գլխին տղամարդու գլխարկ էին դնում, հավի կտրած գլուխը կամ այծի լյարդը երդիկից դուրս էին շպրտում, ծննդկանի դեմքին լեղակ էին քսում՝ չարքերին մոլորեցնելու համար և այլն:

Զանգեզուրում չարքերին չեզոքացնելու ծիսական արարողություններից մեկն էլ հետևյալն էր. ծննդկան կնոջը չոքեցնում էին, տակը խախալ մաղ էին դնում (մեծ անցքերով), որ երեխան նրա մեջ ծնվեր, ծնվելուց հետո էլ խախալի տեղը գետնի մեջ խրում էին մի բանեցրած մեխ և ասում. «Էդ էլ քո փայըդ – գնա»: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ հատակին վխտացող չար ոգիները չէին կարողանա մաղի միջով ծնկների վրա մագլցել և հափշտակել մանկանը: Բացի այդ՝ խախալի ցանցը պիտի պաշտպաներ նորածին երեխային, իսկ ժանգոտած երկաթի կտորը փախցնելու էր չար ոգիներին:

բ) Մանկածնությանն առնչվող ծեսերի շարքում կարևոր

տեղ էին գրավում երկունքը հեշտացնող ծեսերը: Դրանք նմանողական բնույթի էին. Բացվում էին տան և կահույքի դռները, կողպեքները, կարասների բերանները, արձակվում էին ներկաների կոճակները, գոտիների կապերը (գոտին ծիսական առումով հմայական պահպանակ էր համարվում, այն արձակելը հեշտացնելու էր ծննդաբերությունը), ծննդկանի ոտքերի մոտ երդիկից ձու էին գցում, ամուսնու, քավորի կամ սկեսրայրի, երբեմն էլ հովվի, գորտին օձի բերանից ազատած մարդու փեշով ջուր խմեցնում: Հմայական այս ծեսերում ուշագրավ դերակատարում է ունեցել քավորը. ծննդկանի ուշաթափության դեպքում կանչում էին քավորին, որը ապտակում էր նրան՝ չարքերին վանելու նպատակով: Այնուհետև երեք անգամ խփում էին ծննդկանի մեջքին, ասելով՝ «գեղ քոչել է, մնացիր դու, դու էլ քոչիր»: Մեջքը որդեծնության ունակության խորհրդանիշն է համարվել, այստեղից էլ՝ «մեջքդ դալար լինի», «գոգդ լիքը լինի», «փեշդ լիքը լինի» բարեմաղթանքները: Ինչպես մեջքը, այնպես էլ գոգնոցը արգասավորության խորհրդանիշներ են համարվել, և պատահական չէ, որ անցյալում գոգնոց կրել են միայն նշանված կամ ամուսնացած երիտասարդ կանայք: Աղջիկները այն կրելու իրավունք չունեին մինչև ամուսնանալը:

Առաջին ծննդին կանչվում էր և ծննդկանի մայրը. ուժեղ ցավեր ունենալիս նա 7 պտույտ էր գործում ծննդկանի շուրջը, ապա մանգաղով խոտ հնձելու շարժումներ անում, իբրև թե հնձում է ծննդկանի ցավերը: Այս ամենը ավանդական ծեսերի շարքից էր, որոնք իսպառ անհետացան XX դ. կեսերից հետո: Այդ ժամանակից ի վեր ծննդաբերությունը տեղի է ունենում ծննդատներում, պետական նյութական ապահովության, անվճար սպասարկման պայմաններում, աշխատող կանանց նա-

խածննդյան և հետծննդյան արձակուրդ է տրվում, նաև սահմանված է երեխայի ծննդյան միանվագ նպաստ:

3.3. Մանկան դաստիարակության ավանդական և ժամանակակից սովորույթներն ու ծեսերը հայոց մեջ

Հարցեր և առաջադրանքներ:

Մանկան ծնունդն իբրև «անցման ծես»՝ մեկ աշխարհից մի նոր աշխարհ: Դրա հետ կապված սովորույթներն ու ծեսերը: Ազգատոհմի և համայնքի վերաբերմունքը: Աչքալուսանքի արարողությունը (լուր բերողին նվեր տալը, ընծայաբերությունը, հյուրասիրությունը):

Հաջորդ խումբ հարցերը առնչվում էին նորածնին պաշտպանելուն, նրա առողջությունն ու հաջողությունն ապահովելուն: Դրանց թվում են՝ ընկերքը շեմի տակ թաղելը, աղաջրում լողացնելը, կտուրում պտույտ տալը, օրորոցից հմայիլներ կախելը և այլն:

Առանձին շարք էին նորածնի պորտը կտրելու ծեսերը, որոնց հետ էին կապում նորածնի ապագան, օրինակ՝ պորտը ընդարձակ հրապարակ տեղ գցելով՝ հավատում էին, որ տղա երեխան հասարակության մեջ հարգված մարդ է դառնալու, իսկ աղջկա պորտը տան անկյունում էին թաղում, որպեսզի ապագայում նա դառնար համեստ տանտիկին և այլն: Պորտը կտրում էին քակորի (աթարի), հացի կամ էլ արծաթի դրամի վրա, որպեսզի երեխան լիներ հարուստ, հացառատ և անասունի տեր:

Առանձին խումբ էին կազմում ծննդկանի երկունքից հետո կատարվող ծեսերը՝ նրան պաշտպանելու և առողջությունը վերականգնելուն ուղղված գործողությունները:

Ծննդկանին նախ պառկեցնում էին թոնրի մոխրի վրա փռված խսիրին գցված մաքուր փալասի վրա, օրը մի քանի

անգամ փոխում էին գոլ մոխիրը, մինչև արյունը քամվեր: Ապա հետևում էր ծննդկանին լողացնելը, անկողին տեղափոխելը, ծննդագավաթով եղուռու, յուղ, մեղր, խավիծ հյուրասիրելը, ծննդկանի մեկուսացումը, քահանայի կողմից տունը փարատել տալը, հմայիլներով պաշտպանելը: Ծննդկանին անկողնում պառկեցնում էին յոթ օր:

Նորածնի մկրտությունը որպես նրա հասարակական ճանաչման կարևոր փուլ: *Մկրտությունը որպես երեխաների մահացության բարձր չափը կանխելու, նորածնին հայ քրիստոնյա դարձնելու, չարքերի հնարավոր ազդեցությունը կանխելու գործողություն: Անվանակոչման ծեսեր, դրա յուրահատկությունները հայոց մեջ: Նորածնի աճն ապահովող սովորույթներ, ծեսեր:*

Մկրտությունը նախկինում երեխաների բարձր մահացության պատճառով ձգտում էին կատարել հնարավորինս շուտ, սովորաբար 7 օրը լրանալիս: Այս ծեսով ոչ միայն ձգտում էին ապահովել նորածնի քրիստոնյա օծվելու հանգամանքը, այլև չեզոքացնել կարծեցյալ չարքերի հնարավոր ազդեցությունը:

Ծննդկանը, նորածինը, տատմերը, տունը մաքրված էին համարվում մկրտության ծեսից հետո՝ 8-րդ օրը: Կարևոր դերակատարներն էին քավորը, քահանան և տատմերը: Կնունքի պահին քահանան մանկան վիզն էր անցկացնում կարմիր-կանաչ նարոտը, որը մնալու էր 3 օր: Մանկան անուն էլ կնքվում էր մկրտության օրը, եթե տոնի օր ծնված լիներ, այդ սրբի անունով կկոչվեր: Անձնանունների ընտրությունը կապված էր էթնիկ ինքնության հետ: Առաջին տղա երեխային անվանակոչում էին նահապետի անունով, ապա հաջորդում էր անունների սերնդային կրկնությունը: Անվանումների մեծ մասը աստվածաշնչյան էին:

Քավորի բացակայության դեպքում երբեմն երեխային կնքում էին տանը՝ ալյուրի մաղի վրա, ալրամաղն էլ՝ հացի տաշտակի վրա: Այն փոխարինում էր քավորին, «քավորություն» էր անում: Մաղը առատության, սրբության խորհրդանիշ էր համարվում: Մկրտությունը նորածնի հասարակական ճանաչման կարևոր փուլերից էր:

Քառասունք:

Հարցեր և առաջադրանքներ:

Մանկան քառասունքին առնչվող սովորույթների ու ծեսերի բնութագրությունը: Քառասունքը՝ ծննդկանին և նորածնին չար ուժերից և կոխից պաշտպանելու քառասնօրյա հետծննդյան արգելքների համալիր:

Մանկան բարուրը և անկողինը, օրորոցը, տեսակները: Մանկանը առաջին անգամ օրորոց դնելու հետ կապված ծեսեր (դեպքեր, երբ կատու էին պառկեցնում, մեռած երեխայի օրորոցը չգործածելը, դատարկ օրորոցները չօրորելը օրորոցի լծից բժժանքներ, հմայիլներ կախելը և այլն):

Մանկան «կոխը» կանխարգելող հմայական գործողությունները:

Մանկան հետծննդյան խնամքին առնչվող սովորույթներն ու ծեսերը:

Քառասունքից հանելու ծեսերը (արևին հանելու, եկեղեցի տանելու, լողացնելու ծեսը և այլն):

Մանկանը հիվանդություններից զերծ պահելու, բուժման իրական և հմայական հնարները:

Առաջին անգամ մազ կտրելու, ոտքի ելնելու, կաթնատամը դուրս գալու, ուշ խոսելը կանխելու, մանկական լեզու բանեցնելու ծիսական արարողակարգերը:

Մանկան ծննդի և անձնանվանական համալիրի փոխա-

կերպումները խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում:

Մանկան դաստիարակության հիմնական նորմերը և սովորույթները անցյալում և ներկայում: *Դաստիարակությունը որպես սոցիալ-մշակութային երևույթ: Ընտանեկան դաստիարակության չափանիշները և դերակատարները անցյալում և մեր օրերում:*

Երեխաների բարոյական դաստիարակության նորմերը, արժեքային չափանիշները: Երեխաների ֆիզիկական, աշխատանքային, ռազմական դաստիարակությունը (անցյալում և մեր օրերում):

Երեխաների դաստիարակության հիմնախնդիրը խորհրդային և հետխորհրդային անցումային շրջանում:

Քառասունքը ծննդկանին և նորածնին չար ուժերից և «կոխ» կոչված հիվանդությունից պաշտպանելու քառասնօրյա հետծննդյան արգելքների համալիր է. ծննդկանը 40 օր չէր լողանալու, արևին դուրս չէր գալու, արգելվում էր մեռելատուն գնալ, հանդիպել քառասունքի մեջ գտնվող նորապսակներին, ծննդկաններին, իրավունք չի ունեցել մտնել մառան, ձեռք տալ մթերքներին, հաց, կերակուր պատրաստել, մայր ու մանուկ պարտավոր էին կրել պահպանակ-թալիսմաններ:

Քառասունքից հանելու ծեսերը կատարվում էին քառասունքի վերջին օրը և խորհրդանշում էին ծննդկանին և նորածնին 40-օրյա արգելքներից ազատելը՝ արևի երես հանելը, լողացնելը և այլն:

Ծեսերի հաջորդ համալիրը առնչվում է նորածնի աճին՝ առաջին եղունգ կտրելը, առաջին ատամ հանելը, մորամազը կտրելը, քայլեցնելը, լեզուն բանալը և այլն: Երեխային մնացական դարձնելու և աճն ապահովելուն միտված բազմաթիվ ծե-

սեր էին կատարվում: Օրինակ՝ ուշ քայլող երեխայի ոտքերին կանաչ ու կարմիր թելեր էին կապում, ապա կտրում էին, եկեղեցու պատի մեջ պահում, որը խորհրդանշում էր Աստծուն զոհ մատուցելը, որպեսզի մանուկը քայլի, երեխային մնացական դարձնելու նպատակով նրա մազերը միայն յոթերորդ տարում էին խուզում և սրբերին նվիրաբերում: Առաջավորաց պասին աղջիկների մազերը ս. Սարգսին նվիրաբերելու համար քամուն էին տալիս, հիվանդին առողջացնելու համար երկաթից ոտք ու ձեռք, իսկ երբեմն նաև ամբողջական արձանիկ էին շինում և սրբատեղերին նվիրում և այլն:

ԹԵՄԱ 4
ՄԱՀ, ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՄԵՌԵԼՈՑ

4.1. Մարդու մահը, թաղումը և հիշատակման օրերը ամբողջացնող ծեսերի համակարգը

Թեմայի արդիականությունը, խնդիրները, ուսումնասիրության արդի վիճակը:

Հուղարկավորման համակարգը դասվում է այն ծեսերի շարքին, որոնք աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ: Կյանքի և մահվան, նյութականի և հոգևորի սահմանագիծն արտահայտող այս արարողակարգն ամենից պահպանողականն ու հնավանդն է ընտանեկան և համայնքային ավանդույթների համակարգում: Ննջեցյալի հետ կապված սովորություններն ու ծիսական արարողությունները ենթադրում են երեք գլխավոր փուլ: Առաջին փուլը առնչվում է այն կախարդական գործողություններին, որոնք կոչված են ծանր հոգեվարք ապրողի մահն արագացնելուն: Երկրորդը՝ հուղարկավորության ծիսակատարությունների շարքն է, և երրորդը՝ ննջեցյալի հիշատակին նվիրված գործողությունները, որոնք կոչված են ննջեցյալի և վերջինիս ընտանիքի հոգևոր կապերն ամրապնդելուն, ընտանիքի վրա նրա հովանավորությունն ապահովելուն:

Հիմնախնդրի հիմնական նպատակն է.

ա) վերլուծել այն պատկերացումները, որոնք վերաբերում են հոգուն, մահվանը և այնկողմային աշխարհին, բ) բացահայտել ծեսի ներքին կառուցվածքն ու տրամաբանությունը, հիմնական փուլերի գործառույթները, գ) ընդգծել թաղման ծեսի մասնակիցների դերակատարությունն ու ընդգրկվածությունը, դ) քննարկել պաշտամունքային դրսևորումները, ե) վերլուծել

արարողությունների իմաստն ու նշանակությունը, զ) ընդգծել թաղման ծեսի փոփոխման հիմնական միտումները՝ նկատի առնելով ավանդականը, խորհրդային շրջանինը և ժամանակակիցը:

Սկզբնաղբյուրները և գրականությունը:

Հիմնախնդրի վերաբերյալ հպանցիկ, ցաքուցրիվ վիթխարի նյութ է կուտակված գրավոր աղբյուրներում: Պատմագրական առումով ևս կուտակվել է բավականաչափ նյութ:

Պատմագրական ակնարկ :

1. Սուգի ու ողբի վերաբերյալ առատ նյութ են գրանցել հայ պատմագիրները: Լինելով քրիստոնեության ջատագովներ՝ միաժամանակ խստորեն պայքարել են դրա դեմ: V դարի պատմագիր Հովհան Մանդակունին քրիստոնյաների համար հեթանոսական համարվող այդ ողբ ու կոծերը ոչ միայն հանցավոր ծեսեր էր համարում, այլև անառակություն: Նա զայրույթով թվարկել է գրեթե բոլոր անպատշաճությունները. «Կանայք,– գրում է նա,– ննջեցյալի մոտ սատանայական վայոց են բարձրացնում, սգում ու ողբում, կոծում են, մազերը փետում, մերկանում են և միայն գոգնոցով մտնում կոծողների մեջ (առիգած էին անում), կամ ուսերը մերկացնում էին, ճակատներին հարվածում, կամ մերկ մարմնի վրա քուրձ էին հագնում, գլուխներին մոխիր թափում, ճչում էին, բղավում, կոծելով արյունաշաղախ դառնում, մազերն արձակում էին, այտերը ճանկռում, կիսով չափ մերկանում ու ստինքներն էին քրքրում, իսկ ոմանք «սատանայական զգեստ» հագնում և եղերամոր (ննջեցյալների վրա սգերգեր երգող) ղեկավարությամբ անառակ ցույցեր ստեղծում»[1]: Նրա հաղորդմամբ՝ տղամար-

[1] **Հովհան Մանդակունի**, էջ 83, 130, 175, 181:

դիկ էլ չարաձայն աղաղակում էին, վայում, մազերը փետում, անհուսալիորեն ողբում, ճակատները ծեծում, կրծքերին հարվածելով դիվահարի էին նմանվում, եղինջով մարմիններն արնոտում էին, գլուխներին մոխիր թափում, հանդերձները պատառոտում, իսկ իգացյալները անամոթաբար մերկանում էին և կատաղում[1]: Մանդակունին կոչ էր անում արգելել եղերամայրերի ու լալկանների պիղծ գործունեությունը և արհամարհել նրանց[2]:

Փավստոս Բուզանդը հավաստում է, որ «Ներսես Մեծի մահից հետո, երբ մեռելներին ողբում էին՝ փողերով, փանդիռներով ու վիներով կոծի պարեր էին բռնում, մորուքները կտրած, երեսները պատառոտած, կին և տղամարդ դեմ առ դեմ՝ ճիվաղական պարեր խաղալով, ծափ զարնելով հուղարկավորում էին մեռելները»[3]: Հուղարկավորության ժամանակ, նվագախմբերի նվագից բացի, տեղի էին ունենում ողբերգակների ողբասացություններն ու երգերը, ըստ Թ. Արծրունու՝ ողբերգուների դամբանական երգերը, ողբերգական ճարտասանություններն ու հանդեսները[4] և ըստ Ստ Օրբելյանի՝ ողբերգական պարերը[5]:

Բուզանդի երկում հանդիպում ենք նաև հասարակական սգի տեսարանի: Արշակ թագավորը հրամայում է, որ «բանակում եղող բոլոր մարդիկ… գնան կոծ անեն և ողբան սպանված Արշակունի մեծ սեպուհ Գնելին, ոչ ոք չհամարձակվի ետ մնալ: Ինքն էլ՝ թագավորը կոծի տեղը գնալով՝ նստել էր դիակի

---

[1] Նույն տեղում, էջ 175-181:

[2] Նույն տեղում, էջ 181:

[3] **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, V դպր., գլ. ԼԱ, էջ 351:

[4] **Թ. Արծրունի,** էջ 365, 399-400, 430:

[5] **Ստ. Օրբելյան,** էջ 172:

մոտ, ինքը լալիս էր և հրամայում էր լաց ու կոծը սաստկացնել սպանվածի համար: Իսկ սպանվածի կինը՝ Փառանձեմը, զգեստները պատառոտած, վարսերը արձակած, կուրծքը բաց կոծում էր սգատեղում, բարձր ճչում էր, աղիողորմ ողբով ու արտասուքով, բոլորին լացացնում էր», «մազերը փետում էր, ճչում էր կոծելիս»[1]:

Հեթանոսական սովորույթի համաձայն՝ մեռելի վրա սուգ կատարելու համար հրավիրում էին հատուկ լալկան կանանց: Փ. Բուզանդը գրում է, թե այս ողբի պահին Փառանձեմը «ողբի մայր դարձավ, ձայնարկուները ողբաձայն երգում էին՝ գովերգելով ննջեցյալին» և այլն[2]:

Հուղարկավորության ժամանակ ողբերգակների, եղերամայրերի, լալկանների ու կոծողների ներկայությունից ակնհայտորեն երևում է, որ հին Հայաստանում կանայք ննջեցյալի թաղման արարողությանը նույնպես մասնակցել են: Զ. Ագուլեցին պարզ գրում է, թե իր օրերում կանայք հուղարկավորությանն ու թաղմանը մասնակցում էին, որից «անհամություն» էր առաջանում: Բայց տեղի ղեկավարների ու վարդապետի առաջարկությամբ վերացնում են այդ սովորությունը[3]:

Մատենագրական տվյալներից երևում է, որ ննջեցյալների թաղումը միջնադարում կատարվել է կա՛մ պատանքով (Հովհ. Մանդակունի, էջ 179), կա՛մ դագաղներով: Հովհ. Մամիկոնյանը մատնանշել է քարե, կավե և պղնձե տապաններ[4]:

Արքունիքում, նախարարական տներում և հոգևոր կենտ-

---

[1] **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, IV դպր., գլ. ԺԵ, էջ 191:

[2] Նույն տեղում: Տե՛ս նաև **Նահապետյան Ռ.,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, 2013, էջ 49-58:

[3] **Զաքար Ագուլեցի**, էջ 134:

[4] **Հովհ. Մամիկոնյան,** էջ 100-102, 114-115:

րոններում միջնադարյան թաղումները շուքով են կատարվել: Հովհ. Մամիկոնյանի արտահայտությամբ՝ «Ոչ է պարտ ոսկով պատել զմարմին մեռեալ մարդոյ»: Պատմագիրը հուշում է, որ ննջեցյալի հետ թաղելիս են եղել նաև նրան պատկանող զարդեղենը (նույն տեղում, էջ 114-115): Հովհ. Դրասխանակերտցին, նկարագրելով Աշոտ արքայի մահն ու թաղումը, գրում է. «Դիակիր դագաղօք՝ տարան զնա ի թագաւորանիստ աւանն Բագարան, ոսկեհուռ հանդերձիւք և ոսկեզօծ վառիւք զդագաղսն զարդարեալ»[1]: Տրդատ թագավորի շքեղաշուք թաղման, դիակը զարդարելու մասին է խոսել Մ. Խորենացին: Ըստ մատենագրական նյութերի՝ օտար տեղերում մեռած կամ վաղուց թաղված ննջեցյալներին տեղափոխում էին հայրենիք[2]: Ընդունված էր, ըստ կտակի կամ ըստ ազգատոհմի պահանջի, ննջեցյալին թաղել իր ծննդավայրում[3]: Հայտնի են նույնիսկ ծայրահեղություններ թաղման վայրի որոշման շուրջ: Կ. Գանձակեցու հավաստմամբ՝ Լևոն արքայի դիակի համար Սիս արքայաքաղաքի և Ակներ կենտրոնական վանքի միջև պայքարն ավարտվում է դիակը կիսելով և երկու տեղում թաղելով[4]: Գոյություն ուներ նաև ոսկորների, նշխարների նկատմամբ ծայրահեղ հարգանք[5]: Այդ սովորույթից էլ ելնելով՝ պարսիկ և օտար այլ զավթիչներ գերի էին տանում հայոց թագավորների ոսկորները[6], հետևապես՝ կողոպտում էին գերեզմանները:

---

[1] **Հովհ. Դրասխանակերտցի,** էջ 143:
[2] **Ղազար Փարպեցի,** էջ 153, **Թ. Արծրունի,** էջ 351, 368, 382, 384, **Կ. Գանձակեցի,** էջ 188, 392, **Ստ. Օրբելյան,** էջ 526, **Զ. Ագուլեցի,** էջ 164:
[3] **Ղ. Փարպեցի,** էջ 37:
[4] **Կ. Գանձակեցի,** էջ 188:
[5] **Հովհ. Մամիկոնյան,** էջ 36, 45, 52, 58, 61, 62, 92, 98, 101, 103 և այլն:
[6] **Փ. Բուզանդ,** էջ 142-144:

Թաղման այս հնագույն ձևերն աննշան փոփոխություններով հարատևել են նաև հետագա դարերում, որոշ մնացուկներ նաև մեր օրերում:

Ազգագրագետների կողմից գիտական հետաքրքրությունը աճեց XIX դարի վերջերից սկսած, մասնավորապես Գրիգոր Խալաթյանցի «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» (1887), ապա Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» (1946) հրատարակությունից հետո: Վիթխարի նյութ է կուտակվել «Ազգագրական հանդեսում» Ե. Լալայանի և մյուսների հրապարակումներում: Զգալի թվով աշխատություններ են լույս ընծայել խորհրդային և հետխորհրդային շրջանում Ե. Լալայանը, Ստ. Լիսիցյանը, Մ. Աբեղյանը, Վ. Բդոյանը և այլք:

Խնդրի վերաբերյալ մասնագիտական տեսական ընդհանրացումներով ուշագրավ աշխատություններ են Զ. Խառատյանի «Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян» (ՀԱԲ, հ. 17, 1989), Ա. Տեր-Սարգսյանցի «Армяне», 1998, Ռ. Նահապետյանի «Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը» (2004), Ս. Հարությունյանի «Հայ առասպելաբանություն» (Բեյրութ, 2002), Լ. Բեգինյանի «Հուղարկավորության և հիշատակի ծեսերն ու սովորույթները Տավուշում արդի փուլում. ավանդույթներ և նորույթներ» թեկնածուական ատենախոսությունը:

Հարցեր և առաջադրանքներ:

Ժողովրդական պատկերացումները ճակատագրի, հոգու և հանդերձյալ կյանքի մասին: Հոգեվարք և մահ: Մահը հավաստիացնող նշանները: Հոգեվարքը դյուրացնելու հնարները. (դռներ և պատուհաններ բացելը կամ մեռնողին դուրս տանելը, գետնի վրա դնելը, գլխի տեղը փոխելը, մահացողի ոտների

տակ սև հավ կամ կատու մորթելը և այլ սովորություններ): Հոգեառ կոչվածի վերաբերյալ ժողովրդական պատկերացումները: Մեղքերի թողությունը. քահանայի ներկայությամբ մեղքերի խոստովանության և թողության ծիսակատարություն: Ննջեցյալի մարմնի հետ կապված ծեսերը (փակում էին մեռնողի աչքերը, վարագուրում հայելիները, կրծքին հաց կամ պայտ դնում և այլն): Պահպանվե՞լ են ավանդություններ, թե քաջ մարդիկ կարող են վերակենդանանալ: Ննջեցյալին լողացնելու և պատանքելու սովորույթներն ու ծեսերը: Վայրը և լողացնողները: Լողացնելու միջոցին գործածած ամանների հետ վերաբերվելու ձևերը: Հանգուցյալի զգեստավորումը, պատանումը, դեմքին խաչաձև վարշամակ դնելը և այլն: Հանգուցյալի հարազատների սգո ծեսերը (սև գույնի տարազ կրելը, չսափրվելը, մազերն արձակելը, հասարակությունից որոշ չափով մեկուսացած լինելը և այլն): Ննջեցյալին տնից դուրս հանելու ծեսերը (որոնք վերաբերում էին նրա դրված տեղին, ապա դռանն ու շեմին, որպեսզի ննջեցյալին մոլորեցնեին և արգելափակեին հոգու կարծեցյալ հետդարձը, օր.՝ դագաղը պտտեցնելը և այլն):

Ննջեցյալի հրաժեշտի ծեսերը. ննջեցյալի ընտանիքի անդամների հրաժեշտը հանգուցյալի հետ տան բակում և գերեզմանոցում:

Գերեզմանի չափը որոշելու եղանակը (ննջեցյալի հասակի չափելը թելով):

Հասարակական և տոհմական գերեզմանատներ: Փորողը և կարգը: Առաջին բուռ հող ձգողը և տարածում գտած ասույթը:

Գերեզմանը փորելու ծեսերը (օր.՝ քահանայի օրհնությունը, մեռոն կաթեցնելը, բահ ու քլունգով խաչ կազմելը): Ննջեցյալի հետ արդյոք դրվո՞ւմ էր իր սիրած իրերից, ինչով էին հա-

նում տանից (դագաղ, պատգարակ): Հանգուցյալին վերջին հրաժեշտ տալը, հողին հանձնելը, խնկարկելը, ողորմաթաս խմելն ու այլ արարողություններ: Կանանց մասնակցության ձևը: Ննջեցյալի հետևից նրա հագուստը, զենքը, ձին տանելու սովորույթը: Կին և տղամարդ ննջեցյալների թաղման տարբերությունները:

Գերեզմանից հետդարձի ծեսերը (գերեզմանոցից վերադառնալու ճանապարհից չշեղվելը, հետ չդառնալը, կոշիկից գերեզմանոցի հողը մաքրելը, մինչև տուն մտնելը ձեռքերը լվանալը և այլն):

Ննջեցյալի հոգին հագեցնող և համայնքի միասնությունը հաստատող՝ ննջեցյալի հիշատակին նվիրված հացկերույթը՝ հոգեհացը:

Գերեզմանաքարերի ձևերը. վրայի փորագրությունները. ննջեցյալի հիշատակին կառուցվող հուշարձանները (աղբյուրներ, կամուրջներ, խաչեր, խաչարձան կոթողներ):

* * *

Ըստ էության, հուղարկավորման ծեսը իր ամբողջության մեջ խորհրդանշում է մարդու անցումը մի աշխարհից մյուսին: Թեման ներառում է հետևյալ խումբ հարցերը. առաջին՝ մահվան, հոգու և հանդերձյալ կյանքի հետ կապված ժողովրդական պատկերացումները հայոց մեջ: Այս ծեսերի շարքի բնութագիրը. ա) հոգեվարքն ուղեկցող ծեսերն ուղղված էին հեշտացնելու հոգին մարմնից անջատելու պահը: Այդ նպատակով դռներն ու պատուհաններն էին բացում, գլխի տեղն էին փոխում, դուրս էին հանում՝ երեսն արևելք ուղղում՝ հեթանոսական առումով Արև աստծուն ներկայացնում, ոմանք էլ նրա վրա էին դնում իր սիրած հագուստը կամ էլ պանդխտության մեջ գտնվող հարազատի լուսանկարը, շորը և այլն: Ապա մա-

հացողի ոտքերի տակ սև հավ կամ կատու են մորթել՝ որպես չարի, հոգեառ հրեշտակի մարմնացումներ[1]:

բ) Հաջորդ ծիսական շարքը ննջեցյալի մեղքերի թողության համար քահանայի ներկայությամբ կատարվող խոստովանության ծիսական արարողություն էր:

գ) Առանձին շարք են կազմում ննջեցյալի մարմնի հետ կապված ծեսերը, հանգուցյալի մարմինը հուղարկավորությանը նախապատրաստող արարողությունները. աչքերը փակելը, կամի կամ տախտակի վրա սառը ջրով լողացնելը, ծնոտը կապելը, լողացնելու տանելիս նրա տեղը մի քար դնելը՝ նոր մեռելից խուսափելու համար, բամբակի թելով ննջեցյալի ձեռքերը և ոտքերի բութ մատները կապելը, անլվա կտավով պատանքելը:

դ) Մի խումբ էր կազմում հանգուցյալի զգեստները պատանքի մեջ փաթաթելը և կարելը, հետագա ժամանակներում պատանքի փոխարեն դագաղի մեջ դնելը, դեմքին խաչաձև վարշամակ (նշխարը փաթաթած եռանկյունաձև ծալված կտորի մեջ) դնելը, կրծքին հացի կտոր դնելը, քանզի հացը ընկալվել է ոչ միայն սրբություն, այլև չարխափանության, հոգու հագեցման խորհրդանիշ:

Տանը հետ կապված ծեսերը ներառում էին հանգուցյալի տունը հուղարկավորության առիթով հատուկ հարդարելու սովորությունները. օրինակ՝ պատանքից ավելացած կտորը տան սյանը կապելը, արտացոլող երես ունեցող կահույքի, հայելիների վարագուրումը (որպեսզի հանգուցյալը նրանց մեջ իրեն չտեսներ և նոր մահ չպատճառեր ընտանիքին): Այս ծիսական շարքին հաջորդում էին հանգուցյալի հարազատների

[1] **Նահապետյան Ռ.,** Հուղարկավորման սովորույթներ և ծեսեր // Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, էջ 184-200:

սգո ծեսերը, սգո վարվելակարգային դրսևորումները. սև գույնի տարազ կրելը, մազերն արձակելը և հատուկ արարողությունները՝ ուղղված նրանց հանգուցյալից տարանջատելուն:

Մահը վրա հասնելուց հետո պոռթկում էին լացն ու կոծը, անգամ հուզականությունը սաստկացնելու համար «լալիք» (սգերգ) ասող կանանց էին հրավիրում, որոնք երգով գովերգում էին ննջեցյալի բարեմասնությունները, հագուստ-կապուստը, զենքն ու զրահը, ձին ու ձիավորությունը, այրի թողած կնոջն ու որբացած զավակներին: Սգո լացը, որպես ցավն արտահայտելու ծես, կոչվել է **ողբ, կոծ, մահերգ, սգերգ, ողբերգ, լացի երգ, ձենով լաց, լաց ու կոծ, բայաթի, մեռելի երգ**:

Ծիսական օրերի ընթացքում հանգուցյալը դառնում էր այն բջիջը, որի շուրջը համախմբվում էին հայրական և մայրական գծով արյունակից ազգականները, հարևանները՝ ընտանիքին սատարելու, նրա մասին հոգ տանելու, օգնելու, ննջեցյալի մոտ անքուն գիշերներ անցկացնելու: Հանգուցյալի տունը՝ մեռլատունը դառնում էր այն վայրը, որտեղ լուսաբացից մինչև մայրամուտ ազգական-բարեկամները, հարևան-ծանոթ համագյուղացիներն ու համաքաղաքացիները այցելում էին՝ հանգուցյալին հրաժեշտ տալու, մեռլատերերին իրենց ցավակցությունը հայտնելու և մխիթարելու: Քանի որ հանդերձյալ աշխարհի ճանապարհն ընկալվում էր իբրև մութ ու վտանգներով լի, կարևորվում էին հանգուցյալին լուսավորության մեջ պահելու միջոցները՝ մայրամուտից մինչև լուսաբաց հանգուցյալի շուրջը մոմեր վառելը, գերեզմանին կրակ վառելը, երեխա հանգուցյալների ձեռքին մոմ դնելը: Մեռելատանը յոթից-քառասուն օր ճրագը չէին հանգցնում: Հանգուցյալին օրհնում էին «լուսահոգի», «լույս հոգուն», «լույսը կաթի գերեզմանին», «Աստված հոգին լուսավորի» և այլ ասույթներով:

Ծիսական շարքի հաջորդ կարևոր արարողակարգը առնչվում էր արդեն ննջեցյալին տնից դուրս հանելու գործողություններին: Այս շարքի ծեսերն ուղղված էին նախ՝ նրա դրված տեղին, ապա դռանն ու շեմին, որպեսզի ննջեցյալին իբրև թե մոլորեցնեն և արգելափակեն հոգու հետդարձը. օրինակ՝ դագաղը տեղից երեք անգամ վերցնել-դնելը, տան ներսում դռանը երեք անգամ խփելը, պտտեցնելը, գանձ ասելու ծեսը հոգևոր քահանայի կողմից և այլն[1]:

Այս ծեսերում կարևորություն էր ստանում տան շեմը՝ որպես մուտք-ելք, կյանք-մահ խորհրդանշող սահմանաբաժան: Ընտանիքում հնարավոր նոր մահվան առաջը փակելով՝ ծալում էին գորգի անկյունը, տեղը քար էին դնում, սեղանն էին շրջում, հանգուցյալի հետ գերեզման էր տարվում չարն ու մահը:

Հրաժեշտի ծեսը ներառում էր ննջեցյալի ընտանիքի անդամների հրաժեշտը նրա հետ տան բակում և գերեզմանոցում:

Ծեսերի առանձին շարք էին գերեզմանը փորելը, քահանայի օրհնությունը, մեռոն կաթեցնելը, բահ ու քլունգով խաչ կազմելը և այլն:

Հարցեր և առաջադրանքներ:

Հուղարկավորում, ննջեցյալին ուղեկցվող սովորույթները: Կնոջ, տղամարդու, երեխայի հուղարկավորման սովորույթների տարբերությունները: Կախարդի անուն հանած մարդու, անձնասպանի, խեղդվածի, անհաղորդ մեռածի, կայծակնահար եղածի հուղարկավորման սովորույթները, նրանց գերեզմանների նկատմամբ ժողովրդական վերաբերմունքը: Սգի

---

[1] Մանրամասն տե՛ս **Բեգինյան Լ.,** Հուղարկավորության և հիշատակի ծեսերն ու սովորույթները Տավուշում արդի փուլում. ավանդույթներ և նորույթներ, պ.գ.թ. ատենախոսության սեղմագիր, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., Երևան, 2014 և ատենախոսությունը ընդգրկող հոդվածները:

տնտեսությունը: Հասարակական և տոհմական գերեզմաններ: Հուղարկավորողները և հուղարկավորման կարգը: Գերեզմանաքարերի ձևերը և գրությունները:

Հուղարկավորում և հիշատակման ծեսեր: Թաղման ծեսի գլխավոր գործողությունը, առանցքը, հանգուցյալին հուղարկավորելն էր, մայր հողին հանձնելը, որը վերադարձ էր իր սկզբնաղբյուրին: Այն պայմանավորում էր ծիսական պատկերացումների ողջ համակարգը: Որպես պարտադիր և կարևոր արարողություն՝ շուրջ մեկ տարի ընդգրկող ծեսը բնորոշվում է որպես թաղման ծես: Տղամարդ ննջեցյալի գերեզմանափոսը փորվում էր մինչև գերեզմանափորների գոտկատեղը, իսկ կանանցը՝ մինչև կուրծքը, որն առնչվում էր կին սատանայի հետ նույնացնելու և գերեզմանից նրա դուրս գալը կանխելու հավատալիքի հետ: Կանանց արգելվում էր հուղարկավորման ժամանակ գերեզմանատան տարածք մտնել, ուստի այդտեղ սպասում էին կամ ճանապարհի կեսից ետ էին դառնում:

Ըստ ժողովրդական մտայնության՝ հողում դնելով է, որ մարմինն ու ոսկորները գտնում են իրենց հանգստությունը, սկսվում է հոգու անցումը հանդերձյալ աշխարհ (գերեզմանը իբրև մուտք ընկալելը): Անթաղ հանգուցյալների համար խախտվում էր այդ կարգը: Ըստ ժողովրդական ընկալումների՝ հոգին կարծես մնում է երկրի վրա և կարող է վտանգավոր լինել՝ ընտանիքի նոր կորուստների պատճառ դառնալ, ահա թե ինչու մեծ ջանքեր էին ներդրվում կեղծ հուղարկավորություն (կենոտաֆ) կազմակերպելու, գերեզմաններ պատրաստելու համար: Նույնքան կարևոր էր համարվում հողը դրվող մարմնի ամբողջական լինելը:

Հուղարկավորության ծեսում դեռևս շարունակվող սովորույթներից են՝ ննջեցյալի կյանքը ներկայացնող դամբանա-

կան խոսքը, հոգեհաց տալը, հուղարկավորության գիշերը գերեզմանին կրակ վառելը (հոգին լույսի մեջ լինելու համար):

Հոգեհացը ննջեցյալի հիշատակին նվիրված, նրա հոգին հագեցնող և համայնքի միասնությունը հաստատող հատուկ ճաշկերույթ է: Հոգեհաց տալը գալիս է վաղնջական ժամանակներից. հնագիտական պեղումներից հայտնաբերվել են կավե տարբեր տեսակի անոթներ, որոնց մեջ եղել է ննջեցյալի բաժին ուտելիքը:

Ուշագրավ է, որ մեզանում ծիսական ճաշկերույթը ենթադրում է սեղանների պատրաստման յուրահատուկ կարգ՝ սրահի երկարությամբ միացված սեղաններով, մասնակիցների խմբվածությամբ, հացկերույթի բնույթի և մատուցվող ուտեստի ընդգծված տարբերակումով, տեսականիով, սպասքի պարզունակությամբ, կենտ և զույգ թվերի կիրառմամբ: Թաղման ծեսում կերակուրների պատրաստումը և հյուրասիրությունը, որոնք տարբեր ազգագավառներում տարբեր անվանումներով են հայտնի՝ **մըռլատան հաց, քելեխ, սգի սեղան** և այլն, հանգուցյալների պաշտամունքի դրսևորումներից է եղել բոլոր ժամանակներում: Ըստ սովորույթի՝ հուղարկավորության օրից սկսած՝ բոլոր ծիսական օրերին՝ **այգ**, յոթ, քառասունք, **տարի**, սգատերերն այն կազմակերպում են նախ հանգուցյալի գերեզմանին, ապա մեռելատանը կամ տաղավարներում:

«Հոգու բաժին» կամ «հանգուցյալի փայ» իմաստային ընկալման համաձայն՝ սգատան սեղանից օգտվելը մասնակիցների համար պարտադիր էր համարվում մեկ տարի շարունակ:

Հոգեհաց նախապատրաստելիս կարևորվում էր մասնակիցների ճիշտ հաշվարկը: Հացի նստելիս պահպանվում էին

ավանդական որոշ սովորույթներ՝ առաջինը սեղան էին նստելու տղամարդիկ, տղամարդիկ և կանայք նստում էին առանձին, տաք ուտելիքները առաջինը մատուցվում էին տղամարդկանց, ավարտում ու առաջինը ոտքի էին ելնում տղամարդիկ:

Ողորմաթասի կամ բաժակաճառի բովանդակությունը որոշարկված էր՝ 1) հանգուցյալի կենդանի հոգու, 2) ընտանիքի հին ու նոր հանգուցյալների և օջախի մխիթարության համար և այլն: Սեղանի ղեկավարում ստանձնում էր ազգատոհմի տարեցը կամ բանիմաց մեկը, հոգևորականը, եթե կատարվում էր նրա մասնակցությամբ:

Գերեզման պատրաստելու հոգսը հանգուցյալի ընտանիքինն է: Գերեզմանաքարը պետք է արտացոլեր ննջեցյալի ինքնությունը՝ դիմանկար, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ու մահվան տարեթվեր: Անցյալում քանդակվում էին ննջեցյալի զբաղմունքն արտացոլող պատկերներ: Գերեզմաններին վերագրվել են մարդուն չարից պաշտպանելու, վախը մաքրելու, բուժելու, օգնելու հատկանիշներ:

Մեռելոցներ:

Հարցեր և առաջադրանքներ:

Հիշատակման և նախնիների պաշտամունքի հետ կապված սովորույթների, ծեսերի ու հավատալիքների համակարգը հայոց մեջ:

Այգահող (էգնահողը) հուղարկավորության հաջորդ օրվա կեսին գերեզմանոց այցելելու հետ կապված արարողակարգեր (կանանց մասնակցությունը, որոնց արգելված էր ներկա գտնվել բուն հուղարկավորությանը գերեզմանոցում և հանգուցյալի տանը հաց տալը):

Մահվան յոթերորդ օրը գերեզման այցելելու սովորույթը՝ յոթը տալը, դրա օրինությունը, խնկարկումն ու հացկերույթը

հանգուցյալի տանը:

Քառասունքը՝ մահվանը հաջորդող քառասուն օրերի ընթացքում հանգուցյալի ընտանիքի անդամների վարքագծային որոշ կանոններն ու սահմանափակումները, դրանց ավարտը գերեզման այցելելուց, օրհնելուց, ուտեստից հանգուցյալի հոգուն բաժին տանելուց և քառասունքի հոգեհացը տալուց հետո:

Տարին նշելու արարողակարգը (այն ենթադրում է այցելություն գերեզման, օրհնություն, խնկարկում, ուտեստից հանգուցյալի հոգուն բաժին տանել և տարվա հոգեհաց մատուցել և այլն): Սգո ձևերի տևողությունը, ընդհանուր բնութագրությունը:

Ննջեցյալի հիշատակին կանգնեցվող հուշարձանները: Գերեզմանական հուշարձաններ կանգնեցնելը Հայաստանում շատ հին պատմություն ունի: Հնագույն շրջանից մեզ են հասել քարակույտերով ծածկված դամբարան-բլուրներ, վաղ միջնադարից՝ հաստատուն շիրմաքարեր (**Փ. Բուզանդ,** էջ 6,44, **Կ. Գանձակեցի,** էջ 10, 217), առանց արձանագրությունների, միջին դարերից՝ գերեզմանաքարեր՝ քանդակազարդ սյուն հուշարձաններ, իսկ XVIII-XIX դդ.՝ հարթաքանդակներով ու արձանագրություններով զարդարված հուշարձաններ՝ զբաղմունքը մատնանշող գործիքներով ու բուն աշխատանքի տեսակներով (Տախտակ 46):

Երեխաների հուղարկավորման կարգը: Երեխաների թաղման ծեսը առանձնանում էր նրանով, որ հուղարկավորումը նույն օրն էին կատարում: Գերեզմանոցում հուղարկավորում էին միայն քառասունքից դուրս եկած երեխաներին: Շիրմաքար դրվում էր հացով սնվող երեխաների համար՝ արգելելով մոր մասնակցությունը:

Սգի ձևերի տևողությունը: Այցելությունները գերեզմանոց

և հիշատակման ծեսերի բնույթը, կարգը: Հիշատակման առիթը, օրերը, փոխադարձ օգնության ձևերը, քահանաների մասնակցության հին և նոր դրսևորումները: Հուղարկավորման և հիշատակման նորովի դրսևորումների ձևերը հայոց մեջ:

Մեռելոցները հիշատակելու ծիսական օրերից են՝ **այգեհողը** կամ **էգնահողը**՝ հուղարկավորման հաջորդ օրվա արարողությունը: Կանանց արգելվում էր ներկա գտնվել բուն հուղարկավորությանը, և հաց էր տրվում գերեզմանոցում կամ ննջեցյալի տանը կամ տաղավարում:

Յոթը մահվան յոթերորդ օրը գերեզման այցելելն է և դրա օրհնությունը, խնկարկումը ու հացկերույթը ննջեցյալի տանը:

Քառասունքը մահվանը հաջորդող 40 օրերի ընթացքում հանգուցյալի ընտանիքի անդամների վարքագծային որոշ կանոններ ու սահմանափակումներն են, որոնք հանվում են վերջին օրը՝ գերեզման այցելելուց, օրհնելուց, ուտեստից, հանգուցյալի հոգուն բաժին տանելուց և քառասունքի հոգեհացը տալուց հետո:

Տարին մահվան մեկ տարին լրանալու օրվա ծիսակատարությունն է, որը ենթադրում է գերեզմանի այցելության, օրհնություն, ուտեստից հանդերձյալի հոգուն բաժին տանել և հոգեհաց մատուցել:

Օրացուցային օրերը հանգուցյալի ծննդյան, մահվան, հունվարի 2-ի և եկեղեցու գլխավոր 5 տոների տաղավարներին՝ Ս. Ծնունդ, Ս. Զատիկ, Վերափոխումն Ս. Աստվածածնի, Վարդավառի, Խաչվերացի այցելություններն էին:

Օրացուցային օրերից էին նաև ազգային նշանակության աղետներով պայմանավորված սգո օրերին այցելությունները՝ Ցեղասպանության (ապրիլի 24), երկրաշարժի զոհերի (դեկտեմբերի 7-ի), Արցախյան գոյամարտի զոհերի և այլ հիշատա-

կի օրերը:

Ծիսական այս և այլ արարողակարգերը կյանքի երևույթների անբաժանելի մասն են, ուստի դրանց ուսումնասիրությունը պատմաազգագրական տեսակետից կարևոր նշանակություն ունի:

Թեմայի վերաբերյալ գրականությունը տե՛ս գրքի աղբյուրների և գրականության ցանկում:

ԹԵՄԱ 5
ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

5.1. Ազգակցական համակարգը՝ ազգագրական գիտության հիմնախնդիր: Ազգակցական խմբի կառուցվածքը

Հարցեր և առաջադրանքներ:

Ազգ-կովկասյան ժողովուրդների պատրոնիմիա զուգահեռները և տարբերությունները: Ազգակցական համակարգի ուսումնասիրության կարևորությունը, արդիականությունը, խնդիրները: Ուսումնասիրվածության մակարդակը (Карапетян Э., Родственная группа “азг” у армян, 1966, Նահապետյան Ռ., Հայոց ազգակցական համակարգը, 2012):

, Ազգև ազգագրական հասկացությունը և նրա պատմական կապերը տոհմի հետ: Ազգի կազմավորման ընթացքը՝ մեկ ընտանիքի աճման հիման վրա: Կազմը: , Ազգև եզրույթի հոմանիշները, անվանումները՝ ըստ հայ մատենագրական և ազգագրական տվյալների: Տոհմածառեր: Արյունակցական աստիճանների հաշվառման կարգը: Որդեգրման, տնփեսայության ժողովրդական և իրավական ըմբռնումները: Հոգևոր ազգակցություն. կնքահայրություն, պսակի քավորություն, որդեգիրներ, , ախպերև, , կաթնախպերև, , կաթնաքիրև, , ավետարանի ախպերև, , ավետարանի քիրև, , քուրիկև և այլն: Ազգակցական հարաբերությունների կայունության պահպանման պատմաքաղաքական և տնտեսամշակութային հանգամանքները:

* * *

Ազգակցական համակարգ հասկացությունը և ուսումնասիրության աստիճանը: Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և մշակութային պատմության համակողմանի ուսումնասիրու-

թյան համար կարևոր նշանակություն ունի հասարակական ինքնակազմակերպման հնավանդ ձևերի փոխակերպումների հետազոտությունը: Դրանցից մեկը ազգ-արյունակցական խումբ ազգն է: Այն գիտական գրականության մեջ անվանվել է նաև պատրոնիմիա, որը հունարենից թարգմանաբար նշանակում է անվանում հայրական գծով՝ pater – հայր, onyma՝ անուն: Այս հիմնախնդրին հիմնավոր անդրադարձել է ռուս գիտնական Մ. Կոսվենը՝ «Семейная община и патронимия» (М., 1963), «История и этнография Кавказа» (М., 1961) աշխատություններում, որոնցում խոսվում է նաև հայկական ազգակցական համակարգի յուրահատկությունների մասին: Թեման հետազոտել են նաև Վ. Բդոյանը՝ «Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ», Եր., 1974, էջ 155-165, Է. Կարապետյանը՝ «Родственная группа “азг” у армян, Ер., 1966, Ռ. Նահապետյանը՝ «Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), պատմաազգագրական ուսումնասիրություն», Եր., 2012, և ուրիշներ: Վերջինս, ի տարբերություն նախորդ ուսումնասիրությունների, գրված է հիմնականում հեղինակի՝ արևմտահայերից գրառած ազգագրական նյութերի և հայ մատենագրական տեղեկությունների հիման վրա, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Այն բնութագրվում է **որպես նահապետական տոհմային կարգերին հատուկ և դասակարգային հասարակարգում գյուղական բնակչության մեջ մասամբ պահպանված հնագույն հասարակական ձև: Այդ ձևը մի մեծ նահապետական ընտանիքի՝ գերդաստանի բաժանման հետևանքով կազմված և միմյանց միջև տնտեսական, հասարակական, գաղափարական և տարածքային միասնությունը տարբեր չափերով պահպանած ազգակից, արյունակից մեծ կամ փոքր ընտանիքների խումբ է, ունի ընդհանուր ազ-**

գակցական անվանում՝ ազգի հիմնադրի անվամբ: Ուրեմն ազգը գերդաստանների ճյուղավորման հետևանքով կազմավորված արյունակից ընտանիքների խումբ է:

ա) Կառուցվածքը: Սովորաբար, ազգը իր նախնական փուլում կազմվում էր մեծ կամ փոքր թվով գերդաստաններից, սակայն հետագայում, տոհմական կարգերի քայքայմամբ և մեծ ընտանիքների տրոհմամբ պայմանավորված՝ ազգ-արյունակցական խումբ ազգը կարող էր կազմված լինել մեծ և միաժամանակ փոքր ընտանիքներից, իսկ ավելի ուշ՝ միայն փոքր ընտանիքներից: Նրանում ընտանիքների թիվը կարող էր լինել մի քանիսից մինչև 100-ը: Փաստորեն, ազգը արյունակից-ազգակից մարդկանց խումբ է, որի կազմում հաշվվում է 6-7 սերունդ արական գծով, սկսած ազգի հիմնադիր նախահորից՝ վարընթաց և կողմնային՝ հորիզոնական ճյուղավորումներով ընտանիքներից: Ազգը կազմավորվում է տղամարդկանց սերնդով: Տղամարդ չլինելու պարագայում, սովորույթի համաձայն, հեռավոր ազգականին որդեգրում էին: Որդեգրվածը ստանում էր ազգի անվանումը և օգտվում նրա բոլոր իրավունքներից:

Ազգը կազմավորվում է երրորդ սերնդից: Բացի արյունակիցներից, ազգի անդամ էին դառնում նաև հարսները: Հարս գնացողը արյունակից ազգի համար դառնում էր սոսկ «ցեղակից», իսկ սկեսրանց համար՝ ազգագրված ազգակից, ազգի նորաստեղծ ընտանիքի հիմք:

Հայոց մեջ «ազգ» տերմինը իմաստով բազմագործառույթ է. գերդաստան, մարդկանց խումբ ըստ սեռի (ազգ արանց), առանձին ժողովուրդ, էթնիկ հանրության բարձրագույն տիպ՝ **ազգն** հայոց, նախարարական տան անվանում և վերջապես՝ արյունակից ազգակից ընտանիքների միասնական խումբ:

Հայերի շրջանում ազգ-արյունակցական խումբ ազգի հա-

մար գործածվում են նաև «ազգ», «ազգական», «ազգակից», «ազգակցություն», «ազգուտակ», «տոհմ», «ազգատոհմ», «ցեղ», «ցեղակցություն», «արյուն», «դաս», «խսում», «լերդակից եղբայր» եզրույթները: Ազգ եզրույթին հոմանիշ են նաև օտարահունչ տերմինները՝ պարսկերեն՝ «թախում», թուրքերեն՝ «սոյ», արաբերեն՝ «թայֆա», «ջինս», «դոլ», «սենսիլե», քրդերեն՝ «պսման»՝ բոլորը ազգ, ցեղ, զարմ իմաստներով: Ազգակցությունը շեշտելու համար օգտագործվում են նաև «քոքուբուս»՝ «քոք» (արմատ), «բուս» (ծիլ), նշանակությամբ անվանումները: Գործածվել են նաև «տուն», «գերդաստան», «ազգ ու էրամ»՝ հեռավոր ազգականների խումբ իմաստով:

Ավելի մերձավոր ազգականները անվանվում են՝ «բիձոնք», «հոպարանք», «ապերանք», «ամիանք», «հոխպրտանք», «հոպկա ճժեր», «ախպոր տղերք»:

5.2. Ազգի գաղափարական միասնության դրսևորումները XIX–XX դդ.

Հարցեր և առաջադրանքներ:

Ազգանուններ. հին և ժամանակակից անվանումները:

ա) Ազգանվան նախնական ձևերը: *Ազգանունների առաջացման սկզբունքները (նախնու, բնակավայրի, տոհմական զբաղմունքի անուններով): Ժամանակակից ազգանուններ: Ազգանունների պաշտոնական և տեղական, տարածքային, բարբառային անվանումները: Ազգանունը փոխելու պատճառները, հետևանքները: Կրկնակի ազգանուններ, մականուններ: Ավանդական ազգանունների պահպանման հարցը մեր օրերում:*

բ) Ազգատոհմի գաղափարական կապերը: *Ազգի նախնիների հիշատակը հավերժացնելու միջոցառումները: Ամուսնության արգելքն ազգատոհմի ներսում: Ազգակցական գերեզ-*

մանաշարքեր և ազգակցական գերեզմանոցներ: Ազգին կամ ազգանդամին պատկանող սրբությունները (սրբատեղ, սուրբ գրքեր, շարժական առարկաներ): Ազգատոհմի ընդհանուր ղեկավարը: Ազգակցական ընդհանուր ժողովները և ազգատոհմի միասնության քարոզը: Մայր ընտանիքների դերը կրտսեր ընտանիքների դաստիարակության գործում: Կենտրոնախույս ընտանիքների նկատմամբ ազգատոհմի բռնած դիրքը: Ազգատոհմի բարոյական կապերը: Իգական սեռի պատվի պաշտպանությունը: Հոգևոր ազգակցություն՝ կնքահայրություն, պսակի քավորություն, որդեգիրների կապերը և այլն: Տոհմածառեր կազմելու և պատմությունը գրելու գաղափարական արմատները:

Ազգատոհմային կապերը և դրսևորման ձևերը մեր օրերում:

Ազգատոհմի տնտեսական-արտադրական ընդհանրությունը ժամանակի ընթացքում ավելի շուտ է թուլանում և անհետանում, քան գաղափարական և տարածքային ընդհանրությունը: Ազգատոհմի գաղափարական ընդհանրությունը դրսևորվում է առաջին հերթին ազգի ինքնանվան պահպանման մեջ, որ ծագում է ազգը հիմնադրող նախնու անունից: Ազգանվան նախնական ձևը նույնքան հին է, որքան ամուսնության պատմությունը, այն ևս անընդհատ զարգացում է ապրել: Հայկական ազգանունը վաղ միջնադարում ձևավորվել է երեք հիմնական սկզբունքներով. 1) ամենահինը՝ նախնու անունով, 2) ծննդավայրի անունով, 3) զբաղմունքի անունով: Ազգի հիմնադրի մասին հիշողությունը պահպանվում է մինչև 6-7 սերունդ, երբեմն նաև ավելի: Մասնագիտությունը դրվում էր ինքնանվանման հիմքում այն ժամանակ, երբ այն դառնում է տվյալ ազգատոհմի գլխավոր և ժառանգական զբաղմունքը՝ Ոսկերչյան, Դարբինյան և այլն, այն էլ հիմ-

նականում արևմտահայոց շրջանում: Այնտեղ, որտեղ բնակչությունը հիմնականում տեղաբնիկները (Ստեփանավան, Գորիս) և պարսկահայ վերաբնակիչներն էին (Սիսիան, Աշտարակ և այլն), որտեղ բնակչությունը գերազանցապես երկրագործներ էին, զբաղվում էին բնատնտեսությամբ՝ ազգատոհմերը ճանաչվում էին հիմնադրի անվամբ: Երբեմն ազգը կարող էր կորցնել հիմնադրի անունը, նման պարագայում այն հիշվում էր ազգատոհմի համար ընդհանուր դարձած զբաղմունքի անվանմամբ: Հնաբնակները նորեկներին անվանում էին այն բնակավայրի անվամբ, որտեղից նրանք եկել էին:

Ազգի հիմնադրի անվան մոռացության պայմաններում կարող էր հիշատակվել նրա վարքագծով կամ ֆիզիկական որևէ հատկանիշով՝ Սիրունյան, Չոլախյան, Բոզոյան և այլն: Մեր իրականության մեջ կան նաև իգանուն ազգանուններ՝ հիմնականում ազգի հիմնադրի կնոջ անվամբ. կին, որը աչքի է ընկել խիզախությամբ, իմաստնությամբ, երբեմն էլ՝ անբարոյական վարքով՝ ազգը ձաղկելու, պախարակելու միտումով:

Հնում ազգանունը այսօրվա նման մի ընդհանուր վերջավորություն չի ունեցել, և որևէ մեկին հիշատակելու համար տալիս էին նախ՝ նախնու, ապա՝ պապի, այնուհետև՝ հոր անունները. օրինակ՝ Ավետներաց Մարգարի Մկոյի Ենոք, որ նշանակել է՝ Ավետի ազգատոհմի Մարգարի որդի Մկրտիչի տղա Ենոք: Ժամանակակից ազգանվան հիմքը դրվեց XVII-XVIII դարերում: Ազգանունը մատնանշող վերջավորություններն էին՝ «անց», «անք», «եանք», «եց», «ենց», «ից», «ունց», «ոնց» (օր.՝ Բաբենց, Սահականց, Սևունց և այլն): Սրանց հետագայում հավասարազոր են դառնում «յան», «յանց», «ունի», «ունց» ավելի գործածական վերջավորությունները: Այսպիսի վերջավորությամբ ազգանունները հիմնականում փաստաթղթերում էին գրանցվում, մինչդեռ

գյուղական բնակավայրերում հիշատակում էին տոհմավագի անվանումը՝ ավելացնելով «անք», «ենք», «ենց», «անց» վերջաածանցները: Ռուսական միջավայրում այդ անվանը ավելացվում են «և», «ով» (Լազարև, Ղուկասով) վերջավորությունները:

Ազգատոհմի գաղափարական ընդհանրության կարևոր ցուցիչներից էին ավագների նկատմամբ հարգանքը, պատվելը, մեծարելը: Ազգի մեծը կրել է «սպիտակամորուս», «նահապետ» և օտարահունչ «ջոջ հայր», «թախումի քոթուկ», «այա», «ամի», «թայֆայի ախսակալ» պատվանունները: Նա տվյալ ազգատոհմի ամենատարեց ու հարգված անձն էր: Ազգատոհմերի մեծերը գյուղական համայնքի մեջ տարերայնորեն անպաշտոն ձևով ներկայացնում էին յուրօրինակ ծերակույտ, որոնք նշանակալից դեր էին խաղում համայնքի կենցաղային բազմապիսի հարցերի դրսևորման, վիճելի խնդիրները խաղաղությամբ լուծելու, ամուսնության ավանդական կարգը պահպանելու, հողային հարաբերությունները կարգավորելու և շատ այլ հարցերի գծով: Նրանց վրա էին ընկնում ընդհարված ազգատոհմերին հաշտեցնելու պարտականությունները, որը հաճախ ավարտվում էր կողմերին խնամիացնելով: Ազգի մեծի կինը դառնում էր ազգատոհմի կանանց խորհրդատուն, աչքի էր ընկնում իր իմաստնությամբ, ժողովրդական բժշկության հմտություններով մանկաբարձի փորձառությամբ: Փաստորեն, ազգի մեծը կրում էր համարյա նույն պարտականությունները, ինչը հատուկ էր տոհմավագներին:

Ազգատոհմի գաղափարական, հասարակական միասնության դրսևորումներից մեկն էլ ազգակիցների ընդհանուր գերեզմանոցի առկայությունն է:

Ազգովի համերաշխությունը, համախմբվածությունը դրսևորվում էին ամուսնահարսանեկան, մանկան ծննդի և

խնամքի, ընտանեկան տոների, հուղարկավորման, դժբախտության, արհավիրքների և այլնի դեպքերում: Համերաշխության պահպանման գրավականներից մեկն էլ ազգատոհմի ինքնապաշտպանությունը համատեղ կազմակերպելն էր:

Ազգատոհմի մեջ պահպանվել է նաև վրիժառության, ազգի պատիվն ու թասիբը պաշտպանելու զգացումը: Ազգի միասնության կարևոր դրսևորումներից մեկն էլ բարոյական նորմերի անաղարտության ապահովումն էր: Ազգի յուրաքանչյուր անհատին հատուկ է եղել արժանապատվության գիտակցությունը: Ազգատոհմի բոլոր անդամները պաշտպանում էին ազգի շահերը, իսկ ազգն էլ ամբողջ ուժով պաշտպանության տակ էր առնում յուրաքանչյուրին: Հակամարտությունների պատճառ են եղել հողային հարաբերությունները, բարոյական վարքագծից առաջացած վիրավորանքը: Առևանգումը, կանանց սիրահետելը, երեխաներին նեղացնելը և այլն վրիժառության բուն պատճառներից էին:

Համայնքի միջամտությամբ վրիժառությունը կասեցվում էր խնամիական կապերի հաստատմամբ և նյութական միջոցների հատուցմամբ: Դրա հիմքում նաև քաղաքական և կրոնական հանգամանքներն էին:

Ազգատոհմային համերաշխության և միասնության դրսևորումներից էին մերձավոր ազգականների միջև ամուսնությունը կանխելը մինչև յոթ պորտը լրանալը, ընդհանուր պաշտամունքային սրբություններ ունենալն ու համատեղ արարողություններ կատարելը, ազգատոհմային և համայնքային միջոցառումները (տոներ, մատաղ, հյուրընկալություն) համատեղ կազմակերպելը:

5.3. «Ազգ»-ի տնտեսական միասնության դրսևորումները XIX–XX դդ.

ա) Ազգի ընդհանուր սեփականության դրսևորումները:

Հարցեր և առաջադրանքներ:

Ազգակցական խմբերի վարելահողերի, անտառամասերի, արոտավայրերի տիրապետման սկզբունքները: Ազգի համընդհանուր այգիները և վար ու ցանքի գործիքները, արտադրական շենքերն ու կալերը, թոնիրները, սանդերը և այլն: Ազգակցական անասնապահության մեջ անասունների սեփականության նշանները, ընդհանուր պահպանակները՝ , դաղման-ները (ականջները կտրելով ու ճեղքելով, դեմքերը կամ ազդրերը դաջելով նշաններ թողնելը): Սեփականության ժառանգման կարգը: Սոցիալական անհավասարության դրսևորումները ազգատոհմի ներսում: Ազգի ընդհանուր սեփականության դրսևորումները խորհրդային և հետխորհրդային պատմաշրջանում:

բ) Նյութական փոխօգնության դրսևորումները ազգատոհմում:

Նյութական փոխօգնություն՝ աղքատության, դժբախտության, մահվան և հուղարկավորման, արհավիրքի, ամուսնության, հարսանիքի, սերնդաճի և այլ կարգի ծախսերը հոգալու հարցերում: Որբախնամք: Դրանց դրսևորման մնացուկային երևույթները ներկայումս:

գ) Տնտեսական-արտադրական ազգովի ընկերակցության կազմակերպման մնացուկային դրսևորումները:

Աշխատանքային կոլեկտիվ ընկերակցությունների կազմավորման ձևերը բնակարանաշինության, շինարարական այլ աշխատանքների, երկրագործության, անասնապահության և այլ ոլորտներում: Ընկերակցությունների կազմակերպման

սկզբունքները: Դրանց նորովի դրսևորման մնացուկները, մեկնաբանությունները:

* * *

Ազգի տնտեսական միասնությունը դրսևորվել է՝ ա) ազգի ընդհանուր սեփականության, բ) նյութական փոխօգնության, գ) տնտեսական-արտադրական ազգովի ընկերակցություններ-ի կազմակերպման հարցերում:

ա) Ազգի ընտանիքները միմյանց հետ կապված էին նաև տնտեսական շահերի միասնությամբ՝ հողօգտագործման և հողատիրության ժառանգական սեփականությունից, արտադրության թանկարժեք միջոցներից՝ ջրաղաց, ձիթհան, գութան և այլն, համատեղ օգտվելու և փոխօգնության կարգով: Ազգատոհմին պատկանող անշարժ ունեցվածքը՝ հողը, նրա ընտանիքների համատեղ սեփականությունն էր և օտարման ենթակա չէր: Այն կոչվում էր պապենական հող: Հողի օտարումը կարող է կատարվել միայն ազգի ներսում: Համազգի հողամասերը չէին վաճառվում կամ օտարվում առանց ազգի ընտանիքների ընդհանուր համաձայնության: Բաժանքի ժամանակ հավասար ախպերաբաժին էին արվում:

Ազգի տնտեսական ընդհանրությունը դրսևորվում էր նաև արոտավայրերը համատեղ օգտագործելու ձևերում:

բ) Ազգովի համատեղ էին կազմակերպվում երկրագործական, անասնապահական կոլեկտիվ ջանքեր պահանջող վար ու ցանքի, բերքահավաքի, կալման, բերքը տուն հասցնելու, սննդանյութերը վերամշակելու, անասունները արածեցնելու, արոտավայրերում ամառանոցային կացարան հիմնելու, անասնապահությունը և կաթնատնտեսությունը կազմակերպելու, բնակարանաշինության, ինքնապաշտպանության ապա-

հովման և այլ աշխատանքները:

գ) Տնտեսական արտադրական ընկերակցությունների կազմակերպումը ազգատոհմի կարևոր հատկանիշներից էր: Մեծ ջանքեր և միջոցներ պահանջող աշխատանքների իրագործման համար ազգի ընտանիքները միավորում էին աշխատող ուժը, աշխատանքային գործիքները, բանող անասունները, կազմակերպվում էին կոոպերացիաներ: Ազգագրական այն շրջաններում, որոնցում ավելի կայուն էին պահպանվել ազգակցական կապերը, այդ ընկերակցությունները՝ կոոպերացիաները իրագործվում էին ազգատոհմային սկզբունքներով: Ըստ որում՝ նման ընկերակցության մեջ ներդրած միջոցներով որոշվում էին ընկերակցության մեջ մտնող ընտանիքների իրավունքներն ու պարտականությունները: Երկրագործության մեջ այդ ընկերությունները կոչվում էին **հարակաշ,** անասնապահության մեջ՝ **սարի համկալ**:

Ազգակցական հարաբերությունները ավելի կայուն էին պահպանված լեռնային, քաղաքային կյանքից հեռու, հաղորդակցության երթուղիներից կտրված շրջաններում, ինչպես օրինակ՝ Սասունում և այլուր: Բացի այդ, նահապետական հին հարաբերությունների կայուն պահպանվածության, հին, իր դարն ապրած աշխատանքային գործիքների կիրառման, արտադրողական ուժերի անբավարար զարգացածության, աշխարհագրական, բնաէկոլոգիական բարդ պայմաններում մարդկային կյանքի գոյության հիմնական միջոցներից էր կոլեկտիվ ջանքերի գործադրմամբ դժվարությունները հաղթահարելը, կյանքը կազմակերպելը: Ազգը պարտավոր էր հոգալ այն ազգանդամի հոգսերը, որոնք առաջանում էին տարերային աղետների հետևանքով:

5.4. «Ազգի» տարածքային միասնության ավանդական և ժամանակակից դրսևորումները

Հարցեր և առաջադրանքներ:

Ազգատոհմի տնտեսական-արտադրական, ինքնապաշտպանության համատեղ կազմակերպման, գաղափարական շահերի միասնության ապահովման նպատակով ազգակից ընտանիքների համատեղ բնակեցման դարավոր սովորութային դրսևորումները: Ազգակցական թաղերի ձևավորումը, անվանումները, ակնատային համակարգը, կցաթաղեր:

Ազգակցական համատեղ բնակեցման կարգը ժամանակավոր բնակավայրերում՝ ամառանոցներում և ձմեռանոցներում: Դրանց աստիճանաբար մշտական բնակավայրերի վերածվելու գործընթացները:

Ազգի թաղավորման ձևերի պահպանումը 1920-1930-ական թթ. և դրանց վերացման ընթացքը 1950-90-ական թթ.:

Ազգակցական հարաբերություններում տարածքային և տնտեսական կապերի թուլացումը նոր ժամանակներում: Ազգի գաղափարական միասնության պահպանվածության աստիճանը, դրա նորովի դրսևորումները:

Ազգատոհմի տնտեսական և գաղափարական շահերը պահանջում էին փոխադարձ օգնություն և ինքնապաշտպանության հնարավորություն, որի գլխավոր պայմանը ազգի ընտանիքների համատեղ բնակվելն էր՝ երբեմն կազմելով առանձին գյուղ կամ գյուղակ (օր.՝ Լոռիում XIX դ. վերջում կար երկու գյուղ՝ Այգեհատ և Արդվի, որոնց բնակչությունը ամբողջովին կազմված էր մեկ մեծ գերդաստանի անդամներից, Այգեհատը բնակեցված էր Շահվերդյանների կողմից, Արդվինը՝ Քալանթարյանների), իսկ հետագայում առավելապես ներկայանում էին իբրև առանձին թաղամաս: Ազգովի թաղերով բնակեցման համակարգը

ավելի կայուն էր ու հարատևել է մինչև XX դ. 50-ական թթ. լեռնային բնակավայրերում, որտեղ չկար բնակչության հոսունություն: Ազգակից ընտանիքների տները դասավորվում էին թիկունք թիկունքի, կողք կողքի՝ հորիզոնի բոլոր կողմերը ուղղված մուտքերով, իսկ կտուրները մի ընդհանուր հարթություն էին կազմում: Ազգակցական թաղերի տները սերտորեն հաղորդակցվում էին ոչ միայն դրսից, այլև ներսից՝ տների բաժանարար պատերից թողնված փոքրիկ պատուհաններով կամ նեղլիկ դռներով՝ **ակնատներով** կամ **դրիճակներով**՝ միմյանց լուրեր փոխանցելով, իրեր փոխանակելով, վտանգի դեպքում միմյանց տներում պատսպարվելով, համատեղ ինքնապաշտպանության դիմելով: Ակնատները այլ վայրերում հայտնի էին նաև **շբակ** (Սասուն), **խոռ** (Մուշ), **ակնակ** (Տիգրանակերտ) և այլն: Կոչվել է նաև **աչկունք**, որ ծառայել է նաև որպես խորշ, որմնապահարան:

Ազգակցական թաղը ճարտարապետական մի համախումբ համալիր էր, որի կտուրները ծառայում էին երթևեկի, կոլեկտիվ աշխատանքների կազմակերպման, ժողովների անցկացման, մանկապատանեկան, սպորտային խաղերի, հարսանեկան պարերի և այլ նպատակների համար:

Լեռնային կտրտված տեղանքներում, ինչպես Սասունում, Պոնտոսում, տները միմյանցից հեռու էին ընկած, ունեին անառիկ դիրք, որոնց բնակչությունը աչքի էր ընկնում ռազմական, ինքնապաշտպանական հմտություններով:

Հետագայում, օրինակ՝ խորհրդայնացման տարիներին, ազգովի համատեղ բնակեցումները արտադրական կոլեկտիվների ստեղծման հիմք էին դարձել. բրիգադները, օղակները տարածքային սկզբունքներով էին կազմակերպվում:

Այսպիսով, կարելի է առանձնացնել ազգովի համատեղ

բնակեցմամբ երեք տիպի բնակավայրեր՝ առաջին և ավելի նախնական բնակեցում՝ ամբողջովին ազգովի ընտանիքներով բնակեցված բնակավայր, երկրորդ՝ ազգակցական թաղերով այլոց հետ բնակեցում, որը բնորոշ էր ուշ հասարակական զարգացման դարաշրջաններին և ավելի մերձավոր՝ եղբայրական ընտանիքներով համատեղ տներով բնակեցում, որը գոյատևեց մինչև 1950-ական թթ., հատկապես գյուղական բնակավայրերում:

ԹԵՄԱ 6
ՀԱՅՈՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ XIX–XX դդ.

6.1. Հայկական գյուղական համայնքի ընդհանուր բնութագիրը

Հարցեր և առաջադրանքներ:

Գյուղական համայնքը որպես սոցիալական կազմակերպության հնավանդ ձև: Գյուղական համայնքի առաջացման ժամանակը, հարատևման սոցիալ-տնտեսական ու պատմա-քաղաքական դրդապատճառները հայոց մեջ:

Սոցիալական այս կառույցի ուսումնասիրության արդիականությունը, նպատակը, խնդիրները, թեմայի ուսումնասիրվածության արդի վիճակը (**Егиазарян С.,** Сельская община, Казань, 1889, **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. III, 1941, **Լ. Խաչիկյան,** XIV-XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին // ՊԲՀ, 1958, № 1, **Мочалов В.,** Сельская община в Закавказье // Исторические записки, 1960, № 67, **Ս. Հակոբյան,** Գյուղական համայնքը Հայաստանում 15-18-րդ դդ. // ՊԲՀ, 1973, № 2, **Ա. Հակոբյան,** Գյուղական համայնքը Կարսի մարզում // ՊԲՀ, 1987, № 1, **М. Акопян,** Сельская община в Восточной Армении (во второй половине XIX-начале XX вв.), Ер., 1988, **А. Мкртчян,** Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX – начало XX вв.), Ер., 2010), **Նահապետյան Ռ.,** Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), ԵՊՀ հրատ., Եր., 2012 և այլն:

Գյուղական համայնքի սոցիալական բաղադրատարրերը, կազմը, կառուցվածքը, կառավարման պետական, վարչական, սովորութաիրավական համակարգերը: Համայնական ժողովները, հրավիրելու կարգը, օրը, ղեկավարը, կազմը, ձայնի իրավունքը: Գյուղական պաշտոնեությունը: Շինական, վար-

չական և դատական մարմինները (տանուտեր, քյոխվա, մելիք, գանձապահ, դատավոր, զզիր), դրանց նշանակման կամ ընտրության կարգը: Գյուղական ժողովների վարչական, դատական, հարկման իրավասությունը:

Դրացիական հարաբերություններ: Ազգ-արյունակցական խումբ ազգը ավելի նախավանդ պատմական գոյաձև է, քան գյուղական կամ հարևանական համայնքը: Հնավանդ սոցիալական այս ինստիտուտի առաջացումը ևս վերաբերում է հասարակության զարգացման վաղ դասակարգային փուլին, երբ ազգակցական կապերը քայքայվում էին, հանգամանք, որը հանգեցրել էր գյուղական համայնքի առաջացմանը և հարևանական հարաբերությունների զարգացմանը:

Գյուղական համայնքը իր նախորդից՝ տոհմական համայնքից ժառանգել էր փոխադարձ օգնության և համերաշխության մի շարք գծեր, սովորություններ, միաժամանակ ձեռք էր բերել նաև նոր հատկանիշներ:

Հասարակական վաղեմի այս երկու կառույցները, որ երկար դարեր գոյատևել են միահյուսված, սկզբունքորեն տարբերվել են միմյանցից: Ազգատոհմը հիմնվում էր արյունակցական, մինչդեռ հարևանական համայնքը՝ տարածքային կապերի վրա: Ազգատոհմը և հարևանական համայնքը նման են միմյանց այն առումով, որ երկուսն էլ պահպանում են կոլեկտիվ և մասնավոր սեփականության շատ տարրեր, որոնք հիմնականում պայմանավորում են համատեղ և համաժամանակյա գոյությունը: Սովորաբար հարևանական համայնքը գործում էր և այժմ էլ գործում է գյուղի, երբեմն էլ՝ հարևան գյուղերի շրջագծում, մինչդեռ ազգատոհմը՝ այդ գյուղերի մի առանձին թաղամասում կամ նրա մի մասում: Ազգատոհմը հարևանական համայնքի մի մասն էր: Դասակարգային այս կամ այն հասարակության մեջ

գոյատևելով՝ այն կրում է տվյալ հասարակության դրոշմը, այս կամ այն ձևով արտացոլում նրա առանձնահատկությունները:

Գյուղական համայնքը ուներ սոցիալական լայն գործառույթներ. պաշտպանում էր ավանդական հարաբերությունները, կատարում սոցիալական կարգավորողի դեր: Ներհամայնքային կյանքում գործում էին չգրված և գրված օրենքներ, որոնք կարգավորում էին համայնքի ներանձնային, տնտեսական և սոցիալական հարաբերությունները:

Գյուղական համայնքում ընտանիքներին շաղկապողը ոչ թե ազգակցական, այլ տնտեսական-արտադրական փոխադարձ կապերն էին, որով համայնքը դառնում էր տարածքային համայնք: Գյուղական համայնքի ներսում, նրա անդամների փոխհարաբերություններում, չնայած գույքային շերտավորմանն ու սոցիալական անհավասարությանը, պահպանվում էին փոխօգնության և համերաշխության հնավանդ մի շարք սովորություններ: Այն դրսևորվում էր կյանքի բոլոր բնագավառներում, ուրախության և տխրության օրերին: Ասում էին՝ մոտ հարևանը ավելի լավ է, քան հեռավոր բարեկամը:

Հարցի ուսումնասիրության արդիականությունը: Գյուղական համայնքի ուսումնասիրությունը արդի ազգագրական գիտության հիմնախնդիրներից է: «Գյուղական համայնք» եզրույթը հանդես է գալիս որպես զուտ գիտական հասկացություն, արտահայտում է հարաբերությունների, կապերի, փոխազդեցությունների համալիր, ապահովում է գյուղական կոլեկտիվի տարածքային միասնությունը: Ժամանակակից գիտության մեջ գոյություն ունի համայնքի վերաբերյալ տեսակետ, ըստ որի՝ համայնքը տնտեսական, սոցիալական-վարչական և մշակութակենցաղային կազմակերպություն է՝ ստեղծված հնավանդ հասարակության բնապատմական հարաբերությունների ընթաց-

քում, որտեղ գոյություն է ունեցել բնափակ տնտեսություն: Այդ-պիսի հասարակությունում անհատի, ընտանիքի գոյությունը խարսխված էր տարածքային կապերի վրա և «ազգ-արյունակ-ցական», ապա նաև «հարևանական» համայնքներից դուրս անհնարին էր:

Որո՞նք են եղել գյուղական համայնքի բնորոշ գծերը. ա) հա-մայնքային համագործակցությունը և փոխօգնությունը տնտե-սության մեջ և կենցաղում, բ) հավասարության պահպանումը հողաբաժանության հարաբերություններում, գ) համայնքային ինքնակառավարման կարգը սոցիալական բնագավառում, դ) համայնքի միասնությունը և փոխօգնությունը հասարակական ինքնագիտակցության ոլորտում:

Գյուղական համայնքի հատկանիշները: Գյուղական հա-մայնքը առաջացել է տոհմային հասարակությունից՝ նրանից ժառանգելով մի շարք գծեր. անխախտ էր մնում հողի նկատ-մամբ ընդհանուր սեփականությունը, որը աստիճանաբար է վե-րածվել առանձին ընտանիքների մասնավոր սեփականության: Հողը բաժանվել կամ վերաբաժանվել է պարբերաբար համայն-քի մեջ մտնող ընտանիքների միջև՝ ըստ շնչերի քանակի, հողի մշակման ֆիզիկական հնարավորության, այսինքն՝ ըստ բանող անասունների և աշխատանքի գործիքների առկայության ու սպառման պահանջի: Հողի մի մասը՝ արոտավայրերը, անտառ-ները, լճերը, հանքերը և այլն, մնացել էին հանրային ընդհանուր օգտագործման: Համայնքի կոլեկտիվ ջանքերով էին իրակա-նացվում ոռոգման առուներ, ջրանցքներ անցկացնելու, ցանքերը հեղեղումներից պաշտպանելու, ինքնապաշտանության համար ամրություններ կառուցելու, ճանապարհներ բացելու և այլ աշ-խատանքները: Համայնքում կազմակերպվում էին աշխատան-քային ընկերակցություններ:

Գյուղական համայնքի վարչական կառուցվածքը: Վարչական իրավական մարմինները: XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ բնակչության հիմնական մասը գյուղացիությունն էր, որի սոցիալական կազմակերպության ձևը գյուղական համայնքն էր: Յուրաքանչյուր գյուղական համայնք հանդես էր գալիս որպես առանձին վարչական միավոր:

Գյուղական համայնքի բարձրագույն օրենսդիր մարմինը համայնքի ընդհանուր ժողովն էր, որ սովորաբար հրավիրվում էր կիրակի օրերին: Համայնքային ժողովին իրավունք ունեին մասնակցելու համայնքի բոլոր տնտեսությունները, յուրաքանչյուր ծուխ ուներ մեկ ձայն: Կանայք չէին մասնակցում գյուղական համայնքային ժողովին: Ժողովը հրավիրվում էր գյուղի սոցիալ-տնտեսական կյանքին առնչվող հարցեր առաջանալիս: Ժողովին տոն էին տալիս գերդաստանների նահապետները: Համայնաժողովը ուներ գործունեության լայն շրջանակ: Սովորաբար գումարվում էր գյուղի հրապարակում կամ եկեղեցու բակում: Ժողովին մասնակցելու իրավունք ունեին 20 տարին լրացած տղամարդիկ, իսկ 25-ից բարձր տարիքում նրանք իրավունք ունեին ընտրվելու վարչական մարմիններում: Ժողովին իրավունք չունեին մասնակցելու դատված տղամարդիկ, կանայք: Ժողովը իրավասու էր քննելու մի շարք հարցեր. 1) հողաբաժանման իրականացումը, 2) դաշտային աշխատանքների սկիզբը և ավարտը որոշելը, գյուղական պաշտոնատար անձանց ընտրությունները, կազմակերպական հարցեր, գյուղական համայնքից որոշ մարդկանց հեռացնել և նոր մարդկանց ընդունել, պետական և համայնքային պարհակների բաշխման, պաշտոնատար և օտար հյուրերի ընդունման, համայնքային վեճերի լուծման, օտար նվաճողների դեմ պայքարի կազմակերպման, առուների, ջրանցքների,

ճանապարհների անցկացման և այլ բնույթի հարցեր:

Համայնքային ժողովները սովորաբար գումարվում էին տարին երկու անգամ՝ վաղ գարնանը, երբ նախապատրաստվում էին դաշտային աշխատանքների իրականացմանը, և ուշ աշնանը՝ բերքահավաքը ավարտելուց հետո:

Գյուղական ժողովի կողմից ցանկացած որոշում ընդունելուց հետո այն դրվում էր պետական-վարչական մարմինների քննարկմանը, որոնք իրավունք ունեին հաստատել կամ չեղարկել, ուստի համայնքը կախման մեջ էր պետությունից:

Համայնքապետը, գզիրը, գրագիրը, դաշտային պահակները, ջրաբաշխները ազատվում էին բոլոր տեսակի հարկերից: Կարևոր դեր էին խաղում նաև գյուղական տերտերներն ու մյուս հոգևորականները:

Համայնքային ժողովը տանուտեր կամ գյուղապետ (գեղջավագ) ընտրում էր 3 տարով, երբեմն նույնիսկ 6-7 տարով: Նախնական շրջանում տանուտերի պաշտոնում ընտրում էին տարեց, գիտակ, հեղինակավոր, փորձառու, լեզուներ իմացող մարդկանց, որոնք հարգանք էին վայելում համայնքում, և միջնադարյան աղբյուրներում հիշատակում էին «գեղջավագ», «տանուտեր», «ձեռնավոր» անվանումներով: Նրա կարգադրությունները համայնքի անդամներին էր հասցնում գզիրը: Հետագայում տանուտիրոջ պաշտոնը կենտրոնանում է գյուղի ամենաազդեցիկ գերդաստանի նահապետի ձեռքին, որը ժառանգական լինելու միտում է ունեցել:

Գյուղական համայնքի առաջնորդը Արևմտյան Հայաստանում XIX-XX դդ. կոչվել է **ռես** կամ **ռաիս** (արաբ.), իսկ պարսկահայ շրջաններում՝ **քյաղխուդա** կամ **քեղխուդա, քյոխվա**: Նրա պարտականություններն էին՝ կարգավորել համայնքի ներքին գործերը, հսկել հողերի հատկացումները, ջրերից, ան-

տառներից, արոտավայրերից օգտվելու համար սահմանված կարգ ու կանոնը, կարգավորել համայնականների միջև ծագած վեճերը: Գեղջավագ-տանուտերը ճանաչվել է նաև պետության իշխանության ներկայացուցիչ: Նա էր տնօրինելու պետական հարկերի գանձումը, զինվորական ծառայության, զանազան պարհակների և այլ պարտականությունների կատարումը: Հայաստանի մի շարք գավառներում նա հայտնի է եղել նաև որպես **ավագ շենին, գյուղերեց, գյուղապետ, գլխավոր գեղջն, դասապետք շինականաց, տանուտեր**:

Գյուղական ավագների խորհուրդը համայնքի ինքնակառավարման կարևոր մարմին էր, կազմված էր լինում գյուղի հարգված մեծերից, որոնց անվանում էին **հալիվոր, սպիտակամորուք,** որոնք գերազանց տիրապետում էին գյուղի նիստ ու կացին, ժողովրդական ավանդույթներին: Արևմտյան Հայաստանում այն անվանվում էր **գյուղական մեջլիս**, որը նաև գյուղական դատարանն էր, որ առաջնորդվել է բանավոր սովորութային դարավոր ավանդույթներով: Յուրաքանչյուր համայնք ուներ իր գզիրը՝ հրահանգներ կատարող անձը, և գրագիրը՝ գրագետ մարդ, որը կատարելու էր գրագրությունը: Այդ պարտականությունը կատարում էր գյուղի քահանան:

Հողային հարաբերությունները և համայնքի սոցիալական կառուցվածքը: Գյուղական համայնքը տնտեսական մի ամբողջություն էր: Հանդես էր գալիս որպես տվյալ գյուղի հողային ֆոնդի և ջրի, արորտավայրերի, անտառների հիմնական մասի սեփականատեր:

Գյուղական համայնքում առկա էր սեփականության երկու տեսակ՝ հանրային և մասնավոր: Հանրային էին վարելահողերը, ջրի պաշարները, արոտավայրերը, անտառները, ձկնորսարանները: Վարելահողերը պարբերաբար և այն էլ «ըստ

մարդաթվի» և «ըստ գլխի» բաժանվում և վերաբաժանվում էին:

Գյուղական հողատարածությունները բաժանվում էին 5 կատեգորիայի՝ 1) հողաբաժանման ենթակա համայնքապատկան վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, 2) տարբեր ճանապարհներով ձեռք բերված մասնավոր սեփականություն՝ «հայրենիք կամ մուլք» դարձած այգիներ, վարելու հողեր, 3) գյուղապետի կողմից սեփականացված վարելահողեր, 4) վանական հաստատություններին պատկանող հողեր, 5) անմշակ, խոպան ու ճահճոտ տարածություններ:

Համայնքում հասարակությունը բաժանված էր սոցիալական հետևյալ խմբերի. ամբողջական լիակատար հողաբաժնի տերը կոչվում էր **համփա**, 3/4 հողաբաժնի տերը՝ **3 պճեղ**, 1/2 հողաբաժնի տերը՝ **կիսան**, 1/4-ի տերը՝ **պճեղ** և 1/8-ինը՝ **կիսապճեղ**: Այս հինգ սոցիալական բաժանումներով էլ որոշվում էր գյուղական համայնքի սոցիալ-տնտեսական բովանդակ կազմը: Մեծ կազմով ունևոր ընտանիքները կամ գերդաստանները կազմում էին համփաների դասը, 3 պճեղներն ու կիսանը միջակ կարողությամբ ընտանիքներն էին, իսկ մնացածները՝ փոքր ընտանիքներն ու միայնակները: Համփաները գյուղի տերերն էին և կոչվում էին «մելիք», «քեդխուդա», «ռես»:

Դասակարգային հասարակության պայմաններում համայնքը գույքային շերտավորման էր ենթարկվում: Գյուղացիները թեև կախվածության մեջ էին ընկնում ավատատերերից, բայց նրանք անձնապես ազատ էին, վճարում էին պետությանն ու եկեղեցուն հարկեր ու տուրքեր:

6.2. Տնտեսամշակութային համերաշխության դրսևորումները գյուղական համայնքում

Հարցեր և առաջադրանքներ: Ռեֆերատներ:

Տնտեսական բնագավառ: Հողատիրության ձևերը և համայնքը: Դրացիական հարաբերությունների բնույթը տնտեսական կենցաղում: Աշխատանքների կազմակերպման ընկերակցությունների կազմավորման սկզբունքները, համայնքի անդամների իրավունքներն ու պարտականությունները.

Երկրագործա-անասնապահական աշխատանքի ոլորտ:

Հարկերի և տուրքերի գանձման ոլորտ:

Ինքնապաշտպանության ոլորտ:

Սոցիոնորմատիվ ոլորտ. ամուսնություն, հարսանիք, ծնունդ, մահ, հուղարկավորում և համայնքի վերաբերմունքը:

Կրթություն: Եկեղեցին և համայնքը: Միջհամայնքային հարաբերություններ: Ժամանակակից գյուղական համայնքներում նմանատիպ գործընթացները:

Ժողովրդական տոները և համայնքը: Համայնքային հյուրընկալում:

Համայնքային սովորույթներն ու ծեսերը, ժողովրդական տոների կազմակերպման սկզբունքները: Հյուրընկալում: Վերաբերմունքը օտարների, ծերունիների նկատմամբ:

Օտարական և հայրենի պաշտոնյաների, գործիչների, հեղինակություն վայելող անձերի հյուրընկալման վայրը, դիմավորման կարգը: Դիմավորողները, համայնքի ընտանիքների մասնակցության ձևերը: Սպասարկող և ուղեկցող անձնակազմերը: Օթևանը և ուտեստ հայթայթելու ձևերը:

Հյուրի և տանտիրոջ փոխադարձ պարտականությունները:

Օգնությունը աղքատ ընտանիքներին, այրիներին, որբերին, մուրացիկներին:

Միևնույն գյուղում ապրող այլազգի և այլակրոն ընտանիքների փոխհարաբերությունները, դրանք բնորոշող դեպքերը:

Սովորութային համակարգը:

Խորհրդային և հետխորհրդային շրջանում կատարված փոփոխությունները, ներկա անելիքներն ու խնդիրները:

Հետևություններ: Համայնքային կազմակերպությունը պետական-քաղաքական ձևերից ամենակենսունակն էր, քանի որ այն ներկայացնում էր աշխատավոր ժողովրդին և նրա միասնության, համախմբման գրավականն էր: Այն միաժամանակ պետականությունը կորցրած ժողովրդի գոյապահպանման հասարակական-տնտեսական հիմքն էր: Հայոց գյուղական համայնքին բնորոշ էին համայնքային միասնությունն ու փոխադարձ օգնությունը: Հարևանի հետ կիսում էին ուրախությունն ու տխրությունը: Տնտեսական, նյութական օգնությունը դրսևորվում էր դրացիական հարաբերություններում՝ դժբախտության, ուրախության, շինարարական աշխատանքների, աղետի և այլնի ժամանակ: Ժողովրդական տոնախմբությունները կատարում էին համատեղ, բոլոր ընտանիքների մասնակցությամբ: Առավել միասնական էին թաղումների և մեռելոցների ժամանակ:

Ներկայումս էլ դեռ որոշակիորեն պահպանվում են ավանդական փոխօգնության, համախմբվածության շատ տարրեր:

Գյուղական համայնք տերմինը զուտ գիտական արտահայտչաձև է և, բնականաբար, դրա փոխարեն աղբյուրներում հանդիպում ենք «ժողովուրդ», «ժողովուրդ գեղիս», «գեղականք» և այլ ձևերին:

Գյուղական համայնքը երբևէ սոցիալ-տնտեսական ֆոր-

մացիայի հատկանիշ չի եղել: Անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում այն կարող էր գոյություն ունենալ թե՛ ստրկատիրական, թե՛ ֆեոդալական և թե՛ նույնիսկ կապիտալիստական հասարակարգերի ժամանակ և ընդհակառակը, պայմանների բացակայության դեպքում կարող էր գոյություն չունենալ:

ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅՈՑ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹ

ԹԵՄԱ 1
ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Հարցեր և առաջադրանքներ:

Ժողովրդական հավատալիքները որպես աշխարհի ու շրջապատի մասին մարդու հավանական պատկերացումներն արտացոլող երևույթ: Դրանք որպես ազգաբանական գիտության սկզբնաղբյուր:

Հնագույն հավատալիքները որպես բնության հանդեպ մարդու վախի և չպաշտպանվածության հետևանք, իրենց ընդհանրություններով և յուրահատուկ դրսևորումներով բոլոր ժողովուրդներին բնորոշ երևույթ, որպես հասարակական գիտակցության տարր, որպես հասարակության զարգացման տոհմացեղային համայնքի ձևավորման շրջանի արգասիք: Վաղնջագույն հավատալիքների էական գծերը և առանձնահատկությունները:

Հնագույն հավատալիքների ուսումնասիրությունը մշտապես գտնվել է ազգագրական, կրոնագիտական և մշակութաբանական գիտությունների ուշադրության կենտրոնում: Լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ[1], որոնցում գիտնա-

---

[1] **Брос Ш.,** О фетишизме, М., 1973, **Леви-Строс К.,** Первобытное мышление, М., 1999, **Ջ. Ֆրեզեր,** Ոսկե ճյուղը. Մոգություն և կրոնի ուսումնասիրություն, Եր., 1989, **Тейлор Э.,** Первобытная культура, М., 1983, **Штернберг Л.,** Первобытная религия в свете этнографии, М., 1936, **Токарев С.,** Раннее формы религии, М., 1990, **նույնի՝** Религия в истории народов мира, М., 1975 և այլն: Դրանցում ցույց է տրվել, որ կրոնների հիմքում ընկած էր ֆետիշիզմի, անիմիզմի, նախնիների պաշտամունքի, տոտեմիզմի և այլ պատկերացումներ, հիմնավորվել է, որ կրոնների փոփոխությունները կրել են վերընթաց՝

կանները հանգել են այն հետևության, որ վաղ հավատալիքները ձևավորվել են հասարակության զարգացման տոհմացեղային համայնքի կազմավորման շրջանում: Ըստ այդմ էլ վաղնջական հավատալիքների էական գծերը և առանձնահատկությունները քննարկվում են հասարակական հարաբերությունների տվյալ փուլի իրողությունների համատեքստում:

Այսպիսով, մարդկային հասարակության զարգացման վաղ փուլում մարդ-բնություն և մարդ-մարդ հարաբերությունների ոլորտում ձևավորվել է կրոնական հավատալիքների մի ողջ բազմություն: Թեև պատմական զարգացման արդյունքում դրանք բնական ճանապարհով փոխարինվել են պաշտամունքային ավելի կուռ ու ամբողջական կրոնական պատկերացումներով, սակայն իրենց բնորոշ կենսունակության շնորհիվ շարունակում են գոյատևել նաև մեր օրերում: Հին հայերի կրոնական ու պաշտամունքային այս պատկերացումներն ու դիցաբանությունը և առասպելաբանությունը կազմում են հայոց հեթանոսությունը*:

պարզից բարդ բնույթ:

Է. Թեյլորի առաջադրած «անիմիստական» տեսությունը (**Тейлор Э.,** նշվ. աշխ.) հնագույն հավատալիքների գոյությունը հիմնավորում է մարդու կողմից բնական երևույթների և ուժերի շնչավորման միջոցով և պնդում, որ դրանք ձևավորվել են հոգու, մահվան, քնի վերաբերյալ ոգեպաշտական պատկերացումների հիման վրա: Ջ. Ֆրեզերը հնագույն հավատալիքների համապարփակ ձև է համարում մոգությունը, որը որակում է որպես աշխարհայացքի զարգացման ստորին փուլ (**Ջ. Ֆրեզեր,** նշվ. աշխ., էջ 62-75): Է. Դյուրկհայմի՝ ֆրանսիական սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցչի համոզմամբ՝ կրոնի և վաղ հավատալիքների հիմք է հանդիսացել տոտեմիզմը՝ պնդելով, որ այն ծառայել է տոհմացեղային հասարակության պահպանմանը (տե՛ս **Дюркгейм Э.,** Элементарные формы религиозной жизни. Тотемическая система в Австралии // В кн. Мистика, Религия, Наука. Классики мирового религиоведения. Анталогия, М., 1998, էջ 186-199):

* Հեթանոս հասկացությունը ծագել է հին հունական էթնոս՝ ազգ, ցեղ, ժողովուրդ բառից, հեթանոսական նշանակում է ցեղային, ազգային, հեթանոսու-

Բազմաթիվ հետազոտողների կարծիքով՝ վաղ հավատալիքները բնության հանդեպ մարդու վախի և չպաշտպանվածության հետևանքն էին, իսկ տարբեր ժողովուրդների կրոնական հավատալիքների ընդհանրությունները բացատրվում էին «մարդկային հոգեբանության միաձևությամբ»: Առհասարակ, վաղնջական հավատալիքները, իրենց ընդհանրություններով և յուրահատուկ դրսևորումներով, բնորոշ են բոլոր ժողովուրդներին: Վաղ հավատալիքները հիմք են ծառայել կրոնական պատկերացումների փոփոխության և զարգացման համար: Սնոտիապաշտության և ժողովրդական հավատալիքների տեսքով դրանց տարրերը պահպանվել են մինչև օրս և երբեմն շոշափելի ազդեցություն ունեն անգամ ժամանակակից հասարակական կյանքի վրա: Անդրադառնալով վաղ հավատալիքների բովանդակային վերլուծությանը՝ հարկ է առանձնացնել ֆետիշիզմը՝ տարրապաշտությունը: Գիտականորեն «ֆետիշ» է համարվում պաշտամունքային այն իրը, առարկան կամ երևույթը, որի ֆիզիկական պարամետրերին նախամարդը ոչ տիպական հատկություններ է վերագրել (տե՛ս Религоведение. Энциклопедический словарь, М., 2006, էջ 1110):

Անհիշելի ժամանակներից կարևորագույն ֆետիշների թվին դասվել են երկնային լուսատուները՝ արեգակի, լուսնի, աստղերի, երկնքի և այլնի մասին ճանաչողական պարզունակ ընկալումները: Ֆետիշ համարվող երկնային պաշտամունքը սերտորեն կապված է եղել մարդու անմիջական շրջապատի այլ իրերի ու առարկաների՝ կրակի, ջրի, մայր հողի, բույսերի ու կենդանիների պաշտամունքի հետ:

թյուն, ազգային հավատք: Մեր ընկալումներում հեթանոսը ըմբռնվում է կռապաշտ, դիցապաշտ, դիվապաշտ, անաստված, նախաքրիստոնեական, բարբարոսական և այլն (տե՛ս **Ա. Մ. Սուքիասյան,** Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 619):

Բուսապաշտությունը և կենդանապաշտությունը սերտորեն կապված է բնության հետ՝ անմիջականորեն առնչվելով պտղաբերության պատկերացումներին:

Վաղ շրջանի զարգացած և տարածված հավատալիքներից էր նաև **անիմիզմը՝** ոգեպաշտությունը, բնությունն անձնավորող երևակայական ոգիների պաշտամունքը: Հոգու մասին պատկերացումների զարգացման արդյունք են համարվում նաև անդրշիրիմյան կյանքի մասին պատկերացումները, ձևավորվող նախնիների պաշտամունքը, նրանց գերբնական՝ աստվածություններին բնորոշ հատկանիշներով օժտելը, նրանց մասին առասպելներ, լեգենդներ հյուսելը:

Վաղ հավատալիքներում մոգությունը կամ հմայությունը գործողությունների ու ծեսերի այն ամբողջությունն է, որի միջոցով մարդը փորձել է գերբնական ներգործություն ունենալ առարկաների կամ երևույթների վրա:

Բնության տարրերի՝ հողի, քարի (ժայռ, սար), ջրի, կրակի վերաբերյալ եղած հավատալիքային պատկերացումները: Բնության պաշտամունքն ընդգրկում է տեսանելի ու շոշափելի ամբողջ առարկայական աշխարհը և երկինքն իր պարունակություններով: Նախնական մարդը, որ անկարող էր բացատրել բնության երևույթները, իրեն շրջապատող առարկաների մեջ ոգիներ էր տեսնում և անձնավորում ամբողջ բնությունը:

Հարցեր և առաջադրանքներ:

Հող, գետին *– մայր զուգահեռ կապը, հողով երդվելը, հայրենիքից, գերեզմանից հող տանելը, հող ուտելը, համբուրելը, ջրախառն խմելը, օձիքից ներս լցնելը որպես վախից ազատվելու միջոց. սուրբ համարված հողատարածքը վարելու արգելքը և այլն:*

Գետնի, նրա առանձին վայրերի (ծննդկանի պառկած տե-

ղը, տան շեմքը ...) և կարծեցյալ ոգիների, նրանցից պաշտպանվելու ժողովրդական պատկերացումները (շրջան գծելով, երկաթե շղթա ձգելով...):

***Քարը**, սուրբ ժայռերը բժշկության և այլ շնորհ պարգևելու ունակությունները, լեռների, ժայռերի, քարակույտերի և ոգիների հետ ունեցած կապի մասին պատկերացումները, սուրբ սարեր բարձրանալու, այնտեղ քար կտրելու արգելքը, ծակ քարերը, ֆալոսաքարերը որպես ամլության դեմ միջոց, հուշաքար-տապանաքարերը որպես հոգու ժամանակավոր զետեղարան: Վտանգավոր լեռնանցքների (պաշտամունքը, կատարվող աղոթքները, զոհաբերությունները), նվիրական ժայռերի, քարայրների, քարերի պաշտամունքային դրսևորումները: Բուժիչ և քնաբեր թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր (ադամանդ, զմրուխտ, հակինթ, փիրուզ, կապույտ քար):*

***Ջուր**: Ջրի հրաշագործության մասին եղած պատկերացումները (օր.՝ գետի հոսքի կանգի և մեջը նետված առարկայի (ցորեն, գարի) ոսկու վերածվելու մասին պատկերացումը): Ջրի բուժիչ (խմելը, ճակատին կամ մարմնի այլ մասերին քսելը, լողանալը, ամանով տուն տանելը), ամոքիչ և առատություն ապահովող հատկությունը (սուրբ աղբյուրները իբրև բեղմնավորող, կնոջ կրծքի կաթն առատացնող, զանազան հիվանդություններ ապաքինող, երաշտը վերացնող, արտերի և ծառերի բերքը ավելացնող և այլն), մութ ժամանակ ջրի վրա խոնարհվելու, ջուրն անցնելու վտանգները և նախազգուշական միջոցները (խաչակնքել, ձեռքը գլխին պահել և այլն):*

Ջուրը պաշտելու ձևերը (մոմ վառելով, մատաղ բերելով, ցորեն ձգելով, աղբյուրների մոտ մատուռներ կառուցելով): Ջրի ոգիներ, սուրբ աղբյուրներ (նրանցով երդվելու, զոհաբերություններ կատարելու արարողություններ), տոներին միմ-

յանց ջուր սրսկելը (Վարդավառ) և ժողովրդական այլ պատկերացումներ: Ջրի ոգիներին ձուկ որսալուց առաջ կամ հետո հաջողության համար ձկնորսների կողմից ցույց տրվող հարգանքի ձևերը՝ աղոթքը, բռնած ձկների մի մասը կրկին ջրի մեջ բաց թողնելը և այլն:

Կրակ: *Կրակի և օջախի (թոնրի) պաշտամունքային դրսևորումները: Խարույկի, ծխի, ածուխի, մոխրի հետ կապված պատկերացումները (կրակը որպես կենդանի էակ): Կրակի, օջախի (թոնրի) և ընտանիքի միջև եղած կապը: Կրակի մաքրող, բեղմնավորող ու չարահալած դերը: Կրակն ու անթեղը: Կրակը ջրով մարելու, հոգու համար վառած մոմը, տան ճրագը փչելով հանգցնելու արգելքը, վառած մոմի, օջախի կրակի հանկարծակի մարելը որպես դժբախտության նշան:*

Տոներ, որ կապված են եղել կրակի մաքրագործման և արգասավորության գաղափարի հետ: Կրակը սիրաշահելու, զոհաբերություններ անելու պատկերացումները: Երդում և անեծք կրակով, օջախով, թոնրով, թոնրի կրակը անթեղը վառ պահելու, հանգելու դեպքում այն եկեղեցուց բերած վառած մոմով կամ Տեառնընդառաջի կրակով նորոգելու արարողությունը: Տնից կրակը ուրիշներին տալու արգելքը, կրակի և օջախի ոգիները, տոներին առնչվող կրակի սրբազնացած հատկանիշները, նրան կատարվող զոհաբերությունները հաց թխելիս, մատաղ անելիս և այլն: Անթեղը և նրա մասին եղած հավատալիքները: Տան մեծ կնոջ պարտականությունը՝ կրակը վառ պահելու վերաբերյալ:

* * *

Նախնադարյան վաղ ժամանակներից են սկզբնավորվում բնության անշունչ առարկաների և երևույթների ոգեղենացումը, մարդու և ոգեղենացած առարկաների, ինչպես նաև կեն-

դանիների միջև պատկերացվող խորհրդավոր կապերի, փոխադարձ կերպարանափոխումների և այդ ամենի վրա մարդու կողմից հմայական ներգործության հավատալիքները: Բնության տարրերից հին հայոց մեջ հատուկ պաշտամունքի առարկաներ են եղել հողը, քարը, կրակը, ջուրը, բույսերից որոշ ծառեր ու ծաղկատեսակներ, որոնց պաշտամունքի հետքերը պահպանվել են անգամ մեր ժամանակներում: Այսպես, հողին են վերագրվել այն բոլոր հատկանիշները, որ ունի ծնողմայրը, որից էլ ծագել է հողը մայր համարելու հնագույն գաղափարը: Հողը հին ըմբռնումներով կենդանի էակի է նման, որով և ըստ առասպելի՝ Վասակ սպարապետը կարողանում էր կանգնել լեռների վրա և ճնշել թշնամիներին (պարսկական և բյուզանդական զորքերին): Անձնավորված հողը կախարդական զորությամբ է պատկերացվել, օրինակ՝ պարսից թագավոր Շապուհի՝ խորհրդով Հայաստանից հող ու ջուր բերելը և Արշակ Երկրորդ արքային փորձելը (**Փ. Բուզանդ,** էջ 166-168):

Հող-գետնի զորությունն ընդունելու գիտակցությամբ է բացատրվում, որ Հայաստանում եղել են դրանով գուշակություններ անող վհուկ-գուշակներ, որոնք հայտնի էին **գետնակող** անունով: Քրիստոնյա գործիչների վկայությամբ՝ հողի միջոցով դյութում էին և հուռութ անում: Օրինակ՝ Հռիփսիմյանց կույսերը պարկեշտ ձևանալով՝ հողաթավալ էին տալիս (**Ագաթանգեղոս,** էջ 94), կամ երեսները գետնին դնում (**Ագաթանգեղոս,** էջ 102), սրբավայրերից վերցված հողով ձգտում էին բուժել մարդկանց և անասունների հիվանդությունները, անպտուղ կանանց օժտել պտղաբերությամբ և այլն: Հողի սրբությամբ էին բացատրում կավե դագաղով թաղում կատարելը (**Հով. Մամիկոնյան,** էջ 100):

Հայաստանում քարի պաշտամունքը նույնքան հին ու տարածված է եղել, որքան հողինը: Պատճառներն անշուշտ եղել

են քարի չափազանց առատությունը, կայծակների և այլ արհավիրքների հետևանքով ժայռերի կործանումն ու ջարդվելով կրակներ արձակելը, հրաբուխների առատությունը, ժայռերի վրա մարդկային, կենդանակերպ պատկերների քանդակները, քարերը գործիքների և զենքերի պատրաստման համար հումք ծառայեցնելը, քարը քարով և մետաղե գործիքով մշակելիս ստացվող կայծերը: Քարի հետ կապված այդ ահագդու երևույթները և տնտեսական օգտակարության հանգամանքը ծնել են քարի մեջ բնակություն հաստատված չար ու բարի ոգիների գաղափարը: Այս գաղափարի հետ են կապվում շիրմաքարեր, խաչքարեր կանգնեցնելու սովորությունները: Քարի հանդեպ անիմիստական պաշտամունքով է պատկերացվել, թե այն օժտված է մարդուն՝ ուժ, անզավակ կնոջը՝ զավակ, կաթնազուրկ կնոջը կաթ պարգևել, բուժել հիվանդություններ, առաջացնել անձրև և այլն[1]:

Քարն օժտված է մայրական հատկություններով: Այդ է պատճառը, որ պտղաբերությունը հովանավորող քար-հուշարձանների մեծ մասը մակաբերվում է կնոջից, նրա քարացումից:

Պաշտամունքի առարկա էր նաև աղը՝ պայմանավորված սննդամթերքների մեջ նրա խաղացած կարևոր դերով: XX դարի նյութերի համաձայն՝ աղի պաշտամունքը սերտորեն կապվում էր մարդու պտղաբերության հետ: Աղը Անահիտ դիցուհուց անբաժանելի է. այդ երկուսը միասնաբար հովանավորում են մորն ու մանկանը: Դա արտահայտվում էր այն բանով, որ աղը պահվում էր Անահիտ դիցուհուն պատկանող կանացիակերպ կավե աղամանների մեջ: Հին հայերը, ամենայն հավանականությամբ, աղը համարել են Անահիտի պարգևը,

[1] **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Երևան, 1931, էջ 315:

որով և պետք է բացատրել նորածին մանկան վրա աղ ցանելու, ինչպես նաև մարդկանց և տան անմաքրությունն աղով մաքրելու սովորությունները: Ահա թե ինչու մատաղացու գառանը սաղմոսով օրհնված աղ տալով՝ կենդանին մաքրվում-սրբացվում էր:

Հայոց մեջ բնության տարրերից հատուկ պաշտամունքի առարկաներ են եղել կրակը և ջուրը: Կրակն ու ջուրը անձնավորվել են երկվորյակ եղբոր և քրոջ կերպարներում և միշտ հակառակ են միմյանց (ջուր-եղբայրը միշտ մարում, սպանում է կրակ-քրոջը): Կյանքի համար կրակի մեծ անհրաժեշտությունը հանգեցրել է դրա նկատմամբ երկյուղ և ակնածանք տածելուն: Առանձնապես կայծակից առաջացած կրակը աստվածային պարգև համարվելով՝ տոհմային հասարակության մեջ այն անմար պահելը սրբազան պարտականություն էր: Հենց այստեղից էլ ավանդաբար մեզ է հասել օջախը վառ պահելու և կրակն անպայման անթեղելու գաղափարը:

Կրակը համարվել է սուրբ, չարահալած, երդվել են կրակով, այն հետագայում կապվել է տան, ընտանիքի, օջախի պաշտամունքին: Օջախը հենց տան կրակարանն է (ընտանիքի խորհրդանիշ)՝ թոնիրը, որտեղ մշտավառ, անթեղված էր պահվում կրակը: Թոնիրն ընտանիքի մեծագույն սրբավայրն էր. ըստ հավատալիքների՝ նրա շրթին կամ ակում բնակվում էին նախնիների ոգիները, նրա կողքին էին կատարվում ընտանեկան ծիսական արարողությունները՝ կնունք, ամուսնական պսակ: Կրակապաշտական հավատալիքներից են ծագել նաև օջախի և թոնրի պաշտամունքը, որոնք միաժամանակ խորհրդանշում էին տոհմի կամ գերդաստանի ամբողջության գաղափարը: Այստեղից էլ՝ տնից ընդմիշտ հեռանալիս օջախի առջև չոքելն ու այն համբուրելու սովորությունը, կամ Ազա-

թանգեղոսի վկայությամբ՝ բաժանված ընտանիքների օջախի կրակը մայր գերդաստանից տանելը (էջ 61), Հայաստանում մոխրապաշտության տարածված լինելը և այլն: Առավել ուշ շրջանում կրակի պաշտամունքը մտնում է պաշտոնական կրոնական համակարգի մեջ, դառնում հայ հեթանոսական կրոնի բաղադրիչ՝ կրակի պաշտամունքատեղին՝ բագինը, որ կոչվում էր հուր-բակ, իսկ կրակապաշտներին վաղ միջնադարում պատմագիրները արհամարհանքով «մոխրապաշտ» էին անվանում, որի վերապրուկներից են մեհեկան (արդի փետրվար) ամսի կեսերին Տերընդեզի ծիսական խարույկը վառելու և դրան առնչվող սրբազան արարողությունները:

Ջրի պաշտամունքի հետքերը պահպանվել են հրաշագործ ձկների մասին պատմող առասպելական զրույցներում, ջրի ակունքների կամ արհեստական ոռոգման առուների մոտ կանգնեցված ձկնակերպ «Վիշապ» քարակոթողներում, իսկ վերապրուկները՝ «լուսաղբյուր» կամ «կաթնաղբյուր» կոչված բուժիչ (հատկապես հանքային), սրբազան աղբյուրներին մատուցվող զոհաբերության ու պաշտամունքի արարողություններում (մոմ վառել, խունկ ծխել, աքաղաղ զոհել): Ներկա ժամանակներում էլ կարելի է հանդիպել ջրապաշտության վերապրուկների: Մեր օրերում ևս որոշ դեպքերում սուրբ աղբյուրներին ավլությունը, մկնատամը (սնկային հիվանդություն), քոսը, համրությունը, խլությունը, կուրությունը, կաթնազրկությունը և նույնիսկ վիշտն ու հոգեկան հիվանդությունները բուժելու հատկություններ են վերագրվում:

Ջրի հետ են կապվում նաև բույսերի, հատկապես ծառերի, բուժիչ բույսերի ու ծաղիկների, ինչպես նաև հացաբույսերի պաշտամունքը: Պաշտվող ծառերից են սոսին (որի սաղարթների սոսափյունից հնում Արմավիրի քրմերը գուշակություն-

ներ էին կատարում), կաղնին, բարդին, ուռենին, ծաղիկներից՝ համասփյուռը, անթառամը և այլն, բույսերից՝ մարդանման արմատով լոշտակը, որ համարվում էր բույսերի թագավոր, բազմաթիվ հիվանդությունների դեղ, միաժամանակ և չարխափան: Ծառերն ունեցել են իրենց հատուկ նվիրական օրը՝ **Ծաղկազարդ** (ժող. լեզվ.՝ Ծառզարդար), իսկ ջուրն ու ծաղիկները՝ իրենց տոնը՝ **Համբարձում** (ժող. լեզվ.՝ Ծաղկամոր տոն)՝ պաշտամունքային ու բախտագուշակման ծիսական արարողություններով:

Բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ հնագույն հավատալիքներն ու պատկերացումները:

Առաջադրանք ռեֆերատներ հանձնարարելու համար՝ տեղական սովորույթների, ասույթների գրանցմամբ:

Բուսական աշխարհն ամփոփում է ծառերի (անտառ, պուրակ), թփերի ու խոտաբույսերի հետ կապված հավատալիքային պատկերացումները:

***Ծառեր**, որ համարվում էին սրբազան, օրինակ՝ ընկուզենու հետ կապված պատկերացումներ (ընկուզենու տակ քնելու արգելքը և այլն), սոսի ծառի կապը գուշակության հետ: Կաղնու, ուռենու (ուռենին աղջիկ է եղել), փշատենու, չինարի, բարդի ծառերի մասին պատկերացումները: Սուրբ ծառերը կտրելու արգելքը: Ծառերի մեջ բնակվող ոգիների մասին պատկերացումներ: Ավագ շաբաթվա **չիք չորեքշաբթի** օրը պտուղ չտվող ծառերին կացնով սպառնալը, ամլության դեպքում ծառերից ճոճ կապելը, ծառաբունը գրկելը, ծառանյութը, խեժը մարմնին քսելը, կայծակնահար ծառերից խուսափելը և այլն: Սրբազան պուրակներ և անտառներ: Պաշտամունքը:*

***Թփեր**: Մասրենին, ալոճենին, բոշնին որպես որպես ամոքիչ, չարապահպան: Սրբազան համարվող թփերից հագուստի*

պատառիկները կապելու սովորույթը և ամոքում ստանալու մասին պատկերացումները (մոմ վառելով, աղոթք անելով, շուրջը պտտվելով, մատաղ բերելով): Շուրջը թել կապելը, տակը պառկելը, երազ տեսնելու, երազի հիման վրա գուշակություններ անելու համար, երեխա ունենալու համար այդ ծառի տակ սեռական հարաբերություն ունենալը և այլն:

***Խոտաբույսեր**: Զորություն ունեցող բույսեր, վնասակար, օգտակար բույսեր: Օրինակ՝ լոշտակի մասին ինչ ավանդություններ են հիշատակվում նրա արմատով գուշակություններ անելու մասին: Փշոտ բույսեր տանը պահելը որպես չար աչքից պաշտպանվելու միջոց: Խոտաբույսերի դերը բուժիմայության և ժողովրդական բժշկության մեջ (օր.՝ սիրո կամ բաժանման դեղ, երկունքը հեշտացնելու միջոց): Բույսերի խոսելու ունակության մասին հավատալիքներ: Վարդ-մանուշակը անհաշտ քույր ու եղբայր (մոր անեծքով ծաղիկ դարձնելու հավատալիքը):*

Կենդանական աշխարհ: Կաթնասունների (վայրի և ընտանի), թռչունների ու սողունների, ձկների, միջատների մասին եղած հավատալիքներն ու պաշտամունքները: Աստծո և սրբերի հատուկ հովանավորությունը վայելող կենդանիներ:

***Կաթնասուններ**: Կենդանու ձայնի, մարմնի շարժման և այս կամ այն մասի հետ շաղկապված սնահավատություններ: Արջի, գայլի (օր.՝ աղոթքով գայլին վնասազերծելը՝ գելկապը, արջի մազը, ատամները, ճանկերը, գայլի թաթը, ատամը, սեռանդամը որպես հմայիլներ), եզան, կովի, խոյի գանգի և եղջյուրների մասին պատկերացումները, ձիու (որպես վտանգը զգացող, նախազգուշացնող միջոց), շան, կատվի՝ անդրաշխարհի հետ կապի, շան ոռնոցը որպես մահվան կանխագուշակում, մանկանը շան անունով դիմելը՝ նրան չարքերի ներ-*

գործությունից ազատելու և հիվանդությունը վանելու միտմամբ, շան լիզելով ծանր վիրավորվածին առողջացնելու կամ սպանված մարդուն կենդանացնելու վերաբերյալ ավանդությունները, շան մազն ու ատամը որպես թալիսման և դեղ գործածելը և այլն: Վերաբերմունքը այս կամ այն կատվի նկատմամբ (օրինակ՝ սևի): Նրան սպանելը մեղք համարելը: Կատվի շարժման հետ կապված գուշակությունները (օրինակ՝ դունչը լվանալը որպես հյուր գալու նշան, կամ կատվի արածելը՝ մահ, վնաս, թանկություն): Երեխային, նախքան օրորոցի մեջ դնելը, կատու էին դնում՝ չարքերից ազատելու համար և այլն: Կատու սպանողը յոթ եկեղեցի պետք է կառուցի մեղքերի թողության համար և այլն, եղած ժողովրդական պատկերացումները: Կատվի վերաբերյալ ժողովրդական գուշակություններն ու պատկերացումները:

***Թռչուններ**: Աղավնին հաշտության, խաղաղության, անմեղության խորհրդանիշ: Ի՞նչ էր սպասվում նրան սպանողին, բունը քանդողին: Աղավնին որպես սիրո խորհրդանշան: Բու, բվի ձայնը չարագուշակ, որին կերակրում են դժբախտությունը կանխելու համար:*

***Արագիլ, ծիծեռնակ, կկու, կաքավ, ավետաբեր թռչուններ:** Ի՞նչ էր սպասվում նրանց սպանողին, բունը քանդողին: Սնահավատություններ կապված արծվի, անգղի հետ և այլն:*

Ագռավն ու կաչաղակը՝ չարաղետ: Հավի ու աքաղաղի հետ կապված պատկերացումներ (օր.՝ աքաղաղի անժամանակ կանչը որպես չարաղետ, հավի փետուրը այրելը որպես անձրև գալու նշան, հավի գլուխ ուտելը՝ երեխայի ծնողների կորստի նշան, հավի սիրտ կուլ տալը՝ քաջության գրավական), հավի ոսկորի, արյան և փետուրի գործառությունը որպես դեղ, որպես կախարդական զորություն: Ե՞րբ և ի՞նչ առիթ-

ներով էին թխում խմորից տնային կենդանիների ձևով հացեր:

***Սողուններ**: Օձի հետ կապված հավատալիքներ (օր.՝ տան օձին սպանելու արգելքը, օձի մաշկը, օձագլուխ զարդերը որպես պահպանակ ամլության դեմ, տան օձը բախտավորություն բերող, հաջողությունը ապահովող, օձի մարմնի մասերը որպես դեղ և այլն): Նրա պաշտամունքին աղերսվող օձանուններ. Օձատեղ (Խարբերդում), Օձաբերդ (Գեղարքունիքում), Օձուն (Թումանյանի շրջան), Օձ քաղաք կամ Վիշապաքաղ (Տարոնում) և այլն:*

***Գորտ**: Գորտի մասին եղած պատկերացումները (կապը անձրևի, կնոջ բեղմնավորման հետ, գորտը որպես պահպանակ, որպես դեղ չբերության, որպես չարախափան միջոց և այլն):*

***Ձի**: Ձիու վերաբերյալ ժողովրդական պատկերացումները (օր.՝ դեպքեր տիրոջ հետ միաժամանակ նույն գերեզմանում թաղելու, հուղարկավորության ժամանակ նրան մասնակից դարձնելու մասին և այլն): Ձիու գուշակողական ունակությունները, նրա պաշտամունքի ձևերը, վայրերը, տոները: Ձիու գանգը որպես պահպանակ:*

***Կովն ու եզը**: Ժողովրդական վերաբերմունքի դրսևորումները: Կովի և եզան գանգը որպես արտի կամ տան պահպանակ: Կովերին և եզներին նվիրված տոնը: Նրանց պաշտամունքային դրսևորումները, նրանց հովանավոր սրբերը, պաշտամունքային վայրերը: Կովի մեզից, թրիքից, ուղեղից պատրաստված դեղամիջոց օգտագործելու ժողովրդական պատկերացումները:*

***Ոչխար և խոյ**: Պաշտամունքային դրսևորումները, նրանց հովանավորող ոգին կամ սուրբը, նրանց գանգը որպես պահպանակ: Այծը՝ չար ոգու խորհրդանիշ, այծը գոմում չար ոգի-*

ներին հալածող, այծի դիմակով տոնակատարություններին մասնակցելը:

***Խոզ**: Խոզի դունչը որպես հմայիլ: Ժողովրդական ավանդություններ մարդու խոզ դառնալու մասին, ո՞ր դեպքերում: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ նա բարի՞, թե՞ չար կենդանի է համարվել և այլն:*

Պաշտամունքի և վերաբերմունքի դրսևորումները վայրի կենդանիների նկատմամբ՝ գայլի, արջի, աղվեսի և այլնի նկատմամբ: Օրինակ՝ գայլին սիրաշահելու եղանակով աղոթքով, զոհաբերություն անելով: Գելկապ: Գայլի մազը, ատամը, չանգը, սեռական օրգանները՝ որպես հմայիլ-պահպանակ: Նույնը՝ արջի վերաբերյալ:

* * *

Հին Հայաստանում տարածված երևույթներից է եղել նաև կենդանիների պաշտամունքը: Պաշտում էին թե՛ ընտանի, թե՛ վայրի և թե՛ առասպելական կենդանիներին: Ընտանի կենդանիներից ցուլը հիշատակվում է իբրև սրբազան անասուն, որի սպիտակը Հայաստանում յոթ մեհյանների առաջնակարգ զոհն էր համարվում: Ընտանի ցուլը, հավատքի համաձայն, կապվում էր ծովային առասպելական ցլի հետ: Ներսես Շնորհալին վկայում է, որ իր օրոք նույնիսկ քահանաները մասնակցում էին անասունը ծիրանիով և նրա եղջյուրները նարոտով զարդարելու ծեսերին (**Ներսես Շնորհալի,** Ընդհանրական թուղթ, էջ 262): XIX դ. ազգագրական նյութերից ևս հայտնի է, որ այդ նույն ձևով զարդարվող կենդանին եղել է լծու եզը:

Սպիտակ ձին ու ջորին ցլի հետ ընծայվում էին դիցարաններին: Անկասկած ցլի պաշտամունքով է բացատրվում Ցուլ կամ Ցլու գլուխ լեռնանունը Հայաստանում (**Փ. Բուզանդ,** էջ 16, 18, 38):

Պաշտամունքի կենդանի էր նաև այծը: Սպիտակ նոխազը ևս դասվում էր դիցարանների զոհերի շարքին: Ղ. Փարպեցին սպիտակ ուլի և հուր-արևի միջև ինչ-որ կապեր էր ցույց տալիս (**Ղ. Փարպեցի,** էջ 80): Հովհ. Մամիկոնյանի երկի մեջ հիշատակված է այծի պաշտամունքից ծագող Այծսան ձոր և Այծից բերդ անունները (**Հովհ. Մամիկոնյան,** էջ 227, 265): Գուցե դրա հետ է առնչվում այն, որ պարսից ախոռապետը հայոց Արշակ Երկրորդ արքային վիրավորելու նպատակով «այծ-հայերի թագավոր» մականունով է կոչում (**Փ. Բուզանդ,** էջ 184):

Ըստ քրիստոնյա մեկնիչների՝ Աստված կենդանիներին երկու կարգի է բաժանել՝ ուտելի և պիղծ: Ըստ Եզնիկի՝ «պիղծ կենդանիներն են՝ ձին, ջորին, էշը, շունը, կատուն, մուկը, գորտը, օձը, մողեսը: Ըստ նույն պատմիչի՝ պիղծը չի ուտվում ոչ թե ի բնութենե, այլ ըստ ախորժանքի. նա չուտելի է համարում նաև արյունը և սատկածի միսը (**Եզնիկ,** էջ 261):

Միջնադարյան Հայաստանում շատ տարածված է եղել կատվապաշտությունը: Կատուն, ավանդությունների համաձայն, Քրիստոսի թաշկինակի վերափոխությունն է՝ մարդուն օգտակար լինելու համար: Իսկ Մ. Գոշի առակներից մեկի համաձայն՝ կատվի մազը ծիծեռնակը հյուսում է բնի մեջ, որպեսզի ձագերը մկներից անվնաս մնան (**Մ. Գոշ,** Առակներ, էջ 110):

Վայրի կենդանիներից պաշտվել է վարազը: Ձկան պաշտամունքը սակավ է հիշատակված: Մի վկայություն հաստատում է, որ ձկան աճն ապահովելու և որսը կարգավորելու համար նրա վրա տաբու է դրվել (**Փ. Բուզանդ,** էջ 221): Ի դեպ, ծովային ձուկը վիշապ է կոչվել: Ուստի բանավոր խոսքում հիշատակվող ձուկ-վիշապ հասկացությունը այն հիմքն էր լինելու, որով կերտվելու էին ձկնակերպ քարե կոթողները, որ նույնպես «վիշապ» անունն են կրում և նվիրված են պտղաբե-

րությանն ու բնության մեռնող և հարություն առնող աստվածությանը:

Սկսած տոտեմիզմի նախնական շրջանից՝ ձկան նման օձն էլ է համարվել պտղաբերության հովանավոր: Տան օձը համարվել է նաև կյանքի հովանավոր, ուստի սյուների, դռների և տան ամբարների, կարասների վրա նրա պատկերը քանդակելը եղել է սովորական երևույթ: XIX դ. վերջերին Արցախում պահպանվել էին երկյուղ ներշնչող օձերին ուխտի գնալու և զոհեր մատուցելու սովորությունները, իսկ Նոր Բայազետում օձի կիրակի էին պահում: Ինչպես XIX դարում, միջնադարում էլ օձի պաշտամունքը կապ է ունեցել պտղաբերության հետ: Փ. Բուզանդը հավատում է, թե Արշակից սերված տղային Փառանձեմ թագուհին դևերին է նվիրել (**Փ. Բուզանդ,** էջ 155-156, 214): Իսկ սրանք օձի կերպարանքով գալիս, փաթաթվում էին տղային: Ըստ երևույթին օձի պտղաբերության հատկանիշի պաշտամունքով է բացատրվում հղի կանանց օձաձև զարդեր և հուռութներ կրելու սովորույթը: Օձի պաշտամունքով և բուժիչ հատկություններով են բացատրվում այն բնակավայրերի կամ վայրերի անունները, որոնք կրում են նրա անունը. Օձտեղը՝ Բաբերդում, Օձաբերդը՝ Գեղարքունիքում, Օձ գետը՝ նույն տեղում, Օձունը՝ Զորափորում, Օձինն՝ Ապահունիքում, Օձձորը՝ Մարանդում, Օձնին՝ Կարինում, Օձ քաղաքը կամ Վիշապաքաղը՝ Տարոնում (**Ղ. Ալիշան,** նշվ. աշխ., էջ 151):

Մարդու օգտակար լինելու շնորհիվ թռչունների շատ տեսակներ պաշտամունքի առարկա են դարձել: Առանձնապես պաշտվել են՝ ծիծեռնակը, արագիլը, կռունկը, աղավնին, սարյակը:

Ծիծեռնակը գարնանաբեր թռչուն է, որի ճռվողյունը մարդկանց համար օրհնանք է և ժամասացություն: Նա մար-

դասեր է և կապվում է գարնան կանաչ հասկի գաղափարի հետ (**Ագաթանգեղոս,** էջ 320): Ուստի ծիծեռնակներին, նրանց հյուսած բներին այսօր էլ մարդիկ վերաբերվում են հոգատարությամբ և ակնածանքով: Ծիծեռնակի բույնը պատկերացվել է որպես «չար աչքից» պաշտպանվելու միջոց: Ծիծեռնակի միջոցով եղանակի կանխագուշակման ժողովրդական միջոցներն ունեն խորը արմատներ: Ըստ ավանդության՝ Երևանում, Հրազդան գետի աջ ափին գտնվող Ծիծեռնակաբերդը եղել է հայոց սիրո աստվածուհի Աստղիկի տաճարը, որի երկրորդ հարկում ապրող ծիծեռնակները որպես սուրհանդակներ լուրեր էին տանում Աստղիկի սիրեցյալին՝ Վահագն աստվածությանը: Այստեղից էլ առաջացել է Ծիծեռնակաբերդ անունը (**Ագաթանգեղոս,** էջ 380):

Սարյակը, որպես երկրագործության և անասնապահության մեջ վնասատուներ ոչնչացնող, մեծարվում էր ամենուրեք:

Արագիլի մասին ասում էին, թե իր երկրում հողագործ մարդ է եղել, բայց եկել է մեր երկիր թռչունի կերպարանքի մեջ մտած: Կռունկի նման նա էլ առնչվում է երկրագործական պաշտամունքին: Արագիլը համարվել է սուրբ թռչուն: Նրա վերադարձին շատերը սպասում էին անհամբերությամբ, քանի որ արագիլը համարվում էր գարնան ավետաբեր: Ժողովրդական հավատալիքներում արագիլը համարվում էր նվիրվածության, արգասաբերության, գարնան զարթոնքի նշան: Հայերի համար արագիլը դարձել է բախտի, բարության ու հաջողության խորհրդանիշ (**Ագաթանգեղոս,** էջ 360, 380):

Կռունկ: Գրավոր վկայություններում կռունկը հայտնի է մի քանի անուններով. խորդ, մեծ աշուղ, ավետաբեր, ճամփորդ, հայրենիքի պատվիրակ, վերջապես՝ կռունկ, կռունգ: Թռչունն ունեցել է տարածված պաշտամունքային բնույթ, հա-

մարվել է սուրբ թռչուն: Կռունկի գալով կանխատեսում էին գարնան գալուստը, սկսում էին գարնանացանը: Թռչունը գովերգվել է հայ բանարվեստում, սիրո, կարոտի, պանդխտության երգերում:

Կաքավը ևս բացառություն չէ: Սա միակ վայրի թռչունն է, որի անունը արտացոլվել է հայոց ավանդական գութանի, ջուլհակի հաստոցի առանձին մասերի և կանանց անուններում, նաև բազմաթիվ բերդ-ամրոցների, գյուղերի, աղբյուրների, լեռների, բույսերի, պարի տեսակների անվանումներում:

Աղավնի: Պաշտվել է նաև աղավնին, որ նույնությամբ մտել է քրիստոնեական հավատքի մեջ: Բուզանդի հավաստմամբ՝ քրիստոնեական տեսիլներում սուրբ հայրերին եպիսկոպոս ձեռնադրելու ժամանակ աղավնին նույն դերն էր կատարում, ինչ կռունկն ու արագիլը՝ պետական գործիչներ ընտրելիս (Փ. **Բուզանդ,** էջ 72, 99): Սրբազան թռչուններին սպանելը նույնքան հանցավոր գործողություն է ճանաչվել, որքան մարդասպանությունը: Թռչունների պաշտամունքի հիման վրա Հայաստանում մի շարք տեղանուններ են առաջացել, որոնց մասին հիշատակությունները կան պատմագրության մեջ: Կենդանիների և թռչունների պաշտամունքին ուշ շրջանում զուգակցել է դրանց մեծարելը. մի երևույթ, որը ծագել է ընտանի կենդանիների և թռչունների տնտեսական օգտակարության գիտակցումից և, իբրև զուտ աշխարհիկ մտածողության արդյունք, հավատքի հետ միայն ձևական կապ է ունեցել: Ընտանի կենդանիների այս կարգի մեծարանքի արտահայտությունը գութանի լծկաններին, կթու անասուններին և թռչուններին նվիրված աշխարհիկ երգերն էին, կամ եզան, խոյի գանգը սյուներից կամ դռների ճակատային մասից կախ տալու ձևը XIX դարում:

Այսպիսով, բույսերի, ծառերի, թփերի, կենդանիների, թռչունների վերաբերյալ հավատալիքների առաջացման հիմքում կարևոր նշանակություն են ունեցել բնության երևույթներն ու դրանց էության անբացատրելիությունը, բնակլիմայական առանձնահատկությունները, հասարակական կարգերը, սովորույթները և էթնիկական առանձնահատկությունները: Հավատքին, պաշտամունքին առնչվող պատկերացումները սկսել են ձևավորվել հազարավոր տարիներ առաջ:

Երկնային լուսատուների, մթնոլորտային երևույթների պաշտամունքային դրսևորումները հայոց մեջ:

Հարցեր և առաջադրանքներ:

Երկնային լուսատուներ: *Արևի, լուսնի և աստղերի հետ կապված ժողովրդական պատկերացումները և դրանց պաշտամունքային դրսևորումները. (արևը տղա՞ է, թե՞ աղջիկ, իսկ լուսի՞նը, հարաբերությունը երկուսի միջև, ինչո՞ւ մեկը ցերեկով է երևում, մյուսը՝ գիշերով): Արևին և լուսնին նվիրված շաբաթվա օրերը:*

Պատկերացումները արևի շուրջ գոյացող շրջանների, արևի զանազան գույն ստանալու, արշալույսի և վերջալույսի, նրանց հետ կապված գուշակությունների վերաբերյալ: Արևի և նրա շուրջ գունային օղակները տարվա հաջող կամ անհաջող, բերրի կամ ոչ բերրի լինելու նշան, արևով երդվելը, աղոթելիս դեմքով արևին ուղղվելը, նորածնին արևին ցույց տալը, արևի խավարումը որպես աղետի, պատերազմի, նշանավոր անձի մահվան նախանշան և այլն: Արևի խավարման բացատրությունները և ժողովրդական արձագանքները (աղմուկ, աղաղակ բարձրացնելը, հրացան արձակելը և այլն): Արևադարձին, գիշերահավասարին, արևի շրջանի զանազան պահերին կատարվող ծեսերը (խարույկ վառելը և այլն): Արևի սկավառակի

ձև ունեցող հացեր թխելը (ո՞ր օրերին, ի՞նչ նպատակով):

Նույնը լուսնի և աստղերի հետ կապված ժողովրդական պատկերացումների վերաբերյալ:

Լուսնի վտանգավոր փուլերի հետ կապված պատկերացումները, երեխային լուսնին ցույց տալը, լուսնաձև զարդերը որպես նորալուսնից պաշտպանվելու եղանակ, կիսալուսնի դիրքի և եղանակի միջև եղած կապը (զբաղմունքի, ցանքի, ճամփորդության հաջողության գուշակումը, եղանակի կանխագուշակումը): Լուսնի խավարման ժողովրդական բացատրությունը, վերաբերմունքը, կիսալուսնաձև («նոր») զարդերի գործածումը:

Աստղի և մարդու ճակատագրի միջև եղած կապը, բարենպաստ և չար աստղերը, վայր ընկնող աստղերի վերաբերյալ պատկերացումները: Գիսավոր աստղի և նշանավոր մարդու ծննդի կապը և այլն:

Աստղերի հետ հոտը արածեցնելու կապը, հովիվների անելիքները:

Ժողովրդական պատկերացումները աշխարհի կողմերի, երկնքի և երկրի մասին, նրանց ժողովրդական անվանումները:

Հարդագողի ճանապարհի վերաբերյալ ժողովրդական պատկերացումները:

* * *

Հնադարյան մարդիկ ամենուրեք լուսատուների հետ են կապել իրենց գոյատևման հնարավորությունները և դրանց մեծարել են ու պաշտել: Այդ նախնական պաշտամունքը, հետզհետե զարգանալով, հասել է լուսատուների անձնավորման և Արևի ու Լուսնի աստվածությունների արձանների կերտման: Լուսատուների պաշտամունքը մի ամբողջություն է կազմել: Մարդը լուսատուների միջոցով կարողացել է տարբե-

բակել օրվա և գիշերվա պահերը, որոշել օրվա եղանակը, օդի ու լուսատուների որոշ երևույթների միջոցով գուշակել գալիք եղանակը, կազմել նախնական օրացույցը և ձեռք բերել տոմարագիտական գիտելիքներ: Հայաստանի բնիկները արևին վերագրել են արարչական զորություն, պաշտել են նրան որպես զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքների ստեղծող գերբնական ուժ: Այդ պատճառով էլ բազմաթիվ առարկաների վրա հին հայերը պատկերել են արևը՝ երկրաչափական մարմինների, ինչպես և զանազան կենդանիների տեսքով: Հայկական լեռնաշխարհին բնորոշ է արևի անմիջական կապը ճառագայթավոր անիվի, անիվաձև սկավառակների, դրանց վրա թռչունների փոքրիկ ֆիգուրների, կտուցին օղ բռնած թռչունների տեսքով զարդարանքների հետ բրոնզեդարյան արվեստում: Նաև սվաստիկաների, առյուծակերպ խաչերի (**Իսրայելյան Հ.,** Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1973, էջ 44-60, **Մնացականյան Հ.,** Արևապաշտության հետքերը Հին Հայաստանում ըստ բրոնզե պեղածո իրերի //Աշխատություններ պետական պատմական թանգարանի, 1948, №1, էջ 67-95): Այս պաշտամունքի հետ է կապվում նաև ձին, այստեղից էլ՝ Արևի աստծուն նվիրված տաճարներին ձիեր զոհաբերելու կամ Արևի աստծուն ձիերով մարտակառքեր նվիրելու սովորույթը: Ձին, որպես արագաշարժ, խելացի և օգտակար կենդանի, նաև արևի շարժման խորհրդանիշն էր: Արևամոր կերպար է պատկերացվել օվկիանոսը: Ըստ Խորենացու հիշատակությունների՝ Արմավիրում են կանգնեցվել Արևի և Լուսնի արձանները՝ Հայոց Վաղարշակ Արշակունի արքայի կողմից, որոնք հետագայում փոխադրվել են Բագարան, այնտեղից էլ՝ Արտաշես արքայի կողմից՝ Արտաշատ (**Մ. Խորենացի,** նշվ. աշխ., թարգմ. Ստ. Մալ-

խասյանցի, Երևան, 1940, էջ 75):

Հայոց հեթանոսական պանթեոնի շատ սիրելի և գլխավոր աստվածներից մեկը՝ Վահագնը, համարվել է արևի, լուսնի և կրակի, շանթի, որոտի, ռազմի աստվածը: Խորենացին հիշատակում է «Վահագնի ծնունդը» երգը:

Հաջորդը արև աստված Միհրն է, նաև կրակի և ջերմության հովանավորը: Ըստ Քսենոփոնի՝ Միհրական տոներին Հայաստանում սովորույթ կար Արև աստծուն մտրուկներ նվիրել:

Արևը ընկալվել է իբրև կյանքի, գոյության, կենդանության խորհրդանիշ («Արևս վկա», «Երկեն արև էլնիս», «Աստված քու արև բաշխե», «Արևիդ մեռնեմ», «Արևդ թաղեմ» և այլն): Արև աստծու անունով՝ Արևշատ, Արևհատ, Արև, Արեգ, Արեգնազ և այլ անձնանունները լայն տարածում է գտել հայոց մեջ (Տախտակ 47): Մեղրին հնում կոչվում էր Սյունիքի Արևիկ գավառ, կար Արեգունի լեռնաշղթա և այլն:

Արև աստծու պաշտամունքի հետքերից է մինչ օրս աղոթելիս դեպի արևելք շրջվելը, հանգուցյալներին թաղելիս գլուխը դեպի արևելք ուղղելը և այլն: Արևի մարդակերպ կամ կենդանակերպ խորհրդանիշները հանդիպում են նաև նախնադարյան արվեստում, բրոնզե գոտիների վրա, ժայռափոր քանդակների մեջ, վերջապես նաև բանահյուսության մեջ և այլն: Արևապաշտությունը չի սահմանափակվել միայն մի երկրում, այն երկրածավալ կրոն է եղել, ընդգրկել է մարդկության զգալի մասը և ապրել է բազում դարեր:

Արևից հետո լայն տարածում ուներ լուսնի պաշտամունքը: Հավատալիքներում Լուսինը իբրև տղա է պատկերվել, իսկ Արևը՝ աղջիկ, քույր ու եղբայր: Լուսնի կիսանդրին՝ **փառնակ** է անվանվել: Այս անունով են կոչվել նաև Պոնտոսի, Վրաստանի

և մյուս հարևան երկրների Լուսնի աստվածները (տե՛ս **Վ. Բդոյան,** Հայ ազգագրություն, էջ 206)։ Արևապաշտներին զուգահեռ՝ հին Հայաստանում եղել են նաև լուսնապաշտներ։ Լուսնի և նրա աստվածության մեջ կարծվել է նաև չարության առկայություն, որով մարդը հիվանդանում էր լուսնոտությամբ, որով հիվանդացողը կոչվում էր լուսնահար, և այդպիսիք դեղով չէին բուժվում։ Զանգեզուրում լուսնոտությունը բուժողը նրանց բուժում էր հագուստի վրա մահիկաձև ոսկե կամ արծաթե դրամ կարելով (**Ստ. Լիսիցյան,** Զանգեզուրի հայերը, էջ 283)։ Լուսնաձև մահիկը միշտ առկա էր կանանց զարդարանքների մեջ։ Շատ են լուսնի մասին առասպելաբանական և ազգագրական ընկալումները։ Դրանցից մեկում Արևն ու Լուսինը Աստծո զույգ զավակներն են։ Հոր հրամանով նրանք պարտավոր են գիշեր-ցերեկ հսկել աշխարհը։ Երբ լուսնի առաջին (նոր) և երկրորդ (փուլ) փուլերի ժամանակ երեխաները հիվանդանում էին, այն վերագրում էին լուսնին, առաջինի ժամանակ կոչվում էր նորեն, երկրորդ դեպքում՝ փուլ։ Ուստի լուսնի նորելու ժամանակ մանկանը դուրս էին հանում լուսինը ցույց տալու և ասում էին՝ «տե՛ս քեռին է»։ Դրամի մի ծայրից լուսնի նորի ձևով կտրում և տալիս էին տերտերին՝ պատարագի ժամանակ օրհնելու և հիվանդի պարանոցից կախելու համար։

Հին հավատալիքներում զգալի տեղ էր գրավում նաև աստղային համակարգի պաշտամունքը։ Մինչև մեր օրերը հասած վերապրուկների համաձայն՝ աստղերը կապված են մարդու ճակատագրի հետ. ծնվողի հետ ծնվում և մեռնողի հետ մեռնում են նրանք։ Ըստ առասպելաբանական հավատալիքների՝ յուրաքանչյուր մարդ ծնվում է որևէ աստղի տակ։ Աստղերն օժտված են չար ու բարի հատկություններով, որոնց

նմանվում են նաև նրանց տերերը: «Եթե նրա աստղը չար է՝ նա անբախտ է»: Այդտեղից էլ՝ «աստղով մարդ», «աստղով տղա է» դարձվածքները: Ըստ պատկերացումների՝ յուրաքանչյուր մարդ մեռնելիս երկնքից ցոլալով վայր է ընկնում նաև նրա աստղը:

Առավել ուշագրավ են աստղերի կենդանակերպ ու թռչնակերպ պատկերացումները և նրանց իմաստաբանական անվանումները: Ճանաչված էին հետևյալ աստղերը. 1. Կշեռք, 2. Լուսաստղ կամ Արուսյակ, 3. Բուլք, այսինքն՝ բույլ աստղեր, 4. Լուցք, այսինքն՝ արջ կոչված համաստեղությունը՝ լծկան անասունները՝ եզներն ու գոմեշները:

Աստղերի պաշտամունքը հայերի մեջ այնքան հին է, որքան արևի և լուսնի պաշտամունքը: Աստղերով հին հայերը, ինչպես աշխարհի բոլոր երկրագործ ժողովուրդները հազարամյակներ շարունակ կարգավորել են իրենց աշխատանքային օրացույցը: Այդպիսին էին 12 կենդանակերպները և այն բոլոր աստղերն ու աստղային խմբերը, որոնք, հողագործների կարծիքով, օժտված էին չար ու բարի ուժերով: Աստղերն իբրև թե ընդունակ են եղել մարդկանց հաղորդել իմաստություն, նրանց գժտեցնել և քաշել պատերազմների մեջ, տարածել հիվանդություններ անասունների մեջ և այլն: Աստղապաշտության հնագույն տվյալները առատորեն արտացոլվել են միջնադարյան հայ պատմագրական երկերում:

Ծիր կաթին աստղաբույլը կոչվում է նաև Հարդագողի ճանապարհ: Ըստ հնագույն ավանդազրույցներից մեկի՝ «Մի խիստ ձմեռ հայերի նախնի Վահագնը ասորեստանցիների նախնի Բարշամից հարդ է գողանում, և Ծիր կաթինը այդ գողացված հարդի հետքն է»:

Լուսատուների երկրաչափական խորհրդանիշները շատ են հանդիպում ժայռապատկերներում, բրոնզե գոտիների,

սրերի, դաշույնների վրա: Լուսատուների հետ կապված հնագույն պատկերացումները տարբեր ձևով տեղ են գտել բանահյուսության, քանդակագործության, ոսկերչության, ասեղնագործության, զարդարվեստի, ճարտարապետության մեջ և այլ բնագավառներում:

Մթնոլորտային երևույթների՝ քամու, փայլակի, փոթորկի, ձյան, անձրևի, ծիածանի, կարկուտի, ամպի, ամպրոպի, կայծակի վերաբերյալ եղած հավատալիքները:

Հարցեր և առաջադրանքներ:

Քամու, փոթորկի և պտտահողմի կապը *սրբերի (սբ. Սարգիս, սբ. Գևորգ), ոգիների ու վիշապի հետ: Հարավային և հյուսիսային քամիների կապը տարեղանակի և բերքատվության հետ, քամու ոռնոցի ու սուլոցի կապը չար ուժերի հետ:*

Ամպը *և եղանակի գուշակությունը (աստծո մորուքն է, երբ թափ է տալիս, անձրև է գալիս):*

Անձրև*, ժողովրդական մոգական պատկերացումները:*

Ծիածան *(Աստծո գոտին է, կամուրջ, աղեղ), գույների խորհուրդը, հավատալիքները (օրինակ՝ նրա տակով անցնելու հետ կապված):*

Որոտ, կայծակ, կարկուտ *(արտերն ու այգիները կարկուտից պահպանելու հնարները), ամպրոպ, երկրաշարժ. ժողովրդական պատկերացումները և կանխարգելող հմայական պատկերացումները նման երևույթների վերաբերյալ (ինչպես էին վարվում, նաև բժշկում, եթե մարդը կայծակնահար էր լինում, սուրբ, թե մեղավոր էին համարվում), ինչպես էին հուղարկավորում, կայծակին սիրաշահող աղոթքներ, զոհաբերություններ, տոներ:*

Իր գոյությամբ բնությանը ապավինած հնադարյան մարդը ընդունակ չէր ըմբռնելու բնական երևույթները, նրա տարերքը,

ուստի և երկնքում հավաքվող սև, մութ ամպերը, լսվող որոտի ահեղ ձայները, փայլատակող շանթերը՝ կայծակը, չէին կարող չսարսափեցնել, չահաբեկել անզոր բնապաշտին և, անկարող լինելով բացատրելու բնական երևույթների պատճառները, դրանց տիրելու, սանձահարելու գաղտնիքները, ստիպված էր երկրպագել դրանց՝ վերագրելով դրանց ու մարմնավորելով դրանց մեջ գերբնական, հաճախ չար ուժերը: Ահա այստեղից է ծնվել քամու, փոթորիկի, կայծակի, ամպրոպի, անձրևի, կարկուտի, ծիածանի և մթնոլորտային այլ երևույթների պաշտամունքը: Մթնոլորտային այս երևույթները հնուց խորը ու անջնջելի տպավորություն են թողել ժողովուրդների բանաստեղծական երևակայության վրա, հիմք դարձել տարբեր պատկերացումների, հավատալիքների, առասպելական զրույցների ու երգերի, ծիսապաշտամունքային արարողությունների: Հավատալիքները առանձնապես կապված են դաշտամշակության, այգեգործության հետ:

Հակիրճ առանձին-առանձին ներկայացնենք մթնոլորտային մի քանի երևույթներ ու դրանց առնչվող առասպելաբանական պատկերացումներն ու ավանդական զրույցները:

Ամպ: Մթնոլորտային երևույթներից ամենահավաքականը ամպն է, որի հետ են կապված թե՛ ամպրոպը՝ որոտով, կայծակով ու փայլակով, թե՛ անձրևը, կարկուտն ու ձյունը, թե՛ փոթորիկներն ու հողմահույզը և թե՛ երկնքի տարբեր կերպարափոխումները՝ իրենց ձևային ու գունային պեսպեսությամբ (տե՛ս **Հարությունյան Ս.,** Հայ առասպելաբանություն, Երևան, 2000, էջ 79):

Ամենավաղնջական ու ընդհանրական պատկերացումները կապված են ամպի կենդանակերպ անձնավորումներին, որոնք վկայվում են հնագույն դարերից: Ամպը անձնավորվել է այծի և կովի կերպարանքով: Առավել տարածվածը որոտացող

ամպի, ավելի ճիշտ՝ ամպրոպային ամպի կովակերպ պատկերացումն է:

Ամպրոպ: Որոտ: Կայծակ: Եթե առաջին ամպրոպը մարտ ամսին լինի, այդ տարի հունձը շատ լավ կլինի: Ավանդությունների համաձայն՝ փետրվարին լսվող որոտի առաջին ձայնը վատ բերք էր խոստանում, իսկ մարտին՝ լավ (**Լալայան Ե.,** Վարանդա, Երկեր, հ. 2, էջ 220): Ինչպես իրականում, հավատքի մեջ կայծակը որոտից անբաժան է: Բայց իբրև առանձին երևույթ՝ տարբեր մեկնություններ ունի: Որոշ պատկերացումներով դա Եղիա մարգարեի գավազանի կրակն է կամ Աստծո կրակը, որ շիկացած երկաթ է, որով պատրաստված թուրը հզոր ուժ է ունենում: Ժողովրդական խոսքով՝ «կեծակից՝ ասսու կրակից» առաջացած հրդեհը ուժից բարձր համարելով՝ չեն աշխատում հանգցնել (**Լալայան Ե.,** Վարանդա, էջ 239): Իբրև երկնային տերերի ցասման հետևանք են դիտվել նաև կարկուտն ու երաշտը: Հեթանոսական կրոնական պատկերացումներում այս երևույթները համարվել են «երկնային պատուհասներ»՝ պատիժներ: Ամպային այդ չար հրեշի հետ հարաբերության մեջ մտնելով՝ կախարդները «կապում» էին երկինքը: Այդ կապանքը կատարում էին հեթանոս քրմերին փոխարինող հայ կախարդները՝ օձի արյունով, էշի գանգի վրա գրած դյութանքներով և այլն: Որոշ տեղերում խմորից երեխա էին քանդակում և օրորելով՝ երկինքը կապում (**Հովհ. Մամիկոնյան,** էջ 157, Ագաթանգեղոս, էջ 315-316)[1]:

Ժողովուրդը կարկուտը, երաշտը, տարաժամ ձյունը կանխելու համար ցասման խաչեր էր կանգնեցնում, որպեսզի իբրև

---

[1] **Սրվանձտյանց Գ.,** Մանանա, Երկեր, հ. 1, 1978, **Մալխասյան Հովհ.,** Հայ գեղջուկի ալբոմը, ԱՀ, Գ, էջ 263, **Մխիթարյանց Ալ.** Փշրանք Շիրակի ամբարներից, ԷԱԺ, հ. Ա, էջ 201:

թե իջեցներ Աստծու բարկությունը: Կարկուտը դադարեցնելու համար մի շարք հմայական գործողություններ էին կատարում. յոթ կարկտահատիկ անդրանիկ զավակին ուտեցնելը, աղը դեպի երկինք նետելը, Տրընդեզի վառած խարույկի մոխիրը աղի հետ երկինք շաղ տալը, եկեղեցու զանգերը ղողանջելը և այլն:

Մթնոլորտային երևույթները, ինչպես և լուսատուները պատկերացվել են նախ կենդանու, ապա մարդու կերպարանքով:

Գրականություն

1. **Աբեղյան Մ.,** Հայ ժողովրդական հավատք, Երկեր, հ. Է, Երևան, 1975:
2. **Ալիշան Ղ.,** Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1910:
3. **Բդոյան Վ.,** Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972:
4. **Իսրայելյան Հ.,** Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973:
5. **Լալայան Ե.,** Ջավախք, Երկեր, հ. 1, 1983, Վարանդա (Արցախ), Գանձակի գավառ, Երկեր, հ. 2, Երևան, 1988, Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Երևան, 2004, Զանգեզուրի գավառ, Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք, Երկեր, հ. 4, Երևան, 2021, հ. 5, Վասպուրական, Մուշ-Տարոն, Երևան, 2024:
6. **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Երևան, 1969:
7. **Հարությունյան Ս.,** Հայ առասպելաբանություն, Երևան, 2000:
8. **Հարությունյան Ս.,** Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2021:
9. **Մնացականյան Հ.,** Արևապաշտության հետքերը Հայաստանում, ԱՀՊՊԹ, հ. 1, Երևան, 1948:
10. **Մովսիսյան Ս. (Բենսե),** Մշո Հարք (Բուլանըխ) գավառ // ՀԱԲ, գ. 3, Երևան, 1972:
11. **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան,

1931:

12. **Պետրոսյան Ա.,** Գայլի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում // ԲԵՀ, 1989, № 2, **նույնի՝** Արջի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում // ԲԵՀ, 1995, № 3: **Նույնի՝** Ագռավի և ծիծեռնակի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում // ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Տարեգիրք», Երևան, 2005: **Նույնի՝** Արագիլի և կաքավի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում // ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», գիրք Գ, Երևան, 2008:

13. **Սրվանձտյանց Գ.,** Երկեր, հ. 1, Երևան, 1978, հ. 2, Երևան, 1982:

14. **Վարդումյան Գ., Մարգարյան Ե.,** Կրոնների պատմություն, Երևան, 2006:

15. **Вардумян Г.,** Дохристианские культы армян // ՀԱԲ, հ. 18, Երևան, 1991:

ԹԵՄԱ 2
ՀԱՅՈՑ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԸ

Դիցարան: Հայոց բազմաստվածային դիցարանի հնագույն շերտերի դրսևորումների ժամանակը և պայմանները:

Հարցեր և առաջադրանքներ:

Հնագույն և հին շրջան:

Ազգածին աստվածներ: Հայկազուններ. Հայկ, Արամ, Տորք, Արա Գեղեցիկ: Հայկը որպես լույսի, բարու և իմաստության, ժամանակի աստված, ուստրերը և դուստրերը, որոնց անուններով են կոչվել հայոց տոմարի ամսանունները:

Վաղնջական հավատալիքների ու պաշտամունքի հիման վրա հայ էթնոսի համախմբման և վաղպետական կազմավորումների գոյացման ժամանակաշրջանում աստիճանաբար ձևավորվում են հայկական դիցարանն ու կազմակերպված կրոնական պաշտամունքը:

Հայոց նախնական դիցարանը. ցեղային աստվածություններ: Տոհմացեղային հասարակության քայքայման և վաղ ցեղային միությունների ու նախնական պետական կազմավորումների գոյացման ժամանակներից են սերում հայոց մեջ ցեղային աստվածությունների և նրանց պաշտամունքի առաջացումը, ցեղային նախնիների՝ իբրև ցեղ, հայրենիք, ցեղային որոշակի մշակույթ կերտող հերոսների դյուցազնացումն ու համաձուլումը ցեղային աստվածություններին: Ցեղն անձնավորվում է տվյալ ցեղանունը կրող առաջնորդ նախնու կամ աստվածության կերպարում, որն օժտված է ռազմի հատկանիշներով, կռվում է օտար բռնակալների դեմ, հիմք դնում իր ցեղի կամ ցեղային միության սահմանային տարածքներին ու ապահովում նրա անվտանգությունն ու բարգավաճումը (տե՛ս **Հարությունյան Ս.,** Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշ-

տամունքն ու դիցարանը, Եր., 2001):

Հայկական աստվածություններից ամենանախնականը թերևս **Թորգոմն** է, հայ և ցեղակից ժողովուրդների նախնին, մի ընդհանուր ցեղային աստվածության, որի ժառանգներն են **Հայկը, Արամը, Քարթլոսը** (վրացիների նախնին) և կովկասյան մյուս ցեղերը: Նա, ըստ աստվածաշնչյան ավանդության, Նոյի զավակ Հաբեթի թոռն էր, նրա անունով են կոչվել վաղ միջնադարյան Հայաստանն ու հայերը՝ «տուն Թորգոմեան», «տուն որդոց Թորգոմայ», «ազգ Թորգոմեան», իսկ Հայկը, ըստ Խորենացու և վրաց միջնադարյան ավանդության, Թորգոմի որդին է: Թորգոմը, ըստ երևույթին, եղել է վաղ հայկական ցեղերի նախնի աստվածությունը՝ օժտված ամպրոպային աստծո հաղթողի, նվաճողի հատկանիշներով, հետագայում, անուններ-ի համահնչունության պատճառով նույնացել Հայասա-Ազզի ցեղային միության Թեգարամա քաղաք-պետության անվանը և արտացոլվել աստվածաշնչյան ավանդության մեջ:

Նախահայ ցեղերի Թորգոմ դիցանվան ամպրոպային հատկանիշներն առավել որոշակի դրսևորումներ են գտել նրա ժառանգ և բուն հայերի նախնի Հայկի անվան և արարքների մեջ: Հայկը հայ ցեղերի անվանատու նախնին է, նրանց առաջնորդն ու նահապետը, որն ըմբոստանալով տիտանյան Բելի դեմ՝ հեռանում է հյուսիս, սպանում իրեն հետապնդող Բելին և հիմնում իր աշխարհն ու ցեղը (Հայք): Հայկի կռիվը Բելի հետ ամպրոպային հերոսի կռիվն է վիշապի հետ, որի սպանությամբ ապահովում է հայ ցեղի ու աշխարհի կարգուկանոնն ու բարգավաճումը:

Նույն առասպելի մեկ այլ դրսևորումն են հայոց երկրորդ անվանատու նախնու՝ Հայկի սերունդ Արամի մասին զրույցները: Հայկը և Արամը բուն հայկական ցեղերի նախնի աստվածություններ են, առաջինը կապված է հայերի ինքնան-

վանմանը, երկրորդը սերում է հայերի մեջ ձուլված նախահայ **արիմ** ցեղանունից: Այս զույգ ցեղային աստվածությունների պաշտամունքը, ըստ երևույթին, հայոց մեջ սկզբնավորվել է նրա ցեղային համախմբման վաղ շրջանում և շարունակել գոյությունը նաև հետագայում:

Նոր շրջան: Հայոց նոր դիցարանը: Հայկազունի Երվանդյան և Արտաշիսյան դարաշրջանի աստվածներ և առասպելաբանություն:

Հայոց նոր դիցարանը:

Լինելով պետական կազմակերպության արդյունք՝ հայկական դիցարանն ունեցել է իր մեհյան-տաճարները՝ իրենց զոհասեղաններով և բազմաթիվ քրմերով:

Հայկական հեթանոսական դիցարանի մանրամասն նկարագիր չկա: Դիցարանի վերաբերյալ տվյալները V-VII դարերի հայ պատմագիրները, մանավանդ Ագաթանգեղոսը, գրի է առել հեթանոսության դեմ ծավալված սուր պայքարի ընթացքում: Հայկական դիցարանի վերաբերյալ տվյալները ցաք ու ցրիվ վիճակով են հասել մեզ:

Այդուհանդերձ, դրանց հիման վրա հնարավոր է եղել վերականգնել դիցարանի հնարավոր ամբողջությունը՝ Արամազդը, Անահիտը, Նանեն, Վահագնը, Աստղիկը, Վանատուրը, Միհրը, Տիրը և Սպանդարամետը: Դիցարանի այս ցանկի մեջ չեն մտել Հայկը, Արամը, Անգեղը, Արա Գեղեցիկը, որոնք իրենց առասպելներով պատմականացել ու մարդկանց երևակայության մեջ մտել են իբրև իրական հերոսներ: Դրանց թվում էր նաև պտղաբերության և ջրային տարերքի աստվածուհի Նարը:

Հայկական նոր դիցարանի աստվածությունները իրենց գործառույթներով համադրվել են հունական համապատաս-

խան աստվածություններին. Արամազդը՝ Զևսին կամ Դիոսին, Անահիտը՝ Արտեմիդին, Վահագնը՝ Հերակլեսին, Միհրը՝ Հեփեստոսին, Տիրը՝ Ապոլոնին և Հերմեսին, Աստղիկը՝ Աֆրոդիտեին, Նանեն՝ Աթենասին:

Ըստ ուսումնասիրությունների՝ դիցարանի աստվածությունների համար կանգնեցված արձանները նախապես հասարակ նյութերից են եղել: Հելլենիզմի դարաշրջանում քարե, կավե և փայտե հասարակ արձանները շատ մեհյաններում արդեն փոխարինվել էին ոսկեձույլ, պղնձաձույլ և մարմարե ակնազարդ արձաններով: Իսկ մեհյանները (տաճարները) հնուց ի վեր եղել են մոնումենտալ կառույցներ, որոնց մեծ մասի հիմքերի վրա քրիստոնեական շրջանում կառուցվեցին եկեղեցիներ ու վանքեր:

1. Արամազդ: Համարվել է հայոց դիցարանի գլխավոր աստվածությունը: Անունը ծագում է Ահուրա-Մազդա աստվածությունից, որը հին պարսկերենում նշանակում է «Լուսնթագ», իսկ հին հայերենում՝ «Տեր», «Գերագույն իմաստուն»: Արամազդին մեծարում էին՝ «մեծ» և «արի» մակդիրներով՝ համարվում էր «արարիչ երկնի և երկրի» (**Ագաթանգեղոս,** էջ 48), «հայր դիցն ամենայնի» (**Ագաթանգեղոս,** էջ 83, 457), այսինքն՝ բոլոր աստվածների հայր, լիություն և պարարտություն պարգևող: Արամազդը երկնային աստվածություն էր, որին էապես նման էին հունական Զևսը, պարսկական Ահուրամազդան, վրացական Արմազին, Հռոմեական Յուպիտերը և հնդկական Ինդրան: Արամազդի արտակարգ հզորության և երկնային էության խորհրդանիշներից մեկը ծիածանն էր՝ իբրև իր գոտին: Նա համարվում է Անահիտ և Նանե դիցուհիների և Միհր աստծու հայրը, թեև պարզ չէ, թե ով էր վերջիններիս մայրը: Նրա գլխավոր մեհյանը գտնվում էր Բարձր Հայքի Դարանա-

ղիք գավառի Անի ամրոցում, որտեղ գտնվում էին նաև հայոց Արշակունի թագավորների դամբարաններն ու գանձերը: Ղևոնդ Ալիշանը մի այլ մեհյան մատնանշում է նաև Անձևացյաց գավառի մեջ Պաշատ լեռան վրա, որը կոչվել է «Տուն Արամազդայ և Աստղկան» (**Ղ. Ալիշան,** նշվ. աշխ., էջ 48, 237): Արամազդի տոնը նշվում էր Նավասարդին: Յոթ մեհյանների թվում Արամազդի մեհյանին էլ զոհաբերում էին ցլեր, նոխազներ, ձիեր, ջորիներ, բոլորն էլ սպիտակ գույնի:

Արամազդի բուն հայկական ոճով արձաններ չեն վկայված, բայց նրա նմանակը, Զևս-Օրոմազդես անունով և կոնաձև գլխարկով, պահպանված է Նեմրութ լեռան վրա[1]: Պատմագիրներից Մովսես Խորենացին նույնիսկ ակնարկել է չորս Արամազդի արձան, մեկը՝ ճաղատ գլխով (**Ագաթանգեղոս,** էջ 83):

2. Անահիտ: Անվանումը հանգում է պարթևական դիցուհի Անահիտա՝ «անարատ, անբիծ» ձևին, հայոց ամենապաշտելի մայր դիցուհին, Արամազդի դուստրը, ըստ «Հայսմավուրքի»՝ կինը բնութագրվում է «մեծ» մակդիրով, կոչվում է նաև «Մեծ տիկին», «մայր ամենայն զգաստութեանց», «բարերար ամենայն մարդկան բնութեան», ազգի և մարդկանց խնամակալ, «որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց» (**Ագաթանգեղոս,** էջ 26-27, 40-41, 47-48): Նա բնորոշվում էր նաև «ոսկեմայր», «ոսկեծին», «ոսկեհատ» մակդիրներով, հավանաբար իր մեհյաններում կանգնեցված ոսկյա կամ արծաթյա արձանների պատճառով: Նրա գլխավոր պաշտամունքատեղին գտնվում էր Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա ավանում, բաղկացած չորս մեհյաններից, Մեծ և Փոքր Հայքերի միջև, Փոքր Ասիայի մերձակայքում: Դիցուհու լայն ու համաժողովրդա-

---

[1] Տե՛ս **Սարգսյան Գ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 28-29, նկ. 3:

կան պաշտամունքի հիման վրա ամբողջ գավառը կոչվում էր **Անահտական**:

Ստրաբոնը նշում է, որ Անահիտի պաշտամունքը Հայոց մեջ գերազանցում է բոլորին: Նրա հաջորդ մեհյանը գտնվում էր հին հայոց Արմավիր մայրաքաղաքում, որտեղից, ըստ ավանդության, Երվանդը նրա արձանը տեղափոխում է Ախուրյանի վրա իր կառուցած Բագարանը, այնտեղից էլ հետագայում Արտաշես I-ը տեղափոխում է իր նորակառույց Արտաշատ մայրաքաղաքը: Դիցուհու մյուս մեհյանը կառուցվել է Տարոնի Աշտիշատում, Վահագնի և Աստղիկի մեհյանների մոտակայքում: Անահիտի մեհյաններից մեկն էլ գտնվում էր Անձևացյաց գավառի Դարբնաց քարում, Արամազդի մեհյանի կողքին:

Երիզայի Անահտական մեհյանների շրջակա արոտավայրերում արածում էին Անահիտին նվիրված երինջների նախիրներ՝ ճակատներին ջահաձև խարան արված՝ իբրև սրբազան զոհանշան: Ըստ Ստրաբոնի հաղորդման՝ տաճարին նվիրում էին հարյուրավոր սպասավորներ և սպասուհիներ, որոնք կոչվում էին հիերոդուլներ (սրբապաշտներ): Բարձրաշխարհիկ կույսերն իրենց կուսությունը նվիրում էին մայր դիցուհուն՝ սեռական կապի մեջ մտնելով ուխտավորների հետ՝ իբրև սրբազան արարողություն, որից հետո միայն իրավունք ունեին ամուսնանալու:

Անահիտի պաշտամունքային տոնախմբությունները կատարվում էին ապրիլի սկզբին, երբ նախապատրաստվում էին երկրագործական աշխատանքները և սկսվում էր վարուցանքը և ապա՝ ամռան վերջին՝ օգոստոսի 21-ին՝ նավասարդին, երբ դաշտամշակությունն ու այգեգործությունը հասունացման շրջան էին ապրում և սկսվում էր բերքահավաքը:

Անահիտի մեհյաններին ուխտավորները թարմ ոստեր և

ճյուղերից հյուսված պսակներ էին դնում: Այս բոլոր ծիսական արարողությունները վկայում են դիցուհու պտղաբերման, բերքի, մարդկային սերնդի արգասավորման ու նրանց հովանավորման գործառույթները, որոնք բնորոշ էին բոլոր մայր աստվածություններին: Հետագայում Անահիտ մայր դիցուհու պաշտամունքը խորը ազդեցություն է թողնում քրիստոնեական կրոնի՝ Մարիամ Աստվածածնի կերպարի և պաշտամունքի վրա՝ դրանք հարստացնելով պտղավորման, ծննդաբերության, բուժման, հովանավորման գործառույթներով: Անահիտ դիցուհու պատկերն արտացոլվել է հայոց կիրառական արվեստում[1], նմանապես հայկական դրամների վրա[2], պեղումներից գտնված մեդալիոնը՝ կնոջ և երեխայի պատկերով, որը պատկանում է հելլենիստական դարաշրջանին, նույնպես վերագրվում է Անահիտ դիցուհուն[3]: Բոլորովին վերջերս Լոնդոնի բրիտանական թանգարանում պահվող Անահիտ դիցուհու բրոնզե գլուխը ցուցադրվել է Հայաստանի պատմության թանգարանում:

3. Վահագն: Հայոց դիցարանի երրորդ աստվածությունը Վահագն է, որը հայոց ռազմի և հաղթանակի աստվածությունն էր, որի գլխավոր մեհյանը՝ Վահեվանյան, գտնվում էր Տարոնի Աշտիշատում, Քարքե լեռան լանջին, Ոսկեմայր, Ոսկեծին-Անահիտ և Աստղիկ դիցուհիների մեհյանների կողքին: Կոչվել է Վիշապաքաղ Վահագն, որը Արամազդի և Անահիտի հետ հայոց դիցարանում հավանաբար կազմել են սրբազան երրոր-

---

[1] **Բդոյան Վ.,** Հայկական աղամաններ, Անահիտ դիցուհուն խորհրդանշող կանացիակերպ աղամանները, Երևան, 1986:

[2] **Лисициан Србуи,** Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1, Ереван, 1958, с. 272-273.

[3] **Մելիք-Փաշայան Կ.,** Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 117-118:

դություն: Վահագնի մեհյաններ են հիշատակված Տոսպի Ահևական գյուղում, Կորճեք նահանգի Փոքր Աղբակ գյուղում (**Ղ. Ալիշան,** էջ 96): Ըստ Խորենացու՝ նա համարվել է եղեգնից ու կրակից ծնված և ներկայացրել է V դարում դեռևս երգվող երգը. Երկնէր երկին, երկնէր երկիր, Երկնէր և ծիրանի ծով. Երկն ի ծովում ունէր զկարմրիկն եղեգնիկ... (**Խորենացի,** աշխարհաբար թարգմ., Երևան, 1940, էջ 55): Ըստ որոշ ուսումնասիրողների՝ այս աստվածությունը մարմնավորել է Արեգակը, իսկ Մ. Աբեղյանի կարծիքով՝ ամպրոպի աստվածն էր (Երկեր, հ. Ա, Երևան, 1975, էջ 75-85, 88):

4. Միհրը: Հայոց դիցարանում Արամազդի որդին է, **արեգակի** և **երկնային լույսի** հնագույն աստվածությունը: Նրա գլխավոր մեհյանը գտնվում է Դերջան գավառի Բագայառիճ գյուղում: Նրան էր, հավանաբար, ձոնված Գառնիի հեթանոսական տաճարը: Հելլենիստական շրջանում նրան է զուգակցվել դարբնության և հրի աստված Հեփեստոսը: Հին հայերը դեռևս Ք.ա. V դարում արևային աստվածությանը (Հելիոս) ձիեր են զոհաբերել: Միհրի տոնը կատարվել է փետրվարի 14-ին, այդ պատճառով այդ ամիսը մեհեկան է կոչվել: Նրա անվան հետ է կապվում Տյառնընդառաջի վերանվանված կրակի տոնը, որը միաժամանակ Արևի տոնն է: Ինչպես գիտենք Քսենոփոնից, Արևին (Միհրին) հայերը ձիեր էին զոհում: Ենթադրվում էր՝ քանի որ Հայաստանը Պարսկաստանին տարեկան քսան հազար նժույգ էր ուղարկում, որպեսզի զոհեին «Միհրական տոներին, նույնն էր լինելու նաև մեր երկրում» (**Ալիշան,** էջ 287):

5. Աստղիկ: Անահիտից հետո Աստղիկը հայոց դիցարանի երկրորդ դիցուհին է՝ սիրո, գեղեցկության, ջրի, խոնավության և հեշտության աստվածուհին՝ համադրված հունական Ափրոդիտեին: Նրա մեհյանը գտնվել է Աշտիշատում՝ Վահագնի

մեհյանի կողքին և կոչվում է «Սենեակ Վահագնի»: Սենեակ բառը հին հայերենում նշանակել է նաև «հարս»՝ «Վահագնի հարս», ուստի և համարել են Վահագնի կին: Աստղիկի հաջորդ պաշտամունքատեղին գտնվում էր Անձևացյաց գավառում, Պաղատ (Պաշատ) լեռան վրա, որ կոչվում էր «Տուն Արամազդայ և Աստղըկան», որտեղ կատարվել են նրա տոնակատարությունները: Աստղիկի մեհյաններից մեկն էլ եղել է Վանից հարավ ընկած Արտամետում: Նրա նվիրական ծաղիկն էր վարդը, որից և դիցուհու **վարդամատն** մակդիրը, իսկ թռչուններից՝ հավանաբար աղավնին, որ երևում է նրան նվիրված Վարդավառի տոնին աղավնիներ թռցնելու սովորույթից: Ըստ գրավոր աղբյուրների՝ Աստղիկի համաժողովրդական տոնը Վարդավառն էր, երբ դիցուհուն վարդ են մատուցել: Նրա պաշտամունքը կապված է եղել ջրի հետ, որ երևում է Վարդավառին միմյանց վրա ջուր ցողելու սովորությունից: Այս տոնի առթիվ Գ. Սրվանձտյանցը գրում է, թե Վարդավառի տոնը նշանավորվում էր համատարած ջրախաղությամբ, որի վերապրուկները հարատևում են մեր օրերում: «Արք և կանայք, ծերք և մանկտիք ջրախաղություն կը կատարեն. թե տուներու մեջ, և թե փողոցները, կամ դաշտերի մեջ գետերու ափին կամ աղբյուրներու ակին ու առվակին մոտ խմբված կը դնեն ի ջուր. կամ գոնե կուժերով իրարու վրա ջուր կթափէն (տե՛ս **Սրվանձտյանց Գ.**, Գրոց ու բրոց, էջ 122-123): Ըստ Գ. Սրվանձտյանցի բերած առասպելի՝ Եփրատը եղել է նրա լողարանը, նրա չքնաղ մերկությունը լողանալիս ծածկվել է մշուշով՝ օտարի աչքից անտեսանելի դարձնելով: Ըստ մեկ այլ առասպելի (տե՛ս **Սրվանձտյանց Գ.,** Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 71)՝ Աստղիկը Նոյի դուստրն է, ծնված ջրհեղեղից հետո (դարձյալ կապված ջրի և ավետաբեր աղավնու գաղափարի հետ), (տե՛ս **Հարությունյան Ս.,** Հին հայոց հավատալիքները…, էջ 43):

6. Տիր: Հայոց դիցարանի իմաստության, ուսման, գիտության հովանավորման, ճարտասանության, ճակատագրի կանխագուշակման՝ երազահանության աստվածն է, Արամազդի գրիչը կամ քարտուղարը: Տրէ ձևով նաև հայկական տոմարի 4-րդ ամիսն է: Պաշտամունքավայրը գտնվում էր հին Արտաշատի մոտ: Այդ տաճարը կոչվել է «Երազամոյն տեղիք», «Երազացոյց երազահան»: Տիրը համադրվել է Ապոլոն և Հերմես աստվածներին՝ նույն գործառույթները ունենալու համար: Նրա մեհյանը արվեստի տաճար էր համարվում: Կոչվել է նաև Գրող: Տիր աստվածության պաշտոններից մեկն էլ եղել է աշնանն իրականացվող վարուցանքի հովանավորումը, ըստ այդմ էլ վարող-ցանող գործիքը կոչվում էր **տրի խարոր**, ցանքսը՝ **տիր դնել**, լծկանները՝ **տրի եզներ**, գործող անձինք՝ **տրի մաճկալ**, սերմացանը՝ **տիր ցանող**: Տիրից է անցել Տեր բառը: «Գրողը տանի» անեծքը ևս կապված է Տիր աստվածության անվան և պաշտոնի հետ:

7. Նանե: Հայոց դիցարանի երրորդ աստվածուհին է, Արամազդի դուստրը, համադրված հունական Աթենաս դիցուհուն՝ իմաստության և ռազմի աստվածության հատկանիշների համար: Պաշտամունքատեղին գտնվել է Եկեղյաց գավառի Թիլ ավանում: Համարվել է նաև հայ կնոջը մարմնավորող կերպար, տնային տնտեսության կազմակերպիչ ու հնարագետ և կոչվել է **Նան, Նանե, Նանի** ձևերով:

8. Ամանոր-Վանատուր՝ Նոր տարվա և հյուրընկալության աստվածություններն էին: Պաշտամունքավայրը գտնվում էր Բագրևանդի Բագավան դիցավանում: Տոնը կատարվել է գարնանը կամ ամռանը, տևել է նավասարդի 1-6-ը: Ըստ Ագաթանգեղոսի՝ տարեգլխի ուրախությունները մարմնավորող Ամանոր-Վանատուրը այգիների ու պարտեզների պտուղների խնամակալն էր: Ամանոր անվանումը կազմված էր **ամ-տարի**

և **նոր** բառերից, որ նշանակում է Նոր տարի, իսկ **Վանատուրը՝** վանք և տուր բառերից է կազմված, որ նշանակում է «հյուրընկալ», «հյուրասիրություն ցույց տվող»:

9. Սպանդարամետ: Կոչվել է նաև Սանդարամետ: Համարվել է երկրի ընդերքի, ստորերկրյա աստվածությունը՝ դժոխքի տիրակալը, անդունդների աստվածուհին: Համեմատում են հունական Դեմետրայի հետ, որը նույնպես անդունդների դիցուհին էր: Պաշտամունքատեղը եղել է Մշո Քարքե լեռան վրա՝ ինն աղբյուրների բխման տեղում, որտեղ կանգնեցված են եղել Դեմետրա և Գիսանե աստվածների արձանները: Հետագայում դրանց տեղում Գրիգոր Լուսավորիչը կառուցում է Գլակա կամ Սուրբ Կարապետ վանքը:

Գրականություն

1. **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Ա, Եր., 1966, հ. Է, 1975, հ. Ը, 1985:
2. Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Էջմիածին, Տփղիս, 1909:
3. **Ալիշան Ղ.,** Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895:
4. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Երևան, 1974:
5. **Բդոյան Վ.,** Հայկական աղամաններ: Անահիտ դիցուհուն խորհրդանշող կանացիակերպ աղամաններ, Երևան, 1986:
6. Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1971, հ. II, 1984:
7. **Հարությունյան Ս.,** Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:
8. **Հարությունյան Ս.,** Հին հայց հավատալիքները, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001:
9. **Մելիք-Փաշայան Կ.,** Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:
10. **Տաղավարյան Ն.,** Հայոց հին կրոնները, Կ. Պոլիս, 1909:
11. **Вардумян Г.,** Дохристианские культы армян // ՀԱԲ, հ. 18, Եր., 1991:
12. **Токарев С.,** Ранние формы религии, М., 1964.

ԹԵՄԱ 3
ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հարցեր և առաջադրանքներ:

Տոնը որպես սոցիալ-մշակութային երևույթ. էությունը, գործառույթները տիպաբանությունը, ուսումնասիրությունը հայ ազգագրական գիտության մեջ: Այն որպես կենցաղի և մշակույթի գրեթե բոլոր բաղադրիչների յուրահատուկ միկրոհամալիր: Տոնը որպես կրոնական պաշտամունքի հենքի վրա կատարվող ժողովրդական տոնահանդես: Քրիստոնեության ընդունումը և տոնական համակարգի վերափոխումը: Գլխավոր տոներ (Նավասարդ կամ Նոր տարի, Բարեկենդան, Տյառնընդառաջ, Համբարձում, Վարդավառ): Զուտ քրիստոնեական տոներ՝ Սուրբ Ծնունդ և Զրօրհնեք, Սուրբ Սարգիս, Ծաղկազարդ, Զատիկ: Տոնի՝ հասարակական կյանքի կանոնակարգման ու բարոյադաստիարակչական նշանակությունը: Ավանդութային և նորօրյա տոներ: Եկեղեցու դերը տոնական համակարգի պահպանման գործում:

* * *

Տոների ձևավորումը և զարգացումը պայմանավորված է սոցիալական, տնտեսական, պատմաքաղաքական, էթնոմշակութային գործընթացների փոխազդեցություններով: Արտացոլելով հասարակության մեջ իրականացվող այդ գործընթացները՝ տոները կատարում են էթնիկ ավանդույթների պահպանման և դրանք սերունդներին փոխանցելու կարևորագույն գործառույթներ: Տոնը յուրատեսակ միկրոհամալիր է, որում առկա են կենցաղի և մշակույթի գրեթե բոլոր բաղադրիչները. տնտեսական զբաղմունքներ, բնակավայր, բնակարան, ազգակցական, դրացիական, ընտանեկան հարաբերություններ, նախնիների հիշատակ, ամուսնական ծիսաշար, երաժշտա-

կան ստեղծագործություններ, խաղեր, ուտեստ և այլն:

Հայոց ավանդական կենցաղում առավել տարածված տոներն են՝ 1. Ամանոր (Նոր տարի), 2. Սուրբ Ծնունդ և Մկրտություն, 3. Սուրբ Սարգիս, 4. Տյառնընդառաջ, 5. Բարեկենդան, 6. Մեծ պահք, 7. Ծաղկազարդ, 8. Զատիկ, 9. Համբարձում, 10. Վարդավառ, 11. Խաղողօրհնեք, 12. Խաչվերաց, 13. Նավասարդ:

Տոների ուսումնասիրության առումով կարևոր ներդրում են՝ Հ. Խառատյանի՝ «Հայ ժողովրդական տոները» (Եր., 2005), Ս. Մկրտչյանի՝ «Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն)» (Եր., 2010, 2021), Լ. Սիմոնյանի՝ «Տոմար, Նոր տարի, Ս. Ծնունդ, հ. 1», Երևան, 2006, նույնի՝ «Տոմարային ծիսաշար. Ս. Սարգիս, Տրընդեզ, Բարեկենդան», հ. 2, Երևան, 2007, Ա.Օդաբաշյանի՝ «Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում» // ՀԱԲ, գիրք 9, Երևան, 1978, էջ 7-70, Է. Պետրոսյանի՝ «Праздники армян в контексте европейской культуры», Ереван, 2011, և այլ աշխատություններ:

Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում

Հարցեր և առաջադրանքներ:

Տոնի անվանումները և տոնակատարության ժամանակը: ***Նավասարդ*** *– Նոր տարի, անվան մեկնությունը, կատարման ժամանակը (մարտի 20-21, գարնան գիշերահավասարին, ապա տոմարական առանձնահատկություններով պայմանավորված՝ տեղափոխվել է օգոստոսի 11-ին): Ս. Երևանցի կաթողիկոսի (XVIII դ.) մշակած նոր տոնացույցի սկիզբը՝ հունվարի 1-ը՝ Նոր տարի, Տարեմուտ, Ամանոր, Կաղանդ, Տարեգլուխ և այլ անվանումներով: Հին և նոր տոմար, դրանց մեկնությունը:*

Տոնի հատկանիշները, սովորութային համալիրը. ա) բնակարանը, բնակավայրը, մարդու մարմինն ու հոգին մաքրելը,

հարդարելը, բ) ծիսական ուտեստը, գ) ծիսական այցելությունները, դ) բախտագուշակությունները, ե) հաջողությունն ապահովելուն միտված և չարը կանխարգելող հմայական արարողությունները: Ամանորի տոնն ուղեկցող սովորույթների ու ծեսերի տարածքային և իմաստային բնութագրությունը: Քրիստոնեական տարեմուտ: Զմեռ պապի կերպարի դրսևորման ձևերը հայոց ավանդական և ժամանակակից ամանորյա տոնակատարություններում:

Զմեռ պապն ու տոնածառը, դրանց հնագույն հայկական նախատիպերը (Սահակ Պարթևն ու ձիթենու ճյուղը):

* * *

Ամանորը կամ Նոր տարին կոչվել է նաև Կաղանդ, ամենասիրվածն ու տարածվածն է հայոց տոնածիսական համալիրում: Նոր տարվա նախորդ գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Խլվլիկ և այլն: Ամանորի արարողությունները կատարվել են մեծ հանդիսությամբ, որոնք աչքի են ընկել ժողովրդական ծեսերի, սովորույթների և հավատալիքների բազմազանությամբ: Նոր տարվա տոնակատարությունը կապված էր ընտանեկան ու համայնքային հարաբերությունների բարելավման, մարդու կյանքի նորացման գաղափարի և տնտեսական բարգավաճման հետ: Այն նշվել է տարբեր ժամանակներում: Հայոց տարեսկիզբն անցյալում համընկնում էր տնտեսական տարվա սկզբին՝ գարնանամուտին կամ բնության զարթոնքին (մարտի 20-21, գարնան գիշերահավասարին): Տոմարի զարգացման հաջորդ փուլում տարեսկիզբ է համարվել Նավասարդի 1-ը (օգոստոսի 11): Այն նշվում էր որպես բերքահավաքի՝ «Նորոց պտղոց և հունձքի տոն»: XVIII դարի կեսից աստիճանաբար սկսեց մուտք գործել քրիստոնեական Ամանորը, որը նշվում էր հունվարի 1-ին, հռոմեացիները այն նշում էին դեռևս Հուլիոս

Կեսար կայսեր օրոք, Ք.ա.՝ 45 թ.: Այդ տոմարը կայսեր անունով էլ կոչվեց Հուլյան: 1582 թ. այն փոխվեց Գրիգորիս XIII պապի կողմից և հաստատվեց նոր՝ Գրիգորյան տոմարը: Գրիգորյան և Հուլյան տոմարների տարբերությունը՝ 11 րոպե 14 վայրկյանը, 1582 թ. կազմեց 10 օր, իսկ 1918 թ.՝ 13 օր:

Ամանորին հեթանոսության շրջանում կատարվում էին մեծածավալ արարողություններ: Արևելահայերը հիմնականում տոնը անվանում էին Ամանոր կամ Նոր տարի, իսկ արևմտահայերը՝ Կաղանդ (ամսագլխի օր): Խորհրդային Հայաստանը Գրիգորյանների տոմարը պաշտոնապես ընդունել է 1920 թ. դեկտեմբերի 2-ին[1]:

Տոնածառն ու Ձմեռ պապը հայոց ավանդույթում ուշ է ներմուծվել: 1513 թվականից Գերմանիայում տոնածառը եղևնին էր՝ զարդարված մոմերով: Համշենում այդպիսին համարվել է ձիթենին: Հայաստանում եղևնին միայն XIX դ. վերջերին մուտք գործեց, նախ՝ քաղաքային կենցաղում: Հավատում էին, որ զարդարված տոնածառը հաջողություն կբերի ընտանիքին:

Հնում Ձմեռ պապի դերը մեզանում Սահակ Պարթևին է վերագրվել:

Ամանորի ծիսակարգը. 1. բնակարանն ու բնակավայրը և մարդու մարմինն ու հոգին մաքրելն ու հարդարելը, 2. ծիսական ուտեստը, 3. ծիսական այցելությունները, 4. բախտագուշակությունները, 5. հաջողությունն ապահովելուն միտված և չարը կանխարգելող հմայական արարողությունները: Առավել մանրամասն տրված է Ա. Օդաբաշյանի և Հ. Խառատյանի ուսումնասիրություններում:

Ամանորի ամենատարածված ծեսերից էր Նոր տարվա

---

[1] Մանրամասն տե՛ս **Մկրտչյան Ս.,** Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ, էջ 13-31:

նախորդ երեկոյան կամ գիշերը երեխաներից կազմված խմբերով տնետուն ման գալը, շնորհավորելը և փոխարենը նվերներ ստանալը (չիր, չամիչ, գաթա և այլն), կամ էլ երդիկներից տոպրակ, կողով, գուլպա էին կախում, որը հայտնի էր **կախուկ** կամ **գոտեկախ** անունով:

Սահմանված էր նաև շնորհավորելու, նվիրատվական և մեծարման արարողակարգը. զավակները՝ ծնողներին, արհեստավորները՝ վարպետին, աշակերտներն՝ ուսուցչին, տան մեծը՝ համայնքի ղեկավար տանուտերին՝ մրգեղեն, չրեղեն, թաշկինակ, գլխարկ նվիրելով:

Նոր տարին ընտանեկան տոն էր: Այն խորհրդանշում էր ընտանիքի ամրությունը, նրա անդամների փոխադարձ հարգանքը, հարգալից վերաբերմունքը տարեցների նկատմամբ: Տարածված էր «առաջինի» հմայական խորհրդի հավատալիքը: Առավոտյան օջախի դուռն առաջինը բացում էր ընտանիքի մեծը, որպեսզի նա երկար տարիներ անպակաս լիներ տնեցիների գլխից: Առաջին շնորհավորողը նահապետից ստանում էր նվեր: Դրան հաջորդում էին այցելությունները: Հավատում էին, որ եթե տան դուռն առաջինը բացի ուրախ բնավորության տեր անձնավորություն, ապա տարին ուրախ կանցնի: Ամեն ընտանիք սպասում էր, որ առաջին դուռը բացողը լիներ բարի մարդ՝ «ձեռքը թեթև, ոտքը խերով»: Տոնական օրերին տան դուռը միշտ պետք է բաց մնար:

Տոնի կարևոր տարրերից մեկը գուշակություններ անելու սովորույթն էր. հավատում էին, որ նոր տարվա նախորդ գիշերը հոսող ջրերը մեկ վայրկյան ոսկեբեր էին դառնում:

Բարիք ստանալու ակնկալությամբ աղբյուրների, գետի մեջ նետում էին ցորեն, գարի կամ հաց ու բլիթ: Այդ գիշեր տնից ջուր թափելն արգելվում էր: Տարածված էին անձի ճա-

կատագրին առնչվող գուշակությունները։

Տոնական ուտեստը աչքի էր ընկնում հարուստ տեսականիով. թարմ ու չոր պտուղները, ընկուզեղենը, գաթան, անուշապուրն ու հարիսան, տարեհացը անպակաս էին լինելու։ Վերջինիս մեջ որևէ նշան էր դրվում և Ամանորի գիշեր բաժանվում տան անդամներին։ Ում ընկներ նշանը, համարվում էր բախտավոր։ Ամանորի սեղանները լի էին նաև ավանդական պասուց ուտեստով՝ աղանձ (ձավարով-կանեփով, քունջութով ու չամիչով համեմված), պասուց տոլմա՝ սիսեռով, ոսպով, լոբով և չամիչով, նաև ձկնեղեն և այլն, քանի որ տոնը համընկնում էր շաբաթապահքի օրերին։ Ընտանիքի մեծն ու նրա կինը մրգերով ու քաղցրավենիքով էին ուրախացնում տան անդամներին։ Մրգերի ընծաբերումը խորհրդանշում էր պտղաբերությունը ոչ միայն մարդկանց, այլև այգեգործության, դաշտամշակության, անասնապահության բնագավառներում։ Տանտիկինը, կարմիր կտոր ձեռքին, տնից դուրս էր գալիս, դրանով մի քիչ մեղր քսում մուտքի դռանը ու այդ կտորը փռում որևէ տեղ՝ տարին քաղցր ու կարմիր՝ առատ անցկացնելու ակնկալիքով։ Սովորույթի համաձայն՝ փեսան օղի, թխվածք և մրգեղեն վերցրած գնում էր աներանց տուն, համբուրում աներոջ ու զոքանչի ձեռքերը, օղին տալիս էր աներոջը, թխվածքը՝ զոքանչին, մրգեղենը՝ հարսնացուին, իսկ վերջինիս կողմից ստանում «փնջած խնձոր», փեսացուն էլ՝ իր հերթին խնձոր էր նվիրում նրան՝ մեջը արծաթե դրամ կամ զարդ խրված։

Առաջինը այցելում էին ննջեցյալ ունեցող ազգականի կամ հարևանի տուն՝ մխիթարելու համար, տան նահապետը՝ տանուտիրոջ և քահանայի տուն՝ օղի վերցրած։

Այսպիսով, հմայական բնույթի հավատալիքների ու գու-

շակությունների ողջ համալիրը ուղղված էր անձնական, ընտանեկան, տնտեսական հաջողությունների ապահովմանը:

Քրիստոսի Ծնունդ և մկրտություն

Հարցեր և առաջադրանքներ:

Տոնը նվիրված է Աստված-որդու Ծննդյանը, Աստվածահայտնությանը (Մկրտությանը): Քրիստոսի Ծնունդը և Մկրտությունը որպես զուտ եկեղեցական տաղավարային տոն, ծագումնաբանությունը, սովորույթներն ու ծեսերը: Տոնը որպես եկեղեցական Տիրունի տոն, տոնի ծագման հենքով և ավանդական կենցաղային դրսևորումներով աղերսը հեթանոսական հնագույն ժամանակաշրջանի, հին աստվածների պաշտամունքի, բնության վերակենդանացման, վերածնության խորհրդի հետ: Ուտեստը (տարատեսակ փլավները, ձկնեղենը, ապուրները, բանջարեղենը, ձուն, պասուց տոլման, հատիկեղենը, իսկ խմիչքը՝ գինին): Ծանոթանալ Լ. Սիմոնյանի՝ Տոմար, Նոր տարի, Ս. Ծնունդ, հ. 1, գրքին:

Տոնը հայտնի է նաև Ջրօրհնեք կամ **պստիկ զատիկ** անվամբ: Մինչև IV դարը քրիստոնեական բոլոր եկեղեցիները Քրիստոսի ծնունդը նշում էին միասնաբար հունվարի 6-ին, սակայն 451 թ. Քաղկեդոնի տիեզերաժողովի որոշմամբ արևմտյան եկեղեցիները սկսեցին այն նշել դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ին: Առաքելական հայ եկեղեցին և՛ Ծնունդը, և՛ Մկրտությունը նշում է հունվարի 6-ին:

Տոնի հիմնական արարողակարգը: Հայոց եկեղեցու հավատարիմ մնալը Քրիստոսի ծննդյան հնավանդ ու ճշմարիտ ժամկետին: Տոնի հաջորդ օրը՝ հունվարի 7-ին Ծննդյան տոնի մեռելոցն էր՝ ծիսական ուտեստով օրհնել էին տալիս մերձավորների գերեզմանները: Տոնական օրերին (մինչև հունվարի 13-ը՝ Հիսուսի անվանակոչության օրը) շնորհավորական մաղ-

թանքն էր՝ «Քրիստոս ծնավ և հայտնեցավ», պատասխանը՝ «Զեզ և մեզ մեծ ավետիս»: Լինելով եկեղեցական տաղավարային տոն՝ ծագմամբ և ավանդական կենցաղային դրսևորումներով որոշակի աղերսներ ունի մինչքրիստոնեական հավատալիքների հետ, արտացոլում են բնության վերակենդանացումը, վերածնության խորհուրդը:

Տոնը սկսվում էր Ծննդյան Ճրագալույցին, որը հայտնի էր նաև **թաթախման գիշեր** և **խթման գիշեր** անվանումներով: Երեկոյան սուրբ պատարագ էր մատուցվում, կատարվում էր պասը լուծելու կամ թաթախվելու ծես, հավատացյալները ստանում էին սուրբ հաղորդություն, յուրաքանչյուրը շտապում էր իր բաժին նշխարքը ստանալու և տուն վերադառնալու՝ ընտանյոք ընթրելու, որը խորհրդանշում էր պասի ավարտը:

Տոնի ուտեստներն էին՝ փլավները, ձկնեղենը, ապուրները, մայրամաճաշերը, որը եփում էին սպիտակ բանջարից, տարածում ուներ նաև բանջարեղենը, պասուց տոլման, խմիչքը գինին էր:

Ճրագալույցին այցելում էին եկեղեցի՝ մոմ վառելու և աղոթելու համար, իսկ նախորդ օրը մեծ ու փոքր լողանում էին և տունը հիմնովին մաքրում: Այդ օրը ևս հատուկ բաղարջ էին թխում՝ մեջը դրամ դնելով: Ճրագալույցին այն կտրում և հավասար բաժանում էին ընտանիքի անդամներին: Երբեմն բաժին էին հանում նաև հյուրերին, տան անասուններին: Ում բաժնից դրամը դուրս գար, տարվա հաջողությունը նրան էր ուղեկցելու:

Տոնական ծիսական շարքի մեջ էր մտնում մերձավորներին շնորհավորանքը, այցելությունը միմյանց տները, մխիթարանքի օր էր նրանց համար, ովքեր ունեին նոր ննջեցյալներ,

այցելում էին հատուկ ընծաներով: Այցելուները հիմնականում տարեց տղամարդիկ ու կանայք էին: Հավատում էին, որ ճրագալույցի գիշերը բոլոր ջրերը մի պահ կանգ են առնում և եթե այդ պահին մի որևէ իր դնեն ջրի մեջ, այն իսկույն ոսկի կամ արծաթ կդառնա, իսկ եթե քար դնեն, այն բուժելու հատկություններ կունենա: Չբեր կանայք երեք անգամ հաղորդակցվում էին սրբազան **համարվող այդ ջրերի** հետ: Հաջորդ օրը նշվում էր Զրօրհնեքի արարողությունը, որը Քրիստոսով մկրտությունը խորհրդանշող գլխավոր ծեսն էր՝ խաչը ջուրը գցելը: Եկեղեցում օրհնված ջուրը տանում էին տները՝ հիվանդությունները բուժելու համար, դրանով լվանում պղծված ամանները:

Զրօրհնեքին կազմակերպվում էին ձիախաղեր և մականախաղեր:

Սուրբ Սարգիս

Սուրբ Սարգսի տոնի ավանդական ժողովրդական և եկեղեցական մեկնությունը, տոնին ուղեկցող սովորույթների ու ծեսերի ռեգիոնալ (տարածքային) բնութագրությունը:

Հարցեր և առաջադրանքներ:

Ըստ հայոց եկեղեցական տոնացույցի՝ տոնը նշվում է Քրիստոսի Հարությունից կամ Մեծ Զատիկից 63 օր (ինը շաբաթ) առաջ՝ ***Առաջավորաց պահքին*** *հաջորդող շաբաթ օրը: Տոնն ունի 35 օրվա շարժունակություն և կատարվում է հունվարի 18-ից մինչև փետրվարի 23-ը ընկած ժամանակահատվածում:*

Տոնը՝ իբրև եկեղեցական տաղավար տոն, ծագման արմատներով՝ որպես գարնան պաշտամունքի հայկական մարմնավորում, քրիստոնեական սրբի կերպարի տակ Արա Գեղե-

ցիկի և Շամիրամի առասպելի քրիստոնեական պատում՝ որպես բնության զարթոնքի համատեքստում նաև երիտասարդության, սիրո, երջանկության և ընտանիքի հետ առնչվող խորհուրդ:

Տոնին ուղեկցող ***Առաջավորաց պասը*** *և բախտագուշակությունները, ուտեստը (փոխնդե խաշիլ, աղանձ), ուխտագնացությունները: Սուրբ Վալենտինի պաշտամունքին առնչվող զուգահեռները, էությունը, նպատակը: Սուրբ Սարգսի տոնի կատարման աշխուժացմանն ուղղված ազգային եկեղեցու ձեռնարկումները և տոնի դրսևորումները, «վերաձևավորման» փորձերը մեր օրերում: Ծանոթություն Լ. Սիմոնյանի «Ս. Սարգիս, Տրընդեզ, Բարեկենդան» գրքի հետ:*

Հայոց քրիստոնեական ծիսահամալիրում տոնը ծագմամբ շատ ավելի հին է: Համարվել է ձյան բքի մարմնավորում՝ շարունակելով քրիստոնեական սրբի կերպարի տակ պահպանել հեթանոսական գարնան զարթոնքի պաշտամունքի, նաև երիտասարդության, սիրո, երջանկության և ընտանիքի հետ առնչության գաղափարական հետքերը: Որոշ հետազոտողների կարծիքով՝ ս. Սարգսի անվան շուրջ հյուսված առասպելը Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելի քրիստոնեական պատումն է: Իսկ Արա Գեղեցիկը դիտվում է իբրև բնության և բուսականության զարթոնքի աստվածություն (տե՛ս **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 188-189):

Ո՞վ է եղել ս. Սարգիսը: Ըստ ավանդազրույցների՝ քաջ և ազնիվ զորավար, որ միշտ օգնել է խեղճերին և անմեղներին՝ միաժամանակ պատժելով չար մարդկանց: Նրա մասին առասպելի մեջ շեշտված է սիրո և ամուսնության գաղափարը: Ըստ ավանդազրույցի՝ նրա ձիու ոտքերի դոփյունից դղրդում էր ողջ աշխարհը, իսկ երբ նա նիզակ էր խաղացնում՝ բուք ու

բորան էր բարձրանում: Ամենատարածված ավանդազրույցնե-րի հիմնական սյուժեն նրա կողմից պասը պահողներին գովա-բանելն էր և չպահողներին պատժելը: Նրա հաղթանակները պայմանավորված են Տիրոջ նկատմամբ ս. Սարգսի մեծ հա-վատքով և նվիրվածությամբ:

Զանգվածային ուխտագնացություններ էին կազմակերպ-վում նրան նվիրված սրբավայրերում, սրբի հիշատակին մո-մեր էին վառում, աղոթքներ անում, կենդանիներ զոհաբերում: Ուխտից վերադարձողն ասում էր. «Խաչը քեզ ողջույն ղարկե», պատասխանն էր. «Ողջ մնաս»:

Հին ու նոր հանգուցյալների հոգիների փրկության նպա-տակով հոգեհաց էր կազմակերպվում: Նվիրական ուտեստը փոխինդն ու խաշիլն էին: Ուստի Առաջավորաց պասը հայտնի էր նաև «խաշիլի պաս» անունով: Առաջավորաց պասը սկսվում էր տոնին նախորդող երկուշաբթի օրվանից. Այդ հինգ օրերի ընթացքում գրեթե բոլորը պաս էին պահում, իսկ երի-տասարդները՝ ծոմ՝ գրեթե ոչինչ չուտելով, միայն ջրով բավա-րարվելով, կամ էլ միաժամ ծոմ էին պահում, միայն երեկոյան ժամերգությունից հետո էին սնվում:

Ուրբաթ երեկոյան տարեց տանտիրուհիները սկուտեղի վրա մանր մաղով փոխինդ էին շարմաղում, մոմեր կամ կան-թեղ վառում ու դնում դուռը բաց տան մեջ կամ դռան հետևը կամ էլ աստղերի տակ, եկեղեցու մոտ՝ հուսալով, որ ս. Սար-գիսը կայցելի և իր ձիու պայտի հետքը կթողնի փոխինդի վրա: Մեծ երջանկություն էր համարվում նման «հետք» գտնելը, դրանով գուշակում էին «դրախտին արժանի լինելը»:

Տոնը աչքի է ընկնում երիտասարդության, հատկապես արբունքի հասած աղջիկների ու պատանիների բախտագու-շակության ծեսերով: Ուրբաթ գիշեր աղի բլիթներ էին ճաշա-

կում՝ երազ տեսնելու ակնկալությամբ: Երազում ջուր տվողը դառնալու էր կյանքի ընկերը: Դրանով գուշակում էին նաև ճակատագրի մատուցած անակնկալները. եթե երազի ջրի բաժակը ոսկուց էր՝ ապագա ամուսինը շատ հարուստ էր լինելու, եթե արծաթից՝ միջին ունևորության, կավից՝ աղքատ: Կամ՝ եթե բաժակը ջրով լի էր՝ երկար կյանք էին ունենալու, եթե կիսատ՝ կյանքի կեսը, իսկ եթե շատ քիչ էր՝ մի քանի տարի: Կամ էլ՝ կտուրներին հացի փշրանք կամ խաշիլ էին հացի մեջ փաթաթած դնում, որ ուղղությամբ թռչունները այն տանեին, ապագա հարսնացուն կամ փեսացուն այդ ուղղությամբ էր գալու, իսկ եթե տեղում ուտեր՝ ընդհանրապես չէր ամուսնանալու: Այդ շաբաթվա ընթացքում տնային գործեր չէին անում. ճախարակ չէին մանում, բուրդ չէին զզում, լվացք չէին անում, գլուխ չէին լվանում՝ որպեսզի «Ս. Սարգիսը չսայթաքեր օճառաջրի վրա»: Երեխաներն էլ երդիկներից գուլպաներ կամ քսակներ էին կախում երգերի ուղեկցությամբ՝ նվերներ ստանալու ակնկալիքով:

Ս. Սարգսի տոնից սկսած մինչև Բուն Բարեկենդանն ընկած ժամանակահատվածը համարվում էր հարսանյաց արարողությունների մեծ շրջան: XX դարի կեսերից տոնը անկում էր ապրում՝ առանձին տարրերի, երիտասարդության բախտը գուշակելու ծեսերի մասնակի պահպանմամբ:

Այս տոնի աշխուժացմանը նպաստում է վերջին տարիներին ներթափանցած և նրա հետ «մրցակցող» եվրոպական Սուրբ Վալենտինի տոնը: Վալենտինի տոնակատարությունը (փետրվարի 14) համընկնում է Սուրբ Սարգսի տոնի ժամանակահատվածին, և այդ տոնի դրսևորումներն են՝ ա) անստորագիր նամակների արկղի տեղադրում դպրոցներում, բ) պարահանդեսների կազմակերպում, գ) միմյանց շնորհավորական

բացիկների ուղարկում, դ) վարդերի, փոքրիկ նվերների հանձնում և այլն: Սա հարկադրում է հայ եկեղեցուն ելքեր գտնել, որպեսզի Ս. Սարգսի տոնը դուրս չմղվի: Դրա համար եկեղեցին Սուրբ Սարգսի տոնի օրը հռչակել է «Երիտասարդների օրհնության օր»:

Տյառնընդառաջը հայ ժողովրդական տոնացույցում

Հարցեր և առաջադրանքներ:

***Տոնի անվանումները (Տրընդեզ, Տերընդեզ, Տերընտաս, Տանդառեջ, Դառդառանջ, Դռռոնջ, Դառանջ** և այլն), **ժամանակը** (փետրվարի 14-ին, Քրիստոսի ծննդից 40 օր հետո), **հայագիտության մեջ տոնի վերաբերյալ եղած տեսակետները, էությունը, արարողակարգը: Քրիստոնեական եկեղեցու մեկնությունը** (Մայրը 40-օրական Հիսուս Մանուկին տանում է տաճար, նրան ընդառաջ է գալիս Սիմոն Բարեպաշտ ծերունին, որն Աստծուց խնդրում էր կյանքը երկարացնել այնքան, մինչև տեսնի աշխարհի ու մարդկության Փրկչին: Նա հրաշքով զգում է Փրկչի ներկայությունը):*

Տոնական խարույկը և նրա հետ կապված բախտագուշակությունները, ծիսական խարույկի հետ աղերսվող արգասաբեր հատկանիշները, նոր հանգուցյալներին տոնի միջոցով սգից հանելու սովորույթը:

Տոնածիսական ուտեստը, նորապսակների ազգականների փոխայցելություններն ու նվիրատվությունները:

Տյառնընդառաջի ժամանակակից տոնահանդեսը, այն նաև որպես ընտանեկան տոն, հատկապես նորապսակների համար:

Տոնը ծագմամբ շատ ավելի հին է, աղերսներ է ունեցել հին աստվածների շարքից երազների մեկնիչ, դպրության ու արվեստի պաշտպան Տիրի, արևի ու կրակի աստվածներ Միհրի

և Վահագնի պաշտամունքի հետ: Ուներ համընդհանուր արարողակարգ և կատարվում էր փետրվարի 13-14-ը: Կենցաղում տոնի ամենատարածված բաղադրիչը ծիսական խարույկի հետ կապված արարողությունն էր, որն սկսվում էր փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո: Խարույկը վառում էին փայտից, հիմնականում գիհու՝ ցրտենի ճյուղերից (ըստ ավանդության նորածին Քրիստոսին այդ ծառի ճյուղերով էին բարուրել), իսկ անտառազուրկ վայրերում՝ ծղոտից: Վառում էին եկեղեցիների բակերում, տների կտուրներին, փողոցներում, դաշտերում, այգիներում: Եկեղեցիների բակերում կրակը վառելու էին նոր ամուսնացած տղաները, եկեղեցու կրակով էին վառելու տան և այլ տեղերի խարույկները:

Բազմազան էին կրակի շուրջը կատարվող ծեսերը, որոնք բոլորն էլ նվիրված էին երիտասարդության սիրուն, ամուսնությանը, սերնդաճին և այլն: Վառված կրակի շուրջը պտտվում էին և ցատկում բոլորը, բայց առաջնությունը տրվում էր նորապսակներին՝ քավորի և քավորկնոջ ուղեկցությամբ՝ 3-7 անգամ: Հաճախ փեսան՝ հարսանեկան նարոտով, իսկ հարսը՝ քողով, սպասում էին քահանային, որպեսզի վերջինս կրակի շուրջը կատարեր կրկնապսակ, որից հետո սկսվում էր տոնական խրախճանքը: Ժամերգությունից հետո հարսի ծնողները փեսային նվիրում էին երեխաների միջոցով ընծաներ՝ գոտի, գդակ, թաշկինակ և աղանձ: Աղանձը փեսան կամ փեսացուն բաժանում էր տնեցիներին, ընկերներին: Ընծաները խորհրդանշական բնույթի էին, որոնց նպատակը սերնդաճին նպաստելն էր:

Բարեկամ կանայք ևս պարտավոր էին ընծաներով գնալ և նորահարսներին դուրս հանել՝ «Ի տես Տեառնընդառաջի»: Նվերների համալիրը հայտնի էր «խոնչա» անվամբ: Տերընդե-

զին տարածված էր նաև նորահարսի օժիտը տանելու սովորույթը:

Տերընդեզը բնության զարթոնքի տոնն էր: Հավատալիքների ողջ համալիրը կապված էր խարույկի հետ՝ կրակ, ծուխ և մոխիր բաղադրիչներով: Կրակի զորավոր օգնությամբ փորձում էին ազդել ձմեռվա ցրտաշունչ եղանակի վրա՝ արևի ջերմությունը բարձրացնելու, գարնան գալուստը արագացնելու համար և ըստ այդմ՝ գուշակություններ անելու գերդաստանի անդամների և տնտեսության ապագայի վերաբերյալ՝ սկսած հաջող ծննդաբերության ու ապաքինման ակնկալիքից մինչև ցանքի և սպասվելիք բերքի առատության ապահովումը:

Խարույկի մոխիրը իրար երեսի քսելուց զատ, թափում էին նաև տան չորս անկյուններում, որ օջախը բարեբեր լինի, կաթնատվությունն ու ձվատվությունն ապահովելու համար երդիկներից մոխիր էին թափում գոմերն ու փարախները, հավանոցները, թխսի տակ էին լցնում, որ ճտերն անվնաս դուրս գան, կրակի ածխացած կտորները քսում էին նաև կոպերին՝ պայծառ լույս ունենալու նպատակով: Չբեր կանայք սրբազան կրակով խանձում էին ներքնազգեստի քղանցքը՝ պտղաբերություն ակնկալելով: Բարեհաջող ծննդաբերելու համար մոխիրը լուծում էին ջրի մեջ և խմեցնում ծննդկանին: Երբեմն մոխիրը որպես դեղ էին օգտագործում՝ քսելով մարմնի ցավոտ մասերին: Կանայք այն լցնում էին կճուճների վրա, որպեսզի դրանք առատ լինեն, լցնում են հավաբները, որպեսզի հավերը շատ ձու ածեն: Նույն նպատակով երեխաները մեկական հավ գրկած կանգնում էին խարույկի շուրջը: Կրակի ածխով մառանի և տան երդիկներին գծում էին շրջանակներ՝ չար աչքից խուսափելու համար, իսկ մոխիրը գարնանը շաղ էին տալիս արտերում, որպեսզի մկները ցանքերը չվնասեն: Այն մոմերը,

որոնցով վառել էին խարույկի դեզը, պահում էին, որ հետագայում վառելով երաշտի դեմն առնեն կամ կարկուտը դադարեցնեն:

Տարածված էին Տերընդեզի խարույկի ծեսին առնչվող գուշակությունները: Սպասելի հաջողության ճանապարհը որոշում էին տոնի կրակի ծխի և դեպի վեր նետված մոխրի փոշու շարժման ուղղությունով, կամ հարսնացուի և փեսացուի որ կողմից լինելը որոշելու համար: Կրակի շուրջը երգվող երգերն ուղղակիորեն առնչվում էին սիրո և ընտրության հետ:

Տոնի օրը այցելում էին ննջեցյալի տուն՝ սգից հանելու համար:

Բարեկենդանը հայ ժողովրդական տոնացույցում

Հարցեր և առաջադրանքներ:

Տոնակատարման ժամանակը և տևողությունը, անվանումները *(նշվում է Հիսուսի հարության կամ Զատկի տոնից 7 շաբաթ առաջ, կիրակի օրը և ունի 35 օրվա շարժականություն: Այն ընդգրկում է մեկից մինչև երկու, երբեմն երեք շաբաթ: Տարբեր գավառներում ունեն տարբեր հնչեղությամբ անվանումներ՝ Բարիկենդանք, Բարեկենդանք, Փորեկենդան, և այլն):* ***Բարեկենդանը որպես գարնան բնության զարթոնքը և նոր կյանքի սկիզբը խորհրդանշող հնագույն տոն: Տոնի էությունը, բաղադրիչները՝ զանգվածային խնջույքները, շնորհավորական փոխայցելությունները, խնամախոսությունները, նշանդրեքներն ու հարսանիքները, հարսների դարձ գնալու սովորույթը, ազատ ու անկաշկանդ գործելակերպը, մանկապատանեկան խաղերն ու զվարճությունները, պարերը, թատերական ներկայացումները: Բարեկենդանյան ներկայացումների բնույթը, կենցաղային, պատմական, էթնոմշակութային, սիրային, ներհամայնքային, սոցիալական և այլն: Բա-***

ռեկենդանի ուտելիքները, քանակը ըստ օրերի:

Հայոց Բարեկենդանի հանդիսությունների ընդհանրությունները եվրոպական և սլավոնական ժողովուրդների կառնավալների հետ: Բարեկենդանի ժամանակակից տոնակատարությունը, դրա իրագործման հնարավորության հարցերը:

Բարեկենդան անվամբ տոնը նշվում էր պատմական Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում: Տոնի ընդհանուր տևողությունը 1-3 շաբաթ է: Տոնի վերջին կիրակին Բուն Բարեկենդան էր կոչվում: Նշվում էր Քրիստոսի Հարության կամ Զատիկի տոնից յոթ շաբաթ առաջ, կիրակի օրը և ուներ 35 օրվա շարժականություն՝ փետրվարի 1-ից մինչև մարտի 7-ը: Այս տոնը ևս արմատներով հեթանոսական է, խորհրդանշում է բնության զարթոնքն ու գարնան, նոր կյանքի սկիզբը և կապված է հնագույն բնապաշտական հավատալիքների հետ:

Տոնի ամենակարևոր բաղադրիչը զանգվածային խնջույքներն էին: Բավական տարածված էր մսեղենի և ոգելից խմիչքների գործածությունը: Բարեկենդանի երկուշաբթի օրվանից բացում էին յուղի և պանրի կճուճները, թխում տարբեր գաթաներ, հալվա: Մորթվում էին ոչխարներ, արջառներ, մթերվում խմիչքներ ու մրգեր: Սովորական էին տնից տուն այցելություններն ու խնջույքները: Հրավիրում էին տները հայտնի աշուղների, հեքիաթասացների: Տոնը ուղեկցվում էր փոխայցելություններով: Ունևոր ընտանիքներում Բարեկենդանի վերջին օրերի սեղանները գրեթե չէին հավաքվում: Հաճախակի էին խնամախոսությունները, նշանադրությունները և հատկապես՝ հարսանիքները: Ավանդույթի համաձայն՝ Մեծ պահքի շրջանում հարսանիքներն արգելվում էին, Բարեկենդանին տարածված էր նորահարսների դարձ գնալու սովորույթը: Նորահարսներն ու նշանվածները բազում նվերների էին արժա-

նանում սկեսրանց և նրանց հարազատների կողմից: Միմյանց շնորհավորում էին այսպես. «Շնորհավոր ապաշխարանք Քրիստոսի» կամ «Շնորհավոր Բարեկենդան»:

Տղաները զգեստափոխվում, հարս ու փեսա էին ձևանում և փողոցներում ու տներում «հարսանիք» խաղում:

Տոնի կարևոր բաղադրիչներից մեկն էլ ժողովրդական խաղերն էին, որ սովորաբար կազմակերպվում էին կալերում (ցերեկները), օդաներում (երեկոյան): Գոյություն ուներ խաղի սեռատարիքային բաժանում: Խաղերը մեծ մասամբ տեղի էին ունենում Բարեկենդանի վերջին շաբաթվա ընթացքում:

Մեծ պահքի (պասի) ծիսահամալիրը հայ ժողովրդական տոնացույցում

Հարցեր և առաջադրանքներ:

Մեծ պահքը որպես զուտ եկեղեցական ծիսահամալիր, ժամանակը, տևողությունը *(սկսվում է Բուն Բարեկենդանին հաջորդող երկուշաբթիով և վերջանում Քրիստոսի Հարության կամ Մեծ Զատկի նախատոնակով), ինքնամաքրման, ինքնազոհաբերման, ապաշխարության,* ***մաքրակենցաղության ու ժուժկալության, պահեցողության յոթշաբաթյա խորհուրդը, ծագման հնագույն արմատները*** *(որոշ տարրեր առնչվում են հայոց գարնանային Նավասարդի հետ):* ***Ծիսահամալիրի բաղադրիչները:*** *Մեծ պասը ծիսական արարողությունների մեծ շղթա է: Կենցաղում դրա առավել տարածված բաղադրիչներն առաջին օրվա և շաբաթվա Միջինքի և Չարչարանաց (Ավագ շաբաթվա հետ կապված ժողովրդական ծեսերն էին)* ***անվանումները*** *(****Աղուցք, Ախացք, Մեծ պաս, Ջոջ պաս, Մեծ պահք****),* *ուտեստը (բաղարջ, բակլա, փլավ, ավելուկով աղցան, օղի և այլն),* ***արգելանքները*** *(պահքի առաջին շաբաթն ապաշխարության օրեր էին համարվում, տան գործերով չէին զբաղվում,*

երկրորդ շաբաթվա առաջին երեք օրերին ևս զգուշանում էին աշխատանքներից), ***չարիքը կանխելու և առատությունն ապահովելուն ուղղված ծիսաշարքը, շնորհավորական այցելություններն ու նվիրատվությունները, ծոմապահությունը, երիտասարդների ձիախաղերը, նորահարսների և աղջիկների՝ ճլորթի խաղերը, ուխտագնացությունները, հանգուցյալների ընտանիքներում Մեծ պասի առթիվ հատուկ սեղանների պատրաստումը և այցելությունները նրանց ընտանիքներում, Մեծ պասի առաջին շաբաթվա օրերի անվանակոչումները:***

Մեծ պասը մեր օրերում: Հատուկ վերաբերմունքը հանգուցյալ ունեցող ընտանիքների նկատմամբ:

Մեծ պահքը սկսվում է Բուն Բարեկենդանի ավարտով և վերջանում Քրիստոսի հարության տոնով: Տոնի տևողությունը յոթ շաբաթ է: Մեծ պահք է կոչվում պահքերի մեջ ամենաերկարատևը (49 օր) լինելու պատճառով:

Այս տոնի արմատները հնագույն ծագում ունեն և առնչվում են հին հայոց գարնանային Ամանորի հետ: Զանգեզուրում Նոր տարին և Մեծ պասը տոնում էին միևնույն օրը, որը ցույց է տալիս ավանդական տոնի պահպանումը:

Մեծ պասը սահմանվել է առաքյալների կողմից, որ «քառասուն օր պահեն Չարչարանաց օրերից առաջ և ապա նշեն Զատիկը»: Մեծ պասի ծագումը կապված է եղել Քրիստոսի՝ աղոթքով ու ապաշխարությամբ անապատում անցկացրած քառասուն օրերի հետ: Մինչև XX դ. սկզբները Մեծ պասը ծիսական արարողությունների մի ամբողջական շղթա էր: Կենցաղում Մեծ պասի առավել տարածված բաղադրիչներն **առաջին շաբաթվա, Միջինքի** և **Չարչարանց շաբաթի** հետ կապված ժողովրդական ծեսերն ու հավատալիքներն էին: Ծիսական այս համալիրը այլ անվանումներ ևս ուներ՝ **Աղուցք, Ախուցք,**

Զոջ պաս, Քառասնորդական և այլն:

Մեծ պասի առաջին օրվա գլխավոր իրադարձությունն Ակլատիզի երևան գալն էր և թոնրատան երդիկից կախվելը, որը պիտի «պատժեր» պասը չպահողներին: Այն հիմնականում ծերունու տեսք ուներ, որի պարզած թևերից քարեր էին կախված, իսկ միակ ոտքին ամրացված սոխի մեջ խրված էր Մեծ պասի շաբաթները խորհրդանշող յոթ փետուր, որ պոկվում էին կիրակի օրերին: Ըստ ավանդության՝ Ակլատիզը Մեծ պասի վերջին օրը թռչուն էր դառնում և հեռանում՝ կրկին վերադառնալու խորհրդով, իսկ նրա յոթ փետուրներն օրացուցային յուրատեսակ թերթիկներ էին: Ծիսական այդ գլխավոր կերպարը՝ Ակլատիզը, տարբեր ազգագրական շրջաններում կոչվում էր տարբեր անվանումներով՝ **Պասի պուլուլ, Պաս բեկ, Ախալոզ, Մըռմըռաս, Ախելուծ, Պապի պլոր, Ախլոճ** և այլն:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ Ակլատիզը փոխարինել է բնության մեռնող Նար աստվածուհուն և իբրև այդպիսին նախորդել է Արա Գեղեցիկին: Գարնանային Նավասարդին փոխարինած Մեծ պասը, այդպիսով, նոր երևույթ էր, զուտ քրիստոնեական, որի անվան տակ ժողովուրդը շարունակում էր կատարել իր հին ծեսերը:

Մեծ պասում կարևոր տեղ էին գրավում շնորհավորական այցելությունները և նվիրատվությունները: Հատկապես տարածված էր խնամիների միջև «սեղաններ» ուղարկելու սովորույթը: Նրա առաջին շաբաթվա երկուշաբթի օրը նորափեսան օղի վերցրած գնում էր շնորհավորելու աներոջ և զոքանչի Մեծ պասը: Միմյանց շնորհավորելով ասում էին. «Շնորհավոր պաս ըլլի, բարով, խերով, դռով, դրկցով ու բարեկամներով հասնեք սուրբ-սուրբ Հարության»: Երիտասարդները ձիախաղեր էին կազմակերպում, իսկ աղջիկները և նորահարսները

նախընտրում էին ճլորթին: Խաղերը երբեմն նոր ծանոթությունների և սիրային խոստովանությունների առիթ էին դառնում:

Երկուշաբթի օրը տանտիրուհիները աղանձ էին պատրաստում: Ընդհանրապես շատ էին ուտում՝ հավատալով, որ տևական պահքի պատճառով «բերաններն այսուհետ չեն հոտի և շրթունքները չեն ճաքի»:

Պասի առաջին շաբաթվա բոլոր օրերին հատուկ պաս էին պահում. երկուշաբթին **բակլայ խորան** էր կոչվում, երեքշաբթին՝ **խորանի խորան**, չորեքշաբթին՝ **մկան կիրակի**, հինգշաբթին՝ **կատաղած շան,** ուրբաթը՝ **չարչարոց** (չար աչքից զերծ մնալու համար), շաբաթը՝ **թալալոսի** (երեխաների շրջանում տարածված հիվանդության տեսակ):

Մեծ պասի առաջին շաբաթն ապաշխարության օրեր համարելով՝ ծանր գործեր չէին անում. ճախարակ չէին մանում, կար չէին անում, շալ չէին գործում: Երկրորդ շաբաթվա առաջին երեք օրերին ևս զգուշանում էին ծանր աշխատանքներից՝ երկուշաբթին «գայլ կերածի և կատաղած շան», երեքշաբթին «կայծակ խփածի» օրեր համարելով: Եթե չզգուշանային, ըստ հավատալիքի՝ գայլը կուտեր նրանց երեխաներին:

Միջինքը խորհրդանշում էր Մեծ պասի կիսվելը՝ 24-րդ օրը. Այդ օրը կտրում էին հերթական շաբաթը խորհրդանշող փետուրի միայն կեսը՝ ցույց տալու, թե պասն արդեն կիսվել է: Միջինքին բաղարջ էին թխում, մեջը արծաթե դրամ դնում՝ ում ընկներ, նրան էր վերագրվում տարվա բախտավորությունը:

Մեծ պասի ծեսերից է նաև **Քառասուն մանկունքը**. քառասուն անգամ ծնկաչոք աղոթքը: Մեծ պասը լուծելու արարողությունը տարբեր գավառներում տարբեր ձևով էր արվում: Հիմնականում կատարվում էր եկեղեցում, ընտանիքում կարմիր

ձվի և գինու հետ ճաշակում էին նաև ձուկ, փլավ: Առավոտյան կանայք լվացք էին անում, լողանում, հագնում ամենագեղեցիկ զգեստը:

Գարնանային տոնական համակարգը հայոց մեջ

Հարցեր և առաջադրանքներ:

Ծաղկազարդ: Ծաղկազարդի տոնի նշման ժամանակը *(Մեծ պասի նախավերջին կիրակի օրը, Զատկից մեկ շաբաթ առաջ, կիրակի օրը՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա»: Նվիրված է Քրիստոսի երկրային կյանքի վերջին դրվագներին),* ***խորհուրդը, անվանումները*** *(****Ծառզարդար, Ծառամուտ, Ծառաբեր, Ծառկոտրանք, Ծռատոն*** *և այլն):* ***Գլխավոր բաղադրիչը ձիթենու, իսկ հայոց մեջ՝ ուռենու հետ կապված ծիսաշարն էր: Նախաքրիստոնեական արմատները և կապը բնության զարթոնքն արտացոլող հավատալիքների հետ*** *(այդ օրվա ծիսական արարողությունների մեծ մասը նվիրված էր գարնան զարթոնքին և ցանքի նախապատրաստություններին, պտղաբերության ապահովմանը):*

Տոնի գլխավոր բաղադրիչը, սրբազան ոստի (ձիթենու, ուռենու) հետ կապված ծիսաշարի խորհուրդը: Ծաղկազարդը որպես աղջիկների ու պատանիների տոն, տոնի ժամանակ կատարվող ***ծաղկազարդի նշանադրությունները****, նորահարսների հայրական տուն դարձ գնալու և մինչև Զատիկ մնալու սովորույթի արարողակարգը, սրբազան ճյուղերի հետ կապված հավատալիքների համալիրները, մերձավորների շիրիմների այցելությունները, պատանիների* ***կարկաչա*** *և* ***ճոճանակ*** *խաղերը, երգ-մաղթանքներով այցելությունները տներ:*

Ծաղկազարդի երեկոյան եկեղեցական «դռնբացեք» անվամբ արարողությունը և այլն, դրա բնութագրումները:

Ծաղկազարդի տոնահանդեսը մեր օրերում: Ծաղկազարդի քրիստոնեական մեկնաբանությունը *(Քրիստոսի հաղթա-*

կան մուտքը Երուսաղեմ և արմավենու կամ ձիթենու ճյուղերով նրան դիմավորելու հանդիսությունը): Եկեղեցու շրջակա տարածքը աշխույժ, ուրախ մթնոլորտի վերածվելու, ուռենու ճյուղերը, դրանցից հյուսված պսակները վաճառքի հանելու, եկեղեցու կողմից այդ օրը մանուկների օրհնության օր հայտարարվելու, ընտանիքներով եկեղեցի այցելելու, առավոտյան պատարագին ուռենու ճյուղերի օրհնությանը մասնակցելու և այլ արարողակարգեր:

Ծաղկազարդ կամ Ծառզարդար: Ծաղկազարդը Մեծ պասի նախավերջին կիրակնօրյա տոնն էր: Ծիսական արարողությունների մեծ մասը նվիրված էր գարնան զարթոնքին և ցանքի նախապատրաստություններին: Քրիստոնեական ավանդույթով այն կապված է Հիսուսի՝ Երուսաղեմ այցելելու հետ, երբ ժողովուրդն Աստծո որդուն հանդիսավորությամբ դիմավորել է ձիթենու սրբազան ոստերով: Տոնը նշվում է Մեծ պասի նախավերջին կիրակի օրը: Ծառզարդար տոնի հոմանիշ անվանումներն են՝ **Ծառամուտ, Ծառկոտրունք, Ծռզարդար, Ծառաբեր** և այլն: Տոնի շատ տարրեր կապված են բնության զարթոնքն արտացոլող հավատալիքների հետ: Ծառզարդարի գլխավոր բաղադրիչը սրբազան ոստի՝ ձիթենու կամ ուռենու հետ կապված ծիսաշարն է: Եկեղեցիները զարդարվում էին արմավենու և ձիթենու ոստերով, որ ավելի պատկերավոր դարձնեին Հիսուսի մուտքը Երուսաղեմ: Անցյալում ձիթենին և արմավենին համարվում էին խաղաղության և փառքի խորհրդանիշներ: Ձիթենու պսակով էին դիմավորում օլիմպիական հերոսներին, իսկ արմավենին ձոնել են արեգակին: Օրհնված ոստերի և ճյուղերի մեջ ժողովուրդը տեսնում էր խորհրդավոր ուժ, որն ուներ առատ բերք ու բարիք շնորհելու հմայական զորություն:

Եկեղեցիներում օրհնության արարողության ավարտից

հետո մոմերը (ճյուղերի վրայի) հանգցնում էին, սրբազան ճյուղերը կտրատում և բաժանում հավատացյալներին: Ծառզարդարը հատկապես կանանց և աղջիկների տոնն էր: Տոնը առիթ էր աղջիկների ու տղաների ծանոթությունների ու սիրային խոստովանությունների համար: Տեղի էին ունենում նաև նշանադրություններ: Տոնին տղայի մայրը, մերձավոր ազգականուհիներից մեկի հետ հենց եկեղեցում, Ծաղկազարդի ծառի վրա եղած մոմերից վառելով մի խաչաձև մոմ, որի վրա արծաթե մատանի էր անցկացված, լռությամբ տալիս էր նախընտրած աղջկան և կարմիր գլխաշոր գցում նրա գլխին: Այդ պահից աղջիկն արդեն նշանված էր համարվում:

Մարդիկ հավատում էին սրբազան ծառի ճյուղերի հմայական ուժին: Այդ իսկ պատճառով եկեղեցուց բերված օրհնված այդ ճյուղերը պահվում էին յուղի կճուճներում, որպեսզի յուղն անպակաս լինի, դնում թխսի տակ՝ շատ ճուտ ունենալու հավատով, հացի շտեմարաններում՝ հացն առատ լինի, խնոցու մեջ՝ կարագը շատ լինի, ճյուղերով հարվածում էին միմյանց՝ հիվանդություններից ազատվելու նպատակով: Դրանցով փորձում էին կանխել նաև տարերային աղետները: Եկեղեցական արարողությունից հետո ծիսական ուտեստով գնում էին գերեզմանատուն և մոմ վառում մերձավորների շիրիմների վրա: Ժամերգությունից հետո նորահարսները հենց եկեղեցուց դարձ էին գնում հայրական տուն: Տոնը ժողովրդական լայն տարածում է ունեցել:

Զատիկ

Հարցեր և առաջադրանքներ:

(Զատիկը որոշ ուսումնասիրողներ նույնացնում են հրեական Պասեքի հետ: Զատիկ բառը նշանակում է զատել, բաժանվել և հոմանիշ է ելքին: Այն ընկալվել է նաև տոնի նշանակու-

թյամբ), ***տոնի քրիստոնեական խորհուրդը*** *(Քրիստոսի հարությունն է «Քրիստոս հարյավ ի մեռելոց», «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի),* ***աղերսվում է բնության հարության գաղափարին: Զատիկ բառի մեկնության հարցի շուրջ*** *(տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է, նաև բնության գույների զատումը, անվանումները, տոնի հեթանոսական արմատները, կատարման ժամանակը (մարտի 22-ից մինչև ապրիլ 25-ը):*

Զատկի գլխավոր արարողությունները սկսվում էին շաբաթ և ավարտվում երկուշաբթի օրերին: Նախընթաց օրը՝ երեկոյան, եկեղեցիներում կատարվում էր ճրագալույցի արարողությունը, որով վերջ էր դրվում յոթ շաբաթ տևած Մեծ պասին: Այդ պատարագը նվիրված էր Հիսուսի Հարությանը: Յուրաքանչյուրը մոմ էր վառում ու ձու ուտում՝ դրանով հրաժեշտ տալով երկարատև պահքին:

Համայնքային միջոցառումները: Զատկական համայնքային *(ախառ) և* ***ընտանեկան զոհաբերությունները*** *(գյուղատնտեսության բոլոր ճյուղերի հաջողության ապահովմանը ուղղված), ուտեստը, շնորհավորական փոխայցելությունները, նվիրատվությունները: Զվերը և ձվախաղերը տղաների երգող խմբերի տնետուն շրջայցերը: Զվերի գույները բնության, գարնան գույներն են: Զուն որպես կենաց ծառի, կյանքի հավերժության խորհրդանիշ: Զատկի տոնը որպես համայնքային, ազգակցական, դրացիական, ընտանեկան, երիտասարդության մերձեցման տոն:*

Զատկի ուտեստը:

Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն է՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելու, Մեծ պասը ավարտելու, դրա խստություններից

ազատվելու իմաստը:

Զատկի տոնի զանգվածային և ընտանեկան ուխտագնացությունները, ննջեցյալների շիրիմներին այցելությունները, խնջույքներ կազմակերպելու և տոնական ուտելիքների մի մասը գերեզմանների վրա թողնելու սովորույթը («մեռելափայ»), նախնիների պաշտամունքի այլ դրսևորումներ (Զատկին օր ու գիշեր սեղանը բաց պահելու, դռներն ու լուսամուտները չծածկելու ավանդական սովորույթները, նրանց պատվին անունանուն բաղարջներ թխելը, աղքատներին բաժանելը և այլն):

Երկուշաբթին մեռելոցն է:

* * *

Որոշ ուսումնասիրողներ նմանություն են տեսնում հրեական Պասեքի հետ (նշանակում է՝ ելք): Բազմաթիվ մեկնաբանություններից ավելի հավանականն է՝ **զատիկ** բառը իմաստային ձևով առնչվում է բնության զարթոնքի, գարունը ձմեռվանից զատելու կամ բաժանելու գաղափարին: Այն արտահայտել է տոնի կամ ուրախության իմաստը: Այն նախատիպեր է ունեցել հեթանոսական ծեսերում, որոնք առնչվել են բնության և կյանքի հարության, զարթոնքի գաղափարներին (Մ. Օրմանյանը Զատկի տոնի մեջ տեսնում է գարնանային գիշերահավասարին նվիրված հեթանոսական տոնի ակնարկ, որ կատարվել է տարվա եղանակներով զատվելու ժամանակ: Մեռնող և հարություն առնող աստված համարելով Արա Գեղեցիկին՝ Գ. Ղափանցյանը ևս կարծում է, որ նա ի սկզբանե եղել է գարնան, երկրագործության հովանավոր աստված): Տոնը նշվում է Նիկիայի եկեղեցական ժողովի (325 թ.) որոշմամբ գարնան գիշերահավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակի օրը և տոնվում է մարտի 22-ից ապրիլի 25-ը՝ շարժվելով 35 օրերի միջև: Ըստ հայ եկեղեցու Առաքելական

կանոնի, պետք է 40 օր պաս պահվի և ապա տոնվի Զատիկը կամ Քրիստոսի Հարությունը:

Զատիկին առնչվող գլխավոր արարողությունները սկսվում էին շաբաթ և ավարտվում երկուշաբթի օրերին: Շաբաթ երեկոյան ճրագալույցին եկեղեցում կատարվում էր պատարագ՝ նվիրված Քրիստոսի Հարությանը, որով վերջ էր դրվում յոթ շաբաթ տևած Մեծ պասին: Յուրաքանչյուրը մոմ էր վառում և ճաշակում իր հետ վերցրած ձուն՝ դրանով հրաժեշտ տալով պահքին:

Պասը լուծելու արարողությունը կոչվում էր «Թաթախում», իսկ ժամանակը՝ «Թաթախման գիշեր»: Շաբաթ օրը մայրամուտին երդիկից իջեցնում էին Մեծ պասի յոթ շաբաթները խորհրդանշող և պասը չպահպանողներին «պատժող» Ակլատիզը՝ վերջին փետուրով: Կիրակի առավոտյան նոր պատարագ էր մատուցվում՝ հավատացյալներին սուրբ հաղորդություն տալու համար: Այդ ժամանակ էլ կատարվում էր զատկական մատաղի հանդիսությունը, որ կոչվում էր «ախառ»: Այն եզ կամ արջառ էր, որ գնվում էր համայնքի կողմից, կամավոր հիմունքներով:

Բավականին տարածված էին զատկական ուխտագնացությունները: Ձուն և դրանից պատրաստված կերակուրները առաջնային տեղ էին զբաղեցնում ուտեստի ընդհանուր համալիրում: Լայնորեն գործածվում էին նաև ածիկը, ջլբուրը, եղինջապուրը, թանապուրը, չորաթանը, տապակած բանջարը, չամչով փլավը ձկով ու փլավի այլազան տեսակները, գաթան: Առանցքային են կարմիր ձուն, ձուկը, փլավը:

Միմյանց շնորհավորում էին՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց», պատասխանն էր՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»՝ իրար ձեռք մեկնելով ու համբուրելով:

Առավոտյան գնում էին օղիով շնորհավորելու տանուտերին ու քահանային, ապա բարեկամներին: Փեսացուի ազգականների կողմից հարսնացուին նվերներ տալու սովորույթը հայտնի էր «փայ» անունով:

Զուն անմիջականորեն առնչվում էր տոնի ծիսական գաղափարախոսությանը և սիրված խաղերի ու նվիրատվությունների գլխավոր առարկան էր: Զուն հայոց ավանդական կենցաղում եղել է գարնան և պտղաբերության խորհրդանիշը: Այն նաև խորհրդանշում էր հարության, կյանքի նորացման, վերածննդի գաղափարը և առնչվում էր գարնան, բնության զարթոնքին:

Կենցաղում մեծ տարածում ունեին ձվախաղերը:

Երկուշաբթին մեռելոց էր:

Համբարձում

Հարցեր և առաջադրանքներ: ***Տոնի խորհուրդը*** *(Հիսուս Քրիստոսի Զիթենյաց լեռից համբարձման, Հայր Աստծո մոտ բարձրանալու հիշատակը),* ***ժամանակը*** *(Մեծ Զատկի տոնից 40 օր հետո, հինգշաբթի օրը և ունի 35-օրյա շարժականության՝ ապրիլի 30-ից մինչև հունիսի 3-ը),* ***անվանումները*** *(****Վիճակի օր, Զանգյուլումի օր, Կաթնապրի օր, Ծաղկամոր կիրակի, Ճակատագրի տոն*** *և այլն):* ***Տոնի ծագման հեթանոսական արմատները, բնության վերազարթոնքը խորհրդանշող հավատալիքների ծիսահամալիրը*** *(տոնի ժողովրդական ծիսաշարը որոշակի աղերսներ ունի Արա Գեղեցիկի, Անահիտի, Աստղիկի, Նար աստվածությունների պաշտամունքների հետ, որոնք անձնավորում են բնության ծաղկումը, սերն ու պտղաբերությունը):* ***Ուխտագնացությունները, հավատալիքները բախտագուշակությունները, արգելանքները, գլխավոր բաղադրիչը*** *(«Վիճակ-Զանգյուլում»), դրա քրիստոնեական մեկնությունը*

(Հուդայի փոխարեն վիճակահանությամբ նոր աշակերտ ընտրելու ավանդույթը), իրական խորհուրդը (աղջիկների տոնն էր և արտացոլում էր ծառ ու ծաղկի պաշտամունքի, գեղեցիկ սեռի ազատության և երջանկության խորհուրդները): ***Տոնի աղերսը սիրո և պտղաբերության հմայության գաղափարի հետ:***

Համբարձումից մինչև Վարդավառ ուխտավայրեր գնալու արգելքը *(քանի որ հավատում էին, թե բոլոր սրբերն արդեն համբարձվել են, իսկ Վարդավառից մի շաբաթ առաջ պաս էին պահում՝ սրբերին վերադարձնելու ակնկալիքով):*

Համբարձումը հայկական ժողովրդական բոլոր տոների զարդն էր, որովհետև ամբողջապես նվիրված էր երիտասարդությանը և, ընդհանրապես, արգասավորության պտղաբերության գաղափարին: Այն կատարվում էր բնության գրկում, մայիսյան ծաղկունքի մեջ: Համբարձման տոնով ավարտվում էր գարնանային գատկական տոների շղթան, իսկ Վարդավառը բացում էր ամառային տոների շարքը:

Համբարձման առավոտյան աղբյուրի ջրի շաղին բուժիչ հատկություն էր վերագրվում: Այն առատության խորհրդանշան է համարվել: Համբարձումը բախտագուշակության տոն էր: Եվ այսպես, Համբարձումը հայկական ժողովրդական բոլոր տոների զարդն էր, որովհետև ամբողջապես նվիրված էր երիտասարդությանը և, առհասարակ, պտղաբերությանը: Տոնը նվիրված էր երիտասարդ աղջիկներին ու հարսնացուներին, սեր, երջանկություն, պտղաբերություն ակնկալող ծիսական համալիր էր:

Զատիկից ուղիղ 40 օր հետո նշվել է Համբարձման կամ, ինչպես շատ ազգագավառներում է անվանվել, ***Վիճակի, Զանցյուլումի, Կաթնապրի*** *տոն: Ըստ եկեղեցական ծիսակար-*

գի՝ Զատիկից հետո Քրիստոսը ուղիղ 40 օր շրջել է երկրի վրա և 40-րդ օրը Զիթենյաց կամ Համբարձման լեռան գագաթից համբարձվել է երկինք:

Քրիստոնեական առումով Համբարձման տոնը խորհրդանշում է Զիթենյաց (այժմ՝ Համբարձման) սրբազան լեռան գագաթից Հիսուս Քրիստոսի համբարձվելու, Հայր Աստծո մոտ բարձրանալու հիշատակը: Այն նշվում է Մեծ Զատիկից քառասուն օր հետո, հինգշաբթի օրը: Տոնական հանդիսությունները սկսվում են չորեքշաբթի: Տոնը հայտնի է նաև **Ծաղկատոն, Ծաղկաքաղի օր, Վիճակի օր, Զանգյուլումի օր, Ծղիկ գովել, Կաթնապրի օր, Կաթնով, Ծաղկամոր տոն, Ճակատագրի տոն** և այլն:

Համբարձման տոնի կենցաղային դրսևորումները հիմք են տալիս ենթադրելու, որ այն շատ հին ծագում ունի: Տոնն ունի բնության վերազարթոնքը խորհրդանշող հմայական հավատալիքների մեծ ծիսահամալիր: Այն որոշակի աղերսներ ունի Արա Գեղեցիկի, Ծաղկամայր դիցուհու (Նարի, Անահիտի ու Աստղիկի) Փոքր Միհրի, հուրի-փերիների պաշտամունքի հետ, որոնք անձնավորում էին բնության զարթոնքը, ջրային տարերքը, սերն ու պտղաբերությունը:

Տոնը հայտնի էր նաև ուխտագնացության ավանդույթներով: Յուրաքանչյուր բնակավայր ուներ Համբարձման իր ուխտավայրը: Տոնն աչքի էր ընկնում հավատալիքների բազմազանությամբ: Հավատում էին, որ Համբարձման գիշերը «եթե որևէ մեկն իրար հանդիպող երկու աստղ տեսնի և այդ պահին իր սափորը կամ կուժը ջուր լցնի՝ այն անմիջապես ոսկու կվերածվի, իսկ ջուր բերողը բախտավոր կլինի մինչև կյանքի վերջը:

Հավատում էին նաև, թե Համբարձման գիշերը լույս է իջնում և այդ պահին ծառերը միմյանց ողջույններ են հաղորդում: Երիտասարդները չէին քնում, որպեսզի տեսնեին երկ-

նային լույսը՝ ցանկությունների իրականացման բաղձանքով: Նույնպես լեռները, աղբյուրները գետերը ևս մի պահ մոտենում էին իրար:

Համբարձման նախորդ գիշերն աղջիկներն իրենց անուններով ծաղիկներից (շուշան, մանուշակ, մայրամախոտ և այլն) հավասարաչափ փնջեր էին կապում և նշում դրանց բարձրությունը: Բարի նշան էր, եթե առավոտյան նշան արած ծաղիկը կամ խոտը երկարած էր լինում: Հավատում էին, որ այդ աղջիկը երկար ու երջանիկ է ապրելու: Տարածված էին նաև վիճակի ջրով հմայությունները: Կանայք պտղաբերելու համար Համբարձման լույս հինգշաբթի գիշերը գաղտնի լոգանք էին ընդունում, ինչպես Աստղիկը: Այդ գիշերը տղամարդիկ կենակցում էին կանանց հետ, որ տղա զավակ ունենան: Նույն գիշերվա ընթացքում տղամարդկանցից գաղտնի կանայք ու աղջիկները լուռ շրջում էին, 7 աղբյուրներից հավաքում փարչի սրբազան ջուրը և ավազահատիկները: Այս գաղտնի թափառումները, ինչպես նաև գաղտնի լոգանք ընդունելը հավանորեն աղերսվում էին բեղմնավորման այն ծեսերի հետ, որոնք ամլության դեմ մղվող պայքարի ձևերից էին (տե՛ս **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 194):

Այս ծիսաշարում որոշակի նշանակություն ուներ նաև կաթը: Այն դրացիներին էին բաժանում, որպեսզի կովը առատ կաթ ունենար:

Զատկից մինչև Համբարձում երեկոյան ժամերին կանայք կար չէին անում, որպեսզի հավկուր չլինեն (հավի պես չկուրանան):

Համբարձմանը տարածված էր կաթնապուր եփելու ավանդույթը. Զատկից մինչև Համբարձում ընկած շրջանում կաթնապուրի գործածությունն արգելված էր, որպեսզի կովերի կաթնատվությունը չպակասեր, այդ օրը, սակայն, յուրաքան-

չյուր տան համար կաթնապուր եփելը պարտադիր էր:

Համբարձման ծիսաշարի գլխավոր բաղադրիչը «Վիճակ-ջանգյուլումն» էր: Թեև վիճակը կապված էր Քրիստոսի համ-բարձվելուց հետո առաքյալների և աշակերտների ժողովում Հու-դայի փոխարեն վիճակահանությամբ նոր աշակերտ ընտրելու հետ, բայց այն հնագույն արմատներ ունի: Այդ խաղերն ու ծե-սերն արտացոլում են ծառ ու ծաղկի պաշտամունքի, գեղեցիկ սեռի ազատության և երջանկության որոշակի խորհուրդներ:

Վարդավառը հայ ժողովրդական տոնացույցում

Հարցեր և առաջադրանքներ:

Վարդավառը կամ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպություն կամ Այլակերպություն անվամբ տոնը որպես ժողովրդա-կան հավատալիքային և կրոնական համակարգերի զաղա-փարական և ծիսապաշտամունքային տարրերի ներդաշնակ համալիր: Տոնի խորհուրդը, ծիսարարողակարգը, անցկաց-ման ժամկետները և անվանումները *(Վարդավառը հայոց կեն-ցաղում ունեցել է և ունի ժամկետային առանձնահատկու-թյուններ՝ ձգվելով հուլիսի կեսերից մինչև օգոստոսի սկզբնե-րը): Տոնի բազմաշերտությունը. Նավասարդ (ամառային արևադարձ) – Հովհաննես Մկրտչի տոն – Քրիստոսի Պայծա-ռակերպություն կամ Վարդավառ: Կաթոլիկ և ուղղափառ եկե-ղեցիներն այն նշում են անշարժ օրով՝ օգոստոսի 6-ին:*

Վարդավառի նավասարդյան ակունքները որպես ամա-ռային արևադարձի տոն: Հայագիտության մեջ տոնի ուսում-նասիրվածությունը: Վարդավառ բառի ստուգաբանությունը:

Վարդավառի ծագումը և քրիստոնեական խորհուրդը: *Ծի-սահամալիրում սեռատարիքային սահմանափակումներ չլինե-լը: Ծեսի կատարման վայրը, վարդավառյան մատաղի ծեսերը որպես զանգվածային խնջույքների յուրատեսակ հանդիսութ-յուններ:*

Վարդավառյան ուխտագնացությունը հայոց սոցիալ-մշակութային համակարգում: Մատաղը Վարդավառի ծիսաշարում: Վարդավառյան ուխտավայրերին առնչվող հավատալիքների համակարգը և ավանդազրույցները: Ուղեկցվող զոհաբերությունները, նվիրատվությունները, խնձոր նվիրելու սովորույթը, աղի բլիթ ճաշակելու սովորույթը, կազմակերպվող միջոցառումները. *խաղեր, ըմբշամարտեր, ձիարշավներ, աշուղների մրցություններ, տոնավաճառներ: Դրանք որպես հինավուրց նավասարդյան տոնահանդեսներ:*

* * *

Վարդավառը ավանդական և արդի կենցաղում: *Վարդավառը Խորհրդային Հայաստանի ձևավորման ժամանակաշրջանում (1920-30 թթ.), Վարդավառի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները խորհրդային և հետխորհրդային համակարգերի համատեքստում: Տոնի հաջորդ օրը մեռելոց է:*

Վարդավառ: Հայտնի է նաև Քրիստոսի Այլակերպություն կամ Պայծառակերպություն անունով: Նշվում է Զատկից 98 օր հետո և ունի 35 օրվա շարժականություն՝ հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը (օր.՝ Տավուշում նշվում է հուլիսի 20-ին հաջորդ առաջին կիրակի օրը): Այն ունի բազմաթիվ տեղական անվանումներ **(Վարդևոր, Վրդևոր, Վրթիվեր, Պալլում)**, բայց արարողակարգը գրեթե ամենուր նույնն էր:

Ծագմամբ հեթանոսական ջրային տարերքի տոն է և կապված էր Աստղիկ և Անահիտ աստվածուհիների պաշտամունքի, Ամանոր-Նավասարդի, ինչպես նաև Համաշխարհային ջրհեղեղի կամ Նոյյան տապանի հետ:

Ըստ Գր. Ղափանցյանի, վարդավառը խեթերեն բառակազմություն է՝ «Vard» (ջուր) և «arr» (լվանալ, ցնցղել իմաստով) բառերից և նշանակում է ջրի ցնցղում:

Այս ծիսահամալիրի առանցքում գլխավորը **ջուրն էր**, նաև **մատաղը, աղավնին** և **խնձորը**: Նախնական շրջանում մեծ տեղ է հատկացվել վարդին: Տոնի ժամանակ, առանց տարիքային սահմանափակման, ջրում էին: Ոչ ոք վիրավորվելու իրավունք չուներ: Ըստ երևույթին, մարդաշատ ջրախաղերը արտահայտում էին Աստղիկի լոգանքը: Մանկական խաղերն ու խաղալիքները հարմարեցված էին հատկապես ջրախաղերին: Բավական տարածված էր աղավնի թռցնելու սովորույթը, որը կապված էր Նոյյան տապանի ավանդության հետ (Նոյ նահապետը աղավնուն էր վստահել համաշխարհային ջրհեղեղից փրկության ավետաբերի առաքելությունը):

Վարդավառյան մատաղի ծեսերը զանգվածային խնջույքների յուրատեսակ հանդիսություններ էին և կատարվում էին բնակավայրից դուրս գտնվող սրբավայրերում, ուխտատեղիներում: Տոնը ուղեկցվում էր նաև ամենատարբեր միջոցառումներով՝ խաղեր, ըմբշամարտեր, ձիարշավներ, աշուղների մրցույթներ և այլն, գրեթե նավասարդյան տոնահանդեսների նման:

Վարդավառյան ավանդույթներից էր նաև «խնդումի» կամ «խնդում տոքի» ծեսը: Տոնին նորապսակների ազգականներն առաջին հերթին միմյանց նվերներ էին մատուցում (միրգ, չրեղեն, զարդեր, հագուստ), հաճախակի էին վարդի փնջերի և ծաղիկների նվիրատվությունները: Տարածված էր խնձոր նվիրելու սովորույթը. Վարդավառից առաջ խնձոր ուտելն արգելված էր (պաս էր): Չամուսնացածները երբեմն Վարդավառի նախորդ գիշերն աղի կերակուրներ էին ուտում և ողջ օրը ջուր չխմելով՝ քնում, որ գիշերը երազ տեսնեն: Երազում ջուր տվողը պիտի դառնար ապագա հարսնացուն կամ փեսացուն:

Տոնին եկեղեցիներին հասկեր էին նվիրում և աղերսում, որ արտերն ու այգիները զերծ մնան աղետներից: Այս առումով

առանձնակի նշանակություն էր տրվում Նուրին անվամբ անձրևաբեր ծիսաշարին, որն ուղեկցվում էր երգ ու պարով ու խաղիկներով: Խումբը կազմված էր լինում դեռատի աղջիկներից և այրի կանանցից, բացառիկ դեպքերում մասնակցում էին նաև տարեց կանայք: Խմբին դիմավորում և սպասարկում էին տատիկները: Ընտանիքի անդամներին հղված մաղթանքի երգերին և տանտիրուհուն ուղղված խնդրանքին պատասխանում էին՝ կաթնամթերք, ձու, ալյուր և այլ բարիքներ հանձնելով: Առատություն ապահովելու նպատակով՝ ծառերի ոստերով ու ծաղկեփնջերով զարդարում էին ընտանի կենդանիներին, որոշ տեղերում էլ կրկնվում էին Համբարձման վիճակախաղերը, իսկ սարերում վառում էին խարույկներ, որոնց շուրջը կատարվող արարողությունները նման էին Տերընդեզի հանդիսություններին:

Սուրբ Աստվածածնի վերափոխում. խաղողօրհնեքի բնապաշտական ծիսահամալիրը

Հարցեր և առաջադրանքներ:

Տոնը որպես Տիրամորը նվիրված հայոց եկեղեցական տաղավարային տոն *(ըստ ավանդության՝ Աստվածամայր Մարիամը խաղաղ մահ է ունեցել, ննջել և մարմնով երկինք է փոխադրվել կամ վերափոխվել),* ***նշման ժամկետը*** *(օգոստոսի 15-ի մերձավոր կիրակի օրը) բնորոշ արարողակարգերը. ուխտագնացությունները, մատաղները, խաղողօրհնեքի արարողությունները: Խաղողօրհնեքը որպես հեթանոսական բնապաշտական ծիսահամալիր, աղերսը ավանդական Նավասարդի և հատկապես բերք ու պտղի առատությունն ապահովող հավատալիքների, Անահիտի պաշտամունքի հետ: Մարիամ Աստվածածնին նվիրված այս* ***տոնի անվանման այլ տարբերակները (Աստվածածնի Զատիկ, Խաղողի Զատիկ, Պտուղի***

օրհնանքի տոն): Տոնին ուղեկցող ուխտագնացությունները, մատաղները, խաղողօրհնեքի արարողությունները:

Տոնի հաջորդ երկուշաբթի կատարվող մեռելոցի խորհուրդը:

* * *

Տոնը մեծ ժողովրդականություն է վայելել հատկապես այգեշատ շրջաններում, որտեղ խաղողագործական մշակույթը մեծ ավանդույթներ ուներ: Անցյալում խաղողօրհնեքը տեղի էր ունենում այգիներում, երբ քահանան մի ձեռքում մկրատը, մյուսում՝ խաչը, այցելում էր այգիները և կատարում խաղողօրհնության արարողությունը:

Հայոց եկեղեցական գլխավոր տոներից է, որը կենցաղում առավել հայտնի է **Խաղողօրհնեք** անվամբ: Ըստ ավանդության՝ Աստվածամայրը խաղող մահ է ունեցել, ննջել և երկինք է փոխադրվել կամ վերափոխվել: Տոնը նշվում է օգոստոսի 15-ի մերձավոր կիրակի օրը: Տոնի արարողություններում առանձնանում էին ուխտագնացությունները, մատաղները և հատկապես խաղողօրհնեքի արարողությունները:

Այս տոնը ևս ունի հեթանոսական-բնապաշտական ծագում, որն առնչվում է ավանդական Նավասարդին և հատկապես բերք ու պտղի առատությունն ապահովող հավատալիքներին: Տոնը ունի նաև տեղական անվանումների տարբերակներ. **Աստվածածնի Զատիկ, Խաղողի Զատիկ** և այլն:

Տոնին առնչվող մի ավանդության համաձայն՝ «երբ Նոյն աղավնուն ուղարկում է տեղեկություն բերելու, աղավնին հանդիպում է Քրիստոսին: Քրիստոսը մի ճութ խաղող է տալիս աղավնուն, օրհնում այն, հետո մի բաժակ գինի է վերցնում, խփում խաղողի ողկույզին ու ասում. «Տար, տուր Նոյին, որ գինին իմ արյունն է, խաղողը իմ մարմինը, թող հավատա ու վախի ոչ մի նշույլ չունենա, թող հավատա ու տապանից դուրս գա, իջնի երկիր»»:

Մինչ Ս. Աստվածածնի տոնը խաղողը պաս էր համարվում, ինչպես Վարդավառից առաջ խնձորը: Տոնը տարածված էր այգեշատ շրջաններում: Այգետերերն ամենաընտիր խաղողը թաշկինակների մեջ կապած օրհնելու էին տանում նշանավոր վանքեր կամ եկեղեցիներ: Խաղողօրհնեքի արարողությունից հետո սրբազան այդ վայրերում այգետերերը կազմակերպում էին խնջույքներ, որից հետո դհոլ-զուռնայի ուղեկցությամբ օրհնված խաղողի ողկույզներով վերադառնում էին տուն:

Շատ ազգագավառներում տոնը վերածվել էր երիտասարդության ծանոթության, շփման, աղջիկների և նորահարսների գեղեցկության ցուցադրման մի յուրատեսակ արարողության:

Տոնի կապակցությամբ կազմակերպվում էին ուխտագնացություններ, որ ուղեկցվում էր մատաղի արարողություններով: Աստվածածնի օրհնությանը դիմում էին հիվանդանալիս, վշտի, ծննդաբերության ժամանակ, չբեր կանայք՝ հղիանալու համար և, առհասարակ, կյանքի տարբեր ոլորտներում չարքից ազատվելու և բարին կատարվելու նպատակով: Մարիամ Աստվածածինը ամենասիրված սրբություններից է համարվել:

Տոնի հաջորդ երկուշաբթին մեռելոց էր: Գնում էին գերեզմանոց, հարազատների գերեզմաններին խունկ ծխում, մոմ վառում և քահանային օրհնել տալիս շիրիմները: Յուրաքանչյուր տնից ծիսական կերակուրներ և մանավանդ խաղող էին տանում գերեզմանատուն կամ եկեղեցի, ուր միասին ճաշակում էին՝ բաժին հանելով նաև աղքատներին: Վերջում կատարվում էր հոգեհանգիստ՝ «համայն ննջելոց համար»:

Խաչվերաց – Սուրբ խաչը եկեղեցական և ժողովրդական տոնացույցում

Հարցեր և առաջադրանքներ:

Խաչվերացը որպես հայոց եկեղեցական տաղավար տոն:

Տոնի խորհուրդը *(այն վերաբերում է Հիսուս Քրիստոսի խաչափայտի ազատագրման հիշատակին):* ***Տոնի պատմականությունը:*** *Սեպտեմբերի 14-ը Քրիստոսի Խաչափայտի վերադարձի կամ Խաչվերացի տոն: Հաճախ տոնն ընդգրկում էր ամբողջ սեպտեմբեր ամիսը:* ***Տոնի անվանումները*** *(****Սփիսեչ կամ Սբբիսեչ, Խչվերաց, Ուլոց (Ուլնոց), Խրով*** *և այլն):*

Տոնի հատկանիշներից մեկը ուխտագնացություններն էին, տոնի համայնքային բնույթը, ուտեստը (ուլի խորվուն էր), հանգուցյալներին նվիրված հոգեհանգստյան արարողությունները, ուխտավորները տանում էին մատաղացու կենդանիներ (ուլ, այծ, աքլոր): Տոնի նախորդ շաբաթ օրն արգելվում էին հարսանիքներն ու կնունքները:

* * *

Խաչվերացը հայոց եկեղեցական տաղավար տոներից է, որը նվիրված է Հիսուս Քրիստոսի խաչափայտի ազատագրման հիշատակին: Ակունքներով տոնը պատմական է: 610-614 թթ. պարսից Խոսրով Բ Փարվիզ արքան պատերազմելով Բյուզանդիայի դեմ՝ նվաճում է Երուսաղեմը և գերության վերցնում այն խաչափայտը, որի վրա Հիսուսին տանջահար էին արել: Միայն 628 թ. պարսկա-բյուզանդական պատերազմի ժամանակ Բյուզանդիայի Հերակլ կայսրին հաջողվում է հաղթել պարսիկներին և վերադարձնել գերված խաչախայտը: Սուրբ խաչի ազատագրման գործում մեծ ավանդ է ունեցել բյուզանդական զորքում հայկական զորագունդը՝ իշխան **Մժեժ Գնունու** հրամանատարությամբ: Հաղթական այդ օրը՝ 628 թ. սեպտեմբերի 14-ին, փառավոր հանդեսով սրբազան մասունքը զետեղվել է իր ավանդական տեղում՝ Երուսաղեմի Ս. Հարության տաճարում: Այդ օրն էլ եկեղեցական այրերը հռչակեցին **Խաչվերացի տոն**: Տոնը հաստատվեց քրիստոնեական բոլոր

եկեղեցիներում: Հայոց մեջ այն տոնվում է սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը: Կարնո լեռների ամենաբարձր գագաթը կոչվում է Խաչափայտ, իսկ ստորոտում էր գտնվում **Խաչկա** վանքը, որտեղ էլ կատարվում էին ամենազանգվածային ուխտագնացությունները:

Այս վանքի շրջակայքում են ծավալվել հիմնական մարտերը: Տոնը կրում է տեղական այլ անվանումներ ևս՝ **Սփխեչ, Ուլոց, Խրով** և այլն: Տոնը երբեմն ձգվում էր մինչև հոկտեմբեր: Դրա համար էլ սեպտեմբեր ամիսը անվանվել է **Խաչ-խաչին**: Տոնը նշվում էր հանդիսավորությամբ, երբ բերքահավաքը ավարտված էր:

Տոնին գերեզմաններ էին գնում (մեռելոց): Կատարվում էին զանգվածային ուխտագնացություններ և զոհաբերություններ: Տոնի կապակցությամբ եկեղեցիներին մատուցում էին որոշ նվերներ՝ ուլեր, գորգեր, տարբեր գործվածքներ:

Տարածված էին Սուրբ խաչի տոնին հանգուցյալներին նվիրված հոգեհանգստյան արարողություններ՝ ժամերգությունից հետո տանում էին խաղող, ձմերուկ, հաց, օրհնել էին տալիս գերեզմանները և ուտելիքներից բաժին հանում: Մի շարք տեղերում գերեզմանօրհնեքի արարողությունից հետո տրվում էր հանգուցյալների հիշատակին նվիրված համայնական հացկերույթ: Ննջեցյալների տուն էին տանում խորվուի համար ուլ: Խաչվերացն ընկալվում էր որպես տնտեսական տարվա պարբերաշրջանի սահման:

Նավասարդը հայ ժողովրդական տոնացույցում

Հարցեր և առաջադրանքներ:

«Նավասարդ» բառի լեզվաբանական ստուգաբանությունը *(նաւա-սերհատա-նոր տարի),* ***այն, ըստ մատենագիրների*** *(ըստ Անանիա Շիրակացու և Հովհ. Իմաստասերի), եղել է*

Հայկ նահապետի դուստրերից մեկի անունը, որով մեր նախահայրն անվանել է տարվա առաջին ամիսը: ***Տոնի կատարման ժամանակը*** *(նախապես նշվել է գարնանային օրահավասարին՝ մարտի 20-21-ը, իսկ ապա՝ օգոստոսի 11-ին):* ***Հայկական թվականի սկիզբը*** *(2492 թ. Բելի դեմ Հայկի տարած հաղթանակի տարին):* ***Նավասարդի տոնի կապը Հայկի առասպելաբանության հետ: Նավասարդը որպես տնտեսական տարվա սկիզբ*** *(մարտի 20-21) և կապը ավարտի (օգոստոսի 11)՝ «նորոց պտղոց կամ հունձքի տոն»-ի հետ:*

Գրիգոր Լուսավորչի կողմից նավասարդյան տոնի փոխարինումը Ս. Հովհան Կարապետին նվիրված տոնով, Բազավանի ուխտագնացությունները, տոնական զվարճահանդեսները, զոհաբերությունները և այլն, հեթանոսական տաճարների քանդվելու մասին հիշատակությունները:

* * *

Սիմոն Երևանցի կաթողիկոսի մշակած նոր տոնացույցով (XVIII դ.) տարվա սկիզբը՝ *Նոր տարին կամ Տարեմուտը նշելու ժամանակը (հունվարի 1-ը):* ***Տոնի նվիրական ուտեստը*** *(հարիսա, քեաշկե, աղանձեղեն, ընկույզներ, քաղցրահամ մրգեր, չրեղենի տեսականի):* ***Տոնի նշման մնացուկները ՀՀ-ում*** *(«նախրաթող»-ին՝ նոյեմբերի 10-ին հաջորդող կիրակին): Տոնի առթիվ բարեկամների միմյանց այցելությունները, նվերներ մատուցելը, հարսներին այցելությունները, նրանց տան կտրից ընկույզ, տանձ ու խնձոր աննկատ իջեցնելը: «Տարին առատ և կարմիր օրերով» անցկացնելու ակնկալիքով կատարվող արարողությունները (մաքրում էին գոմերը, անասունների տակ գարի ցանում, պոչերին կարմիր թելեր կապում և այլն):*

Նավասարդյան խաղերը, Նավասարդից սկսվող հարսանիքները, Նավասարդը որպես բերք ու բարիքի, կյանքի հա-

բատևումը խորհրդանշող տոն: Հայոց տոնական համալիրում մինչև այսօր էլ մեծ տեղ է տրվում ծիսական այնպիսի կարևոր բաղադրիչների, ինչպիսիք են մատաղը, ուխտը կամ ուխտագնացությունը:

Նավասարդ: Ըստ հայոց ազգային օրացույցի՝ տարվա առաջին ամիսն էր. ամսվա առաջին օրը ավանդական Նոր տարին էր կամ Ամանորը: Նավասարդը, ըստ Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի, եղել է Հայկ Նահապետի դուստրերից մեկի անունը, որով և մեր նախահայրն անվանել է տարվա առաջին ամիսը: Հայկական մեծ թվական կոչվող տոմարի (ընդունվել է 551-552 թթ.) մեջ նահանջ տարիների հավելյալ օր չէր գումարվում, որի հետևանքով դարերի ընթացքում ճեղքվածք էր կուտակվում իրական տիեզերական տարվա և հայկական տոմարի միջև:

Նավասարդը նախապես նշվել է գարնանային օրահավասարին (մարտի 20-21): Կա տեսակետ, որ մ.թ. 428-ի Նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ին: Հայկյան բուն թվականը համարվում է 2492 թ. Բելի դեմ Հայկի տարած հաղթանակի տարին:

Ավանդական կենցաղում Նավասարդն առավելապես ընկալվում էր որպես տնտեսական տարվա ավարտի՝ նախրաթողի և աշնանային բերքահավաքի՝ «հայոց պտղոց կամ հունձքի տոն», որը դարձյալ չուներ ճշգրիտ ժամկետ: Աշնանային Նավասարդը որոշ շրջաններում պահպանվում էր որպես ավանդական Ամանոր, երբ Սիմոն Երևանցի կաթողիկոսի մշակած նոր տոնացույցում (XVIII դար) հունվարի սկիզբը հաստատվեց որպես Նոր տարի կամ Տարեմուտ: Տոնի գլխավոր ուտեստներն էին կորկոտն ու հարիսան, Արցախում՝ «քեաշկեն», որոշ տեղերում՝ խաշը, բոզբաշը: Դրվում էր յոթ

տեսակի միրգ: Տոնական սեղանները զարդարում էին աղանձը, ընկույզը, քաղցրահամ մրգերն ու չրեղենը: Աղանձը պատրաստում էին ոչ միայն ցորենից, այլև ոսպից, կանեփից, կտավատից և նոխուդից, որոնց խառնում էին նաև չամիչ, ընկույզ: Մինչև Նավասարդի տոնը մեկշաբաթյա պաս էին պահում (երկուշաբթիից մինչև ուրբաթ): Տոնի առթիվ միմյանց այցելություններ էին կատարվում նվերներով, հարսնացուի երդիկից պարանով թաշկինակի մեջ կապած ընկույզ, տանձ, խնձոր իջեցնում և աննկատ հեռանում, իսկ երեխաները խմբերով երգելով շրջում էին տնետուն և ակնկալում նվերներ կամ էլ երդիկից տոպրակներ կամ գուլպաներ էին իջեցնում, որոնց մեջ տանտիրուհիները թխվածք, աղանձ, չամիչ կամ մետաղադրամ էին լցնում: Այս արարողությունները շարունակվում էին մինչև կեսգիշեր: Նախօրեին մարդիկ ձգտում էին հաշտվել միմյանց հետ, մոռանալով հին խռովությունները, որպեսզի լիարժեք դառնան փոխայցելությունները և բարեմաղթանքները: Օղի, խնձոր կամ մի չափ ցորեն վերցրած նախ գնում էին քահանայի տուն՝ նավասարդը շնորհավորելու, աշակերտները վարպետներին, տան մեծը՝ տանուտերի տուն, բնակավայրի մելիքները հասարակական մատաղ էին անում, քավորն իր անունից **խոնչա** (նվերների կապոց) էր ուղարկում նոր ամուսնացած նորապսակներին և խոնչա բերողն էլ ստանում էր իր նվերը, իսկ քավորին էլ ուղարկում էին միրգ, օղի, գինի, հավ՝ **խոնչա** արած ձևով:

Տարին ուրախ, հաջող և բերքառատ տեսնելու ցանկությամբ ու սպասումներով մարդիկ ծառերի ճյուղերին կարմիր կտոր էին կապում: Նախորդ գիշերվանից տանտիրուհիները մաքրում էին գոմերը, անասունների տակ գարի ցանում և այգիներին կարմիր թել կապում՝ «տարին առատ և Կարմիր օրե-

րով» անցկացնելու սպասումով: Բազմազան էին խաղերը: Նավասարդի տոնը բացում էր նաև հարսանեկան շրջանը: Տոնի բնույթից երևում է, որ հայոց ավանդական կենցաղում **Նավասարդն առավելապես եղել է բերք ու բարիքի, կյանքի հարատևումը խորհրդանշող տոն**: Տոնի ուտեստային համալիրի գլխավոր բաղադրիչներ հարիսան, կորկոտը, աղանձը, մրգեղենը, չրեղենը պիտի ապահովեին հատկապես այգեգործության, դաշտամշակության, անասնապահության, անձնական-ընտանեկան հաջողությունները:

ԹԵՄԱ 4
ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հարցեր և առաջադրանքներ:

Առաքելական եկեղեցին և հայոց ավանդական տոների պահպանման խնդիրը: Եղեռնը և տոնական համակարգի փլուզումը:

Հայոց վերականգնված պետականությունների տոնական համակարգի ձևավորման գործընթացում քաղաքական կառուցվածքով, կրոնի հավատալիքների հանդեպ ունեցած վերաբերմունքով, սոցիալ-տնտեսական գործընթացների ու մշակութային կապերի զարգացման մակարդակով, էթնիկ կապերի ուղղվածությամբ միմյանցից տարբերվող Հայաստանի երեք հանրապետությունների խաղացած դերերը:

Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920) տոնական համակարգը: Պետական տոներ: Քաղաքականություն և գաղափարախոսություն:

Առաջին հանրապետության տոնացուցցի սահմանած տոնաշարք մտցված ազգային և միջազգային նշանակության պետական-քաղաքական իրադարձությունների նշումը (օգոստոսի 1-ը՝ Պառլամենտի բացման օրը, մայիսի 1-ը՝ Աշխատավորների միջազգային օրը, փետրվարի 27-ը՝ Ցարիզմի տապալման օրը, ավանդական տոներից՝ Ամանորը, Քրիստոսի Ծնունդը և Մկրտությունը, Տյառնընդառաջը, Բարեկենդանը, Զատիկը, Համբարձումը, Մեծ Պահքը, Վարդավառը, նաև Վարդանանց, Թարգմանչաց և Գրիգոր Լուսավորչին նվիրված տոները):

Հայաստանի երկրորդ՝ խորհրդային սոցիալիստական հանրապետության տոնական համակարգը. պետական տոներ, *քա-*

ղաքականություն և գաղափարախոսություն: Տոնական համակարգի բնույթի փոփոխությունը և զարգացման ընթացքը խորհրդային տարիներին: Ավանդութային-կրոնական տոների նկատմամբ պետության բացահայտ անհանդուրժողականությունը (1920-30-ական թթ.), ասպարեզ մտած ապազգային միջազգային հեղափոխական գաղափարախոսությամբ պայմանավորված տոներ, Առաջին հանրապետության տոնացույցի վերացումը, ավանդականի մասնակի պահպանումը՝ կրոնական-եկեղեցական բաղադրիչների մերժմամբ, դրանց հակակշիռ նոր – ծես միջոցառումների իրականացումը («Կարմիր Ծնունդ», «Կարմիր կնունք», «Կոմերիտական Զատիկ», 1920-30-ական թթ. եկեղեցիների փակման, եկեղեցականների հալածման ժամանակաշրջանի բնութագրությունը: Պետական տոնացույցի մայիսի 1-ի, մարտի 8-ի (Կանանց միջազգային օր) մուտքը նաև հայկական ընտանիք: Մայիսի 9-ը՝ Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովուրդների տարած հաղթանակի օրը, հոկտեմբերի 7-ը՝ ՍՍՀՄ Սահմանադրության օրը, նոյեմբերի 7-ը՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության օրը, նոյեմբերի 28-ը՝ Հայաստանում Սովետական կարգերի հաստատման օրը:

Արցախյան շարժումը և համազգային զարթոնքը հայոց տոնածիսական համակարգում:

Հայաստանի երրորդ հանրապետության տոնական համակարգը: Փոփոխությունները տոնական համակարգում՝ նախկին հակակրոնական հալածանքների վերացման, ազգային-պետական մի շարք տոների սահմանումը.

1. Ծննդյան տոներ և Ամանոր – դեկտեմբերի 31-ից մինչև հունվարի 3-ը, հունվարի 6-ը ոչ աշխատանքային օրեր սահմանելը:

2. Բանակի օր (հունվարի 28, ոչ աշխատանքային օր):
3. Մայրենի լեզվի օր (փետրվարի 21):
4. Կանանց տոն (մարտի 8, ոչ աշխատանքային օր):
5. Մայրության, գեղեցկության և սիրո տոն (ապրիլ 7):
6. Ցեղասպանության զոհերի հիշատակի օր (ապրիլի 24, ոչ աշխատանքային օր):
7. Աշխատանքի օր (մայիսի 1, ոչ աշխատանքային օր):
8. Երկրապահի օր (մայիսի 8):
9. Հաղթանակի և խաղաղության տոն (մայիսի 9, ոչ աշխատանքային օր):
10. Հանրապետության տոն (մայիսի 28, ոչ աշխատանքային օր):
11. Երեխաների իրավունքների պաշտպանության օր (հունիսի 1):
12. ՀՀ Սահմանադրության օր (հուլիսի 5, ոչ աշխատանքային օր):
13. Գիտելիքի և դպրության օր (սեպտեմբերի 1):
14. Անկախության տոն (սեպտեմբերի 21, ոչ աշխատանքային օր):
15. Թարգմանչաց տոն (հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը):
16. Երկրաշարժի զոհերի հիշատակի օր (դեկտեմբերի 7):
17. Սուրբ Վարդանանց տոն, բարի գործի և ազգային տուրքի օր (նշվում է Ս. Զատկից 8 շաբաթ առաջ՝ հինգշաբթի օրը):
18. Ս. Էջմիածնի տոն:

Հայաստանի երրորդ հանրապետության տոնական համակարգի բնութագրությունը:

Արդի կենցաղավարվող տոներն արդյունք են էթնիկ ավանդույթների էվոլյուցիայի՝ պայմանավորված սոցիալա-

կան, տնտեսական, պետական, քաղաքական, մշակութային և կրոնական ոլորտներում կատարված տարաբնույթ գործընթացներով: Հայաստանի երեք հանրապետությունները՝ I-ին (1918-1920 թթ.), II (1920-1990 թթ.) և III (1991 թվականից ի վեր), միմյանցից տարբերվում են վերը նշված ուղղվածություններով:

Մինչև XX դ. սկզբները պետականության բացակայության պայմաններում ավանդական տոների պահպանման երաշխավորը ազգային եկեղեցին էր: Ավանդական տոների մի մասը արևմտահայոց զանգվածային կոտորածների ու հայրենազուրկ արվելու, տեղահանվելու գործընթացների հետևանքով պիտի վերանային: Այդուհանդերձ, հայկական I հանրապետության հաստատմամբ էական պայմաններ ստեղծվեցին ավանդական տոների պահպանման և տարածման համար: Դրանց հետ առաջացան նորերը՝ պետական-քաղաքական նոր իրողություններով պայմանավորված: Դրանք էին՝ Հանրապետության պառլամենտի բացման (օգոստոսի 1), Անկախության (մայիսի 28), Աշխատավորների (մայիսի 1) և Ռուսաստանի մեծ հեղափոխության (փետրվարի 27 – նոր տոմարով՝ մարտի 12) օրերը: Պահպանվեցին նաև ազգային փոքրամասնությունների՝ ռուսների, մահմեդականների ավանդական տոնացույցի և հիշատակի որոշ համալիրներ:

Խորհրդային կարգերի հաստատմամբ, հայոց ավանդական տոների նկատմամբ անհանդուրժողականության, պետական հալածական քաղաքականությամբ պայմանավորված, էական փոփոխությունների ենթարկվեց տոնական համակարգը, վերացվեց I հանրապետության տոնացույցը, մտցվեցին տոներ, որոնք ամբողջությամբ կապված էին միջազգային հեղափոխական շարժման գաղափարախոսության հետ և բովանդակությամբ ապազգային էին: Ավանդական առանձին

տոներ էլ շատ կարճ ժամանակ գոյատևեցին: Բայց դրանք շատ խորը արմատներ ունեին, և դրանց ծիսական շատ բնութագրիչներ՝ ծիսական ուտեստ, խնջույք, ուխտագնացություն, մատաղ, երգ, պար, փոխայցելություններ, նվիրատվություններ շարունակեցին պահպանվել: 1920-1930-ական թթ. ավանդական տոների կրոնական-եկեղեցական բաղադրիչները մերժողական վերաբերմունքի արժանացան, կենցաղից դուրս մղվեցին: Դրանց փոխարեն հաճախ կազմակերպվում էին երթեր, միտինգներ, թատերականացված ներկայացումներ: Ազգային, ավանդական շատ տոներ փոխակերպվեցին բոլշևիկյան հեղափոխական իրականությամբ տոների. Ծննդյան, Հարության տոնի փոխարեն մտցվեց «Կարմիր ծնունդ», «Կարմիր կնունք», «Կոմերիտական Զատիկ», որոնք եկեղեցական տոնների մերժմանն էին միտված: Բացահայտ մերժվում էր հոգևորականությունը, եկեղեցիները կա՛մ քանդվում էին, կա՛մ վերածվում պահեստների և այլն: Այդուհանդերձ, նույնիսկ այդ պայմաններում, Երկրորդ աշխարհամարտի տարիներին որոշակի աշխուժացան և պահպանվեցին, չօտարվեցին ավանդական մի շարք տոներ՝ Ս. Սարգիսը, Տյառնընդառաջը, Վարդավառը, Մեծ պասը, Համբարձումը, Խաղող-օրհնեքը, Խաչվերացը, հատկապես՝ Նոր տարին:

Ասպարեզ եկած տոներից առանձնանում էին **Մայիսի 1-ը՝** որպես աշխատավորների միջազգային օր, **Մարտի 8-ը՝** կանանց միջազգային օր:

Տոնածիսական վարքագծի փոփոխությունները մեծ չափով պայմանավորված էին պատմական իրադարձություններով. Մեծ եղեռն, բռնագաղթեր, բնական աղետներ, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, փոփոխվող իրողություններ և այլն:

Ամփոփելով նշենք, որ ներկայումս ՀՀ պետական տոնա-

ցույցը ավարտին հասցված չէ, դրա մեջ մտնող շատ բաղադրիչներ վերաարժեքավորման կարիք ունեն: Իհարկե, ժողովրդի մեջ տոն ունենալու և տոն նշելու ձգտումը շատ մեծ է, այլ բան է, որ երկրում դեռևս լիարժեք կարգավորված չէ տոնական կյանքը, քանզի տոնը ոչ թե հայտարարված տոնական օրն է կամ որևէ օր ոչ աշխատանքային հայտարարելը, այլ այն պետք է արտացոլի այդ օրվա բովանդակությունը, ժողովրդի մշակութային նորմերին համապատասխան տոնածիսական արարողակարգը:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Երևան, 1974:
2. **Լալայան Ե.,** Երկեր, հ. 1, Եր., 1983, հ. 2, Եր., 1988, հ. 3, Եր., 2004, հ. 4, Եր., 2021, հ. 5, Եր., 2025:
3. **Խառատյան-Առաքելյան Հր.,** Հայ ժողովրդական տոներ, Եր., 2005:
4. **Խառատյան-Առաքելյան Հր.,** Տոնը և տոնահանդեսի մշակույթը, Եր., 2010:
5. **Մանուկյան Ա.,** Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1969:
6. **Մկրտչյան Ս.,** Տոները հայոց արդի կենցաղում (էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն) // ՀԱԲ, 22, Եր., 2007, էջ 129-237:
7. **Մկրտչյան Ս.,** Հայոց տոնածիսական մշակույթ, Եր., 2016, 400 էջ:
8. **Մկրտչյան Ս.,** Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), ՀԱԻ հրատ., Եր., 2020:
9. **Նահապետյան Ռ.,** Հայոց Ամանորը // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, 2020, էջ 292-303:
10. **Սիմոնյան Լ.,** Տոմարային ծիսաշար, Տոմար, Ձմեռ-Նոր-Տարի, Ս. Ծնունդ, հ. 1, Եր., 2006:
11. **Սիմոնյան-Մելիքյան Լ.,** Տոմարային ծիսաշար, հ. 2, Սուրբ

Սարգիս, Տրրընդեզ, Բարեկենդան, Եր., 2007:

12. **Վարդանյան Ռ.,** Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), Եր., 1999:

13. **Օղաբաշյան Ա.,** Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում // ՀԱԲ, Եր., 1987, գ. 9, էջ 7-70:

14. **Абрамян Л.,** Первобытный праздник и мифология, Ер., 1983.

15. **Петросян Э.,** Праздники армян в контексте европейской культуры, Ер., 2011.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀ – Ազգագրական հանդէս
ԱՀՊՊԹ – Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի
ԱՀՊԹ – Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի
ԲՀԱ – Բանբեր Հայաստանի արխիվների
ԲՎՊ – Բազմավէպ
ԴԱՆ – Դաշտային ազգագրական նյութեր
ԷԱԺ – Էմինեան ազգագրական ժողովածու
ԿՊՀԻ – Կովկասի պատմահնագիտական ինստիտուտ
ՀԱ – Հանդէս ամսօրեայ
ՀԱԱՊՊԹ – Հայաստանի ազգագրության, ազգատագրական պայքարի պետական թանգարան
ՀԱԲ – Հայ ազգագրություն և բանահյուսություն
ՀԱԻ – Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀԱՊԹ – Հայաստանի ազգագրության պետական թանգարան
ՀԱԹ – Հայոց ազգագրության թանգարան
ՀԳԱԻ – ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա
ԼՀԳ – Լրաբեր հասարակական գիտությունների
ՊԱՈՒ – Պատմաազգագրական ուսումնասիրություն
ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես
АЭФ – Армянская этнография и фольклор. Материалы и исследования
ВОН – Вестник общественных наук
ИКИАИ – Известия Кавказского историко-археологоческого института

ИФЖ – Историко-филологический журнал Академии наук Арм. ССР

КЭС – Кавказский этнографический сборник

ПИИЭ – Полевие исследования института этнографии

СМОМПК – Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис

СЭ – Советская этнография, Москва

ՀԱՎԵԼՎԱԾ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐ

ՏԱԽՏԱԿ 1



Բուսահավաքչության փայտե դրաձև և թիաձև բրիչներ ու թակեր (ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ)

Փիդաղ երգու պէրնէն Վ. Սասունաշեն, 1965



Թորխ ճկված, Գուգարքի Մեղրուտում, 1965



Թորխ ճանկավոր և ուրագաբերան, Մեղրուտ, 1965

Հողուրագ լայնաբերան, Աշտարակ, 1965



Քաղհանի ուրագ
Ալափարս, 1965



Ոտնաուրագ Մեղրուտում
(Գուգարք), 1965

Կարտոֆիլի հավաքումը Լոռու
Կուրթան գյուղում
(1950-ական թթ.)



Բահի քերիչներ թիթեղից
Մեղրուտ, 1965



Հոսելի (հորսելի), կալի գործիք,
Ապարան



Ջրի բահ, Արեգ գյուղ Թալինի
շրջանում

Լեխտր գործիքով հող փորելը Պոնտոսում

Երկանք քաշել, Ապարան, 1965
Վ. Բդոյանի արխիվ

Աղորիք-երկանք, Մուղնի, 1970, Վ. Բդոյանի արխիվ



Հնագույն պեղածո աղորիքներ

Սանդեր-սանդակոթեր

Սանդ և դընքյեր, Վ. Բդոյանի արխիվից
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
(Ապարան, 1965)

Սանդ և սանդի քար
Վ. Բդոյանի արխիվ, Բյուրական, 1965

Ոտքի դինգով ձավար ծեծելը արդի Հայաստանի հյուսիսային և հյուսիսարևելյան շրջաններում: Սանդը և վարսանդը քարից են

ՏԱԽՏԱԿ 2



ա) Բարձր Հայքի արորներ (Ա, Բ), ճոլա (Գ), անճար գութան (Դ)



բ) Պատմական Աղձնիքում գործածված վարի, հարթեցնող, հնձի գործիքներ

գ) Արորավարը Վ. Սասունաշենում, 4 զույգ լծկանով, 1965

ՏԱԽՏԱԿ 3



Նախագութաններ (Բ, Գ), Բարձր Հայքում և
հատուկ արոր Ծոփքում (Ա)

ՏԱԽՏԱԿ 4



ա) Գութանատիպեր Բարձր Հայքում



բ) Գութանը Լոռիում
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ

գ) Գութանավար

ՏԱԽՏԱԿ 5



Արտ ցաքանելը ցախե տափանով



Արտը ոռոգման համար կառափով հարդարելու ձևը 3 զույգ լծկանով



Կալի հավաքումը կառափով

ՏԱԽՏԱԿ 6



Աղբատարության ձևերն ու միջոցները



Աղբատարության ձևերն ու միջոցները

Քարահավաքի ձևեր

Քարահավաքի ձևեր



Քարահավաքը մինչև արորավարը

ՏԱԽՏԱԿ 7



Հնձվորի դաշտային հագուստներ



Հայկական մանգաղները XIX-XX դդ.



Հայկական հին շրջանի գերանդիներ

Առվույտի քաղը գերանդիներով
Վ. Թալին, 1965

Հունձ գերանդիով, Վ. Սասնաշեն, 1965

ՏԱԽՏԱԿ 8



Կոռիով կալսելու եղանակ



Կամը տակից. Դիլիջանի երկրագիտ. թանգարան, 1965



Կամը. Դիլիջանի երկրագիտ. թանգարան, 1965



Կալ անելը 1927-1929 թթ., գյուղ Արզնի, Կոտայքի շրջան (ՀԱԻ-ԱԲԱ)



Ջարջարիս (կամնասայլ՝ ջարջառ)

ՏԱԽՏԱԿ 9

Զանգեզուրցի կինը հացահատիկ խախալելիս, Գորիս, 1955

Կարտոֆիլի տեսակավորումը Լոռու Կուրթան գյուղում (1950-ական թթ.)



Մթերքների ամբարում մառանում

ՏԱԽՏԱԿ 10

Հարդի տեղավորումը մարագում մղաններով (պատուհաններ)



Պարկերի տեսակներ (կաշվե, կտավե, մազե (այծի), բրդյա գործվածքներ)

ՏԱԽՏԱԿ 11



Գինու արտադրական համալիր՝ հնձան,
Արենի-1 քարայր (Ք.ա. IV հազ. առաջին քառորդ)

Կարմիր բլուրի մառանում տեղադրված կարասներ

Գինու տեղափոխումը կաշվե տիկերով (XIX-XX դդ.), ՀՊԹ արխիվ

Տիկ այծի կաշվից

ՏԱԽՏԱԿ 12



Դանակաձև և կացնավոր հատոցներ (այգեգործական գործիքներ)

ՏԱԽՏԱԿ 13



Օղի թորելու սարք (1967 թ.), Էջմիածին (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ)

ՏԱԽՏԱԿ 14

Անձրևաբերության ծիսակատարություններ



Երկուսի կմախքն էլ ցախավելն է
1. Պուրպատիկ (իգական սեռի հագուստով)
2. Պուրպատիկ (արական սեռի հագուստ)

Չիչի-Մամայի արարողությունը Կարինում

ՏԱԽՏԱԿ 15

Ընտանեկան կյանքը Զանգեզուրի ամառանոցներում
կաթնամթերքների պատրաստման սեզոնին (XIX դ.)

Կաթը հարել և կարագ ստանալը խնոցիով



Կաթը հարելու ձևը ձձումով

Կաթի զտումը Լեռնարոտ գյուղում (Թալինի տարածաշրջան)

Եզ պայտելը Նոյեմբերյանում, ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1961 թ. ազգագրական արշավախմբի (ղեկ. Դ. Վարդումյան) նյութերից

ՏԱԽՏԱԿ 16



Դաղդաղաններ՝ թալիսմաններ

ՏԱԽՏԱԿ 17. Ձկնորսական մշակույթ



Ձկնորսական պարագաներ



Կարթավոր ուռկան



12-շրջանականոց փեթակ, երկհարկանի փեթակ

ՏԱԽՏԱԿ 18



Մեղվի փեթակ, պլոլ

ՏԱԽՏԱԿ 19. Տնայնագործություն, բրդամշակություն, հյուսվածքբանություն



Սանդերք. բուրդ զզելու գործիք



Ճախարակ: Արցախ



Ճախարակ: Սյունիք



Ճախարակ (Ճխարակի թոփ, գ. Մովսես, Տավուշ)



Գորգ գործելու ձևերից մեկը

Ուղղահայց սեփական տորք

ՏԱԽՏԱԿ 20. Փոխադրության միջոցներ

Խաղող կրելու ամաններ

Քթոց՝ դարման տեղափոխելու

Բամբակի կապոցը՝ գրկած



Քթոցներով բարձած էշը Տավուշի Այգեձոր գյուղում՝ միրգ խաղող տեղափոխելու համար (1967 թ.)

Ուսին դրած լծակով



Գերանի տեղափոխման ավանդական եղանակներից մեկը Աղձնիքում



Ջրաղացքարի տեղափոխման ավանդական եղանակներից մեկը Աղձնիքում





Ճախարակ սարվածքով ջրաղացքարի տեղափոխումը գլորելու եղանակով (Սղերդում)



Ջրքաղացքարի տեղափոխում գրաստով



Խաղող կրելը գրաստներով

Երկանիվ սայլ, գյուղ Նոյեմբերյան (Հնագիտ. և ազգ. ինստիտուտի 1961 թ. ազգագրական արշավախումբ. Դ. Վարդումյանի լուսանկարներից)



Հետիկ Ամասիայում և Լոռիում:



Գամերով տրեխներ՝ սառցապատ լեռներ բարձրանալու և իջնելու համար:



Լական Սասունում

ՏԱԽՏԱԿ 21. Բնակավայրեր



Շինուհայր (Սյունիք) գյուղի ընդհանուր տեսքը



Գանձաքարի վերափոխված մի հատվածի տեսարանը



Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի Ղալթախչյան ազգատոհմի թաղի պատկերը

ՏԱԽՏԱԿ 22. Բնակարանի տիպեր



Քսենոփոնյան տան նկարագիրը: Նկարը վերցված է Ռ. Նահապետյանի «Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը» գրքի հավելվածից

Գմբեթաձև ծածկով տուն Գեղարքունիքի Ծակքար գյուղում



Գոմի օդա, Ախալցխայի շրջան, Ծղաթբիլա գյուղ, 1936 թ.



Գոմի օդա, Ախալքալաքի շրջան, Գանձա գյուղ, 1936 թ.



Գոմի օդան Շիրակում

ՏԱԽՏԱԿ 23



Հազարաշեն ծածկ՝ առաստաղի կողմից դիտված



Հազարաշեն ծածկի ներքին տեսքը

ՏԱԽՏԱԿ 24



Գմբեթավոր ծածկաձև առորմի սյուների վրա հենված

ՏԱԽՏԱԿ 25



Թոնրատուն-գլխատուն, հատակագիծ, վերին (փոքր) և ցածի (մեծ) տուն, օդաներով

1. թոնրատուն, 2. փոքր տուն, 3. մեծ և փոքր թոնիրներ, 4. փոքր տան աստիճաններ, 5. օդաներ՝ հանգստի և աշխատանքի համար

ՏԱԽՏԱԿ 26

Գլխատուն Արծվանիկում
(նկարը վերցված է Ն. Պապուխյանի նյութերից)



Գլխատան երդիկ

ՏԱԽՏԱԿ 27. Թոնիրների տեսակներ



Թոնիր կավաշեն



Վերևից քարերով եզերված թոնիր, Սիսիան

Գետներեսյա թոնիր, Արարատի մարզ, գյուղ Տափերական, 1973

ՏԱԽՏԱԿ 28



Բուխարի Շիրակի գոմի օդայի

ՏԱԽՏԱԿ 29

Կահույք՝ թախտ, գահավորակ նստելու և պառկելու

ՏԱԽՏԱԿ 29. Մանկական կահույք. Օրորոցի տիպեր



Նախշազարդ օրորոց



ա) Տավուշ, բ) և գ) Արցախ



Տնային իրերի պահարան (Վայոց ձոր)



Հարսի օժիտի սնդուկ (Արցախ)



Հացի տախտակ



Ճաշելու կահույք. Սինի-մատուցարան

ՏԱԽՏԱԿ 30. Տարազի տարածքային խմբերը



Աղձնիքի տարազախումբ
Սասունցի կնոջ տարազ

Զինյալ հայդուկ

Վահրամ Արիստակեսյանի (ձախից առաջինը) պարի խումբը
Սասունի տարազով

Սասունցիների տարազը

Շատախցիների տարազը

Բարձր Հայքի տարազախումբ. Ալեքսանդրապոլցի կնոջ և տղամարդու տարազ

Բարձր Հայքի տարազախումբ. Ալեքսանդրապոլցի կնոջ և տղամարդու տարազի համալիր

Բարձր Հայքի տարազախումբ. կնոջ տարազ և գլխահարդարանք

Սեբաստացի հայ աղջկա գեղջական տարազ (ըստ՝ Վ. Համբարձումյանի «Գյուղաշխարհ», 1927 թ., Փարիզ, գրքի)

Գամիրքի հարսի (կանգնած), սկեսուրի և երեխաների տարազը (ըստ՝ 1913 թ. լուսանկարների)

Բարձր Հայքի
տարազախումբ. կնոջ
տարազ, ՀՊԹ ցուցանմուշ

Կնոջ տարազի համալիր,
Մուշ – Տարոն, XVIII դ., բուրդ

Տարոն-Տուրուբերանի տարազախումբ, ՀՊԹ ցուցանմուշ

Տրապիզոնի տարազով հայուհի

ՀՊԹ հավաքածու. Վան-Վասպուրականի տարազախումբ

Սյունիք–Արցախի տարազախումբ, ՀՊԹ ցուցանմուշներ

Այրարատյան տարազախումբ, Երևան

Երևանցի կնոջ տարազ, XIX դ. վերջ



Արցախցի կնոջ ավանդական տարազ

Զանգեզուրցի կնոջ ավանդական տարազ

Վասպուրականի կնոջ տոնական տարազ

ՏԱԽՏԱԿ 31

Լոռեցի տղամարդու տարազ

ՏԱԽՏԱԿ 32

Զեյթունցի տղամարդու տարազ, XIX դ.

Արաբկիր (հին), երիտասարդի տարազ (XIX դ. երկրորդ կես)
(ըստ «Ոսկեգիտակ», Բեյրութ, 1945 թ. տարեգրքի լուսանկար)

ՏԱԽՏԱԿ 33

Հարսի հարսանեկան տարազ XIX դ.

ՏԱԽՏԱԿ 34

Ալեքսանդրապոլի ապարանջան՝ խալխալ

Գորտանման զոտեճարմանդ, Համլետ Հովսեփյանի հավաքածու

Սյունիք-Արցախյան տարազախումբ, զոտի, ՀՊԹ ցուցանմուշ

Կեռ քունքակախիկներ 1,2,3-Արցախ, 4-Ագուլիս, Համլետ Հովսեփյանի հավաքածու

Շամշիկ կամ սրտի կաքավ՝ կնոջ կրծքային զարդ

ՏԱԽՏԱԿ 35-36. Գլխի հարդարանքներ

Առաքել Պատրիկ, Հայկական տարազ գրքում,
Սասունցի կնոջ և տղամարդու գլխահարդարանք

Բարձր Հայքի տարազախմբի կնոջ գլխարկ

Ֆիդայի՝ Գալուստ Քոթանյան, Իրինդ գյուղից,
Լուսանկարը Սասուն Մարտիրոսյանի «Սասունը Սեմալում» գրքից

Բարձր Հայքի տարազախումբ. կնոջ գլխահարդարանք
Վարդ-թանթանա, ֆաս փյուսքուլ և քող

Գլխաթասակ տեմպելիկ

ՏԱԽՏԱԿ 37. Ագանելիքներ

Ագանելիք, Արցախյան չմուշկ, ՀՊԹ ցուցանմուշ

Ագանելիք-տրեխ (աղբյուրը անհայտ)

Տրեխ-կաշվե

ՏԱԽՏԱԿ 38

Արցախյան շաթալ գուլպա



Գամերով տրեխներ սառցապատ լեռներ բարձրանալու և իջնելու համար



Լական Սասունում

Գործված գուլպաներ, Հովհ.Շարամբեյանի ժողովրդական արվեստների թանգարանի հավաքածու

ՏԱԽՏԱԿ 39. Գոգնոցի տիպեր

Բարձր Հայքի տարազախումբ. կնոջ գոգնոց

Ցուցանմուշ. Սասունցի կնոջ զոգնոց, ՀՊԹ

ՏԱԽՏԱԿ 40. Գոտու տեսակներ

Բարձր Հայքի տարազախումբ. կնոջ մետաքսահյուս գոտի «Ի վայելումն կապողին» մակագրությամբ ՀՊԹ ՑՈՒՑԱՆՄՈՒՇ

Բարձր Հայքի տարազախումբ. կնոջ մետաքսահյուս գոտի «Ի վայելումն կապողին», մակագրությամբ

ՏԱԽՏԱԿ 41. Ժամանակակից ուտեստներ



Գաթա

Գաթանախշիչ փայտե

Գաթանախշիչ



Գր.Խանջյան, Հացը լեռներում նկար

Զատիկի ներկված ձու

Թթու

Ժենգյալով հաց

Ժենգյալով հաց

Լավաշ և գնդեր

Խաղողի թփով տոլմա

Խաշ

Խաշլամա

Խորոված

Ծիսական ավանդական գաթա

Հայկական շարոց-քաղցր սուջուխ և արևային չրեր

Հարիսա

Ձուկ

Ղափամա

Պանիր

Պանրի տեսականի

Պնկաթան-չորաթան

Սպաս

Տհալ-ղավուրմա

Փախլավա

Փախլավա

Փախլավա

ՏԱԽՏԱԿ 42. Ըմպելիքներ, հայկական կոնյակի տեսականի



Հայկական կոնյակի տեսականին վերցված է «Հայկական խոհանոց» գրքից

ՏԱԽՏԱԿ 43. Գերդաստանի նահապետը ժառանգազրկում է գերդաստանի հետ կապերը խզած թոռանը: Վերջինիս կինը աղերսում է սկեսրոջը՝ միջնորդությամբ նահապետի որոշումը բեկանելու համար:



ՏԱԽՏԱԿ 44. Խաչ պսակ (պսակվող տղայի գլխազարդ, Սասուն)



ՏԱԽՏԱԿ 45. Կոսպանդավոր փեսա (XX դ. սկիզբ)

ՏԱԽՏԱԿ 46. Գութանավարը (տապանաքանդակ, գ. Տավուշի գերեզմանոցից, ՀԱԻ, 1963 թ. գիտարշավի նյութերից)



ՏԱԽՏԱԿ 47. Շիրմաքար արևի նշանով (XIX դ., Դիլիսկա գ. Ջավախք)



РЕЗЮМЕ

АРМЯНСКАЯ ЭТНОГРАФИЯ
ЛЕКЦИИ

Рафик Наапетян

Данный сборник лекций составлен на основе учебных программ общего курса «Армянская этнография», который автор в течение многих лет читал в ведущих вузах республики. Цель издания — с использованием современных теоретических и методологических стандартов представить многолетний путь развития армянской этнографической науки, её первоисточники и историю, отдельные сферы этнокультурного наследия армян, их характерные черты и особенности, а также важный вклад армянской этнографии в систему всемирной истории и культурного наследия. Особое значение придается роли Армянской церкви в деле сохранения национальной идентичности, развития культуры и становления государственности.

Сборник дополняют более ста иллюстраций, размещенных в разделе «Приложение». Они посвящены сферам земледелия и скотоводства, присваивающим и вспомогательным формам хозяйства (собирательство, охота, рыболовство, шелководство, пчеловодство и др.), домашним промыслам и ремеслам, народным средствам передвижения, мерам веса и длины и т.д.

SUMMARY

ARMENIAN ETHNOGRAPHY LECTURES

Rafik Nahapetyan

This collection of lectures is based on the "Armenian Ethnography" general course curricula delivered by the author over many years at the leading universities of the republic. The purpose of the publication is to present—through modern theoretical and methodological standards—the long journey of Armenian ethnographic science, its primary sources and history, the distinct spheres of Armenian ethno-cultural heritage, its characteristic traits and peculiarities, and the significant contribution of Armenian ethnography to the system of world history and cultural heritage. Special emphasis is placed on the role of the Armenian Church in the preservation of national identity, the development of culture, and the formation of statehood.

The collection is enriched by more than a hundred illustrations included in the Appendix section. These are dedicated to the fields of agriculture and cattle breeding, appropriative and auxiliary forms of economy (gathering, hunting, fishing, sericulture, beekeeping, etc.), cottage industries and crafts, folk means of transportation, measures of weight and scales, and more.

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա.Ուսումնական ձեռնարկներ

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Եր., 1974:
2. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը (կազմողներ՝ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան), հ. 1, Եր., 2007:
3. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը, Եր., 2011:
4. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Եր., 1971:
5. **Նահապետյան Ռ.,** Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը (բուհական ուսումնական ձեռնարկ), Եր., 2009, 180 էջ:
6. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, Բուհական ուսումնական ձեռնարկ, Եր., 2010, 152 էջ:
7. **Նահապետյան Ռ.,** Ուղեցույց. Հայ ազգագրություն (ընդհանուր դասընթացի), պատմության բաժնի առաջին կուրսի առկա և հեռակա ուսուցման ուսանողների համար: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2014, 92 էջ (համացանց):
8. **Նահապետյան Ռ.,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Եր., ԵՊՀ հրատ., 2022, 294 էջ:
9. **Նահապետյան Ռ.,** Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները մասնագիտական դասընթացի, ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, Եր., ԵՊՀ հրատ., 2022, 82 էջ:
10. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության աղբյուրներ (Հնագույն շրջանից մինչև XVIII դարի երկրորդ կես), ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, գիրք 1, Եր., ԵՊՀ հրատ., 2023, 422 էջ:

11. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն (XVIII դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը), ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար, գիրք 2, Եր., ԵՊՀ հրատ., 2023, 362 էջ:

Բ.Ուսումնասիրություններ

1. **Աբեղյան Մ.,** Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. Է., Եր., 1975, էջ 11-103:
2. **Աբրահամյան Վ.,** Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ., Եր., 1956:
3. **Աբրահամյան Վ.,** Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում, Եր., 1971:
4. **Ալիշան Ղ.,** Հայբուսակ,Վենետիկ, 1895:
5. **Ալիշան Ղ.,** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը (գրական արևելահայերենի վերածեց Վ.Գ. Բարսեղյանը), Եր., 2002:
6. **Առաքելյան Բ.,** Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 1, Եր., 1958, հ. 2, Եր., 1964:
7. **Ավագյան Ն.,** Հայկական ժողովրդական տարազ (XIX – XX դ. սկիզբ), Եր., 1983:
8. **Ավագյան Ս.,** Արճակ // ՀԱԲ, գ. 8, Եր., 1987:
9. **Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ.,** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. X-VI դդ., Եր., 2006:
10. **Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա.,** Ուրարտուի հնագիտություն, Եր., 2010:
11. **Ավետիսյան Հ.,** Հնագույն էթնիկական տեղաշաժերը և հայկական լեռնաշխարհը, մ.թ.ա. III-I հազարամյակներում // ՊԲՀ, 1994, թիվ 1-2:
12. **Ավետիսյան Պ.,** Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դդ. (Սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), պ.գ.դ. գիտական աստիճանի հայցման գիտական զեկուցում, Եր., 2014, 92 էջ:
13. Արաբ մատենագիրներ: Թ-Ժ դարեր, Գ, Ներածություն, բնագրից թարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005:
14. **Բարսեղյան Լ.,** Հայ ժողովրդի ծագման ու կազմավորման պրոբլեմը հայագիտության մեջ, Եր., 1974:

15. **Բդոյան Վ.,** Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972:
16. **Բդոյան Վ.**, Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, Եր., 1963, հ. 2, Եր., 1980, հ. 3, 1983:
17. **Բդոյան Վ.**, Հայկական աղամաններ: Անահիտ դիցուհուն խորհրդանշող կանացիակերպ աղամաններ, Եր., 1986:
18. **Բդոյան Վ.**, Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, Եր., ԵՊՀ հրատ., 2014:
19. **Բեգինյան Լ.**, Հուղարկավորության և հիշատակման ծեսերն ու սովորությունները Տավուշում արդի փուլում. Ավանդույթներ և նորույթներ, Է 00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման համար, Սեղմագիր, Եր., 2014:
20. **Գաբրիելյան Մ.,** Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Եր., 2005:
21. **Գալստյան Մ., Օհանջանյան Ռ., Զաքարյան Թ., Հակոբյան Գ.,** Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակություններում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2017:
22. **Գասպարյան Ա.,** Մեղվապահությունը Հայաստանում (պատմաազգագրական ուսումնասիրություն), Եր., 1989:
23. **Գրիգորյան Գր.,** Հայկական վիմագրություն, Երևան, 2000:
24. **Դավթյան Ս.,** Հայկական ժանյակ, Եր., 1966:
25. **Դավթյան Ս.,** Հայկական ասեղնագործություն, Եր., 1972:
26. **Դավթյան Ս.,** Հայկական կարպետ, Եր., 1975:
27. **Թադևոսյան Ա.,** Դարբինը հայոց ծիսակարգում (պատմաազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, հ. 23, Եր., 2007, էջ 101-183:
28. **Թեմուրճյան Վ.,** Գամիրքի հայերը (պատմաազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, գ. 1, Եր., 1970:
29. **Թեմուրճյան Վ.,** Գորգագործությունը Հայաստանում, Եր., 1955:
30. **Թումանյան Գ.,** Գինեգործության մշակույթը Հայաստանում, Եր., 2008:
31. **Ինճիճեան Ղ.,** Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1835:
32. **Իսրայելյան Հ.,** Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1973:
33. **Լալայան Ե.,** Նախիջևանի գավառ, Ա մաս, Գողթն, ԱՀ, գ. XII, 1905:

34. **Լալայան Ե.,** Վասպուրական, ԱՀ, գիրք XX, 1910:
35. **Լալայան Ե.,** Մուշ-Տարոն, ԱՀ, գիրք XXVI, 1916:
36. **Լալայան Ե.,** Կոտայք, հաշվետվություն // «Տեղեկագիր» ՀՍՍՀ գիտության և արվեստի, Եր., 1927, № 2:
37. **Լալայան Ե.,** Հուղարկավորության արարողությունների և գերեզմանաքարերի զարգացումը Հայաստանում // «Տեղեկագիր» ՀՍՍՀ գիտության և արվեստի, 1928, № 3:
38. **Լալայան Ե.,** Տղաբերքի սովորույթների զարգացումը հայոց մեջ // «Տեղեկագիր» ՀՍՍՀ գիտության և արվեստի, Եր., 1931, № 5:
39. **Լալայան Ե.,** Ջավախք, Երկեր, հ. 1, Եր., 1983:
40. **Լալայան Ե.,** Արցախ, Երկեր, հ. 2, Եր., 1988:
41. **Լալայան Ե.,** Գանձակի գավառ, Երկեր, հ. 2, Եր., 1988:
42. **Լալայան Ե.,** Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Եր., 2004:
43. **Լալայան Ե.,** Երկեր, հ. 4, Եր., 2021:
44. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Երևան, 1946:
45. **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Եր., 1969:
46. **Լիսիցյան Ստ.,** Լեռնային Ղարաբաղի հայերը // ՀԱԲ, գ. 12, Եր., 1981:
47. **Խալփախչյան Հ.,** Հայաստանի արտադրական կառուցվածքները, Եր., 1961:
48. **Խանզադյան Է.,** Հայկական լեռնաշխարհի մշակույթը Ք.ա. III հազարամյակում, Եր., 1967:
49. **Խառատյան Հ.,** Հայ ժողովրդական տոները, Եր., 2005:
50. **Խառատյան-Առաքելյան Հ.,** Տոնը և տոնահանդեսի մշակույթը, Եր., 2010:
51. **Խնկիկյան Օ.,** Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1976:
52. **Խոջաբեկյան Վ.,** Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը (XIX–XX դդ. – XXI դ. շեմին), Եր., 2008:
53. **Ծատուրյան Ռ.,** Հայոց ավանդական տոնական ուտեստը, Եր., 2011:
54. **Կարապետյան Ե.,** Սասուն, Ազգագրական նյութեր, Եր., 1963:
55. **Կարապետյան Է., Վարդումյան Դ.,** Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Եր., 1963:
56. **Կարապետյան Է.,** Օժիտը հայոց մեջ, Եր., 1978:
57. **Հակոբյան Գ.,** Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974:

58. Հայաստանի ազգությունները, Եր., 2000:
59. Հայկական միջնադարյան ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., 1963:
60. **Հարությունյան Վ.,** Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Եր., 1969:
61. **Հարությունյան Ս.,** Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:
62. **Հարությունյան Ս.,** Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Եր., 2001:
63. **Հարությունյան Ս., Քալանթարյան Ա. և ուրիշներ,** Գինին հայկական մշակույթում, Եր., 2005:
64. **Հացունի Վարդան,** Ճաշեր եւ խնճոյք Հին Հայաստանի մէջ, Վենետիկ, 1912:
65. **Հացունի Վարդան,** Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1923:
66. **Հացունի Վարդան,** Դաստիարակութիւնը հին հայաց քով, Վենետիկ, 1923:
67. **Հացունի Վարդան,** Հայ դրոշները պատմութեան մէջ, Վենետիկ, 1919, 1930:
68. **Հացունի Վարդան,** Հայուհին պատմութեան առջեւ, Վենետիկ, 1936:
69. ՀՀ ազգային փոքրամասնություններն այսօր, Եր., 2005:
70. **Հոբոսյան Ս.,** Հայոց ձիթահանության մշակույթը (ՊԱՈՒ) // ՀԱԲ, գ. 23, Եր., 2007:
71. **Հոբոսյան Ս., Գասպարյան Բ. և ուրիշներ,** Խաղողի և գինու հայոց մշակույթը, Եր., 2021:
72. **Ղազարյան Ռ.,** Բուսանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, 180 էջ:
73. **Մելիք-Փաշայան Կ.,** Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:
74. **Մկրտչյան Ս.,** Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Եր., 2010:
75. **Մնացականյան Ա.,** Հայկական զարդարվեստ, Եր., 1955:
76. **Մնացականյան Ս.,** Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Եր., 1959:
77. **Մուրադյան Հ.,** Համշենցի հայեր // ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 109-158:

78. **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), պատմաազգագրական ուսումնասիրություն, Եր., 2004, 260 էջ:
79. **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Եր., 2007, 304 էջ:
80. **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Եր., 2011, 214 էջ:
81. **Նահապետյան Ռ.,** Հայոց ազգակցական համակարգը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Եր., 2012, 260 էջ:
82. **Նահապետյան Ռ.,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Եր., 2013, 148 էջ:
83. **Նահապետյան Ռ.,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ԵՊՀ հրատ., 2018, 241 էջ:
84. **Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1 (Հայ ազգագրության սկզբնաղբյուրներ), Եր., ԵՊՀ հրատ., 2019, 398 էջ:
85. **Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2 (Հայ ազգագրության պատմություն), Եր., ԵՊՀ հրատ., 2019, 402 էջ:
86. **Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Եր., ԵՊՀ հրատ., 2020, 392 էջ:
87. **Նահապետյան Ռ.,** Հայկական ավանդական բնակավայր և բնակարան (պատմաազգագրական ուսումնասիրություն), ՀՀ ԳԱԱ, ՀԱԻ հրատ., Երևան, 2026, 336 էջ:
88. **Շագոյան Գ.,** Յոթ օր, յոթ գիշեր (հայոց հարսանիքի համայնապատկեր), Եր., 2011:
89. **Շնորհ ի վերասց** // Հոդվածների ժողովածու, նշված Ս. Հարությունյանի 90-ամյակին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2008:
90. **Պատրիկ Ա.,** Հայկական տարազը (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., 1983:
91. **Պետրոսյան Ա.,** Շերամապահական մշակույթը Հայաստանում, (պատմազգագրական ուսումնասիրություն), Եր., 1987:

92. **Պետրոսյան Ա.,** Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, Եր., 2012:
93. **Պետրոսյան Ա.,** Ձկնորսական մշակույթը Հայաստանում (պատմազգագրական ուսումնասիրություն), Եր., ՀԳՄ հրատ., 2015, 214 էջ:
94. **Պետրոսյան Արմեն,** Հայոց ազգածագման հարցեր, Եր., 2006:
95. **Պետոյան Վ.,** Սասնա ազգագրություն, Եր., 1965:
96. **Պետրոսյան Լ.,** Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ, Ա. Հետիոտն և գրաստային փոխադրամիջոցներ (պատմազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, գ. 6, Եր., 1974, էջ 93-157:
97. **Պետրոսյան Լ.,** Հայ ժողովրդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղերսները // ՀԱԲ, հ. 22, Եր., 2007, էջ 241-255:
98. **Պողոսյան Ս.,** Շիրակ-Ջավախքի հայոց ավանդութային տարազը (թեկնածուական ատենախոսության սեղմագիր), Եր., 1994,
99. **Պողոսյան Ս.,** Շիրակ-Ջավախքի տղամարդու ավանդութային տարազը // ՊԲՀ, 1993, էջ 122-133:
100. **Պողոսյան Ս., Հ**արսանեկան հագուստը Շիրակ-Ջավախքում (XIX-XX դդ. սկիզբ) // ԲԵՀ, 1991, № 3, էջ 132-144:
101. **Պողոսյան Ս.,** Մանկան հագուստը Շիրակի և Ջավախքի պատմաազգագրական շրջաններում // ԼՀԳ, 1993, № 1, էջ 77-84:
102. **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Եր., 1931, հհ. 2, 3, Եր., 1941:
103. **Սարդարյան Ս.,** Հայաստանը քաղաքակրթության օրրան, Եր., 2004:
104. **Սեղբոսյան Կ.,** Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում // ՀԱԲ, հ. 6, Եր., 1974, էջ 159–262:
105. **Սրվանձտյանց Գ.,** Երկեր, հ. 1, Երևան, 1978, հ. 2, Երևան, 1982:
106. **Ստեփանյան Ա.,** Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (պատմազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, գ. 22, Եր., 2007:
107. **Վարդանյան Ս.,** Հայաստանի բժշկության պատմություն, Եր., 2000, 440 էջ:
108. **Վարդումյան Դ.,** Լոռեցիների նոր կենցաղը, Եր., 1956:
109. **Վարդումյան Դ., Կարապետյան Է.,** Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Եր., 1963:

110. **Վարդումյան Դ.,** Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի ընդհանուր բնութագրությունը (XIX-XX) // ՊԲՀ, 2004, № 2(166), 48-64 էջ:
111. **Քալանթարյան Ա.,** Կաթնային արդյունքներ // ԱՀ, գ. Դ, № 2, 1898, էջ 276-292:
112. **Օրմանյան Մ.,** Ծիսական բառարան, Եր., 1992:
113. **Абрамян Л.,** Первобытный праздник и мифология, Ер., 1983.
114. **Акопян М.,** Сельская община в Восточной Армении во второй половине XIX - начале XX вв., Ереван, 1988.
115. Армяне. Серия «Народы и культуры». Ответсвенные редакторы: ***Л.М. Варданян, Г.Г. Саркисян, А.Е. Тер-Саркисянц,*** М., Наука, 2012, с. 5-648.
116. **Арутюнов С., Мкртумян Ю.,** Армяне. Расы и народы, вып. 8, М., 1980, с. 262-271.
117. **Арутюнов С., Мкртумян Ю.,** Проблемы классификации элементов культуры на примере армянской питания // СЭ, 1981, № 4, с. 3-15.
118. **Арутюнов С., Мкртумян Ю.,** Армяне, «Народы и религии мира», М., 2000, с. 56-59.
119. **Арутюнян А.,** Виноградарство и виноделие в Армении, Ер., 2007.
120. **Арутюнян Н.,** Земледелие и скотоводство Урарту, Ер., 1964.
121. **Вардумян Г.,** Дохристианские культы армян // ՀԱԲ, h. 18, Եր., 1991:
122. **Вардумян Д.С., Карапетян Э.Т., Лисициан С.Д.,** Армяне, «Народы Кавказа», т. II, М., 1962, с. 435-601.
123. **Варданян Л.,** Традиции мужских возрастных групп у армян (конец XIX - начало XX в.) // ՀԱԲ, h. 12, 1981, էջ 87-142:
124. **Гаспарян Ю.,** Семья и церковь как единая система регуляции народных традиции и обычаев, С., 2002.
125. **Герасимова М.,** Историко-антропологические данные // Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, 33-42 с.
126. **Егиазаров С.,** Исслодавания по истории учереждений в Закавказье, Сельская община Эриванской губернии, Казань, 1889, ч. II, Городские цехи, Казань, 1891.
127. **Есаян С.,** Оружие и военное дело Древней Армении (III-I тыс. д. н. э.), Ер., 1966.

128. **Карапетян Э.,** Армянская семейная община, Ер., 1958.
129. **Карапетян Э.,** Родственная группа “азг” у армян, Ер., 1966.
130. Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры). Отв. ред. С.А. Арутюнов, Э.С. Маркарян, Ер., изд-во АН Арм. ССР, 1983.
131. **Лисициан С.Д.,** Очерки этнографии дореволюционной Армении // КЭС, т. I, М., 1955, с. 182-264.
132. **Мартиросян А.,** Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964.
133. **Марутян А.,** Интерьер армянского народного жилища (Вторая половина XIX – начало XX в.) // ՀԱԲ, h. 17, Եր., 1989, էջ 65–143:
134. **Мкртумян Ю.,** Формы скотоводства в Восточной Армении (Вторая половина XIX - начало XX в.) (историко этнографическое исследование), ՀԱԲ, h. 6, Եր., 1974, с. 7-158.
135. **Мкртумян Ю.,** Скотоводство // Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, с. 131-137.
136. **Население Еревана** (Этносоциологическое исследование), Ер., 1986.
137. **Пиотровский Б.,** Археология Закавказья с древнвйших времен до I тыс. до н.э., Л., 1948.
138. **Пиотровский Б.,** Ванское царство (Урарту), М., 1959.
139. **Саркисян Г.,** Население Восточной Армении в XIX – начало XX в. (Этнодемографическое исследование), Ереван, 2002.
140. **Тер-Саркисянц А.,** Армяне. История и этнокультурные традиции, М., 1998, с. 3-795.
141. **Тер-Саркисянц А.,** Современная семья у армян, Ер., 1974.
142. **Тер-Саркисянц А.,** Армяне Нагорного Карабаха, История, Культура, Традиции, М., 2015.
143. **Харатян З.,** Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян // ՀԱԲ, h. 17, Եր., 1989, էջ 7–64:
144. **Хачатрян Т.,** Древняя культура Ширака, Ер., 1975.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 11

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 20
ԹԵՄԱ 1. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ 20
1.1. Ժայռապատկերներ (Ք.ա. IX-I հազարամյակներ) 20
1.2. Հնագիտական պեղածո նյութերը որպես ազգագրության ուսումնասիրության սկզբնաղբյուր 24
ԹԵՄԱ 2. ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԵՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ 28
ԹԵՄԱ 3. ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ 40
3.1. Հերոդոտոսի (V դ. Ք.ա.) «Պատմության» տեղեկությունները Հին Հայաստանի ու հայերի մասին: Աղբյուրագիտական արժեքը 40
3.2. Հայաստանը և հայերը ըստ Քսենոփոնի (430-355/6 Ք.ա.) աշխատությունների 43
3.3. Ստրաբոնի (63–21/25 Ք.ա.) «Աշխարհագրությունը» Հայաստանի և հայերի մասին 51
3.4. Հռոմեական անտիկ պատմագիրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին 56
3.5. Բյուզանդական աղբյուրներ 60
ԹԵՄԱ 4. ՀԱՅԵՐԻ ԿԵՆՑԱՂԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 64
4.1. V-XVIII դարեր 64

4.2. Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին (IX-XVIII դդ.) 86
ԹԵՄԱ 5. ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ: ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆ 96
5.1. Մխիթարյան միաբանության խաղացած դերը հայ ազգագրական գիտության ձևավորման գործում 97
5.2. Մեսրոպ Թաղիադյանի և Խ. Աբովյանի ազգագրական գործունեությունը 104
ԹԵՄԱ 6. ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. 70-80-ԱԿԱՆ ԹԹ. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՅՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ.....112
6.1. Գարեգին Սրվանձտյանցի (1840–1892) ազգագրական, բանահավաքչական գործունեությունը 112
6.2. Գրիգոր Խալաթյանցը (1858-1912) հայ գիտական ազգաբանության հիմնադիր.....117
6.3. «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի (1901-1913) դերն ու նշանակությունը հայ ազգագրական գիտության, պատմության մեջ: Մկրտիչ Էմինի (1815-1890) հայագիտական և հայանպաստ գործունեությունը 119
6.4. Մխիթարյան միաբանների ազգաբանական գործունեությունը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին.....120
6.5. Ազգագրական գիտության կայացման ավարտական պարբերաշրջանը (XIX դ. 90-ական թթ.- XX դ. սկզբներ).....122
ԹԵՄԱ 7. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920-1980-ԱԿԱՆ ԹԹ.) 128
7.1. Ազգագրական գիտությունը խորհրդային շրջանում (1920-1940 թթ.).....128
7.2. Ազգագրական գիտության զարգացման միտումները (1950-1980-ական թթ.) 135

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ.....140
ԹԵՄԱ 1. ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ....140

1.1. Հայկական լեռնաշխարհը որպես երկրագործական մշակույթի հնագույն կենտրոն 140
1.2. Արորագութանային երկրագործությունը և հացահատիկային մշակաբույսերի մշակությունը Հայաստանում.....144
1.3. Հայկական լեռնաշխարհը որպես այգեգործության, խաղողագործության, գինեգործության հնագույն հայրենիք.....148
1.4. Երկրագործական պաշտամունքի տարեշրջանը.....151
ԹԵՄԱ 2. ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ...156
ԹԵՄԱ 3. ՅՈՒՐԱՅՆՈՂ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՏՆՏԵՍԱՁԵՎԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ 165
ԹԵՄԱ 4. ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ 185
4.1. Հայոց տնայնագործական մշակույթը 185
4.2. Արհեստագործական մշակույթը: Համքարական կազմակերպությունները քաղաքներում, դրանց դերը, նշանակությունը, դրոշները և սովորությունները 195
ԹԵՄԱ 5. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԸ: ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....199
5.1. Ժողովրդական փոխադրամիջոցները որպես սոցիալ-մշակութային ֆենոմեն: Հայկական լեռնաշխարհը որպես գրաստային ու լծկան-անվային փոխադրամիջոցների բնօրրաններից մեկը.....199
5.2. Հաղորդակցության և կապի ավանդական միջոցները 203

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԸ.....207
ԹԵՄԱ 1. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ, ՏԻՊԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 207
ԹԵՄԱ 2. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ, ՏԻՊԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....216

2.1. Բնակարանը որպես սոցիոմշակութային տարր, նրա տեղը կենսապահովման մշակույթի համակարգում.....216
2.2. Բնակարանային համալիրների ներառույթը.....226
ԹԵՄԱ 3. ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱԶՆ ՈՒ ԶԱՐԴԱՐԱՆՔԸ.....238
3.1. Տարազն ու զարդարանքը որպես սոցիոմշակութային տարր.....238
3.2. Հայոց ավանդական և ժամանակակից գլխարկները, գուլպաներն ու կոշիկները, դրանց տարրային դերերը և յուրահատկությունները 252
ԹԵՄԱ 4. ՈՒՏԵՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ: ԸՄՊԵԼԻՔ 260
4.1. Ուտեստը որպես սոցիոմշակութային տարր, առօրյա ուտեստներ և ըմպելիք.....260

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹ.....273
ԹԵՄԱ 1. ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ԸՆՏԱՆԻՔ 273
1.1. Ընտանիք հասկացությունը, տիպերը, բնույթը, գործառույթները 273
1.2. Գերդաստանը հայոց մեջ.....278
1.3. Հայերի ընտանիքը խորհրդային և անցումային շրջանում (1920-1990).....293
ԹԵՄԱ 2. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔ ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 299
2.1. Ամուսնության ավանդութային ձևերն ու սովորույթները հայոց մեջ 299
2.2. Նախահարսանեկան արարողակարգ 308
2.3. Հարսանիք: Հարսանեկան արարողության ավանդական ընթացակարգը 311
2.4. Հետհարսանեկան արարողակարգ 318
ԹԵՄԱ 3. ՄԱՆԿԱՆ ԾՆՆԴԻ, ԽՆԱՄՔԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ.....323
3.1. Մինչծննդյան սովորույթներ ու ծեսեր.....323
3.2. Մանկածնությանն առնչվող սովորույթներն ու ծեսերը.....330
3.3. Մանկան դաստիարակության ավանդական և ժամանակակից սովորույթներն ու ծեսերը հայոց մեջ 334
ԹԵՄԱ 4. ՄԱՀ, ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՄԵՌԵԼՈՑ 339

4.1. Մարդու մահը, թաղումը և հիշատակման օրերը ամբողջացնող ծեսերի համակարգը.....339
ԹԵՄԱ 5. ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ 356
5.1. Ազգակցական համակարգը՝ ազգագրական գիտության հիմնախնդիր: Ազգակցական խմբի կառուցվածքը.....356
5.2. Ազգի գաղափարական միասնության դրսևորումները XIX–XX դդ. 359
5.3. «Ազգ»-ի տնտեսական միասնության դրսևորումները XIX–XX դդ. 364
5.4. «Ազգի» տարածքային միասնության ավանդական և ժամանակակից դրսևորումները.....367
ԹԵՄԱ 6. ՀԱՅՈՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ XIX–XX դդ. 370
6.1. Հայկական գյուղական համայնքի ընդհանուր բնութագիրը.....370
6.2. Տնտեսամշակութային համերաշխության դրսևորումները գյուղական համայնքում.....378

ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹ.....381
ԹԵՄԱ 1. ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ 381
ԹԵՄԱ 2. ՀԱՅՈՑ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԸ.....411
ԹԵՄԱ 3. ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 422
ԹԵՄԱ 4. ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....465
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....472
ՀԱՎԵԼՎԱԾ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐ 474
РЕЗЮМЕ 566
SUMMARY 567
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....568

ՌԱՖԻԿ ԱՍՔԱՆԱԶԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1943 թ. Լոռու մարզի Սպիտակի ենթաշրջանի Գեղասար գյուղում: Ավարտել է տեղի ութնամյա դպրոցը (1958 թ.), ապա՝ Նալբանդի (Շիրակամուտ) միջնակարգը (1960 թ.), Վանաձորի շինարարական տեխնիկումը (1962 թ.), ԵՊՀ պատմության ֆակուլտետը (1967 թ.):

1967 թվականից առ այսօր աշխատում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնում: Ավարտել է ԵՊՀ ազգագրության գծով ասպիրանտուրան, ստացել է պ.գ.թ. գիտական աստիճան և դոցենտի կոչում (1986 թ.), պ.գ.դ. գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում (2008 թ.):

Հրավիրվել է համատեղությամբ աշխատանքի ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (1998-2020 թթ.), որտեղ վարել է նաև Պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի (1999-2015 թթ.), Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի (2000-2004 թթ.) պաշտոնները: «Հայ ազգագրություն» և այլ դասընթացներ կարդալու համար հրավիրվել է նաև Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան (2000-2017 թթ.):

Կատարում է արդյունավետ գիտամանկավարժական գործունեություն:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական ուսումնասիրությունների, երկու տասնյակի հասնող մենագրությունների և ուսումնական ձեռնարկների, որոնք հիմնականում նվիրված են հայ ազգագրության ամենատարբեր հիմնահարցերին՝ արևմտահայերի էթնոմշակութային բնութագրին, հայ ազգագրության աղբյուրներին ու պատմությանը:

Ստորև ներկայացվում է համառոտ ցանկը.

2004 – Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (ՊԱՌԻ), 260 էջ:

2007 – Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան ավանդական սովորույթներն ու ծեսերը (ՊԱՌԻ), 304 էջ:

2009 – Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, 180 էջ:

2010 – Հայ ազգագրության պատմություն, մաս 1, 150 էջ։
2011 – Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը (ՊԱՌԻ), 214 էջ։
2012 – Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), (ՊԱՌԻ), 262 էջ։
2013 – Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, 150 էջ։
2018 – Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ԵՊՀ հրատ., 240 էջ։
2018 – Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին (վերահրատ.) «Հայաստան» հրատ., 261 էջ։
2019 – Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, 300 էջ։
2019 – Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, 402 էջ։
2020 – Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, 390 էջ։
2022 – Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, 294 էջ։
2023 – Հայ ազգագրության աղբյուրներ, 425 էջ։
2023 – Հայ ազգագրության պատմություն, 366 էջ։
2026 – Հայկական ավանդական բնակավայր և բնակարան (ՊԱՌԻ), 336 էջ։
2026 – Հայ ազգագրություն. դասախոսություններ, 582 էջ։

Հեղինակ է նաև 2 տասնյակից ավելի ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագրերի։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ԱՍՔԱՆԱԶԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգաբանության մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի ուսուցման II կուրսի ուսանողների համար

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Ա. Հովակիմյանի

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Հրատարակվել է՝ 27.03.2026:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 36.5:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am